ԵՐՎԱՆԴ ԼԱԼԱՅԱՆ

ԵՐԿԵՐ

I

ՀԱՅԱՍ
ԱԿԱԴԵՄԻԱ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ЕРВАНД ЛАЛАЯН

ТРУДЫ

В ПЯТИ ТОМАХ

ТОМ I

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1983

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՋԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

903.7(479.25)

ԵՐՎԱՆԴ ԼԱԼԱՅԱՆ

ԵՐԿԵՐ

Ա II 63844

ՀԻՆԳ ՀԱՏՈՐՈՎ

ՀԱՏՈՐ

I

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ
1983

ԳՄԴ 63.5
Լ 140

Տպագրվում է ՀՍՍՀ ԳԱ գիտական խորհրդի որոշմամբ

Հատորը կազմել, ծանոթագրել և տպագրության են պատրաստել
Կ. Վ. ՄԵԼԻՔ-ՓԱՇԱՅԱՆԸ և Ա. Մ. ՆԱՀԱՊԵՏՅԱՆԸ

Պատասխանատու խմբագիր՝ պատմական գիտ. թեկնածու
Դ. Ս. ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

Գիրքը հրատարակության են նախապատրաստել գրախոսներ՝ պատմական գիտ. դոկտոր Վ. Հ. ԲԴՈՅԱՆԸ և բանասիրական գիտ. դոկտոր Դ. Ա. ԴՐԻԳՈՐՅԱՆԸ:

Լալայան Ե.

Լ 140 *Երկեր, Հինգ հատորով /Պատ. խմբ.՝ Դ. Ս. Վարդումյան.— Եր.: ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1983:*

Վերնախորագր.՝ ՀՍՍՀ ԳԱ, Հնագիտ. և ազգագր. ին-տ.

Հ. I /Հատորը կազմել, ծանոթագրել և տպագր. են պատրաստել Կ. Վ. Մելիք-Փաշայանը, Ա. Մ. Նահապետյանը. 1983, 457 էջ, 1 թ. նկ.:

Հատորն ամփոփում է Ջավախքի պատմաազգագրական շրջանին վերաբերող Ե. Լալայանի հավաքած ազգագրական-բանահյուսական նյութերը, որոնց մեծ մասը ժամանակին հրապարակվել է «Ազգագրական հանդեսի» Ա—Դ գրքերում և «Ջավախքի բուրմունք» ժողովածուում: Հատորում տեղ է գտել նաև «Կարնո գաղթականության» անտիպ աշխատությունը: Բուն նյութերից բացի տրված են ներածություն, ծանոթագրություններ և ցանկեր:

Նախատեսված է պատմաբաններին, ազգագրագետների, ժողովրդական բանահյուսությամբ զբաղվողների և ընթերցող լայն շրջանների համար:

0508000000
Լ ———————36—82
703 (02)—83

ԳՄԴ 63.5
902.7

© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1983

Երվանդ Լալայան (1864—1931)

Հայ ազգագրության և բանահյուսության մեծ երախտավոր Երվանդ Լալայանի գիտական ժառանգությունը ցրված է տպագիր պարբերականներում ու ժողովածուներում, գերազանցապես «Ազգագրական հանդեսի» էջերում և ձեռագիր արխիվային ֆոնդերում: Հիշյալ հրատարակություններն իրենին մասնագիտական հազվագյուտ օրինակներ են, նվազ մատչելի գիտական լայն շրջաններին: Միևդեռ Ե. Լալայանի գիտական ժառանգությունը, մասնավորապես Հայաստանի պատմաազգագրական շրջաններին նվիրված նրա հարուստ նյութերն ու նեռազոտությունները մինչև օրս պահպանել են իրենց այժմեականությունն ու բարմությունը: Այս նկատառումով էլ Ե. Լալայանի աշխատությունների գիտական հրատարակությունը հույժ կարևորություն է ստանում:

Հրատարակության համար հիմնական սկզբունք է ընդունված՝ ընդգրկել Ե. Լալայանի ազգագրական, բանահյուսական, պատմանիագիտական ու վիմագրական բոլոր այն նյութերը և ուսումնասիրությունները, որոնք չեն կորցրել իրենց գիտական արժեքը: Ե. Լալայանի աշխատությունների ներկա հրատարակության մեջ չեն ընդգրկվում նրա հավաքած ու հրատարակած **ներիաքները, քանի որ դրանք** տեղ են գտել ու շարունակվելու են տպագրվել «Հայ ժողովրդական ներիաքների» բազմահատորյակում: Ներկա հրատարակությունից դուրս է թողնվում նաև «Ցուցակ Վասպուրականի ձեռագրաց» աշխատությունը, նկատի ունենալով, որ դրանք նշգրտված ու լրացված օգտագործված են Մաշտոցյան Մատենադարանի կողմից հրատարակվող ընդհանուր ձեռագրացուցակում: Բացառված են բանահյուսական այն նյութերը, որոնք հրատարակված են ժամհրային համահավաքներում (ավանդություններ, առակներ, անեկդոտներ և այլն):

Երվանդ Լալայանի աշխատությունների գիտական հրատարակությունը նախատեսվում է իրագործել հինգ հատորով: Առաջին չորս հատորում կզետեղվեն Հայաստանի պատմաազգագրական շրջաններին վերաբերող ազգագրական-բանահյուսական ամբողջական, համալիր

նյութերը (Ջավախք, Աբցախ—Սյունիք, Լոռի—Գուգարք, Գեղարքունիք, Վայոց ձոր, Գողթն, Վասպուրական, Տուրուբերան): Հիշյալ հատորներում կօգտագործվեն նաև Ե. Լալայանի հրատարակած երեք ալբոմի լուսանկարները: Վերջին՝ հինգերորդ հատորում կընդգրկվեն ազգագրության, բանահյուսության, պատմության, հնագիտության և մշակույթի այլ բնագավառներին վերաբերող Ե. Լալայանի առանձին ուսումնասիրություններն ու հոդվածները: Առաջին հատորի սկզբում տրվում է Ե. Լալայանի կյանքին ու գործունեությանը նվիրված հերածական ակնարկ, վերջին հատորում կզետեղվի Ե. Լալայանի տպագիր և անտիպ բոլոր նյութերի ընդարձակ մատենագիտական ցուցակը: Յուրաքանչյուր հատոր բնագրերին կից կունենա ծանոթագրություններ և ցանկեր:

Ներկա հրատարակության մեջ որպես բնագրաբանական ընդունված սկզբունք պահպանված են հեղինակի լեզուն և ոճը: Կատարվել են միայն մասնակի շտկումներ՝ հին ուղղագրությունը փոխարինված է նորով, ուղղված են տպագրական վրիպակներն ու բացահայտ վրիպումները, նշգրտված են սկզբնաղբյուրներն ու դրանցից կատարված հաղվածքները: Հեղինակի օգտագործած այն վիմագիր արձանագրությունները, որոնք տեղ են գտել «Դիվան հայ վիմագրության» համահավաքում, նշգրտված են ըստ «Դիվանի» բնագրի: Աշխատության մեջ ընդգրկված պատմական փաստերն ու վիճակագրական տեղեկությունները անդրադարձնում են իր ժամանակի սկզբնաղբյուրների հնարավորությունները և կարող են որոշ չափով հնացած կամ վիճարկելի լինել:

ԵՐՎԱՆԴ ԼԱԼԱՅԱՆԻ ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Ականավոր ազգագրագետ, բանահավաք-բանագետ, ճնագետ, մանկավարժ ու հասարակական գործիչ Երվանդ Լալայանը բացառիկ տեղ է գրավում հայագիտության երախտավորների շարքում: Մասնավորապես մեծ են Ե. Լալայանի ծառայությունները հայ ժողովրդագիտության զարգացման ասպարեզում: Իր գիտական աշխատություններով և հատկապես իր հիմնադրած «Ազգագրական հանդեսով» (1896—1916) Ե. Լալայանը բազմակողմանի, խոր և ծավալուն աշխատանք է կատարել հայ ազգագրության ու բանահյուսության բնագավառում: Անցնելով ժամանակի ռուսական և եվրոպական ժողովրդագիտության ուսումնասիրության հիմնավոր դպրոց, զինված գիտելիքների հարուստ պաշարով և ժամանակի առաջավոր մեթոդներով, Ե. Լալայանը հայ իրականության մեջ ազգագրության և բանահյուսության ուղղությամբ իր նախորդների սկսած հույժ կարևոր գործը բարձրացրեց նոր մակարդակի: Նա փաստորեն դարձավ հայ գիտական ազգագրության ու բանագիտության հիմնադիրը:

* * *

Երվանդ Ալեքսանդրի Լալայանը ծնվել է 1864 թ. մարտի 13-ին, Ալեքսանդրապոլում (այժմ՝ Լենինական), բանվորի ընտանիքում: Ե. Լալայանի ծնողները սերում էին Լեռնային Ղարաբաղի հանապետական հին գերդաստաններից: Նրանց բազմանդամ ընտանիքում հարգի էին հանապետական ազգային սովորույթներն ու ավանդույթները: Նախնական կրթությունը տեղում ստանալուց հետո, ուշիմ և ընդունակ պատանին ընդունվում է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը և ավարտում այն 1885 թ.: Կրթությունը շարունակելու համար նյութական միջոցներ չունենալով, Ե. Լալայանը հինգ տարի ուսուցչությամբ է զբաղվում Ախալցխայում, Ալեքսանդրապոլում և Ախալքալաքում, դասավանդելով այդ քաղաքնե-

րի թեմական դպրոցներում: Ախալխալաքում էլ Ե. Լալայանն ամուսնանում է տեղի առաջավոր հասարակական գործիչ Աբրեմ Հարությունյանի դստեր՝ Հայկանուշ Հարությունյանի հետ: Ուսման հարգն իմացող ու լուսավոր հայացքների տեր Աբրեմ Հարությունյանը միջոցներ է հայթայթում, և 1890 թ. Ե. Լալայանը կնոջ՝ Հայկանուշ Լալայան-Հարությունյանի հետ մեկնում է Ժնև, որտեղ իրեն ուսանում է Ժնևի համալսարանի հասարակագիտական բաժնում, իսկ կինը՝ բնագիտական: Նրանց ուսումնառությունն ընթանում է նյութական սուղ պայմաններում: Պահպանվել են Ե. Լալայանի դիմումները, ուղղված Կովկասի Հայոց բարեգործական ընկերությանն ու ամենայն հայոց կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանին: Ե. Լալայանը կաթողիկոսին գրում է. «Բայց երբ մոտ էինք վերջացնելու մեր այսման դժվարությամբ սկսածը, մեր նյութական միջոցներն սպառեցան, և ես ստիպվեցա թողնել ամուսնուս Ժնև և վերադառնալ հայրենիք՝ նոր միջոց գտնելու: Շատ ապարդյուն դիմումներ անելուց հետո՝ եկել եմ ամենախոնարհաբար խնդրելու Ձեզ հայրապետիդ՝ բարեհաճել նպաստելու մեզ մեր ուսումը վերջացնելու, և մեծանուս եմ, որ Ձեր վեհափառությունը չպիտի զլանա մեր խնդիրը կատարելու»[1]: Ի վերջո, Ե. Լալայանը կաթողիկոսից որոշ գումար է ստանում այն պայմանով, որ համալսարանն ավարտելուց հետո իրը և կինը կաշխատեն հայկական դպրոցներում:

1894 թ. Լալայան ամուսիններն ավարտում են Ժնևի համալսարանի դասընթացը: Ե. Լալայանին շնորհվում է սոցիալական գիտությունների բեկնածուի աստիճան: Այնուհետև Ե. Լալայանը վեց ամիս աշխատում է Վիեննայի Մխիթարյանների մոտ, ապա՝ Փարիզի Մարդաբանական դպրոցում: Ե. Լալայանը ավարտում է նաև Լոնդոնի համալսարանին կից մանկավարժության դասընթացը և ստանում է մանկավարժի որակավորում: Վերադառնալով Անդրկովկաս, նա 1895—1897 թթ. աշխատում է Շուշիի թեմական դպրոցում որպես դասատու[2]:

Ե. Լալայանը փայփայում էր ազգագրական հանդես սաեղծելու գաղափարը և մեծ ջանքեր է գործադրում այդ ուղղությամբ: 1896 թ. նրան հաջողվում է հենց Շուշիում լույս ընծայել «Ազգագրական հանդեսի» առաջին գիրքը, ուր «Հրատարակչից» խորագիրը կրող համառոտ առաջաբանում շարադրում է ամսագրի նպատակները: Նա գրում է. «Ըոպեա-

---

1 Ս. Սարգսյան, *Ե. Լալայանի կյանքն ու գործունեությունը արտացոլող փաստաթղթեր: Տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 1963, № 1, էջ 124:*

2 Նույն, *Պատմություն Ղարաբաղի Հայոց թեմական հոգևոր դպրոցի, 1838—1913, Թիֆլիս, 1914, էջ 38:*

կան ազդեցության տակ չենք վնռել մի այդպիսի հանդեսի հրատարակության ձեռնամուխ լինել, ոչ էլ պատահմամբ ենք ընտրել այս. մեզ հանաչողները գիտեն, թե որքան ժամանակից ի վեր փայփայել ենք այս միտքը և որքան արգելքներ ենք հաղթել փորիշատ նախապատրաստվելու այս գործի համար: Այսօր մենք հանդես ենք գալիս ոչ թե միայն մեր ուժերի վրա վստահացած, այլ ազգի իմքնահանաչության զգացման: Թերթերի մեջ սփռված և առանձին լույս տեսնող ազգագրական նոդվածներն արդեն ապացուցում են, որ հայոց ազգն էլ վերջապես զարթել է խոր քնից և ցանկանում է կատարել գիտության ամենիմատ խոսքը. «Ճանի՛ր զքեզ». նա կամենում է հանաչել իրեն և յուր ազգային հատկություններն վրա հիմնել ազգային զգացումը»: Այնուհետև Ե. Լալայանը նշում է, որ մենք մասնագետ ազգագրագետներ չունենք, ուստի և կոչ է անում ուսուցիչներին և ուսուցչուհիներին ձեռնամուխ լինելու ազգագրական նյութերի հավաքմանը: Ե. Լալայանը նշում է, որ այժմ մեր խնդիրը միայն նյութեր հավաքելն է, որովհետև առանց դրան աննպատակ է գիտական աշխատություն գրելը և վերջացնում է հետևյալ խոսքերով. «Մենք կկրենք բարերը, և երանի նրան, ով կգա այդ բարերով ազգային ինքնուրույնության շենքը կատուցանելու և հավասարկային էվոլյուսիոնի օրենքները գծելու»[3]:

«Ազգագրական հանդեսը» հրատարակվում է 20 տարի, 26 գրքով: Հանդեսի շուրջն էին համախմբված ժամանակի լավագույն գիտական ուժերը՝ Մ. Աբեղյանը, Թ. Թորամանյանը, Հ. Աճառյանը, Լեոն, Լ. Մելիխսեթ-Բեկը, Ստ. Լիսիցյանը, Ս. Զելինսկին, Ե. Շահազիզը, Հ. Կարա-Մուրզան և ուրիշներ: «Ազգագրական հանդեսի» հրատարակումը ջերմորեն ողջունեցին մի շարք ամսագրեր: «Հանդես ամսօրյայի» 1896 թ. № 5-ում տպագրված գրախոսականում բարձր է գնահատվում «Ազգագրական հանդեսի» նոր լույս տեսած առաջին գիրքը, և նրա խմբագիր Ե. Լալայանը համարվում է առաջին հայ ազգագրագետը: Թիֆլիսում հրատարակվող «Новое обозрение» թերթը իր 1896 թ. № 4213-ում հաղորդում է «Ազգագրական հանդեսի» Ա գրքի լույս ընծայման մասին և ցանկանում հաջողություն՝ հետագա հատորների հրատարակման գործում:

«Բազմավեպում» Հ. Թորոսյանը «Ազգագրական հանդեսի» մասին հետևյալն է գրում. «Այս համառոտ ակնարկը կվերջացնենք, հայտնե-

---

3 «Ազգագրական հանդես» (այսուհետև ԱՀ), գիրք Ա, Շուշի, 1896, էջ 6:

լով հարգելի հրատարակչին մեր ուրախությունը, մեր համակրանաց ջերմ զգացմունքները, փոխանակ այս անգին ծառայության՝ զոր կը մատուցանե մեր ազգայինը իրեն հանդեսի տեսով»[4]:

Երիմյան Հայրիկը հատուկ կոնդակով ողջունում է «Ազգագրական հանդեսի» հրապարակ գալը, գրելով. «Պր. Ե. Լալայեան, խմբագիր ազգագրական վեցամսեայ հանդիսի, որ բռնաչան վաստակօք ի լոյս էած զչորեսին հատոր հանդիսին ազգագրական, տեղագրական, հնախօսական և գիտական նոխ բովանդակութեամբ, և մեք գիտեմք, թէ հանիսն դժուարին է հաւաքումն, դասաւորումն և հրատարակութիւն նոցին, և որչափ կարօտին այնպիսիք բնդհանրապէս հրատարակիչք՝ հաչալերութեան և նպաստից, թէ նիւթական և թէ բարոյական»[5]:

Հ. Մեղավորյանը «Ազգագրական հանդեսի» մասին «Մուրճ» ամսագրում գրում է հետևյալը. «Ազգագրական հանդեսի» երևալը մեր պաբբերական մամուլի աննախանձելի ասպարիզում մի նշանավոր երեվույթ է և մեր սրտին շատ մոտ»[6]:

Նման ողջույններով հանդես եկան նաև «Դեղունի»[7], «Անահիտ»[8] և մյուս հանդեսները:

Անդրկովկասում ազգագրական աշխատանքներն ավելի ծավալելու նպատակով, Ե. Լալայանը 1900 թ. նոյեմբերի 21-ին Թիֆլիսում հիմնադրում է Ազգագրական հրատարակչական ընկերությունը, որի անդամների թիվը 1905 թ. հասնում է 80-ի: Ե. Լալայանը մտադիր էր ավելի բնդարձակել Ազգագրական հրատարակչական ընկերության գործունեությունը, այն վերածելով Հայոց ազգագրական ընկերության: Այդ նպատակով 1906 թ. կազմվում է ընկերության ծրագիր: Դրանով հիմք է դրվում Հայոց ազգագրական ընկերությանը: «Մշակի» 1906 թ. № 116-ում տպագրված է ընկերության նախագահ Ս.. Մելիք-Ազարյանի և անդամ-քարտուղար Ե. Լալայանի շրջաբերականն ընկերության հիմնադրման մասին[9], և «Մշակի» ողջույնն այդ առթիվ[10]:

---

4 Հ. Թորոսյան, Դրախտական ակնարկ, տե՛ս «Բազմավեպ», Վենետիկ, 1900, № 3, էջ 370:

5 Ա.Հ, դիրք Ե, Թիֆլիս, 1899, էջ 1:

6 Հ. Մեղավորյան, «Ազգագրական հանդես», դիրք Ա, տե՛ս «Մուրճ», Թիֆլիս, 1899, № 3—4, էջ 463:

7 «Դեղունի», Վենետիկ, 1903, էջ 78:

8 «Անահիտ», Փարիզ, 1899, № 5—6:

9 «Մշակ», Թիֆլիս, 1906, № 116:

10 Նույն տեղում, № 127:

Ընկերության նպատակը, ինչպես գրված էր կանոնադրության առաջին կետում, հետևյալն է. «...ուսումնասիրել Կովկասը, նրան կից երկրները և հայկական գաղութները, մասնավորապես ազգագրական և ընդհանրապես մարդաբանական գիտությունների տեսակետից»[11]: Այս իրագործելու համար Ընկերությունը պետք է հրատարակեր պարբերականներ, գրքեր, բառեզներ, կազմակերպեր գիտական արշավախմբեր, կատարեր հնագիտական պեղումներ, նպաստեր էջմիածնի և կովկասյան թանգարանների ֆոնդերի հարստացմանը, բաց աներ գրադարան, կազմակերպեր հրապարակային դասախոսություններ, ազգագրական-երաժշտական երեկույթներ, մրցանակներ սահմաներ արևելագիտական լավագույն աշխատանքների համար: Վերոհիշյալ աշխատանքների մեծ մասը պետք է կատարեր խմբագրական մասնաժողովը, որը, ընդհուպ մինչև Ընկերության գործունեության դադարումը, ղեկավարում էր Ն. Լալայանը:

Նորաստեղծ Ազգագրական ընկերությունը Ն. Լալայանի գլխավորությամբ իր գոյության ավելի քան տասը տարվա ընթացքում հսկայական աշխատանք ծավալեց: Ընկերությունը կարևոր գործ կատարեց ազգագրական-հնագիտական թանգարան հիմնելու ուղղությամբ: 1907 թ. մարտի 30-ին հրավիրված Հայոց ազգագրական ընկերության ժողովը որոշում ընդունեց նախապատրաստական աշխատանքներ տանել թանգարան ստեղծելու համար, և այդ կապակցությամբ անհրաժեշտ համարվեց հրատարակել նյութեր հավաքելու ծրագիր, պատրաստել մատյաններ՝ նյութերը գրանցելու համար, ստեղծել պահեստ Թիֆլիսում և այլն: Շուտով ծրագիրը տպագրվում է «Ազգագրական հանդեսի» 16-րդ գրքում, ապա՝ առանձին գրքույկով:

Ն. Լալայանի եռանդուն ջանքերի շնորհիվ կազմակերպվում է թանգարան, ուր կարևոր տեղ են գրավում նրա հավաքած և պեղած նյութերը: Թանգարանը գնալով հարստանում է, հասարակայնությունը ակտիվ մասնակցում է նյութական և հոգևոր մշակույթին վերաբերող նյութերի հավաքման գործին: Թանգարանն արդեն այնման հանաչում էր ստացել, որ ռուսական բնասերների, և բժիշկների 1913 թ. կայացած XIII համագումարի աշխարհագրական ենթասեկցիայի բյուրոն դիմել էր Հայոց ազգագրական ընկերությանը՝ խնդրելով համագումարի օրերին Թիֆլի-

---

11 *ՄՀ, գիրք 14, Թիֆլիս, 1906, էջ 186:*

սում ցուցահանդես կազմակերպել[12]: Ուշագրավ է նաև այն փաստը, որ Ի. Բարոդիևը կայսերական աշխարհագրական ընկերության անունից 1913 թ. ապրիլի 24-ին դիմում է Ե. Լալայանին, խնդրելով միջոցներ ձեռք առնել բնության պահպանության համար[13]: Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո Ե. Լալայանի ջանքերով թանգարանը փոխադրվում է Երևան, նրա բազայի վրա կազմակերպվում է Հայաստանի պատմության պետական թանգարանը, որի ազգագրության բաժնի առաջին վարիչը դառնում է Ե. Լալայանը:

Հիմնադրելով Հայոց ազգագրական ընկերությունը, Ե. Լալայանը նպատակ ուներ դարձնել այն ոչ միայն ազգագրական-բանասիրական բնույթի նյութերի հավաքման և հրատարակման մի ընդարձակ հաստատություն, այլև գիտական ուսումնասիրությունների կենտրոն: Սրա թե ինչու նա շատ ջանք է թափում Թիֆլիսում ազգագրական-մարդաբանական գրադարան բացելու ուղղությամբ: «Մշակ»-ի 1908 թ. № 55-ում տպագրված է Հայոց ազգագրական ընկերության նախագահ Ա. Մելիք-Ազարյանի, անդամ-քարտուղար Ե. Լալայանի և մյուս անդամների՝ խմբագրությանն ուղղված նամակը, որտեղ ասվում է, որ ընկերության խորհուրդը 1908 թ. հունվարի 4-ի նիստում որոշեց Թիֆլիսում բացել այդպիսի գրադարան, օգտվելով այն հանգամանքից, որ Ե. Լալայանը այդ գիտությունների վերաբերյալ իր հարուստ գրադարանը (5000 ռ. արժողությամբ) դնում է ընկերության տրամադրության տակ: Նամակի հեղինակները միաժամանակ խնդրում էին հասարակությանը՝ օգնություն ցույց տալու այդ գործին: Գրքերի հանակը գնալով անում է, հատկապես նվիրատվությունների, գրախոհանակությունների հաշվին, և շուտով դրանց թիվը հասնում է տասը հազարի: Գրադարանի վարիչ է դառնում Ե. Լալայանի կինը՝ Հայկանուշ Լալայանը, որն այդ գործը կատարում է առանց վարձատրության: Հայոց ազգագրական ընկերությունը թույլտվություն էր ստացել հայ գրերի գյուտի 1500-ամյա և հայկական տպագրության 400-ամյա հոբելյանի առթիվ Թիֆլիսում կազմակերպելու հայկական հրատարակությունների ցուցահանդես և դասախոսությունների շարք: Այդ ցուցահանդեսի կազմակերպման գործում գրադարանը մեծ դեր խաղաց: Հրատարակվում է նաև «Ազգագրական գրադարան» խորագրով մատենաշար, որից լույս տեսավ ընդամենը հինգ գիրք:

Հայոց ազգագրական ընկերությունը Ե. Լալայանի գլխավորությամբ

12 *Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Ե. Լալայանի ֆոնդ, 714/21.*

13 *Նույն տեղում, 714/21:*

կարևոր տեղ էր հատկացնում ազգագրական և մարդաբանական գիտությունների պրոպագանդմանը. այդ կապակցությամբ պարբերաբար կազմակերպվում էին դասախոսություններ և զեկուցումներ, որոնցով հանդես էին գալիս ժամանակի նշանավոր գիտնականները: Այսպես, Մ. Հովհաննիսյանը դասախոսություն է կարդացել «Կրոնի գաղափարի ծագման և էվոլյուցիայի մասին»[14] թեմայով, Գ. Լևոնյանը հանդես է եկել հայ աշուղների և մասնավորապես Ջիվանու կյանքի ու ստեղծագործության վերաբերյալ դասախոսությամբ, որը զուգակցվել է աշուղների ելույթներով, Ե. Լալայանը զեկուցում է կարդացել ասորիների մասին: Գ. Խալաթյանի մահվան տարեդարձի առիթով տեղի է ունեցել Հայոց ազգագրական բնկերության հրապարակային նիստը, ուր Ե. Լալայանը և Սարպետը հանգամանորեն ներկայացրել են հանգուցյալի գործունեությունը: Հ. Համբարձումյանը հանդես է եկել սովորութային իրավունքի էության, նրա օբյեկտիվ արտահայտության և ժամանակակից հասարակական կյանքում ունեցած ազդեցության հարցին նվիրված դասախոսությամբ[15]: Գ. Խիեկյանը զեկուցել է «Հայկական ամուսնական սովորույթները» թեմայով և այլն: Զեկուցումներից հետո տեղի են ունեցել վիճաբանություններ, որտեղ հանդես են եկել Ե. Լալայանը, Լեոն, Մ. Աբեղյանը, Ս. Կանայանը, Մ. Խոսաիկյանը, Լ. Մելիքսեթ-Բեկը և ուրիշներ:

Հայոց ազգագրական բնկերությունը հանախակի կազմակերպում էր նաև գիտական ու գրական երեկոներ, համերգներ, պարահանդեսներ, օպերաների դիտումներ, որոնցից ստացված եկամուտները մուծվում էին Բնկերության գանձարանը[17]: Նման երեկույթներ կազմակերպվում էին ոչ միայն Թիֆլիսում, այլև ուրիշ քաղաքներում:

Ե. Լալայանի հրատարակած առաջին աշխ բնկնող գործը «Ջավախի բուրմունք» բանահյուսական ժողովածուն էր[18]:

Այնուհետև Ե. Լալայանը հրատարակում է մի քանի փոքր, բայց հետաքրքրական հոդվածներ: Դրանցից են. «Սուրբ Սարգիս», ուր համառոտակի նկարագրում է Ս. Սարգսի պաշտամունքը և մեջ բերում գրույցներ Ախալքալաքի բարբառով[19]: «Տանկախոս հռոմեական հայերը» հոդ-

14 «Մշակ», 1912, № 279:

15 Նույն տեղում, 1913, № 43:

16 Նույն տեղում, № 31:

17 «Մշակ», 1913, № 92:

18 «Ջավախքի բուրմունք», հավաքեց Ե. Լալայանց, Թիֆլիս, 1892:

19 «Հանդես ամսօրյա», 1894, № 11, էջ 350—353:

վածը[20] վերաբերում է Ախալխալաքի գավառի Բավրա, Խուլգումա, Կարտիկում և մասամբ Տուրս գյուղերի բնակիչներին, որոնք այդտեղ են գաղթել 1829 թ. Ախալցխայի գավառից: Վերոհիշյալ երկու հոդվածներն էլ նույնությամբ ընդգրկված են հեղինակի «Ջավախք» պատմաազգագրական աշխատության մեջ:

Ե. Լալայանը Փարիզի ժողովրդական ավանդույթների ընկերության գործուն անդամներից էր և 1895 թ. այդ ընկերության պարբերականում տպագրվում է նրա «Հայկական ավանդություններ և սնոտիապաշտություններ» հոդվածաշարը: Սրանք հետագայում տեղ գտան հեղինակի «Ջավախք» պատմաազգագրական աշխատության մեջ: Ե. Լալայանը Փարիզի մարդաբանական ընկերության ժողովում դասախոսություն է կարդացել «Հայոց նախնի պատմական երգերի և ավանդությունների մասին»: Ջեկուցումը տպագրվել է „Bulletin de la societe d' Anthropologie"[21]-ում 1896 թ., իսկ Ե. Լալայանը ընտրվել է վերոհիշյալ ընկերության թղթակից-անդամ:

«Ազգագրական հանդեսի» Ա. գրքում զետեղված է Ե. Լալայանի «Համառոտ տեսություն հայ ազգագրության» հոդվածը: Պետք է նկատել, որ XIX դարի երկրորդ կեսին ազգագրությունը և բանահյուսությունը դեռևս տարանջատված չէին, ուստի հեղինակը խոսում է թե՛ բանահյուսության, թե՛ ազգագրության մասին, առավելապես ծանրանալով հոգեվոր մշակույթի վրա: Հոդվածը, սակայն, անավարտ է և շատ հետու հայ ազգագրության համառոտ տեսություն լինելուց:

«Ազգագրական հանդեսի» Ա. և Բ գրքերում տպագրված է Ե. Լալայանի «Ջավախք» մեծածավալ, արժեքավոր աշխատությունը, որը գրված է հեղինակի հավաքած նյութերի հիման վրա և որպես այդպիսին ամբողջովին նորույթ է: Աշխատությունը կազմված է հետևյալ մասերից՝ «Պատմական համառոտ տեսությունը», ուր տրվում է Ջավախքի պատմական անցյալը հնագույն ժամանակներից մինչև XIX դ. վերջը, «Ջավախքի տեղագրությունը»՝ լեռներ, լներ, գետեր, կլիման, բուսական և կենդանական աշխարհը, նշանավոր գյուղերը, հնություններ՝ եկեղեցիներ, ամրոցներ: Մյուս գլուխները նվիրված են Ջավախքի բնակչությանը. հանգամանորեն տրվում են վիճակագրական տվյալներ Ջավախքում բնակվող հայերի, հայ բոշաների, ռուսների, վրացիների, հույների, թուրքերի, հրեների, ինչպես նաև ազգաբնակչության տեղաշարժի, տրն-

[20] *«Հանդես ամսօրյա», 1894, № 10, էջ 313—315:*

[21] *Տե՛ս* „Revue des traditions populaires", *Փարիզ, 1895, № 1, էջ 1—9, № 3, էջ 1—6:*

տեսական դրույթան, ժողովրդի լուսավորության մասին, ապա՝ բնակարանների, ամուսնության և հարսանեկան սովորույթների, ընտանեկան կյանքի, բժշկության, հավատալիքների, սնահավատության, հոգու և հանդերձյալ կյանքի և այլ հարցերի վերաբերյալ:

Ե. Լալայանի աշխատությունը չերմ ընդունելություն գտավ: Անգամ նրա ննջադատներից Գ. Վանցյանը ստիպված էր ընդունել, որ «Հանդեսի ծնունդ ու էությունն է «Ջավախք» իմիտատոյն ժողովրդական հավաքածուն, որ յուր առատ, բազմակողմանի նյութով մի անգին գանձ է հայ ազգագրության համար»[22]:

«Ազգագրական հանդեսի» Բ և Գ գրքերում է զետեղված Ե. Լալայանի խմբագրությամբ լույս տեսած կոլեկտիվ «Վարաևդա» աշխատությունը: Այդ արժեքավոր նետազոտության իրագործմանը մասնակցել են Ե. Լալայանը, Լ. Աբաբեկյանը, Ղ. Տեր-Ղազարյանը, Հ. Վ.-ն և Ա. Բ.-ն, աշխատության մեծ մասը գրել է Ե. Լալայանը[23]: «Ազգագրական հանդեսի» Դ գրքում նույն բնդարձակ ծրագրով շարադրված են «Սիսիան» և «Ջանգեզուր» աշխատություններ[24]: Նույն մեթոդով ու սկզբունքներով Ե. Լալայանը «Ազգագրական հանդեսի» տարբեր գրքերում հրապարակել է հանում Գանձակի գավառին[25], Բորչալուի գավառին[26] նվիրված ծավալուն աշխատություններ:

Այնուհետև լույս է տեսնում նաև Ե. Լալայանի «Նոր Բայազետի գավառ կամ Գեղարքունիք» մեծածավալ աշխատությունը[27], ուր նա հանգամանորեն տալիս է Նոր Բայազետի տեղագրությունը, պատմությունը, հարսանեկան սովորույթները, հավատը: Աշխատությունը գրված է երկար տարիների ընթացքում Ե. Լալայանի հավաքած ազգագրական-բանահյուսական նյութերի և կատարած պեղումների հիման վրա: Ե. Լալայանի «Նոր Բայազետի գավառ» աշխատությունն արժանացել է Ղուկասյան մրցանակի, իսկ «Գանձակի գավառը»՝ Սանակ-Մնացոսյան մրցանակի:

---

22 Գ. Վանցյան, *«Ազգագրական հանդես», գիրք Ա: Տե՛ս «Մուրճ», Թիֆլիս, 1896, № 5, էջ 635:*

23 *Ա.Հ., գիրք Գ, 1898:*

24 *Ա.Հ., գիրք Դ, 1898:*

25 *Ա.Հ., գիրք Ե, 1899; գիրք Զ, 1900, գիրք 7—8, 1901:*

26 *Նույն տեղում, գիրք 7—8, 1901, գիրք 9, 1902, գիրք 10, 1903, գիրք 11, 1904:*

27 *Ա.Հ., գիրք 13, 1906, գիրք 15, 1907, գիրք 16, 1907, գիրք 17, 1908, գիրք 18, 1908, գիրք 19, 1910, գիրք 20, 1910, գիրք 22, 1912, գիրք 23, 1912, գիրք 24, 1913:*

Իր հաջորդ աշխատանքը՝ «Վասպուրականը» , Ե. Լալայանը նախատեսել էր հրատարակել մի քանի հատորով, սակայն դա երբեք չի հաջողվում: Հրատարակված աշխատությունը կազմված է նեանյալ մասերից՝ Վասպուրականի ազգագրությունը, բանահյուսությունը, Վասպուրականի ասորիները, տնայնագործությունը, նշանավոր վանքերը, ընդ որում նա ոչ միայն վանքերի նկարագրությանն է անդրադառնում, այլև խոսում է վանքերի շուրջը կատարվող ծեսերի մասին, տալիս է վանքերի և նրանց շրջակա տապանաքարերի արձանագրությունների վերլուծությունը: Դա մի հիմնարար և արժեքավոր աշխատություն է Վասպուրականի վերաբերյալ և արդյունք է նեղինակի մի քանի տարիների համառ, բռնաջան աշխատանքի:

Ե. Լալայանի տեսական բնույթի աշխատություններից է «Միասկան կարգերը հայոց մեջ» հոդվածաշարը[29] (շարադրված է Հ. Սպենսերի մեթոդով), որը թեև պարունակում է մի շարք սխալ դրույթներ, բայց արժեքավոր է փաստական հարուստ նյութի օգտագործմամբ: Ե. Լալայանի կյանքի վերջին շրջանում գրած աշխատություններից է «Նիժի և Վարդաշենի ուսիները ազգագրական տեսակետից»[30] հոդվածը, որը նրա երկամյա ուսումնասիրության արդյունքն է և հիմնականում գրված է իր հավաքած նյութերի հիման վրա: Հեղինակը համառոտակի նկարագրում է Նիժի և Վարդաշենի տեղագրությունը, բուսական և կենդանական աշխարհը, ուսիների ծագմանը վերաբերող տեսակետները, ապա անցնում է լեզվին: Սոցիալական կարգը բնորոշելիս նեատիրիր տվյալներ է բերում անցյալում ուսիների մեջ գոյություն ունեցած մայրիշխանության մասին: Բայց աշխատությունն ամբողջական չէ, որովհետև չեն տրված ուսիների սոցիալական հարաբերությունները, հավատը, մշակույթը:

Ե. Լալայանի վերջին աշխատությունը «Տղաբերի սովորությունների զարգացումը հայոց մեջ» զեկուցումն է, որ նա կարդացել է ՀՍԽՀ գիտության և արվեստի ինստիտուտի պատմահասարակական բաժնում, 1930 թ. մայիսի 10-ին, այն լույս է տեսել նեղինակի մահից նետո՝ 1931 թ., նույն ինստիտուտի «Տեղեկագրի» 5-րդ հատորում: Հոդվածում Ե. Լալայանը օգտագործելով իր հավաքած նյութերը, ինչպես նաև համեմատական ազգագրության հարուստ տվյալներ, հանգամանորեն բացահայտում է տղաբերի սովորույթների էվոլյուցիան՝ սկսած նեա-

28 *ՄՀ, գիրք 20, 1910, գիրք 21, 1912, գիրք 22, 1912, գիրք 23, 1912, գիրք 24, 1913, գիրք 25, 1914, գիրք 26, 1916:*

29 *ՄՀ, գիրք 21, 1912, գիրք 23, 1912, գիրք 25, 1914, գիրք 26, 1916:*

30 *«ՀՍԽՀ Գիտության և արվեստի ինստիտուտի տեղեկագիր», № 1, Երևան, 1926:*

գույն շրջաններից մինչև XX դարի սկիզբը: Տալիս է տղաբերքի սովորույթների համալիրը բոլոր տարրերով հանդերձ՝ ամլություն, հղի կնոջ օգնող և հալածող ոգիներ, ծնունդ, բառսունք և այլն: Տղաբերքի սովորույթները ննջելիս Ե. Լալայանը նմանորեն ցույց է տալիս նրա աղերսը ջրի, կրակի, կենդանիների, ծառերի, բարերի պաշտամունքի և նմանական կախարդության հետ:

* * *

Երվանդ Լալայանի գիտական գործունեության հիմնական բնագավառներից է եղել ժողովրդական բանահյուսությունը: Ե. Լալայանը գիտական ասպարեզ մտավ այն ժամանակ, երբ հայ բանահյուսության ռահվիրա Գարեգին Սրվանձտյանցի օրինակով նշանակալից աշխատանք էր կատարված բանահյուսական նյութերի հավաքման և հրատարակման ասպարեզում: Բացի Գ. Սրվանձտյանցի հանրահայտ «Դրոց-բրոց», «Մանանա» և «Համով-հոտով» ժողովածուներից, հրապարակի վրա կային Տ. Նավասարդյանի «Հայ ժողովրդական հեքիաթների» 1—10 գրքերը, Գ. Շերենցի «Վանա սազ» (I և II մաս), Գ. Տեր-Աղեքսանդրյանցի «Թիֆլիսեցոց մասվոր կյանքը» ժողովածուները և մի բանի այլ ժողովածուներ: Բանահյուսական նյութեր էին հրատարակում «Մեղու Հայաստանի» լրագիրը, «Փորձ» ամսագիրը և ուրիշ այլ պարբերականներ: Ժամանակի հասարակական ու գրական մտավորական գործիչների կողմից բանահյուսությունն ընկալվում և դիտվում էր որպես ազգային մշակույթի առաջատիմական ու կարևոր բնագավառներից մեկը: Այսուամենայնիվ, պետք է ասել, որ տվյալ շրջանում ժողովրդական բանահյուսության նյութերի հավաքման ու մասնավորապես հրատարակության գործը դեռևս մնում էր առանձին անհատ գործիչների նախաձեռնության ու ինքնավորությունների շրջանակներում: Նեղ էր ու սահմանափակ բանահյուսական նյութերի հավաքման ոլորտը:

1887 թ. Գր. Խալաթյանի «Ուրագիր հայ ազգագրության և ազգային իրավաբանական սովորույթների» գրքի հրատարակմամբ և հատկապես 1896 թ. Ե. Լալայանի «Ազգագրական հանդեսի» հիմնադրմամբ խոշոր թեկուզ է կատարվում հայ ժողովրդական մշակույթի ինքնագոյության բնագավառում. ազգագրությունն ու բանահյուսությունը նյութերի տարերային հավաքման վիճակից բարձրանում և դառնում են գիտականորեն կազմակերպված, հասարակական լայն ճանաչում գտած մասնաճյուղեր: Առաջնորդվելով եվրոպական և ռուսական առաջավոր գիտա-

կան մոմի ճվաճումներով, Ե. Լալայանը, բացի գեղարվեստաճանաչողական կողմից, բանահյուսությունը դիտում էր նաև որպես պատմա-ազգագրական կարևորագույն տեղեկություններ սկզբնաղբյուր: Ե. Լալայանը ժողովրդական բանահյուսությունը դիտում էր որպես ազգագրության մի անբաժանելի օղակ և իր ազգագրական աշխատություններ մեջ մեծ տեղ էր հատկացնում բանահյուսական նյութերին, որոնք ոչ միայն լրացնում ու լուսաբանում են ճնճարկվող պատմաազգագրական շրջանի ընտանեկան բարեւրն ու հավատալիքները, այլև ինքնց իրենք՝ բանահյուսական այդ ստեղծագործությունները էլ հասկանալի են դառնում ու պատճառաբանվում տվյալ համալիրի մեջ: Այդպիսիք են՝ ամուսնության, հարսանիքի, մանվան, թաղման, ծննդյան, ավանդական տոնախաղարությունների հետ կապված ծիսական երգերը, պատմական տեղանուններին, իրադարձություններին, դեմքերին վերաբերող, ինչպես նաև բնական տարերքի՝ ջրի, կրակի, նաև հավատալիքների ու նախապաշարմունքների հետ կապված ավանդությունները ու առասպելական զրույցները: Պատմական ավանդություններից են՝ Դավիթ Անհաղթի, Օհան Օձնեցու, Գրիգոր Տաթևացու մասին եղած և ուրիշ այլ պատումները, որոնք տպագրված են «Ազգագրական հանդեսի» էջերում[31]: Տարբեր առիթներով ազգագրական աշխատանքներում օգտագործվում են նաև այսպես կոչված փոքր ժանրերի նմուշներ՝ առածներ, անեծքներ, օրհնանքներ և այլն, որոնք, չնայած հարևանցի և անցողիկ օգտագործման բնույթին, ուշագրավ հարցեր են պարզում: Այսպես, Ե. Լալայանը «Ջավախք»-ում հիշատակում է ժողովրդի մեջ գործածական «ա՛յ մազդ կարած» կամ «մազդ մկրատ» նախատական անեծք-արտահայտությունը: Շատերի համար անհասկանալի է այդ արտահայտության նախատական իմաստը: Ե. Լալայանը պարզել է, որ դա ծագում է ժողովրդական մի հին սովորույթից, համաձայն որի, մեռած կնոջը թաղելիս ծամերը կտրել են՝ երախտիքը պահելու համար: Ե. Լալայանը գրի է առել նաև հայերի մեջ պահվող մի շարք ավանդություններ Ալեքսանդր Մակեդոնացու[32] մասին, որոնք տարբերակներ են համաշխարհային բանահյուսության շատ տարածված սյուժեների: Ուշադրության արժանի է նաև նրա հայտնաբերած և տպագրած «Ադա Գեղեցիկ»[33] ավանդավեպը, որ յուրահատուկ ձևով արձագանգում է Մովսես Խորենացու ներկայացրած «Ադա Գեղեցիկ և Շամիրամ» առասպելական-վիպական զրույցին:

31 *ԱՀ, գիրք 10, Թիֆլիս, 1903:*

32 *Նույն տեղում, էջ 304—313:*

33 *ԱՀ, գիրք 9, 1902, էջ 114—159:*

Ազգագրական նյութերին միաձուլված ու շաղկապված բանահյուսական այս նյութերից բացի, որպես պատմաազգագրական ավյալ շրջանի հոգևոր մշակույթի մի բնագավառ, «Ազգագրական հանդեսում» Ե. Լալայանը տպագրել է առանձին ժանրերով կամ էլ բազմաժանր խառն նյութերի հավաքածուներ, ինչպես, օրինակ՝ Բոբշալուի և Վասպուրականի բանահյուսության նմուշները[34]: Առանձին ժանրի նյութերից շատ տարածված են վիճակի կամ ջանգյուումի երգերը, որոնք սովորաբար կատարվում են Համբարձման տոնակատարության և ընդհանրապես ժողովրդական տարբեր տոների ժամանակ: Վիճակի երգերը անխարդախ հայելու նման ցոլացնում են ժողովրդի առօրյան ու կենցաղը, թեև դրանց հիմնական բեռան սերն է, կապված գեղջուկ աշխատավորի հոգսերի ու ապրումների հետ: Ե. Լալայանի հավաքածուներում մեծ տեղ են գրավում տարբեր ազգագրական շրջաններից (Ջավախք, Գանձակ, Ջանգեզուր, Լոռի) գրի առնված վիճակի կամ ջանգյուումի երգեր-խաղիկները:

Զգալի արժեք են ներկայացնում հայ բանահյուսության համար նաև Ե. Լալայանի գրի առած ու հրատարակած «Սասնա ծռեր» վեպի Նոր Հայազեսի[35], Վանի[36] և Ալաշկերտի[37] պատումները և իրանական «Ռոստամ-Զալ»[38] վեպի հայկական տարբերակը:

Երվանդ Լալայանը իր ժողոված բանահյուսական նյութերը հրապարակ է հանել նաև առանձին գրքերով, ի մի հավաքելով ավյալ շրջանից գրի առնված բանավոր ստեղծագործության բոլոր տեսակները: Այդպիսի մի ժողովածու է նրա «Ջավախքի բուրմունքը»[39], որի նյութերը հավաքել է անձամբ, 1880-ական թվականների վերջերին, երբ ուսուցչությամբ էր պարապում Ախալքալաքում:

«Ջավախքի բուրմունքը» ժողովածուի կարևոր արժանիքներից է նրա բազմաժանր բնույթը, հատկապես այն, որ Ե. Լալայանը պատշաճ ուշադրություն է դարձրել բանահյուսական բանաձևային և վիպական ու ճարտարական մի շարք տեսակների (աղոթքներ, ասացվածքներ, ավանդություններ, երգեր և այլն), որոնք սերտորեն աղերսվում են ազգագրության: Ե. Լալայանը բանագետի հմտությամբ նյութերի ոչ միայն ժան-

---

34 *ՄՀ, գիրք 9, 21, 25 և այլն:*

35 *ՄՀ, 18-րդ գիրք, Թիֆլիս, 1906, էջ 37—82:*

36 *ՄՀ, 20-րդ գիրք, Թիֆլիս, 1910, էջ 61—101: ՄՀ, 21-րդ գիրք, Թիֆլիս, 1910, էջ 101—126:*

37 *«Մարզարիտներ հայ բանահյուսության», 9 գիրք, Թիֆլիս, 1915:*

38 *ՄՀ, 14-րդ գիրք, Թիֆլիս, 1906, էջ 69—85:*

39 *«Ջավախքի բուրմունք», Թիֆլիս, 1892 թ.:*

րային բաժանում է կատարել, այլ նաև յուրաքանչյուր ժանրի տակ ենթատեսակներն է զանազանել: Ժողովածուի մեջ առանձին բաժիններով ներկայացրել է առողջությանն ու հիվանդությանը, առօրյա կյանքին վերաբերող աղոթքները: Ե. Լալայանը խորապես գիտակցել է դրանց դերը ժողովրդի մտածողության ու աշխարհընկալման պարզաբանման խնդրում, նկատի առնելով, որ ժողովրդական աղոթքները ներքանոսական արմատներ ունեն և հաճախ հակադրվում են բրիստոնեական աշխարհայեցողությանը:

Հարուստ ու բազմազան են ժողովածուում ներկայացված ժողովրդական երգերը (սիրո, հարսանյաց, սգո, պանդխտության և այլն): Ե. Լալայանի գրի առած սիրո երգերը մեծ մասամբ գովերգեր են և իրենց կառուցվածքով, կրկներգերով ու բովանդակությամբ հիշեցնում են հայ ժողովրդական երգերի մյուս տարբերակները («Կայնե ֆիտան պոյիդ դուրպան», «Ֆելե՛, ֆելե՛ պոյիդ մատաղ», «Ա՛խ լոր իմ, լոր իմ...» և այլն): Սիրո երգերի մեջ ուշադրության արժանի է «Ես վարեն կուգայի, դուն դուռը բացիր» նշանավոր երգի տարբերակը, որը հայտնի է «Անտուանի» անվամբ և նոտագրված է Կոմիտասի կողմից: Հարսանեկան, հատկապես հարսին վերաբերող երգերի մեջ («Աղջի, հարսնվոր էկավ գեղի վերևեն...», «Չե՛մ էրթա, մերիկ, չե՛մ էրթա...») որոշակի նկատվում են տխուր ու թախծոտ տրամադրություններ, որոնք անդրադարձնում են կնոջ իրավական վիճակը անցյալի պայմաններում: Ժողովածուի մեջ ներկայացված են ընտանեկան, կենցաղային, պանդխտության, երկրագործի, սգո, երգիծական և ծիծաղաշարժ երգերի նմուշներ:

«Ջավախի բուրմունք» ժողովածուում աչքի են ընկնում ավանդությունները, որոնք Ե. Լալայանը բաժանել է հետևյալ խմբերի՝ կրոնական, կերպարանափոխության, պատմական, տեղագրական և կյանքի պատկերներ: Ավանդությունների մեջ պատմական արժեք են ներկայացնում Պապ թագավորի մասին եղած նյութերը, որոնք հեղինակը բաղդատում է Փավստոս Բուզանդի պատմության մեջ եղած վկայությունների հետ և հետաբրքրական համեմատություններ գտնում: Կերպարանափոխության բաժնում դրված ավանդություններից շատերը իրերի և կենդանիների ծագումը հյուսված լեգենդներ են («Փեթակ», «Մկներ և կատու», «Լու» և այլն): Ե. Լալայանի գրառած «Թրմկաբերդի առումը» սեղմ, մի քանի տողից բաղկացած ավանդության հիման վրա մեծ բանաստեղծ Հ. Թումանյանը կերտել է իր նշանավոր նույնանուն պոեմը: Հանախ գեղագիտական ու բառոյախոսական խոր ըմբռնումներ կարող է պարունակել անգամ մի փոքր ավանդություն: Դրա ցայտուն մի օրինակ է Ե. Լա-

լայանի ժողովածուում դրված «Բինգյոլը». «Փաշին մեկը կերթա Բինգյոլու սարերը ինֆ էնելու, ճոխյարը դոխմ՝ մորթե, տանի կը աղբուրը լվալու: Բիրտան դոխը սաղնա բոյի կը, վրայեն կաթկթած ջուրը մե-մե աղբուր դառնա, ակե բխա կը, ատոր համար ա Բինգյոլ կըսվի»[40]: Հայտնի է, որ Բինգյոլի մասին շատ ավանդություններ են հյուսվել, որոնք մշակվել են մեր բանաստեղծների կողմից (Ավ. Իսահակյան):

Հայկական բանահյուսության մեծարժեք գործերից է Ե. Լալայանի «Մարգարիտներ հայ բանահյուսության» եռահատոր ժողովածուն, որը պարունակում է բացառապես ինֆիաթներ[41]: Դա Տ. Նավասարդյանի «Հայ ժողովրդական ինֆիաթների» տաս պրակներից հետո մեր ինֆիաթագրության ամենածավալուն հավաքածուն է: Ժողովածուի առաջին երկու գիրքը պարունակում է բուն Արարատյան դաշտի ինֆիաթները (Աշտարակ, Օշական, Փարպի, Վաղարշապատ), իսկ 3-րդ գրքում ընդգրկված է Ապարանում բնակություն հաստատած արևմտահայ վերարտնակիչների (մշեցիներ, վանեցիներ, ալաշկերտցիներ, մանազկերտցիներ և այլն) ինֆիաթները: «Մարգարիտների» երեք գիրքը միասին պարունակում է 91 ինֆիաթ, որոնք 1912—1914 թթ. գրի է առել Ե. Լալայանը: «Մարգարիտներ» ժողովածուում գերակշռող տեղ են գրավում հուշապատում սյուժեները, ինչպես, օրինակ՝ Հազարան բլրույի, անմահական խնձորի ու ջրի, կախարդի անեծքով կերպարանափոխված մարդկանց արկածների, տղա դարձող աղջկա հաջագործությունների և բազմաթիվ այլ սյուժեներ, որոնք միավորվում են մի ընդհանուր թեմայի տակ՝ պայքար գերբնական ուժերի դեմ՝ անեծքով պատուհասված մարդուն ու բնությունը վերակենդանացնելու կամ կախարդված գեղեցկուհիներին ու անմեղ մարդկանց փրկելու համար: Ինֆիաթների մի փոքրիկ ժողովածու էլ Ե. Լալայանը հրատարակել է Ալեքսանդրապոլում՝ «Պառավաշունչ» խորագրով, որտեղ զետեղված է Ջավախքի չորս ինֆիաթ[42]:

Հավաքչական գործունեության ընթացքում Ե. Լալայանին հետաքրքրել են նաև առակներն ու կենդանական վեպիկները, երգիծական զրույցները ու անեկդոտները, որտեղ վառ դրսևորում են գտել ժողովրդական երգիծանքն ու հումորը: Դեռևս «Ազգագրական հանդեսի» II գրքում (1897 թ.) Ե. Լալայանը տպագրում է «Կենդանական վեպ» խո-

---

40 Ե. Լալայան, *Ջավախքի բուրմունք, էջ 59:*

41 Ե. Լալայան, *Մարգարիտներ հայ բանահյուսության, Ա—Գ գրքեր, Թիֆլիս—Վաղարշապատ (1914—1915 թթ.):*

42 Ե. Լալայան, *Պառավաշունչ, Ալեքսանդրապոլ, 1911:*

ռագրի տակ մի շարք առակներ: Հետագայում առանձին գրքով հրատարակում է իր իսկ գրի առած ժողովրդական զվարճախոսներ Մոլլա-Նասր-էդ-Դինի և Հոթոսի անուններով հասած երգիծական զրույցներն ու առակները[43]:

«Մոլլա Նասր-էդ-Դին» ժողովածուի առաջաբանում Ե. Լալայանը բացատրում է իր մտադրությունը՝ հավաքել հայ ժողովրդի մեջ շրջող առակները, հետագայում ուսումնասիրություն կատարելու և ցույց տալու նրանց ծագումը, զարգացումը, արտահայտած փիլիսոփայությունն ու բարոյական սկզբունքները, ժողովրդական ծաղրի ուժը:

Ե. Լալայանը գիտական մոտեցում է ունեցել նյութերի նկատմամբ, հավաքելով կրկնվող բոլոր տարբերակները: Ավելի ուշագրավ ու հետաքրքիր է Ե. Լալայանի մի դիտողությունը. «Առակների այս շարքը սկսում ենք Մոլլա-Նասր-էդ-Դինին վերագրված առակներով,— գրում է նա,— ասացինք, որ մեր նպատակն է հայ ժող. առակներ հավաքել, մինչդեռ սկսում ենք մի մոլլայի առակներով: Ճշմարիտ է, մոլլան թուրք է, սակայն նրան վերագրված առակների մեծագույն մասը հայ ժողովրդի ստեղծագործությունն է, նման այն բազմաթիվ բրեական երգերի, որ ասել են մեր հայ աշուղները կամ ժողովուրդը: Մոլլա-Նասր-էդ-Դինի ժողովրդականությունը պատճառ է եղել, որ տեղական փոքրիկ առակախոսների՝ հոթոսների, ծակ-սահակների, պըլը-պուղիների և ուրիշ սյսպիսիների առակները նրան են վերագրվել»[44]:

Ե. Լալայանը միշտ էլ հիմնական ուշադրությունը բևեռել է ժողովրդական բանահյուսության հավաքման գործին: Նա այդ գործին մոտեցել է հայրենասեր գիտնականի խոր բմբռնմամբ, բազմաթիվ առիթներով անդրադառնալով հավաքման գործին, գրել է. «Քանի որ ուսումնասիրություններ կատարելու համար երբեք ժամանակ չի պակասելու, մինչդեռ երբ մի քառորդ դար էլ անտարբեր գտնվենք հայկական նյութերը հավաքելու, շատ ու շատ նյութեր բոլորովին անհետանալու են, ուստի իմ անմիջական նպատակը ոչ թե ուսումնասիրություն տալն է, այլ եվրոպական ուսումնասիրության լույսով հայկական նյութերը որոնելը, գտնելը, կորստից ազատելը»[45]:

---

43 Ե. Լալայան, *Ժողովրդական առակներ, Ա, «Մոլլա-Նասր-էդ-Դին», Ա և Բ տիպ, Թիֆլիս, 1903—1904: Բ. Հոթոս, Թիֆլիս, 1903:*

44 Ե. Լալայան, *Ժողովրդական առակներ, Ա. «Մոլլա-Նասր-էդ-Դին», էջ 6—7:*

45 Ե. Լալայան, *Միսական կարգերը հայոց մեջ (արտատպված «Ազգագրական հանդեսից»), Թիֆլիս, 1913, էջ 3:*

Ե. Լալայանը, նամիոդի մախաղն ուսած և ցուպը ձեռին, ոտի տակ է առել Հայաստանի հաղարներ, գյուղերն ու ավանները (Ալեքսանդրապոլ, Կարս, Կաղզվան, Աբարատյան դաշտ, Լոռի, Շարուր-Դարալագյազ, Հին Նախիջևան, Ջանգեզուր, Ղարաբաղ, Վան, Մոկս և այլուր) և անդադրում ու անխոնջ պեղել է մարդկանց հոգու ընդերքը, հայաճաբերելով բանավոր գրականության անբավ գանձեր: 1915 թ. Հայոց ազգագրական ընկերությունը Ե. Լալայանի նախաձեռնությամբ կազմակերպում է գիտարշավ՝ Անդրկովկասի ավաններում ու գյուղերում գրված արևմտահայ գաղթականներից բանահյուսական և ազգագրական նյութեր գրի առնելու նպատակով: Դիտարշավը, որ գլխավորում էր ինքը, իր կազմում ուներ այդ գործին նվիրված ուսուցիչներ ու մտավորականներ (Ե. Մարտիրոսյան, Ե. Պեզազյան, Ս. Շալճյան, Ա. Բարսեղյան, Շ. Կուժիկյան, Ա. Թաբաղյան-Վեսպեր և ուրիշներ): Չնայած անբարենպաստ պայմաններին, Ե. Լալայանի արշավախումբը շուրջ հինգ ամսվա ընթացքում շրջագայել է Անդրկովկասի հաղարներն ու գյուղերը, իր շուրջը հավախմբել բուրական չարդերից մազապուրծ Մշո, Մոկսի, Վանի, Բիթլիսի, Արևելքի, Ռշտունիքի, Սասունի, Ալաշկերտի, Բասենի, Շատախի, Հարքի և այլ վայրերի անօթևան ծերունիներին ու երիտասարդներին և բառացիորեն ու նյութապես սփոփել նրանց՝ գրի առել հնավանդ հեքիաթները, զրույցները, առակները, երգերը, խաղերը, առածներն ու հանելուկները: Շատերն այդ գաղթականներից զոհվել են, չդիմանալով խղճին, համաճարակներին ու զրկանքներին, բայց փրկվել է նրանց խմաստուն խոսքն ու զրույցը, արդարության, ազատության ու երջանկության մասին նրանց բանաստեղծական երազանքը: Ե. Լալայանի գիտական այդ խմբարշավի արդյունքները բեղմնավոր են եղել: Գրի է առնվել շուրջ 800 հեքիաթ, զրույց ու ավանդություն, բազմաթիվ երգեր ու բանահյուսական այլ ժանրերի ստեղծագործություններ:

Անձամբ շրջագայելուց ու նյութեր հավաքելուց բացի, Ե. Լալայանը մեծ ջանքեր է գործադրել այդ կարևոր գործի մեջ մտավորականության լայն խավերին ներգրավելու համար: Նա մամուլի էջերում հրատարակած հայտարարություններով, Հայոց ազգագրական ընկերության կազմակերպած դասախոսություններով և բազմաթիվ այլ միջոցներով հորդորում և խրախուսում էր հայ մտավորականներին՝ գրականության ու լուսավորության գործիչներին, ազգային մշակույթի պահպանման փափագով նվիրվել այդ մեծ գործին: Ե. Լալայանը գրում էր. «Եվ դեռ բանի հաղաքակրթության հուրը լափում է անցյալի բոլոր հիշատակները, մենք

պետք է շտապենք հավաքելու, ինչ որ դեռ մնացել է...»[46]:

Ե. Լալայանն իրավացիորեն գտնում էր, որ հայ ժողովրդի բանավոր գրականության գանձերի և հոգևոր մշակույթի այլևայլ հյուրերի հայտնաբերումն ու հավաքումը աննպատակ գործ չէ, այլ պետք է դառնա համազգային, համաժողովրդական գործ՝ մտավորականության գիտակցված ու կազմակերպված մշտական ու եռանդուն աշխատանքի ասպարեզ: Ե. Լալայանը բանահյուսությունն ու ազգագրությունը դիտում էր որպես «ժողովրդական կյանքի նշմարիտ հայելի, մի շտեմարան, որտեղից վիպասանն իր նյութը կվերցնի՝ ազգային վեպ ստեղծելու, լեզվաբանը բառեր ու ոճեր կհավաքի՝ ազգային լեզուն հարստացնելու և օտարաճաշակությունից ազատելու, հրապարակախոսն ու հոգևորականն ազգի վերքերը կնկատեն՝ նրանց դարմանումը խորհելու, բժիշկը նրանց ցավերը կտեսնեն՝ սպեղանիներ հասցնելու, ուսուցիչը մանկան բնատանկան կյանքը կըմբռնի՝ այն բարեփոխելու, իսկ գիտնականը իր նյութը կվերցնի՝ գծելու էվոլուտիոնի օրենքները»[47]:

Ե. Լալայանը տաղանդավոր կազմակերպչի իր արտակարգ ընդունակությամբ տարբեր գավառներից ու ավաններից դեպի այդ կարևոր գործն է ձգում ուսուցիչներին, գրողներին ու հասարակական գործիչներին և համապատասխան ցուցումներով, ծրագրերով օգնում նրանց հավաքչական աշխատանքին: Շնորհիվ նրա այդ եռանդուն գործունեության «Ազգագրական հանդեսի» էջերում և այլուր հրապարակ են գալիս Հայաստանի պատմական տարբեր գավառների բանահյուսական արժեքավոր նյութեր: Դրանցից հիշատակության արժանի են՝ Գրիգոր Խան. Նժդեհյանի Ալաշկերտի բանավոր գրականության բազմաժանր հավաքածուն, Հրաչյա և Արմենուհի Աճառյանների պոլսահայ ռամկական անգիր գրականության հավաքածուն, Բենսեի (Սահակ Մովսիսյան) Հարֆ գավառի (Բուլանխ) բանահյուսության հետաքրքրական նմուշները, Ա. Խաչակյանի «Փշրանքներ ժողովրդական բանահյուսությունից», ինչպես նաև Քաջբերունու (Արցախ, Շարուր-Դարալագյազ), Արամ Զարբգի (Բասեն), Դաղյանի (Վարանդա), Արմայիկի (Ղափան), Ա. Սոլաքյանի (Վան), Խ. Փորշեյանի (Նոր Նախիջևան), Վրթ. Փափազյանի (Հայ բռշաներ) և ուրիշ այլ բանահյուսական հավաքածուներ: «Ազգագրական հանդեսում» տպագրվում են նաև «Սասնա ծռեր» ու «Ռոստամ-Զալ» վե-

---

46 *Ա.Հ., գիրք Ա, էջ 6:*

47 *Նույն տեղում, էջ 5:*

պերի մի շարք պատումներ, Մանուկ Աբեղյանի «Հայ ժողովրդական վեպը» ուսումնասիրությունը և այլն[48]:

* * *

Գիտական, մանկավարժական աշխատանքներին զուգընթաց, Ե. Լալայանը ակտիվ մասնակցություն է ցուցաբերել գրական-հասարակական կյանքին: Նա բարեկամական-ընկերական կապեր էր պահպանում հայ գրողների հետ, որոնք բարձր էին գնահատում Ե. Լալայանի գործունեությունը ժողովրդական բանավոր գրականության գանձերը կորստից փրկելու համար:

Ե. Լալայանի բազմաբեղուն գործունեության մեջ կարևոր տեղ են գրավում ճնագիտական աշխատանքները: Նա ճնագիտական պեղումներ է կատարել Շարուր-Դարալագյազի և Նախիջևանի գավառներում: Այնտեղ (Քյուլթափա, Ուզուն-Օբա-Աշաղա, Կարմիր վանք գյուղերում, Նոր ավերակ Նախիջևանում) պեղված են մի շարք դամբարաններ, ուր գտնված են կավե անոթներ, այլևայլ իրեր, կենդանիների և բույսերի մնացորդներ (այրված ցորեն և գարի): Այս նյութերը նա օգտագործել է իր «Նախիջևանի ոստիկանական շրջան կամ Նախճավան» աշխատության վաղ պատմական շրջանը շարադրելիս: Այս պեղումների մասին զեկուցել է Կովկասի ճնագիտական ընկերության նիստում, որը կայացել է Թիֆլիսում, 1904 թ. նոյեմբերի 14-ին, կոմսուհի Պ. Ուվարովայի նախագահությամբ: Զեկուցման ժամանակ ցուցադրվել են պեղումների ընթացքում հայտնաբերված նյութերը, որոնք բարձր են գնահատվել մասնակիցների կողմից[49]:

Ավելի հանգամանորեն և տևական պեղումներ է կատարել Ե. Լալայանը 1905, 1906 և 1908 թթ. Նոր Բայազետի գավառում, ուր պեղել է 516 դամբարան: Իր պեղած դամբարանները նա դասակարգել է հետևյալ կերպ. ա) միկարասյան դամբարաններ, բ) երկկարասյան, գ) դամբարաններ, որոնք առատորեն հերկայացնում են հողակույտ փքեր՝ 0,5—7 մ բարձրությամբ, հաճախ կլոր՝ 3—100 մ տրամագծով և երբեմն՝ ձվաձև: Դրանց մանրամասն նկարագրությունները կան «Ազգագրական հանդեսի» 14—17-րդ գրքերում: Հայտնաբերվել է հարուստ ճնագիտական նյութ՝ դաշույններ, ապարանջաններ, մատանիներ, ու-

---

48 *ՄՀ, 4—18-րդ գրքեր:*

49 *«Հուրիա», տե՛ս «Մշակ», 1904, № 251.*

լումներ, պոլիկներ, մարդկանց և կենդանիների կմախքներ, պաշտամունքի առարկա եզան գերեզման, հայտնի «իշխանական սայլը» և այլն, որոնք չափազանց կարևոր նշանակություն ունեն նախահայկական մշակույթի շատ հարցեր պարզելու համար:

Ե. Լալայանը 1908 թ. Ղուլալի գյուղի մոտ դիպվածորեն հայտնաբերել է արամեական վիմագիր արձանագրություն, որը անմիջապես ուղարկել է Թիֆլիսի Հայոց ազգագրական թանգարան, իսկ լուսանկարը և էստամպաժը՝ մասնագետներին: Նույն թվականին Ե. Լալայանը Մրթպի ձորում հայտնաբերել է պաշտամունքի առարկա եզան գերեզման:

Ե. Լալայանին հաջողվել է գտնել ցցաքարերի (պալաֆիտ) հետքեր Սևանա լճի արևելյան կողմում՝ Գիլլի գետակը լիճը թափվելու տեղում:

Սակայն Ե. Լալայանի ամենակարևոր հնագիտական հայտնագործություններից մեկը եղավ Ադիաման գյուղի Դեմեր կոչված վայրում պեղված դամբարանը, որի մեջ բացվեց բարձրարվեստ փորագրությամբ զարդարված սայլ: Սայլի վրա գետեղված էր մի երկարագլուխ մարդու կմախք, իսկ հանգուցյալի հետ թաղված իրերը (դաշույն, ապարանջան, մատանի) բոնզից էին: Շուրջը անկանոն կերպով ընկած էր 13 մարդու կմախք. ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք սուրուկներ են եղել կամ ռազմագերիներ: Դիակարիճը լծված է եղել չորս եզ: Լծի մոտ գտնվել է սայլապանի կմախքը: Սայլը հոտնիվ է, լծի վրա կանգնեցված բոնզե այծյամի սնամեջ իրանում գտնվել է երեք փոքրիկ դանակ, որոնք սայլը շարժվելիս զնգզնգացել են: Սայլը խիստ խայխայված էր, բայց Ե. Լալայանին հաջողվում է հանդակագործ Վարձիգուլյանի հետ միասին վերականգնել դրա պատկերը: Սայլի մնացորդները այժմ գտնվում են Հայաստանի պատմության պետական թանգարանում:

Պեղումներ կատարելիս Ե. Լալայանը միաժամանակ բացատրական մեծ աշխատանք է տանում հնագիտական հուշարձանները պահպանելու ուղղությամբ: Նոր Բայազետի 1905—1906 թթ. պեղումների հետևանքով հայտնաբերված նյութերը հանձնվում են Կովկասյան թանգարանին, որովհետև դրանք կատարված էին Մոսկվայի հնագիտական ընկերության միջոցներով և այժմ գտնվում են Վրաստանի թանգարանում:

1908 թ. պեղումները ֆինանսավորվել են Հայոց ազգագրական ընկերության կողմից, և ի հայտ բերված նյութերը այժմ պահվում են Հայաստանի պատմության պետական թանգարանում: Վերոհիշյալ նյութերի հիման վրա է գրված Ե. Լալայանի «Նոր Բայազետի գավառ կամ Գեղարհունիք» աշխատության նախապատմական շրջանի զգալի մասը: Նոր Բայազետի պեղումների մասին Ե. Լալայանը բազմիցս զեկուցել է

Հայոց ազգագրական ընկերության ժողովներում և նիստերում: Այդ պեղումները բարձր են գնահատվել մամուլի կողմից: Այսպես, «Լույսի» մեջ տպագրված գրախոսականում ասվում է. «Պեղումներ Նոր Բայազետի գավառում, որ կատարել է իմիք՝ պ. Լալայանը 1908 թ., շատ հետաքրքիր հնագիտական գյուտեր է արել մեր հեղինակը, որոնք, անշուշտ, տպագրա հնագիտական ուսումնասիրությունների համար հարուստ նյութեր են պարունակում»[50]:

Ե. Լալայանը հեղինակության հուշարձաններ հայտնաբերելու նպատակով ուշագրավ պեղումներ է կատարել 1913 թ.՝ Շրեշ բլուրում և 1927 թ.՝ էլարում: էլարում Ե. Լալայանը բացել է գրեթե բոլոր ժամանակների՝ բրոնզի, երկաթի դարին վերաբերող դամբարաններ: Այնտեղ գտնված են Ե. Լալայանի կարծիքով հեղինակին վերաբերող (իրոք հեղինակյան դարաշրջանի) խեցեղեն, քարե մուրճեր, վանակատի դանակներ, աղորիքներ, հերոններ և այլն: էլարի մշակույթը, ըստ Ե. Լալայանի, նման է էջմիածնի գավառի Շրեշ բլուրի մշակույթին: Այստեղ Ե. Լալայանը պեղումներ է կատարել 1913 թ. ամռանը և զեկուցել Հայոց ազգագրական ընկերության նիստերից մեկում: Շրեշ բլուրում հայտնաբերված են քարե մուրճեր, քարե կացիններ, աղորիքներ, կավե ամաններ: Պատերազմը խանգարեց պեղումների հետագա շարունակմանը, իսկ զեկուցումն էլ մնաց անտիպ:

Մոսկվայի հնագիտական ընկերության Կովկասի բաժանմունքի միջոցներով Ե. Լալայանը 1915 թ. մայիսի 1-ից մինչև հուլիսի 15-ը պեղումներ է կատարել Նուխի գավառի Նիժ և Վարդաշեն գյուղերի շրջակայքում, ուր պեղել է երկաթի դարին պատկանող մի շարք դամբարաններ: Այդ մասին նա զեկուցել է վերոնիշյալ ընկերության 1916 թ. ապրիլի 15-ի նիստում, որի որոշմամբ էլ զեկուցումը տպագրվել է[51]:

Հնագիտական բնույթի աշխատությունների մեջ կարևոր տեղ է գրավում Ե. Լալայանի «Պեղումներ Նոր Բայազետի գավառում»[52] հոդվածաշարը, որը լույս է տեսել նաև ռուսերեն թարգմանությամբ: Վերոնիշյալ հոդվածներում նա մանրամասն նկարագրում է իր կատարած պեղումները, բվագրում հնագիտական նյութը, տալիս իլյուստրացիաներ:

---

50 *«Պեղումներ Նոր Բայազետի գավառում», տե՛ս «Լույս», Նոր Նախիջևան, 1910, № 19, էջ 13:*

51 «Известия Кавказского отделения Московского археологического общества», выпуск V, Тифлис, 1919.

52 *ԱՀ, գիրք 15, 1907, գ. 19, 1910:*

Հնագիտական բնույթ ունի նաև նրա «Վարձիա կամ Վարձունիք» հոդվածը[53], որը վերաբերում է Ախալքալաքից 25 կմ հեռավորության վրա գտնվող Վարձիա ամրոց-ապարանքին: Ե. Լալայանը մանրամասն նկարագրում է իր տեսակի մեջ եզակի այդ հուշարձանը: Այս հոդվածը նույնպես մտել է «Ջավախք» մեջ:

Ուշագրավ է Ե. Լալայանի «Հողարկավորության և գերեզմանների զարգացումը Հայաստանում»[54] աշխատությունը, որը նրա կարդացած դասախոսությունն է ՀՍԽՀ գիտության և արվեստի ինստիտուտի պատմահնասարակագիտական բաժնում, 1928 թ. հունվարի 14-ին: Ե. Լալայանը հանգամանորեն կանգ է առնում հողարկավորության ձևերի վրա՝ միկարասյան, երկկարասյան, մեհնիրներ, կրոմլեխներ, դոլմեններ, դամբարաններ, տապան, դիակիզություն, գերեզմաններ, նկարագրում է դրանց հետ կապված սովորույթները՝ ննջեցյալների հետ զարդեր և զենքեր դնելը, կանանց, ձիերին, ծառաներին սիրոջ հետ թաղելը, հոգու հաց տալը և այլն: Այդ բոլորը նկարագրելիս նա վարպետորեն օգտագործում է համեմատական ազգագրական նյութերը:

Ե. Լալայանի հնագիտական բոլոր աշխատությունները ամփոփված են նրա «Դամբանների պեղումները Խորհրդային Հայաստանում» գրքում[55], որը լույս տեսավ հեղինակի մահից հետո:

Ե. Լալայանը պեղումներով հայտնաբերել է մեծ բանակությամբ գանգեր, որոնք գտնվում են Հայաստանի և Վրաստանի թանգարաններում: Այդ գանգերի չափումները կատարել է պրոֆ. Բունակը և հոդված է տպագրել «*Русский антропологический журнал*»-ում, Ե. Լալայանի առաջարանով[56]: Ե. Լալայանը հնագիտական նյութեր ուսումնասիրելիս փորձել է օգտագործել նաև ժամանակի գիտական առաջավոր մեթոդները: Նա իր պեղած նյութերը ուղարկում է Լենինգրադ, Իմիկոս Սկիդերին՝ անալիզներ կատարելու համար: Ե. Լալայանի կողմից արած թվագրումների մի մասն այժմ վիճարկվում է հնագետների կողմից՝ այն նյութերը, որ նա վերագրում էր նեոլիթին, թվագրվում են էնեոլիթով:

Հետաքրքիր են Ե. Լալայանի մտքերը հնագիտության մասին: Լուսժողկոմ Ա. Մոռավյանին ուղղված 1927 թ. նոյեմբերի 2-ի դիմումում նա գրում է, որ հնագիտությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ նախապատմական

---

53 «*Հանդես ամսօրյա*», *1895, № 1:*

54 «*Տեղեկագիր ՀՍԽՀ Գիտության և արվեստի ինստիտուտի*», *Երևան, 1928, № 3:*

55 Ե. Լալայան, *Դամբանների պեղումները Խորհրդային Հայաստանում, Երևան, 1931:*

56 «Русский антропологический журнал», 1929, № 7, вып. 3, 4.

ազգագրություն, ազգագրությունն իր բոլոր խնդիրների սկիզբը որոնում է ճնագիտության մեջ[57]:

Ն. Լալայանը Թիֆլիսի հայագիտական դասընթացներում դասախոսել է ընդհանուր և հայ ճնագիտություն առարկաներ, իսկ Հայաստանի պատմության պետական թանգարանում երկար տարիներ ղեկավարել է ճնագիտության բաժինը:

Ն. Լալայանն իր գործունեության ընթացքում մեծ ուշադրություն է դարձրել ձեռագրերի հավաքմանը և անձամբ հավաքել է բավական թվով ձեռագրեր: Նա որոշել էր հրատարակել ընդարձակ ձեռագրացուցակներ, կազմել էր Վասպուրականի հայերեն ձեռագրերի ցուցակ, երեք ստվար հատորներից բաղկացած, բայց լույս է տեսել այդ ժողովածուի միայն առաջին պրակը[58], որը ընդգրկում է 480 ձեռագրի նկարագրություն, ձեռագրեր, որոնք կարևոր նշանակություն ունեն հայ ժողովրդի պատմության՝ մատենագրության, ճնագիտության և ազգագրության համար: Դրանց մեծ մասը 1896 թ. Վանի կոտորածի ժամանակ թաղված է եղել եկեղեցիների գաղտնարաններում, շատերը փշացել են: Ն. Լալայանին հաջողվել է փրկել դրանց զգալի մասը: Այդ աշխատությունը բարձր գնահատվեց գիտական հասարակայնության կողմից[59]:

Ն. Լալայանը զբաղվել է նաև վիմագիր արձանագրությունների հավաքմամբ, նրա գրեթե բոլոր աշխատություններում ապագրված են մեծ ճանկությամբ վիմագիր արձանագրություններ: Բացի դրանցից, նա ցանկացել է հրատարակել արձանագրությունների դիվան, այդ է վկայում նրա հայտարարությունը «Ազգագրական հանդեսում», ուր ասվում է. «Տասն տարուց ի վեր կազմում եմ «Հայկական արձանագրությունների ժողովածու», զարդարված արձանագրությունների բազմաթիվ լուսանկարներով: Ուսի խնդրում եմ ուղարկել ինձ արձանագրությունների լուսանկարներ...»[60]:

Ակադեմիկոս Ն. Մառին գրած նամակում նա բազմիցս հիշատակում է, որ հավաքում է արձանագրություններ: «Պատրաստել եմ,— գրում է Ն. Լալայանը,— Էջմիածնի ամբողջ գավառի, Մխիթար Գոշի, Հաղարծնի և Սանահինի (վանքերի) գրեթե բոլոր արձանագրությունների

---

57 *Հայաստանի պատմության պետական թանգարանի արխիվ, Ն. Լալայանի անձնական գործերի թղթապանակ:*

58 *«Յուցակ Հայերեն ձեռագրաց Վասպուրականի», կազմեց Ն. Լալայան, պրակ I, Թիֆլիս, 1915:*

59 *Տե՛ս «Մշակ», 1915, № 86:*

60 *ՄՀ, գիրք 23, 1912, էջ 240:*

լուսանկարները 13×18 սմ մեծությամբ, 100 հատ: Արդյոք չէի՞ բարեհաճիլ միանգամից կամ մաս-մաս հրատարակել»[61]:

Ե. Լալայանի կազմած հայերեն արձանագրությունների կորպուսը արժանացել է Լազարյան Եմմարանի Քանանյան մրցանակին[62]:

Հայ նյութական մշակույթը հասարակության լայն խավերին ծանոթացնելու նպատակով Ե. Լալայանը ձեռնամուխ է լինում ալբոմներ կազմելուն. նա հրատարակում է երեք ստվարածավալ ալբոմ՝ նվիրված Վայոց Ձորի, Վասպուրականի և Նոր Բայազետի գավառի հուշարձաններին: Նկարների տակ բացատրությունները տպագրված են հայերեն, ռուսերեն և ֆրանսերեն լեզուներով: Ա. Չոպանյանը բարձր է գնահատել Ե. Լալայանի հրատարակած ալբոմը և առաջարկել է ընթերցողներին ձեռք բերել այն: Իսկ կազմողի մասին հետևյալն է գրել. «...Մեր տոհմային իմաստասիրության տեսակետով այս ձեռնարկին մեջ ևս ի հայտ բերած է իր վարպետ գործչի բոլոր թանկագին հատկություններ»[63]: Դրվատանքի խոսքեր են ասել Ե. Լալայանի այդ ձեռնարկման մասին Կ. Պոլսի «Արևելք»[64] թերթը և մյուս ամսագրերը:

Հայագիտությունը պրոպագանդելու, նրանով զբաղվողների թիվը ընդլայնելու նպատակով Ե. Լալայանը 1909 թ. «Մշակում» հանդես է գալիս «Մի առաջարկ Վենետիկի Մխիթարյան ուխտին» հոդվածով, խնդրելով նրանց հայ և օտար ուսանողների համար հայագիտական ամառային դասընթացներ բացել[65]: Նույն թերթի № 161-ում գետեղված է նրա «Հայագիտության ամառային դասընթացների առթիվ» թղթակցությունը: Մխիթարյանները բացեցին ամառային դասընթացներ: Ե. Լալայանը որոշում է նման դասընթացներ բացել նաև Թիֆլիսում, որտեղ պետք է դասախոսվեին հետևյալ առարկաները՝ Կովկասի և Հայաստանի աշխարհագրություն, Կովկասի, մասնավորապես Հայաստանի հնագիտություն, հայոց պատմություն, կրոնների պատմություն, հայ ազգագրություն և այլն: Դասընթացները բացվում են 1917 թ., և այնտեղ դասախոսելու են հրավիրվում լավագույն ուժերը: Ե. Լալայանը դասախոսում է Կովկասի և Հայաստանի հնագիտություն առարկաները[66]: Դասըն-

---

61 Ա. Սարգսյան, *Ե. Լալայանի կյանքն ու գործունեությունն արտացոլող փաստաթղթեր: Տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 1963, № 1, էջ 138:*

62 *«Մշակ», 1917, № 86:*

63 *«Անահիտ», Փարիզ, 1909, № 5—6, էջ 191:*

64 *«Արևելք», Կ. Պոլիս, 1901, № 4619:*

65 *«Մշակ», 1909, № 151:*

66 *«Մշակ», 1917, № 65:*

թացում ընդգրկվում է 70 հոգի: Նման դասընթացներ Ե. Լալայանը կազմակերպեց նաև 1920—21 թթ.[67]:

Ե. Լալայանը զբաղվել է նաև թարգմանություններով: 1881 թ. լույս տեսավ նրա առաջին թարգմանությունը՝ «Մահմեդի տոպրակ» առեղյան գրույցը, 1882 թ.՝ Ժ. Ջանդի «Վարդագույն ամպը», 1886 թ.՝ Մոլիերի «Նրևակայական հիվանդ» պիեսը: Հատկապես ազգագրական և մարդաբանական գիտությունները պրոպագանդելու համար նա ձեռնամուխ է լինում նշանավոր ազգագրագետների և մարդաբանների աշխատությունների թարգմանությանը: Ֆրանսերենից նա թարգմանել է պրոֆ. Պեռրիի «Մարդաբանության պատմական զարգացումը»[68], Շ. Լետուրնոյի «Ամուսնության զարգացումը»[69], Ա. Պոզդոյի «Նորագույն տեսություններ գերդաստանի, հասարակության և պետության ծագման վերաբերյալ»[70], նույնի «Մարդաբանությունը»[71], Գ. Կանեստրինի «Մարդաբանություն» աշխատությունը[72], ռուսերենից՝ Ե. Զվյագինցևի և Ա. Բերնաշևսկու «Գարեր և մարդկանց աշխատանքը» (Երևան, 1926) գործը: Պետք է նկատել, որ թարգմանությունների ընտրությունը միշտ չէ, որ հաջող է կատարված. հայտնի ազգագրագետների՝ Լ. Մորգանի, Է. Թեյլորի, Մ. Կովալևսկու աշխատությունների փոխարեն նա թարգմանել է Շ. Լետուրնոյի ոչ այնքան արժեքավոր վերոհիշյալ գիրքը: Ընտրության գործում հավանաբար դեր է խաղացել այն հանգամանքը, որ Շ. Լետուրնոն եղել է Ե. Լալայանի դասախոս պրոֆեսորը Ժնևում:

Երկար տարիների ընթացքում, տառապանքների և զրկանքներով լի կյանքը խայխայել էր Ե. Լալայանի առողջությունը, բայց նա դեռևս լի էր իր սիրած գործը շարունակելու բուռն ցանկությամբ: Երբ սրտի ծանր հիվանդությամբ պառկած ժամանակ նրա բարեկամներից մեկը՝ Պ. Աբելյանը հարցնում է, թե ինչպե՞ս է զգում իրեն, նա պատասխանում է. «Եթե առողջանամ, այնքան պետք է աշխատեմ, որ նորից հիվանդանամ»: Ե. Լալայանը վախճանվեց 1931 թ. փետրվարի 24-ին: Նրա մահը չափազանց մեծ կորուստ էր հայագիտության համար: Միանգամայն իրավացի է պրոֆ. Խ. Սամուելյանը, երբ Ե. Լալայանի մասին գրել է.

---

67 Ա. Սարգսյան. *Ե. Լալայանի կյանքն ու գործունեությունն արտահայտող փաստաթղթեր: Տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիվների», 1963, № 1:*

68 *ԱՀ, գիրք Ա:*

69 *Նույն տեղում:*

70 *ԱՀ, գիրք Գ, 1898, գիրք Դ, 1898, գիրք Ե, 1899:*

71 *ԱՀ, գիրք Դ, 1898, գիրք Զ, 1900:*

72 *ԱՀ, գիրք Բ, 1897:*

«Հիրավի, Ե. Լալայանը ծավալել է մի այնպիսի էքսպանսիվ աշխատանք, գլուխ բերել այնպիսի հսկա գործ, որի նմանը թե արտասահմանում և թե Ռուսաստանի գիտական-հետազոտական ասպարեզում կատարել են հատուկ ընկերություններ՝ ինստիտուտներ, կազմակերպված հավաքական ուժերով, կոլեկտիվ ջանքերով, խմբական էքսպեդիցիաներով: Այսօր Ե. Լալայանը մեզ թողել է սոսկ իր անհատական ջանքերով, իր միանձնյա գործունեությամբ կատարած աշխատանքի մի անագին ժառանգություն, որը պատիվ կբերի ամեն մի գիտական կազմակերպության կամ ինստիտուտի, եթե այս կատարված լիներ վերջինիս նույնիսկ հավաքական ուժերով»[73]:

Նշանավոր հայագետ Ն. Ակինյանը Ե. Լալայանի մասին արտիվ գրել է. «Բայց և այնպես ինչ որ ամբարեց Լալայանը, հավաքեց ժամանակին, անոնք փրկված են կորուստեն և պիտի մնան ստացվածք գիտության: Եկող սերունդները պարտավոր են երախտագիտության, պիտի օրհնեն հիշատակը մեծ վաստակավորին»[74]:

Ե. Լալայանը երազում էր հրատարակված տեսնել բազում տարիների իր տքնաջան աշխատանքի արդյունքները: Բազմավաստակ ազգագրագետի, բանահավաք-բանագետի բաղձանքը իրականանում է: Հայաստանի գիտությունների ակադեմիայի հրատարակությամբ լույս տեսնող «Հայ ժողովրդական հեքիաթների» գիտական համահավաքի շուրջ տասը հատոր ընդգրկում է Ե. Լալայանի ժողոված նյութերը: Բազմավաստակ ազգագրագետ-բանահավաքի երկերի ներկա հրատարակությունն էլ կհանդիսանա որպես նրա հիշատակի հավերժացում և հայագիտությանը մատուցած մեծ ծառայությունների գնահատություն:

Կ. Վ. ՄԵԼԻՔ-ՓԱՇԱՅԱՆ
Ա. Մ. ՆԱՋԻՆՅԱՆ

---

73 Խ. Սամուելյան, *Ե. Լալայան (մահախոսական)։ Տե՛ս «Խորհրդային Հայաստան» (լրագիր), 1931, № 50։*

74 Ն. Ակինյան, *Ե. Լալայան (մահախոսական), տե՛ս «Հանդես ամսօրյա», Վիեննա, 1931, № 3—5, էջ 294։*

ՋԱՎԱԽՔ

ՆՅՈՒԹԵՐ ԱՊԱԳԱ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

3—950

ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՋԱՎԱԽՔ ԵՎ ԱԽԱԼՔԱԼԱՔ

Ջավախքը Գուգարք նահանգի ինը գավառներից մեկն է։ Վրաց Վախթանգ ե թագավոր մատենագիրը յուր «Վրացվոց բարք» (Քարթլիս ցխովրեբա) պատմության մեջ ասում է, թե այդ երկիրն, այսինքն՝ Կուրի դաշտավայրը, Երուշետը և Փոցխով ու Տոր-Ծղալի գետերի միջավայրը, ժառանգություն է ընկել վրաց նախահայր Քարթլոսի որդի Մցխեթոսի Ջավախոս որդուն, որի անվամբ և Ջավախք է կոչվել։

Շոպենը առասպելական համարելով Ջավախոսին, Ջավախքի անունը հանում է ջավ (գարի) վրացերեն խոսքից, որովհետև երկրի բարձրության պատճառով ամենից լավ գարի է բուսնում այդտեղ։

Մինչև Արշակունյաց հարստության սկիզբն ինչպես մեր, այնպես և վրաց պատմագիրներն այս գավառի մասին համարյա ոչինչ չեն հիշում։ Սրանց ժամանակ, Մովսես Խորենացու ասելով, Վաղարշակ Ա-ն այս գավառի կեսը տալիս է Շարայի ցեղից Գուշարին ժառանգություն[1], իսկ նահանգի վրա կարգում է մի բդեշխ, որ հայոց հյուսիսային կողմերը պահպանե ավազակ ազգերից։ Իսկ ընդդեմ լերինն Կաւկասայ,— ասում է Խորենացին,— կողմնակալ հիւսիսոյ կարգէ զմեծ և զհզօր ազգն. և նահապետութեան անուն կարդայ՝ բդեշխն գուգարացւոց[2]։ Այս բդեշխը միանգամայն իշխում էր վրաց երկրի կամ ժողովրդյան մի մասին ևս, ուստի և մի քանի մատենագիրներ անվանում են նրան «բդեշխ վրաց». որպես Աշուշային Խորենացին կոչում է բդեշխ գուգարացվոց, իսկ Վարդան՝ բդեշխ վրաց, թեպետ այդ ժամանակ Վրաստանում թագավոր էր Արշեզ կամ Արշիզը, ինչպես և նրանից հետո Վաղգենը։ Իսկ

---

1 Մովսէս Խորենացի, *Պատմութիւն Հայոց*, Վենետիկ, *1881*, գիրք Բ, գլ. Ը, նաև՝ Ստեփաննոս Ասողիկ, *Պատմութիւն տիեզերական*, ՍՊբ, *1885*, գլ. Դ, էջ *39*։

2 Մովսէս Խորենացի, նշվ. աշխ., գիրք Բ, գլ. Ը։

Մհրանին Խորենացին կոչում է առաջնորդ վրաց և բդեշխ գուգարացվոց[3]. բայց սա վրաց թագավոր էլ էր։ Գուգարքի առաջին բդեշխն էլ, որ Վաղարշակ Ա կարգել էր, Աղեքսանդր Մակեդոնացու վրացի գերիների վրա կարգած իշխանի, Միհրդատի թոռն էր։ Հայոց Արտաշես Ա թագավորն ընդարձակում է այս բդեշխի իշխանությունը և կողմնակալ է կարգում Պոնտոս ծովի վերա, ինչպես ասում է Խորենացին. «Բայց (Արտաշէս) զդուստր իւր զԱրտաշամայ տայ կին Միհրդատայ ումեմն վրաց բդեշխի մեծի... և հաւատայ սմա զկողմնակալութիւն հիւսիսային լերանցն և Պոնտոս ծովու»[4]։

Արշակ Բ-ի ժամանակ այս նահանգն էլ ապստամբելով անցնում է վրաց կողմը, սակայն Պապ թագավորի Մուշեղ սպարապետը նորից նվաճում է, ինչպես պատմում է Բուզանդը։ «Ապա խաղայր սպարապետն Մուշեղի վերայ Վրաց արքային, և նեղէր զնա մեծապէս. և հարկանէր զերկիրն, և վանէր զամենայն աշխարհն Վրաց. և հանէր ընդ սուր զամենայն ազատս և զազգս նախարարացն... և բդեաշխն Գուգարաց, որ յառաջն ծառայէր թագաւորին Հայոց և ապստամբեաց, կալեալ գլխատէր... և թափէր զամենայն գաւառն և առնոյր պատանդս, և զմնացեալսն ի հարկի կացուցանէր։ Եւ զհին սահմանսն, որ յառաջուն էր լեալ յերկրին Հայոց և ընդ երկիրն Վրաց, որ է ինքն մեծ գետն Կուր, այնուհետև չինքն վտարեալ զառնայր անտի»[5]։ Բայց ե դարում արդեն Գուգարքի բոլոր գավառները դարձյալ անցած էին վրաց ձեռքը, ուստի և Մովսես Խորենացին յուր աշխարհագրության մեջ բոլոր գավառները, բացի Կողբոփորից, Վրաստանի գավառների կարգն էլ է դասում։

Բագրատունյաց ժամանակ Սմբատ Ա նորից վերադարձնում է այս նահանգը Հայաստանին, ինչպես պատմում է Հովհաննես կաթողիկոսը. «Եւ անտի դարձեալ իբրև զօդապարիկ իմն երթեալ չուէ զկողմամբք Գուգարաց և զայնս ևս ամրոցս իւրոյ տէրութեան՝ առ հասարակ չինքն գրաւէր նուաճէր[6]»։

Ժ դարում Գուգարքի մի մասն ընկնում է հայոց Կյուրիկյան թագավորության ձեռքը, իսկ Ջավախքն անցնում է վրաց իշխանության ներքո։ Վրաց Բագրատ Գ թագավորը (980—1014) հիմնում է Ախալքա-

3 Մովսէս Խորենացի, նշվ. աշխատություն, գիրք Գ, գլ. Կ։

4 Նույնը, գիրք Բ, գլ. ԺԱ։

5 Փաւստոս Բուզանդացի, Պատմութիւն հայոց, Վենետիկ, 1832, դպրութիւն ե, գլ. ԺԵ։

6 Յովհաննէս Դրասխանակերտցի, Պատմութիւն հայոց, Մոսկուա, 1853, էջ 133։ Ինճիճեան Ղ., Տեորգութիւն Հին Հայաստանեայց, Մեծ Հայք, Վենետիկ, 1822, էջ 356։

լաքը, առանց բերդի, իսկ սրա թոռ Բագրատ 4-րդ (1027—1072) 1045 թվին յուր վասալ Կիբարիդ Օրբելյանի հետ ունեցած պատերազմի ժամանակ շինում է բերդը։ Ախալքալաքը վրացերեն նշանակում է նոր քաղաք։ Սրա թագավորության ժամանակ, այսինքն 1064 թվին, ինչպես պատմում է Մատթեոս Ուռհայեցին (ՃԺԶ). «Յարուցեալ սուլտանն (Ալփասլան) ահագին բազմութեամբ իւրով մտաւ յաշխարհն Վրաց... և բանակեցաւ ի գաւառն, որ կոչի Ջաւախս և պատերազմաւ մեծաւ պատեաց զքաղաքն, որ կոչի Ախալ. և սո հասարակ զամենայն քաղաքն սրով կոտորեաց՝ զայր և զկին անողորմ և զամենայն քահանայսն և զկրօնաւորսն և զիշխանսն սրախողխող արարեալ. և լցաւ ամենայն քաղաքն արեամբ. և անհամար մանկունս և աղջկունս տարան՝ի Պարսիկս՝ի գերութիւն և գանձս ոսկւոյ և արծաթոյ ականց մարգարտացն որ ոչ գոյ թիւ»[7]։

ԺԴ դարում, թաթարների արշավանքների ժամանակ, երբ վրաց պետությունը սաստիկ թուլանում է, Ախալքալաքի և Ախալցխայի հոդատերերը սկսում են անկախություն ձգտել և ինքնագլուխ կառավարել այս գավառները։ Եվ որովհետև Ախալցխայի դիրքը սաստիկ նպաստում էր անկախություն ձեռք բերելու, ուստի ԺԴ դարու առաջին կեսում վրաց թագավորներն ստիպվում են անկախ համարել այդ երկիրն և այդտեղի հոդատերերից Սարգսին ճանաչել Ախալցխայի և Ախալքալաքի միացյալ գավառների աթաբեկ (հայրիշխան)։ Հարյուր տարի չանցած այդ աթաբեկներից մին՝ Աղբուղան՝ հրատարակում է արդեն յուր օրենքները. (Աղբուղայի օրենքներ)։

1484 թվին Պարսից Յակուբ շահը հարձակվում է այս Սահաթաբակոյի (Աթաբեկի երկիր) վրա, թալանում է Ջավախքը և պաշարում Ախալքալաքը։ Մեսխիները չեն կարողանում երկար պաշտպանվել, քաղաքը առնվում է, և Յակուբը բոլոր նշանավոր Մեսխիներին և քաղաքի բնակիչներին գերի է տանում։ Հետո վառում է Ախալքալաքը և գնում պաշարում Ախալցխան։

1637 թվին Սահաթաբակոն ընկճվելով վրաց և Իմերեթու թագավորներից և բուրքերից, կորցնում է յուր անկախությունն և դառնում Տաճկաստանի մի փաշայության։ Այնուհետև Ախալքալաքը կառավարվում է բուրք բեկերով։

1772 թվին Կախեթու Հերակլես և Իմերեթու Սողոմոն թագավորները պաշարում են Ախալքալաքը և քիչ է մնում, որ առնեն։ Բայց այս

7 Պատմութիւն Մատթեոսի Ուռհայեցւոյ, Երուսաղեմ, 1869, էջ 175։

Blackpool

ժամանակ Սողոմոն թագավորը ժանտախտով բռնվում է, և պաշարումը դադարում։

1807 թ. ռուսները Գուդովիչ զորավարի առաջնորդությամբ պաշարում են Ախալքալաքը, սակայն չեն կարողանում առնել, և 1200-ից ավելի ռուս զինվորներ ընկնում են բերդի պարսպի ներքև, 3 թնդանոթ մնում է թուրքերի ձեռքը։

1810 թ. սեպտեմբերի 4-ին ռուսները Պաուլուչչի գնդապետի առաջնորդությամբ դիշերով հանկարծակի հարձակվում են Ախալքալաքի պաշտում բանակած տաճկաց և պարսից միացյալ զորքերի վրա, ուր գտնվում էր և վրաց թագաժառանգ Ալեքսանդրը։ Շփոթություն ձգելով զորաց մեջ՝ ռուսները հաջողացնում են մեծ ջարդ տալ թշնամիներին։ Երևանու սարդարը, Ախալցխու փաշան և թագաժառանգ Աղեքսանդրը փախչում են և մեծ ավար թողնում ռուսներին։

1811 թվին դեկտեմբերի 7-ին ռուսները Կատրալևսկու առաջնորդությամբ անպատմելի նեղություններ կրելով՝ ուղղակի անցնում են Թրիալեթու լեռներով և դիշերը հանկարծ հարձակվելով Ախալքալաքի վրա շփոթություն են ձգում և առնում բերդը։ Թուրքերը փախչում են՝ թողնելով ռուսներին 16 թնդանոթ և 2 դրոշակ։ Սակայն հաշտությունից հետ Ախալքալաքը դարձյալ մնում է թուրքերին։

Վերջապես 1828 թ. հուլիսի 28-ին ռուսները Պասկևիչ զորավարի առաջնորդությամբ Ղարսն առնելուց հետո՝ հարձակվում են Ախալքալաքի վրա և արյունահեղ պատերազմ տալով՝ տիրում բերդին, խլելով 14 թնդանոթ և 13 դրոշակ[8]։

1829 թվի Սեպտեմբերի 14-ին կայացած Ադրիանուպոլսի դաշնագրությամբ Ախալքալաքը մնում է ռուսներին։

Դարուս սկզբի պատերազմների ժամանակ Ախալքալաքի բնակիչները փախչում են և ցրվում են զանազան կողմեր։ Պասկևիչի պատերազմին այդ քաղաքը բոլորովին ամայանում է, և նրա բնակիչները պատերազմից հետո վերադառնալով բնակվում են Խոսպիա գյուղը։

1830 թ. էրզրումի և մասամբ Արդահանի գավառների հայերը գաղթում և բնակվում են Ջավախքի գյուղերում, միայն քաղաքը մնում է ավերակ։

1831 թ. Ախալցխայից Աղաբար Փեշտմալճյանը, Պետրոս Տեր-Մանվելյանը, դիշերապահ Հովհաննեսը և մի ոմն Ստեփաննոս գալիս են Ախալքալաք և բերդի հարավային կողմում, տաճկաց գերեզմանատան

---

8 *В. Потто.* Кавказская всйна, том IV, СПб., 1889, стр. 110.

մոտ շինում են բնակարաններ, մի փուռ և մի սրճատուն։ Այնուհետև հետզհետե մարդիկ գալիս բնակություն են հաստատում այստեղ և այսպիսով կազմում են մի փոքրիկ գյուղ, որ Ջավախքի հետ միասին համարվում էր մի մոկռովություն։

1860 թ. 30 տարվա ընթացքում, Ախալքալաքի բնակիչների թիվը կազմում է մինչև 366 տուն, 1101 ար. 1088 իգ. սեռի, ընդամենը 2189 հոգի։

1868 թ. Ախալքալաքը մոկռովությունից փոխվում է պրիստավության և պատկանում է Ախլցխու գավառին։

1874 թ., երբ բնակիչների թիվը հասնում է 493 տան, 1549 ար. 1418 իգ. սեռից, ընդամենը 2967 հոգու, Ախալքալաքը կազմում է մի առանձին գավառ և համարվում Գ կարգի գավառական քաղաք։

1889 թ. Ախալքալաքի գավառը բաժանվում է Բարալեթու և Գարելայի ոստիկանությունների և յուրաքանչյուրը կառավարվում է մի ոստիկանով, որոնք ենթարկվում են գավառապետին։

1890 թ. Ախալքալաքը վերածվում է գավառական Բ կարգի քաղաքի։ Իսկ ներկա 1896 թ. ստանում է քաղաքային պարզ ինքնավարություն։

ԽՐՐԹԸԶ

Խրթըզը գտնվում է Ախալքալաքից դեպի հյուսիս, 21 վերստ հեռավորությամբ, Կուրի ձորակում, այնտեղ, ուր Ախալքալաք և Կուր գետերը միանում են, և ահա այդ «միանում են» վրացերեն էրթվիս, իսկ սրանից էրթվիսի բառից ստացել է նա յուր անունը։ Շատ հին քաղաք և բերդ է եղած։ Բերդի հիմնարկությունը վերագրվում է պարսից Կյուրոս թագավորին (+529 Ք. առաջ)։ Վրաց պատմագիրների ասելով այս բերդը սաստիկ ընդդիմացել է Աղեքսանդր Մակեդոնացուն։ Խրթըզ բերդը հիշվում է և Պոմպեոսի արշավանքների ժամանակ, որին նա տիրում է երկարատև և արյունահեղ պաշարումից հետո։ Այստեղ վրաց թագավոր Վախթանգ Գուրգասլանը սպասել է հույների և պարսից պատերազմների հետևանքներին, և երբ հույները հաղթել են, Վախթանգը թարմ ուժերով հարձակվել է նրանց վրա և սաստիկ ջարդ տվել։

1624 թ. հռչակավոր մովրավ Գեորգ Սահակածեն այստեղ ջարդում է պարսիկներին և ազատում Խրթըզը նրանց լծից։

Վախուշտի ժամանակ (ԺՀ դարում) այստեղ կենում էին ենիչերներ, բայց 1770 թվին վրաց թագավոր Հերակլը Ասպինջայի մոտ տաճիկներից

տարած մեծ հաղթությունից հետո տիրում է և Խըրթըզին, սակայն հետո տաճիկները նորից գրավում են։ Խըրթըզի վերջին գայմագամն էր Բաշ-աղան, որ ամուսնացած էր Աջարիայի փաշի մոտիկ ազգական Խմշի-Օղլու աղջկա հետ։ Բաշ-աղան յուր հարեմն է մտցնում գոթելեցի Դավիթ անուն և բարալեթցի Խամալեձեի վրացի աղջիկները, սրա կինը գրգռվում է և աղերսում է Աջարիայի յուր ազգական փաշին, որ սուլթանից հրաման առնելով գալիս է պաշարում Խըրթըզը։ Այս ժամանակ Բաշ-աղան իր հարեմում զվարճանալիս է եղել. փաշան վառոդով խցկել է տալիս ամրոցի պատը, սպանում և ապա գլխատում է Բաշ-աղին ու գլուխը ուղարկում է Պոլիս։ Նրա դին թաղվում է Կուրի ձախ ափին։ Եվ մինչև օրս էլ ծերերը ցույց են տալիս ամրոցի այն պատը, որ վառոդով պայթեցրել էին։

1828 թ. հուլիսի 26-ին Պասկևիչի՝ Ախալքալաքը առնելուց հետո, նրա զորապետ Ռահովին առանց պատերազմի առնում է Խըրթըզը։

Այժմ բերդը բոլորովին ավերակ է, իսկ գյուղը բաղկացած է 229 տնից, 756 ար., 604 իգ. սեռից, ընդամենը 1360 հոգի։ Սրանցից միայն 5 տունը, 13 արական, 12 իգական սեռից հայ լուսավորչական են, մնացածները թուրք սուննիներ են։

ՏՅՈՒՄՈՒԿ ԿԱՄ ԹՄՈԿՎԻ

Տյումուկ նշանակում է քրմապետ։ Այս բերդի հիմնարկությունը վերագրվում է արիաների՝ (բաքտրիացիների և իրանցիների) Կովկասի տիրապետության առաջին ժամանակներին։ 1590 կամ 1570 թվականներին Քր. առաջ բաքտրիական թագավորության հիմնադիր Վերա Ջիմշուտը (որի անվամբ և, ասում են, կոչվել է Թիֆլիսի Վերա թաղը), տիրեց ամբողջ Ասիան և, ի միջի այլոց, Կովկասը, տարածելով այստեղ երկրպագություն երկնային լուսատուների և հիմնեց իր քրմերի համար գլխավոր կացարաններ Թմոկվում, Մցխեթում և ուրիշ տեղեր։ Հետո արդեն Թմոկվին հիշվում է «Քարթլիս ցխովրեբայում» առաջին անգամ 920 թվին Քր. հետո, երբ Ադրբեջանի էմիր Աբդուլ Կասիմն ամբողջ Արևելքի և Պարսկաստանի տիրապետողի հրամանով անհամար մահմեդական զորքով խուժում է Վրաստան և Սամցխեի (Ախալցխու դավառ) ճանապարհին պաշարում Թմոկվի բերդը։ Բայց հավաստիանալով նրա անմատչելի և անառիկ դրության, թողնում է այն և պաշարում Կվելի բերդը (Ախալցխայի գավառում, Ջակիո-ծղալի գետի ձախ ափին)։

Այստեղ Բագրատ Մեծ (1027—1072) վրաց թագավորը բանտար-

կում է Բագրատ Արտանուջյու որդիներին՝ Սմբատին և Գուրգենին, ուր և նրանք մեռնում են։ Այստեղ այս Բագրատ Մեծը հիմնում է մի ընդարձակ և վայելչակերտ տաճար, ինչպես ասվում է «Քարթլիս ցխովրեբայում»։ Սրա որդու՝ Դևորգի Բ-ի թագավորության ժամանակ (1072—1089) Թմոգվին կործանվում է սաստիկ երկրաշարժից, որ ամբողջ Վրաստանին մեծամեծ վնասներ է պատճառում և տևում է մի ամբողջ տարի։ Թմոգվիի մեջ երկրաշարժից սպանվեց և էրիստավ Կոխոբեշին։

Վրաց Դիմիտրի Ա-ի թագավորության ժամանակ (1125—1155) սրա քույր Թամարան հիմնում է այստեղ Սուրբ Խաչի վանքը։

Այստեղից է Սարգիս Թմոգվեցին, որ մի ուսյալ, փիլիսոփա և հռետոր մարդ էր և վրաց իշխանների հետ չանք էր թափում ազատել Վրաստանը մոնղոլների լծից։

1553 թվին Թմոգվուն տիրում է պարսից Թամազ շահն և հանձնում Կայխոսրո աթաբեկին։

ԾՈՒՆԴԱ

Ծունդան Վրաստանի ամենահին և ամուր բերդն է։ Նրա հիմնարկությունը վերագրվում է Քարթլոսի թոռ, Մցխեթոսի որդի Ջավախոսին։ Երբ արիաները տիրապետում էին Կովկասը, նրանք բնակեցնում են Ծունդայում մարդերին, որոնց անվամբ և այդ հովիտը կոչվում է Մարդաստան։ Վրաց Փառնավազի (302—237 Ք. առաջ) թագավորության ժամանակ մինչև Վրաստանի բաժանումը (1455—1463) Ծունդան մայրաքաղաք էր Ծունդայի էրիստավության (նախարարություն)։ Վրաց Փարսըմանի թագավորության (72—87) ժամանակ հայոց թագավոր Երվանդը խլելով վրացիներից Ծունդան կոչում է Քաջայ-տուն։ Բայց Փարսըմանի հաջորդները՝ Ազորկը և Արմազելը (87—103) նորից վերադարձնում են Վրաստանին։ Վրաց Միհրդատ Գ (364—379) վերանորոգում և զեղեցկացնում է Ծունդայի եկեղեցին։ Վրաց Վախթանգ Գուրգասլանի թագավորության ժամանակ (446—499) այստեղ էրիստավ էր Նասար անունով մին, որին նա տանում է յուր հետ Հնդկաստան պատերազմի։ Այս թագավորը նշանակում է այստեղ մի եպիսկոպոս։ Ծունդան Վախթանգ Գուրգասլանի կրտսեր որդիների ամառանոցն էր, որոնք էրիստավի իրավունքներով կառավարում էին Արևմտյան Վրաստանը և Աբխազիան։ Վախուշտի ժամանակ՝ ԺՀ դարում Ծունդան այլևս քաղաք չէր, միայն բերդը դեռևս պահպանվում էր։ Այսօր Ծունդայի բերդը ևս ավերակ է, ինչպես և եկեղեցին։ Այստեղ բնակվում են 15 տուն թուրք սուննիներ, 52 ար., 56 իգ. սեռից, ընդամենը 108 հոգի։

Այս եկեղեցին կառուցել է Հովհաննես վրացի եպիսկոպոսը (957—964) աբխազաց Լևոն Գ թագավորի թագավորության (955—957) և Զվիադի էրիստավության ժամանակ, ինչպես վկայում են պատերի վրա եղած արձանագրությունները:

Գյումուրդոյում նստում էր Ջավախքի վրաց առաջնորդը:

Վրաց Մեծն Բագրատ թագավորը (1027—1072) շինել է նրա արևմտյան դավիթը:

ՎԱՐՋԻԱ ԿԱՄ ՎԱՐՋՈՒՆԻՔ

Վարձիա վրացերեն նշանակում է վարդերի ամրոց: Սրա հիմնարկությունը վրաց տարեգիրները վերագրում են վրաց Դեորգի Գ թագավորին (1156—1184), Թամար թագուհու հորը, որ կիսակատար է թողել: Նրա դուստր, մեծահռչակ Թամար թագուհին (1184—1212) ոչ միայն մոռացության չտվեց յուր հոր ձեռնարկությունը, այլև յուր ուշադրությունը դարձնելով նրա վրա, յուր համար մի փառավոր ապարանք դարձրեց, որ նրա ժամանակ 360 սենյակ ուներ: Նա այստեղ ժայռի մեջ փորել տվեց և Ս. Աստվածածնի վերափոխման հրաշալի եկեղեցին, որ 1553 թվին պարսից Թամազ շահը կողոպտեց:

Այստեղ մի փոքրիկ մատուռի մեջ թաղված է վրաց թագավոր Կոստանդին Ա (1407—1414):

Ոմանք Ս. Աստվածածնի վերափոխման եկեղեցու մեջ եղած դերեզմանը Թամար թագուհունն են համարում, բայց սխալվում են, Թամար թագուհին թաղված է Գելաթի վանքում:

Ահա այս է վրաց տարեգիրների տված տեղեկությունը, իսկ հայոց պատմագիրներից Վարդան Բարձրբերդցին ասում է, թե է դարու ըսկզբում «ի Դպրավանից տարան զխաչն, որ յանուն սուրբ Աստուածածին, որ արդ Վարձիոյ կոչի՝ յայնժամ Ճոնեացն կոչիւր: Եւ տարավ զնա Սարգիս Ճոնեացն ի գողութ յերեսաց այլազգեաց, ուր արար սքանչելիս ձեռօք Տիմոթ վարդապետին—զկինն Դեմետրեայ արքային վրաց յուրկութենէ առողջ արարեալ ամենևին, վասն որոյ և առին ի Հայոց և է սրբոյն Մեսրովբայ աւրհնեալ և կամ Բարսղի սրբոյն Ճոնին և ունի դիր հայերէն յաջ թևն[9]»:

Սրանից երևում է, որ ավանդության ասելով ս. Աստվածածնի տված դրախտի ծառի ճյուղից շինված ճոնյաց սուրբ խաչը ապահովության

9 Վարդան Բարձրաբերդցի, Պատմութիւն տիեզերական, Մոսկուա, 1861, էջ 96—97:

համար է դարու սկզբում Վարձիա է փախցրած, որի պատճառով և Վարձիո է կոչվել։ Հետևապես և այս վարձիան ոչ թե ժր դարումն է շինվել, ինչպես վրաց տարեգիրներն ուզում են հավատացնել, այլ է դարուց առաջ, թերևս մի հայ իշխանի ձեռքով։ Իսկ Գեորգ և Թամար թագավորն ու թագուհին միայն նորոգել և նորանոր շինություններով հարըստացրել են[10]։

ՋԱՎԱԽՔԻ ՏԵՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Ջավախքի սահմաններն որոշապես հայտնի չեն, այժմ այդ տեղը կոչվում է Ախալքալաքի գավառ, որ պատկանում է Թիֆլիսի նահանգին և գտնվում է 61°—61° 35′ հյուսիսային լայնության և 41° 35′—41°5′ արևելյան երկարության աստիճանների տակ։

Սրա սահմաններն են. հյուսիսից՝ Գորվա գավառի Բորժոմի հասարակությունը Տավ-Գոմբևի սարով, որ գտնվում է Ախալքալաքի, Բորժոմի և Ծալկայի սահմանագլխում, Տմսխուր լճով, Մոլիտ գյուղից հարավ ձգվող փոքրիկ բլրակներով, Ախալցխայի գավառը՝ ձոռոլ սարով, Ցիպիրեախակեդի լեռնաշղթայով և Կյուպռկլու սարով։ Արևմուտքից՝ Ախալցխայի գավառը՝ Կուր գետով։ Հարավից՝ Արտահանի գավառը Խոզապին լճով, Գյոդդադի լեռնաշղթայով, Ուչ-Թափալար լեռներով, օրթուլ-դաղ սարով, որ կանգնած է Ախալքալաքի, Արտահանի և Աղեքսանդրապոլի սահմանագլխում, Աղեքսանդրապոլի գավառը՝ Մատաթապի սարերով։ Արևելքից Ծալկան՝ Ղարախաչի լեռնաշղթայով, Մոկրիա սարերով, Դավաղրան շղթայով, Մարսևի ձորով, Իլանդաղ, Ղույլուն դաղ, Պիկետ, Գրեչիշնի սարերով, Սամսարի լեռնաշղթայով, Ղարաղուզեյ, Շավնաբաթ կամ Դալի-դաղ, Բեբեր և Տավգոմբևի սարերով։

Այս գավառը ձգվում է զուգահեռականների ուղղությամբ 40—55, իսկ արևմուտքից արևելք 30—60 վերստ։ Ամբողջ տարածությունն է՝ 2392,86 քառակուսի վերստ։

ԱԽՍԱՎԱՋԱՎԱՔԻ ԴԱՇՏԱՎԱՅՐԸ

Ախալքալաքի գավառը Կուր գետի ջրամբարներից մին և արևմուտքից դեպի արևելք հետզհետե բարձրացող մի դաշտավայր է։

---

10 Վարձիայի մասին ավանդություններ տե՛ս իմ «Ջավախքի բուրմունք»-ում։

Այս դաշտավայրի արևմտյան սահմանը՝ 30 վերստ տարածությամբ, այսինքն մինչև Խրթիզ գյուղը, է Կուրի խորունկ ձորի ժայռոտ ափերը։ Միայն բացառություն է կազմում դաշտավայրի հարավ արևմտյան անկյունը, ուր նա հետզհետե միանում է Մուրագվայի լեռներին և որոշ սահմաններ չունի։ Խրթիզից այն կողմն՝ արևմտյան սահման կարող է համարվել և Ջոբուրետու-չայը կամ Վարևանդու գետակը, որի այն կողմը գտնվում են քարոտ բլուրներ։ Հյուսիսից դաշտավայրը մոտ 16 վերստ երկարությամբ ընդհատվում է Ցիխե-ջվարի լեռներով, որոնք ձգվում են Կոկլիայից մինչև Բեժանո գյուղերը։ Միևնույն լեռները հարավ ուղղվելով և մտնելով Ախալքալաքի դաշտավայրը՝ կազմում են և նրա արևելյան սահմանը՝ մոտ 30 վերստ երկարությամբ և ապա հետզհետե ցածրանալով՝ կազմում են Օրջա-չայի և Թափարավան-չայի քարոտ բլրաշարքը։

Եթե Թափարավան լճի շուրջն և Համանուն գետի երկու եզերքը տարածվող հարթությունն էլ Ախալքալաքի դաշտավայր հաշվենք, այն ժամանակ սահմանը պետք է ձգվի Տուման-գյոլ լճից Տամբուկա գյուղը և Ռադիոնովկայից և Սաղամոյից՝ Տրոիցկա։ Հարավ-արևելքում դաշտավայրը կտրվում է Մատատապու լեռներով, իսկ հարավում՝ Ջլտրի լեռներով։

Այդ դաշտավայրի երկարությունն ամենաշատը 36 վերստ է, հաշվելով Դելիֆ գյուղից հարավ ձգվող բլուրներից մինչև Բեժանո գյուղը։ Իսկ լայնությունը հասնում է մինչև 40 վերստի՝ միայն հարավային մասում, իսկ հյուսիսայինում՝ նեղանում և հասնում է 5—8 վերստի։

Այս դաշտավայրի մակերևույթը հավասար է 650 քառակուսի վերստի։ Ամբողջ դաշտավայրը մոտ 2080[11] ոտնաչափ հարաբերությամբ ծածկված է հրաբխային խանձողով, որի վրա տարածված է սևահող։ Նա ծովի մակերևույթից միջին հաշվով 6000 ոտնաչափ բարձրություն ունի։

Ախալքալաքի այս ընդարձակ դաշտավայրը բաժանված է հետևյալ ստորաբաժանումների. Գարելայի դաշտավայր, որ բաժանվում է Սաթխայի 4375 ոտնաչափ բարձրություն ունեցող լեռնաշղթայով։ Ջրեշու դաշտավայր, որ բաժանվում է Ղըռխբուլաղի ձորով և ձգվում է մինչև Կուրի ձորը։ Սա այսպես է կոչվում Ջրեշ ավերակի անվամբ, որ Հայր Ալիշանը Շիրակումն է դնում։

---

11 Կորխ և Խրթիզ գյուղերի մակերևույթի բարձրության տարբերությունը։

Ջավախքի ամենաբարձր լյառն է Աբուլը, որը բարձրանում է գավառի գրեթե կենտրոնում։ Նա բաղկացած է երկու գագաթներից, որ միմյանցից հեռացած են գրեթե 10 սաժեն։ Մեծ Աբուլի բարձրությունն է 10826 ոտնաչափ, փոքրինը՝ 9191։ Մեծ Աբուլից բխում է մի քաղցրահամ աղբյուր։ Գյուղացիները պատմում են, իբր նախնիք խմել են այդ աղբյուրից և սաստիկ հավանելով ասել. «Խստակ ապուր է», այդտեղ բնակություն հաստատել և գյուղն ու սարը կոչել Ապուր, որ աղավաղվելով դարձել է Աբուլ։

Մեծ Աբուլի արևմտյան լանջին նկատվում է պղնձի հանք և վանակատ (обсидиан), սակայն դեռ չէ հետազոտած, թեև ակադեմիկ Աբիխն էլ մի անգամ բարձրացել է սրա գագաթն երկրաբանական նպատակով։ Սրա գագաթն ամառը ևս ծածկված է ձյունով։

Իսկ Փոքր Աբուլի լանջին կառուցված է եղել մի ամրոց, որ այժմ ավերակ է։

Երկու Աբուլների միջև գտնվում է Աբուլ լիճը։

Աբուլի շրջակայքն և առհասարակ Ջավախքի այս արևելյան մասը բարձրավանդակ և շատ լեռնոտ է։ Այս կողմը Փարվանա լճի մոտերքը հասնում է մինչև 7014 ոտնաչափ բարձրության։

Այստեղ Մեծ Աբուլից հյուսիս-արևելք Թափարավան լճի հանդեպ բարձրանում է Գոդորեբի լյառը, որ Աբուլից հետո երկրորդ բարձր լյառն է։ Սա ծովի մակերևույթից 10466 ոտնաչափ բարձր է, և սրա գագաթից պարզ եղանակին երևում են Արագած, Մեծ և Փոքր Մասիս, Կազբեկ և Էլբրուս լեռները։ Իսկ սրանից արևելահյուսիս՝ գտնվում է Քոռ-Օղլու լյառը, մի ավերակ ամրոցով։ Այս լեռից դեպի արևմուտք գրտնվում են միմյանցից հալիվ կես վերստ հեռավորությամբ երկու ժայռոտ լեռներ, որոնցից արևմտյանի վրա գտնվում է Քոռ-Օղլու ապաստանը։

Ջավախքի արևելյան սահմանագլխում, Թափարավան լճից դեպի հարավ գտնվող Գրեչիշնայա լեռան մոտից ձգվում են նախ դեպի արևմուտք և ապա դեպի հյուսիս Սամսար լեռները։ Սրանց մեջ ամենաբարձր գագաթն է Սամսարը, որ 10777 ոտնաչափ բարձրություն ունի ծովի մակերևույթից։ Սրանից դեպի հյուսիս 7 վերստ հեռավորությամբ բարձրանում է Ղարադուզեյ գագաթը, որից երեքական վերստ միմյանցից հեռու, դեպի հյուսիս գտնվում են Շավնաբաթ կամ Դալի-դաղ, Բեբեր-

դարա և Տալկոտելի գագաթները, վերջինս 9211 ոտնաչափ բարձրությունով։

Այս լեռները մինչև կեսը ծածկված էին խիտ անտառներով, սակայն 1853 թվականի պատերազմին և դուխոբուռների գաղթականության ժամանակ անխնա կտրատելով՝ ամայացրին, այժմ միայն մացառներ կան։

Սամսար լեռներից մի լեռնաշղթա բաժանվելով ձգվում է դեպի արևմուտք և հասնում գրեթե մինչև Ալաթուման. սա կոչվում է Ղարաղուզեյ։ Սրան միանում է բլրակների մի երկարաձիգ շղթա, որ սկսվում է Կարդիկամ գյուղից և որ կրում է այն գյուղերի անունները, որոնց մոտով նա անցնում է, օր. Մաճաթիու, Արագովայի և այլն։

Թե՛ Սամսար լեռներից և թե՛ Ղարաղուզեյ լեռնաշղթայից բխում են պաղպաջուն աղբյուրներ և սառնորակ վտակներ, փչում է զովագին քամի, և երկիրը ծածկվում դալար խոտով ու բյուրավոր ծաղիկներով, ուստի և սամսարցիները, բուղաշենցիներն ու զակցիները ամռան իրենց բազմաթիվ հոտերն ու նախիրներն առած գալիս են այս կողմերը յայլա։

Գավառի արևելյան սահմանագծում, Թափարավան լճի հանդեպ բարձրանում են Գայլին-դաղ և Ինագ-դաղ գագաթները և ձգվում է Դավաղրան լեռնաշարքը, որոնցից ամենահյուսիսայինի և ամենաբարձրի բարձրությունն է 9254 ոտնաչափ։ Սրանց միանալով, դեպի հարավ ձգվում է Մոկրիա (Թաց) լեռները, փոքր-ինչ դեպի արևելք ուղղվելով։ Այս լեռները, որ իրենց անունը ստացել են ռուսներից, վերին շերտերում ծածկված են խանձուղով, որոնք հեշտությամբ լուծվում են ջրում և դառնում կպչուղ։ Այս լեռների ամենաբարձր գագաթն է Էմլեկլին, որ 10018 ոտնաչափ բարձրություն ունի ծովի մակերևույթից։

Այնուհետև ձգվում են Ղարախաչի լեռները, որոնցից միայն մի քանիսն են սահմանակից Ախալքալաքի գավառին։

Գավառի արևելահարավային սահմանում ձգվում են Մատատապու լեռները։ Իսկ արևմտահարավային սահմանագլխում ձգվում է Գյոզդաղ (Կապույտ լեռ) լեռնաշղթան, որ սկսվում է Խանչալլի գյուղից և ձգվում մինչև Ջուրղունիս գյուղը։ Այս շղթայի բարձրությունն է 9145 ոտնաչափ։

ԼՃԵՐԸ ԵՎ ԳԵՏԵՐԸ

Ջավախքը շատ հարուստ է լճերով, սակայն սրանք ընդհանրապես փոքր են և ոչ մինի վրա նավակներ անգամ չեն լողում։ Սրանք գլխա-

վորապես տարածված են գավառի սահմանագլխներում, նրա ամենաբարձր տեղերում, և սկիզբ են տալիս Ջավախքի համարյա բոլոր գետերին և վտակներին։

Ամենից նշանավորն է Փարվանու կամ Բափարավան լիճը, նախնի ծովակ Հյուսիսո, որ տարածված է Ջավախքի արևելահյուսիսային սահմաններում, սա ծովի մակերևույթից 6876 ոտնաչափ բարձր է, իսկ նրա շրջակայքի մակերևույթը մոտ 714 ոտնաչափ բարձրություն ունի։

Լճի մակերևույթն է 30 քառակուսի վերստ, իսկ խորությունը՝ մոտավորապես ութ սաժեն է։ Լճի ջուրն անուշահամ է և պարզ։

Սրա մեջ թափվում են հետևյալ վտակները.

Հյուսիսից՝ Ղրխ-բուլախ (քառասուն ակ), արևելքից՝ Մակարդաբասու, Մարսևու գետակները, արևմուտքից՝ Տամբովկու։

Իսկ հյուսիսից դուրս է հոսում Բափարավան-չայը, որ Ախալքալաքի ամենամեծ և ամենանշանավոր գետն է։ Սա հոսելով դեպի հարավ արևմուտք՝ Ղավուրմա գյուղի մոտ խառնվում է Սաթխայի գետակի հետ և ապա դեպի արևմտահյուսիս հոսելով՝ անցնում է Ախալքալաքի արեվելյան կողմի ձորով, ընդունում է յուր մեջ փոքրիկ վտակներ, ապա դեպի հյուսիս գնալով՝ Կորխ գյուղի մոտ խառնվում է Մեծ ջրի հետ, ու դեպի արևմուտք հոսելով, Խրթիզ գյուղի առաջ թափվում է Կուրի մեջ։ Ամբողջ Բափարավան լիճը բոլորովին սառչում է։

Լճից որսում են սև, ալապալիս (գեղարքունի), ղափան, սաղան, մուրծա ձկներ, սակայն այնպիսի մի փոքրիկ քանակությամբ, որ միայն շրջապատող մի քանի գյուղերին է բավարարություն տալիս, ուստի և կառավարությունն անուշադրության է թողած և կապալով չի տալիս։

Այս լճի ափին կան երկու ամրոցի ավերակ։ Մինը լճի արևմտյան կողմը, անմիջապես ափին, մյուսը հարավային կողմը, Փոկա գյուղում։

Այս լճի ափին, հյուրասեր ձկնորսների խրճիթում, հանգստացել է Նունե կույսը, երբ գնում էր Մցխեթ։

Բափարավանից դեպի հարավ, գրեթե միևնույն գծի վրա գտնվում է Տուման-գյոլ լիճը, որ ավելի արևելքից արևմուտք է տարածված, և որի մակերևույթը հավասար է 10 ք. վերստի։ Լիճն այսպես կոչվելու պատճառն այն է, որ գրեթե միշտ պատած է տուման-մշուշով։ Սրա ամենմիջապես ափին գտնվում է Սաղամո թուրքաբնակ գյուղը։

Սրա մեջ թափվում են Գանձաու և Բոյուկդարու (մեծ ձոր) գետերը, վերջինս սկիզբ է առնում Մոկրիա լեռներից։ Հարավարևմտյան կողմից հոսում է Տումոյու ջուրը, որ դեպի արևմուտք հոսելով անցնում է երկու

Արագյալների միջից և Պատկանա գյուղի հանդեպ թափվում է Սաթխա գետակի մեջ։

Այս լճից էլ հարավ դարձյալ միևնույն ուղղության վրա գտնվում է Մատատափու լիճը համանուն լեռնաշղթայի ստորոտում։

Սրա մեջ արևելյան կողմից թափվում են Կուրյան-չայ և ուրիշ վտակներ։ Սրա արևելյան ափին, Կուրյան-չայի բերանի մոտ կա մի հին ամրոցի ավերակ, արևմտյան ափին կից ձգվում է Աղեքսանդրապոլից Ախալքալաք տանող փոստային ճանապարհը։ Այս լիճն ամառը ճիլով, իսկ ձմեռը սառցով պատած է լինում։

Այս լճից դեպի արևմուտք, Ախալքալաքից դեպի հարավ գտնվում է Խանչալլի լիճը։ Սա տարածված է հարավ-արևելքից հյուսիս-արևմուտք, փոքր-ինչ նեղանալով։ Սրա մակերևույթն է 16 ք. վերստ։ Ջուրը քաղցրահամ է։ Սրա մեջ թափվում և դուրս են գալիս փոքր և անանուն առուներ ու վտակներ։ Ափերն ամբողջապես ծածկված են երկար ճիլով, որ գործ են ածում համեհաներ շինելու։

Լճի արևելյան ափին բլրակների վրա կան երկու ամրոցի ավերակներ, որոնցից հարավայինը կոչվում է Սղնաղ։ Տեղացիները ոչինչ չգիտեն այս ամրոցների մասին, պատմությունն էլ լռում է։

Ախալքալաք գավառի հյուսիսային սահմանագլխում տարածվում է Տմսխուր լիճը, որ մոտավորապես քառանկյունի դիրք ունի. մակերևույթն է 13 քառ. վերստ։ Ջուրը կապտագույն է և քաղցրահամ, այստեղ գըտնըվում է ամենալավ գեղարքունի։

Սրա հյուսիսային մասում մի լեզվակի վրա շինված է Ղըզըլ-քիլիսա հայաբնակ գյուղը, որ գեղեցիկ դիրք ունի։

Այս լիճը սրանից մի տաս տարի առաջ ամբողջովին պատկանում էր Ախալքալաքի գավառին, և նրանից օգտվում էին Ախալքալաքի գավառացիները, այժմ միայն հարավ և արևելյան մասերն են պատկանում, իսկ մնացածն իշխան Միխայել Ալեքսանդրովիչի սեփականությունն է։

Գավառիս Հարավարևմտյան սահմանագլխում տարածվում է Խոդապին լիճը։ Սրա մեկերևույթը 26 քառ. վերստ է։ Երկարությունը 10 և լայնությունը՝ 2—3 վերստ է։

Ջուրը դառն-աղային համ ունի և պարունակում է կիր, նատրիում, մագնեզիա, քլոր, ածխաթթու և ծծմբախառն թթվատ. 1000 խոր. սմ ջրի մեջ պարունակվում է 0,8804 գրամ պինդ նյութ։ Ոչ մի ձուկ չկա լճում և չի էլ կարող ապրել։

Լճի մեջ կան չորս հատ փոքրիկ կղզիներ, որոնց վրա ամառը վայրի բադերի մի ահագին բազմություն բներ է շինում։ Գյուղացիները հա-

սարակ լաստերով մոտենալով այս կղզիներին, հաղարավոր ձվեր և թըռչուններ են տանում։ Այս լճից ոչ մի առվակ չէ դուրս գալիս, չնայելով որ գարնանը շատ վտակներ են թափվում նրա մեջ։ Հավանական է, որ անցյալում, արևմտյան կողմից մի անցք լիներ դեպի Կուրը։ Լճի ափին կա մի ամրոցի ավերակ։ Այժմ այս լճի միայն կեսն է պատկանում Ախալքալաքի գավառին, մյուս կեսը Արտահանինն է։

Բնև կան ուրիշ լճեր ևս, սակայն նրանք շատ փոքր են, մի քանիսն էլ ամառը չորանում են և մի առանձին նշանակություն չունին։ Այսպիսիններն են Վաչիանու, մի պղտոր լիճ, որի ջուրը վաչիանցիք ստիպված խմում են։ Բուղդաշեն, Արլովկա գյուղի մոտ, որից սկիզբն է առնում Սաթխա վտակը. Ալիշան, Դյումուրդա գյուղի հարավարևելյան կողմը, Տանկալ, Հոկամ, Ալիշանից փոքր-ինչ հարավ, միմյանց մոտ. Աբուլ, Համանուն լեռների արևմտյան կողմը, գյուղից դեպի հարավ։ Ջալալա, Խանչալլի լճից դեպի հյուսիս։ Արնեքատեր, Ալաթուման գյուղի սահմանում, բլրակների միջև, սա այսպես չ կոչվում, որովհետև մի հոտաղ մանուկ խեղդվել է մեջը։

ԿԼԻՄԱՆ

Ջավախքի կլիման բավականին առողջարար է, և ինչպես երևում է Տորոպովի կազմած կլիմայաբանական (пиретологическая) քարտեղից, տենդից ազատ սակավաթիվ գավառներից մինն է, որի բարեխառն կլիման, բարձր դիրքը և ջրի առատությունը բավական արգելք են վարակիչ նյութերի զարգացման։

Այստեղ ձմեռը ըստ պ. Ռիչենկամպֆի վկայության, այնպես խիստ չէ, ինչպես սովորաբար կարծվում է, միայն չափազանց ձյուն է գալիս։ Առաջին անգամ ձյուն գալիս է նոյեմբերի սկզբին, իսկ երկրորդ ձյունով ծածկվում է և սահնակները լծվում են դեկտեմբերի սկզբին։ Ցերեկվա բարեխառնությունը համարյա միշտ 0° է լինում և քիչ անգամ—2-ից 3°։ Բայց գիշերը, արևը մայր մտնելուց ետ բարեխառնությունը մոտ 10 աստիճան արագությամբ իջնում է, իսկ ընդհանրապես՝ ձմեռվա գիշերների բարեխառնությունը —13° ցած հազիվ է պատահում։ Վեց տարիների ընթացքում միայն մի անգամ է իջել մինչև —23°։ Աշունն ու աշնան վերջը չափազանց երաշտ են լինում, այնպես որ ձյունը նստում է չոր գետնին, մարգերում երբեք չի լինում կանաչ, որովհետև ցրտի և չորության պատճառով չի կարողանում բուսնիլ։ Մարտի վերջին արդեն կարում է ձյունը, բայց գյուղերում կանաչ դեռ երկար ժամանակ չի կարելի գտնել, որովհետև գարունը բավական ցուրտ

լինելով խոտի աճելուն սաստիկ արգելք է լինում։ Այստեղ խոտը ավելի կամաց է աճում, քան Մոսկվայի նահանգներում և մինչև անգամ Ղարսա սարահարթում։ Ամբողջ գարունը և ամռան մի մասը, մինչև հուլիսի կեսը, սաստիկ անձրևային է, միայն անձրևները երկար չեն տեղում, այլ տեղատարափ են, որից հետո շուտով երևում է արևը, և եղանակը պարզվում է։ Ամբողջ օրվա մեջ հազիվ է պատահում ամպամած եղանակ։ Ամառն էլ գարնան չափ աննպաստ է գյուղատնտեսության, որովհետև շատ ցուրտ է և առավոտները սաստիկ ցուրտ քամիներ են փչում։ Այսպիսի դաշտերի բույսերը կարճ են, այսպես օրինակ, կանեփը ռուսականի երրորդ մասի չափ էլ չի բարձրանում։

Ախալքալաքի դաշտավայրում կան և ավելի ցուրտ տեղեր, օր. դուխոբուռների բոլոր և Փոկա, Գանձա, Սաթխա, Մեծ-Արագյալ գյուղերը և ուրիշները, որոնք 6000—7000 ֆուտ բարձր են ծովի մակերևույթից, և ուր օդի բարեխառնությունը ձմռանն իջնում է 20—30°։ Ռադիոնովկա գյուղում, որ գտնվում է 7000 ֆուտ բարձրության վրա, ամռանը հացը վնասվում է ինչպես երաշտից, այնպես էլ առավոտյան ցրտերից։ Այս վերջինի պատճառն այն է, որ սևահողի մի բարակ շերտ միայն ծածկում է քարքարոտ երկիրը և խոնավության մի մասը արագությամբ շոգիանում է, իսկ մյուս մասը հոսում է քարքարոտ երկրի միջով, ուստի և ցանքերը վնասվում են խոնավություն չլինելու պատճառով։ Այս գյուղում ձյունը գալիս է մինչև անգամ հոկտեմբերի 15—20-ին և երբեք ապրիլի կիսից առաջ չի վերջանում։

Այս բարձրությունների վրա ձմեռը լինում է սաստիկ և ձյունախառն բքեր, որոնք ձյունով լցնում են գյուղացիների բնակարանները, ծածկում դռներն ու պատուհանները, այնպես որ գյուղացիներն ամբողջ շաբաթով բանտարկված են մնում և կերակրվում են այն հացով, որ բարեկամները հերթիկը բանում և վայր են կախում։ Եթե այս ողորմելիները կամենում են թոնիրը վառել մի տաք կերակուր պատրաստելու համար, բուքը թույլ չի տալիս ծուխը քաշվելու և փչում լցնում է ամբողջ տունը, երկուստեք՝ դրսից բուքը, ներսից ծուխը՝ հալածված, սրանք պպզում են տաք անկյուններում, անիծելով իրենց բախտը։ Նույնպիսի բքեր պատահում են և ամառը. այսպես, 1886 թ. լուսնի 20-ին Քոռօղլու լեռան լանջում սաստիկ բուք է բարձրանում և խեղդում բազմաթիվ հոտեր։

Քիրազ ամսում էլավ տուման,
Քոռօղլիեն զարկեց բիհան,
Ջարդավ օչխարն, չունինք գյուման,
Թարիֆդ էնեմ սեֆիլ Դավիթ։

Այսպես է նկարագրում ժողովրդական երգը։

Բնակիչներն ամառը մինչև անգամ հուլիսի կիսին չեն հանում բրդյա հագուստներն ու ոչխարի մորթուց կարած մուշտակները։ Նվ երեք այսպիսի համարյա բևեռային գոտու նման կլիմայում բնակիչները կարողանում են ապրել և բավարար ապրուստ հոգալ, այդ պիտի գլխավորապես վերագրել նրանց տոկունությանն և երկաթե եռանդին։

Ախալքալաքի դաշտավայրի կլիմայի անհարմարություններից մեկն էլ այն է, որ հաճախ կարկուտ է գալիս, որից առաջացած վնասը, տեղային ոստիկանության հաշվով, հասնում է մի պատկառելի թվի՝ 200 000 ռուբլի։

Ախալքալաքի գավառի խըրթըղու հովտի կլիման բոլորովին հակառակ է Ախալքալաքի կլիմային և բոլորովին նման ախալցխայինին։ Այնտեղ ձմեռն օդի բարեխառնությունը 4,55°Ց. գարնանը 7,9°Ց. ամառնը 22,74°Ց և աշնանը 5,6°Ց։ Ամենաառաստիկ ցուրտը հասնում է —28°Ց., իսկ ամենաառաքը՝ 34,9°։

ՀԱՆՔԱՅԻՆ ՋՐԵՐ

Ախալքալաքի գավառը շատ աղքատ է հանքային ջրերի կողմից, ոչ մի նշանավոր ջերմուկ չկա, մի քանի տեղ միայն բխում են հանքային ջրեր, սակայն նրանք ևս բոլորովին անխնամ են թողնված և ծառայում են որպես հասարակ լողարաններ՝ պատահական անցորդներին և գյուղի երիտասարդներին։

Սրանցից նշանավորներն են.

Սարո. ծծմբային 16,5°R տաքություն ունեցող ավազան է։

Խանդոյինը գետի աջ ափին մի փոքրիկ հարթության վրա մի կեղտոտ ավազան է։ Ջուրը 13,7°R տաքություն ունի, մուգ կանաչագույն է և պղպջակներ անգամ չունի։ Մորիցը կարծում է, թե այս ջրի մեջ պրղինձ կա։ Նկատելի է, որ հնումն սա պատնեշ է ունեցել, որ այժմ քանդված և ավազանն է լցված։

Խըրթըղու ճանապարհի վրա, Պայպուրտցյանի կալվածքում, Ախալցխայի Փիտ գյուղի հանդեպ, սարի ստորոտում կա ծծմբային 25,9° ջերմության մի ավազան, որ բոլորովին անխնամ է թողնված։ Այս ավազանից փոքր ինչ հյուսիս, Կուրի անմիջապես ափին կա և մի ուրիշ այսպիսի ավազան։

Կարծախ գյուղում, Խոզապին լճի մոտ կա սառը ծծմբային ջրի ավազան, ուր բորոտները լողանում և բժշկվում են։

Օլադա, Կուրի աջ ափին, 5—6 վերստ հեռու Մուրագվալ գյուղից, սառն թույլ աղային ջրի ավազան է։

Ջխարաբելու, Ջագյուրտան լեռան ստորոտում 22,5°Յ ջերմություն է լինում։

Մուրագվալի, համանուն գյուղի մոտ տաք ջերմուկ է։

ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ախալքալաքի գավառը գրեթե բոլորովին զուրկ է անտառներից, միայն Ջրխրդզվար և Սամսար սարերի լանջերին կան փոքրիկ մացառներ։ Մեծ անտառներ, որոնք շինության փայտ մատակարարեին, պատահում են բնակիչներին քիչ մատչելի և Ախալցխային սահմանակից Ջորեբեռի սարերում։ Սրանք ընդամենը բռնում են 6740 դեսյատին տեղ։

Սակայն շատ հարուստ է յայլաններով, որոնք գլխավորապես տարածվում են գավառի հարավարևմտյան և արևելյան մասերում, և ուր արածում են ոչ միայն գավառի, այլև Սղնախի և այլ կողմերի անասունները։

Այստեղի արտերում ցանում են կտավատ, գարի, ցորեն, կարտոֆիլ։ Պարտեզներում պարտեզի բույսեր՝ ավելուկ (Rumex), բազուկ (Beta, բռեհան (Ocumum), թարխուն, ծնեբրոն (Serpyllum), կոտեմ (Nasturtium), կաղամբ, համեմ, մաղադանոս, պռաս (Porrum), սամիթ (Anetum), սպանախ, սոխ, սխտոր, վարունգ, տերազոլի և այլն։ Բայց ամենից ավելի նշանավոր է Գյոնդուրու և Վաշիանու շաղգամը, որ մեծ քանակությամբ տանում են Ալեքսանդրապոլ վաճառելու։

Դաշտերում և գլխավորապես Դիլիֆում լինում են հետևյալ ծաղիկները։ Անթառամ (Helichrisum), ապրի ծաղիկ, ավելի ծաղիկ, դավի ծաղիկ, դավի սապոն, դեղին ծաղիկ կամ ծուծք, լորի աչք, լվի ծաղիկ (Pulicaria), խաշխաշ (Papaver), խնկածաղիկ (Polium-montanum), խոտոտ-մորոտ, կակաչ (Tulipae), կոհոզ (Ribes), կոլծուծ, կուժկոտրուկ, հինա, ձնծաղիկ (Colchicum), մանուշակ, մխիթար, նավրուզ, նռգլու, շանթերան, չիգիտամ կամ սավդուկ (Colchicum autumnale), սոլոքուր, սուսամբար, սպիտակունք (Purola), տուզտ (Malvae), փուշ կամ գյուգում ծաղիկ, քրքում (Crocus, Safran), օշոշ։

Կանաչներից և խոտերից նշանավոր են՝ աշըղպանգ առվույտ-յոնճա (Frifolie-fibrini), ատոլ, ավել, բաթաթակ (Convolvolus liseron), բշբշուկ, բողկուկ, գառի խոտ, գիլու փստիկ, գնձմնձուկ (Thalicfrum), գոմեշ կոտրուկ, գոմշի անկաճ, դաղձ (Mentha), դանդուռ, եղինջ (Urtica), զոխ,

երիժնակ, թել բանջար, թիլուկ, թթխմոր, թթու թթվաշ, ժախ իշկաթնուկ (Lathysus), *իշու երիժնակ, լվի ծաղիկ* (Conyza), *լոշտակ* (Bryonia aliba), *խաթնխոտ* (Polygola), *խիլառ խրխնոտուկ, խոնոտատ, կծմնծուկ* (Barborea), *կծուկծմանի, կոճղնդ, կոպախ, կովճակատուկ, կորնգա* (Melilotus), *կրծլիկ, հոտղի փլավ, ղանղիկ, ղառղոր հաց, ղմի, ղընճըլղոզ, ճառճըռատուկ, ճիլ* (բարակ եղեգն), *ճմռուկ, ճնճղապաշար, ճրճատուկ, մամուռ, մանթար, մատուկ, մռուկոտոմ, շաղկամուկ, շանթութ, շորշորդուկ, ուռվենիկ, պնապնտուկ, ջրակոտեմ* (Sium), *սիպեխ* (Coronpus), *սիրխ-սիրխ* (եռատերև է, սրանով դուշակում են, թե որ աղջկան պիտի սիրեն։ Սրանց քառատերևը գոնողին թաքնված գանձերը կերևին)։ *Սոխուկ, սորեկ, սուտ տատրակ, տատրակ, տերևատ, քեխ։*

Խըրթըզի ձորակում և Մարգաստանում աճում են հետևյալ պտղատու ծառերը. թթենի, ընկուզենի, կեռասենի, խնձորենի, տանձենի։

Այստեղ ցանում են ծխախոտ և սիմինտր, որից քրդերը հաց են թխում։

ԿԵՆԴԱՆԻՆԵՐ

Ջավախքի ֆաունան հարուստ չէ։ Դաշտերում գտնվում են բազմաթիվ արտուտիկներ և շահհիններ, ինչպես նաև կկուներ, արտերում՝ ճնճղուկներ և սարյակներ։ Լճերի վրա կան բազմաթիվ թռչուններ, իսկ լեռներում նապաստակներ, աղվեսներ, գայլեր, այծյամներ և փոքր արջեր։

ԱՆՍԱԼՔԱԼԱՔ

Թափարավան և Ղըռխ-բուլաղ գետերը միախառնվելով՝ մի պայտաձև թերակղզի են ձևացնում, որի վրա գտնվում են Ախալքալաք քաղաքն ու բերդը։

Բերդը կառուցված է թերակղզու ծայրին, որի երեք կողմը ձգվում են բավական ընդարձակ զառիվայրեր։ Այս զառիվայրերում գտնվելիս է եղել հին քաղաքը, որ այժմ բոլորովին ավերակ է։

Կիսավեր պարսպի հետքերը ցույց են տալիս, որ քաղաքը պարբուպապատ է եղել և միայն արևելյան և արևմտյան ձորերի մեջ բաց արած ճանապարհներով հաղորդակցություն է ունեցել գավառի հետ։

Արևելյան պարսպի դռան վրա դեռ մինչև այսօր նկատելի է վրաց Մեսրովբյան տառերով մի համառոտ արձանագրություն։

Այժմ միայն երկու եկեղեցու ավերակ, հացի հորեր, ստորերկրյա ճանապարհներ և զանազան տների որմեր են նշմարելի, մյուսները ծածկված են հողի տակ։ 1882 թվին, երբ արքունական շինությունների համար քարեր էին կրում այդ ավերակներից, պատահել են մի քարուկրյա պատի, փորել են և գտել սրբատաշ քարերից շինած մի սալատակ և նրա տակ արդեն մի քանի գերեզմանաքարեր, խաչքարեր, մի քարե աշտանակ, եկեղեցու դռան վերևի մի քար և այլն։ Գտնված քարերից շատերը ծածկված են եղել հայերեն արձանագրություններով, որոնք վերաբերում են ԺԳ, ԺԴ և ԺԵ դարերին։ Դրանցից ամենահինն ունեցել է այսպիսի արձանագրություն. «Այս է հանգիստ Ներսէս (քահանային՞) թվ. չխգ» (1294)։ Մյուս գերեզմանաքարի վրա քանդակված են եղել երկու մարդկանց կերպարանք, շուրջը այսպիսի արձանագրությամբ. «Այս է հանգիստ եթէ գիտես հարազատ որ ճանաչես, եղբարք... վռ... աղին և ներքսաւղին»։ Վերևից՝ «թվ. Պ. ժա» (1362)։ Եկեղեցու դռան վերևի քարի վրա հազիվ կարդացվել է. «թվ. ջ» (1451)։

Քարերից մի քանիսի վրա նկատվել է աղյուսի բանձր շերտ, զորօրինակ՝ մ. կանգուն խաչքարի վրա, որ հավանականորեն քահանայի գերեզմանաքար է, դժվարությամբ կարդացվել է մի քանի հատ ու կտոր բառեր, այն է՝ «ընկալ, կեցո, ողորմեա... հանգուցեալ»։ Քարէ աշտանակը մոտ 7 վերշոկ բարձրության է եղել և բավական կոշտ շինված. սրա վրա էս արձանագրության հետքեր են երևացել, բայց անվերծանելի են։

Այժմյան քաղաքը գտնվում է բերդի հարավային կողմը, ուր առաջ գտնվելիս է եղել տաճկաց գերեզմանատունը։ Ընդամենը յոթ բավական լայն և կանոնավոր փողոցներ են 1360 սաժեն երկարության և երեք սաժեն լայնության, որոնք կտրվում են վեց փողոցներով, որոնց երկարությունն է 270 սաժեն։ Փողոցներից միայն մի քանիսի երկու կողմը շինված են մայթեր, մնացողը բացի մինից, ճաճուղի չէ, ուստի և սաստիկ ցեխ է լինում։

Թեև ժողովուրդը փողոցներին անուն տալիս է, սակայն ոչ մի փողոցի վրա անուն չէ դրված։ Տները շինված են քարից և արտաքուստ համարյա բոլորը սպիտակեցված են. ամբողջ քաղաքի մեջ երկու հարկանի միայն մի տուն կա, մյուսները մի հարկանի են։ Քաղաքի գրեթե կեդրոնում գտնվում է Հայոց Ս. Խաչ եկեղեցին, որ 1856 թվին կառուցել է Կարապետ Յաղուբյանը՝ գլխավորապես յուր և մասամբ հասարակության դրամով։ Սա մի հասարակ շինություն է, առանց նույնիսկ գմբեթի. միայն մի զանգակատուն ունի։ Այժմ այս եկեղեցին ներքուստ

բավական նորոգել են։ Սրա դավթում գտնվում են հայոց եկեղեցական ծխական Ս. Մեսրովբյան տղայոց և Ս. Սանդխտյան օրիորդաց երկդասյան դպրոցները։ Քաղաքի հյուսիսային ծայրում, բոլորովին առանձին, պարսպապատ գտնվում է ռուսաց եկեղեցին, որ կառուցված է Ստեփանոս Անանիկյանի աշխատությունով և բավական օժանդակությունով, որի համար և ստացել է առաջին քաղաքական աստիճան։ Քաղաքի հարավային կողմն էլ մի ընդարձակ տարածություն պարսպապատ է արած և հատկացված է հայոց եկեղեցու համար, որ շինելու են իրենց ծախքով արժանահիշատակ Գրիգոր Կիրակոսյանի ժառանգները։ Հայոց եկեղեցուց դեպի արևմտահյուսիս գտնվում է քաղաքային այգին, որ շինված է 1880 թվին, երկարությունն է 40 սաժեն, իսկ լայնությունը՝ 22 սաժեն և 1 արշին։ Այգին փայտյա ճաղերով շրջապատված է և ունի միայն մի հովանոց։ Աղբյուր և ավազան չունի, միայն մի ջրհորից ջրահան մեքենայով ջուր են հանում և ուշ-ուշ ջրում սակավաթիվ ծառերը, որոնք և այս պատճառով չեն աճում։

Քաղաքի զբոսավայրը համարվում է և արևելյան ձորը, ուր դեպի ափին կա մի փոքրիկ, կիսավեր մատուռ։ Սրա կողքին երևացող հետքերը ցույց են տալիս, որ նրան կից եղել են և այլ շինություններ։ Սրբանց մոտ սառն ջրի մի ավազան կա, որի մեջ լվացվում են տենդով բռնվածները և իրը առողջանում։

Մատռան հանդեպ, դեպի աջ ափին կան մի այլ մատռան հետքեր և նրա մոտ քարափում մի քանի այրեր, որոնցից մինը կոչվում է Ճգնավորի այր։ Ոչ մի արձանագրություն չկա այդ բոլոր ավերակների վրա։ Այս ձորի մեջ նշանավոր է այն ղորեղ ներգործությունը, որ արել է անձրևը վայր թափված և դեռ ժայռերի մեջ մնացած կարծր քարերի վրա յուր ուժգին և երկարատև հարվածով, մի տեղ ծակելով ահագին քարը, մյուս տեղ փոսացնելով նրան, երրորդ և չորրորդ տեղ այլ և այլ ձևեր տալով նրան։ Քաղաքում ոչ մի աղբյուր չկա, միայն արևմտյան ձորակում բխում են երեք, իսկ արևելյանում մի աղբյուր, որոնց ջուրը մաքուր և քաղցրահամ է։ Այս չորս աղբյուրը միայն ջուր են մատակարարում ամբողջ քաղաքին։ Կան նաև մի քանի ջրհորներ, սակայն նրանց ջուրը չեն խմում։

ՆՇԱՆԱՎՈՐ ԳՅՈՒՂԵՐԸ

ԿԱՐԾԱԽ

Կարծախ գյուղը գտնվում է Ախալքալաքից 26 վերստ դեպի արևելահարավ, Խոզապին լճից երկու վերստ արևմուտք, 41°14′ հյուսիսա-

յին լայնության և 61°50′ արևելյան երկարության տակ։ Նա մոտավորապես ծովի մակերևույթից 5540 ֆուտ բարձր է։ Սրա արևելյան կողմում գտնվում է Բիդեշինու և Բոզալու բարձրավանդակը, արևմուտքում Խոզապին լիճը և Աղդաշը (սպիտակ քար), մի սպիտակ քար, որ գրտնըվում է Ախալքալաքի և Արտահանի ճանապարհի մոտ և որ մինչև վերջին ռուս-թրքական պատերազմը սահմանաքար էր Ռուսաստանի և Տաճկաստանի միջև։ Հարավում Գյոգդաղի (Կապույտ լեռներ) շղթան, որ սկսվում է Խանչալլի գյուղից և ձգվում մինչև Ջուրզունիս գյուղը Արտահանի գավառում։ Հյուսիսում Գյունեյ սարը։

Գյուղի տարածությունն արոտատեղերով ու վարելահողերով 2598 դեսյատին է, որից 46 դ. գյուղի շինության տեղն է, 2074 դ. վարելահող և 478 դ. արոտատեղ։ Գյուղը բաժանվում է երեք թաղի՝ Կարծախ, Կիլերտա և Նորաշեն։ Կարծախ թաղը գտնվում է Գյունեյ սարի ստորոտում, այստեղ տները շատ մոտ են շինված և կալերը տներից հեռու են, իսկ մյուս երկու թաղում կալերը տների առաջն են։ Կիլերտա թաղը բաժանվում է սրանից մի գետակով, որ հոսում է 189 դ. դաշտի վրայով գարնան և ամռան հալվող ձյունից և թափվում է Խոզապին լիճը։ Կիլերտինի մոտ մի բլրի վրա կա ամրոցի ավերակ։ Նորաշեն թաղը գրտնըվում է Գյունեյի փեշին, ընդամենը 14 տուն է և հիմնված է 1884 թվին։ Կարծախում կա երկու աղբյուր, Կիլերտինում՝ մի. կան և շատ ջրհորներ։ Խոզապին ավերակի մոտ կա մի ծծմբային ջերմուկ, ուր բորոտները լողանում և բժշկվում են։

Գյոգդաղի լանջին, մի ձորակի մեջ, մոտ 2 սաժեն բարձրության մի ժայռ կա, որի վրա գերեզմանաքարի նման մի քար է ընկած։ Թուրքերը սուրբ համարելով այդ տեղը՝ Օղլան վերան (որդի տվող) էին անվանել, և ամուլ կանայք ուխտ էին գնում։ Այժմ նույնն անում են և կարծախցի հայերը, միայն «Օղլան վերան» անվան փոխարեն «Սուրբ Գևորգ» կոչելով, որովհետև գյուղի քահանան սրբատեղին քրիստոնեացնելու համար Սուրբ Գևորգի պատկերն է դրել։

Կարծախի կլիման մեղմ է, հողն արգավանդ, բուսականությունը հարուստ, այստեղի հացը սպիտակ է և համեղ։

Այստեղ փչում են երկու քամիներ. արևելահյուսիսային և արևմտահյուսիսային. առաջինը փչում է ձռնել և Աբուլ սարերից և սառն է, երկրորդը Խոզապին լճից և տաք է. քամիները սաստկանում են հուլիսի վերջին և հետզհետե նվազում մայիսին։

Բնակիչներն էրզրումի գաղթականներ են Հոկամ, Ալվար, Նիստ, Մեծ և Փոքր Դու գյուղերից։

Գաղթականության ժամանակ սրանք նախ բնակել են Զանգուրա գյուղում, իսկ չորս տարուց հետո, կարսը և սրա հետ այս գյուղը Տաճկաց վերադարձնելու պատճառով՝ տեղափոխվել Կարծախ, որի թուրք բնակիչներն էլ փոխադարձաբար գնացել են Զանգուրա։ Կարծախի բոլոր բնակիչները, բացի մի կին և մի այր հույնից, բոլորը լուսավորչական հայեր են, թվով 212 տուն, 1872 հոգի, որոնցից 1001 հոգի արական, 871 իգական սեռից։ Սրանցից 22 արական և 21 իգական հոգևորական կոչման են, մյուսները գյուղացի։

1881 թվից այստեղ բացված է գյուղական արբունական միդասյան դպրոց, որից մինչև 95 թվականը դուրս են եկած փորը ի շատն գրել կարդալ իմացողներ 49 հոգի. ամբողջ գյուղում մեր համարելով կան 91 հոգի հայերեն գրել-կարդալ իմացողներ։

Կարծախը մինչև էրզրումի գաղթականությունը պատկանելիս է եղել Հաճի-բեկ և Թախր-բեկ նաղիր-բեկզատե եղբայրներին, որոնք 83 քիսա (մի քիսան 25 ռուբլի է) ստակի ծախել են Տայոց առաջնորդ Կարապետ եպիսկոպոսին։ Այժմ պատկանում է Ախալցխայի Ս. Փրկիչ եկեղեցուն։

ԲԱՐԱԼԵԹ

Դրկնա գյուղից մինչև Ս. Հովհաննեսի ուխտատեղին տարածվում է մի ընդարձակ բարձրավանդակ, որի արևելյան կողմը ձգվում է բլրակների մի երկարաձիգ շղթա, որ սկսվում է Կարտիկամ գյուղից և հասնում մինչև Ղարադուզա յայլան։ Այս բարձրավանդակի միջով ոլորապտույտ հոսում է Մեծ ջուր կոչված գետը, սկիզբն առնելով Լեկնա և Կարանտա ավերակներից։

Սա անցնելով Բեժանոյի առջևով, գալիս է Ալատուման, Կաճո, հետո հոսելով Բարալեթի միջով, Չակ գյուղի մոտ միանում է Խմեմիխեվի գետի հետ և անցնելով Արագվայի միջով, տաշում է Օրճայի ափերն և Կոբխի մոտ թափվում Ախալքալաք-չայի մեջ։ Ահա այս գետի ափին գտնվում է Բարալեթ գյուղը, որ բռնում է 2490 դեսյատին տեղ։

Սա բաժանվում է երկու թաղի, և թեպետ գետն ընդարձակ է և գարնանը հեղեղվում է, սակայն մի կանոնավոր կամուրջ չկա, այլ միայն մի գերան է ձգված գետի վրայով։ Հեղեղների ժամանակ այս երկու թաղերի հարաբերությունը բոլորովին կտրվում է։ Գյուղի հարավային մասում դեռ կիսավեր են մի հին մարտկոցի պարիսպներ, հյու-

սիսայինի մասում գյուղից 1/2 վերստ հեռու գտնվում է 7 արշին երկարությամբ 3 արշին լայնությամբ և 6 արշին բարձրությամբ սրբատաշ քարե մատուռ։ Ձեղունը քանդված է. միակ, հարավային դռան վրա կա հայերեն աղավաղված արձանագրություն։ Այս դռան մոտ կա մի գերեզմանաքար, որի վրա դեռ որոշ կարդացվում է հետևյալ տապանագիրը. «Սուրբ նշան տէրունական արեամբ ներկեալ պատուական Բարսեղ քհնյս լեր քաւարան. եւ յակոբ իրիցիս լեր ավգնական»։ Գյուղացիք այս մատուռին Ս. Ստեփանոսի վանք են կոչում և ուխտ գալիս։ Մատուռի շուրջը կան գերեզմաններ։ Գետի աջ ափին շինված են հայոց և վրաց քարաշեն բավական գեղեցիկ եկեղեցիները։ Գետի մյուս ափին գըտնըվում էր արքունի գյուղական միդասյան դպրոցը։ 1867 թվին կառուցված է մի անհարմար շենք, որի բակում կան մարմնամարզության փըտած գործիքներ։ Այս դպրոցը հիմնել և մինչև 1884 թվականը պահպանել է Կովկասում հունադավանության վերահաստատող ընկերությունը, այնուհետև պահվում է ժողովրդական փողով։ Այժմ կառավարությունն այս դպրոցը երկդասյան է դարձրել և գիշերօթիկներ է պահում։ Ուսումնարանի մոտ գտնվում է դատարանը և հասարակաց շտեմարանը։

Տները կիսագետնափոր են, փողոցները համեմատելով մյուս գյուղերի հետ՝ փոքր ինչ կանոնավոր։

Ընդհանրապես գյուղը գետի շնորհիվ ուրիշ գյուղերից մաքուր է։ Բնակիչները հայեր և վրացիներ են, առաջինները 91 տուն են, 262 արական, 250 իգական, երկրորդները 13 տուն, 205 արական, 181 իգական։ Բացի սրանցից կան և երկու տուն քրդեր, 8 արական, 7 իգական, և 3 տուն թուրքեր, 10 արական, 9 իգական։ Ընդամենը՝ 109 տուն, 485 արական, 447 իգական, երկու սեռը միասին 932։ Վրացիք և 10 տուն հայերը բնիկներ են, մյուսները գաղթական են Արտահանից։ Թե հայերն և թե վրացիք դեռ շատ անկիրթ են, սրանք դեռ չեն ազատվել թրքաց ազդեցությունից։ Երկուսի բարբառն ևս լի է թուրքերեն բառերով, դարձվածքներով, առածներով և այլն, իսկ երգերն ու առակները թուրքերեն են ու թուրքերեն։

Հայերից միայն 9 հոգի գիտե հայերեն և ռուսերեն գրել կարդալ, իսկ վրացիներից 10 հոգի վրացերեն և 25 հոգի ռուսերեն։ Տիրապետող տարր հանդիսանում են վրացիք. նրանք դիտմամբ հայերեն չեն սովորում և եթե նույնիսկ գիտենան, իրենց քահանայի հորդորման համաձայն, չեն էլ խոսի, այնինչ հայերը, փոքր երեխայից մինչև ծերը գիտեն վրացերեն, և ոչ միայն վրացիների հետ, այլև տանը վրացերեն են խոսում։ Կան և հայերեն բոլորովին չգիտցողներ։

Բնակիչները պարապում են երկրագործությամբ. ունին 1205 դեսյատին անջրդի բաշխված վարելահող և 74 դ. արոտատեղի։ Ամեն մի տանը գալիս է 11,26 դ. վարելահող և 0,69 դ. արոտատեղի, երկու սեռից յուրաքանչյուրին 1,37 դ. բոլոր բաշխված հողից։ Այս հողով չբավականանալով կապալով վերցրել են արքունական հողերից 41 դ. վարելահող և 159 դ. արոտատեղի, ընդամենը 400 դ. և աղայապատկան հողերից 253 դ. վարելահող։ Ուրեմն կապալով վերցրած են 294 դ. վարելահող և 159 դ. արոտատեղի։ Ընդամենը բաշխված և կապալով վերցված հողը՝ 1499 դ. վարելահող, 233 դ. արոտատեղի, ի միասին՝ 1732 դ.։ Գյուղացոց մյուս պարապմունքն է՝ անասնապահություն, ներկա 1895 թվին ունին 497 եզ և գոմեշ, 392 կով և մատակ, 523 հորթ, 2698 այծ և ոչխար, 68 ձի, 12 էշ։

ԱՐԱԳՈՎԱ

Արագովա գյուղը գտնվում է Ախալքալաքից դեպի հյուսիս 9,5 վերստ հեռավորությամբ համանուն գետի ափերին։ Սա հնումն բաղկացած է եղել Արա բերդից, որ կառուցված է եղել գետի ձախ ափին բարձրացող լերան վրա, և Գովա գյուղից, որ գտնվելիս է եղել բերդից դեպի հյուսիս, գետի աջ ափին։

Այժմ այդ երկու անունները միանալով կազմել են Արագովա անունը։ Արա բերդն այժմ ավերակ է, մի ստորերկրյա անցք բերդի միջից իջնում է մինչև գետը։ Եկեղեցու մի պատը դեռևս կիսավեր կանգնած է, և նրա միջի խորանն ուխտատեղի է դարձած Ս. Սարգիս անունով։ Գովա գյուղն այժմ բոլորովին քանդված է, և նրա տեղը շինված են մարագներ։

Բերդի հանդեպ հինգ բլուրներ միմյանց կտրելով կազմում են մի ձոր, որ կոչվում է Մեծ ձոր։ Սրա մոտ կա մի բլրակ, որի վրա մի խաչ։ Սա ևս ուխտատեղի է Սուրբ Մինաս անունով։

Բերդի սարի լանջին, մի հարթության վրա ի Տեր հանգուցյալ Տեր Գրիգոր Տեր Ավետիսյանի ծախքով շինված է հայոց բավական մեծ և գեղեցիկ եկեղեցին։ Սա ներքուստ զարդարված է 12 առաքյալների ձիթանկար պատկերներով եկեղեցու 12 սյուների վրա, և «Վերջին դատաստանի» 7 արշին երկարության և 4 արշին լայնության դարձյալ ձիթանկար պատկերով՝ հյուսիսային պատի վրա։ Սեղանի առաջ կախված է մի գեղեցիկ ջահ։

Եկեղեցու գավթում կա նաև սրբատաշ քարերով հայոց դպրոցի մի շենք, սակայն ռուսաց դպրոցի հիմնելուց ի վեր ծառայում է որպես

հասարակաց շտեմարան։ Գետի աջ ափին, գյուղից գրեթե դուրս, բարձրավանդակի վրա շինված է գյուղական արքունական միդասյան դրպրոցը։ Գետի ափերին տնկված են ծառեր, առավելապես ուռենի, որոնք բռնում են 5 դեսյատին տեղ։ Տներն ընդհանրապես կիսագետնափոր են, միայն քահանան ունի եվրոպական ձաշակով շինված և զարդարված սենյակներ։

Այստեղ է գտնվում շինական դատարանը։ Ամբողջ գյուղը բռնում է 20 դեսյատին տեղ։ Բնակիչներն էրզրումի Քինիս գյուղից գաղթականներ են, 114 տուն, 475 ար. 446 իգական սեռից, ընդամենը 971 հոգի։ Պարապում են անասնապահությամբ, ֆուրգոններ բանեցնելով և գլխավորապես երկրագործությամբ. ունին 1335 դ. վարելահող, 1290 դ. արոտատեղի։ Ուրեմն մի տանը գալիս է 24,25 դ., մի հոգուն (երկու սեռից)՝ 3,23, աշխատելու ընդունակ մի անձի՝ 8,78 դ.։

Տղամարդկանցից 25 հոգի գիտեն հայերեն, 16 հոգի ռուսերեն գրել-կարդալ։

ՍԱԹԽԱ

Սաթխա գյուղը գտնվում է Ախալքալաքից դեպի արևելահյուսիս, մոտ 23,5 վերստ հեռու մի ձորակի մեջ, որի միջով հոսում է մի գետակ։ Սա սկիզբն է առնում Բուղդաշենու լճից և թափվում է Թափարավան գետը։ Գյուղի հյուսիս արևելյան կողմից դեպի արևելահարավ ձգվում են 7 բլուր, որոնց վրա կա ամրոցի ավերակ։ Ամրոցը հիմնված է եղել այդ 7 բլուրների վրա և ունեցել է երկու դուռ՝ մին արևելահարավ, մյուսը. դեպի արևելահյուսիս։ Առաջինի կամարի վրա եղած է արձանագրություն, սակայն գյուղացիները պոկել են այդ քարը և եկեղեցու շեմքի առջև ձգել, այնպես որ արձանագրությունը չի երևում։ Գյուղացիներն ասում էին, թե այդ արձանագրությունը կարդացողներն ասել են, թե այստեղ նշանակված է բերդի հիմնարկության տարին, որ իրենք չէին հիշում, անունը՝ Սուկերլաթ և տերը՝ Ամբակում իշխանը։

Իրենք գյուղացիներն ասում էին, թե այս գյուղը պատկանելիս է եղել մի ինչ որ Սաթղ անունով աղայի, որի անունով և գյուղը կոչվել է Սաթխա։

Բերդի միջից մի ստորերկրյա անցք ձգվելիս է եղել մինչև գյուղը, որ երկրաշարժի ժամանակ փակվել է և մի աղբյուր սկսել է բխել։

Գյուղի մեջ, հին ավերակ եկեղեցուն կից, շինված է հայոց եկեղեցին։ Այս գյուղումն է գտնվում այդ հասարակության արքունի գյուղական ժողովրդական միդասյան երկու դպրոցներից մինը և դատարանը։ Ջորի մեջ, գլխավորապես գետի ափին տնկված են գլխավորապես ուռի և զավազի ծառեր, ընդամենը 10 դեսյատին տարածության վրա։ Ամբողջ գյուղը բռնում է 30 դեսյատին տեղ։

Բնակիչները բոլորը հայեր են էրզրումի Սոկյուտլի, Ծաղկի և Ջենիս գյուղերից, ընդամենը 163 տուն, 1587 հոգի, 835-ը արական, 752-ը իգական սեռից։

Պարապում են գլխավորապես երկրագործությամբ, ունին 2727,30 դեսյատին բաշխված հող, որից 2167 դ. վարելահող, խոտատեղի և այգի է, 530,30 դ. արոտատեղի և անհարմար, 30 դ. բնակության համար է։ Որովհետև յուրաքանչյուր մի անձի գալիս է 1,3 դ. վարելահող, 0,3 դ արոտատեղի և չի բավականացնում, ուստի կապալով վերցնում են Ա) արքունական հողերից՝ 910,30 դ., որից 7,30 վարելահող, 836 դ. արոտատեղի է. Բ) աղայապատականներից 722 դ., որի 222 դ. վարելահող և 500 դ. արոտատեղի է։ Այսպես ուրեմն՝ նրանք կապալով են վերցնում 1632, 30 դ. արքունական և աղայապատական հող, որից 296,30 դ. վարելահող է, 1336 դ. արոտատեղի. յուրաքանչյուր անձին 0,2 դ. վարելահող և 0,9 դ. արոտատեղի։

Ուրեմն՝ այս գյուղացոց ունեցած թե բաշխված և թե կապալով վերցրած հողն է 4359,60 դ., որի 2493,30 դ. բնակատեղի, այգի, վարելահող և խոտատեղի է, 1666, 30 դ. արոտատեղի։ Յուրաքանչյուր անձին ընկնում է 1,5 դ. վարելահող, 1,2 դ. արոտատեղի, բոլորից 2,7 դ.։ Բացի երկրագործությունը, գյուղացիները պարապում են նաև անասնապահությամբ. վերջին 1895 թվին այս գյուղացիներն ունեին 869 եզ ու գոմեշ, 714 կով ու մատակ, 346 հորթ, 7587 ոչխար ու այծ, 227 ձի, 7 էշ, 431 խոզ։

Բնակիչներից 1886 թվի աշխարհագրության համեմատ միայն 62 հոգի գիտեն հայերեն և 24 հոգի ռուսերեն գրել-կարդալ, որոնցից 3-ը սովորել են 3-րդ կարգի ստորին դպրոցներում, իսկ 83-ը տարրական ուսումնարաններում։

ԳԱՐԻԼՈՎԿԱ ԵՎ ԿԱԼՄԻԿՈՎՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆԸ

Դուխոբուրների ամենանշանավոր գյուղը, ուր և նստում էր նրանց հոգևոր պետը, էր Գարիլովկան։

Սա գտնվում է Ախալքալաքից Աղեսանդրապոլ տանող փոստային ճանապարհի վրա, Ախալքալաքից 29 վերստ դեպի հարավ։ Գյուղի արևմտյան կողմից հոսում է մի գետակ։ Չորս կանոնավոր և լայն փողոցներ ձգվում են հյուսիսից հարավ, որոնց երկու կողմում գտնվում են դուխոբուրների բավական գեղեցիկ տները, իրենց ընդարձակ բակերով և որոնց թիվը հասնում է 168։ Բնակիչները բոլորն էլ դուխոբուրներ են, 672 արական, 673 իգական սեռից, ընդամենը 1345 հոգի։ Այստեղ նստում է Գարիլիայի ոստիկանության ոստիկանը։

Այստեղ գտնվում է և Կալմիկովների բնակարանը։ Սրանք մինչև վերջին ժամանակներս համարվում էին դուխոբուրների հոգևոր գլուխ և մեծ հարգանք ու սեր էին վայելում ժողովրդից։ Երբ 1890 ես այցելեցի այդ բնակարանը, նա այժմյանի պես բոլորովին պատարկ չէր, այլ վերջին Կալմիկովների ժամանակի պես կահավորված, որն և ես նկարագրեցի։ Այս բնակարանը թեև գյուղական տներից հարմարավոր և գեղեցիկ է, սակայն քաղաքի տներից մի առանձին առավելություն չունի։ Գլխավոր փողոցի վրա պարսպի մեջ մի հարկանի շինություն է։

Ամբողջ բնակարանը բաղկացած է հինգ սենյակներից. դահլիճ, ընդունարան, ննջարան, ամառային սենյակ և ժողովարան։

Դահլիճը մի մեծ սենյակ է, երեք սաժեն երկարության և 8 արշին լայնության, 3,5 արշին էլ բարձրության։ Արևմտյան և հարավային պատերի մեջ բացվում են երկ-երկու պատուհան, 1 արշին և 5 վերշոկ երկարության և 1 արշին 2 վերշոկ լայնության, հյուսիսային պատից մի դուռ բացվում է բակը։ Սրա մյուս ծայրում գտնվում է երեք արշին երկարության և երկու արշին լայնության դուխոբուրի ճաշակով շինված մի վառարան։ Սենյակի պատերը պաստառած են, հատակն ու առաստաղը ներկած, դռան և պատուհաններին վարագույրներ են կախած։ Արևմտյան պատուհանների միջև կախված է մի հայելի, իսկ դռան երկու կողմում մի մի պատկեր, «Нива»-ի պրեմիաները։

Սենյակը վառարանի առջևից կտրված է, վերևում մի շիրմայով, իսկ ներքևում սպիտակ վարագույրով։ Դռան հանդեպ, հյուսիսային պատից կախված է կայսր Աղեքսանդր Բ-ի պատկերը, ներքևում դրված է մի թավշապատ դիվան՝ առաջը մի քառակուսի սեղան, գեղեցիկ ծածկոցով ծածկված, վրան մի լամպ։ Սեղանի երկու կողմը մի մի թավշապատ բազկաթոռ։ Արևմտյան պատի ուղղությամբ շարված են 10 թավշապատ աթոռ. դռան և պատուհանի անկյունում մի ուրիշ սեղան, վրան մի գույգ մոմակալ։

Շիրմի մյուս կողմը, արևելյան պատի ուղղությամբ դրված է մի երկաթյա մահճակալ, պատին խփված մի գեղեցիկ գորգ. վրան կախված ռուսաց կայսերական տոհմից վեց պատկեր։ Պատուհանի առաջ դրված է մի կլոր և շիրմի առջև մի քառանկյունի սեղան, ծածկոցներով ծածկած, վրան մոմակալներ և մի փոքրիկ հայելի, կողմն երկու թավշապատ աթոռ։ Մահճակալին կից դրված է մի կամոդ, վրան ապակյա դռներով պահարան, որի մեջ դարսած են զանազան ապակեղեններ և արվեստական ծաղիկներ։

ԺՈՂՈՎԱՐԱՆԸ

Դահլիճի բակից դեպի արևմուտք մտնում են ժողովարանը, որ գավառիս բոլոր դուխոբուրների ազոթատեղին է։

Սա 3 արշին երկարության, 3 արշին լայնության և 3,5 արշին բարձրության մի հասարակ սենյակ է, տախտակ ծածկով։ Արևմտյան պատի մեջ կա երեք, իսկ հարավայինի մեջ երկու պատուհան։ Դուռը մի է, որ դահլիճի բակից բացվում է աղոթատեղու մեջ։ Պատերը պաստառած են, առաստաղը ներկած, իսկ հատակը քարած։

Հյուսիսային և արևելյան պատերի անկյունում կա 3 արշին երկարության, 2 արշին լայնության և առաստաղի բարձրության մի վառարան։ Երեք պատի առջև դրված են երկար նստարաններ, անկյունից կախված է մի փոքրիկ ժամացույց, վրան երեսսրբիչ ձգած։ Սրա հանդեպ դրված է մի հասարակ սեղան։ Հյուսիսային և արևմտյան պատերին կան կախարաններ, որոնցից կյուրակի և տոն օրերը կախ են անում երեսսրբիչներ։ Պատուհաններում դրված են ծաղկամաններ։

ԿԱԼՄԻԿՈՎՆԵՐԻ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆԸ

Գյուղից երեք վերստ հեռու, հյուսիսային կողմը գտնվում է Կալմիկովների տոհմային գերեզմանատունը, որ պարսպապատ է և ունի երկու սենյակ՝ հոգու հաց տալու համար։ Գերեզմաններն եռակողմանի հատվածակողմի ձև ունին. մի քանիսը տաշած քարից, մյուսները ճլից շինված, 5 արշ. երկարությամբ, 4 արշ. լայնությամբ և 272 արշ. բարձրությամբ։ Եզրերը զանազան նշխեր են փորված. արևմտյան երեսի մարմարիոնի կամ հասարակ քարի վրա կան ռուսերեն տապանագրեր, որոնց առաջ դրված էին տանձ ու խնձոր։

Սուլդա գյուղը գտնվում է Ախալքալաքից դեպի արևմտահարավ 18 վերստ հեռավորությամբ մի ձորի մեջ։ Սրա արևելահարավային կողմում ձգվում է Գյոգդաղի շղթան, հարավային կողմում բարձրանում է Սրբի սարը, որի գագաթին կանգնեցրած է մի քարե մեծ խաչ, շինված է Ս. Գևորգ անվամբ մի մատուռ՝ մեջը մի քարե խաչ դրված։ Հյուսիսային կողմում Ղատանա սարը, լանջին մի գյուղի և եկեղեցու ավերակ, սրանից դեպի արևմտահյուսիս Մեծ Գյունեյ սարը՝ գագաթին մի ավերակ եկեղեցի։ Հյուսիս-արևելյան կողմը Փոքր Գյունեյ սարը և հյուսիսային կողմը Բերդի կանաչ փոքրիկ լիճը, ուր որսում են վայրի բադեր։ Սարի գագաթին կա մի ամրոցի ավերակ, որի միջից զանազան ստորերկրյա անցքեր ձգվում են մինչև գյուղի տները։ Ձորի մեջտեղից հոսում է մի հեղեղատ։ Տներն ընդհանրապես կես գետնափոր են. բերդի սարի լանջին շինված է հասարակ մի եկեղեցի։ Ուսումնարան չունին։

Բնակիչները Բասենու Թորթան գյուղից են 134 տուն, 630 ար. 555 իգական սեռից, բացի սրանից 4 տուն քրդեր՝ 11 արական, 7 իգական։

Պարապում են գլխավորապես երկրագործությամբ. գյուղացիների ձեռքի հողը 2300 դեսյատին է։ Հացը ևս է լինում։ Արական սեռից 9 հոգի ռուսերեն և 30 հոգի հայերեն կարդալ-գրել գիտեն։

ՍԱՂԱՄՈ

Սաղամո թրքաբնակ գյուղը գտնվում է Համանուն լճի արևելյան ափին, դաշտավայրի վրա, Ախալքալաքից արևելահյուսիս, մոտ 3,2 վերստ հեռու։

Այս գյուղում կան երկու ավերակ մատուռ և մի եկեղեցի։ Վերջինիս գավթի դռան երկու կողմը կան կանանց մի մի անդրիներ, ձեռքերը դեպի վայր ուղղած և մի մի գրոնակ բռնած։ Այս եկեղեցու արևելյան պատի պատուհանը շրջապատված է երկու ոլորապտույտ օձերի քանդակով։ Եկեղեցու, խաչքես և մատուռների շուրջը կան գերեզմաններ. որոնցից մի քանիսի գերեզմանաքարերը ներկայացնում են թամբած ձի։ Ոչ արձանագրություն և ոչ տապանադիր կա։ Բնակիչները Թուրք են՝ 56 տուն, 244 արական, 205 իգական. ընդամենը 443, բո-

լորն էլ մահմեդական այուններ։ Կան և երկու տուն հայ լուսավորչականներ՝ 6 արական, 8 իգական սեռից։

Գյուղն անմիջապես պատկանում է թուրք Հասան-խան և Փաշա-աղա Հասան Օղլիներին։ Բնակիչները պարապում են երկրագործությամբ, ձկնորսությամբ և անասնապահությամբ։

Կրթությունը բոլորովին չէ տարածված, միմիայն 5 հոգի տանը սովորել են թուրքերեն և 4 հոգի ռուսերեն մի քիչ գրել, կարդալ։

ՀՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԵԹՈՒՄ Բ ԹԱԳԱՎՈՐԻ ՀԱՎԱՔԱԾ ՆՇԽԱՐՆԵՐԻ ՑՈՒՓԸ

Գյումուրդո գյուղի արժ. Տեր-Առաքել Կուրղինյանի մոտ կա մի մասնատուփ, որ պատրաստել է ավել Հեթում Բ թագավորը։

Տուփի երկարությունն է 2 վերշոկ, լայնությունը 1,5 վերշոկ, իսկ հաստությունը 2 սանտիմետր։ Տուփի մի երեսը զարդարված է մի խաչով, վրան Քրիստոս խաչված, չորս ծայրերին մի մի սրբի անգրիներ կերտված։ Տուփի երեսի չորս անկյուններում մեխված է չորս սրբերի, թերևս Ս. Հակովբ Մծբնա Հայրապետի, Ստեփաննոս Նախավկայի, Նիկողայոս Սքանչելագործի և Պանդելոն բժշկի ոսկյա գլուխները։

Տուփի մյուս երեսի վրա երկաթագրերով գրված է.

ԵՍ ՀԱՅՈՑ ԹԳԱՐՍ ՀԵԹՈՒ
Մ. ԲՋԻՄ ԱՇԽԱՏՈՒԹԲ
ԺՂՎՑԻ ՆՇԽԱՐՔՍ ՍՐԲՈՑ Մ
ԷՇԻՆ ԱԿՈԲԱ ՄՇՊՆԱ
ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ԵՒ ՆԻԿ
ՈՂԱՈՍԻ ՍՔԱՆՉԵԼԱԳՈՐ
ՇԻՆ ԵՒ ՍՏԷՓԱՆՈՍԻՆ ՆԱԽ
ԱՎԿԱՒԻՆ ԵՒ ՊԱՆԴԷԼԵՒՈՆԻ
ԲԺՇԿԻՆ ՋՈՐ ԱՍՏ ԿԱ ՊՀՊԱ
ՆՈՒՐԻՆ ՀՈԳՈՅՍ ԵՒ Մ
ԱՐՄՆՈՅ ԻՄՈՅ ԹՎԻՆ Է
ՃԱԵ ԻՆ ՄԱՒՍԻ Ի ԻՆ ՍԲ ՆՇ
ԱՆՍ ՇԻՆՎԷՑԱՒ։

Այս արծաթյա տուփի գերեզմանի մեջ գրված է սրբոց նշխարներն ոսկյա տուփով-դագաղով։

Հեթում Բ-ի հավաքած նշխարների տուփը (1296 թ.)

Դագաղի երեսը և կողքերը զարդարված են թանկագին ակներով, որոնց թիվը հասնում է քառասունի։

Դագաղը լցված է արյունով շաղախված հողով, որի մեջ դրված են Ս. Հակովբ Մծբնա հայրապետի միջին մատը, Ս. Նիկողայոս սքանչելագործի ճկույթը, Ս. Ստեփաննոս Նախավկայի բուրը և Պանդելեիմոն բժշկի մի մատը։ Կարծիք կա, թե այդ սրբությունը Հեթում թագավորը հանդիսավոր օրերին կախելիս է եղել վզից։

Այս մասնատուփը Տեր-Առաքել հայրը գնել է բարալեթցի Աղաջան Գալաթյանից 800 ռուբլով։ Այս վերջինս իմ Բարալեթ գնացած միջոցին պատմում էր, թե այդ սրբությունը մնացել է իրեն յուր հայր Գալըստից, որը Սողոմոն անունով մի արդահանցու որդեգիրն է եղել։

Այս Սողոմոնի, որի ազգանունը չէր հիշում, Երուսաղեմի միաբան եպիսկոպոս եղբայրը, որի անունը նույնպես չէր կարողանում տալ, Կարնում նվիրակ եղած միջոցին գալիս է Արտահան, եղբոր մոտ, ուր և մեռնում է։ Սողոմոնը եղբոր կողոպուտը հանձնում է Կարնո եպիսկոպոսին, իսկ այս մասնատուփը պահում յուր մոտ։ Հետո գնում է Երուսաղեմ՝ եղբոր ունեցվածքից մաս ստանալու, Ճանապարհին մեռնում է, բոլոր կարողությունը, որի հետ և այդ մասնատուփը, թողնելով Գալատին, որովհետև զավակ չի ունեցել։

ԾՈՒՆԴԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՆ

Համանուն գյուղի դրեթե կենտրոնում, մի բլրակի վրա բարձրանում է Ծունդայի եկեղեցին։

Նախ սև քարից մի սաժեն բարձրության ներքնահարկ է շինված և ապա սրա վրա կարմիր քարերով կանգնեցրած է եկեղեցին, որ չորս սաժեն երկարություն և երկուսկան սաժեն լայնություն ու բարձրություն ունի։

Եկեղեցու ձեղունը բոլորակաձև է՝ առանց գմբեթի, արևելյան պատի մեջ բացվում է գեղեցիկ նախշերով եզրափակված մի պատուհան, նույնպիսի, միայն փոքր ինչ նեղ, պատուհան էլ կա արևմտյան պատի մեջ, որի ներքև քանդակված է մի ողկույզներով պատած խաչ, սրա տակ կա վրացերեն մեսրոպյան տառերով մի անվերծանելի արձանագրություն։ Այս պատի մեջ կա և մի կամարակապ դուռն, որ այժմ վեր է շարված։ Հյուսիսային պատը բոլորովին պարզ և առանց պատուհանի է. հարավայինին կից է գավիթը, որ եկեղեցուն հավասարաչափ և սրանից ավելի գեղեցկաշեն է։ Չորս սյունների վրա բոլորում են բարակ կամարներ, որոնց վրա բարձրանալիս է եղել գմբեթը։

Հարավային կամարը ծառայելիս է եղել որպես մուտք և խաչաձև քանդակներով զարդարված է։

ԳՅՈՒՄՈՒՐԴՈՒ ԵԿԵՂԵՑԻՆ

Գյումուրդու եկեղեցին սրբատաշ սև ու կարմիր քարերով շինված խաչաձև գեղեցիկ եկեղեցի է։

Նրա երկարությունը՝ 6 սաժեն, լայնությունը՝ 5 սաժեն և 1 արշին և բարձրությունը մինչև կաթողիկեն 7 սաժեն է։ Կիսաբոլոր բաղմանկյունի սյուների վրա ձգվում են կամարներ, և սրանց վրա բարձրանալիս է եղել գմբեթը, որ այժմ քանդված է։

Եկեղեցու հարավային կողմը չորս գեղեցիկ կամարներ իրենց ծայրերում ամփոփելով կես արշինանոց մի մի քարե հրեշտակ, բոլորում և կազմում են 8 արշին երկարության, 6 արշին լայնության և $9^1/_4$ արշին բարձրության մի գեղեցիկ նախագավիթ։ Սրա միջից դեպի եկեղեցին բացվում են երկու դուռ, մին, որ տանում է եկեղեցին, իսկ մյուսը մի փոքրիկ խորան։ Եկեղեցու դուռը, որ 3,5 արշին բարձրության և 2 արշին լայնության է, կամարակապ է և նախշերով զարդարված։

Եկեղեցու դռներից փոքր ինչ աջ բացվում է մի ուրիշ փոքրիկ դուռ՝ 2 արշին երկարության և 1,5 արշին լայնության խորանի մեջ, որի մեջ այժմ խաչքարեր կան դրված։

Նախագռան արևմտյան պատը բոլորովին քանդված է, միայն սրան կից կանգուն են երկու գերեզմանի կոթողներ. երկու քառ. արշին բարձրության հողակույտի վրա մի քառակուսի արշինաչափ կարմիր քարե պատվանդան է դրված, որի վրա կանգնեցրած են չորս արշին երկարության և կես արշին լայնության քառանկյունի քարեր։

Կոթողների վրա չկա ոչ մի արձանագրություն, միայն սրանց պատվանդանի վրա քանդակված են խաչեր և մի ծառ։

Եկեղեցու պատը գավիթի ձեղունից $4\ ^3/_4$ արշին բարձր է, պատի մեջտեղը մոտ չորս արշին երկարության և 1,5 արշին լայնության եռանկյունաձև ներս անկված ք կա, գլուխը ճաճանչավոր հրեշտակի քարեգլխով զարդարված։ Սրա երկու կողմում մի սաժեն երկարության և 0,5 արշին լայնության մի մի պատուհան կա։ Այս պատին բոլորովին նման է հյուսիսային պատը, միայն սրա առջև չկա ոչ գավիթ և ոչ դուռն։

Եկեղեցու արևելյան կողմը, պատի ծայրերից 3,5 արշին հեռավորությամբ կան մի մի ներսանկվածներ, կամարներին ճաճանչների մեջ մի Ավետարանչի գլուխ և մի արծիվ քանդակված։ Սրանց մեջտեղը բաց-

վում է մոտ 2 արշին երկարության և մոտ 0,5 արշին լայնության մի պատուհան՝ գեղեցիկ քանդակներով եզրափակված, սրա շուրջը բոլորում է մի կամար, մի ծայրը մի մարդու, իսկ մյուսը մի արծվի քանդակի վրա հենված։ Կամարի վրա բացվում է մի փոքրիկ կլոր պատուհան։

Արևմտյան պատին կից է գավիթը, որ 25 արշին երկարության և 14 արշին լայնության և 9 արշին բարձրության երեք սենյակների բաժանված շինություն է։

Արևմտյան կողմն ունի մի գեղեցիկ քանդակագործ դուռ, բարձրում խաչ և արձանագրություն[12], մյուս պատերն էլ կամարավոր և գեղեցիկ քանդակներով զարդարված են։

Եկեղեցին ներքուստ բաժանված է յոթ խորաններ, որոնցից երեքն՝ արևելյան կողմն են։

Սեղանի երկու կողմից բարձրացող կիսասյուների վերին հանդիպակաց անկյուններում կան մի այր և մի կին մարդու փոքրագիր քանդակագործ պատկերներ։ Սեղանի երկու կողմը կա մի մի հանդերձատուն։ Հյուսիսային և հարավային կիսաբոլորաձև երկերկու խորաններից առաջինների արևելյան պատերի մեջ կան մի մի ավազան։

Գյումուրդեցի հայ դյուզացիք եկեղեցու արևմտյան մասը, որ հավանականորեն միաբանից բնակարանը պիտի լինի, դարձրել են եկեղեցի, սեղանի համար տեղ առնելով եկեղեցու մեջ, որ բռնել է գրեթե կես մասը։ Իսկ կողքի երկու սենյակն առաջներն իբրև ուսումնարան, իսկ այժմ որպես հասարակաց շտեմարան են ծառայեցնում։ Բացի այդ՝ եկեղեցու խորաններից դեպի արևելք դռներ են բացել և այդտեղ էս ցորեն են լցնում։

ԹՄԲՈՒԿ ԿԱՄ ԹՄՈՒԿՎԻ

Վեց ապառաժոտ 8761 ոտնաչափ բարձրության լեռներ միմյանց կպած և ձգված են Կուրի ուղղությամբ, հարավից հյուսիս։ Սրանցից միջի երեքը, որոնցից դեպի հյուսիս գտնվում են երկու, իսկ դեպի հարավ մի լյառն, մյուսներից փոքր ինչ բարձր են, և ահա այս երեք լեռների վրա կառուցված է մի ամրոց, որի երկարությունը կլինի մոտավորապես 100, իսկ լայնությունը՝ 20 սաժեն։

Պարիսպը, որի լայնությունը 1,5 արշին է, կրով և տեղ տեղ սրբատաշ քարերով շինված, բոլորում է այս երեք լեռների շուրջը, յուրա-

---

12 Որովհետև այս արձանագրությունները վրացերեն են, ուստի ես արժան համարեցի միայն նրանց իմաստը գրել պատմականի բաժնում։

քանչյուրի վրա մի մի աշտարակ բարձրացնելով ու ձգվում գնում կողքի լեռները, ուր միանում է յուրաքանչյուրի վրա շինված մի մի աշտարակի։

Բուն ամրոցի հանդեպ, արևելյան կողմը բարձրանում է այս երեք լեռներին կպած մի տափարակ բլուր, որ նույնպես պարսպապատ է։

Ամբողջ բերդն ունի երեք դուռ՝ հարավից, հյուսիսից և արևելքից, որ տանում է դեպի բլուրը։ Այս բլրի վրա կա մի փոքրիկ մատուռ, մոտ 7 արշին երկարության, 4 արշին լայնության և 5 արշին բարձրության։ Այս մատուռի միայն արևելյան ու հարավային պատերն են կանգուն մնացել։

Սեղանի երկու կողմը կա երկար խորաններ։ Պատին նկարած է Մ. Աստվածածինը, կողքը երկու կույս, ներքևը երկերկու առաքյալ։ Հարավային պատին մի կամարի ներքև նկատելի է մի սրբի պատկեր, ներքևում վրաց մեսրովբյան տառերով սև գույնով գրված մի արձանագրություն։ Իզուր անցավ բոլոր ջանքս ընդօրինակելու, որովհետև սաստիկ եղծված էր։

Հարավային դռան մոտ մի սառերկրյա անցք ժայռի միջով իջնում է մինչև կուրը, ջուր բերելու համար։

Բլրի առջև կանգնած է կիսավեր, 3 սաժեն բարձրության մի կոթող, որի շուրջը նկատվում են բնակարանների ավերակներ։ Այստեղ է եղել գյուղը, որից փոքր ինչ հյուսիս գտնվում է գերեզմանատունը։

Այստեղ կան շատ խաչարձաններ և գերեզմանաքարեր հայկական արձանագրությամբ։ Սրանցից մինի վրա գրված է.

թվ. պ կ զ
Ես Մխիթար ..... եւ կենակիցս. կանգնեցաք
գխաչ

Մի եռանկյունաձև գերեզմանի քարի արևելյան կողմը, երեսը դեպի արևմուտք դարձրած կա մի խաչարձան ևս հետևյալ արձանագրությամբ.

թվ. պ ճ դ
Յաճեղ աւուրն աճեռելի լուսով փայլեալ ի մէջ
երկրի զոգիս Սրգս. ֆճի. լուսաւորեա յայնս ատենի նաեւ
եղիայի իւոյ .....

Մի ուրիշ գերեզմանի կարմիր քարե խաչարձանի վրա, որի բարձրությունը 1 սաժեն է և լայնությունը 1 արշին, գրված է.

Խաչս կանգնեցաւ

խաչի փեղկերի միջև փորագրված է՝ սբ. Նիկողոս. սբ Սարգիս.

Աստուածածին. սբ. Կամայկատար. ս. Գրիգոր.
Խաչի պատուհանի վրա՝ Այդ ես էրեցս կանգնեցի զխաչս յիշատակ
ինձ ծնաւ... fո. յար... ուեկին եւ աբագերին...
եղբարցս իմոց տր. Մխիթարայ եւ տր.... իր
եւ ամենայն արական..., կա... աց եւ երեխայոց:

Թմբուկ բերդի հանդիպ գետի աջ ափին կան ընդարձակ սենյակների պատեր: Ժողովրդյան ասելով դա Թմբկաբերդցիների խաներն են եղած: Սրանցից փոքր ինչ հյուսիս կա մի շինություն, փոքրիկ սենյակներից բաղկացած, որից միայն մինը կանգուն է: Շինությունը շատ նման է բաղանիսի:

ՄԱՆԻՑ ԳՈՄ

Ախալքալաքից դեպի արևմտահարավ, մոտ 17 վերստ հեռավորությամբ Կուրի արևելյան ափին մի ձորակ կտրվում է երկու ահագին ժայռերով, որոնք գրեթե 30 սաժեն հեռավորությամբ ձգվում են միմյանց զուգահեռական:

Այս ժայռերն սկսվում են ձորի ծայրից և իջնում մինչև գետի ափը, մոտավորապես մի վերստ երկարությամբ: Ժայռերի միջև, գետին մոտիկ կա պատնեշի կիսավեր մի հատ պատ: Այս ժայռերը բաղկացած էն մեծ ժայռ քարերից, մանր խճից, կրից և կարմիր կավային հողաշերտերից, մոտավորապես երկու վերստ բարձրությամբ:

Այս երկու ժայռերի միջից հոսում է մի սառն աղբյուր: Ժայռերի մեջ կան արհեստական բազմաթիվ այրեր, որոնցից մի քանիսը մի, իսկ մյուսները մի քանի աչքից են բաղկացած: Կան և այնպիսիներ, որոնք նեղ անցքերով ուղիղ և դեպի վեր ձգվելով՝ բարձրանում են մինչև ժայռի գլուխը, իսկ տեղ տեղ փոքրիկ պատուհաններ են բացվում դեպի ձորը:

Առհասարակ պատուհանների դռդում կան փոքրիկ անցքեր, թերևս հրացանների համար:

Այս ժայռերից հարավայինում կան երեք եկեղեցի, որոնցից երկուսը ստորոտում են, իսկ մյուսը գագաթին: Վերջինս գմբեթավոր է և հեռվից պարզ երևում է, միայն թե այդտեղ տանող այրերից շատերը քանդված լինելով՝ անհնարին է բարձրանալ մինչև այնտեղ: Մյուս երկու եկեղեցին խորաններ ունին:

Այրերը լի են թռչունների բներով, հովիտը՝ բյուրավոր ծաղիկներով:

Կուր գետի ձախ ափին, գետից մոտ 40 սաժեն հեռավորությամբ բարձրանում են ահագին ժայռեր, 5 վերստից ավելի բարձրության։ Այս ժայռերը կազմված են ժայռ քարի և ավազի շերտերից։ Այս ժայռի մեջ արվեստորեն փորված են յոթհարյուրի չափ սենյակներ, եկեղեցիներ և այլ շինություններ։ Ընդհանրապես բոլոր շինությունները շատ մաքուր փորված են և բաղկացած են 2—4 սենյակներից, մի սաժենից ավելի բարձրության և զանազան մեծության։ Ամբողջ շինությունը բաղկացած է յոթ հարկից, որոնցից յուրաքանչյուրի կատարը ծառայում է երկրորդին որպես պատշգամբ կամ ճանապարհ։ Առաջին հարկը գետնից մոտ 20 սաժեն բարձր է։ Այս ահագին շինությունն ունեցել է միայն երկու ճանապարհ ժայռի երկու կողքերից ու սրանք մի սաժենից ավելի բարձրության և երկու արշին լայնության կամարաձև անցքեր են, որ ժայռի ստորոտից տեղ տեղ ոլորվելով բարձրանում են մինչև վերջին հարկը, յուրաքանչյուր հարկի համար դռներ բանալով։

Արևմտյան կողմը դրեթե երեք վերստ հեռվից փողրանք է դրված, որ գալիս հասնում է մինչև դատարանը։ Խողովակներից մինը հանված է և պահվում է։ Ավազներն ասում են թե սա կաթ բերելու համար է շինվել, բայց հավանական է, որ ջրի համար լինի։ Շինություններից գլխավորապես նշանավոր են.

Ս. Աստվածածնի վերափոխման եկեղեցին. Սա ամբողջապես փորված է ժայռի մեջ, երկրորդ հարկում, միայն հարավային պատը, սրա հետ և երկկայմանի գավիթը, որ 4 սաժեն երկարություն, 1,5 լայնություն և 5 սաժեն բարձրություն ունի, շինված է սրբատաշ քարերից։ Այս պատի դրսի երեսին նկարված է վերջին դատաստանը, իսկ գավթի առաստաղի վրա չորս հրեշտակ մի խաչ բռնած և մի քիչ ներքև, մի սայլ, վրան մի աղջիկ և մի տղա քնած։

Գավթից միայն մի դուռ բացվում է եկեղեցու մեջ։ Եկեղեցու երկարությունը 6 սաժեն և երկու արշին, լայնությունը մոտ 3 սաժեն 2,5 արշին, և բարձրությունը մոտ 5 սաժեն է։ Առաստաղը կամարաձև է, խորանը բոլորաձև և կամարակապ. հյուսիսային և հարավային պատերին կից ձգվում են երկու բարակ կեղծ սյուներ, որ կամար են ձգում պատերի վրա. խորանի հարավային պատի մեջ բացվում են երկու երկայն ու նեղ և սրանց վրա մի կարճ ու նեղ պատուհան։ Նույն պատի մեջ բացվում են երեք մեծ և սրանց վրա երկու փոքր պատուհան։

Ավագ խորանի մեջտեղը մի սաժեն բարձրության, մեկ ու կես արշին լայնության և մի արշին խորության մի սրբատուն կա, սրանից մի

Նկ. 4. Կարմիր

քիչ ձախ մի այդպիսին էլ կա, որի մեջ մի անցք բացվում է դեպի կողքի սենյակը։

Այս խորանի առաստաղի մեջտեղը նկարված է ս. Աստվածածինը, երկու հրեշտակների հետ, շուրջը վրաց մեսրովբյան տառերով գրած. «Ամենասուրբ Աստուածածին, օգնեա Թամար թագուհուս»։

Աստվածածնի պատկերի շուրջը նկարված են տասներկու առաքյալների պատկերները, մինի տակը վրաց մեսրովբյան, մյուսինը՝ հունական տառերով անունը գրած։

Եկեղեցու հյուսիսային պատի առաջին կամարի մեջ նկարած է ս. Աստվածածինը հրեշտակներով շրջապատված, մոտը Գեորգ Գ թագավորը, ձեռքը դեպի նա պարզած, իսկ սրա մոտ Թամար թագուհին՝ ձեռին այս եկեղեցու հատակագիծը։ Սույն պատի մյուս կամարի մեջ նկարված են վրաց չորս թագուհիներ, մյուս պատերը և պատուհանները ծածկված են սրբոց նկարներով։ Ընդհանրապես բոլոր պատկերները շատ հաջողված են և պատիվ են բերում անհայտ նկարչի վրձնին։ Հյուսիսային պատի մեջ, սեղանին կից բացվում է մի դուռն մի ընդարձակ սենյակի մեջ, ուր դռան մոտիկ կա մի փոքրիկ մատուռ, մեջը երկու գերեզման։ Ոմանց ասելով, սրանք Գեորգի Գ-ի և Թամարի գերեզմանները պիտի լինին։ Այս սենյակի արևելյան պատի մեջ բացվում է մի նեղ դռնակ. երկու արշին բարձրության և 1,5 արշին լայնության մի անցք ձգվում է դեպի վեր, և բաժանվելով երկուսի, մինը գնում է դեպի հյուսիս և ուղղակի իջնում այս սենյակի վրա, այս ուղղահայաց անցքը մոտ 10 սաժեն խորություն, 2 արշին երկարություն և 1,5 արշին լայնություն ունի։ Մյուս անցքը սանդուղքներով, 60 սաժենաչափ բարձրանալով մտնում է մի ընդարձակ սենյակ, 60 սաժեն երկարության, 2 սաժեն լայնության և 1 սաժեն բարձրության։ Այս սենյակից երկու սանդուղքով իջնում են մի փոքրիկ տեղ, ուր կա բարև մի դուռ, որտեղ երկու պատուհան նայում են դեպի ձորը։

Այս ընդարձակ սենյակը ունի մի մեծ պատուհան, որտեղից կարելի է դուրս գալ և մտնել մի ուրիշ, բոլորովին անջատ այրի մեջ, որ ինքն էլ աստրաբաժանումներով տարածվում է ժայռի մեջ։ Տաճարի արևմտյան պատի մեջ բացվում է մի ուրիշ դուռ, որ մտնում է մի ընդարձակ սենյակ, ուր կա չորս գերեզման։ Այս սենյակը մի դռնով հաղորդակցություն ունի և տաճարի հյուսիսային կողմը գտնվող սենյակի հետ, ուր գտնվում է թագավորի և թագուհու կարծեցյալ գերեզմանները, փոքրիկ մատուռով։ Արևմտյան պատի մեջ էլ բացվում է դուռն մի ահագին, երկու սաժենից ավելի բարձր սենյակի մեջ, որի առաստաղում բացված է

մի կլոր անցք, որ սանդուղքներով տանում է վերև և տորաբաժանվելով մտնում զանազան սենյակների մեջ։ Այս սենյակի հյուսիսային կողմում ձգվում է մի սաժեն բարձրության մի լայն անցք, որ տանում է դեպի սառը ջրի ավազանը։

Զանգակատունը գտնվում է եկեղեցուց փոքր ինչ ցած՝ դեպի արևմուտք, մոտ 8 սաժեն հեռու առաջ ցցված ժայռի գագաթին։ Չորս սրբատաշ կամարների վրա բարձրանալիս է եղել գմբեթը, որ այժմ քանդված է։ Արևմտյան և արևելյան պատերի մեջ բացվում են կամարաձև դռներ, գեղեցիկ նշխարով եզրափակված։ Զանգակատունը առանց գմբեթի քառակուսի է, երկու սաժեն մեծության։ Հյուսիսային պատը այժմ քանդվել է։ Սրա արևելյան պատի անկյունում այժմ կա քանդակված մի ողկույզ երկու ճութ խաղողով և մի պսակաձև օղակ, որի մեջ և կանացի ոլլյեֆ մի դեմք։

Թագուհու բնակարանը. զանգակատնից արևմուտք, ժայռի մեջ փորված է 4 սաժ. երկարության, 2 սաժեն լայնության և մոտ 3 սաժեն բարձրության մի կամարավոր սենյակ։ Սրա հյուսիսային պատի վրա մի կամար է բոլորում, իսկ արևմտյան պատի մեջ 2,5 արշին խորությամբ և 1 սաժեն բարձրությամբ և 2 արշին լայնությամբ մի պահարան է բացվում. մյուս պատերի մեջ էս կան մեծ և փոքր պահարաններ։ Պատերին կից ձգվում են 0,5 արշին բարձրության քարե նստարաններ։ Այս սենյակից բացվում են դռներ դեպի ուրիշ 2 սենյակ։ Դուռը մեծ և կամարավոր է։ Դռան մոտ գտնվում է մի փոքրիկ մատուռ և ուրիշ սենյակներ։ Ասում են, թե սա թագուհու բնակարանն է եղած։

Խորհրդարանը կամ դատարանը 4 սաժեն երկարության, 2 սաժեն 2 արշին լայնության և 2 սաժեն բարձրության կամարավոր մի սենյակ է, ժայռի մեջ փորված։ Դուռը կամարաձև է, 5 արշին բարձրության և 2 արշին լայնության, կողքերին մի մի նեղ պատուհաններով։ Հյուսիսային պատի մեջտեղը փորված է պատկեր դնելու տեղ, իսկ ներքևում մի պահարան՝ թերևս նստելու տեղ։ Սրանից ձախ 4 արշին երկարության, 2 արշին խորության և 5 արշին բարձրության կամարաձև մի խաչ կա. այսպիսի խորշեր, միայն փոքր ինչ փոքր, կան և արևմտյան ու արևելյան պատերի մեջ։ Հյուսիսային պատի մեջ բացվում է մի դուռ մի ուրիշ սենյակի մեջ, որ 3 սաժեն երկարության և 4 արշին լայնության ունի։ Արևելյան պատի մեջ ևս գլխավոր դռան մոտ մի դուռ տանում է մի փոքրիկ սենյակ։ Գլխավոր դռան առաջ փոքրիկ հրապարակ կա, կողքին քարե նստարաններ։ Արևելյան կողմը մի փոքրիկ մատուռ կա։

Մյուս շինություններից նշանավոր է մի փոքրիկ եկեղեցի, հնձանը,

ժայռի մեջ փորված մառանը, ուր բացի ներս փորված պահարաններից կան և 6 հատ ժայռի մեջ փորված գինու կարասներ, խանութներ, որոնց դարակները ժայռի մեջ են դուրս փորված և այլն։

Մինչև դարուս կեսը վարձիան բոլորովին անխնամ էր թողնված և ոչխարների պահպանության էր ծառայում, իսկ այժմ շնորհիվ սկզբում մի հույն սարկավագի, իսկ այժմ մի վրացի վարդապետի մաքրված և ուխտատեղի է դարձված։ Ամեն տարի Ս. Աստվածածնի վերափոխման տոնին շրջակա գյուղերից և քաղաքներից ահագին բազմություն հայերի, վրացիների և հույների գալիս է այդտեղ ուխտի։ Ախալքալաքի գավառն էլ մի փոքրիկ նպաստ է տալիս այդ վանքի պահպանության համար[13]։

ՄՈՒՐՃ

Գոթնելյա գյուղից դեպի արևելահյուսիս մի և կես վերստ հեռավորությամբ ընդարձակ դաշտավայրի վրա բարձրանում են երկու բլրակներ, որոնցից հյուսիսայինի վրա նկատվում է պարսպի հիմք և մարտկոցի ավերակ։ Այս բլրի արևմտյան կողմը տարածվում է մի ընդարձակ գյուղի ավերակ և ցորենի բազմաթիվ հորեր, պատերը քարով շարված։ Բլրի լանջին, գյուղի կողմը, միմյանցից մոտ 50 սաժեն հեռավորությամբ երկու սառցերկրյա այր ձգվում են հեռու-հեռու, գոթնելեցոց ասելով մինչև Նացարգորայի գետը։ Այրերի մեջ բացվում են բազմաթիվ մեծ և փոքր սենյակներ, որոնցից մի քանիսի կտուրները ծածկված են մեծ մեծ քարերով։

ՔՈՌՕՂԼՈՒ ԲԵՐԴԸ

Սամսար լեռների հարավային վերջին զագաթի և Թափարավան լճի հյուսիսային եղրի հանդեպ բարձրանում են միևնույն ուղղությամբ և միմյանցից մոտ կես վերստ հեռու երկու լյառն, որոնց վրա գտնվում է Քոռօղլու բերդը։

Այս լեռներից հյուսիսայինը մյուսից բարձր է, սրա արևմտյան լանջին գտնվում են սեպագյալ ժայռեր, որ ձգվում են մինչև գագաթը։

Այս ժայռի մեջ բավական մաքուր փորված են իրար վրա երեք սենյակներ, որոնք, ժողովրդյան ասելով, Քոռօղլու ապաստարանն են եղած։

Մի փոքրիկ, մի արշին բարձրության և $^3/_4$ արշին լայնության դուռ, որի առաջ ընկած է $^1/_4$ արշին հաստության քարե փեղկը, բացվում է 3

13 Այս հատվածը տպվել է «Հանդես ամսօրյայում», 1895 թ. № 1։

արշին երկարությամբ, 2 արշին լայնությամբ և 1 սաժեն բարձրությամբ սենյակի մեջ։ Սրա արևմտյան պատի մեջ բացվում է մի փոքրիկ պատուհան, քարե փեղկով ծածկված, կողքերին երկու ծակ միայն թողնելով, որ հրացանի համար է։

Արևելյան պատի մեջտեղը մի վերշոկ խորության, $^3/_4$ արշին բարձրության և $^1/_2$ արշին լայնության կամարաձև փորվածք է, իսկ հարավային պատի մեջ $^1/_2$ արշին երկարության 3 վերշոկ լայնության և 5 վերշոկ բարձրության կամարաձև մի խորշ կա։

Դռան մոտից 1,5 արշին բարձրության և 1 արշին լայնության մի անցք երկու սաժեն երկարությամբ սանդուղքով բարձրանում է և վերջանում մի փոքրիկ դռնով, որի շուրջը հրացանի համար անցքեր են թողած։

Իմ առաջնորդ արժ. Տեր-Մակար Տեր-Հարությունյանն ասում էր, թե մի տարի առաջ ինքն այդ դռնով մտել էր մի ուրիշ սենյակ, որ այժմ քանդվել և վայր է թափվել։ Այս սենյակն առաջինին նման, միայն նրանից փոքր ինչ մեծ է եղել։

Հարավային պատի մեջ մի արշինից ավելի բարձրության և մոտ $^3/_4$ արշին լայնության և $^1/_4$ արշին խորության կամարաձև ներս է փորված եղել, մեջը մի գլխաքաց, հանդերձը մինչև ծնկները, առանց զենքի մարդ քանդակված։

Պատկերի երկու կողմն եղել է արձանագրություն, որ ոչ ինքը և ոչ յուր վրացի ուղեկիցը կարողացել են իմանալ, թե ինչ ազգի տառերով է։ Այս սենյակի առջև գետնից մի արշին լայնության պատ է դրված եղել, որի վրայով քայլելով բարձրանալիս են եղել երրորդ և վերջին սենյակը, որ դեռ կանգուն է։ Սա ժայռ քարերի մեջ փորված 4 արշին երկարության, 3 արշին լայնության և մի սաժեն բարձրության սենյակ է, որի արևմտյան պատը բոլորովին քանդված է։

Արևելյան պատի մեջ երկու վերշոկ խորության, $^3/_4$ արշին երկարության և $^1/_2$ արշին լայնության խորշ կա, իսկ հարավայինում $^1/_4$ արշին խորության մի կամար, որի վերև մի ուրիշ մի արշին երկարության և երկու վերշոկ լայնության և $^1/_4$ արշին խորության խորշ, ուր մի թռչուն բուն էր դրել և ձու ածել։

Սենյակի արևելյան պատի անկյուններում դրված / ին երկու խաչարձան։ Մեր ջանքն իզուր անցավ արձանագրություն և մարդու պատկեր կրող քարը գտնելու։

Մեծ կամ Թոք և Փոքր Սամսարները գտնվում են Ախալքալաքից դեպի արևելք, Սամսար լեռներից արևմուտք մի բարձրավանդակի վրա։

Այս երկու Սամսարների միջև հեռավորությունը հազիվ կես վերստ լինի։ Այս երկու գյուղերի միջև ձգվում է մի ձոր, որ հազիվ 6 սաժեն խորություն և 4 սաժեն լայնություն ունենա։ Սա սկսվում է Մեծ Սամսարից հարավ ½ վերստ հեռվից և ձգվում է մինչև Փոքր Մերենիա ավերակը։ Ձորակի միջով հոսում է մի վճիտ և առվորակ առվակ, որ սկիզբն է առնում Մեծ Սամսարից մի վերստ հեռու արևելահարավ գտնվող Քեխուտի սարի աղբյուրներից։

Ձորակի երկու կողմերը քրչեր են՝ սև, կարմիր և սպիտակ մեծ ու փոքր քարերից, կարմիր, կրային և կավային հողից ու խճից բաղկացած։

Այս քրչերի մեջ փորված են մի փառավոր եկեղեցի, մի քանի մատուռ և բազմաթիվ այրեր։ Եկեղեցին, որ գտնվում է Փոքր Սամսարի ձորակում, գետի աջ ափին, ամբողջովին փորված է քրչի մեջ։

Նրա երկարությունն է 20 արշին, լայնությունը՝ 10 արշին և բարձրությունը մոտ 5 սաժեն։ 2 արշին երկարության, 1,5 լայնության և 4,5 սաժեն բարձրության քառանկյունի բնականից թողնված սյուներ կամարակապ բոլորում են, և սրանց վրա բարձրանում է գմբեթի փորվածքը։

Սեղանի երկու կողմը կա մի մի հանդերձատուն, 2 սաժեն երկարության, 3,5 արշին լայնության և մոտ 4 սաժեն բարձրության։

Եկեղեցու հարավային պատը, որի մեջ բացվում է եկեղեցու դուռն և երեք պատուհան, կիսով չափ քանդված է։

Դռան վերև վրաց մեսրովբյան տառերով կա մի եղծված արձանագրություն։

Խորանի պատուհանի և եկեղեցու արևմտյան պատի միջից մի նեղ անցք ձգվում և գնում խառնվում է ձորակի միջի բազմաթիվ այրերին։

Այս քրչերից պրծել, գետի ափն է գլորվել 10 արշին բարձրության, 6 սաժեն լայնության և 1 սաժեն հաստության մի ժայռ քար, որի մեջ փորված է մի մատուռ, մի սաժեն բարձրության, 2,5 արշին երկարության և երկու արշին լայնության։ Միևնույն քարերից, արևելյան պատին կից դուրս է փորված ½ արշին բարձրության մի վեմ քար, որի պատի մեջ կա մի փոքրիկ խորշ։ Դռան տեղը կոտրված է։

Միայն դռան երկու կողմում կա վրաց տառերով մի եղծված արձանագրություն։

Այս ամբողջ ձորակի մեջ մանավանդ Մեծ Սամսարում կան բազմա-

թիվ այրեր, սրանք ընդհանրապես մեծ և փոքր պետնափոր խորշեր են՝ նեղ և երկարաձիգ անցքերով միմյանց միացած, որոնք երբեմն վայր են իջնում, երբեմն ուղղակի աստիճանաբար վեր բարձրանում և երբեմն ուղիղ ձգվում, իրենց միջից զանազան կողմեր անցքեր բանալով։ Ընդհանրապես այս անցքերն այն մեծության են, որ մարդ սպրած աղատորեն կարող է առաջ գնալ, իսկ տեղ տեղ այնքան բարձր են, որ կարելի է և կանգնած քայլել։

Խորշերը, որ հավանականորեն մարդկանց բնակարաններ են եղել, միշտ մի սաժենից բարձր են, 1—10 սաժեն երկարության և 1—5 սաժեն լայնության։

Կան խորշեր ևս, ուր շինված են քարե մսուրներ, ժայռի մեջ փորված են պահարաններ, քարե նստարաններ, ձորակի մոտի սենյակները պատուհաններ էլ ունին դեպի ձորը քարե կափարիչներով։ Պատուհանների գոգերում կան փոքրիկ ծակեր։

Ընդհանրապես այս բոլոր անցքերն ու խորշերը շատ մաքուր են, օդը՝ նույնպես, այրերից մինի միջի ջուրը նույնպես շատ հաստակ և սառն։

Այս աղբյուրն այժմ կախված է ձորի մեջ, շնորհիվ դյուղի առաջին հարուստ և շատ հյուրասեր Կարապետ Գղլյանի և ջուր է մատակարարում ամբողջ Մեծ Սամսար գյուղին։

Ես մոտ այս այրերից բոլոր նշանավորները։ Ինձ ուղեկցում էին գյուղի արժանապատիվ Տեր-Մակար Տեր-Հարությունյան, որ մի աշխույժ և հետաքրքիր երիտասարդ է և մի քանի դյուղացի։

Բավական է կարծեմ նկարագրել միայն մի այրի ուղղությունը. ժողովրդյան կոչած «խաչ մաղարան» գտնվում է Մեծ Սամսարի ձորում առվակի աջ ափին, աղբյուրից փոքր ինչ բարձր։

Ժայռ քարի մեջ փորված մի փոքրիկ անցքով մենք մտանք ներս և ուղղահայաց 10 ոտք քարե սանդուղքով մագլցեցինք վերև, մտանք մի ընդարձակ, լուսավոր սենյակ։ Անցքի բերնի կափարիչը գյուղացիք տարել գործածել էին։

Սենյակը քառակուսի է, 7 արշին մեծության և մի սաժեն բարձրության, հյուսիսային պատի մեջ կա մի 1,5 արշին երկարության և 1 արշին լայնության պատուհան, որ նայում է դեպի ձորը։ Նկատելի է, որ պատուհանն ունեցել է քարե փեղկ։ Պատուհանի գոգից մի ծակ կա։ Պատուհանի ձախ կողմը, մի արշին հեռու կա մի փոքրիկ ծակ և մի մարդու նստելու տեղ։ Սրա մեջ կա երեք դուռն։

Արևելյան պատի մեջ բացվում է 4 $^{3}/_{4}$ արշին բարձրության, 1 արշին լայնության և 1 $^{1}/_{4}$ արշին հաստության մի դուռ, որի մոտ բարձրից

¹/₄ արշին մեծության մի խաչ է քանդակված։ Սրա երկու կողմում նկատելի են Բ. Ծ տառերը՝ իսկ ներքևում կան երկու փոքրիկ խորշեր։ Հայ գյուղացիք այստեղ ուխտ են գալիս և մոմ վառում։ Այս դռնից մտանք նույն բարձրության, միայն մի սաժեն երկարության և երկու արշին լայնության մի սենյակ, որի հյուսիսային պատի մեջ բացվում է մի ձվաձև պատուհան 0,5 արշին երկարության և քառորդ արշին լայնության. ներքևում զենքի համար ծակ։ Սրա արևելյան պատի մեջ կա քարե մի սյահարան, 1,5 արշին խորության, 1,5 արշին երկարության և մեկ արշին լայնության։ Հարավային պատի մեջ բացվում է մի նույնչափ դուռն, որ տարավ մեզ մի սաժեն երկարության և կես սաժեն լայնության, նույնչափ և բարձրության մի խորշ, որի մեջ այլևս ոչ մի անցք չկար։ Մենք վերադարձանք խաչի սենյակը և մտանք արևմտյան պատի մեջ գտնվող անցքով, որ մեկ արշին բարձրության և ³/₄ արշին լայնության կլինի։ Պպզած 10 քայլ առաջ գնացինք, անցքը փոքր ինչ լայնացավ ու բարձրացավ, 10 քայլ ևս, և մենք իջանք մի սաժեն խորության և 8 արշին մեծության քառակուսի մի սենյակ, որի մեջ գտանք մարդկանց և անասունների ոսկորներ։ Միայն սրանք մի առանձին մեծությամբ չէին զանազանվում։ Այստեղից մի նեղ անցքով ուղղակի վայր կախվեցանք և ընկանք մի մեծ սենյակ, մի սաժենից ավելի բարձրության, 3 սաժեն երկարության և 8 արշին լայնության։ Այս սենյակից մի նեղ անցքով երկար գնացինք, մի ուրիշ նեղ անցք վայր էր իջնում, սակայն արդեն բլել էր, մենք շարունակեցինք կուզեկուզ գնալ, և վերջապես տեսանք, որ անցքը բլել փակվել է։

Մենք միևնույն անցքով վերադարձանք կրկին խաչի սենյակը և մտանք հարավային պատի միջից դեպի արևմուտք ձգվող նեղ անցքը, որ մի արշին բարձրության և մի արշին լայնության է։ Քսան քայլից հետո այս անցքի մեջ բացվում է և մի այլ անցք, որ տանում է դեպի արևմտահյուսիս։ Մենք շարունակեցինք գնալ միևնույն անցքով, սակայն մի հարյուր քայլից հետո ստիպվեցանք ետ դառնալ, որովհետև անցքը փուլ էր եկել և փակվել։ Ուղեկից գյուղացիներս ասում էին, թե մի քանի տարի առաջ իրենք մտել էին այդ անցքով և շատ հեռու գնացել։ Նրանք հավատացնում էին, թե այդ անցքը ձգվում է մինչև Մերենիա և միանում բլրի մեջ այժմ էլ երևացող այրին։ Վերադարձին մենք մտանք այդ անցքից դեպի արևմտահյուսիս ձգվող անցքը, որ երկար ձգվելուց հետո բացվեցավ մի սենյակի մեջ, ուր գտնվում է ջրի ավազան։ Մենք վերադարձանք, դուրս եկանք այդ այրից և մտանք մյուս այրերը։ Մեծ Սամսարում նշանավոր է այսպիսի ութ այր։

Բացի եկեղեցուց և բազմաթիվ այրերից, Սամսարներում նշանավոր են և քարի մեջ փորված երկու փոքրիկ ջրաղացները, որոնք գտնվում են Փոքր Սամսարի ձորակում, Քեխուտի գետի աջ ափին։

Սրանցից մին փորված է մի չորս սաժեն լայնության, 6 արշին երկարության և 5 արշին բարձրության քարի մեջ։ Սրա գետի հյուսիս նայող երեսի վրա բացված է 1,5 արշ. բարձրության և 14 վերշոկ լայնության մի փոքրիկ դուռ։ Նկատելի է, որ ներքուստ ունեցել է քարե փեղկ։ Քարի մեջ ամբողջ փորվածքը 3 արշին լայնության, 4,5 արշին երկարության և 3,5 արշին բարձրության է։ Դռան կից, սեմից 4 վերշոկ ցածր, իսկ գետնից 12 վերշոկ բարձր ձգվում է 0,5—1 արշին լայնության և 2 արշին երկարության մի տեղ, որ հավանականորեն ջրաղացպանի քնելու տեղն է եղել։

Սրա մոտ 1,5 արշին լայնության փորված է մինչև գետին՝ ջուրը գնալու համար, մյուս կողմը կեսից մեկ ու կես արշին լայնության և 2 արշին երկարության և միևնույն բարձրության մի տեղ էլ իրեր դնելու համար է։ Մնացած 2 արշին երկարության և լայնության տեղը ջրաղացի տեղն է, որի ոչ քարը և ոչ մյուս պարագաներն են մնացել, որովհետև գյուղացիք տարել են։ Հարավային կողմում կա 12 վերշոկ երկարության և 0,5 արշին լայնության ձվաձև մի պատուհան։

ՍԱՄՍԱՐԻ ԱՅՐԵՐՈՒՄ ԳՏԱԾ ՎԱՅՐԵՆԻՆ

Այժմյան ականատեսիք գաղթականության ժամանակ վերաբնակած էին Մեծ Սամսար։ 1837 թ., երբ Սամսարը պատած էր խիտ անտառով, այժմ ծերունի Նահապետը բռնել է մի վայրենի մարդ։

«Մի գիշեր,— պատմում էր նա ինձ,— կացինը ուսս գնացի Մեծ Սամսարի ձորակի խաչ մաղարից փոքր ինչ բարձր գտնվող ջրաղացը. հանկարծ մի արտասովոր ձայն լսեցի, նայեցի՝ որ մի միջահասակ, անմորուս և անպեխ մարդ, փոքրիկ աչքերով, ոտից մինչև գլուխը մերկ, միայն խոտով փաթաթված, գլխաբաց, վիզը մի կաշյա բան ձգած ունքերը կիտել կանգնել և ծվծվացնում է։ Կամաց մոտեցա դրան և ուզեցի կացնով խփել գլխին, սակայն նա հարձակվեց ինձ վրա և այնպես սաստիկ կծեց ուսս, որ արյունն աղբյուրի պես սկսեց հոսել։ Ես հավաքեցի ուժերս և մի այնպիսի հարված տվի վայրենուն, որ վայր գլորվեց։ Իսկույն ոտից բռնեցի և ձայնեցի ջրաղացպան ընկերոջս՝ Պետրոսին, որի օգնությամբ քաշեցի տարա վայրենուն ջրաղաց և դուռը վրայից մխեցի։ Վայրենին այս ու այն կողմն ընկավ, աշխատեց մի կերպ դուրս պրծնել,

բայց երբ տեսավ, որ չի կարող, հը՛, հը՛, հը՛ արավ և ցասումով նախ երկիր և ապա երկինքը սկսեց ցույց տալ։ Առավոտուն ես ու Պետրոսը մի լավ կապեցինք սրա ձեռքերն ու տարանք գյուղ տանուտերին։ Երկու օր մնաց տանուտերի դռնում, հաց, կերակուր էինք տալիս՝ չէր ուտում, անկողին էինք դցում, չէր պառկում, կովի առաջ ձգված խոտը չոկում ուտում էր։ Ես մոտեցա նրան, վիզը ցկած կաշին քանդեցի առա, նա սկսեց երկինքը ցույց տալ և աղաչել, մինչև որ ես կրկին կապեցի վզից։ Երրորդ օրը պինդ կապեցի ձեռքերն ամուր թոկով և տվի չորս մարդու, որ տանեն Խըրթըլ՝ գավառապետին ընծա, ես էլ գնացի որ հանդերձս փոխեմ, հետևներից հասնեմ։ Սակայն մինչև իմ գնալս վայրենին սաստիկ բղավում է, այնպես որ տանողները սարսափում են, քաշում պրծըցնում է թոկերն ու փախչում։ Ես հենց այս միջոցին վրա հասա ու ընկա վայրենու եսևից. նա փախավ եկավ մտավ խաչ մաղարան (այրը)։ Ես ընկերներիս հետ կտրեցի դուռը և հրացան արձակեցի։ Այս ժամանակ նա հանկարծ դուրս թռավ, սաստիկ բղավեց և անհայտացավ անտառի մեջ»։

ԲՆԱԿԻՉՆԵՐ

ՀԱՅԵՐ

Ախալքալաքի գավառի հայերը գլխավորապես գաղթականներ են Էրզրումի վիլայեթից, որ եկած են 1830 թ. Էրզրումի առաջնորդ Կարապետ եպիսկոպոսի առաջնորդությամբ։ Գաղթած շատ ծերունիներից լսելով և գրավոր աղբյուրներից քաղելով՝ ես արդեն պատրաստել եմ այս գաղթականության մանրամասն պատմությունը, որ ավելի ևս մշակելու հույսով առայժմ հետաձգում եմ հրատարակել։

Բացի Կարնո գաղթականներից, կան և Արտահանի գավառի գաղթականներ, որոնք բնակվում են Խորենյա և Փոկա գյուղում, իսկ դիլիջինները Խնուսից են։ Շատ հետաքրքիր է սրանց գավառաբարբառի կրած փոփոխությունը Կարնո գավառաբարբառի աղղեցության տակ, ուստի և ես առաջ կբերեմ մի քանի երգեր և հեքիաթներ սրանց բարբառով իմ «Ջավախքի բուրմունքում»։

Ժողովրդի վարք ու բարքին և հավատին վերաբերյալ նյութերս ինքս հավաքել եմ գլխավորապես Կարնո գաղթականներից։

ՀԱՅ ԿԱԹՈԼԻԿՆԵՐ

Ջավախքում բնակվող հայախոս հայ կաթոլիկները բնակվում են հետևյալ գյուղերում.

Ալաստան	706 տր.	627 իգ.	183 տուն
Վարդավ	52 »	61 »	10 »
Վարևան	196 »	169 »	40 »
Տուրքա	233 »	225 »	41 »
Խիզաբավրա	673 »	601 »	137 »
Թորիա	185 »	160 »	46 »
Ուճմանա	181 »	164 »	40 »
Էշտիա	799 »	720 »	196 »

Ընդամենը 8 գյուղ 3025տր. 2727իգ. 699 տուն

Երկու սեռից՝ 5752 հոգի։

Ալաստանի բնակիչները մինչև վերջին ժամանակներս գնում էին Կ. Պոլիս աշխատելու, և այս պատճառով դավառիս մյուս գյուղացիներից ավելի զարգացած և կրթված են։ Տները փայլում են վերին աստիճանի մաքրությամբ։

Վարևանցիք էրզրումի Թվանճ գյուղից են։ Սրանք թե հանդերձներով և թե նիստ ու կացով չեն տարբերվում վաչիանցի հայ լուսավորչականներից, որոնց հայրենակից են։

Վարդավցիք և խզաբավրացիք բնիկներ են։ Սրանք վազուց մոռացած են իրենց մայրենի լեզուն և խոսում են վրացերեն։ Եվ թեպետ ընդունած են վրաց սովորություններ, բայց և այնպես ընտանեկան կյանքը հայկական է։

Թորիայի, Ուճմանայի և Էշտիայի բնակիչները Խնուսի Քիլվա գյուղից են, խոսում են Մշու բարբառով. տղամարդկանց հանդերձը նման է Կարնո գաղթականներին, միայն ընդհանրապես հագնում են «նախշուն գուլբա» որով և, լուսավորչականների ասությամբ, ճանաչվում են։ Կանանց մեծ մասը հագնում է արտահանցիների և դելիֆցիների նման՝ դեյրա։

Բացի կրոնական ծեսերից ու սովորություններից, ընտանեկան կյանքը, սովորությունները բոլորը նման են հայ լուսավորչականներին։

Սրանց մեջ գրագիտությունը սաստիկ քիչ է տարածված։

Ընդհանրապես սրանք կրոնամոլ են, սիրում են կրոնական հարցերով զբաղվիլ, իրենց ուղղափառ կամ կաթոլիկ են կոչում և երբեք չեն ուզում լսել, թե ազգով հայ են։

Սրանք հաճախ վիճում են լուսավորչականների հետ կրոնական հարցերի մասին։

Թե կաթոլիկ և թե լուսավորչական հայերը միմյանց հետ ավելի

վատ են վարվում, քան թե շրջապատող մյուս աղգությունների, օրինակ, վրացոց կամ թուրքերի հետ։

Այս գավառի բոլոր կաթոլիկները ունին մի գործակալ քահանա, որ նշանակվում է Ախալցխայի կաթոլիկաց հոգևոր կառավարությունից։

ՏԱՃԿԱԽՈՍ ԿԱԹՈԼԻԿ ՀԱՅԵՐ

Ախալքալաքի գավառի Բավրա, Խուլդումա, Կարաիկամ և մասամբ Տուրս գյուղերի բնակիչները տաճկախոս կաթոլիկ հայ են։ Սրանք 1829-ին գաղթած են Արտահանի գավառի Գեղա հասարակության Վել գյուղից։

Ինչպես ծերունիները պատմում են, իրենց նախնիքը լուսավորչական հայեր են եղած և զանազան ժամանակներում այլևայլ տեղերից եկած բնակած են այս գյուղը։ Անցյալ դարում Արտահանի բեկը արգելած է Վել և շրջակա հայախոս գյուղերին հայերեն խոսել և ամեն մի անգամ խոսելիս 50 բաղդադ տուգանք է առած։

Այս ժամանակները մի կապոցին (capucin) քահանա, որ միաժամայն պարապում էր բժշկությամբ, գալիս Արտահանի բեկին բժշկում է։ Երբ բեկը լավի է դառնում, կապոցին ուզում է հեռանալ, պատճառաբանելով, թե յուր պաշտոնն է կաթոլիկ հավատք քարոզել։ Իսկ բեկը, որպեսզի քահանային իրենից շատ չհեռացնե, ուղարկում է մոտակա Վել գյուղը՝ քարոզելու։ Վելցիք, որ քահանա չէին ունեցել քանի այնտեղ գաղթել էին, համաց համաց ընդունում են կաթոլիկությունը։

Գաղթական ծերունիների ասելով՝ դարուս սկզբում այդ գյուղում բնակվում էին 26 տուն կաթոլիկ հայեր և միայն երեք տուն վրացիք։ Սկզբում այս երեք տունը կազմում էր ժիժոգելի գերդաստանը։ Այս երեք տուն վրացիք հունադավան էին, ունեին իրենց փոքրիկ եկեղեցին։ Կաթոլիկ հայերը վրացիներին սպիտում էին իրենց կաթոլիկ կրոնն ընդունելու և երբեք միմյանց աղջիկ չէին տալիս-առնում, մինչդեռ լուսավորչական հայերի հետ միշտ խնամություն էին անում։ Կրոնական վիճաբանություններ անպակաս էին իրենց մեջ։

Շատերը պատմում են, թե Նաքալաքի գյուղից Սապոգելա անուն մի վրացի շատ խնդրել է Վելի Կարապետ քեհի (ֆյայալի—գյուղի տանուտիրոջ) աղջկա՝ Հեղինեի ձեռքը, և երբ մերժվել է, ընծաներով հաճեցել է Արտահանի բեկին՝ բռնությամբ խլել աղջկան և տալ իրեն։ Սրա դեմ հուզվել և բողոքել են Վել գյուղի բոլոր կաթոլիկ հայերը և միայն այն ժամանակ են հանգստացել, երբ բեկը ստորագրություն է առել Սապոգելայից, որ չսիպե Հեղինեին հունադավանություն ընդունելու։ Սա-

կայն հակառակ յուր խոստման, սաստիկ ստիպում է յուր կնոջը՝ Հեղինեին, որ ընդունի հունադավանություն, և երբ սա հաստատ է մնում, կապում է ձեռքն ու ոտքը, վրան մածուն քսում, դնում շների առաջ, որ լիզեն, ս. մեռոնը հանեն, որպեսզի հետո օրթոդոքս մկրտեն։ Այս որ լսում են Վելի հայ կաթոլիկները, բողոքում են Արտահանի Ալի-բեկին։ Բեկը 100 ղուռուշ տուգանք է առնում, Սապոդելենց Պետրեի որդի Հովսեփին բանտարկում և խստիվ պատվիրում է նրան՝ ազատ թողնել կնոջը յուր կրոնը դավանելու։ Այնուհետև կրոնամոլ վրացին ազատ է թողնում Հեղինեին, և սա մինչև մահ մնում է կաթոլիկ։

1887 թվին այս կինը, որ 1829 թ. Կարնո գաղթականության ժամանակ գաղթել էր Ծալկայի գավառի Ռեխա գյուղը, զգալով մահվան մերձենալը, ստիպում է յուր վրացի որդվոց, որ տանին իրեն դավառի Տուրս գյուղը, ուր և մեռնում և թաղվում է հայ կաթոլիկ ծեսով։ Այս գյուղերի բոլոր կաթոլիկները հաճախ հիշում են Վարդան անուն վեցցի հայրենակից մի նահատակ, որ քրիստոնեության վրա վկայել է մարտիրոսական մահվամբ։ Այս ժողովուրդը բացի այն, որ հայ տիպ է կրում, այլև յուր աշխատասիրությամբ ու տոկունությամբ նրանից չէ տարբերվում։ Սրանց ընտանեկան կյանքը, սովորությունները բոլորովին հայկական են։ Հարսանյաց ժամանակ 12 ղուռուշ, ի խորհուրդ 12 առաքելոց, տալիս են աղջկա մորը, ինչպես մյուս գյուղացիները։ Թաղման ժամանակ տալիս են «փետատի հացը», որ է գերեզման փորելու մասնակցության ուտելիք։

Ընտանեկան բառերից շատերը դեռ հայկական են՝ հոքո (հորքույր), սանամեր, սանիկ, խնամի, փեսա, ճակատ, անթեղ, խաչերկաթ, ակիշ, թաթակիշ, մուխքաշ, ծափ, կճուճ, կրծկալ, կապան (փորքաշ), խոտկուռ, թևլաթ, զոմ, ախոռ, մարագ, բնկալ, կոնա, կապ, կրկալ, թաո, փակ, մատակ, սըփահ, հարոր, քոթան, խոփ, ձևիչ, մաճ, մաճկալ, սամի, խաշիլ, մախոխապուր, լակ։ Դարձյալ՝ բարև, աստծու բարին, բարիրիկուն, զովացյալ Հիսուս, կենդանութեն, սաղըլլիք։ Եկեղեցական բոլոր սպասքների անուններն ևս հայկական են։

Մարդկանց անուններն ևս մեծ մասով հայկական են, օրինակ՝ Օսկեհատ (80 տարեկան մի կին է), Մարգարիտ, Սիրբին (Սրբուհի), Հոռոմ (Հռիփսիմե), Եղիսաբեթ, Շուշան, Վարթուն (86 տարեկան մի կին)։ Սարգիս, Պապիկ, Գրիգոր, Ներսես (91 տարեկան ծերունի), Վարդան։

Հայկական ժողովրդական աղոթքներից սրանք դիտեն «Աստվածածին, դուն կուս ես», «Լուսացյալ՝ լուսո ի բարին»[14] և այլն։ Հին սերունդ-

---

14 Տե՛ս Ե. Լալայան, Ջավախքի բուրմունքը, Թիֆլիս, 1892։

դը իրեն ուղղափառ էր անվանում, իսկ նոր սերունդը՝ շնորհիվ ուսուցիչների և քահանաների իրեն «հայ կաթոլիկ» է անվանում և աշխատում է սովորել մայրենի լեզուն։

1886 թ. աշխարհագրի ժամանակ նախկին գավառապետ Սմբաթով վրացի իշխանը եկել էր այս գյուղերը և աշխատել էր սրանց «վրացի» գրել տալ, սակայն միմիայն մի տուն վախից վրացի էր գրվել, մյուսները ասել էին, թե հայ են։ Ուստի կարծում եմ, որ բոլորովին անհիմն է ոմանց և Զագուրսկիի յուր «Поездка в Ахалцыхский уезд» աշխատության մեջ սրանց «վրացի» կոչելը[15]։

ՀԱՅ ԲՈՇԱՆԵՐ

Ախալքալաքում բնակվում են 17 տուն՝ 21 արական, 19 իգական սեռի հայ բոշաներ։

Սրանց մասին ես կհիշեմ միայն մի քանի ավանդություններ, որ իրենք պատմեցին ինձ իրենց ծագման մասին, իսկ սրանց կյանքի մանրամասն ուսումնասիրությունը և արդեն պատրաստ հայերենից բոշերեն բառարանը կմնան դարձյալ մշակելու։

Բոշաներն իրենց ծագման մասին կարողանում են պատմել միայն հետևյալ ավանդությունները։

Շատ վաղ ժամանակներում ապրում էր մի վարդապետ, որի երեք սարկավագները կաշառվելով թշնամիներից՝ մի կին են բերում, տանում նրա խուցը։ Երբ թշնամիները գալիս բռնում են վարդապետին կնոջ հետ, սա հասկանում է սարկավագների խարդավանքը և անիծում նրանց՝ ասելով. «Սևերեսներ, գնացեք, էլ մարդոց մեջ չերևաք»։

Իսկույն սրանց երեսների կեսը սևանում է, առնում են մի մի պարկ և գավազան ու գնում, անվերջ գնում։ Ճանապարհին սրանց հանդիպում են ձի, կով, ոչխար և այլն, սակայն սրանցից և ոչ մինը չի մնում դրանց մոտ, միայն էշը հավատարմություն է ցույց տալիս, և չի հեռանում տիրոջից։ Սրանք վերցնում են էշը և գնում. հասնում են մի անտառ, ճյուղեր կտրտում, քթոց, բաթաթ, մաղ շինում, բայց որովհետև իրենց երեսի կեսը սևացած էր, չէին կարող մարդկանց մեջ մտնել, ուստի տալիս են իրենց կանանց տանել ծախելու։ Այսպես շարունակվում է սրանց կյանքը, ամուսինները տանը նստած շինում են մաղ, բաթաթ, սյալա, քթոց և փոկ, իսկ կանայք ման ածում քաղաքն ու գյուղեր ու վաճառում։

---

15 Այս հատվածը ես տպված է «Հանդես ամսօրեա»-ում և արտատպված «Արձագանք»-ում։

Ա.[16]

Մի զառամյալ կին բոշա ևս պատմում էր, թե շատ վաղ ժամանակներում Կիլիկեղնոս անունով մի մարդ, չկարողանալով յուր գերդաստանին ապրուստ հայթայթել, հուսահատվել և գնացել մտել է թոնիրը, որ քաղցածությունից մեռնի։

Կինը եկել հանել է նրան թոնրից և հուսադրել, ասելով.

Կերթամ մուրամ,
Բերեմ պահեմ.
Հավի դոշով,
Փրփուր լոշով.
Ել, ել, մատաղ
Ըլլիմ քեղի.
Ել ատ թոնրեն,
Մէմ՝ դուս արի։

Ուստի և նրանց մեջ սովորություն է դարձել՝ երբ պսակից հետո եկեղեցուց հարս ու փեսան տուն են վերադառնում, փեսան մտնում է թոնիր, իսկ հարսը պարում է բնդրափում, վերոհիշյալ խոսքերն երգելով, մինչև որ փեսան դուրս գա թոնրից։

Բ

Առաքյալներից մին ճաշի ժամանակ տալիս է Հիսուս Քրիստոսին մի կտոր հաց, որի վրա Տերը կեղտեր նկատելով՝ բարկանում և մի փունջ մաղ յուր գլխից պոկելով տալիս է հաց տվողին։ Աշակերտը զարմացած նայում է տիրոջը։ Այդ ժամանակ Հիսուս խաչակնքում է մաղը և աշակերտը իսկույն սովորում և սկսում է գործել մաղ։ Ել ահա այդ աշակերտը համարվում է մաղագործների նախահայր։

Գ.

Բոշաները իրենց լեզվով իրենք իրենց կոչում են լոմ, սակայն ոչ մի բացատրություն չեն կարողանում տալ։ Մյուս ազգաբնակություննե-

---

16 *Բնագրում հեղինակը սկսել է Բ-ից, առանց Ա-ի, այդ պատճառով հերթականորեն փոխել ենք համարները։ Ծանոթություն կազմողների։*

րին նրանք հայտնի են բոշա անունով։ Այս անվան ծագման մասին իրենք բոշաները պատմում են հետևյալ բառախաղը.

Մի մեծ հրավերքի գնացել են բոլոր ազգությունները, երբ սրանք տեղավորվել պրծել են, նոր գնել են լոմերը, սակայն տեղ չէ եղել, և սրանց պատասխանել են, թե պոշ ա, պոշ ա (իզուր է, իզուր է) գնացեք։ Այստեղից էլ, իբր, առաջացել է պոշա-իզուր անունը։

Դ

Իսկ առայժմ բոշաների մասին մի ամփոփ գաղափար տալու համար ասենք, որ սրանք ևս պատկանում են հնդկաարիական ցեղին, որ ցրված հին և մասամբ նոր աշխարհի գրեթե բոլոր անկյունները, ապրում է անկրոն, անհայրենիք և անօրենք։ Ամբողջ աշխարհում մի կտոր հող չունենալով, այս ցեղն ամեն տեղ իրեն հայրենիք է համարում։ Անտարբեր քաղաքների հարստության և նրանց բնակիչների փարթամության և կյանքի հարմարություններին, նա միայն մի բան է խնդրում՝ թույլ տալ իրեն ազատ ապրելու բնության գրկում[17]։

Սրանք երևացել են Հայաստանում հավանականորեն է կամ Ը դարում[18] և հետզհետե ընդունել հայերեն լեզուն, կրոնը և սովորությունները։

Բոշաները միջահասակ են, մարմնի մասերը կանոնավոր, միայն հաճախ պատահում է կանանց ոտինքների ոչ սովորական մեծություն։ Սրանց մեջ շատ քիչ կան մեծ փորավորներ, կզավորներ և այլն։

Մորթին, ըստ Կոլոչի[19], ավելի կամ պակաս մթնագույն է, մազերն ու աչքերը ագռավի սևության, երեսն երկարավուն է, ճակատը նեղ, քիթը փոքր ինչ առաջ ընկած և երբեք տափակ, աչքերի և կոպերի մեջտեղի տարածությունը նեղ. ունեն սպիտակ ատամներ։

Բոշայի բնավորության հատկանիշ կողմերն են՝ աներեսությունը (անվերջ և անդադրում խնդրել), անհոգությունը, երբեք նա չի հոգում ապագայի մասին, ապրում է օրից օր, և սաստիկ եսասիրությունը. նա ոչ մի զոհաբերության ընդունակ չէ, մինչև անգամ յուր հիվանդ կնոջը ոչ միայն չի խնամում, այլև ուղարկում է հորանց տուն, ուր եթե մեռնի, հայրն է հոգալու թաղման ծախսերը, իսկ եթե առողջանա, նորից կվերադառնա ամուսնու մոտ։ Կառավարչություն, օրենքներ, կանոններ,

---

17 Патканянъ К. П. Цыгане, СПб., 1887.

18 Վանցյան Գ., Պատմական ակնարկ բոշաների անցյալից, «Մուրճ», 1894, № 7 և 8։

19 «Մուրճ», 1890, № 9։

սկզբունք, պատվի զգացմունք անտանելի են նրանց համար, ասում է Կոլոչին. անսահման անկախության զգացումը ներշնչում է նրանց մեջ բնությունը, որին այնքան մոտ ապրում են նրանք։ Նրանց համար ամբողջ երկիրը հայրենիք է, միայն թե իրենք իրենց ազատ զգան։ Ամեհ կլիմա նրանց համար հարմար է։ «Ուր լավ՝ անդ հայրենիք»։ Ահա թե ում համար է ասված (Կոլոչի)։

Ախալքալաքի գավառի բոշաները կիսանստակյաց են։ Ժամանակ առ ժամանակ սրանք խմբերով գաղթում են շրջակա Ախալցխայի, Աղեքսանդրապոլի, Արդահանի, Թիֆլիսի գավառները մի առ ժամանակ մնալու, իրենց մաղերը ծախելու և ողորմություն խնդրելու նպատակով։ Շատ հետաքրքիր տեսարան է ներկայացնում դրանց չուն։ Փառավորապես բազմած իշու վրա՝ կին բոշան բուրթ է մանում կամ գուլպա գործում, իշու գավակին նստած է մի երեխա, իսկ երկու կողքից, բակեղաթի «աչքերից» դուրս են նայում մի կամ երկու մանկիկ, որոնց հավասարակշռելու համար կախված են մաղեր։ Սրա ետևից ամուսինը երկար մահակը ձեռին առաջ է քշում էշը։ Մի ուրիշ կին էլ, մեջքին կապած յուր մանկիկը և մի քանի մաղ, ձեռին երկար մահակը կամաց առաջ է շարժվում։ Շատ անգամ պատահում է, որ կանայք ծննդաբերում են առանց մի որևէ օդնության, նորածնին պատահող առվակի մեջ լողացնելուց հետո կապում են իրենց մեջքին և շարունակում ճանապարհը։

Բոշաները նստակյաց կյանք չեն սիրում, երկրագործությամբ բոլորովին չեն պարապում։ Սրանց «Իմանաս սալի (սայլի) զուգոց, չիմանաս իշու զուգոց» անեծքն արդեն ցույց է տալիս, թե որքան արհամարհում են երկրագործությունը։

Այր բոշաները գլխավորապես պարապում են մաղագործությամբ, որի համար և հայերը նրանց կոչում են մաղագործ։ Բացի սրանից մի քանիսն էլ պարապում են պայտարությամբ, հասարակ դարբնությամբ և մանավանդ աշղությամբ։

Մի բոշա օրական կարող է շինել 6—8 մաղ, որոնցից միջին թվով կարող է վաստակել 60—80 կոպեկ։ Բայց որովհետև այնքան շատ չի ծախվում, ուստի և սրանք մեծ մասամբ անգործ են մնում և իրենց ժամանակն անց են կացնում առավելապես գինետներում, որպես օդու սիրահարներ և կամ ձմեռը՝ օդաններում, որպես աշղների և հեքիաթ ասողների ունկնդիրներ։ Անհամեմատ ծանր է կին բոշայի աշխատանքը. մինչդեռ ամուսինը տանն է մնում, կին բոշան ամբողջ օրը և շատ անգամ ամբողջ շաբաթներով և ամիսներով շրջում է քաղաքում և շրջակա

գյուղերը մաղերը ծախելու և ողորմություն խնդրելու։ Նորահարս բոշաները հինգ տարի շարունակ մնում են տանը և խնամում տան երեխաներին, կերակուր պատրաստում, կար անում և այլն, իսկ մյուսները միշտ երկ-երկու՝ ման են գալիս գյուղ ու քաղաք։ Բոշա կանայք ձգում են մեջքներին մի մի կաշե պարկ, սատացած նվերները մեջը դնելու, վրան ամրացնում են մի քանի սալա (տափարակ կողով), ձախ թևերից կախում մի քանի մաղ, որոնցից մի քանիսը երբեմն էլ ուղղակի գլուխներն են անց կացնում, գուլբեն կամ թեշիկը խրում են գոտու մեջ և առնելով հատ և երկար մահակը՝ այս ու այն տունը մտնում։ Փողոցներում երեխաները վազում կամթում են նրանց, որպեսզի իրենց դանակները սրանան, իսկ սրիկաները հաղար ու մի անվայել խոսքեր են ուղղում նրանց։ Բոշան յուր երկար մահակով «հասցնում է» երեխաներին և սուր պատասխաններ տալիս սրիկաներին։ Պետք է ասել, որ սրանք շատ սրախոս են և սարսափելի հայհոյել գիտեն։ Մտնելով մի տուն, սրանք առաջարկում են մի քանի բան դնել, և անմիջապես սկսում են գովել իրենց մաղն ու սալեն, կյուն ու ասեղը, որից հետո աննկատելի անցնում են գովալու տանտիկնոջ սիրունիկ աչերն ու բարությունը, նրա վերին աստիճանի ողորմածասիրությունը։ Մի բան ծախեն թե չծախեն, սկսում են խնդրել մի կտոր հաց, որն ստանալուց հետո մի կտոր պանիր են աղերսում ավելացնել, սրանից էլ հետո մի հին շոր, որովհետև երեխաները մերկ են, և այսպես շարունակ մինչև վերջնականապես մի բանում մերժեն նրանց։ Ամբողջ օրը դուրսն անցկացնելով և շներից ազատ տեղերում գուլպա գործելով կամ բուրդ մանելով բոշան վերադառնում է տուն և ամբողջ վաստակը տալիս ծուլլ ամուսնուն, որը շատ անգամ գործածում է այն յուր ծխախոտի կամ օղիի համար։

Բոշա կինը սաստիկ ստախոս, շատախոս, խաբեբա և փոքր ինչ գող է, սակայն և այնպես՝ նա սաստիկ բարոյական է։

Ախալքալաքի բոշաները կազմում են մի փոքրիկ համայնք, որ ենթարկվում են իրենց աթոռակալին։ Սա ընտրվում է բոշաներից և հաստատվում Ախալքալաքի գործակալ քահանայից «պահպանիչով»։ Սա մեծ հեղինակություն և հարգանք է վայելում բոշաներից և սրա միջոցով են նրանք վերջացնում իրենց ներքին գործերը, խռովությունները, և այս է պատճառը, որ նրանք երբեք չեն գանգատվում դատարաններում կամ հոգևոր առյաններում։

Ախալքալաքի բոշաները բոլորովին զուրկ են ուսումից, նրանցից դեռ ոչ ոք կարդալ-գրել չգիտե, գալրոցներում ևս ոչ մի բոշա երեխա չի ուսանում։

Մտավոր սնանկության հետ բոշաները կրոնական սնանկություն ևս ունին։ Սրանք թեև լուսավորչական են և բավական ջերմեռանդությամբ հաճախում են եկեղեցի, սակայն քրիստոնեությունից շատ քիչ բան է հայտնի նրանց։

Բոշաների բնակարանները բոլորովին նման են հայ գյուղացիների բնակարաններին։ Հանդերձները ևս ոչինչով չեն տարբերվում։

Այստեղի բոշաները խոսում են հայերեն, տեղական բարբառով, սակայն մի առանձին արտասանություն ունին։ Ընտանեկան լեզուն ևս այդ միևնույնն է, միայն երբեմն, երբ հայերից գաղտնի մի բան են ուզում միմյանց հայտնել, խոսում են իրենց, բոշերեն լեզվով։ Այս լեզուն պատկանում է հնդկա-եվրոպական գերդասատանին և հետզհետե մոռացվելով՝ այժմ սաստիկ աղքատ է։ Ենթարկվելով հայոց լեզվի ազդեցության, նա արդեն կորցրել է յուր հոլովման և խոնարհման ձևերը և ընդունել հայկականը։ Բոշերեն երգերը այժմ սաստիկ սակավաթիվ են, և մենք կարողացանք հավիլ իրենց բոշաներից լսել հետևյալ երկուսը, որ առաջ ենք բերում այդ լեզվի մասին մի գաղափար տալու նպատակով։

ԲՈՇԱՅԵՐԵՆ ԵՐԳԵՐ

Ա.

Ավե հոսել, կըմրուկ խաթե ակմ՝ ա նեա պարիս պավիս,
(Առի մոտս, երդումն կեր, մեկ էլ չը ընկնիս ոտիս)
Աթիս կու քվեմ մեբավիթ դռոդի կու խալավիթ,
(Ձեռիս կձգեմ ճեզ, պատռի կը լեղիդ)
Լուի կայեն, չտար կայեն, յաթմը կայեն, ակ կայեն.
(Երկու անգամ (ժամանակ) չորս անգամ, հինգ անգամ, մի անգամ)
Ավեր վեսեր էք դուգայիս, ղե կու մանկեք տիրավես,
(Ինչեր ևստեր եմ մոտս, ինչ կուզեմ ինձնից)
Սամել կամավոիք փանեցեք, սիսավես չե խալավես.
(Լավ բաներ ասացեմ, գլխես գնա խելիս)
Լուի կայեն, չտար կայեն, յաթմը կայեն, ակ կայեն։
(Երկու անգամ, չորս անգամ, հինգ անգամ, մի անգամ)
Հանես օղլին պագրեց՝ լոմ էմ պուշավեցեք տլարիս
(Հովհաննեսի որդին ասաց՝ բոշա եմ հարցրեք անունս)
Կամ մը ջանես յակվեն ավե, աթավես լե դմրավիս

(Բան մը գիտես՝ առաջ արի, ձեռիցս առ սազս)
Լուի կայեն, չտար կայեն, յաթմը կայեն, ակ կայեն.
(Երկու անգամ, չորս անգամ, հինգ անգամ, մեկ անգամ)

Բ

Ավե իննավ հոսել, վեսե դուգայիս,
(Արի, տղա, այստեղ, նիստ մոտս)
Բիեմ մանուս ավե նեա լես սըլարիս.
(Վախենում եմ մարդ գա, չտաս անուններս)
Ես բուհու կամ զանեմ նեա ֆեննաս թայիս,
(Ես շատ բան գիտեմ չլինես ընկերս)
Հեվիս լորեցիր իսա՝ մանուս ես մանուս,
(Թե որ գտար՝ մարդ ես մարդ)
Ավեմ վեսեմ հոտել կե դարիս պաշտաս
(Գամ նստեմ այդտեղ, ինչ ունիս հետս)
Սամլիկարեմ ճահրին բանթեմկու դաստաստաս
(Շինեմ մաղը կապեմ տասը-տասը)
Ճլավ կարե կուչեմ նեա կավես պաշտաս,
(Շուտ արա, կէրթամ չես գա հետս)
Հեվիս լորեցիր իսա՝ մանուս ես մանուս.
(Թե որ գտար՝ մարդ ես մարդ)
Ուստա Վանոն պագրեց տիրավեն թաճիս,
(Վարպետ Վանոն ասաց իրանից բանիս—երգ)
Կամ նա չաներս իսա մա պեսիր մաճիս,
(Բան չգիտես եթե որ մի մանիր կանգնո)
Ճուճռուվիմ կու պալտատ սընանես կու պիս.
(Կը կռվիմ հետդ, կը ճանաչես զիս)
Հեվիս լորեցիր իսա՝ մանուս ես մանուս:
(Թե որ գտար՝ մարդ ես մարդ):

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԲԱՅՏԱՐԶԱԿ ԹԻՎ

Ախալքալաքի գավառի բնակիչների թիվը
ըստ 1886թ. աշխարհագրության (աղ. 1)

	1895 թ. մոտ	
Քաղաքում . . .	4303	4602
Գավառում . . .	59496	61900
	63799	66502

Խուրթյան կողմից Ախալքալաքի գավառը Թիֆլիսի նահանգի բոլոր գավառների մեջ չորրորդ տեղն է բռնում։ Նրա մի քառակուսի վերստի վրա բնակվում է 28 հոգի։

Բոլոր գյուղերի թիվը 110 է, ուրեմն միջին հաշվով յուրաքանչյուր գյուղում բնակվում են 605 մարդ։

ՏՆԵՐԻ ԹԻՎԸ

Տների թիվը և նրա հարաբերությունը բոլոր բնակիչների թվի հետ երևում է հետևյալ աղյուսակից.

	Տների թիվը	Մի տանը բնակիչ
Քաղաքում	699	5,3
Գավառում	6809	8,7
Ամբողջ գավառում	7608	8,3

ԸՍՏ ՍԵՌԻ

Ախալքալաքի գավառի բնակիչների թիվը ըստ սեռի բաժանվում էր 1886 թ. աշխարհագրությամբ.

Քաղաքում . . .	2283 ար.	2020 իգ.
Գավառում . . .	31218 »	28278 »
Ի միասին . .	33501 »	30298 »
Ուրեմն՝ 100 բնակչից		
Քաղաքում	53,06 ար.	46,94 իգ.
Գավառում	52,47 »	47,53 »
Ամբողջ գավառում	52,51 ար.	47,49 իգ.

Եվ հարյուր արական սեռի մարդկանց գալիս է իգական սեռից

Ախալքալաքի գավառի բնակիչները 1886 թ. աշխարհագրությամբ

№ գաղաք և հասարակություն	Հայեր				Հունադավան						Դուխոբոր		Մահմեդական		Հրեա		Ծուխ	Բոլորը		Ընդհանուր թվով
	Լուս.		Կաթ.		Ռուս		Վրացի		Հույն											
	ար.	իգ.	ար.	իգ.	ար.	իգ.	ար.	իգ.	ար.	իգ.	ար.	իգ.	ար.	իգ.	ար.	իգ.		ար.	իգ.	
Ախալքալաք քղք.	2151	1918	12	3	36	21	22	23	22	18	—	—	9	6	25	28	799	2283	2020	4303
1 Արադովայի (13 գ.)	2871	2562	759	715	—	—	—	—	—	—	—	—	139	114	—	—	818	3769	3391	7160
2 Բարալետ. (23 գ.)	4218	3788	—	—	—	—	719	621	3	3	—	—	93	81	—	—	1014	5033	4493	9526
3 Վարեան (9 գ.)	1081	1007	1860	1863	—	—	130	108	29	23	—	—	427	378	—	—	768	3527	3199	6726
4 Վաչիանու (11 գ.)	3879	3405	—	—	—	—	25	27	—	—	—	—	2 8	229	—	—	851	4172	3661	7833
5 Գարելայի (8 գ.)	—	—	—	—	8	6	4	—	3	—	3288	3314	17	6	—	—	829	3320	33 26	6646
6 Դելիսկայի (9 գ.)	1565	1445	—	—	—	—	825	791	—	—	—	—	40	32	—	—	519	2430	2258	4698
7 Կարծախի (10 գ.)	1092	950	—	—	—	—	—	—	1	—	—	—	1053	877	—	—	441	2146	1827	3973
8 Սաթխայի (8 գ.)	2813	26 9	—	—	—	—	—	—	—	—	—	—	321	260	—	—	656	3134	2869	6003
9 Խըրթըզու (11 գ.)	13	12	—	—	—	—	222	214	—	—	—	—	1288	1058	—	—	417	1523	1294	2817
10 Էշտիայի (8 գ.)	922	849	1165	1044	1	—	—	—	—	—	—	—	75	57	—	—	496	2164	1950	4114
Ամբողջ գավառ	20605	18545	3792	3444	45	27	1947	1784	58	44	2388	3314	3720	3105	25	28	7605	33901	30290	63791

Քաղաքում	88,48
Գավառում	90,58
Ամբողջ գավառում	90,44

ԸՍՏ ՍԵՌԻ

Ախալքալաքի բնակիչների թիվը ըստ սեռի բաժանվում էր 1886 թ. աշխարհագրությամբ.

Քաղաքում . . .	2283 աբ.	2020 իգ.
Գավառում . .	31218 »	28278 »
Միասին	33501 »	30298 »

Ուրեմն՝ 100 բնակչից

Քաղաքում	54,06 աբ.	46,94 իգ.
Գավառում	52,47 »	47,53 »
Ամբողջ գավառում	52,51 »	47,49 »

Եվ հարյուր արական սեռի մարդկանց գալիս է իգական սեռից.

Քաղաքում	88,48
Գավառում	90,53
Ամբողջ գավառում	90,44

Այսպիսով, Ախալքալաքի գավառն այն սակավաթիվ գավառներից մինն է, ուր այր մարդիկ կանանցից ավելի են։

ԸՍՏ ԱԶԳՈՒԹՅԱՆ

Գավառիս բնակիչները 1894 թ. էին

Աղ. 2

ԱԶԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ	Քաղաքում			Գավառում			Ի միասին		
	աբ.	իգ.	երկու սեռը միաս.	աբ.	իգ.	երկու սեռ մի ասին	աբ.	իգ.	երկու սեռ մի ասին
1 Հայեր	2278	2012	4296	25196	20321	45312	27474	22333	49807
2 Ռուսներ	35	20	55	3651	3566	7217	3686	4586	7272
3 Վրացիներ	24	24	48	1921	1745	3666	1945	1769	3714
4 Հույներ	15	14	29	11	13	27	29	27	56
5 Լեհեր	4	2	6	—	—	—	4	2	6
6 Թուրքեր	8	14	22	2321	2029	4350	2329	2043	4372
7 Քրդեր	—	—	—	319	271	590	319	271	590
8 Հրեաներ	24	28	52	—	—	—	24	28	52
Բոլորը	2388	2114	4502	33422	27740	61162	35810	30059	65869

Այս աղյուսակից (աղ. 2) երևում է, որ այդ ազգերը կազմում են բոլոր ազգաբնակչության հետևյալ տոկոսը.

Հայեր՝ 71, ռուսներ՝ 11, վրացիներ՝ 5,6, թուրքեր՝ 6,6, մյուս ազգերը՝ 5,8։

Բոլոր ազգաբնակչության համեմատությամբ այս դավանություններին պատկանողները կազմում են (աղ. 4).

ԸՍՏ ԴԱՍԱԿԱՐԳԻ

Աղ. 3

Ջավախի բնակիչները բաժանվում են.

ԴԱՍԱԿԱՐԳԵՐ	Քաղաքի			Գավառի			Ամբողջ գավառի		
	ար.	իգ.	երկս	ար.	իգ.	երկս.	ար.	իգ.	երկս.
Աշխարհականներ									
տոհմական	8	12	20	1	1	2	9	13	22
անձնական	5	4	9	—	—	—	5	4	9
Մահմեդական բարձր դասակարգ	5	5	10	110	113	224	116	118	234
Հոգևորականություն									
Հայ լուսավորչական	8	7	15	53	45	98	61	52	113
Հունադավան	1	1	2	3	3	6	4	4	8
մյուս քրիստոնյաներ	—	—	—	10	6	16	10	6	16
մահմեդականներ	—	—	—	9	9	18	9	9	18
Պատվավոր քաղաքացիներ									
տոհմական	130	106	236	120	105	225	250	202	452
անձնական	—	—	—	—	—	—	—	—	—
վաճառականներ	52	44	96	—	—	—	52	44	96
Բուրժուաներ (bourgeois)	1896	1748	3644	—	—	—	1896	1748	3644
Արբունի գյուղացիներ	—	—	—	31914	28636	60550	319.4	28636	60550
Սեփականատեր գյուղացի.	—	—	—	70	69	139	70	69	139
գաղթականներ	—	—	—	—	—	—	—	—	—
Պաշտոնաթող և պահեստի հողնված սոորին պաշտոնյաներ	26	14	40	12	11	23	38	25	63
Օտարահպատակներ	69	61	130	8	3	11	77	64	141
Վերաբնակվողներ	199	121	320	26	18	44	228	139	364
Ընդամենը	2392	2123	4522	32337	29019	61356	34736	31133	65869

ԸՍՏ ԴԱՎԱՆՈՒԹՅԱՆ

Գավառիս բնակիչները պատկանում են հետևյալ եկեղեցիների, 1894 թ.

Աղ. 4

	I		II		III		IV		V		VI				VII		VIII		
	Ախտատոմ Տաճ.		Լուսավ. Տաճ.		Պահպանչ.		Մկրտարանի		Հռոմէ. Եկեղ.		Մահմեդական				Մոսխովական		Ընդամենը		
											Մզկիթների		Շէհի						
	Ար.	Իգ.	Ար.	Իգ.	Ար.	Իգ.	Ար.	Իգ.	Ար.	Իգ.	Ար.	Իգ.	Ար.	Իգ.	Ար.	Իգ.	Ար.	Իգ.	Երկուսն
Քաղաքի	2259	2012	19	10	50	34	—	—	4	2	8	14	—	—	24	28	2364	2090	4454
Գավառի	21363	16841	3833	3480	2103	1815	3536	3560	—	—	2640	2300	—	—	—	—	33475	27996	61471
Ամբողջ գավառի	23622	18843	3852	3490	2153	1849	3536	3560	4	2	2648	2314	—		24	28	35839	30086	65925
	424665		7342		4002		7096		6		4962		—		72				

Հայ լուսավորչականներ՝ 64,4, հայ կաթոլիկներ՝ 11,2, հունադավաններ՝ 6,0, աղանդավորներ՝ 10,8, մահմեդականներ՝ 7,6։

Մյուս աղյուսակից (աղ. 3) երևում է, որ ըստ դասակարգերի ամբողջ աղգաբնակչությունը տալիս է հետևյալ տոկոսը.

Աղնվականներ՝ 0,4, հոգևորականներ՝ 0,2, պատվավոր քաղաքացիներ՝ 0,8, բուրժուաներ՝ 5,5, արքունի գյուղացիներ՝ 91,1, սեփականատեր գյուղացիներ, պաշտոնաթող և պահեստի թողնված ստորին պաշտոնյաներ, օտարահպատակներ և ժամանակավոր ապրողներ՝ 2,0։

ԱԽԱԼՔԱԼԱՔԻ ԳԱՎԱՌ

Աղ. 5

Աբրկան սեռի բնակիչները ըստ հասակի, 1886 թ. աշխարհագրության համեմատ

Քաղաքում	0—1 տարեկան	1—2 »	2—3 »	3—4 »	4—5 »	5—6 »	6—7 »	7—8 »	8—9 »	9—10 »	10—11 »	11—12 »	12—13 »	13—14 »	14—15 »	15—16 »	16—17 »
հայեր	152	74	63	68	54	50	59	45	47	44	29	32	57	48	53	48	54
ռուսներ	—	1	1	—	—	1	1	—	1	—	—	—	—	1	1	1	2
վրացիներ	1	1	1	2	—	—	—	—	—	—	1	1	1	—	—	—	1
հույներ	1	—	—	—	—	1	—	—	1	2	1	—	—	—	2	—	1
հրեաներ	2	3	3	1	1	—	—	—	2	—	—	—	—	—	—	—	—
թուրքեր	—	—	—	—	—	—	1	—	—	—	—	—	—	—	—	—	—
քրդեր	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—	—
	156	80	68	71	55	52	61	45	51	46	31	33	58	49	56	49	58
Գավառում	3002	1130	976	871	845	846	791	852	596	729	535	396	817	684	772	802	743
Ընդամենը	3158	1210	1044	942	900	898	852	897	647	785	566	429	875	733	828	851	80

Այս աղյուսակը (Աղ. 5 և 5 ա) միջոց է տալիս բնակիչներին տնտեսական տեսակետից բաժանել հինգ խմբերի. ա) մինչև 15 տարեկաններ, այսինքն այնպիսիք, որոնք դեռ չեն հասել այն հասակին, որ իրենց աշխատանքով փոխարինեին այն, ինչ հասարակությունը կծախսեր նրանց

պահպանության համար. բ) 15—20 տարեկաններ, այսինքն ինքնուրույն տնտեսական կյանքի համար պատրաստվածներ. գ) 20—60 տարեկաններ, այսինքն ուժերի զարգացման և գործունեության կատարյալ շրջանին պատկանողներ. դ) 60—70 տարեկաններ, այսինքն ուժերի սպառման շրջանում գտնվողներ և ե) 70 տարեկանից ավելիներ, որոնք արդեն դադարել են աշխատելուց։

Աղ. 5ա

17—18 տ.	18—19 »	19—20 »	21—30 »	31—40 »	41—50 »	51—60 »	61—70 »	71—80 »	81—90 »	91—100 տ. և ավելի	Ընդամենը արական սեռի	Ընդամենը իգական սեռի	Բոլորը միասին սեռի
60	49	45	390	287	202	101	38	6	5	—	2160	1919	4179
—	2	—	4	6	1	5	6	3	—	—	38	23	61
1	1	1	6	4	4	2	—	—	—	—	27	25	52
1	—	—	4	3	4	1	—	—	—	—	22	18	40
—	—	—	3	3	6	—	—	1	—	—	25	28	53
—	—	—	1	1	1	—	-	—	—	—	4	6	10
—	—	—	4	1	—	—	—	—	—	—	5	—	5
61	52	46	412	309	215	109	45	10	5	—	2283	2020	4303
790	675	707	5106	3728	2433	1463	625	138	52	6	31218	28278	59496
851	727	753	5518	4037	2648	1572	670	248	57	6	33501	30293	63799

Այսպես ուրեմն, մեր հետազոտած գավառում բնակիչներն այդ հինգ դասակարգերի վրա այսպես են բաժանվում.

	Քաղաքում		Գավառում	
	բացարձակ թիվ	%	բացարձակ թիվ	%
0—15 տարեկ.	912	39,9	14742	46,9
16—20 »	266	11,7	2915	9,8
21—60 »	1045	45,8	12730	40,5
61—70 »	45	2,0	635	2,1
70 և ավելի »	15	0,6	196	0,7

ԱԶԳԱԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆ

Ախալքալաքի գավառում միջին թվով տարեկան ամուսնանում են 521 զույգ, որ հասակի համեմատ հետևյալ կերպով են դասավորվում.

	Արական	*Իգական*
12—15 տարեկան	—	*15*
15—20	*124*	*343*
20—25	*176*	*111*
25—30	*155*	*20*
30—35	*43*	*15*
35—40	*10*	*7*
40—45	*7*	*6*
45—50	*3*	*3*
50—55	*3*	*1*
	521	*521*

Սրանից հետևում է, որ ամուսնացողները ըստ հասակի կազմում են հետևյալ տոկոսը.

	Արական	*Իգական*
15—20 տարեկան	*23,8*	*65,8*
20—25	*33,8*	*21,3*
25—30	*29,8*	*4*

Ըստ ազգությունների ամուսնացողների թիվը դասակարգելու համար մենք գտանք միայն Նագեժդինի հետևյալ, 1876—1880 թվականների ամուսնության աղյուսակը.

	Մինչև 20 տարեկ.	*20—40*	*40—60*	*բոլորը*
Հայեր	*1274*	*310*	*23*	*1607*
Վրացիներ	*87*	*49*	*1*	*137*
Մահմեդականներ	*162*	*76*	*6*	*244*
Ընդամենը	*1523*	*435*	*30*	*1988*

ԾՆՆԴԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Ախալքալաքի ամբողջ գավառում 1886—1890 թվականներին եղել են ծնունդներ՝

1886 թվին	3116
1887 »	3431
1888 »	3352
1889 »	3383
1890 »	3291
Ընդամենը՝	16623
Ուրեմն՝	
Միջին թվով՝	3324

Հետևապես գավառի ընդհանուր ծննդաբերությունը հասնում է 4,63 կամ յուրաքանչյուր հազար բնակչին գալիս է 46,3 ծնունդ։ Ուրեմն այս գավառի ծննդաբերությունը 8,8 բարձր է յուր, Թիֆլիսյան նահանգի ընդհանուր ծննդաբերությունից (37,5), ինչպես նաև նույն նահանգի մյուս գավառներից։

Ըստ ազգության ծնունդների թիվը, Նադեժդինի 1875—80 թ. հետազոտության համաձայն այսպես է դասակարգվում։

	Բնակիչների թիվը	Մինվել է		Մի ծնողի վրա գալիս է բնակիչ	Ելից 1000 հոգի
		1 տարեկան	5 տարեկան		
Հայեր	29919	7382	1476	20,2	49,1
Վրացիներ	3532	683	136	26,3	38,1
Մահմեդականներ	6267	1089	218	28,5	35,1
Ընդամենը՝	39718	9155	1831	21,7	46,1

Հայերից ծնվում են 49,1, վրացիներից հազար հոգուն՝ 10,6 և մահմեդականներից՝ 13,8 ավելի և հազար հոգուն 6 ավելի ամբողջ նահանգում ծնված հայերից (42,8)։ Վրացիների և մահմեդականների այս գավառի ծնունդների թիվը՝ 38,5 և 35,3, նույնպես բարձր է ամբողջ նահանգի միևնույն ազգերի ծննդաբերության թվից՝ 36,8—31,8 յուրաքանչյուր հազար բնակչին[20]։

Կանանց թվի համեմատությամբ ընդհանուր արգասավորությունը երևում է հետևյալ աղյուսակից.

---

20 *Надеждин*, Описание Тифлисской губернии.

	կանանց թիվը	Մնունդների տարեկան միջին թիվը	Մի ծնունդ ընկնում է կանանց	1000 կանանցից ծնվել են
Հայեր	14036	1476	9,5	105
Վրացիներ	1666	136	12,3	81
Մահմեդական.	3164	218	14.3	69
Ընդամենը՝	18866	1831	10,1	97

Ախալքալաքի գավառում արգասավորությունը՝ հազար հոգուն 97 ծնունդը, նրա նահանգի ընդհանուր արգասավորությունից (80) բարձր է։

Հայերի արգասավորությունը (105) բարձր է ինչպես գավառի մյուս բոլոր ազգությունների, այնպես և նրա ամբողջ նահանգի հայերի ընդհանուր արգասավորությունից (89՝ հազար կնոջ)։

Ամիսների համեմատ ծնունդների թիվը 1875—1880 թվականներում այսպես է դասակարգվում[21].

Մնունդ	Հղութ.	Հայեր		Վրացիներ		Մահմեդ.		Բոլորը	
		ար.	իգ.	ար.	իգ.	ար.	իգ.	ար.	իգ.
Հունվ.	Ապրիլ	378	232	34	29	50	46	462	407
Փետրվ.	Մայիս	334	315	34	32	55	48	423	395
Մարտ	Հունիս	330	985	30	32	58	57	418	374
Ապրիլ	Հուլիս	279	239	27	29	56	54	362	322
Մայիս	Օգոստ.	295	251	36	26	54	44	385	321
Հունիս	Սեպտ.	301	259	21	23	41	43	866	325
Հուլիս	Հոկտ.	314	275	21	26	46	36	381	337
Օգոստ.	Նոյեմբ.	345	301	23	26	52	40	420	367
Սեպտ.	Դեկտ.	337	322	23	26	35	32	395	380
Հոկտ.	Հունվ.	344	323	32	22	51	38	521	383
Նոյեմբ.	Փետրվ.	354	311	29	22	48	41	431	399
Դեկտ.	Մարտ.	299	340	42	38	42	19	385	391
	Բոլորը	3910	3473	352	331	591	498	4833	4302

21 *Пантюхов И. И.*, Ахалкалакский уезд, медико-антропологический очерк, Тифлис, 1892.

Այս աղյուսակից հետևում է, որ ծնունդների թիվը յուր մաքսիմումին հասնում է հունվարին (հղությունը պատահում է ապրիլին, երբ գյուղացիներն արդեն ցանած են լինում արտերը), իսկ մինիմումին իջնում է հունիսին (հղությունը պատահում է սեպտեմբերին, գյուղացիների աշխատանքի ամենասաստիկ ժամանակ)։

Բացի սրանից, այս աղյուսակից հետևում է, որ հարյուր արու երեխաների հմմտ. ծնվում են 89 աղջիկ. ամենաքիչը մահմեդական վրացիների՝ 84 և ամենաշատը՝ հունադավան վրացիների մեջ՝ 94։

ՆՆՋԵՑՅԱԼՆԵՐ

Ախալքալաքի գավառում հինգ տարիների ընթացքում եղել են հետևյալ թվով ննջեցյալներ.

	Արական	Իգ.	Միասին
1886 թվին	944	796	1637
1887 »	842	799	1641
1888 »	991	753	1744
1889 »	1300	1273	2573
1890 »	952	767	1719
Ընդամենը՝	5025	4388	9314
Ուրեմն			
Միջին թիվ.	1005	877	1863

Հետևապես և՝ յուրաքանչյուր հազար բնակիչից մեռնում է 28,3 մարդ։ Հարյուր աղամարդի հմմտ. մեռնում է 89 կին։

Վերոհիշյալ թվերն ես ստացել եմ տեղական ոստիկանատնից, իսկ ազգությունների, ամիսների և հասակի համեմատ ննջեցյալների թիվն այնտեղ չգտնելով, ես ստիպված քաղում եմ Պանտյուխովի հիշած Նադեժդինի հետազոտությունից[22]։

Այսպես՝ հինգ, 1875—1879 թթ. ընթացքում ամիսների և ազգությունների համեմատ եղել են ննջեցյալներ (աղ. 6)

Ամենից շատ մահ պատահում է հունվարին—10,6% և մարտին——10,5%, իսկ ամենից քիչ՝ նոյեմբերին—7% և դեկտեմբերին—5,7% տարեկան միջին թվով։ Ուշադրության արժանի է, որ մայիս, հունիս, հուլիս և օգոստոս ամիսներին, երբ կանանց տնային աշխատանքների

22 Пантюхов И. И. Ахалкалакский уезд, медико-антропологический очерк, Тифлис, 1892.

	Հայեր		Վրացիներ		Մահմեդ.		Բոլորը	
	ար.	իգ.	ար.	իգ.	ար.	իգ.	ար.	իգ.
Հունվար	267	234	17	11	77	73	361	318
Փետրվար	208	180	9	11	67	44	284	235
Մարտ	262	217	12	15	93	59	367	291
Ապրիլ	263	231	9	8	38	38	310	277
Մայիս	232	231	15	10	26	32	273	274
Հունիս	196	186	16	18	28	45	240	249
Հուլիս	209	198	11	9	22	42	242	247
Օգոստոս	267	266	7	20	54	41	328	327
Սեպտեմբեր	217	202	7	4	31	32	255	238
Հոկտեմբեր	225	181	6	11	34	31	265	223
Նոյեմբեր	193	178	5	11	28	31	226	220
Դեկտեմբեր	160	135	11	9	19	31	190	175
Բոլորը	2699	2439	125	137	517	499	3341	3075
Երկու սեռից	5138		262		1016		6416	

վրա ավելանում են և դաշտային աշխատանքները, կին ննջեցյալների թիվը կամ հավասարվում, կամ անցնում է տղամարդկանց թվից։ Հայ և մահմեդական ննջեցյալների թվերն ըստ ամիսների համապատասխանում են, իսկ հունադավան վրացիների ննջեցյալների թիվը, դուցե, պակաս բարձրության և առողջարար տեղերում բնակվելու պատճառով, տարբերվում է ընդհանուրից և ամենաբարձրը լինում է հունիսին 13% տարեկան, միջին թվով։

Ըստ հասակի և ըստ ազգությունների հինգ տարվա ընթացքում եղել են ննջեցյալներ (աղ. 7)։

Աղ. 7

Հասակը	Հայեր		Վրացիներ		Մահմեդ.		Բոլորը	
	ար.	իգ.	ար.	իգ.	ար.	իգ.	ար.	իգ.
1	2	3	4	5	6	7	8	9
մինչև 1 տարեկ.	518	433	7	6	63	56	588	495
1—2 տարեկան	525	467	23	18	67	73	615	658
2—3 »	375	336	18	22	46	42	439	400

1	2	3	4	5	6	7	8	9
3—4	190	195	9	12	27	32	226	239
4—5	150	124	2	5	20	25	172	154
5—10	252	194	16	13	46	53	324	260
10—15	84	66	8	9	26	25	118	100
15—20	50	47	5	5	19	8	74	60
20—25	40	44	4	2	15	25	68	71
25—30	48	70	7	5	20	17	75	92
30—35	49	74	3	7	12	25	64	106
35—40	41	58	1	3	17	22	59	83
40—45	41	62	4	5	27	12	72	79
45—50	36	37	3	3	15	9	54	49
50—55	46	37	—	8	19	10	63	55
55—60	20	17	3	2	8	15	31	34
60—65	43	35	4	4	15	16	62	55
65—70	32	17	3	3	14	9	49	29
70—75	51	47	4	4	16	8	71	59
75—80	29	20	1	—	7	8	37	28
80—85	27	30	—	1	14	4	41	35
85—90	10	9	—	—	1	3	11	12
90—95	14	8	—	—	1	—	14	—
95—100	4	8	—	—	1	—	6	8
100 և ավելի	5	4	—	—	1	2	6	6
Ընդամենը	2699	2439	125	137	517	499	3341	3075

Հայերից 25—50 տարեկան կանայք ավելի են մեռել, քան թե տղամարդիկ, այսպես՝ 100 տղամարդու հմմտ. մեռել են կանայք՝ 25—30 տ.— —144, 35—40 տ.—140, իսկ բոլորը՝ մինչև 50 տար.—124։ Վրացիների մեջ տղամարդկանց համեմատությամբ կանայք ամենից շատ մեռնում են 35—40 տարեկան հասակում, հարյուր տղամարդի հմմտ. 160 կին, իսկ մահմեդականների մեջ 35—40 տ. հասակում հարյուրին՝ 164 կին։ Աննդաբերության հասակում կանայք անհամեմատ ավելի են մեռնում։

Ըստ հասակի և ազգությունների բոլոր ննջեցյալներից յուրաքանչյուր հազարին ընկնում է (աղ. 8)։

	Հայեր	Վրացիներ	Մահմեդականներ
Մինչև 1 տար.	186	49	115
1—2 „	195	157	136
2—3 „	138	155	84
3—4 „	74	79	56
4—5 „	53	27	45
5—10 „	89	111	99
10—15 „	29	65	51
15—20 „	19	39	27
20—25 „	18	23	40
25—30 „	23	45	37
30—40 „	44	52	76
40—50 „	34	57	63
50—60 „	23	49	52
60—70 „	25	52	54
70—80 „	29	35	39
80—90 „	15	4	21
90—100 „	6	—	2
100 ավելի „	1	—	3

Մինչև մի տարեկան երեխաներ վրացիների մեջ մեռել են երկու անգամ ավելի քիչ, քան թե մահմեդականների մեջ և երեք անգամ ավելի քիչ, քան թե հայերի մեջ. իսկ մինչև հինգ տարեկան երեխաների մահվան տոկոսը հայերի մեջ է 64, վրացիների մեջ՝ 46, մահմեդականների մեջ՝ 44. իսկ ծննդից մինչև տաս տարեկան երեխաներինը հայերի մեջ՝ 73, վրացիների մեջ՝ 57, մահմեդականների մեջ՝ 53։

Ախալքալաքի գավառում մանուկների մահն ավելի սաստիկ է ոչ միայն Թիֆլիսյան նահանգի բոլոր գավառներից, այլև Ռուսաստանի մանուկների մահից։ Այսպես՝ ըստ հասակի բոլոր ննջեցյալներից յուրաքանչյուր հարյուրին ընկնում է (աղ. 9)։

Ա.դ. 9

	0—10 տ.	10—20 տ.	20—50 տ.	50—70 տ.	70—100 տ.
Ախալքալաք քաղաք	70	2	13	5	10
Ախալքալաքի գավառ	69	5	13	6	5
Ախալցխու գավառ	48	6	25	12	7
Տիոնեթու գավառ	27	9	33	17	12
Թիֆլիսի նահանգ	41	8	29	14	7
Ռուսաստան	62	4	15	12	6

Ծնունդների թիվը համեմատելով ննջեցյալների թվի հետ, կստանանք ազգաբնակչության տարեկան միջին աճը։

Ա.դ. 10

	Ծնվել է	Մեռել է	Տարեկան ավելաց. է	1000 բնակիչ. ավելաց. է
Հայեր	1476	1027	449	15
Վրացիներ	136	52	84	23
Մահմեդական.	218	203	515	2
Բոլորը	1831	1282	549	14

Ազգաբնակչության ընդհանուր աճումը գավառում հասնում է հազարին 14, գրեթե հավասար նահանգի միջին աճման (15). բայց ազգությունների հայերի աճումը հավասար է նույն նահանգի հայերի աճման, վրացիների աճումը՝ 23, բարձր է նույն նահանգի վրացիների աճումից (12), իսկ մահմեդականների աճումը՝ 2, պակաս է նույն նահանգի նրանց աճումից (4)։ Որովհետև վրացիների աճման թվերը շատ քիչ են, ուստի սրանք չեն կարող արտահայտել ամբողջ գավառի վրացիների աճումը, բայց հայերի աճումը, որ համարյա ութ անգամ ավելի է մահմեդականների աճումից, ցույց է տալիս այս վերջիններիս կենսաբանական և առողջապահական պայմանների սաստիկ խղճալի դրությունը։

ՋԱՎԱԽՔԻ ԲՆԱԿԱՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՈՒԺԵՐԸ ԵՎ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Ա. ԳՅՈՒԼԱՅՎՈՑ

Ախալքալաքի գավառի բնակիչները գլխավորապես պարապում են երկրագործությամբ, այգեպանությամբ և պարտիզպանությամբ։

Ամբողջ գավառի հողը հաշվվում է 2650 քառ. վերստ, որից երկրագործության համար հարմար է միայն 81613 դեսյատինը։ Այս հողից 42641 դեսյատինը արքունական է, իսկ 38972 դեսյատինը կալվածատերերի է պատկանում։

Պ. Վերմիշևի հետազոտության համաձայն, այս գավառի բնակիչներին բաշխված է հետևյալ քանակությամբ և տեսակի հող (աղ. 11)։

Աղ. 11

	Ընդհանրապես	Այգու	Վարելահող		Մարգագետին	Վարելահողի, մարգագետնի և այգու տակ	Արոտատեղի	Ընդամենը
			Ջրարբի	Անջրդի				
Բացարձակ թիվ դեսյատինի	814,5	613,5	183	44168,7	11197,7	56162,9	33976,8	90954,20
Ամբողջ բաշխված հողի համեմատությամբ %	0,89	0,67	0,2	48,56	12,30	62,62	37,38	

Այս աղյուսակից երևում է, նախ, որ թեև այս գավառում բավական տեղ են բռնում այգիները, բայց համեմատելով ամբողջ տարածության հետ մի տոկոս էլ չեն կազմում։

Երկրորդ, որ այս գավառում ջրարբի արտեր համարյա չկան։

Երրորդ, որ անհարմար հողը բոլոր հողի $^1/_3$-ից փոքր ինչ ավելի է։

Չորրորդ, որ վարելահողը, պարտեզի, այգու և չայիրի հողերը հարաբերում են արոտատեղերին և անհարմար հողերին այնպես, ինչպես՝ 1։0,6 և

Հինգերորդ, որ չայիրները համեմատաբար շատ են, և սրա պատճառն այն է, որ դուխոբուրները շատ արտեր չայիրներ են դարձրել։

Տեսնենք, թե յուրաքանչյուր տանը և յուրաքանչյուր հոգուն որքան բաշխված հող է ընկնում (աղ. 12)։

Վարելահող, չայիր և այգի			Բոլոր հողը		
Ծուխին	Մի հոգուն երկու սեռից	Մի աշխատավորին	Ծուխին	Մի հոգուն երկու սեռից	Մի աշխատավորին
12,91	1,43	4,27	20,90	2,32	6,92

Այս աղյուսակից (աղ. 12) երևում է, որ գյուղացիք շատ քիչ հող ունեն։

Այժմ տեսնենք, թե բաշխված հողն ինչպես է բաժանված զանազան գյուղերում։ Հետագա աղյուսակներում (աղ. 13, 14, 15) Պ. Վերմիշևը գյուղերը զանազան խմբերի է բաժանել, նայելով, թե յուրաքանչյուր ծուխին, մի հոգուն (երկու սեռից) և մի աշխատավորին որքան հող է ընկնում։

Ախալքալաքի գավառում ամենից շատ են այն գյուղերը, որոնք ունեն յուրաքանչյուր ծուխին 10—15 դեսյատին հարմար և 10—15 դ. անհարմար հող. երկու սեռից յուրաքանչյուր հոգուն 1—2 դ. հարմար, այսինքն վարելահող, չայիր և այգու և այդչափ էլ բոլոր տեսակ հողերից։ Յուրաքանչյուր աշխատավորին 3—5 դ. հարմար, և այդչափ էլ բոլոր հողերից (աղ. 16, 17, 18)։

Բացի հողի սակավությունից, երկրի կլիման ևս սաստիկ արգելք է լինում երկրագործությամբ պարապելու։

Շատ տարիներ վաղահաս ցրտերը, երաշտը, հաճախ տեղացող կարկուտը և դաշտերի մկներն ահագին վնասներ են տալիս ցանքսերին։ Ցրտերի պատճառով աշնանացան համարյա չեն անում, այլ շատանում են միայն գարնանացանով։

Եվ բացի այն, որ մշակում են հողը բոլորովին նահապետական ձևով, անասնոց աղբով էլ չեն պարարտացնում, որովհետև գավառում անտառներ չլինելու պատճառով անասունների աղբը վառելու համար են գործածում։

Աղ. 13

Երկու տեսից յուրաքանչյուր նոցուն ընկած բաշխված նոցի համախտյունը.

| Ֆոլոր հոդ | Վարելահող այգի և չայլեր | Գյուղերի միջև | | |

Այս աղյուսակներից մենք տեսնում ենք, նախ՝ այն գյուղերի թիվը, որոնց յուրաքանչյուր ծուխն ունի (աղ. 16)։ Երկրորդ՝ այն գյուղերի թիվը, որոնց երկու սեռի բնակիչներից յուրաքանչյուրին ընկնում է (աղ. 17)։

Աղ. 16

	1—5 դ.	5—10	10—15	15—20	20—30	30-ից վեր
Վարելահող և մարգ	4	17	28	10	7	3
Բոլոր հող	1	4	19	16	15	14

Աղ. 17

	Մինչև 1 դ.	1—2	2—3	3—4	4-5	5-ից վեր
Վարելահող և մարգ	15	42	9	2	1	—
Բոլոր հող	6	34	13	6	10	—

Երրորդ, այն գյուղերի թիվը, որոնց յուրաքանչյուր աշխատավորին ընկնում է (աղ. 18)։

Աղ. 18

	Մինչև 1 դ.	1—3	3—5	5—7	7—10	10-ից վեր
Վարելահող և մարգ	2	15	35	11	4	2
Բոլոր հող	—	5	21	20	9	14

Աղ. 14

Յուրաքանչյուր ծնկին բաժնված հողի հատկությունը

Բոլոր հող.	Դիտարկված ծնկեր	Ամբողջ հող.	Դիտարկված ծնկեր	1—2 դեսյ.
1	1	1	1	2—3
1	—	1	1	3—4
—	—	—	1	4—5
1	1	1	1	5—6
—	—	1	1	6—8
—	—	1	3	7—8
1	2	4	8	8—9
4	4	7	7	9—10
4	5	3	4	10—11
2	4	7	7	11—12
6	—	1	6	12—13
4	4	1	2	13—14
3	3	2	—	14—15
3	3	—	1	15—16
2	1	1	2	16—17
1	3	2	—	17—18
1	2	—	1	18—19
2	1	—	—	19—20
1	—	—	—	20—21
—	—	—	—	21—22
—	—	—	—	22—23
—	—	—	—	23—24
—	—	—	—	24—25
—	—	—	—	25—26
—	—	—	—	26—27
—	—	—	—	27—28
—	—	—	—	28—29
—	—	—	—	29—30
—	—	—	—	30—35
—	—	—	—	35—40
—	—	—	—	40 և ավելի

Աղ. 15

Յուրաքանչյուր ոչխասպահին բնթող բաժնված հողի հատկությունը

Բոլոր հող.	Դիտարկված ծնկեր	Ամբողջ հող. ըստ դիտարկ. ծնկ.	1 դեսյ.
1	2	2	1—2
2	3	3	2—3
3	12	12	3—4
11	21	21	4—5
10	14	14	5—6
12	4	4	6—7
	7	7	7—8
4	—	—	8—9
4	3	3	9—10
1	1	1	10—11
1	—	—	11—12
—	—	—	12—13
4	2	2	13—14
1	—	—	14—15
1	—	—	15—16
2	—	—	16—17
1	—	—	17—18
—	—	—	18—19
—	—	—	19—20
—	—	—	20—21
—	—	—	21—22
—	—	—	22—23
—	—	—	23—24
—	—	—	24—25
—	—	—	25—26
—	—	—	26—27
—	—	—	27—28
—	—	—	28—29
—	—	—	29—30
—	—	—	30—35
—	—	—	35—40

Բացի ցորենից, ցանում են գարի, որ լեռնոտ և ոլոխոբուրների գյուղերում աղում և հաց են թխում, կտավատ, որից ձեթ են հանում, և կարտոֆիլ։ Թե որքան տեղ են բռնում սրանցից յուրաքանչյուրը, ցույց է տալիս հետևյալ աղյուսակը (աղ. 19)։

Աղ. 19

	Ցորեն	Գարի	Կտավատ	Կարտոֆիլ
Բացարձակ թիվ՝ դեսյատինով հաշված	42730	36230	1863	790
% բոլոր հողի համեմատությամբ	52,35	44,43	2.37	0,85

Հինգ տարիների ընթացքում ստացված է ցորեն և գարի.

1885 թվին	507 826 չետվերտ
1886 »	355 700 »
1887 »	214 176 »
1888 »	230 787 »
1889 »	283 037 »
Ուրեմն ընդամենը	1 591 526 չետվերտ
միջին թ.	318 305 »

Գավառում օղու գործարաններ չկան, և օղի քաշելն ու երկրագործությունն այստեղ միմյանց հետ կապ չունին։ Ավելացած ցորենն առավելապես կազմում է արտաքին վաճառականության նյութը։

Այգեպանությամբ պարապում են Խրթիրդու ձորակում և Խզաբավրա ու Սարո գյուղերում։ Ամբողջ գավառում ընդամենը 274 այգի կա, որ բռնում է 613,5 դեսյատին տեղ։ Սրանից 36 դեսյատինը միայն բռնված է խաղողի որթերով, մնացած տարածության վրա աճում են կեռասի, հոնի, խնձորի, տանձի, սերկևիլի, դեղձի, ծիրանի, թթի, կաղինի և ընկուզի ծառեր։

Բացի այն, որ այս մրգերը թարմ-թարմ վաճառում են գավառում, Թիֆլիսում ու Աղեքսանդրապոլում, այլև պատրաստում են բաքմազ, պաստեղ, քյոմա և փարվարդա։

Խաղողից գինի են քաշում, սակայն սա թույլ և մինչև անգամ փոքր ինչ թթվաշ է լինում, որովհետև ամռան վերջին ցուրտը շուտ ընկնելու պատճառով խաղողը դեռ չհասած են քաղում, ուստի և չի արտահանվում և սպառվում է միայն գավառներում։

Հինգ տարիներին քաշված է հետևյալ քանակությամբ գինի.

1885 թվին	. . . . .	120 վեդրո
1886 »	. . . . .	81 »
1887 »	. . . . .	167 »
1888 »	. . . . .	143 »
1889 »	. . . . .	450 »
Ուրեմն	ընդամենը՝	961 վեդրո
	միջին թվով՝	192,2 »

Այգու մրգերի վաճառումից հինգ տարվա ընթացքում ստացվել է.

	Փութ	Արժեք	
		Ռուբլի	Կոպ.
1885 թվին	12000	6000	—
1886 »	10000	5000	—
1887 »	6500	3250	—
1888 »	14000	7000	—
1889 »	17000	8500	—
Ուրեմն ընդամենը	59500	29750	—
միջին թ.	11900	5900	—

Խրթըզ, Մարգաստան, Նաքալաքև, Ծունդա և այլ մի քանի գյուղերում մշակվում է և ծխախոտ։

Այս տարի ծխախոտի արդյունաբերությունը թեև անցյալ տարվանից փոքր ինչ պակաս է, բայց նախորդ տարիներից անհամեմատ լավ է։ Հինգ տարիների ընթացքում արդյունաբերված է ծխախոտ.

	Քանակ	Արժեք	
	փութ	ռուբլի	կոպ.
1885 թվին	45	225	—
1886 „	70	350	—
1887 „	19	76	—
1888 „	650	2480	—
1889 „	500	2000	—
Ութեմն ընդամենը	1284	5131	—
միջին թ.	257	1026	20

Առավելապես լեռնային և դուխոբուրների գյուղերում պարապում են պարտիզպանությամբ, ցանում են մեծ քանակությամբ կարտոֆիլ, կաղամբ, տակ, գազար, շաղգամ, սոխ, համեմներ և այլն։

Հինգ տարիների ընթացքում քաղված է պարտիզի բույսերից հետևյալ քանակությամբ.

	Քանակ	Արժողություն	
	փութ	ռուբլի	կոպ.
1885 թվին	6035	1974	—
1886 „	5926	775	—
1887 „	4541	455	—
1888 „	3863	876	—
1889 „	3698	1939	—
Ութեմն ընդամենը	24063	6019	—
միջին թ.	4812	1204	—

Կլիմայի ցրտության և եղանակի արագ փոփոխվելու պատճառով գյուղատնտեսության այս ճյուղը մի առանձին օգուտ չի տալիս, որովհետև բույսերը հաճախ մրսում են։

Վերջապես խոտի արդյունաբերությունը հինգ տարիների ընթացքում եղած է.

1885 թվին	. . . . .	950 500
1886 »	. . . . .	870 000
1887 »	. . . . .	619 880
1888 »	. . . . .	572 119
1889 »	. . . . .	391 308
Ուրևմն	ընդամենը՝	3403 807
	միջին թվով՝	680 761,4

Ախալքալաքի գավառում կառավարության ջանքերով հիմնված են հասարակական շտեմարաններ։ Յուրաքանչյուր ծուխ յուր երկու սեռի անդամների թվի համեմատ յուրաքանչյուր տարի կալի ժամանակ տալիս է 0,5 կոտ ցորեն և $^1/_4$ կոտ գարի։ Այս ցորենն ու գարին պահում են հասարակության ընտրած շտեմարանապետները, և կամ կառավարությունը վաճառում ու դրամն այրքունի գանձարանում շահեցնում է, սովի կամ այլ հասարակական թշվառության ժամանակ տվողներին հաշվով վերադարձնելու նպատակով։ Այժմ սրանից մոտ 180 000 ռ. դումար է գոյացած։

ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Երկրագործությունից հետո ժողովրդյան գլխավոր պարապմունքն է անասնապահությունը։ Արքունի և ազայապատկան արոտատեղերը 39350, ձմեռանոցները 3725 և չայիրները 11090 դեսյատին տարածությամբ, նպաստում են անասնապահության զարգացմանը։

Քաղաքում և գավառում անցյալ 1889 թվին կար.

	Անասունների թիվը					
	Ձիեր	Ջաղթներ	Էշեր	Ուղտեր	Եզներ ու կովեր	Ոչխար
Ախալքալաք քաղաքում	440	—	96	1	130	20
Ախալքալաքի գավառում	40978	100516	9468	3	960	»
Ընդամենը՝	41418	100516	9564	4	1090	20

Հետևյալ աղյուսակից երևում է, թե քանի անասուն է ընկնում գյուղացիներից յուրաքանչյուր ծուխին և երկու սեռի յուրաքանչյուր հոգուն.

Ծուխին			Երկու սեռի յուրաքանչ. հոգուն		
Տավար	Խաշն ու անդեաստր	Ձի և էշ	Տավար	Խաշն ու անդեաստր	Ձի և էշ
6	14,7	1,5	0,7	1,7	0.2

Այս աղյուսակը ցույց է տալիս, որ անասնապահությունն ևս այնքան զարգացած չէ, և սրա գլխավոր պատճառն այն է, որ արքունի արոտատեղերը փոխանակ ժողովրդյան մատչելի գնով տալու՝ աճուրդի են դնում, որ շատ անգամ, սաստիկ բարձրանալով, ձեռնտու չի լինում անասուններ պահել կամ ավելացնել։

Մեղվապահությունը թեև գավառում բավական տարածված է, բայց և այնպես ժողովրդյան բարօրության մի նշանավոր աղբյուր չէ։ Համարյա բոլոր փոքր ի շատե ունևոր գյուղացիները ունին մի քանի փեթակ. ստացած մեղրը գլխավորապես իրենք տերերն են սպառում և միայն մի մասն են ծախում։ Մի փեթակից ստացվում է մոտ 35 գբրվանքա մեղր, թեև մինչև 2 փութ ևս ավողներ լինում են։

Մեղվապահության դրությունը հինգ տարիների ընթացքում եղել է.

	Տերերի թիվը	Փեթակի թիվը	Մեղրը՝ փթով հաշված
1885 թվին	208	966	220
1886 »	271	984	225
1887 »	235	1078	283
1888 »	243	1137	207
1889 »	246	1154	311
Ընդամենը՝	1203	5319	1246
Միջին թ.	241	1064	249

Մեղվապահության չզարգանալու պատճառը՝ գարնան ցուրտ եղանակը և հետո երաշտն է։

Թռչնապահությունը բավական մեծ դեր է խաղում գյուղական կյանքի մեջ և հետզհետե ավելի ու ավելի զարգանում է։ Գյուղացիք պահում են հավ, հնդկահավ, սագ և բադ։

Թռչնապահության զարգացման պատճառն այն է, որ մեծ քանակությամբ թռչուններ և ձվեր տարվում են Ախալցխա, Աբասթուման և Թիֆլիս։ Յուրաքանչյուր ընտանիք պահում է 15-ից ոչ պակաս հավ, մի քանիսը՝ մինչև 50։

Ջրառատ գյուղերում գյուղացիք պահում են սագեր։ Առավելապես մեծ քանակությամբ սագեր պահում են դուխոբուրները և հետևյալ հայաբնակ գյուղերը՝ Էշտիա, Կարտիկամ, Կուլիկամ, Բավրա, Ջակ, Կորխ, Օրճա, Մերինիա և Վարևան։

Հնդկահավ պահում են միայն վրացիները։

Բադ շատ քիչ գյուղերում է պահվում, և այն էլ սակավաթիվ։

Զգնորսությամբ պարապում են լճափնյա գյուղացիք և մանավանդ դուխոբուրները։

Բնակիչների ասելով, բռնած ձկների մեծ մասը իրենք են գործածում, միայն մի փոքր մասն է վաճառքի հանվում։

Վերջին հինգ տարիներս ձկնորսությամբ պարապել են.

1885 թվին	164 մարդ
1886 »	200 »
1887 »	153 »
1888 »	167 »
1889 »	197 »

Ուրեմն { ընդամենը՝ 881
միջ. թվով՝ 174

Որսորդությամբ պարապողների թիվը ևս մեծ չէ, վերջին հինգ տարիների ընթացքում պարապել են.

1885 թվին	169 մարդ
1886 »	122 »
1887 »	113 »
1888 »	156 »
1889 »	173 »

Ուրեմն { ընդամենը՝ 733
միջ. թվով՝ 146

Գլխավորապես որսում են աղվես, երբեմն էլ գայլ և կզաքիս։

Ժողովուրդը պարապում է նաև բեռնակրությամբ. դուխոբուրները ձիաքարշ փուրգոններով, մյուս ազգերը սայլերով և բեռնակիր ձիերով

տեղափոխում են ամեն տեսակ ծանրություններ Թիֆլիս, Ալեքսանդրապոլ, Կարս, Արդահան, Ախալցխա և Սիխայլովկա՝ Փոթի, Թիֆլիսյան երկաթուղու կայարանը։

Ծանրություններ տեղափոխողների թիվը հինգ տարիների ընթացքում եղել է.

	Ձիաքարշ փուրգոնով	Գոմշ սայլով	Բեռնակիր ձիերով
1885 թվին	278	1474	182
1886 „	313	1533	204
1887 „	448	1629	175
1888 „	460	1676	168
1889 „	479	1697	170
Ուբեմն՝ ընդամենը՝	1977	8009	899
միջ. թիվը՝	395	1602	179

Ախալքալաք բերում ծախում են՝ վառելափայտ, քակոր և շինության փայտ։ Սրանով պարապողները եղել են.

1885 թվին	2195 մարդ
1886 »	2220 »
1887 »	2319 »
1888 »	2376 »
1889 »	2415 »
Ուբեմն՝ ընդամենը՝	11320
միջին թիվը՝	2264

Ձիբեհանք։ Դեռ քանի Ախալքալաքի գավառում նավթի գործածությունը չէր ընդհանրացել, և սրա փոխարեն գործ էր ածվում ձիթ, ձիթեհանքերը բազմաթիվ, և նրանց արդյունքն էլ բավական մեծ էր. բայց այժմ հետզհետե ընկնում է։

Ամբողջ գավառում այժմ կա 43 ձիթեհանք, որոնցից յուրաքանչյուրը տարեկան մոտավորապես արդյունք է տալիս 800 ռուբլի։

Հինգ տարիների ընթացքում այս ձիթեհանքերում աշխատել են.

1885 թվին		139 մարդ
1886 »		145 »
1887 »		116 »
1888 »		204 »
1889 »		195 »
Ուրեմն	ընդամենը՝	799
	միջին թիվը՝	159

Ջրաղաց: Ամբողջ գավառում ոչ մի շոգեշարժ ջրաղաց չկա, բոլորն էլ դառնում են ջրով: Սրանց թիվն այժմ հասնում է 297-ի, և յուրաքանչյուր ջրաղաց տարեկան արդյունք բերում է 200—300 ռուբ.:

Հինգ տարիների ընթացքում ջրաղաց պահողների թիվը եղել է.

1885 թվին		260
1886 »		265
1887 »		265
1888 »		295
1889 »		302
Ուրեմն	ընդամենը՝	1387
	միջին թիվը՝	277

Ոստայնանկություն: Մի քանի գյուղական հասարակություններում մեջ գլխավորապես կանայք պարապում են ոստայնանկությամբ. գործում են տեղական բրդից կտավ, շալ, գորդ և բակեղաթ:

Մինչև վերջին ռուս-թուրքական պատերազմն այս արհեստը սաստիկ տարածված էր գյուղացիների մեջ, և շատերը միայն ման ու փոխ անելով ամբողջ գերդաստանի հանդերձը լիովին հոգում էին: Պատերազմից հետո, երբ գյուղացիները հանկարծ հարստացան, հաշվեցին, որ ավելի ձեռնտու է գործարաններից եկածները գնել: Սակայն փողերը շուտով ծախսվեցան, և այսօր գյուղացին ոչ ինքն է գործում և ոչ էլ միջոց ունի առնելու:

Միայն դուխոբուրներն ու քրդերը մինչև այսօր դեռ շարունակում են իրենք պատրաստել իրենց բոլոր հանդերձների կտորները:

Հինգ տարիների ընթացքում ոստայնանկությամբ պարապողների թիվը հասնում է.

1885 թվին		787 մարդ
1886 »		909 »
1887 »		941 »
1888 »		924 »
1889 »		967 »
Ուրեմն	ընդամենը՝	4528
	միջին թիվը՝	906

Բ. ՔԱՂԱՔԱՑՎՈՑ

Քաղաքի բնակիչների ստորին դասակարգը գլխավորապես պարապում է արհեստներով։

Հետևյալ աղյուսակը (20) ցույց է տալիս, թե քաղաքում 1894 թ. ինչ տեսակ արհեստներ և քանի արհեստավորներ և աշակերտներ կային։

Այս աղյուսակից երևում է, որ քաղաքի գրեթե բոլոր արհեստավորները հայեր են։ Արհեստներից ավելի տարածված են դարբնությունը, հյուսնությունը, դերձակությունը, ոսկերչությունը և մաշկակարությունը։ Սակայն սրանցից և ոչ մինն այնքան զարգացած չէ, որ կարողանա մրցել ներբերական ապրանքի հետ։

Գրեթե բոլոր արհեստներին վերաբերյալ գործիքները շատ հասարակ և կոպիտ են, արհեստավորներն էլ ուրիշ քաղաքներում չեն կատարելագործած իրենց արհեստը։

Այս բոլոր արհեստների արդյունաբերությունը սպառվում է քաղաքի և գավառի մեջ և համարյա ոչինչ չի արտահանվում։

Հինգ տարիների ընթացքում պատկերը այս է (աղ. 21)։

Այժմ տեսնենք, թե ի՞նչ տոկոս են կազմում արհեստավորները և նրանց աշակերտները քաղաքի բոլոր բնակիչների համեմատությամբ։

Քաղաքի 20—80 տարեկան այր մարդկանց թիվը հասնում է 1100-ի, ուրեմն վարպետները կազմում են 16,5%։ 8—20 տարեկան երեխաների թիվն էլ հասնում է 530-ի, ուրեմն արհեստավորների աշակերտները կազմում են 24,7%։

ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Ախալքալաքի գավառում կան հետևյալ գործարանները (աղ. 22)։

Այդ աղյուսակից երևում է, որ Ախալքալաքի գավառում շատ քիչ և շատ հասարակ գործարաններ կան, որոնց արդյունաբերությունը մի չնչին գումար է կազմում, որովհետև մյուս գավառների գործարաններից ավելի ստոր վիճակի մեջ գտնվելով, արդյունաբերությունը չի արտահանում։

Ազգությունը	Ընդամենը	Արական	Իգական	Ամուսնացած	Այրի	Ամուսնալուծված	Անամուսին
Ընդամենը	205	164	41	2	8		195
Ռուսներ	1	—	1				1
Ուկրաինացիներ	1	—	1				1
Լեհեր	9	9					9
Լատվիացիներ	6	6					6
Էստոնացիներ	4	4					4
Ֆինն-ուգրացիներ	4	2	2				4
Լիտվացիներ	3	—	3				3
Գերմանացիներ	13	—	13				13
Հայեր	4	4		1			3
Վրացիներ	6	—	6				6
Հրեաներ	17	17					17
Ղազախներ	12	12			6		6
Ղրղզներ	2	2					2
Թուրքմեններ	3	3					3
Ուզբեկներ	2	2					2
Թաթարներ	4	4					4
Մորդվիններ	16	17					17
Չուվաշներ	4	2	2				2
Մարիներ	7	7			1		6
Դարգիններ	30	32			1		31
Լեզգիներ (ավարներ)	8	5	3				5
Ինգուշներ և չեչեններ	6	4	2				4
Կոմիներ	9	9					9
Մորդվիններ	13	15					15
Կարելներ	17	14	3	1			13
Հունգարացիներ	14	—	14				14
Չուվաշներ	1	—	1				1
Ղրղզներ	12	14					14

	Արհեստանոցների թիվը	Վարպետների թիվը	Աշակերտների թիվը	Արդյունաբերական արժեքը	
				Ռուբլի	Կոպ.
1885 թվին	164	182	104	12400	.
1886 -	174	125	103	10500	.
1887 -	140	158	106	10000	.
1888 -	186	231	176	13000	.
1889 -	175	215	164	12600	.
Ուրեմն ընդամենը	839	911	653	58500	.
միջին թ.	167	182	131	11700	.

Հինգ տարիների ընթացքում այս գործարանների թիվն ու արդյունաբերությունը երևում է հետևյալ աղյուսակից (աղ. 23)։

Գործարանների տեսակը	Քաղաքում			Գյուղում			Ի միասին		
	Գործարանների թիվը	Արդյունաբերության գույքի գումարը	Աշխատանքների թիվը	Գործարանների թիվը	Արդյունաբերության գույքի գումարը	Աշխատանքների թիվը	Գործարանների թիվը	Արդյունաբերության գույքի գումարը	Աշխատանքների թիվը
կաշվի	3	855	6	1	200	1	4	1055	7
Օճառի	2	1481	4	„	„	„	2	1481	4
Ադյուսի	3	234	6	44	„	„	3	234	6
կրի	2	308	4	„	„	„	2	308	4
Ընդամենը՝	10	2878	20	1	200	1	11	3078	21

Առևտուր: *Ախալքալաքի գավառում առևտրի հաջողությունը կապված է երկրագործության արդյունաբերությունից։*

	Գործարանների թ.				Վարպետների թիվը	Աշակերտների թիվը	Արդյունաբերության արժեքը
	կաշու	օճառի	ապրուստի	կրի			
1885 թվին	4	2	2	1	12	11	10 410 ռ.
1886 »	3	1	3	1	10	8	3 807 ռ.
1887 »	4	1	3	1	8	7	3 595 ռ.
1888 »	3	1	3	2	11	8	3 114 ռ.
1889 »	3	2	3	2	13	8	3 078 ռ.
Ուրեմն ընդամենը	17	7	14	7	54	42	24 004 ռ.
Ուրեմն միջին թվ.	3	0	3	1	11	8	4 801 ռ.

Եվ այս երևում է հետևյալ փաստից, որ երկրագործության նվազ տարիներում քիչ, իսկ առատ տարիներում շատ վկայականներ է առնըվաճ առևտուրով պարապելու։

	Առևտրական վկայականներ
1885 թվին	182
1886 »	169
1887 »	172
1888 »	181
1889 »	196
Ուրեմն ընդամենը՝	900
Ուրեմն միջին թվով՝	180

Քաղաքում առևտրով պարապողների թիվը 1894 թվին էր՝

1. Կապալառուներ	2
2. Բ. կարգի վաճառականներ	78
3. Գործակատարներ	20
4. Մանրավաճառներ	113
5. Չարչիներ	11
6. Իջևան (խան) պահողներ	4
7. Գինեվաճառներ	12
Ընդամենը՝	240

Ամբողջ առևտուրը գտնվում է հայերի ձեռքում, և նրանք առևտուր են անում քաղաքի և գավառի մեջ, նաև Թիֆլիսի, Ալեքսանդրապոլի, Ախալցխայի և մինչև անգամ Քութայիսի նահանգի հետ։ Միայն 9 հրեաներ գավառում պարապում են չարչիությամբ։

Համեմատելով վաճառականների թիվը քաղաքի չափահաս ազգաբնակության հետ, կտեսնենք, որ առևտրականները կազմում են 22%։

Արտաքերական վաճառականության գլխավոր նյութերը մոտավորապես հետևյալներն են.

		Ռուբլի	կոպեկ
Հացահատիկ	Ցորեն, արժողութ.	130 000	»
	Դարի	85 000	»
	Ալյուր	7 000	»
Տավար մսացու, արժողությամբ		61 000	»
Բուրդ		4 000	»
Կաշի		2 000	»
Թարմ պտուղներ . . .		3 500	»
Կտավատ և ձեթ . . .		2 500	»
Յուղ, պանիր, հավկիթ . .		3 500	»
Ընդամենը՝		248 500	»

Ներբերական վաճառականության գլխավոր նյութերն են.

Կտորեղեն	111 000	ռուբլ.
Ջանազան ապրանքներ . .	63 625	»
Մետաղներ	9 000	»
Խմիչքներ	71 000	»
Սխախոտ	8 500	»
Ուտելեղեն, աղ, պտուղներ . .	29 000	»
	292 125	ռուբլի

Սրանից երևում է, որ ավելի արժողությամբ ապրանքներ ներբերում են, քան թե արտահանում, ուստի և գալառը հետզհետե աղքատանում է։ Տոնավաճառներ չկան, վաճառականության ընդարձակման արգելք են լինում անհարմար ճանապարհները։

ԾՈՂՈՎՐԴԻ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Ա. ԴՊՐՈՑՆԵՐ

Ախալքալաքում կան հետևյալ դպրոցները.

ա. Ս. Մեսրովբյան հայոց եկեղեցական-ծխական տղայոց երկդասյան ուսումնարան. հիմնված է 1836 թվին Կարապետ արքեպիսկոպոսի նախաձեռնությամբ և ծախսով։ Այժմ ամփոփված է Ս. Խաչ եկեղեցու գավթի անհարմար և հին շինության մեջ։ Յուրաքանչյուր տարի միջին թվով ունենում է 4—5 ուսուցիչ, 140—160 աշակերտ։

բ. Ս. Սանդխուլյան Հայոց եկեղեցական-ծխական օրիորդաց երկդասյան ուսումնարան. բացված է 1870 թ. Ախալցխայի Գեր. Սուքիաս վարդապետի (այժմ եպիսկոպոս) հորդորմամբ և արժանապատիվ Հարք Հովհաննես Քաջազնունու և Խորեն Բարսեղյանի շնորհիվ, որոնք հանձն են առել առաջին տարին ծրի դասեր ավանդել: Այժմ այդ դպրոցը զետեղված է Ս. Խաչ եկեղեցու գավթի բավական հարմարավոր շինության մեջ և տղայոց դպրոցից բաժանվում է միայն մի պատնեշով:

Յուրաքանչյուր տարի ունենում է միջին թվով երկու վարժուհի, 4 ուսուցիչ և 150—180 աշակերտուհի:

Այս երկու դպրոցների տարեկան մուտքն ու ելքը 3238 ռուբլի է:

գ. Ռուսաց քաղաքային չորս դասարանյան դպրոց. բացված է 1889 թվին: Սրա շինությունը բավական վայելուչ և առողջապահական պահանջներին հարմարացրած է, որի վրա քաղաքը ծախսել է 15 200 ռ. 18 կոպեկ: Յուրաքանչյուր տարի ունենում է հինգ ուսուցիչ, 130—140 աշակերտ:

դ. Շուտով բացվելու է գյուղատնտեսական դպրոց, որի շինությանն արդեն ձեռնարկել են:

Քաղաքում կրթական ուրիշ հիմնարկություններ չկան:

Ամբողջ գավառում մինչև 1881 թվականը կային հայոց գյուղական-տարրական դպրոցներ, սակայն երբ կառավարությունը բացեց արքունի դպրոցներ, դրանք հետզհետե փակվեցան, և այժմ ոչ մի հայոց ուսումնարան չկա:

1881 թ. սկսած նախկին գավառապետ Դրողդովի ջանքով գավառումս բացված են ռուսաց ժողովրդական գյուղական միդասյան տասն և հինգ դպրոց, որոնց պահպանության համար ժողովուրդը վճարում է տարեկան 7726 ռուբլի 32 կոպեկ և տասը դպրոցական շինությունների համար ծախսել է մոտ 25 000 ռուբլի:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս, թե այդ դպրոցները որ գյուղերումն են դտնվում, երբ են հիմնված, տարեկան միջին թվով քանի աշակերտ ունին, և տարեկան ծախսը որքան է (աղ. 24):

Այս աղյուսակից երևում է՝ ա. յուրաքանչյուր դպրոցին գալիս է 3696 մարդ, ի բաց առնելով դուխոբուրները, որոնք ոչ փող են տալիս և ոչ ուղարկում երեխաներին ուսումնարան:

բ. Գավառիս բոլոր, բացի դուխոբուրների, 8—18 տարեկան երեխաներից՝ 6128, միայն 16,8% է հաճախում դպրոց:

Համար ըստ կարգի	ԳՅՈՒՂԵՐ	Հիմնադրման տարեթիվ	Սովորողներ			Ծախքը	
			Ար.	Իգ.	Երկու սեռի		
1	Ալաստան	1882	75	7	82	501	—
2	Արագովա	„	69	14	83	525	—
3	Բարալեթ	1868	91	10	101	1043	—
4	Գանձա	1881	73	2	75	370	—
5	Գյոնդուբա	„	61	—	61	378	—
6	Դիլիսկա	„	37	—	37	395	—
7	Էշտիա	„	85	—	85	493	—
8	Ծղարավրա	„	52	—	52	437	—
9	Ծըրթըզ	1885	73	—	73	435	—
10	Կարծախ	1881	92	—	92	429	—
11	Կարտիկամ	„	76	—	76	406	—
12	Հոկամ	„	27	—	27	318	—
13	Սաթխա	1875	51	4	55	364	—
14	Վաչիան	1881	76	—	76	525	—
15	Քիլդա	1869	42	11	53	440	—
			980	48	1028	7059	—

1890 թվին էլ Քիլդա վիրաբնակ գյուղում բացված է ձեռագործի արքունական դպրոց։

Իսկ գավառիս բոլոր արական կրթարաններում հետևյալ վիճակն է ըստ 1886 թվի աշխարհագրության (աղ. 25)։

Այդ աղյուսակից երևում է, որ կրթություն ստացողները կազմում են ամբողջ ազգաբնակության հետևյալ տոկոսները՝ քաղաքի 44,9. գավառի 4,8. ի միասին 7,5.

Իսկ իգական սեռի կրթությունը շատ աննախանձելի դրության մեջ է և հազիվ թե հասնի 1%։

Արական սեռի գրագետների թիվը ըստ ազգերի հետևյալն է[23]*։*

23 *Пентюхов И. И.* Ахалкалакский уезд... *էջ 46.*

Ազգ. պատկան ՀԱՄԱՐ	Հոգևոր կամ ստանում են կրթություն						Ազգ. պատկան ՀԱՄԱՐ
	Հոգևոր կամ ստանում են կրթություն						

	Ընդամենը	%
Հայեր	2160	9,0
Ռուսներ	68	2,1
Վրացիներ	165	8,6
Վրացի մահմեդականներ	83	2,5
Քրդեր	4	1,0

Կարելի է ենթադրել, որ հայ գրագետների տոկոսը իննից էլ ավելի լինի։

Բ. ԳՐԱԴԱՐԱՆ-ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

Ախալքալաքում 1880 թվի մայիսի 24-ին բացված է «Հայոց երկսեռ դպրոցներին կից» կոչվող մի գրադարան-ընթերցարան։

Գրադարան-ընթերցարանը գտնվում է Ս. Սանդխտյան դպրոցին կից մի շինության մեջ. բաժանված է երկու մասի՝ տղամարդկանց և կանանց, սակայն կանայք դեռևս շատ քիչ են հաճախում։

Գրադարան-ընթերցարանն այժմ ունի 1440 օրինակ հայերեն և ռուսերեն գիրք։ Բացի սրանից տարեկան ստանում է 21 հայերեն և ռուսերեն պարբերական թերթ։

Ամսական անդամավճարն է 40 կոպեկ։ Գրադարանը կառավարում է հիմնադիր անդամների ժողովը, և կառավարության առաջ պատասխանատու է նրա նախագահը, որն ընտրվում է հիմնադիր անդամներից ձայների առավելությամբ։

Հիմնադիր անդամ կոչվում են նրանք, որոնք միշտ տարեկան անդամավճար՝ 4 ռ. 80 կ. վճարելուց զատ, միանվագ նվիրում են գրադարանին 10 ռուբլի։ Այժմ գրադարան-ընթերցարանն ունի 23 հիմնադիր անդամ։

Գյուղական քահանաներից ու ուրացուներից մի քանիսն էլ անդամ են գրադարանին։

Գ. ԹԱՏՐՈՆ

Ախալքալաքը թեև չունի թատրոնական շինություն և դերասանական մշտական խումբ, բայց և այնպես զուրկ չէ ներկայացումներից։ Ս. Սանդխտյան օրիորդաց դպրոցի ընդարձակ դահլիճում շինված է բեմ, և ուսուցչական խմբերը հաճախ քաղաքացիների մասնակցությամբ տալիս են տարեկան 3—5 ներկայացում։ Յուրաքանչյուր ներկայացումից միջին հաշվով գոյանում է 80 ռուբլի արդյունք, որը և հատկացվում է մի որևէ բարեգործական նպատակի։

ժողովուրդը շատ սիրով հաճախում է ներկայացումներին, և գրեթե միշտ դահլիճը լի է լինում։

ՀԱՅ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԸ

Գավառիս գյուղացիների բնակարանները շատ աննախանձելի դրության մեջ են։

Գյուղի մեջ ոչ մի կանոնավոր լայն փողոց չկա, բոլորն էլ ծուռ ու մուռ և նեղ են։ Սրանց համեմատ և տները խառնիխուռն, միմյանց կից և դռները զանազան կողմ ուղղված։

Հին շինությունները գրեթե գետնափոր են, մոտ 25 տարի առաջ շինվածները կես գետնափոր, իսկ այժմյանները համարյա թե գետնի վրա։

Ամբողջ թաղի կտուրները միմյանց կից են, ուստի և ծառայում են որպես ճանապարհ և որպես ժողովատեղի։

Բնակարանները շինում են իրենք՝ տան տերերը, երբեմն միայն մի որմնադիր կամ մի քարտաշ հրավիրելով, այնպես որ գրեթե բոլոր գյուղացիները գիտեն շինել բնակարաններ։

Բնակարանները շինում են հասարակ, անտաշ քարով, միայն հարուստները տան ճակատը և «յաղլըղլի» երևացող պատերը շարում են տաշած քարից։

Պատերի բարձրությունն առ առավելը լինում է 5 արշին, որից մոտ մի արշինը հիմք է կազմում։ Հաստությունը մի արշին է, մեջը խիճ և ցեխ ածած։

ԲԱԿ ԿԱՄ ՇՎԱՔ

Բակը լինում է մոտավորապես 2,5 սաժեն երկարության, մեկ սաժեն լայնության և չորս արշին բարձրության։

Ծածկը տափարակ (դյուզտապան) է և ունի մի հերթիկ $^1/_4$ արշին մեծության։ Այս փոքրիկ հերթիկը հազիվ աղոտ լույսով լուսավորում է այդ՝ երբեմն շատ երկար բակը, ուր անծանոթ այցելուն խարխափելով է առաջ գնում։

Պատուհաններ չլինելու և հերթիկների փոքրության գլխավոր պատճառն ապակի չգործածելն է. ցերեկը բաց են անում լուսամուտի տեղ թողնված այդ ծակերը և գիշերը խոտով ու շորով ծածկում։

Բակը դնում են լուծ, արոր, տաշտ, խուշկի, աթար և այլն։ Բակից բացվում են դռներ դեպի տուն, դեպի գոմ և դեպի յաղըղ։

ՏՈՒՆ

Տունը բաղկացած է երկու բաժանմունքից՝ տուն և ինդրօճախ։

Տունը միշտ քառակուսի է լինում, պատերի երկարությունը 15—24, իսկ բարձրությունը 2,5—3 արշին է լինում։ Պատերի մեջ ոչ մի պատուհան չունի, միայն մի դուռ բացվում է դեպի բակը։

Ծածկը դառնաուն է, այսինքն միշտ անկյունների հանդեպ, միմյանց վրա ձգվում են քառանկյունի տաշված գերաններ, որոնք հետզհետե բարձրանալով և կարճանալով, վերջանում են մի քառակուսի արշին մեծության բացվածք թողնելով, որ կոչվում է հերթիկ (պատուհան)։

Տան մեջ, պատերին կից լինում են դարակներ, որոնց վրա շարվում են կավե և պղնձե ամաններ, փայտե գդեր և այլն։ Դարակների տակ դրվում են կարասներ, որոնց փայլեցնում են շատ անգամ ձու քսելով, և որոնցից շատերը հաճախ դատարկ են լինում։

Տան մի անկյունում հաճախ դրված է լինում ալյուրի ամբարը, վրան կամ կողքը հացի տաշտը։

Ինդրօճախը տան հատակից 0,5—1 արշին բարձր և հաճախ բոլորակաձև է լինում։ Սրա ծածկը ևս տան ծածկի պես դառնաուն է, միայն փոքր ինչ ցածից դրած։ Ուղիղ մեջտեղում թողնված է 1—1¼ քառակ. արշին մեծության հերթիկ։ Հերթիկի անմիջապես տակը, գետնի մեջ մինչև բերանը թաղված է թոնիրը, որի սնվածքը միշտ նայում է դեպի դուռը, որպեսզի այստեղից քամի խաղա։ Թոնիրի շուրջը կոչվում է թնդրափ։ Պատերի մեջ սովորաբար լինում են երկու փոքրիկ անդուռ պահարան, որոնց մեջ դրվում են թխմորը, բաթաթը, գդրնակը, թաթակիշը, դաստրակը և այլն։ Մի անկյունում էլ դրված է լինում շիշն ու ակիշը։

ԳՈՄ

Գոմերը լինում են 2,5 մինչև 3 արշին լայնության և 3 մինչև 5 սաժեն երկարության։ Պատերի բարձրությունը մի սաժեն է լինում, ծածկը դղշպաշի։

Գոմի երկարությամբ, երկու պատերին կից, գետնից մի արշին բարձրության, 0,5 արշին լայնության և քառորդ արշին խորության մսուրք է շինված։ Սրանց վրա, միմյանց բավական մոտ, կապված են 0,5 արշին երկարության բարակ շղթա կամ թոկ (կապ), որոնց ծայրին ամրացված է փայտե բարձր 0,5 արշնաչափ ծամ, փալուտի աղեղնաձև ճյուղ, որը անց են կացնում կենդանիների վիզը և ծամրղաթով (կաշեկապ) երկու ծայրերը բկի մոտ միացնում։ Մսուրքների առջև մի մի սա-

ժեն լայնության տեղ հատկացված է կենդանիներ կապելու, որը և կոչվում է դալդրըմ: Սրանց առջևից ձգվում է քառորդ արշին լայնության արխ:

Երկու դալդրըմների միջի տարածությունը, որ մոտավորապես մի սաժեն է լինում և դալդրըմներից 3 վերշոկ յածր է, բարված է և կոչվում է կոմիերես կամ սափներես:

ՕԴԱՆ

Գոմի մի ծայրում, սովորաբար դռան հանդեպ, գտնվում է օդան. սրա մեջտեղում, պատի մեջ գտնվում է մի բուխարի, որ գետնից 0,5 արշին բարձր է լինում: Բուխարու երկու կողմից, միևնույն բարձրությամբ ձգվում են $1^1/_4$ արշին լայնության երկու թախտ, որ կոչվում է սաար: Հարուստների օդաներում սաարների կողքերին $^1/_3$ արշին բարձրությամբ և երկու արշինից ավելի լայնության ուրիշ երկու թախտեր էլ են ձգվում, որոնք ամուսիններին իբրև մահճակալ են ծառայում: Օդան գոմից ոչնչով չի բաժանվում և իսկապես կենդանիների տաքությամբ է տաքանում: Կտուրը սաարների միջի տարածության չափ և անմիջապես նրա վերև հետզհետե բարձրանալով, վառարանի հանդեպ կտուրի և այդ բարձրության միջև մի փոքրիկ պատուհան է բացվում, որ այժմ միայն սկսել են ապակի գցել:

Օդան հատկացված է գլխավորապես տղամարդկանց, իսկ տունը՝ կանանց: Հյուրերը միշտ ընդունվում են օդայում և հրավիրվում նստել օճախի գլուխը, երբ արդեն մի ներքնակ և մի բարձ ձգած են լինում սաարի վրա:

Միայն հարուստ տներում սաարները ծածկված են լինում քեչաներով և կամ կապերտաներով:

ՅԱԶԼՐՂ

Միմիայն հարուստ տներն ունին յազլըղ՝ ամառվա սենյակ: Սա սովորաբար տաշած քարից, երբեմն բավական բարձր շինված մի սենյակ է լինում, որ երկու կամ երեք պատուհան է ունենում ոչ թե կտուրից, այլ պատի մեջ: Ամառն փոխարինելով օդային, յազլըղը ձմեռը բոլորովին փակ է մնում, որովհետև վառելիքը թանկ արժելով՝ չեն տաքացնում:

ԿԱՆԱՆՑ

Ի նկատի առնելով, որ բնակիչների ամենամեծ մասը Կարնո գաղթականներ են, մենք կնկարագրենք միայն նրանց զգեստները։ Գյուղացի և բաղաքացի կանանց զգեստները միայն կտորով և ճաշակով են տարբերվում, իսկ տարազը միևնույնն է։

Շապիկ. *կարում են միտկալից, աղքատները՝ ամիրկայից, կտավից. իջնում է մինչև ծնկները, կուրծքը մինչև պորտը բացված է և բկի մոտ կոճկվում է. թևերը երկար են և դաստակի մոտ կոճկվում։*

Իշլիկ. *հագնում են շապկի վրա, կարում են անթիքմոռից, ատլասից, մատերիայից, գյազիից։ Կուրծքը եռանկյունաձև բացվում է, եզրերը ղայթան և կլապիտոնե բյուրմա են կարում։ Թևերի բերանները վերջանում են եռանկյունաձև, որ մի քիչ ծածկում են ձեռքերի երեսները, և որոնց շուրջը ղայթան և կլապիտոնի բյուրմա է կարած։*

Վառոիկ. *ամիրկայից, փաթոսխից. երկու կողքերը կապում են ձախ կողքում։*

Դյուզլուկ. *վառոիկ է, միայն փոխերը ֆանելից է, հագնում են ձմեռը։*

Աճքարի. *կարում են անթիքմոռից, սավայիրից, ատլասից, գյազիից և այլն։ Հասնում է մինչև ոտները. թևերը շատ երկար չեն անում, այլ հասցնում են մինչև դաստակը։*

Կրլգր. *ոմանք հագնում են անթարու վրայից. իշլիկի նման է, կարում են անթիքմոռից, գյազիից, սավայիրից, ատլասից։*

Կոձկալ. *մուգ կարմիր թավշից կամ լաստիկից 0,5 արշին երկարության և քառորդ արշին լայնության կտոր է, որ վերևում գրկում է վիզը, իսկ մեջքի մոտ շորե կապերով կողքի մոտ կապվում։ Սրա օձիքը և երբեմն կուրծքը կլապիտոնով ասղնեգործած է։*

Ջյուպպա. *հագնում են կըլգրի կամ անթարու վրա, հասնում է մինչև, ոտները, կարում են զատիֆից, անթիքմոռից, մահուդից կամ կապույտ ամիրկա կոչված կտորից։*

Գոգնոց. *կարում են միայն կարմիր մահուդից և տանը գործած կարմիր շալից։ Գոտին գործում են առանձին խնամքով և վրան շատ անգամ գրում իրենց անունը՝ ավելացնելով «ի վայելումն» խոսքը։ Գոգնոցի շուրջը կլապիտոնով և երբեմն արծաթի թելերով (ըլտըրը) ասղնեգործում և ներքևի երկու անկյունում գեղեցիկ ծաղիկներ են շինում։ Գոգնոցը գոտիով կապում են ջյուպպայի վրա։*

Սրանից մի քանի տարի առաջ գրեթե բոլորը, իսկ այժմ շատ քչերը փողոց դուրս գալիս վրաններն առնում էին էհրամ. սա բրդի սաստիկ բարակ թելից գործած մի քառանկյունի կտոր է, որի լայնությունը միշտ համապատասխանում է առնողի բարձրությանն: Էհրամը մի քիչ ետ ծալած ձգում են գլխին, ապա առջևից ոտքերից մեջքը հավասարեցնելով, ծայրերը մտցնում գոգնոցի գոտու մեջ, իսկ ավելին կախ ձգում. հետո իրենց ձեռքերը կրծքերին, բկի մոտ բռնում են էհրամի ծայրերը և այսպես բռնած մանր գալիս:

Աղջիկների էհրամին լիմոն, բադամ է կարած, այսինքն կիտրոնի և բադամի նմանությամբ մանծե թելերով ասեղնագործած է: Միջահասակներինը սոսկ սպիտակ, իսկ հասակավորներինը՝ կապտախառն է:

Այժմ քաղաքացիները գլխավորապես եվրոպական ձևով, թևերով, երկար վերարկու են հագնում, իսկ գյուղերում սովորաբար շալ են առնում:

Սովորաբար աղջիկներն ու հարսները հագնում են բաց և կուշտ կապույտ, կանաչ և մանիշակագույն, իսկ պառավները՝ մուգ շագանակագույն շորեր:

ԳԼԽԻ ՀԱՐԴԱՐԱՆՔ

Նախ և առաջ մաղերը սանրում են, մեջտեղից մի հերագիծ (իվ) բողնում, առջևի մաղերը ճակտի և ականջների վրայից տանում, և գյուղացիները մի քանի փոքրիկ, իսկ քաղաքացիները՝ երկու մեծ ծամ հյուսում: Գյուղացի աղջիկները ծամերի ծայրերին գունդզունդ հյուսներ և մեխակ են անցկացնում:

Հետո ծածկում են կարմիր ֆաս՝ մոտ կես արշին երկարության իյուսկյուլով, որ իջնում է մեջքի վրա: Փյուսկյուլի գլուխը և ֆասի մեջտեղը երբեմն էլ կլապիտոնով և արծաթագույն թելով ասեղնագործած է լինում:

Ֆասի վրա կապում են զիլիֆլըղը՝ երկու շարք մարգարիտներ, որ այտերի վրայից իջնում են մինչև կուրծքը: Յուրաքանչյուր շարքը բաղկացած է 4—6 առանձին թելերից, մարգարիտներ անցկացրած և ծայրը մի փոքր ոսկեզրամ (պաճախլի) կապած: Շարժվելիս այդ ոսկիները միմյանց են դիպչում և ձայն հանում: Աղքատ գյուղացիները մարգարիտների և ոսկիների փոխարեն սուտ մարգարիտներ և փուլ (ոսկեգույն մետաղից) են անում:

Զիլիֆլըղի վրայից կապում են շերիտը. սա մի գեղին ժապավեն է, վրան մի կամ երկու շարք, 20 մինչև 200 փոքրիկ ոսկեզրամներ (ուռու-

պիա) կարած, որ պսպղում են ճակտի վրա, տարածվելով մի ականջից մինչև մյուսը։ Ոսկիների տակից, շերիտի մեջտեղը կարած է լինում մի մեծ ոսկի (մահմուդիա)։ Պառավներն այս ոսկին չեն դնում։

Միևնույն շերիտի վրա, ոսկիների վրայից կարած է լինում կտուցը՝ մարգարիտներ, որ երբեմն միայն, իսկ երբեմն մոտավորապես 8-ի ձև ունեցող փոքրիկ ոսկիների (ջավշակ) շուրջը բոլորվելով՝ տարածվում է շերիտի երկարությամբ։

Շերիտի վրա անցնում են վարդը։ Սա պատրաստում են հետևյալ ձևով. մի յաղմա[24] խաչաձև 6—7 սանտիմետր լայնությունով ծալում են, ապա բռնելով կրոդի ճակատին, բունքերի մոտ այդ միևնույն յաղման ծալելով երկու վարդ են շինում ու մնացած ծայրերը կրոդի գլխին չափելով՝ միմյանց հետ կարում։ Հետո թե վարդերը և թե սրանց միջի տարածությունը զարդարում մետաքսի զույնզգույն թելերից շինած ծաղիկներով։

Աղջիկները վարդի վրայից այլևս ոչինչ չեն առնում, իսկ հարսերը ձյում են տանը՝ յաղմա, հրավեր գնալիս՝ չիքիլա, որ իջնում է մինչև սրունքները։ Կանայք և պառավները փաթաթում են դլուխները շալե (շալովի) կամ մետաքսե (բազդադիա) փաթթան, իսկ հրավեր գնալիս՝ սրա վրա ավելացնում են և մի յաղմա։

Աղջիկները և մատաղահաս կանայք գցում են կրծքերին մի կամ մի քանի շարք ոսկիներ, ականջներին անց են կացնում օղեր, ձեռներին դնում ոսկե միապաղաղ ապարանջաններ (բյուլազուկ), մատներին՝ մատնիներ։

ԱԳԱՆԵԼԻՔ

Աղջիկներն ու հարսները հագնում են դեղին մյաս բապուճ, իսկ պառավները դեղին մյաս, կարմիր բապուճ։

ՏՂԱՄԱՐԴԱՆՑ ԶԳԵՍՏՆԵՐԸ

Ա. Գյուղացիների

Շապիկ. հասնում է մինչև ծնկները, կարում են կտավից կամ ամիրկայից. կուրծքը մինչև պորտը բացված է և կոճկվում է բկի մոտ։ Թևերը հետզհետե նեղանալով՝ հասնում են մինչև դաստակը, ուր և կոճկվում են։

Թումպան կամ վարտիկ. հագնում են ոտներին, շապիկի տակից։

---

24 Քիսայի նման բամբակե, շատ բարակ, զույնզգույն, բառահյուսի փաթաթոց։

կարում են կտավից կամ ամիրկայից։ Փողքերի լայնությունը քառորդ արշին է լինում. կապում են կողքից վարտեց կապով։

Ախալքալաքցի հայ օրիորդ

Ելակ. հագնում են շապկի վրայից, թևեր չունի. նման է եվրոպական ժիլետկային, միայն ամբողջապես ծածկում է կուրծքը, գրպաններ չունի, կոճկվում է «զայթանե օղակ կոճկով»։ Կրծքի միջտեղն ելակի առաջի՝ երևացող մասը կարում են պոլսուկնոյից, լաստիկից, մահուդից և այլն. իսկ ետևի՝ չերևացող մասը հասարակ չիթից։

Դոշլուխ. *հագնում են ելակի փոխարեն, նրան նման է, միայն աստառ չունի և ձախ կողմի երկու ծայրերը կողքից թևի տակ կապվում են իրար հետ: Սրա կուրծքը հաճախ ասեղնագործած է լինում:*

Շալվար. *հագնում են ոտներին, ելակի վրա, կարում են շալից, իջնում է մինչև ոտների երեսը և 3 քիլ լայնություն ունի: Վերի մասը մի քիլ լայնության կարում են կապույտ ամիրկայից կամ կարմիր կտորից. այս մասը կոչվում է փոխ. սրա միջից անցնում է ուլխաուրը, որ ամուր կապում են կողքից: Շալվարի կողքերից գրպանի փոխարեն բողնում են բացվածքներ:*

Արխալուխ. *հագնում են ելակի և շալվարի վրայից: Կարում են կապույտ ամիրկայից, պոլսուկնոյից, սև ղադիֆից և այլն: Արխալուխը մեջքի վրա բյուզմայով սեղմվելով՝ մի քիչ վայր է իջնում, որը և կոչվում է փեշ: Սրա վրա կողքից բացած է մի գրպան: Արխալուխի կուրծքը նռանկյունաձև բացված է և պորտի մոտ երկու կամ երեք զայթնե կոճկով կոճկվում է:*

Թոշով արխալուխ. *կուրծքը ձախ թևի անրակի մոտից կոճկվում է մինչև պորտը զայթնե կոճկով. այսպիսի կոճակների մի շարք ևս կարվում է աջ կողմում ներդաշնակության համար:*

Ջյամար. *հասարակ կաշուց գոտի. կապում են արխալուխի վրայից, մեջքին:*

Ջուխա. *հագնում են արխալուխի վրայից. մեջքի վրա բյուզմայով սեղմվելով և գրկելով մեջքը՝ լայն իջնում է մինչև ծնկներից քիչ ցած, այս մասը կոչվում է փեշ: Կուրծքը նռանկյունաձև բացված է և պորտի մոտ երեք զայթնե կոճկով կոճկվում է: Թևերը հետզհետե լայնանում են մինչև 9—12 վերշոկ և հասնում են մինչև ձեռքի կոճիկները. գործի ժամանակ թևերը ետ են ծալում, այնպես որ ամբողջ դաստակը մնում է բաց: Ջուխի բոլոր եզրերին կարում են զայթան: Կարում են շալից:*

Յափունճի՝ *տառատոր:*

Գլխներին ծածկում են փափախ, ոչխարի մորթուց կարած, կամ ֆյաչա, և քչերը ֆաս:

ԱԳԱՆԵԼԻՔ

Գուլպա[25]. *սովորաբար հաստ թելից գործած:*

Պաճիճ-թոզլուխ. *հագնում են սրունքներին և շալվարի փոխքը մեջը դնում և դյուզբաղիով (թելե կապը) կապում:*

---

25 *Հալ կաթոլիկները առավելապես հագնում են «ճշխուն գուլպա»:*

Ջարուխ՝ տրեխ, սրբմ՝ կաշե թելով կարում են չարուխը. տրեխի ծայրը կոչում են ֆիր:

Բ. Քաղաքացվոց

Շապիկ. քաթանից, ոչ այնքան երկար, որքան գյուղացիներինը, կուրծքը երբեմն ասղնագործած:

Վարաքիկ. նույնպես քաթանից կամ ամիրկայից, հագնում են շապկի վրա. վարտիկի փոխկը դնում են գուլպի մեջ. իսկ սրա վրայից ոմանք փաթաթում են «տոլադ», մի վերշոկ լայնության և մի արշին երկարության քաթան, մի ծայրը թել կապած:

Արխալուխ. կուրծքը չափռաստով կոճկած, կարում են լաստիկից, մախմուրից և այլն:

Շալվար. սովորաբար մահուդից, քառորդ արշին լայնության:

Ջուխա կամ չարխասի՝ մահուդից, բավական երկար, բոլոր եզրերը բյուքմա կարած:

Արծթե համար. չարքասկու վրայից են կապում:

Վեռարկու կամ յափունճի (տառատոք). առնում են ձմեռը:

Գլխներին ծածկում են գտակ (չափխա) կամ գարիբալդի:

Ոտներին հագնում են կոշիկ և կրկնակոշիկ:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲԱՐՔ

ԱՄՈՒՍՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՐՍԱՆՅԱՑ ՍՈՎՈՐՈՒՅԹՆԵՐ

Ախալքալաքի գավառի հայ գյուղացի տղամարդու մեջ շատ քիչ է զարգացած սիրո զգացմունքը դեպի կինը: Նրա աչքում կինը ոչ այլ ինչ է, եթե ոչ յուր կրքերին հագուրդ տվող մի ծախված «պուտուկ» և մի սորուկ աղախին: «Հորդ... ալ ինչի՞ 100 մանեթ տվի օր աս բանը չըպըտի էնես». ամուսնու սովորական խոսքերն են կնոջ մի որևէ աշխատանքից հրաժարված միջոցին: Հայ գյուղացին շատ հեռու է կնոջը գրվելուց, նա օտարների և նույնիսկ տանեցիների ներկայությամբ թույլ չի տալիս կնոջն իրեն հետ խոսելու, հետը հայ չի ուտում և առանձին խոսակցություն համարյա երբեք տեղի չէ ունենում: Կնոջը հայհոյելն ու երբեմն ծեծելը նրա համար «տղամարդություն», քաջություն է հա-

մարվում։ Նա գրեթե երբեք չի խորհրդակցում կնոջ հետ. տոներին ամոթ է համարում շնորհավորելու և մի բան նվիրելու նրան։ Կինը գերդաստանի մեջ ևս մի առանձին հարգանք չի վայելում։ Նա մինչև անգամ պարտավորված է 10 տարեկան տեգեր հետ «հարսնությունն» անել՝ չխոսել, նրա տրեխները հանել և ամեն հաճույքի բավականություն տալ։ Նրան հրամայում են ոչ միայն կեսարրը, կեսուրը և ամուսինը, այլև մեծ տեգերկնիկներն ու տեգրերը։ Նա առանց կեսուրի թույլտվության ոտը մի քայլ անգամ դուրս դնելու և կամ մի բան վերցնել ուտելու իրավունք չունի։ Նույնիսկ յուր հարազատ որդուն առաջին տարին նա ծիծ չի տալիս, մինչև կեսուրը չհրամայի։

Զրկված անձնական ազատությունից, դատապարտված մշտական լռության, նա ստիպված է կատարել տան բոլոր ծառայությունները, օգնել ամուսնուն տնային և դաշտային աշխատանքի մեջ։

Երկարատև ձմռան միջոցին, երբ ամուսինը բոլորովին անգործ ընկած է սրա նրա օգնեն, նրա աշխատասեր կինը կառավարում է ամբողջ տունը և շալ, կտավ գործելով հոգում ծույլ ամուսնու հանդերձը։

Նրա սրբությունն անգամ շատ չի գնահատվում ամուսնու կողմից. սա բավականանում է շնացող կնոջը մի լավ թակելով, և բաժանում կամ մարդասպանություն այս պատճառով տեղի չի ունենում, չնայելով որ կան գյուղեր, ուր գրեթե բոլոր հարսները «սիրող» ունին։

Թեև գավառում բազմակնություն չկա, սակայն կան մարդիկ, որոնք ակնհայտնի պահում են միևնույն տան մեջ ինչպես օրինավոր կնոջը, այնպես էլ սիրուհուն։

Այս գավառում դեռևս պահպանվում է աղջիկ փախցնելու սովորությունը, և սրա գլխավոր շարժառիթը համարվում է «հաղեմասին»։

Ամուսնությունը կատարվում է հետևյալ հանդեսներով. նշանդրեք, փեսատես, քասապիշա, մաղժաժում, մաղարխում, հինա տնել, թագավոր կանդնեցնել, պսակ։

Նշանդրեքը աղջկա հայրը միշտ աշխատում է պասին ձգել, որ ինքը քիչ ծախս ունենա և տղայի օղին շատ խմվի, այս պատճառով ամենից շատ մեծ պասին է լինում։ Հարսանիքն առավելապես բարեկենդանին ամառը շատ հաղիվ է պատահում, որովհետև գյուղացիք սաստիկ զբաղված են լինում։ Հարսանյաց պատրաստությունը միշտ սկսվում է հինգշաբթի օրից և տևում մինչև մյուս հինգշաբթի, ամբողջ մի շաբաթ, «օխտն օր, օխտը գիշեր»։

Հարսի կողմից շատ քիչ, իսկ միջակ հարուստ փեսայի կողմից մոտավորապես լինում է հետևյալ ծախսերը.

Նշանդրեին

Հագնմասին	60—200 ռ.
Երեսաեսնանք տանգիք	10 ռ.
Երեսաեսնանք բարեկամներ[27]	60 ռ.
Ոսկու	100 ռ.
6 Թումգի օղու	12 ռ.
Աչքի լուսի	1 ռ.
Սալամաթ տանտիկնոջը	1 ռ.
Հարսն առաջ բերողին	1 ռ.
Հարսին ընծա	3 ռ.
Ջարազ	1 ռ.
Այլ և այլ մանր ծախսեր	10 ռ.
Ընդամենը՝	259—400
Փայլերին և դերիններին	150—200 ռ.

Պսակին

Մի եզ	25 ռ.
Մի գառ	2 ռ.
Տասն Թունգի օղի	20 ռ.
Արուկ, բրինձ, լորի, Թեյ և շաքար	12 ռ.
երիու զույգ կոշիկ հարանեղբայրներին	2 ռ.
Արկղին	1 ռ.
Սալամաթ	1 ռ.
Եկեղեցուն	1 ռ.
Քահանային	4 ռ.
Աթոռահաս	6 ռ. 50 կ.
Բեյի ոսկի հարսի մորը	60 կ.
Փողհարին	3 ռ.
Այլ և այլ ծախսեր	10 ռ.
Ընդամենը՝	88 ռ. 10 կ.
Հարսանյաց բոլոր ծախսը	497—688 ռուբլի

Մի պատկառելի գումար, որ գյուղացին առանց պարտք անելու չի կարող հոգալ։

27 Մենք այս փեսի կողմից ծախս ենք հաշվում, որովհետև ոա էլ պարտավոր է նրանց նշանդրեքին նոյն չափ տալ։

Երբ ծնողները վճռում են այսինչ աղջիկը ուզել, հայրը հրավիրում է քահանային, հյուրասիրում է նրան թեյով ու հացով և ապա խնդրում «պատգամ» գնալ այդ աղջկա հոր մոտ և խնդրել աղջկա ձեռքը յուր որդու համար։ Քահանան նախ հաշվում է, թե կհասնի՞, և եթե չհասութիյուն լինի, աշխատում է համոզել նրանց ուրիշ աղջիկ ուզելու, իսկ եթե չկա, գնում է աղջկա հոր մոտ, գովում է տղի հորն ու գերդաստանը, թվում երիտասարդի արժանավորութիյունները և խնդրում աղջկա ձեռքը։

Աղջկա հայրը որոշ ոչինչ չի պատասխանում. «Ակա՜ր, ղամաթ է, գլխի, տերտեր ջան,— ասում է նա,— առանց ղամաթի բան չիլլի, քանիմ օր ժամանակ տու, մեկ մերոնց հետ ա խոխուրդ էնենք»։ Եթե նույնիսկ յուր ցանկութիյունը լիներ աղջիկը այդ երիտասարդին տալու, այնուամենայնիվ նա մի քանի օր պիտի «չմշմե»։ Քահանան վերադառնում և պատմում է երիտասարդի հորը տեղի ունեցած խոսակցութիյունը, միանգամայն հայտնելով յուր կարծիքը՝ տալու են, թե ոչ։

Աղջկա հայրը երկրորդ օրը հրավիրում է ազգականներից կամ պրկիցներից երեք մարդ, հյուրասիրում նրանց թեյով ու հացով, հարց ու փորձ անում ուզած աղջկա մոր, հոր և մասամբ աղջկա մասին և խնդրում գնալ հոր մոտ «պատգամ»։

Սրանք, որոնց ժողովուրդը «պատգամ» է կոչում, գնում են աղջկա հոր մոտ, գովում տղայի հորն ու գերդաստանը, թվում տղայի արժանավորութիյունները և խնդրում աղջկա ձեռքը։

«Գիրքոր ամի։ բեր Աէնիկը մարգարեից օրենքով, 318 հայրապետաց կանոնով տուր Խաչոյենց մանչուն»։

Աղջկա հայրը պատասխանում է. «Ղըսմաթ է նե, ի՞նչ պըտի ըսեմ, քանիմ օր միջոց տվեք մտածենք»։

Պատգամները ոչ մի բանով չհյուրասիրված վերադառնում են։

Մյուս, երբեմն երրորդ, չորրորդ օրն էլ գնում են աղջկա հոր մոտ և խնդրում, որ պատասխան տա։ Իսկ աղջկա հայրը յուր կնոջ և մի քանի բարեկամների հետ խոսակցելուց հետո՝ արդեն որոշած է լինում, տալ, թե չտալ։ Եվ եթե մտադիր է տալու, դիտմամբ չմշմում է, այնինչ չտալու դեպքում միանգամից մերժում է։

Վերջապես աղջկա հայրը հայտնում է պատգամներին, թե կտա։ Սրանք գալիս են տղի հոր մոտ, խորհրդակցում, թե որքան նադեմասի տան, և առնելով այդ գումարը, գնում աղջկա տունը։ Պետք է ասել, որ

պատգամները տղի տունը մտնելիս ամեն անգամ հյուրասիրվում են, իսկ աղջկա տանը մինչև հաղեմասին տալը ոչ մի բանով չեն հյուրասիրվում։ Աղջկա հայրը կանչում է յուր աղգականներից մի քանիսին, պատգամների հետ նստում օդան։ Պատգամները խնդրում են աղջկա հորը որոշել, թե ի՞նչ պիտի առնեն հորից աղջիկը տալու համար։

Այս գումարը կոչվում է «հաղեմասի», որ արաբերեն նշանակում է «այո ասել», համաձայնել։

Աղջկա հայրը հրաժարվում է ինքն առաջարկելուց և ասում է. «Աղջիկը իմս չէ, Քերոբ ափարինն է (եղբայր), թող ան ըսե»։

Սա էլ նախապես իմացած լինելով հոր միտքը, մի քիչ բարձրից է բռնեցնում. «Աղջիկն ա իմս է, խոսքն ա իմ բուլս է. ձեղնից կառնեմ 110 մանեթ փող, ջուխտ լապչին, զարարաղի մայմուղներով, մեկ պինիշ չաքման չուխա, մորը՝ քիրմանի շալ, մեծ հարսին մյաս բապուճ, արծթե սայլղմ՝ լուլաներով, աղբորը՝ ջուխտ ճըզմա» և այլն։ Պատգամներն սկսում են սակարկել և գլխավորապես կանգ են առնում փողի վրա, որը տատանվում է 30—220 միջև։ Որչափ տղան սիրահարված և աղքատ լինի, այնքան հաղեմասին բարձր կլինի, և այս է պատճառը, որ աղքատ երիտասարդն ստիպվում է կամ պարտքի տակ ընկնել, կամ փախցնել աղջկան։

Երկար սակարկությունից հետո, որ երբեմն մի քանի օր է տևում, փոխադարձ դիջողությամբ համաձայնություն է կայանում, և պատգամները իսկույն վճարում են դրամը աղջկա հորը։

Հիմա արդեն աղջկա հայրը օղի է բերում և սկսում են «աչքի լուսի թասը» խմել։ Տան փորբիկներից մին կամ երկուսին ուղարկում են տղի հոր մոտ՝ աչքի լույս։ Սա համբուրում է տղի հոր ձեռքը և ասում. «Աչքդ լուս»։ Սրան օղի են խմացնում, ջորապ տալիս և 20 կոպեկ փող նվիրում։ Իսկույն տղի տնից երկու երեխա ուղարկում են աղջկա տունը «հարսնցու անելու»։ Սրանք գնում տեսնում են հարսին, մի մի ռուբլի փող նվիրում, հյուրասիրվում և վերադառնում։ Մի քանի դյուղերում փեսան, սրա հայրը և մի քանի մոտիկ ազգականներ գնում են աղջկա տունը՝ տանելով իրենց հետ օղի։ Այստեղ երկու խնամխները համբուրվում են և բարեմաղթում սիրով և միաբանությամբ ապրել։ Տղի հայրը շնորհակալություն է հայտնում պատգամավորներին նրանց կրած նեղության համար։ Փեսան դավուլ-զուռնի առաջնորդությամբ առաջ է բերում հարսնացուին։ Սրանք կարգով համբուրում են բոլորի ձեռները, և ապա հարսնացուն կանգնում է յուր սկեսարի մոտ «բարև բռնած»՝ ձեռները կրծքին և գլխին քող գցած. հետո մի համեստ ընծրիք են տալիս, որից

հետո տղատիրոջ կողմի եկողները մի մի կամ երկու երկու ռուբլի նվեր են տալիս և ցրվում տները։ Միայն տղի հայրը, որպես պատվավոր հյուր, այդ դիշեր մնում է խնամու տանը։ Առավոտյան աղջկա տերը հրավիրում է երեկոյան խնջույքին ներկա եղող մարդկանց, ուտեցնում յուր կերակուրները և խմացնում փեսացուի օղին, կեսօրին հետներն առած փեսացուի հորը՝ սրանք գալիս են փեսացուի տունը։ Այստեղ էլ ավետմաչ խնջույք են կազմում, փեսացուին առաջ բերում, և սրա անները նրան խոստանում է ընծաներ, առհասարակ հաղուստեղեն, երեկոյին ամենքը ցրվում են տները։ Այս բոլորը կոչվում է «պզտիկ հարսնցու»։

ՆՇԱՆԴՐԵՔ ԿԱՄ ՄԵԾ ՀԱՐՍՆՑՈՒ

Պզտիկ հարսնցուից մի երկու օր հետո փեսի հայրը հրավիրում է յուր աղգականներին ու քավորին, հյուրասիրում նրանց թեյով ու հացով։ Երեկոյան աղջկա տիրոջ տնից մի հրավիրակ է գալիս, որ օղու շիշը ձեռին կանգնում է օդի մեջտեղն, ընդհանուր բարև տալիս, ապա լցնում բաժակը և ասում. «Կենդանութիւն, բարով ժողովիք». Հետո դառնալով դեպի նոր խնամին, ավելացնում է. «Խնամի աղա, տացուս (կամ կատաշս, ապերս, ինչ պատվանունով որ նա սովոր է կոչել յուր տան մեծին) շատ կարոտով բարև էրավ, որ առնես քու ղոնաղներդ հրամմես էրթանք մեր տուն»։ Այս խոսքի վրա նա խմում է օղին և նորից լցնելով տալիս է աղա խնամուն։

— Ձեռքդ անհատ,— ասում է խնամին առնելով բաժակը,— շատ շնորհակալ եմ աղա խնամուցս.— և դառնալով դեպի հրավիրյալները, ավելացնում է.— Մեր նոր խնամին կանչե կը մեզի մեր ծաղկին քովը՝ հրամեցեք էրթանք»։ Հետո խմում է շնորհակալության բաժակը և դավուլ-զուռնով գնում աղջկա տունը, տանելով յուր հետ 2—5 թունգի օղի, մեկ թուի խաս մանուսա, մի սպիտակ չիքիլա յափունդ, երեք չորս գույնի թել, մի արշին փաթուսխա՝ արախճինի համար, սպիտակ կլապիտոն, մի զույգ մյաս-բապուճ, հինա և չարազ։ Միմյանց ողջունելուց հետո տղամարդիկ նստում են օդան ավադության կարգով։ Աղջկա տերը յուր օղուց մի մի բաժակ տալիս է բոլորին, որոնք «Աչվիքս լուս ըլլի, աստված սուրբ պսակին արժանացնե» ասելով խմում են։ Օղուց հետո սովորաբար մի մի բաժակ թեյ են տալիս, որից հետո պատգամավորի խնդրանոք հարսն առաջ են բերում։ Մի սկուտեղի մեջ շարում են թեյի ափսեներով չարազներ՝ կանֆետ, քաղցրաղամ, քիշմիշ, լապլապու և այլն աղջկա տիրոջ մի շիշ օղի և բաժակներ. սկուտեղի շուրջը վառում են

մեղրամոմեր և դնում մի երեխայի գլխու, որ տանից պարելով բերում է օդան։ Սրա ետևից աղջիկը գեղեցիկ զարդարված, մի հարսի հետ, որ առաջ բերող է կոչվում, գալիս է։ Ակուտեղը, որ մյապա է կոչվում, դնում են օդի մեջտեղը. դուռնաճին կանգնում է օդի դռան առջև և չի թույլ տալիս հարսին անցնելու, մինչև որ փեսացուի հորից մոտ 20 կ. ընծա չի ստանում։ Նախ՝ առաջ բերող հարսը և ապա աղջիկը օդի դռան առաջ խոնարհում, բոլորին բարևում և ապա համբուրում են քահանայի աջը։ Քահանան, որ աղջկա տիրոջ կողմից է հրավիրված լինում, կանչնում պահպանիչ է ասում, կեսարի տված չիքիլան դցում երեսին, բեհի մատանին դնում մատը, փուշին օրհնում ձգում գլխին և ասում. «Աչքերդ լուս, աստված բարի վայելումն տա»։ Փեսի հայրը տալիս է քահանային 20 կոպեկից մի ռուբլի փող։ Հարսը կրկին համբուրում է քահանայի ձեռքը և հետո յուր հոր, կերսարի և մյուսների ձեռքերը և կանգնում կերսարի մոտ։

Իսկույն տանեցիներից մինը օդի է լցնում և բաժանում բոլորին, որոնք «Աչքերդ լուս, աստված սուրբ պսակին արժանացնե, ուղուրով հարս ըլլի» ասելով խմում են և մեջտեղը դրած մյապից ուտում։ Հետո միայն տղի կողմից եկողներն աղջկան փող են նվիրում, որ «երեստասանք» է կոչվում։ Բերում խոնչան դնում են երկու սաաթների միջև, վրան երեք ափսե դնում, որոնցից մինը հատկացված է հարսին, մյուսը քահանային և երրորդը հարսն առաջ բերողին։ Խոնչի մոտ նստում է մի մարդ, որ կոչվում է սաչու կանչող, իսկ նվեր տալը՝ սաչու։ Ամենից առաջ փեսի հայրն է 1—5 ռ. տալիս սաչու կանչողին։ Սա ցույց է տալիս հանդիսականներին և ասում. «Ջամիաթ, անկաճ էրեք, շեն կենա կերսարը, հինգ մանեթ հարսնցուին» և դնում հարսին հատկացրած ափսեի մեջ։ Կերսարը մի ռուբլի հարսի առաջ բերողին ու մի քանի կոպեկ էլ քահանայի համար է տալիս, սակայն այս նվերները չեն կանչվում։ Փեսի հորից հետո երեստասանք տալիս են տղայի կողմից եկածները, որ նույն ձևով կանչվում է։

Այս սաչուից գոյանում է.

Հարսին	20—100 ռ.
Քահանային	1,5—2,5 ռ.
Հարսն առաջ բերողին . . .	1,5—2 ռ.

Այս դրամները հավաքում, հաշվում, հարսինը տալիս են հարսի հորը, մյուսներինը իրենց և հետո արդեն ընթրում։ Այս երեկոյի համար կերակուրները որոշված չեն, միայն երկու, երեք տեսակից պակաս չեն

լինում։ Ընթրիքին և հետո խմում ՝ն փեսայի տնից եկած օղին։ Ընթրիքից հետո, երբ բոլորի գլուխները բավական տաքացած են լինում, կաքավում են. երբեմն միմյանց հայհոյում, կռվում և ուշ գիշերով ցրվում տները։

Մյուս օրը առավոտյան աղջկա տերո հրավիրում է երեկոյին միայն փեսի կողմից եկողներին, որոնք երեստեսանք էին տվել, և իբրև շնորհակալություն՝ հյուրասիրում է նրանց երկու-երկու բաժակ օղիով, թեյով ու հացով։ Ածում է մեյին, և շատերը կաքավում, երգում և ուրախանում են մինչև կեսօր, երբ արդեն ցրվում են։

ՓԵՍԱՏԵՍ

Նշանդրեքից մի կամ մի քանի օրից հետո աղջկատերն է հավաքում իր ազգականներին, պատվում նրանց և երեկոյին գնում փեսայի տունը փեսատես։ Աղջկա հայրը տանում է յուր հետ փեսի համար մի լաստիկ արխալուղ, մի մահուդե չուխա, մի կլապիտոններով ելակ, մի քիչա, մի քամար, մի զույգ յամանի, թոզլուխ, գուլպա, խեծախ՝ երեսին շաքարավազ ածած. դաթա, շաքարլամա և չորս զույգ մոմ։ Այս բոլորը դարսած են լինում մի սկուտեղի վրա, շուրջը մոմեր վառած. սրանց բոլորին առաջնորդում է դավուլ-զուռնան։ Երբ մտնում են տղի ատունը՝ այս ընծաները պահ են տալիս տնեցիներին և իրենք գնում օդևն նստում։ Տանտերը պատվում է նրանց օղիով և թեյով։ Հետո արդեն խնդրում են փեսին առաջ բերել։ Նշանդրեքի նման պատրաստում են մյուզա, գնում են մի տղի գլխի և դավուլ-զուռնի առաջնորդությամբ մի չամուսնացած երիտասարդ առաջ է բերում փեսին տանից օդևն։ Այստեղ դռան մոտ դավուլճին կանգնում և թույլ չի տալիս փեսին առաջ գնալու, մինչև որ աղջկա հորից 5 կոպեկից մինչև մի ռուբլի նվեր է ստանում։ Ապա մյուզան գնում են մեջտեղը, առաջ բերողն ու թագավորը նախ դեպի առաջ, հետո դեպի աջ ու ձախ գլուխ տալիս և մոտենում համբուրում են քահանայի աջը, որը և պահպանիչ է ասում։ Աղջկա հայրը տալիս է քահանային մի ռուբլի։ Թագավորը համբուրում է քահանայի և աներոջ ձեռքերը։ Հետո չամուսնացած երիտասարդը առնում է ձևոը օղու շիշը, իսկ թագավորը՝ առաջամատույցը, վրան բաժակներ և մյուզա։ Երիտասարդն ածում է օղի, և թագավորը բաժանում. նախ քահանային, հետո աներոջը, հորը և այլն։ Բոլորը խմում են համարյա հետևյալ բարեմաղթությունն անելով. «Աչվներս լուս. աստված սուրբ պսակին արժանացնե, մի բարձի ծերանան»։ Սրանից հետո ընդունված ձևով սաչու են կանչում։ Աղջկա հայրը յուր և յուր տնեցիների կողմից

տալիս է բերած շորերը, կամ եթե պատրաստ չէ, փող է տալիս կամ խոստանում է։ Տալիս են և աղջկա կողմից եկած բոլոր բարեկամները, մի քանիսը դրամ, մի քանիսը գառն, մի քանիսն էլ հոր և այլն։ Այսպիսով գոյանում է.

Թագավորին, բացի հանդերձներից	5—20 ռ.
Քահանային	50 կ.—1 ռ.
Եկեղեցու օգտին	10—60 կ.

Սաչուից հետո ընթրիք են տալիս, ուտում խմում, մեյով կաքաւում և շատ ուշ, հարբած ցրվում տները։

ՓԱՅԵՐ

Հարս և փեսա նշանված մնում են 3—6 ամիս, երբեմն մի տարի. և այս երկար միջոցում նրանք միմյանց շատ հազիվ են տեսնում։ Փեսան նշանածի ոչ միայն դռնից, այլև փողոցից շատ հազիվ է անցնում, որովհետև այս ոչ միայն մեծ ամոթ է համարվում, այլև այդ փողոցի երիտասարդներն ու երեխաները բռնում ծեծում են փեսային և բաց չեն թողնում, մինչև որ մի ընծա չառնեն։ Միմիայն բարեկենդանին թույլ են տալիս փեսին երեք օր, երեք գիշեր-ցերեկ մնալ նշանածի տանը։

Բոլոր տաղավարներին փեսի տնեցիք պարտավորված են հարսին նվերներ տանելու, որոնք փայ են կոչվում։ Փայեր տանում են տղամարդիկ, և երբեք թաղավորը չի մասնակցում այդ ուրախությանը։ Փայ տանողները մնում են երեք օր, կյուրակեից մինչև չորեքշաբթի։ Առաջի օրն առավոտյան հայրը կանչում է տղամարդ բարեկամներին էլ, ուտում, խմում, և կեսօրին ցրվում են. հետո կանչում են բարեկամ կանանց, ցույց են տալիս բերած փայը, բաժանում են նրանց մեկ մեկ գաթա և բերած քիշմիշը, հետո արդեն հաց են տալիս, սակայն փայ բերողներին տուն հրավիրել չուզողները հացի չեն մնում։ Մյուս օրերն այս ու այն բարեկամները, որոնք այդ օրն այդտեղ հացի էին մնացել, հրավիրում են աղջկա տնեցիներին, աղջկանը և փայ բերողներին իրենց տուն և հյուրասիրում նրանց բավական ճոխ սեղանով։ Փայի ուրախություններին շատ հաճախ ձայնակցում է դավուլ-զուռնան, որ շուտով տաքացած գլխներին հանում է կալը. հավաքվում են գյուղի գրեթե բոլոր հարս ու աղջիկները, և սկսվում է հասարակաց կլոր պարը։

Փայերը սովորաբար տանում են Ջատկին, մայիսին, Վարդավառին, ս. Աստվածածնա վերափոխման, սեպտեմբերին և Վարագա սուրբ խաչին։ Բայց սրանցից նշանավոր և պահանջելին երեքն են՝ Ջատկինը,

Վարդավառինը և ս. Աստվածածնա վերափոխմանը։ Եթե հարսանիքը շուտ լինելու պատճառով այս երեք փայը չտանեն, փոխարենը ուրիշ բանով պահանջում են։ Աղջկա տերն էլ փային դարձվածք է ուղարկում երկու կամ երեք մարդու ձեռքով, որոնք երկու կամ երեք օր մնում են թաղավորի տանը, լավ հյուրասիրվում և վերադառնում։

Ահա փայերը և նրանց դարձվածքը.

Առաջին փայ

3 արշին մահուդ	9 ռ.
1¼ արշին ալ մահուդ դոգնոցի համար .	4 ռ.
Շապիկացու կտոր	1 ռ.
Հարսին կիսակոշիկ	3 ռ.
Հարսնացուի մորը, եղբոր կնոջը, քրոջը և այլն մի մի զույգ մյաս-բապուճ՝ մոտավորապես	3 ռ.
Մի մկրատ և մի դանակ	—80 կ.
Մեկ հայելի	—20 կ.
Ապրեշումի և Ռուսիո թել	2 ռ.
Շալ թել	1 ռ.
9 ֆ. քիշմիշ լապլապու	—90 կ.
Հինա	—10 կ.
Օղի	2 ռ.
Հարսին ընծա մի ոսկի կամ . . .	3 ռ.
Ընդամենը՝	30 ռ.

Բացի սրանից մինչև 60 զույգ գաթա, 2 սեր, մի թուփ հալվա։ Փեսայի տանից ուղարկված գաթաների թիվը անշուշտ զույգ պիտի լինի, որ փեսացուն և հարսնացուն զույգ մնան։

Առաջին փայի դարձվածք

Հարսնացուի տանից ութ օր հետո ուղարկում են թագավորի տունը երկու մարդու ձեռքով փային դարձվածք.

20 զույգ թողլուխ և զուլպա։ Փեսին մի զույգ զուլպա, կլապիտոնով նշված և մի զույգ թողլուխ. փեսին մի ելակ, 3 խաչ կուլուր, որպեսզի հարս և փեսան խաչի պես սուրբ մնան մինչև պսակը։ Կերսաբին մի ձեռք սպիտակեղեն, փայ բերողներին մի մի զույգ զուլպա, մի հայելի, մեջը զարանֆիլ ածած, որպեսզի հարսնացուն հայելու պես լույս տա և զարանֆիլի նման հոտով լինի։ Կենտ թվով գաթա, որպեսզի

Հարսը փեսի հետ զույգ մնաւ Մի խորոված հավ։ Մի թուփ հալվա, մի ամման ձվածեղ, մի ամման սեր։

Փեսացուն հրավիրում է երիտասարդ ընկերներին և սրանց հետ ուտում անպատճառ գաթան ու հավը։ Փայի դարձվածք բերողները ստանում են նվեր 40-ական կոպեկ, 2 օրից վերադառնում։

Երկրորդ փայ

Վարդավառին ուղարկում են պառավ կանանց ձեռքով երկրորդ փայը.

3 արշին մահուդ կամ երկու թուփ լավոսի շալ	*9 ռ.*
Մի սպիտակ առլադիա	*3 ռ.*
Մի յաղմա	*—50 կ.*
Մի թուփ կյադի	*2 ռ.*
Մի զույգ ոտնաման	*—40 կ.*
Թել	*1 ռ.*
Հինա	*—10 կ.*
Քիշմիշ լապլապու	*1 ռ.*
ընդամենը՝	*17 ռ.*

Եվ եթե այս ամուսնության մեջ մինը միջնորդի դեր է կատարած, նրան էլ ուղարկում են մի զույգ ոտնաման, չորս զույգ գաթա, մի թուփ հալվա։

Երկրորդ փայի դարձվածք

Երկու մարդու ձեռքով ուղարկում են փեսացուին մի շապիկ վարտիք, մի զույգ գուլբա, մի դրամի քսակ, երեք խաչ գաթա, որպեսզի փեսացուն և հարսնացուն խաչի պես մաքուր և սուրբ մնան մինչև պսակ. տասն և մեկ հատ գաթա և մի ամման ձվածեղ։

Երրորդ փայ

Մի փութալի շալ	*12 ռ.*
Մի զույգ ոտնաման	*1 ռ.*
Մի մկրատ և մի ասղաման	*— 60 կ.*
Թել	*1 ռ.*
Հինա	*— 10 կ.*
Ջարաղ	*— 50 կ.*
Գաթա զույգ թվով, կարմրցրած հավ և 0,5 թունդի ոդի . .	*1 ռ.*
Ընդամենը	*16—20*

Երրորդ փայի դարձվածք

Երեք մարդկանց ձեռքով ուղարկում են մի փաթուսխա շապիկ, մի բամբաղյա ֆուֆայկա, մի կարմրցրած հավ, մի թուի հավկա, 3 երկար կուլոլ և 21 հատ դաթա: Երեք օր մնում, ուտում, խմում և վերադառնում են:

Չորրորդ՝ պանրի կամ խավծի փայ

Մայիսի 15—20-ին փեսի կողմից մի տղա կամ մի աղջիկ տանում է հարսին.

Մի քաշ պանիր.

Թել պանրից սպիտակ մազերի նման հուսակ են շինում և ծայրին մի ոսկի կապում, ուղարկում հարսնացուին, որ հարսի մազերն երկար լինի և մինչև սպիտակելը ամուսնու հետ միասին ոսկի օրեր անցնեն:

Մի ման հում սեր, որ միշտ սիրով լինին.

Մի զույգ մյաս-բապուճ.

Մի հայելի.

10 կ. հինա և մի շալովի.

Փայ տանողը միայն մի երեկո մնում, լավ հյուրասիրվում և վերադառնում է: Այս փայը դարձվածք չունի:

Հինգերորդ՝ ճզմի փայ

Սեպտեմբերին, հնձոցին (հունձի ժամանակ) փեսայի տնից հարսին մինի ձեռքով ուղարկում են թարմ մրգեր և մի զույգ ճըզմա (կոշիկ): Տանողը միայն այդ երեկո հյուրասիրվում է, առավոտյան վերադառնում:

ԴԵՐԻ

Տղայի տանեցիք ամեն կերպ աշխատում են ուրախացնել իրենց հարսնացուին, ուստի և բացի փայ տանելուց և ամեն անգամ մի քանի օր ուրախություն անելուց, նրանք տանում են իրենց հարսին զբոսնելու, այս կամ այն ուխտատեղին ուխտ:

Նշանադրությունից հետո աղջիկը տանիցը դուրս չի գալիս մինչև որ տալը կամ տեգերկինը չգա սրան չհանեն դուրս, տանի զբոսնելու, ծաղիկ, կանաչ կոխել տալու, որպեսզի հարսնացուն կանաչի պես կանաչի և ծաղկի պես ծաղկի:

Կանաչ կյուրակեին դարձյալ կերսանքը տանում են հարսին դաշտը սնձի. ընկերուհիների հետ ուրախ ղվարթ թափառելով, երգելով ու պարելով ծաղկալից դաշտերում, հարսնացուն սնձի փունջեր է կապում և ուղարկում կերսանցը նվեր։

Կարմիր կյուրակեին կերսանքը տանում են հարսին հանդերը բանջար հավաքելու. խաղը, ծիծաղը, երգը և պարը անպակաս են լինում այսպիսի զբոսանքի ժամանակ։ Կերսանքը մի մեծ պարկ բանջար են լցնում և հարսնացուին շալակել տալիս, որ աշխատասեր և գործունյա լինի։

Դերինների ժամանակ, մանավանդ համբարձման, հարսի տեգրը կամ կերսարը լծում է սայլը, ներքնակով ու բարձերով զարդարում. յուրայիններից մի քանիսի հետ հարսնացուին էլ նստեցնում, տանում են սրբի դուռը՝ ուխտ։ Այստեղ կերսարը նվիրում է հարսին մի շալովի, մի մեծ խաչկապ թաշկինակ տանձ ու խնձոր. տեգրը նվիրում է մի թաշկինակ լապլապու քիշմիշ, մոտիկ ազգականներն ևս կամ մրգեղեն և կամ 50 կոպ.—մի ռուբլի փող։

Սրբի առաջ վառում են նախշած մոմ, որ հարսնացուն ալ ու խաշխաշ մնա։ Բայց այս բոլոր ուրախությունների ժամանակ փեսան բոլորովին հեռու է լինում հարսից և հաճախ երկար ժամանակ չտեսնելով նրան՝ սաստիկ կարոտում։

ՔԱՍՍԱՊԻՉԱՆ

Հարսանիքից մի շաբաթ առաջ փեսայի հայրը կնքահոր հետ գնում է միջնորդի տունը, տանելով յուր հետ մի թունդի օղի։ Միջնորդը հրավիրում է աղջկա հորը, նրա և յուր մի քանի բարեկամներին, ծխական քահանային, երեցփոխին և տանտիրոջը։ Ընթրիքի ժամանակ, երբ օղու առաջին բաժակը մատուցում են քահանային, սա դիմում է միջնորդին և հարցնում. «Մարկոս ամի, աս ի՞նչ հայ է, մեզի ինչի՞ ես հավաքե»։ Միջնորդը պատասխանում է. «Աստված կամենա, առաջիկա շաբթուն Հարութիեն ամին հարսնիք պիտի էնե»։

— Աստված աջողություն տա,— ընդմիջում է քահանան,— իրար տալիք-առնելիք ունի՞ք»։

— Ի՞նչ պիտի ունենանք, տերտեր ջան, խառնվում է աղջկա հայրը, ինամիս պիտի բերե հարսնացուին 20 ուռուպիա և երեք քանօթինոց օսկի։

Քահանան դառնում է դեպի փեսացուի հայրը և ասում. «Պարտքդ է, բերես պըտի»։

Փեսայի հայրը կամ համաձայնում է և կամ խոստանում է մաղարի հետ բերել և կամ երկար սակարկում։

Երև հարսնացուն օտար գյուղից է, քահանան փեսայի հորից իմանալով, թե քանի հոգով պիտի գա հարսը տանելու, ասում է. «Հարուբյուն ամին այսքան (10—25) հոգով պիտի գա մաղար՝ հարսը տանելու, ձեզնեն վեվ օր գուզե ձիավոր իջեցնե իրեն տունը, թող իմ ձեռքես ընդունեն մի բաժակ բախի»։

Հրավիրյալներից շատերն ուրախությամբ ընդունում են քահանայի առաջարկը և ցրվում։

Քասապիշայից անմիջապես հետո, երբեմն էլ առաջ, փեսացուի հայրը մի շիշ օղի առած գնում է ծխատեր քահանային տեսնում, յուր օղիից մի բաժակ նախ ինքը խմում, հետո քահանային և ներկա եղողներին հրամցնում, մնացածն էլ տնեցիներին տալիս դատարկելու և քահանայից «հատուբյան» վկայական առնում, գնում Ախալքալաք գործակալի մոտ և պսակի հրաման խնդրում։ Այստեղ սաստիկ աղաչում են գործակալ հորը, իրենց աղքատ ձևացնում և պսակադրամը կարելվույն չափ քիչ տալիս։

Գյուղի տանուտիրոջն էլ տանում են մի ֆունտ շաքար կամ կես ֆունտ սուրճ. գղիրին տալիս 10 կ., լուսարարին՝ 10—15 կոպեկ։

ՄԱՂԺԱԺՈՒՄ ԿԱՄ ԳԱԹԱԹՈՒԽ

Հարսանիքի պատրաստությունը միշտ սկսվում է հինգշաբթի օրը, երբ տները հոգում և մյուս օրվա համար կերակրներ են եփում՝ շաղկմն բանջար, չաշբանջար, լոբիաջուր՝ արուկով, լոբի, պաստեղ, կարտոֆիլ և թթու խոշավ։ Մյուս օրը առավոտյան խոհարարուհին (քեյվանին) մի ալրմաղի մեջ քիշմիշ է ածում, ալ փուշիով ծածկում, մի քանի զույգ էլ մեղրամոմ առնում, երբեմն էլ մի շիշ օղի, և պատում գրեթե ամբողջ գյուղը։ Մտնելով նախ քավորի, թագավորի ազգականների և ապա մյուս գյուղացիների տները, նա ասում է. «Հրամեցեք էրթանք այսինչի տունը գաթաթուխ, տատոսը ձեզի ըլլի», և մի մի բաժակ օղի, մի բուռ քիշմիշ տալիս։ Մոտիկ ազգականներին նա տալիս է և մի զույգ մոմ։

Հրավիրվածները մի աման կորկոտ կամ 2—10 կ. փող են տալիս քեյվանուն։ Մի ուրիշ կին էլ մի ափսեի մեջ քիշմիշ ածած, վրան մի թաշկինակ և գոգնոցի կապ տանում է երեցկնկան նվեր և խնդրում գալ գաթայի ալյուրը մաղելու։ Ճաշից հետո հրավիրվածներից շատերն անշուշտ վերցնում են 1—3 ֆունտ կարագ, կամ 5—12 հավկիթ, կամ յուղ,

կամ սեր, կամ պանիր, կամ էրիշտա և կամ 20 կոպեկ փող և գնում հարսնեւտունը, տալիս փեսի մորն ու ասում. «Աչքդ լուս, աստված սուրբ պսակին արժանացնե»: Նա էլ պատասխանում է. «Շնորհակալ եմ, օր դուք ինձի օգնեք կը, աստված ա ձեղի օգնե»:

Հետո վերցնում է նրանց բերածները, դատարկում և ամանները վերադարձնում: Գալիս է և երեցկինը:

Նախ բոլորին մի մի բաժակ սուրճ կամ թեյ են տալիս: Հետո տան մեջտեղը գնում են տաշտը, հաճախ դավուլ-զուռնան գալիս ածում է, երեցկինը չոքում է տաշտի առաջ, յուր բերած երկու մոմը խիտում տաշտի ծայրերին վառում, որ հարսը զույգ մնա և պայծառ, լուսավոր լինի. մի կարմիր վալա (քող) ձգում երեսին, որ հարսը ամոթխած լինի և «Աստված սուրբ պսակին արժանացնե, բախտավոր ըլլին», ասում ու մաղում է ալյուրը բոլորովին լուս, որ հարսը համալոր լինի, շատ չխոսի:

Երբ փոքր ինչ մաղում է, վեց կանայք 1—5 կոպեկ նվեր տալով երեցկնկանը, հերթով ձգում են կարմիր վալան իրենց պլիներին և մաղում ալյուրը:

Կնքակինը տալիս է իրիցկնկանը 10 կոպ. ալյուրը մաղելու վարձ, իսկ տղայի մայրը օղիով և մյաղով հյուրասիրում է ինչպես իրիցկնկանը, այնպես և մյուս ալյուր մաղող վեց կանանց:

Եթե գաթաթուխի ալյուրը իրիցկինը չմաղե, ժողովրդյան կարծիքով հարսը կխելագարվի:

Ալյուր մաղելուց հետո բոլորը ընթրիքի են նստում և ուտում նախորդ օրը պատրաստած կերակուրները:

Հարուստներն ընթրիքից առաջ մի մի բաժակ օղի են տալիս, որ խմում են երկար բարեմաղթություններով:

Ընթրիքից հետո շատերը գնում են, մնում են միայն կնքամերը և մոտիկ ազգականներից մի քանիսը: Սրանք 40—100 զույգ գաթա են թխում. հետո կրկին թեյ խմում, ընթրում և մի մի գաթա առած գնում տները: Մի քանի երիտասարդներ էլ երթիկից թոկ քաշ անելով՝ բզավում են. «Բախտավոր Հարս ըլլի. ձեռքն ու ոտքը ուղուրով ըլլի»:

Թոկի ծայրը գաթա են կապում, որ քաշում հետանում են[28]:

---

28 Մի քանի գյուղերում հարուստները մորթում են մի մի եզ, որից հարսանիքի ընթացքում պատրաստում են կերակրները. դավուլ-զուռնի առաջնորդությամբ բերում են եզը, ձգում գետին, և մինչև մսագործը կտրում է վիզը, յավորը ձգում է արյան մեջ մի բաց կողպեք և առանց վերցնելու այն արյունի միջից, կողպում և ապա վերցնում այդպես կողպած պահում է: Այս կողպեքը համարվում է ամուսնական կապերի ամրության և անքակտության նշան: Միևնույն ժամանակ յավորը պոկում է եզի պոչից մի քանի մազ, դնում յուր գաշուկի պատյանի մեջ և պահում մինչև առագաստ մտնելը: Այս սովորությունը բացատրվում է նրանով, որ եզը համարվում է սեռական արիության նշան,

Նույն երեկոյան հարսնացուի տնից «շապիկ են բերում» փեսացուի տունը. հարսնացուն ընծա է ուղարկում նշանադրության կամ ուրիշ ժամանակ իրեն ընծա տվողներին, և այս ընծաները լինում են նրանց տված ընծաների համեմատ կամ մի զույգ գուլպա, կամ մի զույգ ձեռնոց, կամ սռնապան և այլն, իսկ մոտ երեք ռուբլի տվողներին շապիկ ու վարտիք, որ «չամաշուր» է ասվում: Չամաշուր ուղարկում են նաև փեսացուին և սկեսրանց տան մի քանի անդամներին: Եթե նշանադրությունից հետո սկեսրանց տանը ծնունդներ են եղել, հարսնացուն ուղարկում է նրանց բալուլոց և երեխայի շորեր:

Շաբաթ օրը, եթե հարսը միևնույն գյուղումն է, թագվորի հայրը դավուլ-զուռնով գնում է քավորի տունը և ասում. «Հրամմեցեք էրթանք բարի ուրախության»: Քավորը, քավորկինը և սրանց ընտանիքը, ուր մի քանի մոտիկ ազգականների հետ օղի են խմում, ճաշում, կաքավում, երգում և ցրվում տները: Քավորին դարձյալ դավուլ-զուռնով ճանապարհ են ձգում մինչև տունը:

Իսկ եթե հարսն ուրիշ գյուղ է, փեսայի հայրը հրավիրում է բարեկամներին ու գյուղացիներին, քավորին, ծխատեր քահանային և երեցփոխին: Հյուրասիրում է սրանց թեյով ու ճաշով: Սեղանի վերջը քահանան առաջարկում է. «Ջեզանից ով որ կամենում է մաղար էրթալ, թող իմ ձեռքեն ընդունե բաժակը»:

Հարսնացուի գյուղն էրթալ և հարսին բերել կամեցողներն առնում են քահանայի մատուցած օղին և բարեմաղթություններով խմում: Հետո քահանան մի բաժակ ևս առաջարկում է նրան, ով կամենում է հարսին յուր տունն իջեցնել: Մինչև պսակը հարսը կերսանց տուն չի մտնում: Փեսայի մոտ ազգականներից մինն ընդունում է բաժակը:

Հետո արդեն մի քիչ էլ տևում է ուրախությունն և բոլորը ցրվում են:

ՄԱՂԱՐ-ԽՈՒՄ

Նույն շաբաթ օրը ճաշից հետո մաղրվորները հավաքվում են փեսացուի տունը, նախաճաշիկ անում, ապա ցրվում և ձի հեծած նորից հավաքվում: Այս ժամանակ փեսացուի մայրը բերում է մի գաթա և բաժանում բոլորին: Փեսացուի հայրը և քավորն առնելով իրենց հետ ճիճան և «ճարկը», ձիավորվում են և ահագին աղմուկով, երգով, խաղով ու դավուլ-զուռնի առաջնորդությամբ ուղղվում դեպի հարսնացուի գյուղը: Երիտասարդ մաղրվորները ճանապարհին աշխատում են իրենց բոլոր շնորհքները բանեցնել, արշավում են, ջիլիթ խաղում, երգում ու հազար

ու մեկ հանաքներ անելով գնում, հասնում գյուղ։ Փեսացուի հայրը և քավորն իջնում են միջնորդի տունը, իսկ մյուսներին հրավիրում են հարսնացուի ազգականները։

Փոքր ինչ հանգստանալուց հետո փեսայի հայրը մի շիշ օղի առած գնում է քահանային տեսության։ Համբուրում է քահանայի աջը, մի բաժակ օղի ածում և «Օրհնյա ի Տեր» ասում, խմում։ Քահանան պատասխանում է. «Աստված օրհնե, շնորհավոր ըլլի»։ Ապա ածում քահանային և մյուսներին է հրամցնում, վերջը մի բաժակ էլ դարձյալ ինքը խմում և մնացածը տալիս ներտեղանց դատարկելու։ Հետո վերցնում է շիշը և գնում, դավուլ-զուռնի առաջնորդությամբ հավաքում բոլոր մաղրավորներին միջնորդի տունը՝ հինա տանելու։

ՀԻՆԱ ՏԱՆԵԼ

Շաբաթ օրը քավորը պատրաստում է հինան. մի առաջամատույցի վրա գնում է կես ֆունտ հինա, մյաս-բապուճ, մի քողք, մի շիշ և վրան մի կարմիր թաշկինակ ձգում։ Իսկ փեսի հայրը պատրաստում է հարկը. մի բակեղակի մեջ գնում է մի տիկ գինի, մի խորոված գառ և գաթա։ Երեկոյան հինան գնում են մի երիտասարդի գլխի, որ խաղացնելով և կաքավելով առաջ է տանում, իսկ հարկը ձգում են գլխրի շալակը։ Երբ փեսի հայրը, տղամարդ բարեկամները և քավորը դավուլ-զուռնի առաջնորդությամբ հասնում են հարսնացուի տունը, տան փոքրիկներից մի քանիսը փակում են դուռը և միայն այն ժամանակ են բաց անում, երբ քավորը տալիս է 20—30 կոպեկ։

Բոլորը ներս են թափվում օդան և ավագության կարգով նստում. չամուսնացած երիտասարդները հինան փոփոխակի գլխներին դնելով կաքավում են և երբեմն գովում. ափսոս, որ հինի գովասանքը թուրքերեն է։ Հինան խաղացնելուց հետո տալիս են հարսնացուի մորը։ Այս ժամանակ հյուրերին պատվում են մի մի բաժակ օղիով։ Հետո դնում են խոնչան երկու սատրների միջև և դարսում վրան քողքը, հարսի զգեստները, մյաս-բապուճը և այլն, բացի հինից, այս ժամանակ քավորն ավելացնում է սրանց վրա երկու հատ երկու մանեթանոց ռսկի։

Քահանան պահանջում է քավորից «պող բացում», այսինքն հանդերձի պողը բանալու ընծա, և երբ 40—60 կոպ. սատանում է, կատարում է հարսի քողի, կամ որ միևնույն է, հանդերձի օրհնությունը և սատանում յուր իրավունքը՝ դնելով խոնչի վրա երկու ափսե, որոնցից մեկը հատկացնում է իրեն, մյուսը եկեղեցուն։ Նախ քավորը ձգում է քահանայի ափսեն մի ռուբլի, հետո փեսայի հայրը, նույն ափսեի մեջ 2—3 ռուբլի։

80 կոպեկ էլ մյուս ափսեն, հետո արդեն մյուս մաղրավորներն են 1—5 կոպ. խաչհամբույր ձգում։

Սրանից հետո բոլոր մաղրավորները խումբ-խումբ նստած ընթրում են։ Մատուցանում են յայնի, քյութա, փլավ և պանիր։ Իսկ օղին, որ առատությամբ բաշխվում է, փեսայի տնից բերածն է լինում։

Ընթրիքից հետո խորոված գառը և մի քանի հատ գաթա բերում դնում են խոնչի վրա, քահանայի առաջ։ Մինը գառի մի ոտը կոտրում և երկու զույգ գաթի հետ տալիս է քահանային, որ ուղարկում է յուր տուն, մյուս ոտը տալիս է աղջկա տնեցոց, իսկ մնացածը կամ իրենք են ուտում և կամ ուղարկում միջնորդի տունը, առավոտյան մաղրավորներին նախաճաշիկ տալու։ Հետո արդեն շնորհակալ են լինում և զարձյալ փավուլ-զուռնի առաջնորդությամբ ցրվում։ Երե հարսը միևնույն գյուղումն է՝ փեսի տանը մի քանի ժամ հասարակաց պար է լինում։ Քավորը գնալիս ծաղկոցավոր աղջիկներին, որոնք երկու երեք օրից ի վեր շրջապատել են հարսին և ամեն կերպ զբաղեցնում, ուրախացնում են նրան, տալիս է 10—15 կոպեկ ընծա։

ԾԱՂԿՈՑԱՎՈՐՆԵՐ

Դեռ մաղարը չեկած, գյուղի չափահաս աղջիկները շրջապատում են հարսնացուին և երեք օր շարունակ նրան տնից տուն են շրջեցնում, ամեն տեղ հյուրասիրելով։ Բոլոր բարեկամները տուն են տանում և մի շալովի կամ մի բաշկինակ նվիրում հարսին։ Շաբաթ երեկոյին հարսնացուն վերադառնում է հորանց տուն, ուր նախ մայրը և ապա հայրը, եղբայրները, քույրերը և մոտիկ ազգականները փաթաթվում են նրան և լալիս։ Հայրը խրատում և մխիթարում է աղջկան ասելով. «Գնա՛, օղուլ, աստված հետդ ըլլի, կերսարջդ ու կեսուրիդ հնազանդ էղի, մարդուդ հավատարիմ կեցի. մենք թեզ-թեզ կուգանք քեղի տեսության, Ջատկին, Վարդավորին տուն կբերենք»։ Գիշերը հարսնացուն և բոլոր ծաղկոցավորները ձեռներին հինա են դնում։ Կիրակի առավոտյան մաղրավորները ձի հեծած գալիս համախմբվում են հարսնացուի տան դուռը։ Թամբում և համայիլներով զարդարում են այն ձին, որը հեծնելու է հարսնացուն։ Այս ժամանակ գյուղի համարյա բոլոր աղջիկները հավաքվում են հարսնացուի մոտ, մխիթարում են նրան և թույլ չեն տալիս լաց լինելու։ Կանչվում է իրիցկինը, որ աղջիկների երդով կապում է հարսնացուի գլուխը, մոր կաթը կթում է գլխին և վրան աղ ցանում, որ կաթի պես մաքուր և աղի պես համով լինի։ Ոտնամանի մեջ ևս լցնում է 7 գարի, որ 7 տարի տղա չբերե։ Վերջապես հարսնացուն դավուլ-զուռնի առաջնորդությամբ դուրս է գալիս, իսկ ծաղկոցվորների խումբը երգում է.

Աղջի հարսնառդ էկավ գեղի վերևեն,
Քեզի ալ քողք բերեց թղթի թերևեն,
Մի՛ լա, մարիկ, մի՛ լա, էկեր կըտանին,
Օխտն ախպոր մե քուրը ջոկեր կը տանին։
Մարիկները խափեցին մե թուխմ շամով,
Քուրիկները խափեցին մե ձեռքմ հինով,
Ախպորը խափեցին մե մահուդ չուխով,
Մի՛ լա, մարիկ, մի՛ լա, էկեր կըտանին,
Օխտն ապխոր մե քուրը ջոկեր կըտանին։
Հոր խափեցին, մոր լացուցին,
Ախպոր լյուլեն կոտրտեցին,
Քրոջ վալեն պատռտեցին.
Մի՛ լա, մարիկ, մի՛ լա, էկեր կըտանին,
Օխտն ախպոր մի քուրը ջոկեր կըտանին։
Էրթամ, էրթամ՝ հեռու տեղեր հեռանամ,
Էփոր մարիկս միտքս ըլնի, մեջքս բռնեմ կըռանամ,
Մի՛ լա, մարիկ, մի՛ լա, էկեր կըտանին,
Օխտն ապխոր մե քուրը ջոկեր կըտանին։
Մի՛ լա, մարիկ, մի՛ լա, լալողը ես եմ,
Ղարիպ երկրները կորողը ես եմ։

Հարսնացուն այս երգից զգացված սաստիկ լալիս է, իսկ հայրը բռնելով սրա ձեռքը՝ հանձնում է սկեսրին, ասելով.

— Տիա՛, խնամի ջան, տիա քո ամանաթդ, տա՛ր։ Փառք աստծու, օր էրիսի ջրով կրցա քեզի տա, ուղուրով ըլլի, աստված սուրբ պսակին արժանացնե, մե բարձիմ ծերանան»։ Հետո դառնալով յուր դստեր, համբուրում է երեսն և ասում. «Գնա՛, օղուլ, աստված հետդ ըլլի, էստից էտև աս է քու հարդ, պատվե ատոնց, մարդուդ հնազանդ էղի, տեսնեմ քեզի՝ էրեսս սև չէնես»։

Իսկույն քավորը 20—40 կոպեկ տալիս է այն պատանուն, որ նստել է հարսնացուի ձին, սա իջնում է և առաջարկում ձին հարսնացուին, սկեսրայրը և հայրը վերցնում են հարսնացուին և նստեցնում ձիուն։ Հետո սկեսրայրը տալիս է երկու ռուբլի օժիտի սնտկի (արկղի) վրա նստող կնոջը, 12 շահանոց, օրինակ 12 առաքելոց, ոսկի՝ հարսի մորը, մի քանի կոպեկ վարպետավարձ այն կնոջ, որի մոտ հարսը ձևել, կարել, գործել է սովորած լինում. և բոլոր մաղրավորներն ահագին աղաղակներով, հրացանի պայթյունով և չիլիթ խաղալով, դավուլ-զուռնի առաջ-

նորդությամբ դիմում են դեպի փեսացուի գյուղը։ Մաղրալորներից մի քանիսն աշխատում են հարսնցուի տանից գողանալ օղու բաժակ, որ հարսն ուրախ լինի, գդալ, որ հարսը ղամաքն յուր հետ բերե։ Երբ մոտենում են իջևանատեղվույն, հարսի ձիու գավակին նատեցնում են մի արու երեխա, այն խորհրդով, որ հարսն արու զավակներ շատ ունենա։ Այս ժամանակ հարսը հանում է գրպանից փոքրիկ հայելին և դարձնում նախ՝ դեպի եկեղեցին և ապա դեպի կերսանց տունը, որպեսզի եկեղեցին դուք տա կերսանցը, որ իրեն պայծառ պահեն։ Գյուղի մոտ հարսին դեմ են բերում մի գառ, և հարսը պետք է ձեռով վերցնե առնե ձիու վրա և կամ հարսնեղբայրը պետք է կծե գառի ականջը և կտրե։ Այս գառը հարմարվում է անմեղության օրինակ։ Թագվորն էլ թագվորցուների հետ մի բարձր տեղ սպասում է, երբ հարսն անցնում է, թագվորցուները ուռա են բղավում, իսկ թագվորը քիշմիշ է լցնում հարսի գլխին, կամ խընձորով խփում է, որ անուշ լինի։ Հարսին իջեցնում են մի կաթսայի վրա, որ «ձենով»՝ «համբավավոր» լինի և գնալով հարս իջեցնողի տունը, բոլոր մաղրալորներն ուտում, խմում և ընթրում են։ Հետո հարսին այնտեղից մեծ ուրախությունով բերում են սկեսրանց տունն։ Դռան առաջ հարսին ընդառաջ է ելնում սկեսուրը։ Վերջինիս աչքալույս են տալիս և հարսը հանձնում նրան։ Նա համբուրում է հարսին և ձեռը բռնած տանում նրա համար պատրաստած տեղը։ Հետզհետե հարևան հարսեր և օրիորդներ գալիս են նոր եկած հարսին տեսության, իսկ դրացիները գալիս են աչքալույս տալու փեսայի հորը։ Հարսի հետ լինում են նրա երկու հարսնեղբայրները, որպես նրա թարգմաններն ու հավատարիմ պահապանները։ Հենց որ նոր եկած հարսը փոքր ինչ հանգստանում է յուր հարսնեղբայրների հետ, երկու նշանավոր թագվորցիի[29] մի շիշ օղի առած գալիս են հարսնեղբայրներին տեսության։ «Բարով էք էկե, հազար բարով, ասում են նրանք։— Հըլպտ մեր փեսի խանում զոնքանչը իմացած գըլլի, օր թագվորցիներս ընկերությեն կենենք իրեն ազիզ փեսին հետ, պահենք, պահպանենք ու ուրախացնենք կը, ու մեր փայն աղրկած գըլլի ձեզի հետ»։

— Ինչդ չէ, մենք շատ շնորհակալ ենք, օր դուք մեր փեսին ատպես պահեք պահպանեք կը, ահան, մեր քիչը շատի տեղ դրեք, առեք ձեր փայը,— ասում են հարսնեղբայրները։

Ընծան լինում է մի խորոված հավ, մի քանի զույգ գաթա և հալվա։ Այդ գիշեր թագվորցիք և հարսնեղբայրները միմյանց վերաբերությամբ

29 Թագվորցիներ լինում են մի քանի պատանիներ, որոնք շարաթ երեկոյից սկսած մինչև երեքշաբթի, պսակի ավարտը, փեսային ընկերակցում և նրա հետ ուրախանում են։

շատ զգունշ են լինում, որովհետև առաջիններն աշխատում են մի որևէ բան գողանալ հարսի վրայից, որպեսզի հարսնեղբայրներին մի բանով տուգանքի ենթարկեն, իսկ վերջիններս հնարում են փեսայի վրա մի բան, կամ աշխատում են թոնրի պարագաներից մին գողանալ, որ թագվորցիներից մի բան ստանան։

ԹԱԳՎՈՐ ԿԱՆԳՆԵՑՆԵԼ

Շաբաթ երեկոյից սկսած թագվորին շրջապատում են հասակակից չամուսնացած երիտասարդներ, որոնք թագվորցիներ են կոչվում։ Սրանք ամեն ջանք գործ են դնում թագվորին զբաղեցնելու և ուրախ ժամանակ անցկացնելու։ Կիրակի օրը թագվորը գնում բարեկամներից մինի տան մեջ թագ է կենում։ Այս ժամանակ թագվորի տնից մինը գալիս է և բերում է հինա և մոմեղեններ։ Այստեղ նա իմանալով, որ թագվորը չկա, խրատում է թագվորցիներին՝ գնալ պարել նրան։ Մի քանի գյուղերում այս հանդեսը կատարում են շաբաթ երեկոյին, ուստի և քավորը բաժանում է թագվորցիներին մոմեր։ Բոլոր թագվորցիները դավուլ-զուռնի առաջնորդությամբ այս ու այն տուն ընկած պարում են, և երբ գանում են, մի շիշ օղի են տալիս տանտիրոջն և թագվորին առնում։ Տանտերը թագվորի բուկը մի ալ թաշկինակ է կապած լինում իբր նվեր։ Թագվորցիք այստեղից թագվորին չարքյասկու աչ թևը հանած և քավորը աչ կողմը կանգնած կաքավելով տանում են քավորի տունը, ուր նախ մի հորով-մորով չամուսնացած երիտասարդի, ապա թագվորի և հետո քավորի ներսները սափրում են։ Սափրիչը թագվորի միրուքի կեսը սափրելուց հետո կանգ է առնում և ասում. «Ածելին քոռ է, չի կարե, ճերմակ լիսան կ'ուզե»։ Քավորը մի քանի կոպեկ է տալիս։

Սափրելուց հետո թագվորցիք նախ մի հորով-մորով չամուսնացած երիտասարդի և ապա թագվորին լողացնում են գոմը տաշտի մեջ, որպեսզի նա ևս այդ երիտասարդի պես հորով-մորով մնա։ Վերջը գլխի մազերը վեր ցցելով օճառ են քսում վրան և ասում. «Տե՛, քանքյուլը ծուռն է, դըզե, քավոր աղա»։ Քավորը մի շիշ օղի է խոստանում։ Թագվորին լողացնելուց հետո մինը շալակում բերում է օդան, ուր և հագցնում են հանդերձը։ Այդ օրը հարսնացուի տանից դավուլ-զուռնի առաջնորդությամբ և տան փոքրիկներից մինի ձեռքով ուղարկված է լինում փեսացուին մի շապիկ, մի վարտիկ, մի լաստիկ արխալուղ, մի մահուդ չուխա, կլապիտոնով ելակ, զանգյալ, գուլպա և ապրեշում դյուզպաղի (ծնկի կապ)։ Բերողին պատվում և մի զույգ չուստիկ են նվիրում։ Այս

ժամանակ հրավիրում են քահանային, օրհնել ամալիս հարսնացուի տանից ուղարկված փեսացուի վերոհիշյալ հանդերձները և մի քանի կոպեկ աջհամբույր տալով նրան ճամպում ու իրենք երգեր երգելով հագցնում, զարդարում թագվորին։ Ամեն մի հագուստը հագցնելիս վեր են բարձրացնում, ցույց տալիս հավաքված կանանց և գոչում. «Աշեցե՛ք, մամտիք (մայրիկներ), չերթաք փուշտ (խարդախ) մորերուդ հորերուդ գանգըտիք, մեր թագվորի զոնքանչն իր փեսին զրկեր է աս... ու՞ր տեղացբան է»։ Հանդիսականները հեռավոր տեղերի անուն են տալիս՝ Ստամբոլու, Զինումաչինու, Պետեպոլու... բան է...

— Գինն ի՞նչ է։

Շատ բարձր են գնահատում։ Մի ռուբլու իրեղենին հարյուր ռուբլու գին են դնում։

— Լավ գնահատեցիք, շե՛ն մնա զոնքանչը,— գոչում են թագվորցիները և հագցնում երգելով.

Հա՛յ հագուցեք, հագուցեք,
Տարեք խաս պաղչան թագուցեք,
Բմբուլ գողինք (անկողին) ձգեցեք,
Վարդ ծաղկանց մեջ քուն դրեք։

Քավորն այս ժամանակ մի զույգ յամանի է նվիրում թագվորին և մի ալ թաշկինակ կապում վիզը, ծայրերը բաց թողնելով։ Իսկ հին չուստիկները ժամակոչը գալիս պահանջում տանում է իրեն։ Հետո թագվորցիք նստում օղի են խմում, հաց ուտում, որ առնվազն երեք տեսակից է բաղկացած լինում. խաշ, յայնի և փլավ. կաքավում, շարունակ երգում և ուրախանում են։ Հացից հետո թագվորցիք դավուլ-զուռնի առաջնորդությամբ տանում են փեսացուին իրենց տուն։ Մայրն ընդառաջ է ելնում փեսացու որդուն և համբուրում է աչքերը։ Թագվորցիք շնորհավորում են մորը, ասելով. «Աչքդ լուս, աստված սուրբ պսակին արժանացնե»։ Մայրը շնորհակալ է լինում և բոլորին հրավիրում է տուն, ուր մի բարձր տեղ կամ աթոռի վրա նստում է թագվորը։ Դրսից եկողները հաճախ ասում են. «Թագվորը բառն է»։ Իսկույն թագվորը ելնում կանգնում է։ Մյուսները պատասխանում են. «Աստծու զառն է»։ Եվ այս ժամանակ թագվորը նորից նստում է։ Երեկոյին թագվորի և թագուհու ձեռքերը հինա են դնում։

ՊՍԱԿ

Պսակի խորհուրդը կատարվում է երկուշաբթի առավոտյան։ Առավոտ վաղ փեսայի տնեցիներից մինը մի շիշ օղի առած գնում հրավիրում է նախ քավորին և հետո քահանային ու հարսնևորներին կամ մաղրվորներին։ Բոլորը գալիս հավաքվում են փեսի տուն, օղի խմում, նախաճաշում և գնում հարսնառ։ Դավուլ-զուռնի առաջնորդությամբ տղամարդիկ և կանայք գնում են հարսի տունը, թագվորի կողքից սուրը ձեռքը գնում է քավորը։ Թագվորը ու քավորը կանգնում են տան մեջտեղը։ Թագվորցիք բղավում են. «Թագվորը Թոփալ է»։ Հարսի կողմի մարդիկն էլ բղավում են. «Հարսը Թոփալ է» և այս այն նպատակով, որ հարս ու փեսա շուտով միմյանց մոտ դան։ Այս ժամանակ հարսը լալիս է, հայրը համբուրում է հարսին ու ասում. «Գնա, օղուլ, աստված հետդ ըլլի, խելք ու շնորհք տա, խոնարհ ըլլիս, մարթուդ հնազանդ ըլլիս»։ Հարսնացուն փաթաթվում է հորը և ձեռքն ու կուրծքը համբուրում, որպեսզի հոր ձեռքըն ու դուրը յուր վրայից անպակաս լինի։ Հայրը հարսնացուին հանձնում է փեսի հորը և ասում. «Տար, մեկին հավար խերը տես»։ Սա բըռնում է խնամու ձեռքը, սեղմում է և ասում. «Շնորհակալ եմ, շեն ու պայծառ մնա տունդ, մեր բարեկամությունը էստից էտև պըտի ըլլի»։ Այս ժամանակ հարսը խոնարհում և համբուրում է կերսարոջ ոտքը, իսկ սա վեր բարձրացնելով նրան՝ ասում է. «Մի լա, օղուլ, ես սաղ ըլլիմ»։ Հարսն ու փեսին կանգնեցնում են միմյանց մոտ՝ հարսը փեսի աջ կողմը, փեսի մոտ քավորը, հարսի մոտ հարսնեղբայրը թևանցուկ։ Այս ժամանակ հավաքված կանայք ասում են մորը. «Ինդրի խափին նստի, ինդրի խափին, որ աղջիկդ տունը մնա ու շատ ա շրջիկ չըլլի»։

Քահանան կատարում է ձեռնադրությունն, և բոլորը շարժվում են դեպի եկեղեցի։ Յուրաքանչյուր դռնից անցնելիս քավորը սուրը խփում է դռան «սովին» ու հարս ու թագվոր անցնում են սրի տակով, որպեսզի չարը չկպչի նրանց։ Սրանց առաջնորդում է դավուլ-զուռնան։ Թագվորցիք կաքավում, գոտեմարտում, հրացան են արձակում և իրենց աղաղակներով օդը թնդացնում։ Հանկարծ մինը վազում և թագվորի գլխարկն առնում փախչում է։ Թագվորցիք ընկնում են հետից և եթե բռնեն, մի լավ թակում ու գտակը բերում գնում են թագվորի գլուխը, իսկ եթե չեն կարողանում բռնել՝ փեսի տնից բերել են տալիս մի հավ, երկու գաթա, մի շիշ օղի, տալիս նրան և առնում գտակը։ Այս սատացածը պատկանում է բոլոր թագվորցիներին։

Երբ հասնում են եկեղեցու դուռը՝ ժամկոչը կամ երեսփոխանը փա-

կած է լինում դուռը և բաց է անում միայն այն ժամանակ, երբ քավորից ստանում է 10—15 կոպեկ։

Պսակի խորհուրդը կատարելուց հետո քահանան տալիս է թագվորի ձեռքը ավետարան, իսկ քավորի ձեռքը խաչ և կանգնեցնում սեղանի առջև։ Բոլոր հարսնևորները նախ համբուրում են քահանայի ձեռի խաչը, հետո թագվորի կրծքին բռնած ավետարանը և քավորի ձեռի խաչը և խաչհամբույր ձգում մոտը դրած ափսեի մեջ, որ պատկանում է քահանային։

Հետո շարականի և ձնձղակների հնչյունով դուրս են գալիս եկեղեցուց և ուղևորվում դեպի փեսայի տունը։ Այժմ ուրախությունն առաջվանից կրկնապատկվում է, հրացանների պայթյուն, կեցցեներ, գոտեմարտ և կաքավ տեղի են ունենում գրեթե ամեն քայլում։ Մի քանիսն էլ ոչխար, գառ, հավ են բերում գետին խփում թագվորի առաջ և դանակը քսում, սպասելով քավորի հրամանին։ Եթե հրամայում է, մորթում են և արյունից քսում թագվորի ճակտին, իսկ եթե ոչ՝ մի քանի կոպեկ ստանում, գնում։ Կես ճանապարհին հարս և փեսա կանգ են առնում, մինը կաքավում է, իսկ նշանած երիտասարդների հարսի կողմից ազգականները մի մի բաշկինակ են կապում իրենց փեսացուների բկերն ու թևերը, իսկ թագվորցիք բղավում են. Շեն կենա այսինչը, կանչել է փեսին մեկ յայլրղըմ։

Երբ մոտենում են թագվորի տանը, թագվորցիք բարձր կանչում են.

Թագվորամե՛ր, դուս արի,
Դսի դռան դեմ արի.
Քու խաչ որդիդ էկեր է,
Կաքվա դոխիկ բերեր է։

Մոր հետ դուրս եկողներն էլ կանչում են.

Թագվորամե՛ր, դուս գնա,
Դսի դռան դեմ գնա,
Քու խաչ որդիդ էկեր է,
Գլուխդ դմփող բերեր է։

Թագվորցիք շարունակում են.

Թագվորամե՛ր, դուս արի,
Դսի դռան դեմ արի.

Քու խաչ որդիդ էկեր է,
Տներդ ավլող բերեր է։

Մոր կողմիններդ.

Թագվորամե՛ր, դուս գնա,
Դսի դռան դեմ գնա,
Քու խաչ որդիդ էկեր է,
Մազդ փետող բերեր է։

Թագվորցիք.

Թագվորամե՛ր, դուս արի,
Դսի դռան դեմ արի.
Քու խաչ որդիդ էկեր է,
Թնդիրդ վառող բերեր է։

Մոր կողմիններդ.

Թագվորամե՛ր, դուս գնա,
Դսի դռան դեմ գնա.
Քու խաչ որդիդ էկեր է,
Թնդիր կոխողդ բերեր է։

Վերջապես թագվորամայրը դուրս է գալիս, իսկույն թագվորցիք մի դարձրած փափախ (գդակ) դնում են ղլխին, ավելը որպես ատի կապում ետևից, սամիները գոտին խցկում։ Թագվորամայրը պարում է և թագվորի ու հարսի աչքերը համբուրում։ Այս ժամանակ խոհարարուհին տալիս է թագվորցիներին մի հավ և ափսեի մեջ դրած հալվա ու մի քանի գույգ գաթա։ Թագվորցիներից մինը դաշույնի մի հարվածով կտրում է հավի գլուխը. եթե չհաջողացրեց, մի հավ տուգանք է տալիս, և այժմ մի ուրիշ թագվորցի է աշխատում թռցնել դրա գլուխը։ Այս հավերը և գաթան ու հալվան տալիս են խոհարարուհուն պահելու, որ մյուս օրը վերադարձնեն։ Մինն էլ մի կատու է բերում, և հարսնեղբայրն ամենայն պատրաստակամությամբ խածում է նրա ականջը, որ հարսի ոտքը «ուղուրով ըլլի»։

Հարս ու թագվոր մտնում են ներս, նրանց առաջ ձգում են թոնրի ակիշը, եթե հարսը վերցրեց՝ տնարար է, եթե չվերցրեց՝ տնավեր, հարսին տանում են տուն, ուր նա փոքր ինչ ավլում է, որպեսզի խոռվու-

Թյունը կերսանց տանից հեռանա, փոքր ինչ աղ առնում ցանում է կերակրներին, որ կերսանց հետ սիրով ապրի։ Հետո տանում են օդի կամ տան մի անկյունում վարսգույրով կտրած բաժնում նստացնում։ Բայց խոհարարուհին նրանից առաջ բազմած է լինում հարսի տեղը, մի զույգ գուլպա պետք է տալ, որ վեր կենա։

Բոլոր հարսնևորները գնում նստում են օդան, բերում դնում են խոնչան և սկսվում է սաչու, նվիրատվություններ հօգուտ նորապսակների։

Սաչու կանչողը բարձր բղավում է.

— Ըսեք շեն մնա՛, շեն մնա՛։

— Ո՞վ,— հարցնում են այս ու այն կողմից։

— Աղա այսինչը. ձին վազուկ ըլլի, թուրը կտրուկ ըլլի, բարեկամը բարեկամ, չարակամը քոռ ըլլի, իրեք մանեթ թագավորին ընծա։

— Շեն մնա՛, շեն, գոչում են այս ու այն կողմից։

Սաչուից հավաքվում է մոտավորապես 20—80 ռուբլի, նայելով թե հարսանիք անողը և նրա հարսնևորները ինչ կարողության տեր մարդիկ են։

Սաչուից հետո դավուլճիք են դնում դավուլը, որ «տեսնեն», այսինքըն փող տան. ամեն մարդ 3—20 կ. փող է նվիրում։

Սրանից հետո էլ խոհարարուհին է գալիս և 2—20 կ. յուրաքանչյուրից առնում, որ խաշի բերանը բանա։

Վերջապես բոլորում են սեղանների շուրջը և ամենայն ախորժակով ուտում խաշ, յայնի, բյուֆթա, փլավ և պանիր։ Իսկ օղին առատությամբ բաշխվում է տան երիտասարդներից մինի ձեռքով։

Ճաշից հետո հասարակաց պար է լինում կամ փեսի գոմում, եթե միայն այն ընդարձակ է, և կամ մի ուրիշի։ Պարը տևում է մինչև կեսգիշեր, և դրան մասնակցում է ամբողջ գյուղը, առանց նույնիսկ հրավիրելու։

Գիշերը հարսը գնում քավորին հանվեցնում, պառկեցնում է, իսկ ինքը գալիս հարսնեղբոր հետ է պառկում. իսկ փեսան գնում մտնում է քավորի ծոցը։

Հետևյալ երեքշաբթի օրը թագվորի տնեցիք հրավիրում են սաչու ավողներին և քավորենց, ձեյ, օղի խմացնում և ճաշ տալիս, որից հետո քահանան վայր է առնում պսակը և մի բաժակ օշարակ խմացնում հարս ու փեսին։ Հետո քահանան առնում է քավորի սուրը և ասում. «Հարսի լեզուն պիտի կտրեմ»։ Թագվորամայրը աղաչում է չկտրել և մի զույգ գուլպա է նվիրում։

Թագվորցիք էլ առնում են խոհարարուհուն պահ տված իրենց հավե-

րը, գաթան ու հալվան, միանում են հարսնեղբայրների հետ, առնելով նրանցից և նրանց բաժին մի քանի ղույզ գաթան, մեկ թոփ հալվան, մի խորոված հավը, հարսնատնից էլ մի շիշ օղի, փեսայի հետ միասին մի տեղ հավաքվում, խմում, ուրախանում։

Երեկոյին հասարակաց պար է լինում։ Կեսգիշերին հարսն ու փեսան միմյանց ձեռք բռնած մտնում են պարը, բավորը փեսի, իսկ հարսնեղբայրը հարսի ձեռքն է բռնում, մի մի վառած մոմ էլ ցանկացողը առնում է ձեռքը և պարում են։ Ժողովրդյան բացատրությամբ մոմը օրինակ է պսակին։ Պարելիս թագվորը աջ ձեռքով հանում է աջ գրպանից ցորեն և շաղ է տալիս, որպեսզի, իբենց բացատրությամբ, ցորենը առատ լինի։ Սրանով նա իրավունք էլ է ստանում ցորեն ցանելու, որովհետև չամուսնացածներն իրավունք չունին ցորեն ցանելու։

Երեք պտույտ կատարելուց հետո հարս ու փեսան դուրս են գալիս պարից, որ փոքր ինչ էլ տևում է և վերջանում։

Չորեքշաբթի առավոտ հարսնտները հրավիրում է կնքահայրերին, կնքակիններին և մոտիկ ազգականներին և թեյով ու նախաճաշիկով պատվում։ Նախաճաշիկից հետո ուրիշ գյուղերից եկած հարսնեւորներին և հարսնեղբորը ճանապարհ են ձգում դավուլ-դուռնով։

Գիշերը հարս ու փեսան առագաստ են մտնում։ Խոհարարուհին ձգում է անկողինը, մոտը հալվա, մեղր ու շաքար դնում, որ նորապսակներն անուշ-սիրով լինին, ինքն էլ դռան եւև պահ է մտնում, սպասելով կուսությունն ապացուցանող «չարսավին»։ Եվ եթե մի փոքր ինչ ուշանում է, նախատելով շտապեցնում է։

Եթե աղջիկը կուսությունը կորցրած է լինում, վախենալով այն մեծ նախատինքից, որ կրելու է տնեցիներից և սրանց ազգականներից, արտասվում և ներողություն է խնդրում ամուսնուց, որ կաշառում է խոհարարուհուն, և սա մի աղավնի մորթում ու արյունոտում է «չարսավը»։ Խոհարարուհին ասանում չարսավը ցույց է տալիս նախ փեսի և ապա հարսի մորը, շնորհավորում նրանց և ընծաներ ստանում։

Հինգշաբթի առավոտ հրավիրվում են ազգական և դրկից կանայք. այդ օրը բացառապես միայն դրանց է պատկանում։ Ճաշին մատուցանում են խավիծ և այս կերակրի անունով՝ այս օրը կոչվում է խավիծի օր։ Նախքան ճաշի նստելը հրավիրվածներին աչքի լույս են տալիս և հնումն ցույց էին տալիս «չարսավը», սակայն այժմ այդ սովորությունը վերացել է։ Ճաշից հետո բերում են հարսի օժիտը, և մի կին նախապես մի ռուբլի նվեր ստանալով կեսուրից, բաց է անում և մեկ մեկ ցույց տալիս հանդիսականներին։

Հարսի օժիտը պատրաստվում է հաղեմասու, սաչուի և երեստեսանքի փողերով։ Հայրը ոչ միայն իրենից ոչինչ չի անում, այլև այդ փողերից գողանում է։ Հարսի օժիտը գլխավորապես բաղկացած է լինում հետևյալ կտորներից.

Երկու չուխա ջուպպա.
Մեկ փութալի շալ.
Մեկ զատիֆա խրխա.
Մեկ կապույտ խրխա.
Երկու իշլիկ, մեկը ֆանել, մյուսը պուրսո.
Զորս անթարի.
Տասնհինգ հատ շապիկ.
Նույնքան վարտիկ.
Տասներկու հատ կրծկալ.
Յոթն հատ գոգնոց, 5 շալից, 2 մահուդից.
Մի էհրամ.
Գլխի տասն և երկու շալովի.
Երկու վարդ.
Երկու յազմա.
Երկու չիքիլա.
Երեք թոռ կամ յափուղ.

Երեք զույգ ոտնաման՝ մի զույգ կիսակոշիկ, երկու զույգ մյասբապուճ, երկու զույգ գուլպա, մի արկղ, մի արկղիկ, մեջը թել, կոճ, ասեղ, ճաղ, թևշիկ, լուցկի, հայելի։

Ղիլա—նվերներ.

Կերսարոջը՝ մի շապիկ, վարտիկ։

Կեսուրոջը՝ մի վարտիկ։

Տագրներին՝ մի մի զույգ գուլպա և թոզլուխ։

Կնքավորին՝ մի շապիկ, վարտիկ։

Կնքավորի տնեցիներից յուրաքանչյուրին՝ մի զույգ գուլպա և սոնապան կամ կանանց գուլպա և գոգնոցի կապ։

Փեսի բարեկամներին, որոնք նվերներ են տվել հարսին, նայելով նրանց տվածին, շամաշուր կամ գուլպա, սոնապան և այլն։

Նորահարսը մի կարճ միջոցից հետո այս հանդերձներից մի քանիսը ծախում և յուր ոսկիները մանրում ու մի գումար կազմելով, շահով է տալիս, որպեսզի յուր և յուր որդիների հանդերձը հոգա, որովհետև կերսանքը շատ հազիվ է պատահում, որ հարսերին կամ նրանց

որդիներին շոր անեն։

Այս դրամը հարսերը «արնգին» են կոչում։

Այսպես վերջանում է հարսանյաց հանդեսը, և այնուհետև սկսվում սովորական կյանքը։

ՏՂԱՖԵՐՔ ԵՎ ԿՆՈՒՆՔ

Ախալքալաքի գավառի հայ գյուղացի հղի կնոջ դրությունը շատ աննախանձելի է. նա մինչև ծննդաբերությունը կրում է տան բոլոր ծանրությունը։ Այն միայն նպաստավոր է հղի կնոջ համար, որ այս ժամանակ եթե «մտափոխ» է լինում, այսինքն մի բան է ցանկանում ուտել, անշուշտ գտնում, տալիս են, ապա թե ոչ՝ նրանց կարծիքով, ապագա երեխայի աչքը ծուռ կլինի։ Բայց եթե կինը ի չարն է գործածում դրանց հավատը, նրան «բարբող» են անվանում և մի խնճոր ծածուկ լվանում են լակամանի մեջ և տալիս նրան, որ ուտե և բարբողությունն անցնի, կամ մի քարղանի մեջ դնում են ամուսնու տրեխը և ծածկած տալիս հղի կնոջը, ասում. «Ել, ել, մարըտ բան է բերե»։ Կինը միամիտ վեր է կենում, առնում, բանում է քարաղանը, տեսնում է տրեխը, ղզվում, և բարբողությունն անցնում է։ Թեև հավատում են, որ երեխան ում դեմը խաղա, նրա բնավորությունը կստանա, սակայն հանգամանքները թույլ չեն տալիս նրանց ընտրելու և լավ մարդկանցով շրջապատելու։ Հաճախ պատահում է, որ, իրենց ասելով, երեխան շան, իշու դեմ է խաղում և դրանց բնավորությունն էլ ստանում։

Հղի ժամանակ զգուշանում են երկու այր մարդկանց միջից անցնելու, որ երեխան կոխ չլինի՝ ժամանակին ոտք ելնե, քայլե։ Նաև մատաղ գառի միս չեն ուտում, որ երեխաները թիխի չլինին՝ դեռահաս չմեռնին։

Երկունքի ժամանակ կինը ծուռն է չոքում ուր էլ որ պատահում է, միայն տղամարդկանցից հեռու, իսկույն կանչվում է ծննդականի մայրը, եթե միայն ծնունդն անդրանիկն է, և սա յուր հետ բերում է բալուլոցը։ Գալիս է և դայեկը (մանկաբարձուհին), որ յուր հնարագիտությամբ աշխատում է թեթևացնել ծնունդը։ Թեև կանայք ընդհանրապես հեշտածին են, բայց և պատահում է, որ երկար տանջվում են երկունքի ցավով։ Այսպիսի դեպքերում կնոջը կապերտի մեջ դնում, օրորոմ են, մեջքից շալակելով թախլա են դարձնում, նստեցնում են մի ուրիշ նըստած կնոջ ծնկների վրա և հետևից առնում երեխան, բերանը շիշ են տալիս և ստիպում են փչել, սիրացու են կանչում և գլխին համայիլ կար-

դացնում։ Միևնույն նպատակով փեշի մեջ ածած ջրից երեք անգամ խմեցնում են ծննդկանին և մնացածը սրսկում երեսին, կամ ամուսինը և կամ նա, ով տեսել է օձը գորտին խայթելիս, բաժանել է նրանց և երեք անգամ անցել, դարձել նրանց միջով։ Իսկ ինքը՝ ծննդկանը, անիծելով յուր սև բախտը, Զորեքմուտքին, Ուրբաթմուտքին և Կիրակմուտքին օգնության է կանչում։ Ժողովրդյան կարծիքով երեխան աշխարհ գալիս (հոգեցեն հոգի բաժանվելիս) ծննդկանն ասածուց ինչ խնդրե, կկատարվի։

Եթե երեխան անձայն է ծնվում, նրան պառկեցնում են սառը ջրի մեջ, գլխին ամանով՝ «թասով», սառը ջուր դնում, մեջը ծծմբի լուցկի վառած, ընկերքի տակը կրակ են լցնում և պորտը դեպի երեխան քաշում, ականջի տակ ամաններ միմյանց խփելով հնչեցնում, մինչև որ հոգևորնա։ Եթե ծնունդն առաջինն է, և մայրը դարձյալ տանջվում է սանճու ցավով, ամուսինը ջուրը մկրատում է, այսինքն մկրատով կտրում է, կամ ծննդկանը յոթը հատ դայթնե կոճակ է կուլ տալիս, որ սանջուն կտրի։ Դայակը երեխայի պորտը կտրում, «Օրհնյալ հայր սուրբ, աստված ճշմարիտ» ասում և բախտավոր լինելու համար աթրի վրա է դնում, դանակը քսում և ասում. «Դանակը քոռ է, չի կտրե», փող են տալիս, որ բերանն է առնում և կտրում. երբ ընկնում է՝ տանում թաղում է եկեղեցում, որ երեխան ժամասեր լինի, ուտեցնում են անասունի, որ անասնասեր լինի և կամ գցում չարչու պոխչան, որ շոր գտնող կամ չարչի լինի։ Իսկ դանակը դնում են ծննդկանի բարձի տակ, և երեխան մյուռոնից հանելիս, մեռոնջրում լվանում, որով և սրբվում է։

Դայակը, աղոթք շշնջալով, երեխային դնում է մաղի վրա, որովհետև դեռ անկնունք է և եթե գետնին կամ ուրիշ բանի վրա դնեն՝ «չարերը կզարնեն» կամ կոխ կլինի։ Հետո ծննդականին կանգնեցնում է տաշտի մեջ և տերունական աղոթքն ասելով՝ կխսից վայր լվանում և պառկեցնում գոմի օդան։

Եթե ծննդկանն ուրիշ սենյակ է ազատվել, նրա ձեռքը տալիս են ծայրին մի սոխ ցցած ակիշ, և սա տերունական աղոթքն ասելով և յուրաքանչյուր շեմքից անցնելիս երեսը խաչակնքելով՝ գնում պառկում է օդան։

Ծննդկանի սնարի մոտ դնում են ակիշ, սանդերք և այլ երկաթեղեն, բարձի տակ պահում են սուր, նարեկ, նշխարք կամ հաց, վերմակի վրա շուլալում են ասեղ, և այս բոլորը նրա համար, որ չարերը չմոտենան։ Ծննդկանին պառկեցնելուց հետո դայակը լողացնում է երեխային տաշտի մեջ, եթե առողջ է՝ գոլ, իսկ եթե վատառողջ՝ սառը ջրով,

վրան աղ ցանում, մոր անկողնու վրա բալուլում, վրան մի հաց դրած և թևերին առած տան մեջ մի սյան բոլորն երեք անգամ պտըտում, որ չարը չդիպչի, հետո ձեռին ակիշը, ծայրին սոխ, ելնում է դուրս, դառնում դեպի աղոթարան և երեք անգամ ասում. «Աստվա՛ծ, տղիս ղամաՓը բաց էրա», ապա գալիս է ներս և շշնջում հետևյալ աղոթքը.

Էրնեկ, էրնեկ վարդակուսին,
Լուսաթաթախ թուրն էրեսին,
Վանքը մտավ Նորսեսին,
Շուրջառն առավ Քրիստոսին,
Մնավ բերեց Աստվածորդին։
Անբան մսուրը դրվեցավ,
Խանձբալուլով բալուլեցավ,
Գետ Հորդանան մկրտեցավ.
Մարգարենե՛ր, գրքեր բերեք,
Ճգնավորնե՛ր, քավոր էղեք,
Անուն Հիսուս կատարեցեք։

Հետո թեթևությամբ նստում է ծննդկանի վրա և ասում. «Մայրամ[30] ծանդո ես, թե թեթև»։

— Թեթևով անցնի, պատասխանում է ծննդկանը։

Դայակը դնում է բալուլը ծննդկանի աջ կողմը, մայրն էլ այդ օրը շարունակ երեսն երեխայի երեսին դարձրած է մնում։ Հետո դայակը ձեռի ակիշով խաչակնքում է ծննդկանին ասելով.

Ավետաւան էրթնկալ էղավ,
Սուրշառ դուռն փակ էղավ,
Մեկը Հիսուս, մեկը Քրիստոս,
Սերոբեք, Քերոբեք,
Տղոցկնի էրթիկը դան։

Ակիշի ծայրի սոխը հանում ուտեցնում է ծննդկանին, որ չուշաթափի և կաթն ավելանա։ Իսկ ակիշը տնկեցնում է ծննդկանի սնարի մոտ, որ չար չմոտենա։

Եթե երեխան առաջինն է, մայրը ծիծ չի տալիս, մինչև որ մի ընծա է ստանում կերսարից. շատ անգամ էլ առաջին օրը բոլորովին ծիծ չեն տալիս, երեխային համբերող դարձնելու համար, բայց ինքը խմում է

---

30 Ինչ էլ լիներ ծննդկանի անունը։

քաղցր օշարակ և ուտում ձվածեղ կամ խավիծ և կամ հավկիթ, իսկ եթե պաս է, սոխ ու հաց։

Ծննդկանին այսպես շահելուց հետո՝ դայակը վերցնում է ընկերքը և տանում թաղում չոր հողի մեջ և տերունական աղոթքն ասելով՝ ծեծում, որ «չսաղնա», ապա թե ոչ՝ «կսաղնա» և ծննդկանի սիրտը կբթոթռի, կըմարեմրի, և անհրաժեշտ կլինի նորից գալ «հայր մեր» ասելով ծեծել մեռցնել ընկերքը, որ ծննդկանը առողջանա։

Այս ժամանակ արդեն տան ծառան կամ փոքրերից մինը վազում է ազգականներին և բարեկամներին աչքի լուս։ «Աչքդ լուս, շաբար ապա, աղջիկդ պառկավ՝ մանչմ բերեց»։

— Աչից լսով մնաս, օտացդ մեռնիմ, բարի ազատում ըլլի, աստված հորով-մորով պահե։ է՞, ե՞ւ ազատավ, փարի զոլա՞ ազատավ,— հարցնում են ապլանները և մի քանի կոպեկ կամ մի, երկու հավկիթ տալիս աչքի լուս ավողին, մի քանիսն էլ ներս հրավիրում և հյուրասիրում են։

Մի քիչ հետո մոտիկ ազգականներն ու հարևանները գալիս են տեսության, «քարդան» են բերում ծննդկանին՝ բերում են խաշած հավկիթ կամ ձվածեղ, կամ խավիծ, կամ մալեղ ապուր, կամ փալուզա, կամ հասուբա և կամ մի գյուգումի մեջ եփ աված թեյ։ Առաջին քարդան բերողի քարդանը չեն վերադարձնում մինչև երեխայի պորտն ընկնելը։ Տանեցիք հյուրասիրում են սրանց թեյով կամ հացով։

Տղամարդիկ ևս համախմբվում գալիս են կտուրը և մի փայտ դեմ տալով հերթիկին, «խաչը վերուցեք, տղաք, վերուցեք» բղավում։

— Չէ՛, չէ, ձեր պատիվը գլխուս վրա, նես հրամեցեք, պատիվ տամ, մե գառ ձեզի զուրպան է,— ասում է տան մեծը։

Նրանք իջնում են վայր և շնորհավորում. «Աչքերդ լուս ըլլի, շնորհավոր զավակ ըլլի, հորով-մորով ըլլի»։

Տան տերը հրավիրում է նրանց նստել և հյուրասիրում է օղիով ու թեյով։ Դայակը դնում է երեխան հյուրերի դիրկը և նրանցից ստանում 1—10 կոպեկ ընծա։

Այնուհետև դայակը օրը մի անգամ լողացնում է երեխային ասելով.

Էրկան վզիկ
Թա՛փ տու ցավիկ
Շալկե մսիկ։

Եվ օրն երկու անգամ բալուլում ու լվանում է կեղտոտ շորերը։

* * *

Հավատալով, թե չարերն անկնունք երեխաներին փոխում են իրենց նիհար որդիների հետ, որոնք մկրտությունից հետո շատ քիչ են ապրում, ինչպես կարծախում, իբր, երկուսը պատահել էր, աշխատում են կնունքը կարելվույն չափ շուտ կատարել։

Ամենից առաջ մի սյալայի կամ մաղի մեջ դնում են մի կարմրցրած հավ, գաթա, մի քանի զույգ դուլպա, մի քանի թաշկինակ, երբեմն էլ մի զույգ սոնապան (թոզլուխ) և դայեկի ձեռքով ուղարկում քավորին։

«Սանամերդ խոնչան ղրկեց,— ասում է դայեկը քավորին,— հրամմե էգուց տղան կնքե»։

Քավորն ընդունում է «խոնչան», մի քանի կոպեկ տալիս դայեկին և երկու արշին չիթ ուղարկում սանիկին հանդերձի համար։

Հետո դայեկն յուր տնից բերում է եկեղեցապատական բալուլոցը, որով բալուլում է երեխային։ Եթե երեխան աղջինեկ է, մեռոնլաթը տանից են անում և վերջն ընծայում եկեղեցուն։

Գալիս է քահանան և տան մեջ կատարում կնունքի խորհուրդը, հետո երեխան դայեկի գրկին, տան մի քանի տղամարդկանց հետ գնում են եկեղեցի, ուր եկած է լինում քավորը։ Երեխայի հայրը մկրտության խորհուրդը թե տանը և թե եկեղեցում կատարելիս իրավունք չունի ներկա գտնվելու։

Եկեղեցում երեխան գնում են քավորի գիրկը և մկրտում։ Մի քանի կնունք եղած միջոցին նախ մկրտում են արու երեխային, թեկուզ մինչև սրա բերելը աղջկա վրա ծիսակատարության կեսն էլ կատարած լինեին։

Մկրտելուց հետո՝ քահանան խաչը ձեռին, փորուրարը դցած «լույս ի լուսոյ» շարական ասելով գնում է տուն։ Քավորն երեխան գրկած հետևում է նրան։

Ծննդկանը խոնարհում պագնում է նախ՝ քավորի ոտքը և ապա բալուլը, առնում է երեխան գիրկը և նստում։ Քահանան «պահպանիչ» է կարդում և երբ վերջացնում է, շնորհավորում է հետևյալ խոսքերով, որ մյուսները փոքր ինչ փոփոխելով կրկնում են.

«Աչվնեդ լուս, շնորհավոր մկրտության լլլի, ասուված հոգով-մոբով պահե, խոր ծերության հասցնե, բուկ ա, բավոր տղա, դատումդդ կատար»։

Ծննդկանը համբուրում է խաչը և 3—10 կոպեկ խաչհամբույր տալիս քահանային։ Մինչև այս ժամանակ բոլորը կանգնած են լինում. հիմա նստում են ավագության կարգով. օճախի մի կողմը նստում է

քահանան, մոտը կնքավորը, սրա մոտ աթոռակալը և ուրիշներ՝ հասակի համեմատ. օճախի մյուս կողմը նստում է տանուտերը, նրա օգնականը, գյուղական դատավորները և ուրիշներ՝ դարձյալ հասակի համեմատ։

Օճախի մեջ եփ է գալիս գյուգումով ջուրը՝ վերան թեյամանը։ Կարողություն ունեցողները նախ երկերկու բաժակ օղի են հրամցնում ամենքին, որոնք հետևյալ բարեմաղթությամբ խմում են. «Ձեռքեդ անհատ։ Օրհնյա տեր, տերտեր ջան, կենդանություն, կնքահա՛ր, դատուքդ կատար, վարձքդ երուսաղեմ, աթոռակա՛լ, սաղ էղնիս. յուղբաշի՛, ջանըմ սան. ջամիաթա ռահմադ»։

Հետո երկերկու բաժակ թեյ են տալիս, մինչև իսկ եթե թեյի ժամանակ էլ չլիներ։ Ապա խոնչան դնում են երկու սատրների միջև և հաց տալիս։ Կնունքի հացը որոշված չէ, թե ինչ կերակրներից պիտի բաղկանա, միայն սովորաբար երեք տեսակից պակաս չէ լինում։ Հացը վերջացնելուց հետո քահանան պահպանիչ է ասում, և այս ժամանակ քավորը տալիս է քահանային 20 կոպեկ, աթոռակալին 10 կ., տիրացուին և ժամկոչին երբեմն միայն երեքից հնդական կոպեկ։ Երեխայի հայրն էլ քահանային 10 կոպեկ է տալիս պահպանիչ ասելու համար։ Հետո տղամարդիկ դնում են, և կանայք տանից օդան են հրավիրվում, ուր հաց են ուտում։ Հարուստները հացից առաջ մի մի բաժակ օղի ևս են տալիս։ Սովորաբար հրավիրում են իրիցկնկանը, և առաջին պատիվը, առաջին տեղը, սեղան օրհնելը նրան է պատկանում։

Արու երեխային մեռոնից շուտ, երեք օրից հետո են հանում, որ «ճակատով ըլի չամնչե», իսկ աղջկան 7 օր պահում են, որ ամաչկոտ և պարկեշտ լինի։ Եթե երեխան մեռոնի մեջ մեռնի, հավատում են, թե յոթը պորտին օգուտ է, և միայն քավորը դրկած տանում է մինչև գերեզմանատուն։

Մեռոնից հանելիս՝ դայակը հանվեցնում է տղան, մի մաքուր ամանի մեջ լվանում է նախ մոր ծծերը և ապա երեխայի այն մասերը, ուր մեռոն է քսված և մեռոնլաթը։ Հետո լողացնում է երեխային գոլ ջրով տաշտի մեջ, քաշում է երեխայի ձեռքերը և ասում. «Թևերդ օրն ըստըղըր էրկննա», քաշում է ոտքերը և ասում. «Օտվիրդ օրն ըստըղըր էրկննա». Հետո վիզը՝ «Պոչըդ ըստըղըր էրկննա»։ Տաշտի երկու ծայրերին մի մի փոքրիկ երեխա մի մի մոմ են բռնած լինում. երբ դայեկը երեխան տաշտից հանում է, սրանցից մինը դեպի դուրս, մյուսը դեպի օճախն է վազում և հանդցնում մոմերը։ Եթե հարցնենք պատռավ դայեկին դրա խորհուրդը, նա խոր համոզմունքով կասե. «Դուս փախ-

չին կ'օր տղան սրատտ ըլլի, դիպա օճախն ա օր վազեն կը, տղան բախտավոր ըլլելու համար է»։

Դայեկը երեխան բալուլում, տալիս է մորը և ասում. «Աստված մնացական էնե, հորով մորով պահե»։ Նա էլ պատասխանում է. «Վարձքա Երուսաղեմ, շնորհակալ եմ, սաղ ըլլիս»։ Կեսուրը տալիս է դայեկին 20—50 կ. փող, մի քարղան ալյուր կամ աղ, մի զալիպ սապոն և ճամբու դնում։ Այնուհետև մինչև բառասունքը լրանալը կեսուրն է օրը մի անգամ լողացնում երեխային և երկու անգամ բալուլում, մին լողացնելիս, մյուսը երեկոյին։

Եթե ծննդկանն անթառական է (հարուստ, ծառա ունեցող) 15—20 օր է պառկած մնում, և մինչև այդ օրն էլ հետաձգվում է երեխային մեռոնից հանելը, իսկ եթե ջրվրան է (աղքատ) 3—7 օր։ Երեխան մեռոնից հանելուց հետո տնեցիք լողացնում են ծննդկանին և պառկեցնում։ Մյուս օրն արդեն ծննդկանն ինքն իրեն վեր է կենում, աղոթք շշնջալով շորերը հագնում։ Տնեցիք շնորհավորում են, ասելով. «Բարով խերով խոտտ մոտտ ժողվեցիր էլար»։ Ժողովում են նրա անկողինը և տեղը մի մեխ խփում ասելով. «Մըխը իստեղ ամրնա, տղան ա ֆոն ձիգ մնա»։ Հետո խոտ են բերում ծննդականի ազատված տեղում վառում «տերընատալ անում»։ Ծննդականը երեխան գիրկը մի շիշ (երկաթյա ձող) և մոմեր ձեռին երեք անգամ անցնում է տերընատալի վրայից, երեք անգամ էլ պտտվում շուրջը և գնում նստում օրորոցի մոտ։ Այդ տերընատալի մոխրից դնում են երեխայի բարձի տակ, որ չվախենա և ցավ չդիպչի։

Մինչև բառասունքը լրանալը մայրը առանձին խնամք է դարձնում երեխայի վրա։ Երբ դայեկը ուրիշ ծննդկանի մոտից վերադառնում է, երբ գիշերով մարդ կամ անասուն է գալիս իրենց մոտ, երբ միս են բերում իրենց տուն, երբ մեռել են անց կացնում տան մոտով, երբ մի ծննդկան է գալիս իրենց մոտ՝ հոգատար մայրը խնդրում է երեխան, որ կոխ չլինի, այսինքն ժամանակին ոտքի կենա, քայլե։

Նվ եթե մի անհոգությամբ երեխան այդ հիվանդությունն ստանում է, մայրը բժշկելու համար երեք օր շարունակ օրը մի անգամ տանում երեխային մի նահատակի գերեզմանի վրա լողացնում է և ամանը կոտրում։ Յոթը դռնից փող մուրում, որով մեղրամոմ գնում հալում և իլիկի գլխի ծակով ածում ջրով լի թասի մեջ։ Ստացված ձևից դուշակում է, թե կոխն ումից է եղել, ապա այդ ձևը պատանքում է, յոթը ճանապարհների միմյանց կտրող տեղում թաղում։

Եթե կոխը ծննդկանից է առաջացել, գողանում են այդ ծննդ-

կանի տղի հողշորը, ձգում թոնիրը և «մուխ տալիս» տղին, այդ շորի ծուխի վրա բռնում երեխային։ Կամ գողանում են նրա թթխմորը, ձգում ջրի մեջ և այդ ջրով լողացնում երեխան։ Ոմանք էլ խաչերկաթն են գցում տաշտի մեջ, երեխային լողացնում և կանգնեցնում վրան։

Իսկ ուրիշներ երեխային երեք օր շարունակ օրը մի անգամ միևնույն քակորի հետ կշռում են, եթե երրորդ անգամին երեխան ծանրանա՝ կմեռնի, իսկ եթե թեթևանա՝ կառողջանա, երբ քակորի հետ լողացնեն։

Երեխայի քառասունքը չլրացած՝ հոր շորերից չեն ձգում վրան, որ խորշակ չլինի։ Երբ քառասունքը կատարվի, կամ տյառընդառաջը հասնի, մայրը երեխային լողացնում է, ինքն էլ լողանում, մաքրվում, ապա կանչում է դայեկին, տալիս երեխան գիրկը և նրա հետ գնում եկեղեցի, կանգնում ավազանի կողմը, քառասուն ծունր դնում և աղոթում։

Եկեղեցին արձակվելուց հետո դայակը խնդրում է քահանային երեխային «քառասունքից» հանել։ Նա էլ կատարում է եկեղեցական խորհուրդը և ստանում երեխայի մորից 10 կոպեկ խաչհամբույր։ Դայեկը կրկին բերում է երեխան տուն և 5 կոպեկ փող ստանում։

Քառասունքից հանելուց ետ մայրն ազատ դուրս է գնում տանից և զբաղվում յուր գործերով։ Այնուհետև մայրն ավելի քիչ է զբաղվում երեխայով։ Նա օրորոցի մոտ դնում է ամանով ջուր, որ չարերը չմոտենան երեխային։ Բարձի տակ դնում է օձի շապիկ, որ երեխան իմաստուն լինի, նույնպես և նշխարք, որ չարերը չմոտենան։ Երեխային դուրս տանելիս կրծքին հաց են դնում, որ չարերը չմոտենան։

Նա գրկում է երեխան, ցույց տալիս լուսինը և ասում. «Քեռիտ, քեռիտ», որպեսզի երեխաների վրա իշխող լուսինը չվնասե երեխային։ Չար երեխային խելոքացնելու համար նստեցնում են նրան բակի մեջ և չորս բոլորից վրան ավելում։

Եթե երեխան վատառողջ է, գողանում են մի քաջառողջ մանուկի շորեր և նրանով բալուլում նրան, որ լավանա։ Նույն նպատակով վատառողջ երեխայի շապիկը փարատում են հասակակից քաջառողջ երեխայի տան հերթիկից։

Եթե իշխող լուսինը (վերինը) վնասում է, բժշկելու համար երեխային կանգնեցնում են սյան մոտ և մեջքի մոտից երեք մեխ միատեղ սյանը։ Նույն նպատակով լուսնի նորին, մի չորեքշաբթի կամ ուրբաթ երեկո հայրն ու մայրը ելնում են կտուրը։ Հայրն երեխային դնում է թիու վրա, տալիս մորը ասելով. «Քուքա է նե՝ քեզի, իմս է նե՝ լից տու»։ Մայրն առնում է նախ երեխան թիու վրայից և ապա թին ու նույն կերպ վերադարձնում։

Երբեմն որդիները թփխի են լինում՝ մինչև մեկուկես տարեկան դառնալը մեռնում են։ Այս ցավից ազատվելու համար մայրերը՝ հղության, երեխան խաղալիս և ծննդաբերության օրերին երեք անգամ անցնում են հղի իշու տակով՝ փորին մի մի անգամ խփելով և վզի կողմից դառնալով ասում են. «Իմ թփխիս քեզի, քու թփխիտ ինձի»։

Նույն նպատակով այդ ժամանակներում իշու կաթ են խմացնում հղի կնոջը։ Նորածնին փոկի մաղի մեջ են առնում։ Երեխային մի ամբողջ տարի մուրալով են պահում։

Յոթը դուռ մուրում և տալիս են մի բախտավոր, ծնողը ունեցող աղջկա, որ մի շապիկ կարե., և այս հագցնում են երեխային։

Լուսավորչականության ընդունած մի այլազգու են բավոր անում։

Նոր ծնված ջորու շապիկը հագցնում են նորածնին և վեց օր այդպես պահում։ Ապա մի կտորը համայիլ շինում, վզից կախում, իսկ մնացածն սպիտակ շորի մեջ փաթաթած աղոթելով թաղում։

Սև շուն, սև կատու և սև աքաղաղ են պահում, որովհետև սրանք իմաց են տալիս չարերի մոտենալը, որոնցից և առաջանում է թփխին։

Երեխայի վզից շատերը գայլի ատամ են քաշ անում, որ կրծելով ընտերքը շուտով մաշվի և ատամները շուտով ելնեն։

Երեխան առաջին ատամները հանելիս «առկահատիկ» են անում. հատիկի (խաշած և քամած ցորեն) հետ խառնում են մանր ընկույզ, շաքարի մանրուք և շաքարեղեններ, երեխային նստեցնում և այդ բոլորը գլխից ի վայր ածում ասելով. «Ինչքդ օր հատիկը գլխուտ թափավ, առկեքտ ա ատպես դուս թափի»։

Երեխայի ձգած ատամը դնում են մի բարձր տեղ և ասում երեխային, թե՝ այսչափ երկարիս։

Երբ երեխան «դուփ է լինում» (լեղուն չի բացվում), եկեղեցու բանալին քսում են բերնին, որ սկսի խոսել։

Երեխային 0,5—3 տարի ծիծ են տալիս և կարելիս՝ ձծին ցեխ կամ «սարի ավղա» են քսում, որ երեխան դարշի և այլևս ծիծ չուտե։ Երեխային հին խնծախ չեն տալիս, որ բթամիտ չլինի։

Երեխային ուսման տալիս դիշերը նրա բարձի տակ կուտ դցած (թոնիր ընկած, վառած) հաց և աղ են դնում, որ առավոտ երեխան տալիս է շանը՝ ասելով. «Քու սուր իզանդ ինձի տու, իմ բութ իզանս քեզի առ»։

ՄԱՆԿԱՆՑ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Ախալքալաքի գավառի հայ գյուղացի ծնողի սերը դեպի յուր որդիներն այնքան զարգացած չէ; նա որդու վրա նայում է ավելի շահադի-

տական տեսակետով. նրա համար որդին մի մալ է, որին ծախելու և գինն ուտելու իրավունքն ինքն իրեն սեփականել է, իսկ աղջիկը՝ «անլի մխս է՝ որ աղել, ճամփել գուզե»։

Շատ հազիվ է պատահում, որ մոր օրորը քնացներ երեխային կամ մոր «դանդանը» խաղացներ նրան յուր գրկի մեջ։ Ամբողջ գավառը շրջելով ես հազիվ կարողացա մի երկու օրոր և մի քանի «դանդաններ» գտնել։ Մոր խնամքն ու դաստիարակությունը՝ երեխային ծիծ տալուց և հագցնելուց այն կողմ չի անցնում, նա կրթվում է «ընկնել ելլելով», յուր անձնական փորձով։ Միայնակ նստած էի օդի մի անկյունում, երբ մի մայր մի տարեկան երեխային բերեց նստեցրեց օճախ քարին և գնաց։ Նայում եմ՝ խեղճ երեխայի առաջ վառվում է կրակը, իսկ ետևը մի արշինից ավելի ցածր է, բավական է մի շարժում, որ երեխան կամ ձեռքը այրի և կամ գլխի վրա վայր ընկնի։ Վախը տիրեց ինձ, սակայն երեխան քարե արձանի նման անշարժ նստած էր. անցավ 20 րոպե, եկավ մայրը և գրկեց։ Երբ ես նկատեցի, թե չէ՞ վախենում վտանգից, նա ծիծաղելով պատասխանեց ինձ. «Գրող չի դիպնի, սորվեր է. երկու անգամ ձեռքը վառեց, իրեք անգամ ա կլմբոզավ, հիմի ալ ժաժ չի գա»։

Երեխաների վրա առանձին խնամք չտանելու համար հազիվ թե կարելի լինի մեղադրել մորը, որովհետև գերդաստանը վատ սկզբունքի վրա է դրված։ Մայրը, մանավանդ եթե երեխան առջինեկ է, իրավունք չունի առանց կերսանց ասելու գնալ, երեխային ծիծ տալ, չնայելով, որ նա սաստիկ լալիս է։ Նա պարտավոր է յուր գործին հետևել, մինչև կեսուրը կամ մեծ հարսերը չասեն նրան, թե տղան մեղք է, ծիծ տուր։ Հակառակ դեպքում կխոսեն նրա վրա, կհայհոյեն թե. «տղի տեր է էղե՝ սահաթ գլուխ մահանա կէնե՝ կառնե նսաի կը»։

Գերդաստանը բացի սնունդ մատակարարելուց՝ երեխաների վրա ոչ մի խնամք չի տանում, հանդերձն անգամ ինքը չէ անում, այդ հոգում է մայրը՝ յուր «արևքագնով»։

Այսպես՝ երեխան, թե աղջիկ և թե տղա, մինչև չորս տարեկան հասակը մեծանում է աղատ և անհոգ, առանց մի կրթիչ ձեռքի հպատակելու, սակայն ամեն օր ծեծվում է այս կամ այն դատարկ բանի համար։ Մայրն էլ նրան երկյուղ պատճառելու համար հազար ու մի նախապաշարումով լցնում է նրա գլուխը։ Չորս տարեկան հասակում արդեն նա հոտաղ է լինում, և աստիճանաբար մեծանալով՝ տղան հորը, աղջիկը՝ մորն է օգնում։ Տղան հորը օգնելով, սովորում է հոտաղություն, սայլապանություն և գութան քշել, իսկ աղջիկը մորից սովորում է գուլպա գործել և կար անել։ Կերակուր եփել, յուղ հարել, պանիր շի-

նել և այլն նա սովորում է հարս ժամանակ, կեսուրից։

Դպրոց հաճախող երեխաների թիվը շատ փոքր է, և ժողովուրդն էլ դեռ լավ չէ ըմբռնել ուսման կարևորությունը[31]։

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿՅԱՆՔ

Ընտանիքի մեջ ամենից ավելի հարգանք, սեր վայելում է մայրը, նրան կամ նրա միջնորդությանն են դիմում թե որդիները և թե հարսները։ Սակայն հայրն ավելի ակնածություն է ազդում, մորը սիրում են, հորից վախենում, քաշվում։ Մայրը գլխավորապես հրամայում է յուր սիրով, իսկ հայրը՝ հեղինակությամբ, վախով։ Նույնիսկ մայրը երկյուղ է տալիս որդիներին հոր անունով, երբ սրանք չեն ուզում իրեն լսել։

Հայրն ու մայրը ծերանալով հետզհետե կորցնում են իրենց թե իշխանությունը և թե ստացած հարգանքը։

Նույնիսկ որդիները սրտանց չեն սիրում իրենց ծերացած ծնողներին, սակայն հավատալով, թե ինչ որ անեն իրենք իրենց ծնողներին, նույնն ստանալու են իրենց որդիներից, այդ պատճառով պատվում և հարգանքով են վարվում նրանց հետ։

Ավանդությունն ասում է, թե մինը յուր ծերացած հորը քթոցի մեջ դրել տարել է ժայռի գլխից վայր գլորելու։ Հայրն ասել է, թե քթոցից հանիր և այնպես գլորիր։ Նվ երբ որդին հարցրել է պատճառը՝ ծերունին պատասխանել է. «Որպեսզի քո որդիդ էլ քեզ այդ քթոցով գլորե, ինչպես և ես իմ հորս եմ գլորել»։ Որդին ղջում և այնուհետև հարգանքով է վարվում յուր հոր հետ։

Բայց և այնպես՝ թե հանդեսներին, թե հասարակական ժողովներին, եթե նրանք մասնակցեն, թե հոգու հացին և թե եկեղեցում՝ առաջին տեղը, օճախ գլուխը և առաջին բաժինը նրանց է պատկանում։

Ազգակցության մեջ որոշում են հետևյալ աստիճանները.

Հորեղբայր, որին կոչում են պիճեամի, մեծեամի, էամի, փաշա, տացու (եթե կարդալ գիտե)։

Մորեղբայր, որին կոչում են քեռի։

Հորեղբոր կին, որին կոչում են հողոբկին՝ օտարների հետ խոսելիս, իսկ իրեն անվանում են հարս ապլա, խանում ապլա, շաքար ապլա։

Մորեղբոր կին—քեռեկին։

Հորաքույր—հորքուր։

---

31 Տեղի սղության պատճառով հետաձգում ենք դավառիս մանկական և ժողովրդական բոլոր խաղերի մանրամասն նկարագրությունը։

Մորաքույր—մորքուր.
Հորեղբոր որդի.
Մորեղբոր որդի.
Հորաքրոջ որդի.
Մորաքրոջ որդի.
Եղբոր որդի.
Քեռորդի—եղյան.
Խնամոնք—հարսի կամ փեսայի ծնողները.
Աներ—կնոջ հայրը.
Ոնքանչ—կնոջ մայրը.
Կերսար—ամուսնու հայրը.
Կեսուր—ամուսնու մայրը.
Աներձագ—կնոջ եղբայրը.
Տալր—ամուսնու եղբայրը.
Քենի—կնոջ քույրը.
Տալ—ամուսնու քույրը.
Տագերկնիկ—ամուսնու եղբոր կինը.
Քենակալ—կնոջ քրոջ ամուսինը.

Հարսի համար ամուսնու ազգականները կոչվում են կերսանդ, իսկ փեսի համար հարսի ազգականները՝ աներանք։

Ամուսիններին առհասարակ կոչում են մարդ ու կնիկ։ Կինը ամուսնու մասին խոսելիս կեսուրը առաջ կոչում է նրան՝ տղադ, տեքերկնկանը՝ տագրդ, տալին՝ ախպարդ, օտարների՝ մարդս, գլխավորապես փեսադ, ախպարդ. ամուսնուն՝ ինչ որ յուր կամ տան տղան կոչում է՝ տղա, փաշա, ափար, էամի, կատաշ, բայց առավելապես՝ ծո՛։

Ամուսինը կնոջը կոչում է՝ յուր հոր, մոր, հորեղբոր, եղբոր և ուրիշների առաջ՝ հարսը, աներոջ և ոնքանչի առաջ՝ աղջիկդ, օտարների առաջ՝ մեր Քյուլթյոքյանը[32], նշանածս, կնոջ հետ՝ ըխչի։

Գերդաստանի անդամների հարաբերությունները շատ աննախանձելի են։ Բավական է, կարծեմ, առաջ բերել «Հարս և կեսուր»[33] պատկերի միջից այն տողերը, որով նկարագրում է հարսը յուր շրջապատողներին։ Նա ասում է.

---

32 *Իսկապես Գյուլթոքյան, որ տուճկերեն նշանակում է վարդթափող, բառախաղ անելով դառել է Քյուլթոքյան, այսինքն՝ մոխիր թափող։*

33 *Տե՛ս «Ջավախքի բուրմունք»։*

Կերսար, կերսար,
Էրկթե մսմար։
Կեսուր, կեսուր,
Քարե մսուր։
Տաքեր կնիկ,
Օձի բնիկ։
Տալիկ, տալիկ,
Սև սև սալիկ։
Տաքրիկ, տաքրիկ,
Պաղ աղբըրիկ։

Այսպես ուրեմն, ամբողջ դերդաստանի մեջ ամենասիրելին հարսի համար, ամուսնուց հետո, տեգրն է։ Կերսարը երկաթե մսմարի (մեխ) նման ամուր է յուր իշխանության մեջ, կեսուրը՝ քարե մսուրի պես անգութ, ինչքան կուզե լիզե, ոչինչ չի տալ, տեգերկինը՝ օձի բնի պես որոգայթից բնակարան, որովհետև «տագերկնիկը՝ տագերկնկան ամեն գիշությունը կուզե, մի գեշ յարա հանելը չի ուզե, չյունքի հետը հաց կուտե»։

Սակայն հարսը դատապարտված է և լռության, նա հարսնության (չի խոսում) կեսուրի հետ 3, կերսարի հետ 10—12, տեգերկնիկների հետ մինչև մի, տեգրի հետ 15, և կնքավորի հետ 25—30 տարի, մինչև անգամ մինչև մահ. դեռ սրա դռնիցն անգամ չի անցնում՝ սաստիկ մեղք համարելով այդ։ Ավանդությունն ասում է, թե մի հարս անցել է քավորի երթիկից, և նրա հետքը մնացել է երկնքում, որ այժմ կոչվում է «սանամոր ֆաշ»՝ հարդգողի ճանապարհ։

Բարեբախտաբար տան մշտական աշխատանքը սովորության իրավունքով բաժանված է, ապա թե ոչ անտանելի կլիներ միմյանց հետ ապրել։

Այսպես. վաղեմի սովորությունով՝ կեսուրը հաց և կերակուր է եփում.

Մեծ հարսը գրտնկում է հացը՝ «բանա կը հացը» և օգնում կեսուրին՝ կերակուր եփելու։

Երկրորդ հարսը կովերն է կթում, խնոցի հարում։

Երրորդ հարսն աման է լվանում և թոնիրը վառում։

Չորրորդ հարսը հաց շաղախում, տեղեր դցում, ժողովում, տուն ու տեղ ավելում։

Տան աղջիկն էլ ջուր է բերում։

Մի փոքրիկ զանցառություն պարտականության, և կեսուրը կսկսի խոսել, անիծել հարսին, ծաղրել, հայհոյել հարսի ծնողներին, իբր թե

նրանք վատ են կրթել աղջկան և այլն: Հարսը պարտավոր է լռելյայն տանել կեսուրի խոսքերը և շատ շատ՝ լռելյայն արտասվել յուր վիճակի վրա. բայց երբ ամարիներ անցնելուց հետո հարսի համբերությունը հատնում է և վստահանում է կեսուրին պատասխան տալ, այն ժամանակ վերջինս գանգատվում է յուր որդիներին, ամբաստանելով հարսերին ոչ միայն արածի, այլև հազար ու մեկ չարածի մեջ, որոնք հավատալով մորը, միևնույն ժամանակ իրենց «տղամարդությունը» ցույց տալու համար ծեծում են կանանցը: Եվ հենց այս պատճառով «պառվի գովասանք» երգի մեջ ասվում է.

Հին անկճով թեզ կը լսես,
Մատվնիտ իրար կը քսես,
Սուտ ու դարթ մանչերուտ կըսես.
Ծեծել կուտաս, ա՛յ դու պառավ:

Սակայն երբեմն էլ հարսերը իրենք են կռվում կեսուրի հետ. այսպես օրինակ.

Եթե կեսուրը հարսերից մինին ավելի սիրե և նրան քիչ աշխատեցնե, մյուսները իրենց ամուսինների «փորը լցնում»՝ ոխակալեցնում և առավելապես նրանց են կռվեցնում կեսուրի հետ:

Եթե կեսուրը հարսի արածին հաճախ չի հավանում, և ինքը նորից է անում, հարսն այլևս չի համբերում և ասում է, թե եթե ամեն արածիս չպետք է հավնիս՝ մի անիլ տար, վերցրու ինքդ արա: Սրանից և ծագում է կռիվ:

Սակայն ամենից շատ կռվում են տեգերկնիկները, և այդ առավելապես հետևյալ պատճառներով.

Երբ մինը ցանում է կատարել յուր պարտականությունը, մանավանդ եթե նկատելիս էլ՝ դիմադարձություն է անում:

Երբ քիչ որդիներ ունեցողը քիչ է աշխատում և դիմադարձություն է անում, թե այսքանն էլ հերիք է, «ինչս կուտե»:

Երբ մինը կամ երկուսը միայնակ մնալով տանը՝ ծածուկ տան բարիքներից ցորեն, յուղ, պանիր, հավկիթ և այլն տալիս են միրզ կամ շոր են առնում իրենց համար և հայտնվում է:

Երբ մինը մյուսի բրդից, կտորից, թելից, թաշկինակներից, ոսկիներից գողանում է և բռնվում է: Հաճախ գողացած իրը տեգերկնիկներն ուղարկում են իրենց մարանց, որոնք ձևը փոխելով՝ այսինքն եթե թել է՝ գուլպա գործում, եթե կտոր՝ հանդերձ կարում և ընծա բերում իրենց աղջկան:

Երբ մինին կամ նրա որդուն կերսանքը մի բան ավելի անեն։

Երբ մինի երեխային կերակուր են տալիս և մյուսներին չեն տալիս։

Երբ մինն յուր որդու հանդերձին կարկատան է ձգում, և այդ կարկատանից մյուսների որդիներին բաժին չի հասնում։

Երբ մինը տղա չունի, և հակառակ նրա պահանջի՝ ամեն բանի մեծ, խաս բաժինը նրան չեն տալիս։ Մյուսների երեխաներին արած հանդերձի դեմ իրեն փող չեն տալիս։

Երբ ճաշի ժամանակ մինին, սովորաբար փոքրին, գործի են դնում, և չսպասելով ուտում, պրծնում են կերակուրը։ Վերջինս խռովում և կըռվում է նրանց հետ։

Երբ մինը չի ուզում արտը գնալ, և պահանջում է, որ մյուսը գնա։ Այսպիսի դեպքերում ամուսինը ծեծում է սրան։

Երբ մինը դանդաղում է դրկիցներին տեգերկնիկներից, և իմացվում է։

Սովորաբար տեգերկնիկները կռվելիս հայհոյում են միմյանց. «Շները... մորդ մաղին...» և այլն. և միմյանց գաղտնիք դուրան ասում։ Երբեմն էլ ծեծկվում են, ճանկռտում են միմյանց երես և քաշում միմյանց մազեր։

Կինն ազատ չէ մինչև անգամ և ամուսնու բռնությունից։ Սա յուր տղամարդությունը ցույց տալու համար ոչ միայն օտարների առաջ հայհոյում է նրան, այլև ծեծում, և այս առավելապես՝

Երբ կասկածում է, թե կինը «սիրող է անում», ուրիշին սիրում է, և սրա համար միշտ ոսկիներ դնում, խաս է հագնում։

Երբ կնոջը մեղադրում է, թե պարտունը ինչի՞ այսինչի ձեռքը բռնեցիր, սխմեցիր, ինչու՞ դուրս ելար և այլն, և կինը սրա դեմ խոսում է։

Երբ պարտատերը պարտքը պահանջում է, և սա հանդիմանելով կնոջը, մանավանդ հին նա երկրորդն է, թե ինչի՞ այնքան փող պահանջեցիր, որ պարտքի տակ ընկա, «արնքագնի» մի մասն ուզում է պարտքը վճարելու, և սա ոչ միայն չի տալիս, այլև դիմադարձություն է անում։

Երբ ուրիշները բամբասում են կնոջը և այլն և այլն։

Նախնի բարոյականությունը զգալիորեն այժմ անհետացել է, և անբարոյականությունը հետզհետե տարածվում է. բայց և այնպես՝ այս ժողովուրդը բարոյապես բարձր է կանգնած Ախալցխայի և Աղեքսանդրապոլի ժողովուրդներից։

Սակայն գավառիս բնակիչների մեջ անբարոյականությունով ավելի աչքի են ընկնում Արտահանի գաղթականները, որոնց մեջ մի ժամանակ սաստիկ տարածված էր «կաթնախպերությունը»։ Հարս և երիտա-

սարդ կտրում են իրենց մատները և արյունը միմյանց խառնում կամ Ջատկին միմյանց ողջույն են տալիս և դուլպա, պաշմախ միմյանց նվիրում, այսպիսով քույր ու ախպեր են լինում և ազատ մուտք ունենում միմյանց տուն։ Կաստածանքից և հետևողությունից ազատ՝ սրանք շատ շուտով դուրս են գալիս բարոյականության ճանապարհից։

Այսպես, օրինակ, Փոկա գյուղում Կուրղին անուն մեկը սիրում է Գյուլֆերի «քրոջը», որի օրինավոր ամուսինն երեք տարուց հետո անհայտ ձեռքերից խեղդվում է յուր սեփական տանը։ Կուրղինը տանում է Գյուլֆերուն յուր տունը, յուր օրինավոր կնոջ մոտ, որը չհամբերելով՝ գնում է յուր հորանց տուն։ Գյուլֆերին սիրում է Կուրղինին ու յուր մյուս «ախպորը», և գուցե ուրիշ շատ «ախպարներին» էլ, եթե Կուրղինի օրինավոր կնոջ եղբայրները չսպանեին նրան։ Այժմ դրանք, Կուրղինի աներձագերը, բանտարկված են։

Քույր-ախպերության այժմ գրեթե վերջացել է։

Բարոյականության անկման պատճառները բացի տնտեսականից, գլխավորապես հետևյալներն են.

Վերջին պատերազմին գյուղերում և քաղաքում բնակող զորքը։

Քաղաքացիներն իրենց կիրքը հագեցնում են շրջակա մոտիկ գյուղերում Ջանդուրա, Վալիան, Սաթխա, Էշտիա և այլն, դիմելով պառավ «միջնորդ» կանանց, որոնց տունը շատ անգամ ծառայում է ժամադրության տեղի։

Քաղաքի սիրեկանները քավոր են լինում գյուղերում և շաբաթներով բնակում այնտեղ։

Մանրավաճառներն (չարչի) ազատ մտնելով գրեթե ամենի տունը, ոչ միայն մոլորեցնում են հարսերին, այլև նրանց գողանալ են տալիս տան բարիքներից՝ կարագ, ցորեն, գարի, հավկիթ, ալյուր և այլն։

Սափրիչները պայմանավորված լինելով երկու շաբաթը մի անգամ գնալ գյուղ և այր մարդկանց միրուքները սափրել, մազերը խուզել, գրեթե համարձակ մտնում են բոլորի տները և մոլորեցնում հարսերին։

Գյուղերում մի տեսակ տղամարդություն է համարվում հարս սիրելը, և մի քանի գյուղերում, օր. Կարծախ, Սաթխա, գրեթե բոլորը միմյանց հարս են սիրում։

Իրենք հարսերն էլ իրենց կողմից նպաստում են անբարոյականության տարածման, ի վրեժ սիրուհի պահող ամուսնուն, իրենք էլ ուրիշներին սիրելով, և կամ ամուսնու կոպտությունից զզված և կամ ուրիշների մրգերից ու փողից շլացած՝ հետևում են «միջնորդ պառավներին» խորհրդին։

Երբ մի մարդ ուզում է մի հարսի ձեռք ձգել, մի առանձին տեղ մի խնձոր է ձգում նրան, եթե հարսը վերցնում է այն, մարդը մոտենում և ժամադիր է լինում, իսկ եթե չի վերցնում, նշանակում է կամք չունի։ Պետք է նորից փորձել՝ պարտունը ձեռքը սեղմել, բուռը բերել, արտի ճանապարհին սիրո խոսքեր «թապլել» և այլն։

Եթե հարսը մինի վրա աչք ունի, առանձին տեսնելիս արհամարհական ձևով ասում է. «Ինի՞ մունտառն (կինդ) ի՞նչ է, օր դուն առեր ես»։

— է, ի՞նչ էնեմ,— պատասխանում է մարդը։

«Ի՛նչ պըտի էնես, վալլահա», ասում է հարսը և հեռանում։ Մարդը հասկանում է և պատում է ետևից, մի առանձին տեղ մոտենում է նրան և ուղղակի ասում. «Ես քեզ գուղեմ, դուն ինծի գուղե՞ս»։

Եթե համաձայնություն կայանում է՝ որոշում են թե որ փոքրիկ աղջկա կամ մարդու միջոցով կարող են միմյանց կանչել, ուր գնեն մի քար, որի մի երեսը պիտի նշանակեր, թե սիրահարը կարող է գնալ հարսի տունը և մյուսը չի կարող, և թե հարսն արտը հաց տանելիս որ քուչում սպասե սիրահարին։

Ուխտադնացության օրերից մի քանի օր առաջ սիրողը սովորեցնում է սիրուհուն, խոստանալ գնալ այսինչ ուխտը, միայն առանց ամուսնու, միայնակ։ Այնտեղ իջնել այսինչ անծանոթ մարդու տունը, ուր և իջած կլինի ինքը և կներկայանա որպես նրա ամուսինը։

Օտար գյուղից բերած հարսը երբ իջեցնում են աղգականներից մինի տունը, երիտասարդները տանեցիներից մինի միջնորդությունով ծանոթանում են հարսի հետ իրենց աղգական ցույց տալով, գրավում են սերը և ամուսնությունից հետո սիրում։

Հարս գարձ տանելիս երբեմն հետու աղգականն (կանաղոփ) է տանում, որ ճանապարհին մոլորեցնում է հարսին և ապա շարունակում։

Պետք է ասել, ընդհանրապես, որ աղջիկները սաստիկ բարոյական են, որովհետև ժողովորդը ահագին նշանակություն է տալիս դրան։ Անբարոյականության մեջ բռնված աղջիկը, եթե չի կարողանում ոտիկով իրեն մոլորեցնողին ամուսնանալ յուր հետ, երբեք չի կարողանում մի արժանավոր ամուսին գտնել։ Եվ մինչև անգամ եթե նորահարսի անմեղությունն յուր ապացույցը չէ ունենում, վերջինս սաստիկ և շարունակ նախատվում է ոչ միայն ամուսնուց և աղգականներից, այլև ամբողջ գյուղից։

Ժողովուրդը դատապարտում է և մոլորեցնող երիտասարդին, և հարկավ է պատահում, որ պատվավոր տնից նրան աղջիկ տային։ Ուստի և սրանց սիրահարությունն սկսվում և վերջանում է «դունդունալով»՝ սի-

բախտաւորությունով ու համբույրով։ Եվ միայն այն դեպքում, երբ երիտասարդը կասկածում է, թե միգուցե աղջիկը չամուսնանա յուր հետ, և կամ ծնողները չտան, մեղանչում է նրա դեմ, որով կատարելապես ապահովվում է, որովհետև այսպիսի դեպքերում աղջիկներն ասում են. «Ում հետ օր անունս հելավ, անոր հետ ա թող հոգիս էլե»։

Շատ անգամ հիշեցնելով այդ տխուր ապագան, ծնողները բավական աղատություն են տալիս աղջիկներին գնալու ում տուն որ կամենան, համարձակ խոսելու, երգելու և պարելու երիտասարդների հետ, միայնակ գնալու աղբյուրը, արտը, սարերը գմի, ծաղիկ ժողովելու և այլն, մինչդեռ հարսերը բոլորովին զրկված են այդ ազատությունից, նրանք իրավունք չունին երիտասարդների հետ խոսելու, միայնակ այս կամ այն տունը գնալու և այլն։

Երիտասարդները աղջիկների սիրտը գրավելու համար աշխատում են կարելվույն չափ վայելուչ հագնվել, «տնկոզ» ման գալ, լավ գոտեմարտել, «ճիլիթ խաղալ», պարի մեջ լավ շորորալ ու քաղցր երգել, լավ ընկերներ ունենալ և այլն։

Աղջիկները երիտասարդներին դուր գալու համար բացի այն որ հագնում, կոկվում, մազերը գեղեցիկ հյուսում և հլուններով զարդարում են, այլև գրպաններում դնում են մեխակ (զարանֆիլ), սերկևիլ, խնձոր, ընկույզ և այլն, բերաններում պահում են զարանֆիլ, շապկի տակից վզի վրա կապում նույնպես զարանֆիլ, որ, իբր, անուշահոտություն բուրե։ Պարտունն ինչքան կարելի է լավ են շորորում, երգում, խոսում և այլն։

Առհասարակ սղա և աղջիկ միմյանց տեսնում և «սեր են կապում»՝ սիրահարվում են հետևյալ տեղերում.

ա. Եկեղեցում. Թե ժամերգության սկսվելիս և թե մանավանդ ավարտվելիս երիտասարդները խմբով կանգնում են եկեղեցու գավթում և նայում աղջիկներին։

բ. Պարտանը. Հարսանիքներին և մեկ էլ բարեկենդանին հասարակաց «կլոր» պար է լինում, որին գրեթե բոլոր գյուղացիներն առանց հրավիրվելու ազատորեն մասնակցում են։ Այստեղ մի լապտերի աղոտ լուսի տակ մի քանի հարյուր հոգի համախմբված ասում, խոսում, պարում են։ Երիտասարդներն աղջիկների ձեռքը բռնած պարում են, և երթ հավանում են միմյանց, սեղմում են իրար ձեռք, տղան միրգ է տալիս աղջկան և այլն։

գ. Գերիներում. երիտասարդները գոտեմարտի, ճիլիթի մեջ ցույց տալով իրենց բոլոր արժանավորությունները, բռնում են աղջիկների ձեռ-

քը և երգելով պարում։ Ձեռների մի փոքր սեղմումն բավական է զգացմունքների փոխանցման համար։

դ. Աղբյուրի մոտ. ջուր բերելու պարտականությունն աղջիկների, նորահարսերի և երիտասարդներինն է։ Սրանք վաղ արշալույսին և ուշ վերջալույսին, երբ բնությունն ինքն յուր դեղեցկությամբ սեր է ներշնչում, գնում են աղբյուրը կամ առվակը ջուր տանելու։ Թե ճանապարհին և թե՛ մանավանդ աղբյուրի մոտ սրանք կանգնած երկար խոսում են, ծիծաղում, միմյանց մատանի, միրգ, թաշկինակ տալիս։ Շատ անգամ, երբ աղջիկը սափորը ձեռքին կանգնած է լինում աղբյուրի մոտ, երիտասարդ սիրահարը հանդիպակաց բլուրից հնչեցնում է յուր սիրո երգը, որին երբեմն պատասխանում է աղջիկը[34];

ե. Աղջիկն առար գնալիս և գալիս. երիտասարդները գնում են առջևից քաշքաշվելով, իրար խփելով, գոռեմարտելով, ինչ է՝ իրենց շնորհքը, ույժը ցույց տան նրան և նրա սերը գրավեն։ Եթե հասել են նպատակին, տղա ու աղջիկ նստում են մի փոսի մեջ և երիտասարդի բերած միրգը ուտում, «ղունղունում»։ Ղունղունում, որովհետև «սիրվելը ղունղունացող աղավնուց է մնացել»։

զ. Էրիշտու տուքը. էրիշտա անողը հավաքում է 8—10 աղջիկ էրիշտան կոխելու և ջարդելու։ Սրանք բոբիկանում են, իրար ձեռքից ամուր բռնում, երգում և երգի տակտով էրիշտան կոխկրտում։ Երիտասարդները

---

34 Առաջ բերենք բյուրեղավոր դեպքերից մինը. Դանձա Տեփան-Ստեփան անունով մի երիտասարդ առավոտ վաղ որսի է գնացել. երբ պատրաստվել է խփել մի թռչուն, հանկարծ սա թռչում է, Ստեփանը նայում է նաև, տեսնում աղբյուրի առաջ մի աղջիկ կանգնած, որ և թողրել էր թռչունը։ Հանկարծ դրա «սիրուն է զարնվում», հրացանը սաղ անում և երգում, զժբախտաբար թուրքերեն լեզվով, որի հետևողությամբ երգիչ Չիվանին հյուսել է «Պաղ աղբյուրի մոտ կանգնած մի աղջիկ» երգը։ Ապա գնում է մոտը, միմյանց բացատրում են իրենց սերը, փոխում են մատանիները և ժամադիր լինում միշտ այդտեղ տեսնվելու։

Տեփանը երեք տարի սիրահարված է մնում և միշտ՝ ցերեկը աղբյուրի մոտ, գիշերը նրանց դռներն ու երդիկը շրջելով՝ երգում։ Քանի քանի անգամ ուզում է աղջկանը, բայց որովհետև ինքը մի աղքատ ժամհարի որդի է եղել, չեն տալիս։ Երիու անգամ փորձում են փախցնել, սակայն չեն կարողանում, որովհետև աղջկան գիշերները շղթայով կապում են սյանը։ Վերջապես աղջկանը նշանում են Դադեշի բահանայի որդու հետ։ Այս որ իմանում է Տեփանը, չի հավատում և գնում նրանց հերթիկից նայում է։ Երբ տեսնում է յուր ախոյանին հաղթանակով կանգնած Իսկուհու մոտ, «վա՜յ» է անում և ուշաթափվում։ Նրա ամբողջ մարմինը սև սևանում է։ Ծնողները տանում են տուն, ուր սաստիկ հիվանդանում է։ Մահամերձ՝ աղաչում է կանչել Իսկուհուն, մնաս բարև ասելու, և երբ այդ ևս թույլ չեն տալիս աղջկա ծնողները, կանչել է տալիս Իսկուհու աչերի նման աչեր ունեցող մի աղջիկ, համբուրում աչերը և հոգին ավանդում։

հավաքվում են հերթիկը և այդտեղից նայում նրանց և լսում նրանց երգը։ Երբեմն էլ թողնում են նրանց մասնակցելու էրիշտան կոխկրտելուն և մանավանդ կտրելուն։ Դնում են խոնչաներ և շուրջը բոլորում և կտրում։

Երիտասարդը խոնչի տակից տալիս է յուր ուղածին բևրած միրգը։ Սա առնում և ծածուկ տալիս է միջնորդ ընկերուհուն, որ ցույց է տալիս իրեն և ասում, թե մայրն է տվել։ Ապա հայտնի կերպով միասին ուտում են։

է. Մաղկոցին. աղջիկները հավաքվում են և հարսին տնետուն մանածում, երիտասարդներն էլ խմբով հետևում են նրանց։

ը. Համբարձման. երբ գնում են սարերը ծաղիկ քաղելու և երբ վիճակ են հանում։

թ. Ջայիրևերը. դմի, ժախ և այլն հավաքելու գնալիս։

ժ. Ջուաղացում. ուր գնում են աղջիկները կորկոտ աղալու։

ժը. Նոր և կանաչ կիրակիներին, երբ գնում են «կանանչ կոխելու»՝ զբոսնելու և այլն։

Սիրահարը միջնորդ է գտնում աղջկա ազգականներից կամ ընկերուհիներից մինին և նրա միջոցով զրավում աղջկա սիրտը, մատանի, թաշկինակ ուղարկում և այլն։ Միրգ է տալիս միջնորդին, որ կեսն ինքը ուտե, կեսն էլ նրան տանի։ Երբ սրանք սիրում են միմյանց, իրենք միջնորդ են լինում միջնորդ աղջկա համար, և երբ գտնում են նրա համար ևս սիրեկան, չորսը միասին գնում են արտերը սիրվելու։

Բայց ավելի նրանք սիրվում են եղլաօրկին։ Աղջիկներն, յուրաքանչյուրն յուր տնից առնելով յուղ, պանիր, հավկիթ, հաց և այլն, միասին գնում են գյուղից դուրս մի բլուր կամ ժայռ։ Այստեղ, խաղալով ու երգելով եփում են կերակրներ և տանում քարերի տակն իրենց հրավերով եկած՝ թաք կացած սիրեկանների հետ ուտում ու «զունդունում»։

ԳԵՐԴԱՍՏԱՆԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Գյուղական գերդաստանները կազմում են պապն ու տատը, որդիները, հարսները, թոռները և թոռնորդիները, բոլորը 2—40 հոգի, որ միասին ապրում են միևնույն հարկի տակ և կառավարվում միևնույն շահերով։

Գերդաստանի անդամներին միմյանց հետ կապողն է.

ա. Պարապմունքը. երկրագործությունը պահանջում է շատ աշխատող ձեռքեր, ուստի և գերդաստանից բաժանվելիս էլ ուրիշ ընտանիքների հետ միացած են գործում, բ. սովորությունն ու հասարակաց կարծի-

քը. «լավ օր ըլլիր՝ չէր բաժնվիր», նախատելով ասում են բաժանվածների համար, գ. ազգակցությունը, սերը. դ. կալվածքի միությունը և այլն։

Գերդաստանի իշխանությունը պատկանում է տան ամենամեծերին՝ հորը (պապ) և մորը (ատատ)։ Հայրը քանի խելահաս է, անսահման իրավունք ունի կառավարելու գերդաստանի արտաքին գործերը, առանց մեծ որդու հոժարությունն առնելու կամ խորհուրդ հարցնելու. նա անսահման իշխանություն ունի որդիներին «ծախելու և գինն ուտելու», հետևապես և նրանց վաստակը լիովին իրեն է պատկանում։ Փողը և աշխատանքի բաժանումը յուր ձեռն է։ Որդիներն իրավունք չունին իրենց վաստակը իրենց մոտ պահելու, իրենց վաստակով իրենց մի բան դնելու, կամ առանց հորից իրավունք խնդրելու՝ մի գործ կատարելու։

Այս անսահման իշխանությունն այժմ հետզհետե պակասում է, և որդիներն այժմ այնպես հլու հպատակ չեն հորը, ինչպես առաջ։ Ուստի ժողովուրդը դանգատվում է. «Հիմիկվա տղաքը թոխմախը իրենց մարեբուն, հարերուն ճակտին զարնեն կը»։

Գերդաստանի ներքին կառավարումը կենտրոնանում է մոր ձեռքում։ Մայրն անսահման իշխանությամբ կառավարում է ատան գործերը և հրամայում հարսներին։ Նրա ձեռին են տան բոլոր բարիքների բանալիները, նա է հարսներին հրամայողը և աշխատանք բաժանողը։ Առանց նրա թույլատվության ոչ մի հարս չի կարող բանալին վերցնել և մի պատառ հաց անգամ հանել, առանց նրա թույլատվության հարսն իրավունք չունի ուրիշի տուն գնալու։

Հոր և մոր անձնափոխանորդներ համարվում են ավագ որդին և նրա կինը՝ ավագ հարսը, որոնք և առաջիններիս մահից հետո լիովին ժառանգում են այդ իրավունքները։ Նույն իրավունքներից օգտվում են սրանք և այն ժամանակ, երբ հայրը և մայրը ծերանում կամ հոգեկան հիվանդություն են ստանում։ Հայրն իշխանությունն ավագ որդուն հանձնելիս կանչում է բոլորին յուր շուրջը, օրհնում և շնորհակալ լինելով, որ այդքան ժամանակ իրեն հնազանդ են եղել, հայտնում է, որ յուր իշխանությունը հանձնում է մեծ որդուն և պատվիրում է բոլորին հնազանդվել նրան, ինչպես իրեն։ Ապա լվանում է ձեռքերը հաջորդի ձեռքերի վրա, որով և յուր ձեռքերի «բարեբյաթը» անցնում է նրա ձեռքերին, հետո հանձնում է նրան փողի քսակը և համբուրում։

Եթե ավագ որդին հոգեկան հիվանդություն ունենա, հայրը զրկում է նրան հաջորդության իրավունքից, և հաջորդությունն անցնում է մյուս եղբորը, հակառակ դեպքում հայրը չի կարող զրկել նրան։

Որդու հաջորդության ժամանակ «տան մեծի» իրավունքը փոքր ինչ

սահմանափակվում է, նա ծանր գործերում պետք է խորհրդակցե չափահաս եղբայրների հետ և ստանա նրանց համաձայնությունը։ Նա պետք է զգուշանա յուր անձնականին վերաբերյալ ծախսերից, որովհետև սրանից ոչ միայն կռիվներ են ծագում, այլև մյուս եղբայրներից յուրաքանչյուրը պահանջում է նույնպիսի ծախս և յուր համար անել։ Սակայն սրա իրավունքը ևս տարածվում է բոլոր անդամների, բացի հարսներից, թե անշարժ և թե շարժական կայքերի վրա։ Օրինակ, եթե անդամներից մինը, տան մեծի եղբայրը թե որդին՝ միևնույն է, ստանից մի հաց առել գնացել է օտար երկիր և հազար մանեթ վաստակել, այդ գերդաստանինն է, և նա պարտավոր է հանձնել տան մեծին։ Իսկ եթե հազար մանեթ պարտք է արել, այդ պարտքն էլ պիտի վճարե գերդաստանը՝ տան մեծի ձեռքով։

Տան մեծի անձնափոխանորդը և նրա մահից հետո նրա հաջորդը է ոչ թե նրա ավագ որդին, այլ իրենից փոքր եղբայրը, այսինքն տան միջի տարիքով մեծը, հետո փոքր եղբայրը։ Բոլոր եղբայրներից հետո հաջորդությունն անցնում է ավագ եղբոր երեց որդուն։ Այսպես ուրեմն՝ հաջորդությունը կատարվում է երեցության կարգով, և այս ինչպես արական, այնպես էլ իգական սեռի մեջ։

Միակ բանը, ինչպես ասացինք, որի վրա չի տարածվում տան մեծի իշխանությունը, դա հարսների փողն է։ Թեև հարսները իրենց հետ փող չեն բերում, սակայն վաճառում են իրենց զարդերը, հագուստները և խնամոնց տված ոսկիները մանրելով՝ մի գումար են գոյացնում և իրենց անունով շահով տալիս։ Այս գումարն իրենք կոչում են «սրնքագին»՝ արյան գին, և այդ փողով հոգում իրենց և իրենց որդիների հագուստները, որովհետև կերսանքը շոր չեն անում ոչ իրեն և ոչ յուր որդիներին։ Եթե պատահի, որ կերսանքը շոր անեն մի հարսին, անպատճառ մյուսներին էլ պետք է անեն, չնայելով որ նրանք բոլորովին պետք չունին։ Եվ եթե չանեն, ամուսինները կկռվեն և կբաժանվեն։ Եվ եթե մի քանի արշին կտոր գա տուն, անպատճառ հավասար բաժին պիտի անեն հարսների մեջ, առանց նայելու, թե այս հարսը շատ, իսկ այն ոչ մի որդի չունի, և կամ սրան շատ հարկավոր, իսկ նրան բոլորովին անպետք է։ Այս է պատճառը, որ միևնույն գերդաստանի երեխաներից մի քանիսը շատ լավ են հագնված, իսկ մյուսները գրեթե մերկ են։

Կնոջ փողի վրա իրավունք չունի և նրա ամուսինը, եթե բաժան չէ եղբայրներից։ Բաժանվելիս միայն նա ստանում է կնոջ փողը և վարվում ինչպես յուր վաստակի հետ։

Կնոջ մահից հետո արնգինը մնում է մարդուն որպես մի առանձին սեփականություն, որի վրա իրավունք չունի տան ոչ մի անդամը։ Այս

փողով նա կարող է հոգալ յուր անձնական և յուր որդիների կարիքը։ Սրա մահից հետո արնգինը որպես ժառանգություն բաժանվում է որդիներին՝ երկուս տղաներին և մեկ աղջիկներին, որպես առանձին սեփականություն։

Համամայր որդիները միևնույն իրավունքն ունին արնագնի ժառանգության, իսկ համահայր որդիներից յուրաքանչյուրը միևնույն իրավունքն ունի միայն յուր հարազատ մոր արնգնի վրա։

Կնոջ հետը բերած տղան ստանում է մոր ունեցած արնգինը, իրեն է պահում յուր վաստակը, և միայն կերակրվում խորթ հոր սեղանից։ Ապօրինի, պսակից առաջ ծնված երեխաները անպատճառ կամ սպանվում են, և կամ եկեղեցու դուռը ձգվում։ Մինչև անգամ ամուսնությունից մի քանի ամիս հետո ծնվածներն ենթարկվում են այդ դժբախտ վիճակին։ Օրինակ, Սաթխա գյուղում ամուսնությունից չորս ամիս հետո ծնվում է տղա, որ հակառակ մոր սրտակեղ աղաչանքին և հոր ինչ ընդդիմության, խեղդում են տան «ամոթի համար մեռած» մեծերը։

Սակայն հասարակությունն անխնամ չի թողնում եկեղեցու դուռը ձգվածներին. որքան արհամարհում է ապօրինի երեխայի թաքնված ծնողներին, այնքան դութ ունի երեխայի վրա։ Անշուշտ մի գերդաստան, տան երկու մեծերի, մանավանդ կերսարի ինչվությունով որդեգրում է և հարազատ որդիների հետ համահավասար խնամում։

Որդեգիր որդին ժառանգության իրավունք ունի միայն որդեգրողի շարժական կայքի վրա, իսկ եթե որդեգրողը կատակ անե, կարող է հարազատ որդիների հավասար, մինչև անգամ ավելի, մասն ստանալ։

Տնփեսայությունը շատ քիչ է պատահում, և այն միայն այն դեպքում, երբ աղջկա հայրը ոչ միայն արու զավակ չունի, այլև բաժանված է գերդաստանից։ Տնփեսան վայելում է հարազատ որդու իրավունքներն և աներոջ մահից հետո ժառանգում է նրա թե անշարժ և թե շարժական կայքն։

Բացահայտ նկատվում է, որ բաժանվիլը հետզհետե ավելանում է, և այս կատարվում է հետևյալ ձևով.

Ա. Որդին բաժանվում է հորից։

Երբ որդին է բաժանվում հորից, վերցնում է ինչ որ հայրը տալիս է և հեռանում։ Հաճախ պատահում է, որ որդու վրա բարկացած հայրը ոչինչ չի տալիս նրան՝ «կնիկը կու տա ձեռքը դուս կէնե»։ Սակայն սա հոր մահից հետո դատ է բաց անում եղբայրների դեմ և հավասար մասն ստանում, և ժողովուրդը բոլորովին չի դատապարտում նրան։

Բ. Եղբայրներն են բաժանվում։

Եղբայրները բաժանվելիս նախ և առաջ ընտրում են 3—4 բաժանող, որոնք մաքրում են հաշիվները, և ինչպես առձեռն փողը, այնպես էլ պարտքը բաժանում եղբայրների վրա։ Եթե եղբայրների որդիներից մինը կամ մի քանիսը ամուսնացած են, ծախսերը հաշվում և այդքան փող ընդհանուր գումարից տալիս են այն եղբորը, որի որդին դեռ չէ ամուսնացել։ Ապա ցորենն ու հարդը գերդաստանի բոլոր անդամների, իսկ շարժական և անշարժ կալվածները միայն եղբայրների թվին հավասար մասն են անում, առանց նայելու թե մի եղբայրը տասն որդի ունի, իսկ մյուսը ոչ մինը, կամ մեծ եղբոր 25—30 տարեկան որդու 15—20 տարիների վաստակը խառնված է այդ բաժանվող սեփականության մեջ։ Բաժանումից ազատ են մնում միայն կանանց «անդուկները»՝ հանդերձները, զարդերը և արնգները։ Հավասար մասեր անելուց հետո բաժանողները վիճակ (չոփ) են ձգում, և որ մասը ումն ընկավ, տալիս նրան։ Բաժանվածները սովորաբար մոտ մի տարի խառն են մնում, հետո հաշտվում և առաջվանից ավելի սիրով լինում։

Բաժանման ամենագլխավոր պատճառներն են.

ա. Սովորությունների ղեղծումը. 40—50 հոգի միասին կարող են միայն այն ժամանակ խաղաղ ապրել, երբ բոլորն էլ ճանաչում են իրենց պարտքն ու իրավունքը, և բոլորն էլ ենթարկվում են որոշ օրենքների։ Նախկին հայ գերդաստանն արդեն լավ թե վատ որոշել է յուրաքանչյուր անդամի իրավունքն ու պարտականությունը և սահմանել է որոշ սովորություններ, որոնք իբրև օրենք կատարվում էին։ Արդի սերունդն անարգելով նախնի իրավունքն ու սովորությունները, մի նոր իրավունքի կամ սովորության չի ենթարկվում, որից և ծագում է խռովություն, անբավականություն, վերջը՝ բաժանումն։ Այսպես, օրինակ, նախնի սովորությունը բաժանել է հարսների աշխատանքը. աղջիկը դեռ հարս չդնացած գիտե յուր անելիքը, և երբ ամուսնանում է, արդեն հաշտված յուր բախտի հետ, լռելյայն կատարում է յուր գործը, իսկ այժմ, երբ հարսները չեն ուզում վարվել նախնի սովորությունով, գործը երեսի վրա է մնում, մեծն ստիպվում է ասել, հրամայել անելու, սա դիմադարձություն է անում, որից և ծագում է կռիվ, վերջը՝ բաժանում։

բ. Գլխավոր պատճառը հողի սակավությունն է, այնպես որ յուրաքանչյուր եղբայր առանձնապես կարող է մշակել յուր բաժին հողը, հետևապես և եղբոր ընկերությանը պետք չունի։

գ. Հող քիչ ունենալով՝ եղբայրներից մի քանիսը մշակություն են անում, կամ ուրիշ գործով պարապում և չեն ուզում իրենց վաստակը տուն բերել։

գ. Եղբոր չափահաս որդիների աշխատանքն ընդհանուրին է պատկանում և անհապաղ հանձնվում է տան մեծին, սակայն սա զրկված է ժառանգության իրավունքից. 20—30 տարի աշխատող որդու հորեղբայրը հավասար բաժին է սահմանում գուցե 15 տարեկան եղբոր հետ։

ե. Փողը մեծ եղբոր ձեռին լինելով՝ սա երբեմն վատնում է յուր անձնականի համար, երբեմն գողանում, ծածուկ պահում (ինչպես Դիլիֆում պատահել է)։ Հաճախ էլ դիր չվիաենալու պատճառով՝ ելևմտից հաշիվ չկարողանալով ճիշտ ցույց տալ, կասկածանքի տեղիք է տալիս, որից և ծագում են խռովություններ, և վերջը՝ բաժանումն։

զ. Եղբայրներից մի քանիսը շատ որդիներ են ունենում, և մյուսները չեն հոժարում հավասար աշխատել, քանի որ մյուս եղբոր որդիները շատ են ուտում։

է. Եղբայրներից մի քանիսը փոքր կամ բոլորովին որդի չունենալով՝ չեն կամենում մասնակցել մյուս եղբայրների որդիների հարսանիքի ծախքերին և մի պատճառ բռնելով՝ բաժանվում են։

ը. Եթե եղբայրներից մինի աղջիկը փախցնեն, սա մյուս եղբայրներից պահանջում է նրանց աղջիկների ամուսնության համար ծախսած գումարի չափ գումար, կամ յուր աղջկա համար շորեր առնել տալու և կամ ուղղակի նրա անվամբ շահով տալու, և երբ եղբայրները չեն համաձայնում՝ կռվում և բաժանվում են։

թ. Երբ եղբայրները իրենց վաստակից փող են գողանում և տալիս իրենց կանանց, որոնք արնգնի հետ խառնելով շահեցնում են։

ժ. Ամուսինն երբեք իրավունք չունի յուր կնոջ կամ որդիների համար բան առնելու, եթե մի արշին չիթ անգամ գա տուն՝ հավասար բաժին պիտի լինի հարսերի մեջ. այս պատճառով և շատ որդիներ ունեցողի ընտանիքը գրեթե մերկ և խեղճ է ապրում, մինչդեռ դրա աշխատանքի գուցե մեծ մասով եղբոր որդիները զարդարվում են։ Ցանկանալով յուր որդիներին պահել ինչպես յուր միջոցները ներում են, բաժանվում է։

ժա. Եթե եղբայրները հոժար չեն ամուսնացնելու եղբոր որդուն այսինչ աղջկա հետ՝ բաժանվում են։

ժբ. Եթե հարսները միմյանցից ոսկիներ են գողանում։

ժգ. Եթե տեգերկնիկները միմյանց հետ սիրով չեն և շարունակ կռվում են։ Ժողովուրդը բաժանման գլխավոր պատճառը տեգերկնիկների անհամաձայնությունն է համարում։

ժդ. Եթե կեսուրը խորթ է և նեղում է խորթ որդիներին և հարսներին։

ժե. Եթե մի եղբոր կնոջ արնագինը մեծ է, սա վստահելով առանձին գործ սկսել կնոջ փողով, բաժնվում է։

Ժզ. Եթե եղբորորդիներից մինն անառակ է և գողանում է տան իրերը։

Ժէ. Եթե եղբայրներից մինը ծույլ և անառակ է։

Ընդհանրապես ժողովուրդը բաժանվիլը ավերիչ է համարում։ «Մե ինդիրը էրկուս գըլլի, մե խարճը էրկուս կդառնա»,— ասում է նա։ Բաժանվելիս ազապ քրոջը մաս չեն հանում, նա ապրում է եղբայրներից մեկի մոտ և ամուսնանում նշանածից առած հաղեմասով, «իրեն մուրը իրեն ճակատը»,— ասում է ժողովուրդն այսպիսի դեպքերում։ Բաժանվելիս եթե ծնողները կամ միայն հայրը կենդանի է, սա իրեն բաժին վերցնում է՝ որքան կամենում է, որը սրա մահից հետո դարձյալ բաժանվում է եղբայրների միջև, եթե իհարկե առանձին է ապրել, իսկ եթե մի որդու մոտ է ապրում, մնում է նրան։ Եթե կենդանի է միայն մայրը՝ նրան մաս չեն հանում, շատ շատ մի կով, երկու ոչխար տալիս են այն եղբորը, որի մոտ մնալու է մայրը։

ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ

Ախալքալաքի գավառը Կովկասի ամենաառողջարար գավառներից մին է համարվում։ Մաքուր և փոշուց ազատ օդն և արագ շնչելու կարևորությունը շատ լավ է ազդում թե առողջների և թե հիվանդների վրա։ Շատ օրինակներ ցույց են տվել, որ ժանտաջերմ (малярия), ջրջրուկ, թոքային և սակավարյուն հիվանդություններից տանջվողներն այստեղ արագությամբ լավանում են։

Բնակիչների մեջ տարածված հիվանդությունների մեծ մասը առաջանում է գլխավորապես ապրելու եղանակից և տգիտությունից։ Եվ միայն շատ փոքր մասը կարելի է վերագրել կլիմայի ազդեցության, աշխատության պայմաններին, ժառանգության և պատահական դեպքերին։

Գյուղացիների բնակարանները, որ գրեթե բոլորովին զրկված են լույսից և պարունակում են անասունների դեքից շոգիացած գազեր ու մեծ քանակությամբ ածխաթթու, ահագին ազդեցություն ունին բնակիչների առողջության վրա։ Բացի թթվածնի պակասությունից առաջացած վնասները, այդ խոնավ, գետնափոր բնակարանները աստիճ նպաստում են հազար ու մեկ մանր օրգանիզմների առաջացման։

Վերջին խոլերայի ժամանակ այս գավառում անհամեմատ քիչ զոհեր եղան, իսկ հինգ տարիների ընթացքում սովորական ծաղիկ, կարմրուկ և կոկորդային հիվանդություններից մեռել են.

	Տարվի	Կարմրուկի	Կոկորդի հիվանդ	Բոլորը	% մեռնողների համար
1885 թ. . .	22	412	362	796	48
1886 » . .	12	27	165	204	22
1887 » .	601	9	116	726	42
1888 » .	171	6	112	289	25
1889 » . .	18	4	195	217	21
Ընդամենը՝	824	458	950	2232	35

Հետևապես՝ վերոհիշյալ հիվանդություններից մեռնողների տոկոսը, տատանվելով ըստ տարիների 21 և 48 մեջ, հինգ տարիների ընթացքում միջին թվով տալիս է 35%, այսինքն բոլոր ննջեցյալների երրորդ մասից ավելի։

Առավելապես հասակավորներին բռնող վարակիչ հիվանդություններից ուշադրության արժանի է գլխավորապես ձմեռը և գարնան տարածվող թոքերի կրուպոզ (крупозное) բորբոքումը և որովայնի վարակիչ տիֆ։ Առաջինի մասին ճիշտ տեղեկություններ չկան, իսկ տիֆով հիվանդացել են 1889 թ. 13 և մեռել 2, իսկ 1890 թվին 18 և մեռել երեքը։ Մյուս հիվանդություններից ավելի տարածված է բորը։

Ամբողջ գավառի հիվանդների մասին պաշտոնական տեղեկություններ չկան, իսկ քաղաքում 1889 թվին եղել են 411, որոնցից մեռել են 27, իսկ 1890 թվին 491, որոնցից մեռել են 59[35]։

Թե՛ քաղաքում, և թե՛ գավառում ոչ մի հիվանդանոց չկա, քաղաքում կա միայն մի գավառական և մի զինվորական բժիշկ։ Գյուղացիները գլխավորապես բժշկվում են սափրիչների և պառավ հեքիմների մոտ։ Միևնույն ժամանակ, հավատալով ճակատագրին, բժիշկներին այնքան նշանակություն չեն տալիս։ Երե հիվանդությունը երկար է տևում, ուրախանում և այդ համարում են լիովին առողջանալու միջոց, իսկ եթե կարճ միջոցից լավանում են, վախենում են, թե միգուցե հիվանդությունը մարմնից դուրս եկած չլինի և սաստկությամբ նորոգվելով՝ մահ պատճառե։

Ամենամեծ խնամքը կայանում է նրանում, որ երբ հիվանդը մի բան է ցանկանում ուտել, անշուշտ գտնում տալիս են։ Հիվանդի ուտելու վերաբերությամբ ունեցած այս ցանկությունները կոչում են կամակ։

35 Пантюхов И. И., Ахалкал. уезд., Тифлис, 1892 г.

Ժողովուրդը երևակայում է հիվանդությունները որպես փոքրիկ էակներ, գլխներին եռանկյունաձև «սըրըլիկ» գլխարկ ծածկած, ձեռներին երեք՝ կանաչ, կարմիր և սև ճիպոտ բռնած: Առաջնորդն ստանում է ասածուց մի տետրակ, ուր նշանակված է լինում հիվանդացողների և մեռնողների անունները, և սրանք նայելով այդ տետրակին՝ կանաչ ճիպոտով խփում են նրան, ով դատապարտված է կարճատև հիվանդության, կարմրով՝ նրան, ով պիտի երկար ծառայե անկողնին, և սևով նրան, ով պիտի մնաս բարով ասե այս աշխարհին:

Սրանց մասին բազմաթիվ պատմություններ կան, որոնցից հիշենք դոնե մինն այնպես, ինչպես պատմել են.

Ցավեր

Ցավերը Թոփ գըլլին կերթան մե քաղաքմ', օր մարդիկը վերին հիվընդցնեն, վերին սաղցընեն, վերին ա մեռցընեն: Աստված ատոնց մե դավթարմ՝ կուտա ու կըսե թը. ասոր աշնեք, վերն օր մեռնելու է՝ մեռուցեք, վերն օր հիվնդնալու է՝ հիվնդցուցեք ու սաղցուցեք:

Ասոնք գելլեն գըյնին ճամփա, գուգան մե դյուզ օվամ': Վախտ անցած գլլի, անոթենան կը: Անոթենան կը՝ կըսեն իրարու թը՝ ի՞նչ էննենք, անոթցանք: Ջերմը կըսե կը թը՝ դուք իստեղ կեցիք, ես էրթամ ինի չոպնեն մեչխարմ' բերեմ, ուտենք:

Կերթա չոպնին քովը, կըսե. «Բարև, չոպան»:

Ան ա կըսե. «Աստու բարին, ախպարս»:

Կըսե. «Ինծի մե օշխարմ' տու»:

Չոպանը կըսե. «Ինչի՞, դուն վե՞վ ես օր»:

Կըսե. «Ես չերմն եմ, օր մարդու բռնեմ՝ օխտը տարի խելքը գլոխը չի գա»:

— Է, կըսե, ես ատոր դեղը գիտեմ:

Ի՞նչ է:

— Կը կըթեմ,— կըսե,— օշխրին կաթը, կդնեմ գիշերը աստղը, առավոտ խմեմ սաղնամ կը. էլ քեզնեն վախ չունիմ, ինչի՞ տամ:

Ջերմը տեսնի կ'օր հնարը գիտե, Թողնե գուգա ընկերտանցը քովը:

Կըսեն. «Ինչի՞ չբերիր օշխարը»:

Ջերմն ա կըսե կը թը. «Հնարը գտավ՝ չտվեց»:

Ետև վարձավքը կըսե. «Կեցիք, ես էրթամ բերեմ»:

Գելլե կէրթա չոպնին քովը, կըսե. «Բարև, չոպան»:

— Աստու բարին, ախպար,— կըսե չոպանը:

Կըսե. «Ջոպան, օչխարմ՝ տու մեղի»։

Կըսե. «Ինչի՞, դուն վե՞վ ես օր»։

Կըսե. «Ես վարձավքն եմ, մարդու օր բռնեմ անքան սայըխլամիշ (զառանցել) կէնեմ, օր տեղեն կը փախցընեմ»։

Ջոպանը կըսե. «Ատ հեչ, ես դեղը գիտեմ»։

— Ի՞նչն է, կըսե վարձավքը բերանը ծռելով։

«Ընդունկներս քոքեն հետ կը կտռեմ, օտվիս տաք ջուրը դնեմ կը, վրաս ա բան կ՝առնեմ, կսկուծ՝մ քրտնիմ կը, գլխիմ բողկ, տեսնիմ ալ ի՞նչ պըտի էնես։

Վարձավքը ռադիլի պես ետ դառնա գուգա ընկերտոցը քովը։ Ընկերտանքը հարցընեն կը թը՝ ո՞ւր է բերածտ։

— Է ի՞նչ էնեմ, կըսե, քոփակ օղլին անմեն բանին դեղը գիտե։

— Կեցի՛ր, կեցի՛ր,— կըսե յանիղարան (ժանտախիտ), ձեր ձեռքեն բան չա գա, տեսնք ես ինչ կը բերեմ։

— Քիչմ՝ իշի,— կըսեն էն էրկուսը։

Ասիկ գելլե կերթա. «Բարև, չոպան», կըսե։

— Աստու բարին, ի՞նչ գուզես։

— Մե օչխարմ՝։

— Ինչո՞ւն ինչն էր, քեզի օչխա՞ր, դուն վեվ ե՞ս օր։

— Ես յանիղարան եմ, առավոտ բռնեմ՝ իրիկուն տանիմ կը, իրիկուն բռնեմ, առվոտուն տանիմ կը։

— Է՛, էտ լավ չէղավ, կըսե չոպանը, ա՛ռ, առ տար, չարչն ի՞նչ։ Ջոկե մե ղըսըր օչխարմ՝ կուտա կը։

— Շալկե, շալկե, առաջ ընկի,— կըսե յանիղարան։

Ջոպանը չարասըղ շալկե գըչնի կը առաջ, տըբտըբալեն տանի կը։

— Տեսնք, ինչղ բերի, վերստմ՝ հեռվեն ճվա կը յանիղարան։

Ցավերը ուրախնան կը, վազղեն կը դեմ։

Ջոպանը բերե օչխարը վար կը դնե, կըսե. «Է՛, ախպրտիք, օչխարը առաք՝ առաք, հեչ չէ ըսեք թը՝ դորթմե վո՞վ եք»։

Անոնք ա կըսեն թը՝ մենք ցավերն ենք, պիտի էրթանք այնի քաղաքը, աստված այսի դավթարը տվեր է մեզի, օր աշենք, վեր մարդն օր մեռցնելու է՝ մեռցընենք, վերն օր հիվնդցնելու է՝ հիվնդցընենք։

— Հորերուտ հոգուն, հըլը մեմ՝ աշեք, ես ա կա՞մ իտի դավթրին մեջը։

Ցավերը կառնեն դավթարը շորտեն, շորտեն, կաշեն օր՝ նյա մեռնողներուն սրին մեջ կա, նյա հիվնդցողներուն, կըսեն. «Ջոպան, դու չկաս իտի դավթրին մեջը, նյա հիվնդնաս պտի, նյա մեռնիս»։

— Որ ատպես է, ես ա իմ օչխարս չեմ տա ձեզի՝ տեսնիմ ի՞նչ պըտի էնեք,— կըսե չոպանն ու վերցնե օչխարը փախի կը[36]։

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԵՂԵՐ

Հարինգ

Ժողովրդի նախապաշարմամբ հարինգ (խարբուխ, սալում) են ընկնում, երբ ապօրինի զավակ է ծնվում, ուստի և ընկնելիս անիծում են անհայտ, գուցե և գոյություն չունեցող ապօրինի զավակին։

Առողջանալու համար խնչում են մի կտոր շորի մեջ, վրան աղ ցանում, մի քանի կոպեկ կամ մի ուրիշ բան դնում մեջը և ձգում փողոց։ Ով որ վերցնե այդ՝ նա կստանա հարինգ, իսկ առաջինը կլավանա։

Հարինգ ընկած երեխաներն ասում են ընկերներին. «Ըսա հող, հող»։ Եվ եթե մինն ասե՝ սա կպատասխանե. «Սալումս քեզի փոխ»։ Եվ սրանով, իբր, հարինգը կփոխվի մյուսին, և ինքը կառողջանա։

Հարինգը իրենց չփոխվելու համար հարինգ ընկածին պատահելիս ասում են. «Ջաղջեն գուգամ, գլոխս ալըրոտ է»։

Դլխացավ

Թաց քաթանի վրա քաշում են ղլճուղի (հուն) կամ ճանճուլի պատեղ և կամ աղով սոխ կապում ճակատին։

Ճակատից արյուն են առնում։

Քիթը քացախ քաշում։

Դլխին օդի են ածում և տրորում։

Փորացավ

Խուփը տաքացնում և շորի մեջ փաթաթած դնում են փորին։

Ավելուկը խաշում փորին են քաշում։

Ամրության դեմ

Ջիթապտղի կուտը և մի քիչ բովված սուրճ եփում, շորի վրա քաշում և կապում են փորին։

Լուծելու (իսալ) դեմ

Դխատորը մանրում, եփած հավկիթի վրա ցանում, երկու առավոտ դեռ բան չկերած, անոթի փորուն ուտում են։

---

[36] *Սրա թարգմանությունը տպվել է* „La rewue des Traditions Populaires"-ի *1895 թ. № 2-ի մեջ։*

Կամ ղղլճուղի կուտը փոշիացնում, ջրի մեջ եփում և մի քանի անգամ խմում են։

Թղենու տերևները չորացնում, ծեծում և սուրճի պես եփում ուտում են։

Դեղձի ղախը եփում են ջրով և ուտում։

Հունի (ղղլճուղի) կուտը բովվում, սուրճի պես եփում և խմում են։

Փսխելու դեմ

Համեմի հունդն եփում են, մինչև որ մնում է ջրի կեսը, ապա քիչ քիչ խմում։

Մատնաշուշ

Արջառի կամ ոչխարի ողնաշարի ուղեղը շորի վրա բաշում դնում են վրան և առավոտ երեկո փոխում։

Բիղնաւ

Կապույտ պոկի նման դուրս է գալիս և սաստիկ բոր գալիս. դդում կամ սրա ծաղիկը կամ սրա յուղը սառը շաքարի հետ ծեծում դնում են վրան և օրը մի քանի անգամ փոխում։

Փաթաթում են շրդանով։

Շան լակոտը սպանում, ջնջխում և դնում են վրան, հետո օձի շապիկը ձիթով դաղում կապում վրան։

Հավկուր

Հավկուր ընկնողը երեկոներն այլևս չի տեսնում։ Սրանից ազատվելու համար կեմը ձգում են վիզը և քաշելով երեք անգամ պտտեցնում եկեղեցու շուրջը։

Հավերի հետ կուտ են տալիս։

Հանկարծ տնից դուրս են կանչում և կտուրից դռան շեմքին մի կճուճ գցում, կոտրում։ Պատահում է, որ կճուճը սխալմամբ դիպչում է հավկուրի գլխին և ավելի կուրացնում նրան։

Լուսնի ճոռիչ

Հիվանդացողներին բժշկելու համար ուռի և սխտորի մոխիրը քսում են ճակտին, պնչերին, քմքին, դաստակներին, բոերը և կրծքին։

Այարասի են կտրել տալիս. մինը հաց և պանիր տանում լռելյայն

դնում է թամբագործի առաջ։ Թամբագործը հասկանում է, և դարձյալ լուռ մի կտոր կաշի լուսնաձև կարում դնում է հացի տեղը։ Բերողը վերցնում է այդ այարասին և տանում երեխայի գտակին կարում։

Հազ

Անլվա ամերիքան ճրագու մոմով օծում և դնում են կրծքին։

Բամբակը բռնում են կրակը ձգված խնկի վրա և տաք-տաք դնում կրծքին և երբեմն էլ մեջքին։

Երբ մրսելուց հազում են, առավոտները հում կաթ են խմում։

Թուզը կամ ունաբը կաթի մեջ եփում ուտում և կաթը խմում են։

Պաղ շաքար են ուտում։

Ալֆինջան կոչված արմատը թեյի պես եփում, օրը երկու անգամ խմում են։

Ատամնացավ

Ատամնացավի դեմ գործ են ածում հետևյալ դեղերը. մեխակի յուղն օղու հետ խառնելով՝ ողողում են բերանը. այս դեղը առնվազն կես տարի կտրում է ցավը։

Վարդապետի ժախը (խելառ ժախ) ծեծում դնում են ցաված ատամին։

Ընկուզի միջուկը դնում են կրակին, որ յուղը դուրս տա, այս ժամանակ առնում են ատամների մեջ և սեղմում։

Մամուխ թուփ արմատը մանր ջարդում, եփ են տալիս ջրի մեջ մինչև ջրի $^3/_4$ մասը շոգիանալը և ապա քիչ հովացնելուց հետո մի երկու րոպե պահում բերանում՝ ցավոդ ատամի վրա։

Տարի ֆիլֆիլը ծեծում, օղիով շաղվում և դնում են ցաված ատամին։

Եթե ատամը փտել է և ցավում է՝ ղաջը (купарос) լավ ծեծում և ցանում են մեղրի վրա, ապա մեղրը գդալով լավ խառնում, քսում ցաված ատամի կողմի այտին երեսից և շորով փաթաթում։ Այտը ուռչում, քաշում է իրեն ատամի ցավը և առողջանում։

Ճաղը սաստիկ տաքացնում կամ բամբակը սպիրտի մեջ թաթախում և դնում են վերան. այսպիսով ցավը մի քանի օր կտրում է։

Ոմանք էլ մարխը մանր ծեծում լցնում են օղու մեջ, լավ եռացնում, հետո պաղեցնում և ողողում բերանը։

Ուտուց

Դրոժով հացը բրդում են լավ գինու մեջ, եռացնում և կապում ուռուցքին։

Գարի ալյուրն ու օշինդրը (յավշան) միասին եփում, շորի վրա քաշում և դնում են ուռուցքին։

Թևի կամ ոտի ուռուցք

Կուեմի սերմը ծեծում, օղիով շաղվում և շորի վրա քաշած դնում են ուռուցքին։

Միևնույն ուռուցքի համար գազարի բերվածքը շորի վրա քաշում դնում են վրան։

Անուկի ուռուցք

Չորացրած թուքը լավ ծեծում են, որ կտներն անգամ փշրվին և հավկիթի դեղնուցի հետ լավ խառնելով՝ շորի վրա քաշում և դնում ուռուցքին։ Դեղն առավոտ երեկո փոխում են։ Այս միևնույն դեղը դնում են և բկի ուռուցքին։ Եվ եթե ուռուցքը սպիտակ է՝ կցրվի, իսկ եթե կարմիր՝ կծակե։

Կոան տակի ուռուցք

Ոչխարի կամ արշառի ողնաշարի ուղեղը փշատի փոշու հետ խառնում և շորի վրա քաշած դնում են վրան։ Առավոտ և երեկո փոխում։

Ամորձիի ուռուցք

Ամորձիքների ուռուցքը իջեցնելու համար՝ անալի ձիթապտուղը կտի հետ ծեծում և շորի վրա քաշած դնում են վրան։ Օրը երկու անգամ դեղը փոխում։

Միևնույնի համար բաթաթուկ բույս և հում դմակ հավասարաչափ խառնում, ծեծում և շորի վրա քաշած դնում են ուռուցքին. օրն էլ 2—3 անգամ կրկնում։

Կանանց ծծի ուռուցք

Օճառի (ոսխի սապոն) փոշին հավկիթի դեղնուցի հետ խառնում և շորի վրա քաշած դնում են ծծին և օրը երկու անգամ կրկնում։

Բարի բան—ժանտախտ

Տղայոց բուկը կամ ականջի տակը սաստիկ ուռչում է։ Ուռուցքը

հավկիթից մեծ է լինում և փայլում է։ Բժշկելու համար՝ ցորեն ալյուրը շաղվում են կովի յուղով և տաք ջրով, խմորը բանում են, երեսին մեղր քսում և դնում ուսուցքի վրա։

Մազոլ

Բաղանիսից դուրս գալիս մաղդակի ձյութը դնում են մազոլի վրա և կապում, քաշում արմատախիլ է անում։

Սև ձյութի հետ խառնում են 16% մեղրամոմ, շաղախում և դնում մազոլի վրա, օրական մի անգամ փոխելով։

Կտրվածի արյունը կտրելու

Վերքից քիչ բարձր կապում են զմրութակ մատանի։ Գիլու փստիկի փոշի են ածում վերքի վրա։

Կապույտ կտավը խանձում և դնում են վերքի վրա։

Կարտոֆիլի բերուցքը դնում են շորի վրա և կապում վերքին։

Պայա յափրաղի կոչված բույսի տերևը թքոտում կամ ջրոտում և դնում են կտրածին, շարաւը քաշում առողջացնում է։

Սրով կտրած

Անկվա բուրդը ձյութի մեջ այնքան եփում են, որ բուրդը հալվի, ապա սա քսում են սրով կտրած վերքի վրա և շորերով փաթաթում։

Ղլիճոթին յուղի հետ ծեծում դնում են կտրվածի վրա, կամ ղլիճոթին չորացնում, մանրում, կարագ յուղի մեջ շաղվում և դնում կտրածի վրա։

Կոտրած ոսկոր

Կոտրած ոսկորը նախ զգուշությամբ ուղղում են, ապա շրեշտը կամ լավ մանրած շիպը շարմըղում, հավկիթի սպիտակուցով շաղվում, քաշում կտավի վրա և փաթաթում կոտրած ոսկրին, որ շուտ ամրանում է։

Լավ օղի ցնցում են շաքրի թղթի վրա, խունկի մանրուք ցանում վրան և փաթաթում կոտրած ոսկորը՝ նախապես լավ ուղղելով այն և հետո չորս տախտակներով կապում։

Կոտրած ոսկորը նախ զգուշությամբ ուղղում են, ապա կտավի վրա քաշված սև ձուլը, վրան սև պղպեղ և մեխակ (բահար) ցանած, փաթաթում են կոտրած ոսկրին և չորս տախտակներով ամուր կապում։ 10—15 օր այսպես մնալուց հետո եթե չբռնեց, չի լավանա։

Յուղի տարած

Սև ձուքը հալում լցնում են գետին և ցրտի տարած, այսինքն սաստիկ մրսած ձեռքը կամ ոտը դնում մեջը։ Այս գործողությունը պիտի կրկնել, մինչև որ մրսածը զգա։

Վառած

Կրակով կամ ջրով վառվածը բժշկելու համար կովի անլի կարագի մեջ հալում են փոքր ինչ մեղրամոմ, նրան կպչունություն տալու համար, ապա պաստառի վրա քաշելով, փաթաթում վառվածքը։

Նույն միջոցով բժշկում են և կայծակի վառածը։

Ականջի շարավը

Կարելու համար կանեփի կանաչ տերևը ծեծում են, և հյութը քամում են ականջի մեջ։ Բարձմենակ ծաղիկը, որ դեղին թոփ-թոփ գլուխ ունի, մի փոքր կտոր շալի հետ ծեծում և հյութը կաթեցնում են ականջը։

Որդնոտած ականջ

Անալի լոռ կամ գմակ դնում են ականջին և կապում, ականջի որդունքը քաշվում են դրանց վրա, ապա կաթով լվանում, ձեթ կաթեցնում և լվի ծաղիկը փչում մեջը, որ սատկեցնե։

Ականջի որդումն

Գազարի տերևները ծեծում, ջուրը քամում լցնում են ականջը և ծեծած տերևը դնում ականջին։ Ասում են, թե այս դեղը որդունքը ջարդում հանում է դուրս։

Միևնույն դեղը անում են նաև որդնոտած վերքի համար։

Խլություն

Նոր խլացածին առողջացնելու համար դանակի կողքը կրակի մեջ սաստիկ տաքացնում են, ապա խլացած ականջի մոտ բռնում և վրան ձիթապտղի յուղ (զեյթաղի) ածում այնպես, որ վազելով ականջի մեջ թափվի։

Խնձորի կողքից բիչ կտրում, մեջը մի կտոր խունկ կոխում, խնձորով նորից ծածկում և դնում են թոնիր խորովում։ Հետո խնձորը վերցնում դնում են ականջին այնպես, որ խնկի շոգին դնում է ականջը և առողջացնում։

Դող

Իշու կաթնուկ կոչված բույսը քաղում, մի բաժակ իծու կաթի մեջ 5—8 կաթիլ կաթացնում, անոթի փորին խմում են և մոտ կես ժամ վազվզում։ Փսխում են և առողջանում։ Միևնույն դեղը անում են ջերմի ու հազի դեմ։

Ողնու մորթից մի կտոր գցում են կրակի մեջ և գլխին սավան առած շնչում են ծուխը։

Հավկթի դեղնուցը լավ պարնում, մի բաժակ օղու հետ խառնում և խմում են։ Այս դեղը երեք առավոտ կրկնում են։

Երեք ընկույզ երկերկու կտոր են անում և վրաները գրում. Ա. ս. տ. ու. ա. ծ։ Ապա սրանք շարում են թաշկինակի վրա այնպես, որ աստված բառը կարդացվի։ Երբ դողը բռնե՝ օրը մի անգամ մտնում են սառը ջրի մեջ և կարգով ընկույզներից մինը ծամում։ Վեց օրից, ասում են, թե առողջանում են։

Ջերմ

Մանրած սոխը ածում են բացախի մեջ, եռացնում, փոքր ինչ հովացնում և քսում մարմնին։

Բոր

Ծծումբը և վառոդը լավ ծեծում, շարմաղում, կարագ յուղի մեջ շաղվում և օրը մի անգամ քսում են բորին. մի քանի օրից լավանում է։

Ծծումբը, վառոդը և յուղը հավասարաչափ պիտի լինեն և քսելուց հետո տաք պիտի մնան, այս նպատակով թոնիր են մտնում։

Կարմիր բամի

Այս հիվանդության ժամանակ մարմինը կարմրում, հետզհետե ուռչում և տաքանում է։

Առողջացնելու համար՝ հավկթի դեղնուցը բյաֆիրի մեջ տրորում և թեպուրով քսում են մարմնին։

Տեռատեսություն (մայասիլ)

Եթե նստատեղին «դուս է ավել, պտուկ — պտուկ» է եղել, կովի թթու մածունի մեջ կապույտ քարը այնքան զարնում են, որ մածունը կապուտակում է։ Ապա սաստիկ տաքացնում են մի աղյուս, դնում քուղայի մեջ, մածունը լցնում վրան և նստատեղին բաց՝ նստում քուղի բերնին։ Մածունի գոլորշին կտրում է այդ պտուկները, սակայն երկու օրից կրկին դուրս են գալիս, և նորից են կրկնում այս դեղը։

Մայասիլի եռքը կտրելու համար կթավատի լավ ձեթ են քսում և վրան մանրած քիրիշան ցանում։ Սակայն մի քանի օրից եռքը նորից է սկսվում, և դեղը նորից կրկնում են։

Կանկառ, թուրքերեն «գյավաթիքյա» կոչված բույսի սերմը կամ փուշը ջրով եփում ուտում են, կամ միայն ջուրն են խմում։

Չախալ փշի (կանկառ) հունտը ուտում են, որ տեռատեսությունն անցնի։

Ոլոտելու դեմ

«Ղռխայաղի»՝ քառանոտնյա կոչված սղիլներ տարածվում են մարմնի առավելապես մազոտ տեղերում և կիսով չափ մտնում մարմնի մեջ։ Սրանք առաջանում են, երբ սեռական հարաբերությունից հետո չեն լվացվում։ Բժշկելու համար թուրքերեն պինճիֆ կամ պինճիֆիրա կոչված մուգ շիկագույն քարը փոշիացնում են մի քիչ հինայի հետ և թթով շաղվում։ Ապա այս բաղադրությունը լցնում են ընկուզի կամ կաղնի կճեպի մեջ և դնում մարմանդ կրակի վրա, սովորաբար մանղալի մեջ։ Հետո բոլորովին մերկացած՝ լավ փաթաթվում են սավանի մեջ, բերանը ջուր առնում և ականջը բամբակ կոխում ու կանգնում մանղալը ոտների միջև առած։ Բաղադրության ծուխը դիպչելով մարմնին, սատկեցնում է ղռխայաղ սղիլներին։ Եթե բերանը ջուր չառնեն, և ծուխը աստամներին դիպչի, աստամները կթափին։ Եթե առաջին անգամով բոլորը չեն ջարդվում, կրկնում են։

Կատաղածի դեմ

Բժշկելու համար գործ են ածում ձիթուկ կոչված ճիճուն, որ մի վերշոկաչափ է լինում, սև, վիզը սաստիկ բարակ, գլուխը փոքր՝ մազանման երկու եղջյուրներով, հետույքը հաստ և կլոր։ Սա պատրաստում է ձեթ։ Առավելապես ապրիլ ամսին, երբ կանաչները քիչ են, ժողովում

են ձիթուկները այսպես՝ առանց ձեռք տալու ձիթուկին, որպեսզի ձեթը չվիժէ, մի թել ձգում են վիզը և քաշ տալիս։ Ձիթուկն այսպես կախված 40 օր կենդանի է մնում, հետո սատկում է և երկու օրում չորանում։ Այս ժամանակ վերցնում լավ ծեծում են և առանում սպիտակ փոշի։ Այս փոշուց մի մսխալ կամ ավելի քիչ լցնում են մի ֆինջան ջրի կամ, ավելի լավ, կաթի մեջ և խմցնում կաւաղածին։ Հիվանդն իսկույն ծննդկանի պես ցավ է բռնում, և նախ արյուն և ապա ճիճուներ վիժում ու ազատվում։

Այս դեղը օգնում է միայն նրանց, որոնք ընդունում են այդ շան խածած օրից 40 օր դեռ չանցած։ Իսկ իմանալու համար, թե խածվածը կաւաղելու է, ուղարկում են գետից անցնելու. եթե կաւաղելու է՝ չի կարող անցնել, որովհետև ջուրը արյան նման կերևի նրան։

Օձի կծած

Օձի կծած տեղից քիչ բարձր եղնիկի կաշով ամուր կապում են, որ թույնը չտարածվի։

Թույնը քաշելու և ուռուցքն իջեցնելու համար թարխունը ծեծում և փաթաթում են կծածի վրա։

Թույնի դեմ

Ածուխի փոշին, ցորենի ալյուրի թեփի հետ խառնած, լցնում են ջրի մեջ, եփ տալիս, քամում և ջուրը քիչ քիչ խմացնում։

Փալուտի կամ ընկուզենու ածուխի փոշին, փոքր ինչ հալած անլի կարագի հետ խառնում, խմացնում են թունավորվածին և վազեցնում։ Փոքր ինչ հետո փղձկում և աղատվում է։

ՄԱՀ, ԹԱՂՈՒՄՆ ԵՎ ՄԵՌԵԼՈՑ

Ժողովրդյան կարծիքով ամեն մարդ մի աստղ ունի երկնքում, երբ նրա «աճալը»՝ վախճանը, որ նախախնամությունից որոշված է, գա՝ այդ աստղը կընկնի, և մարդը 40 օրից հետո կմեռնի։

Նաև յուրաքանչյուր մարդ երկնքում կյանքի պուտուկ[37] ունի, որի մեջը թեփ է ածած, երբ «թեփը պարպի»՝ մարդը կմեռնի։ Եվ հենց այս պատճառով էլ «հլը թեփը չէ պարպե» ոճը նշանակում է՝ դեռ վախճանը չէ հասել։

---

37 Տե՛ս «Տեսիլք», Հավատքի բաժնում։

Առաջ բերենք մահվան վերաբերյալ մի քանի նախապաշարմունք։ Եթե բաթաթը թոնիրն ընկնի՝ տանտիկինը կմեռնի։ Ում թռչունն ում կտրին որ կանչե՝ տան մեծը կմեռնի։ Եթե թին կամ բահը ուսին տանից դուրս ելնեն, մինը կմեռնի։ Եթե մեռելատունը փոշատան, միևնույն տնից շուտով մի ուրիշն էլ կմեռնի։ Եթե ավելով մինի գլխին խփեն, երկար չի ապրիլ։ Եթե սենյակից սենյակ անցնելիս ձեռքերին երկու մոմ բռնեն, մահ կպատահի։ Եթե հաց եփելիս առաջին եփած հացն ուտեն, կինը կմեռնի, պետք է յոթը լրանա, որ նոր ուտեն։ Եթե ականջը կանչե՝ «մեռելի ձայն կիմանան», կլսեն, թե բարեկամներից մինը վախճանել է։ Եթե ժամկոչը գերեզման փորելուց անմիջապես հետո մինի անունը արտասանելով փետուրի կոթը դնե ջուրը, սա կմեռնի։

Ժողովուրդը հավատում է և փոքրիկ, սուր գտակ ունեցող ոգիների, որոնց «Յավեր» է կոչում։ Յավերը ձեռքներին ունին սև, սպիտակ և կարմիր «չպուխներ»։ Նախ նայում են Աստվածաշնչից իրենց հանձնված «դավթարին» և ում որ սև չպխով խփեն՝ նա կմեռնի, իսկ ում կարմիրով կամ սպիտակով՝ միայն կհիվանդանա։

Երբ մարդու «աճալը» գա, որին ոչ մի կերպ ընդդիմադրել չի կարող, եթե մարդը բարի է եղել, բարի հրեշտակը գալիս և ձեռի խնձորով խաբելով մարդուն, հոգին աղավնակերպ առնում է բերնից, իսկ եթե չար է եղել, գալիս է չար հրեշտակը, մի ոտքը դնում կողքին, մյուսը վրին և ձեռի մզրախով սեղմում կրծքին, ու առնում հոգին սև գործելու նմանությամբ։

Հենց որ հոգին ավանդում է, տանեցիք թափվում են վրան և կողկողագին լալիս, բարձրաձայն գոչելով նրան. «Վա՜յ, անուշ պալա՜ս, մեր տան դիրակը, տղաքա անտեր թողիր, ո՞ւր կերթաս» և այլն։ Ոմանք էլ սեղմում են ննջեցյալի ոտները, որ թե այդ և թե ուրիշ մեռելներից չվախենան, նայում աչքերին, եթե բաց մնացած լինի, ասում են, աշխարհիկ դեռ չէ կշտացել, եթե մատը խաղա կամ մարմինը փափուկ լինի, դա նշան է, որ նույն տանից ուրիշն էլ պիտի մեռնի։

Հետո մեռելը լողացնում են սառը ջրով տաշտի մեջ կամ կամի և կամ տախտակի վրա, եթե տղամարդ է ժամակոչը, իսկ եթե կնիկմարդ՝ քեյվանին։ Մեռելի ազգականները, մանավանդ երախտապարտները գնում, մեռելի վրա մի մի «թաս» ջուր են ածում, որպեսզի վերջինս յուր էամյակը՝ երախտիքը հալալ անե։ Եթե ննջեցյալը կին է՝ մազերը կտրում են, այստեղից և ծագել է «մազտ մկրատը» անեծքը։ Լողացնելուց հետո ավելացած ջուրը թափում են, տաշտը, կամը, կամ տախտակը բերնքսը-

վայր կորզում են և «մուշուրպան» (ջրի ամանը) կոտրում, որ նույն տնից ուրիշն էլ չմեռնի։

Ապա միայն մի քանի գյուղերում պատանքի կտորից քահանային կարել են տալիս խաչաձև վարշամակ, որ դնում են ննջեցյալի երեսին, պնչերը բամբակով խունկ կոխում, բերանին նշխարք դնում, հասարակ կտավից շապիկ, վարտիք կարում հագցնում, ձեռքերը կրծքի վրա «բռլև» բռնեցնում, երբեմն ձեռին մոմ տալիս և ապա պատանքում են, ամբողջապես փաթաթում են կտավի մեջ և կարում։ Պատանքի ավելացած կտորը փաթաթում են սյանը, որ նույն տնից ուրիշ շուտով չմեռնի։ Մի բարակ ցոկ էլ անց կացնելով ուսի, ոտների և կրծքի վրայով, խաչաձև կապում են, բայց սա ոչ բոլոր գյուղերում։ Հետո փաթաթում են մի կապերտի մեջ և եկեղեցուց բերելով հասարակաց կուպին կամ ջախվը՝ դնում մեջը, տանում տան մեջտեղը դնում։ Եվ այս բոլորը նրանք անում են ընդամենը երկու ժամվա ընթացքում։ Աբուլ գյուղում երբ մինին պատանքում են, շարժվում է և ուշքի գալիս, իսկույն պատանքը պահում են և ասում, թե՝ սիրտդ գնաց, օդից տուն բերինք։ Այժմ այդ մարդը կենդանի է։

Քառորդ ժամից գալիս է քահանան, գալիս են և մեռելի ազգականները, բարեկամները, դրկիցները և առհասարակ գյուղացիք, ինչքան հարուստ լինի մեռելը, այնքան շատ մարդ։ Ամեն «ցող ապրիս» եկող համբուրում է ննջեցյալի ամենամոտիկ անձնավորության՝ մոր, կնոջ, դստեր և այլն ձեռքը, կամ համբուրվում է ասելով. «Դու ողջ ըլլիս, սուրբ հոգին մխիթարե»։ Գրեթե բոլոր եկողները նոր եկողի հետ լալիս են, և նրանցից մոտիկները լալով հիշում են ննջեցյալի վերջին խոսքերը, ցանկություններ կամ մտադրություններ։ Կատարում են եկեղեցական ծեսը, իսկ մոտիկ ազգականները՝ մայրը, կինը և աղջիկն, առհասարակ կանայք, չոքած դագաղի շուրջը լալիս են. մայրը, մամը և այլ պառավներ լալիս և բարձրաձայն երգի եղանակով բաներ են ասում։ Եկեղեցական խորհուրդը կատարելուց հետո կանայք և մոտիկ ազգականները ընկնում են դագաղի վրա և բարձրաձայն լալով, կանչելով համբուրում ննջեցյալին, ապա չորս այր մարդիկ բռնում են դագաղը և տանում եկեղեցի։ Դագաղի տեղը տնեցիներից մին մի քար է դնում, որ ննջեցյալի հիշատակը հաստատ մնա։ Առաջից գնում է քահանան տիրացուի և խաչ խաչվառի հետ, զգուշանալով ետ նայել, որովհետև եթե ետ նայե, կասեն թե նույն տանից շուտով ուրիշն էլ է մեռնելու, և մտքերում կհայհոյեն քահանային, ետևից տանում են դագաղը՝ շրջապատված այր մարդկանցով, որոնք շուտ շուտ փոխվում և տանում են

դագաղը։ Ամենից վերջը գնում են կանայք, նորահարսներ և աղջիկներ։ Եթե մահը պատահել է շաբաթ օրը, ննջեցյալը մի օր պահում են եկեղեցու մեջ, որովհետև դրա համար հատուկ սենյակ դրեթե ոչ մի գյուղ չունի, և կյուրակի օրը՝ «պատարագով» թաղում, իսկ եթե ուրիշ օր է մեռել, հենց եկեղեցի դնելն ու վերցնելը մեկ են անում։

Դագաղը դնում են եկեղեցու մեջտեղը, գետնին, ննջեցյալի մայրը չոքում է գլխի վերևը, մյուս մոտիկ ազգական կանայք շուրջը, և մինչդեռ քահանան կատարում է կարգը, սրանք բարձրաձայն լալիս են. մայրն էլ եղանակով բաներ է ասում և խանգարում քահանային։

Կարգը կատարելուց ետ հաճախ մեռելատերը խնդրում է դանձ ասել։ Թեև եկեղեցական օրենքով արգելված է դանձ ասելը, սակայն հազիվ է պատահում, որ քահանան մերժի ննջեցյալի տիրոջ խնդիրը, որովհետև շահ ունի։ Տիրացուները քահանայի ձայնակցությամբ ասում են մի տխուր դանձ, որ շուտ շուտ ընդհատվում է բազմության մեծ մասի, մանավանդ կանանց լալյունով։ Երբ դանձը վերջացնում են աթոռակալը դնում է ննջեցյալի կրծքին մի «թաբախ» (ափսե) գրեթե բոլորը համբուրում են ննջեցյալին և մի քանի կոպեկ ձգում թաբախի մեջ, որն (30 կ.—1 ռ.) աթոռակալը (երեսփոխանը) վերցնում և հետո քահանային է տալիս։ Տղամարդիկ ննջեցյալին տանում են գերեզմանատուն, իսկ կանայք վերադառնում ննջեցյալի տունը։ Գերեզմանը ննջեցյալի ազգականների գերեզմանների մոտ մեկ արշին լայնության և երկու արշին խորության փորած պատրաստած է լինում գյուղացիներից ով էլ որ պատահել էր։ Գերեզման փորողին պատահողը ասում է. «Քրիստոս հարյավ ի մեռելոց», իսկ գերեզման փորողը պատասխանում է. «Օրհնյալ է հարությունն Քրիստոսի»։ Մի քանի գյուղերում էլ ասում են. «Օղորմի ասվածն».— Օղորմի բարի ծնողացդ հոգուն։ Ապա սա դուրս է գալիս գերեզմանից և պատահողը փորում։ Երբ վերջացնում են՝ թին ու փետատը խաչաձև դնում են գերեզմանի բերանին։

Ննջեցյալը բերում, դնում են գերեզմանի աջ կողմը, կատարում են թաղման կարգը, մինը իջնում է գերեզմանի մեջ, կապերտից հանում են մեռելը, և սա գրկում պառկեցնում է գերեզմանի մեջ, նախապես գլխի տակ մի երկու քար դնելով, որպեսզի գլուխը բարձր լինի։ Եթե ննջեցյալը կին է, կապերտը բռնում են գերեզմանի վրա, թե նրան գերեզմանն իջեցնելիս և թե գերեզմանը հողով լցնելիս, որպեսզի պահպանվի ամոթխածությունը։ Երբ քահանան ննջեցյալի մոտիկ ազգականի բռի մեջ օրհնում է հողը և ձգում գերեզմանի մեջ, շրջապատողները լցնում են գերեզմանը հողով։ Ամեն մարդ գոնե մի բուռ հող պիտի ձգե ննջեցյալի վրա, որպես

հաստուցումն նրա երախտիքի։ Գերեզմանից հանած բոլոր հողը լցնում են վրան և մի բուռ անգամ հետու չեն թողնում, մեղք համարելով այդ։

Թաղման կարգը կատարելուց հետո բոլորը համբուրում են քահանայի ձեռքի խաչը։ Քահանան էլ ասում է. «Աստված վարձահատույց արասցե»։ Հետո ձեռք են տալիս ննջեցյալի մոտիկ ազգականներին ասելով. «Հոգին սուրբ մխիթարե», «Դուք ողջ ըլլիք»։ Այստեղից քահանան, աթոռակալը, տիրացուները, մոտիկ ազգականներից շատերը և անշուշտ գերեզման փորողները միասին գնում են ննջեցյալի տունը, ուր ճաշ են անում, չնայելով որ մինչև անգամ ճաշի ժամանակ չէ։ Այս ճաշը կոչվում է «փետատի հաց» և հատկապես տրվում է գերեզման փորողներին։ Երկրորդ օրը մոտիկ ազգականներն ու դրկից կանայք մի կտոր սապոն բերում, ննջեցյալի բոլոր շորերը լվանում են և հետո գնում, ննջեցյալի գերեզմանը օրհնել են տալիս։ Այնուհետև յոթն օր շարունակ «օխթն օրենքի» հաց են տալիս, գյուղացիներից 10—15 հոգու, որոնց մեջ հաճախ լինում են քահանան և երեցփոխանը։ Յոթը լրանալիս ազգականները հավաքվում և գնում ննջեցյալի գերեզմանը օրհնել են տալիս ապա կամ այդ օրը, կամ մի ուրիշ օր պատարագ առնում, ու «օխթի», հոգու հաց տալիս։

Նախապես առնելով քահանայի հաճությունը պատարագն իրենց հին ու նոր ննջեցյալների հիշատակին մատուցանելու, նրանք ուղարկում են նրան գինի՝ բաժակի, ալյուր՝ նշխարի, մոմ՝ դիշերը վառելու, փայտ՝ նշխարն եփելու համար։ Ապա մորթում են մի երինջ կամ մի քանի ոչխար, կամ մի կով, որից քեչվանին պատրաստում է յայնի, մսով ապուր, էրիշտով և բլղրով փլավ։ Իսկ եթե պաս է՝ էրիշտով ապուր, լոբիջուր, կորկոտ շիլա, արյուկե սիրքալի և հատ լոբի։

Առավոտ շատ վաղ, լուսը դեռ չբացված սկսվում է ժամերգությունը, և ժամը վեցին վերջանում պատարագը։ Պատարագին տիրացուն «պատարագ առնողին» տանում ավետարանը համբուրել է տալիս։ Եկեղեցու դուռը պատարագ առնողը հրավիրում է ժամվորներին հոգու հացի. «Հրամմեցեք էրթանք մերը, հոգու հաց ունինք»։ Սակայն հրավիրելիս կես բերան ասում է աղքատին, իսկ ստիպում, քաշքշում հարստին։ Այսպես լցվում են պատարագ առնողի տունը քահանան յուր երեցփոխի և տիրացուների հետ, գլավան, տանուտերը յուր գլիրի ու գրագրի հետ, գյուղի իշխանները և մի քանի ծերունի աղքատներ։ Ավագության կարգով նստում են օդան. օճխի մեկ գլուխը քահանան, մյուսը՝ գլավան կամ տանուտերը և անհամբեր սպասում հացին։ Այստեղ մի առանձին խոսակցություն չի լինում, ոմանք պատմում են ննջեցյալի բարի

գործերը և ցավակցություն հայտնում նրա վաղահաս մահվան, ուրիշներ իրենց առօրյա գործերն են առաջ բերում և կամ սրա նրա դամեղն ու եղը գովում: Շատ շուտով դրվում են մի քանի խոնչաներ սատրների միջև, և հրավիրվածները բոլորվում են խոնչաների շուրջը: Մի քարդանի մեջ մի քիչ մատաղ ածած, բերում դնում են մեջտեղ, և քահանան օրհնում է թե հացը և թե մատաղը, որ մի կտոր վերցնելով ուտում են, մի քանի կտոր էլ ձգում են կաթսայի մեջ: Հետո արդեն մատուցանում են տան երիտասարդների ձեռքով կերակուրները և հրավիրված 30—70 հոգին բոլորովին լուռ, ախորժակով ճաշում է, միայն «իստեղ կերակուր բե» է լսվում: Պետք է ասել, որ կերակուրները մատուցվում են մեծ քարղաններից մեջ ածած, և 5—6 հոգի միևնույն քարղանից են ուտում, հաճախ յուր տանից գրպանը դրած բերած գդալով: Շատ գյուղերի եկեղեցիներում նվիրված գդալներ են պահում, որ տանում են հոգու հաց տվողները:

Երբ ուտում, պրծնում են, հավաքում են հացը, մնում է միայն քահանայի առջև դրված խոնչան՝ վրան մի լավաշ հաց: Տան տերը խնկամանի նման կավե թասի մեջ ածուխ կրակ է ածում և դնում հացի մոտ: Քահանան մի նշխարք է դնում հացի վրա և կանգնում «Հոգոց» է ասում: Կանգնում են և բոլորը: Տանտերը առնում է խնկամանը և փչելով մոտեցնում հրավիրվածներին, որոնք ձեռքով ծուխը դեպի իրենց քաշելով՝ խաչակնքվում են: Անպիտան տիրացուները ծուլությամբ պատճառով չեն ուզում բուրվառը եկեղեցուց այդտեղ բերել: Աղոթքը վերջանալուց հետո ննջեցյալի տերը տալիս է քահանային 20 կոպեկ ժամուց, 20 կոպեկ էլ երեցփոխին՝ հօգուտ եկեղեցու: Հետո բոլորը մի վայրկյանում՝ «Աստված ընդունելի էնե, Հոգին սուրբ կամար կապե հին ու նոր ննջեցյալներիդ վրան» ասում և հեռանում են: Տան երեխաներից մինը խնկամանը ձեռին կանգնում է դռան մոտ, և ամեն անցնող խնկի ծուխը իրեն քաշում, խաչ հանում և «Բարի հիշատակ ըլլիս, աստված օղորմի մեռելնուտ հոգուն» ասում և գնում:

Եթե ննջեցյալը բսան տարեկանից ցածր է, փետատի և յոթնեից հաց չեն տալիս:

Ննջեցյալի թաղման համար մոտավորապես հետևյալ ծախսն է լինում.

Պատանքի		1 ռ. 60 կ.
Քահանային՝		
ա. մինչև 19 տարեկանը		— 20 կ.
բ. 20 տար. բարձր	չամուսնացածին . 2 ռ. —	
	ամուսնացածին . 4 ռ. —	

Գ. Ամուրիին { առանց կողոպուտի.— 8 ռ.—
{ կողոպուտով 5 ռ.—
Փետտախ, յոթնեից և հոգու հայի. 20—30 ռ.—

Եթե ամուսինը կենդանի է՝ կողոպուտ առնում են միայն հանդերձը, իսկ եթե ոչ՝ հանդերձը և անկողինը։

Գերեզմանատունը սովորաբար գտնվում է գյուղի մի կողմը, բլրակի կամ մի դաշտակի վրա, մի քանի գյուղերում էլ եկեղեցու շուրջը։ Գերեզմանի վրա ձգում են քառանկյունի կամ օրոցաձև տաշված քար կամ դարսում կտոր քարեր։

Միմիայն քահանաների և նշանավոր մարդկանց գերեզմաններն ունենում են արձանագրություն։ Մի քանիսի վրա էլ փորված են լինում ննջեցյալի պարապման հատկանիշ մի գործի։

Քաղաքի գերեզմանատունը գտնվում է քաղաքից դուրս դեպի արեվելք։ Գերեզմանները միմյանց շատ մոտ են և անկանոն դասավորված։ Մի շարքով, միմյանց մոտ թաղված են միայն մի գերդաստանի կամ ընտանիքի անդամները։

Գերեզմանաքարերը երեք տեսակ են. երեխաներինը՝ սովորաբար օրոցաձև է, հասակավորներինն՝ առավելապես դադաղաձև, թեև օրոցաձևեր էլ կան, կարմիր սրբատաշ քարերից շինված և քարե պատվանդանների վրա ամրացրած։

Հոգևորականներինը քառանկյունի քար է, ոտների կողմը 1,5 արշին բարձրության, 0,5 արշին լայնության և 2 վերշոկ հաստության քար կանգնեցրած, որի վերի ծայրը բոլորակաձև է։ Սրանց դեպի արևմուտք նայող երեսի վրա եթե քահանայի է՝ քանդակված է միայն խաչ, իսկ եթե վարդապետի՝ խաչ, աջ կողմում գավազան, ձախում Ավետարան, իսկ գլխին վեղար։ Երկուսի տակն էլ ավետարանից հարմարվոր խոսքեր են փորագրված։

Աղքատների գերեզմանաքարերը, եթե կան էլ, քառանկյունի տաշած կամ անտաշ քարեր են, հաճախ առանց տապանագրի։

Տապանագրեր

Տապան Նազելի Յուղաբերի՝ դստեր Կարապետ աղայի, ի հասակի 18 ամաց։

Մի՛ զիս լացցեն երգիչ Գողթան
Մի՛ սոխակին աչք սիրաջան
Այլ ծնողացս իմ յարաժամ
Եվ ազգակցացս ամենայն։

Մի՛ և կարապն ողբաձայն,
Մի՛ և տատրակն քաղցրաձայն
Այլ սիրողին իմ սիրելական,
Եւ օրորոցս անխնամ,
Յորոց անդութ սուրն մահուան
Զիս որոշյալ արկ յայս տապան,
Հանկիր ոսկերք իմ տխրական
Յ՝ յարութիւն մարդկան համայն։
Չէ նա վատաբաղդ, որ վաղ մեռանի,
Այլ որ յետ մահուան սիրելւոյն՝ ապրի։

* * *

«Տիեղերաց յայն ծագաց ղհողնղէնդ յայդ ափանց ածէք առ իս».

Ամպրոպայինն որոտաց։
Յահեղ վճռէդ Տէր իմ Տէր
Դող մահացուս հարկաներ
Ընկալ ղհոգիս։
Յաղդել ձայնիդ օ՜ն ղարթիր։

Հովհաննէս քահանայ Իպիտխանեանց, իւր կենաց տարեկան շրջանների 63 բոլորելով երկարատև հիւանդութիւնից յետոյ մահկանացուն կնքեց 10 փետր. 1863 ամի։

ՀՈԳՈՒ ԵՎ ՀԱՆԴԵՐՁՅԱԼ ԿՅԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Ժողովրդի կարծիքով հոգին «արևի շաֆխի պես է, ղրյնի օրա՝ լուսանա կը, գնաց թըչը՝ մթնե կը»։ Թե այր և թե կին մարդկանց, թե ծերերու և թե երեխայի հոգին միատեսակ և միաչափ է. և հենց այդ է պատճառը, որ երեխայի մարմինը փոքր լինելով՝ հոգին նեղութիւն է տալիս, և երեխան հաճախ լաց է լինում։

Կենդանութեան ժամանակ հոգին գտնվում է կրծքի ձախ կողմը։

Մեռնելիս հոգին դուրս է գալիս բերանից, եթե բարի մարդու է՝ աղավնակերպ, իսկ եթե չար՝ սև ածուխի նման։

Ոչ միայն հայ քրիստոնյաները ունին հոգի, այլև բոլոր մարդիկ, մինչև իսկ անհավատները։ Միայն կենդանիները և թռչունները չունին հոգի, այլ շունչ, որ փչե թե չէ՝ ամեն ինչ վերջանում է։ Այնինչ հոգին շարունակում է յուր գոյությունը և մարդու մահից հետո։ Նա սավառնում է դիակի շուրջը մինչև մարմինը հողին հանձնելը, և երբ «Փառք

ի բարձունս» ասում են, թռչում է Երուսաղեմ, երեք անգամ համբուրում ս. գերեզմանը և այստեղ 40 օր մնում, մինչև ննջեցյալի քառասունքը լրանալը։ Հետո արդեն վերանում է երկինք, յոթն օր ճանապարհ գնալով։ Եթե արդար է՝ ընդունվում է Սերովբեից և Քերովբեից, գնում երկրպագում աստծուն և անցնում արդարների կայանը, որ երկնքում լուսեղեն մի տեղ է։ Այստեղ արդար, աղավնակերպ հոգիները փառաբանում են աստծուն և խնդրում, որ շուտով անե դատաստանը, որպեսզի ազատվին մեղավոր հոգիների դրկցությունից, որոնց վատ հոտն ու ամբարտավանությունը չի կտրում իրենցից։ Իսկ եթե հոգին մեղավոր է՝ Սերովբեն և Քերովբեն վանում են նրան, և Պեղծեվոնը կամ չար հրեշտակները տանում են մեղավորների կայանը, որ արդարների կայանից ցածր, մութ և խավար է։ Այստեղ սրանք աղաչում են, որ վերջին դատաստանն ուշ լինի, որպեսզի երկար մնան երկնքում, արդարների մոտ։

Այս կայաններից հոգիները ինչպես իրիկունները (շաբաթ երեկոները) գալիս են տներին այցելության, ուստի և այդ երեկոները ճրագը մինչև լույս վառ են թողնում և խունկ ծխում։

Հիշատակ իրիկունները մութ տեղում մարդիկ ջուր չեն խմում, որպեսզի իրենց ազգականների հոգիները ծարավ չմնան, նրանք խմում են բութ մատի մատնարմատի մոտ երկու ջղերի մեջտեղում ձևացող փոսով։

Հոգիները հիշած կայաններում պիտի մնան մինչև վերջին դատաստանը, որ լինելու է երբ 3000 տարին բոլորի, երբ արևը արևմուտքից ծագե, երբ Լեկեոն ձկան[38] գլուխն ու պոչը իրար հասնին, և երբ գա Նեռը։ Նեռը եկած ժամանակ եղիան, Ենովքը, Ս. Մարիամ կույսը և Հովհաննես ավետարանիչը, որ այժմ կենդանի մարմնով մնում են երկնքում, պիտի իջնեն երկիր և նահատակվին, որ նորից վերջին դատաստանին հարություն առնեն։

Վերջին դատաստանի ժամանակ Գաբրիել հրեշտակապետը պիտի փչե փողը, մարմինները հարություն պիտի առնեն և հագնին հոգիները. այն ժամանակ այժմյանի հակառակ, հոգին դուրսը պիտի լինի, մարմինը ներսը, հոգու աչքը կսկսի տեսնել։ Բոլորը կերթան Օռնատու կալը։

Այս կալի մասին պատմում են, թե ժամանակով երկու եղբայր բաժանվել են։ Սրանցից յուրաքանչյուրը մտածելով, թե մյուսն իրենից ավելի կարիք ունի, գիշերով յուր օրանից տարել լցրել է մյուսի օրնի

38 Տե՛ս «Ջավախքի բուրմունք»։

վրա, և այս եղբայրասիրությունը Քրիստոսին այնքան դուր է եկել, որ նշանակել է այդ կալը վերջին դատաստանի տեղ։ Դատաստանի օրը Քրիստոսը կշիռը կկախե, մարդուս աջ ուսի բարի հրեշտակը բարի բաներ գրից կհանե և կդնի կշիռի մի նժարը, իսկ ձախ ուսի չար հրեշտակը չար բաները կդնե մյուս նժարը։ Եթե բարությունը կշռեց, մարդը կանցնի Քրիստոսի աջ կողմը, ուր կխմբվին արդարները, իսկ եթե չարության կողմը կշռեց, կանցնի ձախ կողմը, ուր կհավաքվին մեղավորները։ Այսպես մեղավորներն ու արդարները զատվելուց ետ՝ արդարները կերթան արքայության, իսկ մեղավորները՝ դժոխքը։

Ժողովրդի համոզմամբ դրախտը կամ արքայությունը երկնքումն է, լուսավոր, անուշահոտ, ծառերով, ծաղիկներով զարդարված։ Սա բաղկացած է երեք հարկից՝ զաբ։ Վերին հարկում պիտի բնակին մարտիրոսները, երկրորդում՝ ճգնավորները, իսկ երրորդում՝ սուորին հարկում՝ առհասարակ արդարները։ Սրանք բոլորը միահաւասակ մարմնով պիտի լինին և պիտի բռնեն վայր թափված երկու դաս հրեշտակների տեղը և միշտ պիտի փառաբանեն աստծուն։

Դժոխքը գտնվում է գետնի «օխթը ղաթը», ուր իշխում է Լեկեոնը։ Այստեղ դրված են կարասներ սև նավթով (ղիֆթ) լի, որ եռ են գալիս, և որոնց մեջ պիտի տանջվին, կուշ գան մեղավորները։

Ժողովուրդը հավատում է և «մազե կարմնջին»։ Նա կարծում է, թե ընդհանուր հարության ժամանակ, բոլոր ժողովուրդները պիտի անցնին մազե կամուրջով, որ ձգված է դժոխքի վրայով։ Արդարները անվտանգ պիտի անցնին կամուրջով և գնան արքայության, իսկ մեղավորները կամուրջից պիտի գլորվին վայր՝ դժոխքի մեջ։

ՀԱՎԱՏՔ

ԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ, ՍՐԲԵՐ ԵՎ ԿՐՈՆԱԿԱՆ ԳՐՎԱԾՆԵՐ

Ախալքալաքի հայ ժողովուրդը հավատում է, թե երկնքի յոթերորդ «զաթի վրա մե օսկե աթոռ՝ է դրած», որի վրա նստած է սպիտակահեր հայր Աստվածը, աջ կողմը Հիսուս Քրիստոսը, գլխի վերև՝ Սուրբ Հոգին։ Սրանց առջև կանգնած է մարմնով Ս. Գրիգոր Լուսավորիչը։

Ժողովուրդը հավատում է, որ տիեզերքը ամբողջապես կառավարվում է երրորդության անհասանելի կամքով և որ առանց նրա նախորոշման մի տերև անգամ վայր չի ընկնում։

Տալով երրորդությանը գերագույն կատարելության և իշխանության տիպար, նա նրա էության մասին բնավ չի մտածում. և երբ մինը խո-

զախում է հարցնել նրան այդ մասին, նա պատմելով հետևյալ դեպքը, համոզում է երբեք չմտածել երրորդության էության մասին։

Ասում են, թե Հակովբ պատրիարքի ժամանակ տասներկու հայրապետներ հավաքվեցան և խորհուրդ արին, թե երրորդությունն ի՞նչ է ու ի՞նչով եղավ։ Երկար մտածեցին, վիճեցին, վերջապես չկարողացան մի եզրակացության հասնել։ Հակովբ պատրիարքը տեսնելով, որ դրանք ոչ մի հետևանքի չեկան, ցանկացավ ինքը միայնակ քննել և իմանալ։ Այս պատճառով կղզիացավ մի ծովի ափ, խիտ եղեգնուտի մեջ և 12 օր նստած առանց ջրի ու հացի՝ մտածում էր։ Հանկարծ սթափվեց և տեսավ, որ մի թռչուն ծովից կտցով ջուրն առնում, բերում եզի ոտից առաջացած փոսի մեջն է ածում. զարմացավ և չդիտեր, թե ի՞նչ է անում՝ խմո՞ւմ է, թե՞ խաղում։

Այդ ժամանակ թռչունը աստծու հրամանով լեզու ելավ ու ասաց նրան. «Ի՞նչ ես զարմանում, ես կարող եմ այս ծովի ջուրը հավքեցնել այս փոսի մեջ, բայց դու չես կարող երրորդության էությունը գլխիդ մեջ հավքեցնել, լավ է այլևս չմտածես»։

Նա էլ վերջ տվեց ու երրորդության մասին այլևս չմտածեց, այլ մաքուր սրտով հավատաց ու պաշտեց։

Ընդհանրապես կանանց դասը սիրում է Ս. Աստվածածնին, որին և աղոթում է ծննդաբերության, հիվանդության և վշտի ժամանակ. ամենից ավելի սրան են խոստանում մատաղներ և սրա տոնին բազմաթիվ ուխտավորներ գնում են Վարձիա՝ Վերափոխման տաճարը, Ալեքսանդրապոլ՝ «Յոթվիրաց» պատկերը ուխտ անելու։

Սա ենովք և Եղիա մարգարեների հետ բնակում է մարմնով երկնքում, բոլորովին զատ մյուս սրբերից, որոնք մնում են արդարների կայանի վերին հարկում։

Ս. Աստվածածնա մասին պատմում են, թե քառասուն կույսերի հետ սարերում ծաղիկ քաղում և ճգնում էր։ Երբ թեշիկ էին մանում, միայն սրա մանած սև թելի միջից զանազան գույնի թելեր էին դուրս գալիս, որից զուշակում էին, թե սա է լինելու Աստվածամայրը։ Երբ ամառն անցկացավ, կույսերն իջան սարից և զանազան գրավականներով պահ տրվեցան առաքինի մարդկանց։ Հովսեփն էլ յուր ուրագը բերեց դրեց ու տարավ Մարիամ Ս. Կույսին ձմեռը պահելու։

Մի անգամ, երբ Մարիամ Ս. Կույսը գնում էր աղբյուր ջուր բերելու՝ հրեշտակը երևեցավ նրան և ավետիք տվեց, թե նրանից ծնվելու է աշխարհի Փրկիչը։ Մարիամ Ս. Կույսը յուր հնազանդությունը ցույց

տալու համար՝ հենց վերադարձին բաթաթը վերցրեց դրեց փորին, որ հղի երևա։

Մյուս սրբերից ամենից ավելի ժողովրդականություն ունի Ս. Կարապետը, որի պասը մինչև 7 տարի պահողներ կան, և որի «դուռը», Գլակա վանքը, ամեն տարի ուխտ են գնում։

Թե որչափ մեծ նշանակություն է տալիս ժողովուրդը Ս. Կարապետի պասին, երևում է հետևյալ ավանդությունից։

Մարիամ ս. կույսը 7 տարի շարունակ պահում է Ս. Կարապետի ծոմն ու պասը։ Հրեշտակը գալիս սրա հոգին առնում, գնում է։ Ճանապարհին սա տեսնում է յուր մորը, որի ծծերը երկու օձ ծծում են. անցնում է. պատահում է հորը, մինչև կոկորդը ավազի մեջ թաղված։ Ս. Կույսը հարցնում է հրեշտակին յուր ծնողների չարչարանքի պատճառը, և նա պատասխանում է, թե մայրը երկու երեխա է խեղդել, իսկ հայրը կնոջը շատ նեղություն է տվել։ Ս. Կույսը խնդրում է հրեշտակին՝ ազատել գոնե մորը։ Հրեշտակը սլանում է երկինք և Հայր Աստծուց պատասխան բերում, թե Ս. Կարապետի պասը պահե՝ մայրը տանջանքից կազատի։ Ս. Կույսը համաձայնում է, նորից կենդանանում, գալիս աշխարհ և 3 տարի էլ պաս պահելով ազատում մորը տանջանքից։

Առաքյալներից Մատթեոսի մասին պատմում են, թե գնաց մարդակերների մեջ քարոզելու՝ բռնեցին բանտարկեցին։ Աստծու հրամանով Փիլիպպոս առաքյալն էլ ուղարկվեցավ միևնույն երկիրը։ Երբ սա ևս ծաղրեց նրանց կուռքը, թե այս խրտվիլակն ի՞նչ է, ոսկիները շարել եք գլխին, երկրպագություն եք տալիս, սրան էլ բանտարկեցին։ Սակայն դուռը փակելուց հետո սա զերբնական զորությամբ դուրս ելավ և դռանը կանգնեց։ Բոլորը զարմացան. տեսավ բավական աղքատներ շարվել են կատան շուրջը, հարցրեց թե ի՞նչի են սպասում։ Աղքատները պատասխանեցին, թե քաղցած են. թե սուրբ ես, կշտացրու, գնանք։ Փիլիպպոս առաքյալը գավազանը տնկեց, թզենի դառավ, թուզ հասավ և այդ աղքատները կերան, կշտացան։ Թագավորը երբ լսեց այդ հրաշքն, եկավ տեսնելու թզենին։ Փիլիպպոսը հանդիմանեց սրան և ասաց թե՝ հրամայիր ջախջախել այդ կուռքը, ապա թե ոչ կհրամայեմ բերանից ջուր բղխել և խեղդել բոլորիդ։ Թագավորը չհավատաց և Փիլիպպոս առաքյալը ցույց տվեց յուր հրաշքը. կուռքի բերանից ջուր բղխաց և ծածկեց ամբողջ քաղաքը մինչև մարդկանց կոկորդը, այս ժամանակ բոլորը աղաչեցին Փիլիպպոս առաքյալին՝ ազատել իրենց և մկրտել։ Փիլիպպոսը ջուրը դադարեցրեց, կործանեց կուռքը և մկրտեց բոլոր բնակիչներին «հայ-քրիստոնյա»։ Առաքյալներից միայն սա չնահատակվեց,

ուստի և չկարողացավ մտնել արքայության, և կանգնած մնաց դռանը, մինչև որ 11 առաքյալները 32 պատարագ մատուցին և ընդունեցին նրան ներս։

Ս. Ստեփանոս Նախավկայի համար ևս պատմում են. Տյառընդառաջին, երբ բազմաթիվ կանայք երեխաները գրկերը շտապում էին դիմավորելու Աստվածամորը և աղջիկները իրավունք չունեին մասնակցելու, մի օրիորդ դնում է մի քար դոգնոցի մեջ և վազում դեպի Ս. Կույսը։ Սրան մոտենալիս հանկարծ լացի ձայն է լսում և նայում, տեսնում է գրկում քարը երեխա դարձած։

Ժողովրդի շատ քիչ մասին է ծանոթ հին և նոր կտակարանի բովանդակությունը, այն էլ փոփոխված և ավանդության կերպարանք ստացած։

Կրոնական գրվածներից ամենից սիրելին, Ավետարանից հետո, Նաբեկացու աղոթագիրքն է. հիվանդը խնդրում է գլխին Նարեկ կարգալ բժշկվելու համար. ծննդկանը բարձի տակ Նարեկ է դնում՝ չարերին հալածելու համար. գրագետ ծերունիները Նարեկ են կարդում՝ հոգիները փրկելու համար. իմաստության ուսուցչությունը 90 անգամ կարդում են նրա Ղ գլուխը, իմաստություն ստանալու համար. երկնային կյանքով հափշտակվողները քառասուն անգամ կարդում են նրա «Բարեբանեալը», երկինք համբառնալու համար. բայց եթե չկարողանան անընդհատ 40 անգամ կարդալ՝ կխելագարվին։

ՀՐԵՇՏԱԿՆԵՐ ԵՎ ՈԳԻՆԵՐ, ԲԱՐԻ ԵՎ ՉԱՐ.

Ջավախքի հայ ժողովուրդը հավատում է, թե աստված ստեղծել է ինը դաս հրեշտակ՝ մարդակերպ, թևավոր, աներևույթ, բարի էակներ, որոնց պաշտամունքն էր փառաբանել Երրորդությունը և կատարել նրա հրամանները։ Սակայն այս ինը դասից երկուսն ամբարտավանացել են և ցանկացել աստված դառնալ։ Տերը անիծել է նրանց և սրանք երեք օր շարունակ կարկտի պես երկնքից վայր են թափվել։ Յոթը դաս հրեշտակները խնդրել են ողորմիլ և «Տեր ողորմեա» են ասել, իսկ մարդիկ զարհուրած «Կեցո՛, Տէր» աղաղակել։

Այս երկու դասը վայր թափվելիս երեք դասի են բաժանվել, մին՝ Պեղծեոն, որ մնացել է երկնքի և երկրի միջև, մյուսը Սաթայել, որ իջել է երկրիս վրա և երրորդը՝ Լեկեոն, որ անցել է անդունդը։ Աստված անօրինել է, որ այս վայր թափված հրեշտակների տեղը լցնեն բարի մարդկանց հոգիները, ուստի և այս հալածված հրեշտակների երեք դասերն էլ բարի մարդկանց սաստիկ թշնամացրել են և ամեն կերպ աշխա-

տում են մոլորեցնել նրանց։ Սաթայելը «բաց աչքով»՝ ակնհայտնի է խաբում մարդկանց ու գրում գործած մեղքերը։ Լեկեոնը չար երազներով ու տեսիլքներով է մոլորեցնում, իսկ Պեղծեոնը ուղղակի կտրում է հոգիների ճանապարհը և եթե «բարութեան ձեռագիրը» չունին, քաշում տանում է դժոխք, սատանաների և մեղավորների կայանը, ուր ոսկի աթոռի վրա նստած թագավորում է Լեկեոնը։

Ժողովուրդն այս վայր թափված երեք դաս հրեշտակներին կոչում է սատանա և պատկերացնում է նրանց մարդակերպ, թևավոր, բոլորովին սև, մազով ծածկված, երկար ագիով և կրունկները դեպի առաջ ուղղված, ոմանք էլ մի կամ երկու եղջյուրով։

Սրանք երկու սեռի են և որդեծնութեամբ աճում ու բազմանում են, միայն երբեք չեն մեռնում։ Տղայաբերութեան ժամանակ հաճախ մարդ դայակ են խաբում տանում, որին և վարձատրում են սոխի կամ սխտորի կպեճով ու հալվայով։ Սոխի կամ սխտորի կպեճները մյուս օրը ոսկի դրամներ են դառնում, եթե միայն ստացողն անարգելով վայր չի թափել։

Երկու սեռի սատանաները ևս մերկ են, միայն կանայք սիրում են հագնել կապել, ուստի և հաճախ ծածկաբար տանում հագնում են նորահարսերի չհաչակնքված կամ մեջը նշխարք չդրած հանդերձներն և նորից բերում տեղը դնում։

Սատանաներն առավելապես բնակվում են ջրաղացներում, ձիթհանքերում, դոմերում, այրերում և անմարդաբնակ տներում։

Սրանք կերակրվում են գլխավորապես հալվայով, խավիծով և ծնընդականների փայծաղով։

Խավիծ եփելու համար դնում են կրակին մի կաթսա և շուրջը պտրտվելով ասում. «Ջրին եղն ու ալուրը մեջը, չքին եղն ու ալուրը մեջը»։ Կաթսան լցվում է ունեցող, բայց չունիմ ասողների յուղով ու ալյուրով, որը և եփում ուտում են։ Բայց նրանք ավելի մարդկանց եփածին են վազում և ուր էլ որ խավիծ եփեն, սրանք գլխին կանգնած են։ Եվ որպեսզի համեղ մասն իրենց մնա՝ նրանք տակն են պահում յուղը և թույլ չեն տալիս «դուս տալու», այսինքն երեսը տարածվելու, սպասելով որ դըրգալը վայր դնեն, իրենք վերցնեն ուտեն։ Մարդիկ էլ այդ իմանալով՝ առանց դրգալը վայր դնելու՝ մի սուտ են խոսում, օր. դուրսը սատիկ կռիվ կա, սատանաները խաբվում, վազում են դուրս, այս ժամանակ յուղը դուրս է տալիս և մարդիկ վերցնում ուտում են։

Սատանաները սատիկ սիրում են պարել և շատ անգամ «դավլդումնա» ածողներին խաբում տանում են մի ընդարձակ այր կամ ջրաղաց և կամ մի այլ տեղ. ածել են տալիս և մինչև աքաղաղի առավոտյան

կանչը պարում։ Սիրում են նաև ձի հեծնել և շատ անգամ հեծնում են ու գոմի մի ծայրից մյուսը քշում, մինչև որ ձին արյուն քրտինք մտած նվաղում կանգնում է։ Նրանք շփում են ձիերը և բաշը գեղեցիկ հյուսում։

Մարդկանց խաբելու և մոլորեցնելու համար սատանաները շատ անգամ կերպարանափոխվում են և երևում են մարդու, մազի, սև շան և այլ կերպարանքով։

Մարդիկ էլ երբեմն հաջողացնում են սրանց բռնել՝ ձիու վրա կապը են քսում և սատանան հեծած միջոցին կպչում մնում է վրան, կամ երևացած միջոցին հանկարծ վրա են վազում և բռնում։ Եվ երբ մի ասեղ շուլուլում են նրա կրծքին, նա այլևս չի կարողանում հեռանալ այդ տնից։ Բռնողները երկար ծառայեցնում են նրանց, միայն ինչ որ հրամայում են, նրա հակառակն են կատարում, դրա համար էլ ծառայեցնողները ցանկացածի հակառակն են ասում։

Բռնված սատանան ծառայում է մինչև այն ժամանակ, երբ մի երեխայի կամ մի չգիտեցող անձի հանել է տալիս կրծքից ասեղը։ Այս ժամանակ սա անիծում է այդ տան ամբողջ ազգատոհմը և անհետանում։

Սատանաների մասին շատ նախապաշարմունքներ կան, այսպես՝ հորանջելիս բերանը խաչակնքում են, որ սատանան փորը չմտնի։ Անոխթին (գիշերը) ջուր չեն թափում, որովհետև այդ ժամանակ սատանաները պրոսնում են, կարող է նրանց վրա թափվիլ։ Գիշերը փայտով գետնին չեն խփում, որ միգուցե չարերի ձագերին դիպչի և նրանց մայրը անիծե։

Գիշերը գլխաբաց դուրս չեն գնում, որ չարերը չխիևն։

Մութ տեղը ջուր չեն խմում, որ սատանաները մեջը չմտնեն։

Գիշերը հոսող ջրից չեն խմում, որ սատանաները չխփեն։

Թոնրի շուրթը ջուր չեն թափում, որ սատանաների ոտներին չլցվի։

Կորցրած իրը պտրելիս կարծում են, թե սատանան վրան նստել թաքցրել է, ուզում են խաբել, վեր կացնել, ուստի և ասում են.

Սատանա, սատանա,
Պուչիտ տակը բանմ' կա,
Կեսն ինծի՛,
Կեսը քեզի՛։

Սատանաների մասին բազմաթիվ պատմություններ կան, որոնցից մի քանիսն առաջ ենք բերում այնպես, ինչպես պատմել են.

Ա.

Մե գիշերմ' սատանաները գուգան գայեկիմ' ձեն կուտան, թը ֆի-

լան ուղի կնիկը ցավէ, քալէ տղան առ։ Ասիկ գելլէ կերթայ։ Կերթան մէ մաղարամ՝ մտնին կը։ Մէ կնիկմ՝ պառկած գըլլի, դայեկը տղան կառնէ, կըսե՝ ջուր բերեք լողացնեմ։ Ան սհաթին տաք ջուր բերեն կը, լըլէ ՝կը տաշտը, լողացնէ կը, փաթթէ դնէ կը տղոցկնին կուշտը։ Աս վախթը բիրտան պարկապղուկի ձեն դիմնա, կաշե օր Աթոն պարկապղուկը բերնին թրեր, չալէ կը, սատաներն ա, հարս, թաբլոր հետները, պար բռներ խաղան կը։ Աս օր տեսնի կը, դողը բռնէ կը, կըսե. «Ալ բան չունիմ, թողեք էրթամ»։ Բերեն յաղմ սոխի կճեպ կու տան ճամփեն կը։ Դայեկը տուն օր հասնի կը, ինքն իրեն կըսե կը թը՝ ֆողը գլխներուն, սոխ կպեճն ա բան է, օր տվին, կըսե ու թափե կը, կերթա գըլյնի քնի կը։

Ուստա Աթոն չալե ու չալե կը։ Մեմ՝ ա կաշե օր սատանոց հագած հալվները իրեն դրկցներուն հալվընեուն շատ լման է, ուսուլով մեմե կտոր կտոռ դնե կը չերը։ Խորոզխոսուն սատաններբը ասոր թապախմ՝ հալվա, էրկու օսկի կուտան ճամփեն կը. գուգա քնի կը։ Դայեկը առավոտուն գելլե, հալվընեըն օր հագնի կը, գոտկին միչեն էրկու օսկի վար գըլյնի կը. հասկընա կոր սոխ կպեճներեն է, վազդե կը դուռ, կպեճները փնտռե կը՝ չի գտնի, սատաներբը էկած տարած գըլլին։ Քոռ փոշման կերթա օր հաց էնե, իրիկվա դրած ջուրը հանե կը, տեսնի կօր գունտ-գունտ արուն կա մեջը։ Վայ, կըսե, իրիկունն օր սատաներբը ջուր բերին տղան լողացնելու, աս ջուրն է էղե։

Աթոն ա զարթնի կաշե օր՝ հալալն կողբը դրած է, հըմը օսկիբը չկան։ Կոռած կտորտանբը կառնե կերթա դրկցներուն տները, կըսե. Մեմ՝ ձեր հալվընները բերեք։ Բերեն կը, կաշե օր կշտներեն կտռած է։ Կտորները դնե կը քովերը, լավ բռնեն կը։ Կըսե. իրիկունս սատաներբը ձեր հալվները տարեր հագեր հարսնիք էին գնացե, ինչի՞ հանելուս Հիսուս ու Քրիստոս չեք ըսե, օր սատաներբը չտանին։

Բ

Մե գիշերմ՝ ռանջպրին մեկը չոլ տեղմ՝ պառկի կը։ Կես գիշերին զարթի կ՝աշե օր՝ սատաներբը թոփ էղած մե մենծ զաղանմ՝ դրին ու «Ջքին եղն ու ալուրը մեջը, չքին եղն ու ալուրը մեչը» ըսին ու հալվա էփեցին։ Էփեցին պրծան, նստան օր ուտեն, մեմ՝ ա մեկը ատ ռանջպըրին տեսավ, ընկերներուն ըսաց թը՝ ինի ռանջպարը կաշե, մեղք է, քիչմ՝ հալվա ա անոր տանք։ Էրկու մենծ աման լըլեն, բերեն ռանջպըրին առաջը դնեն կը։ Ռանջպարը կուտե կու ամննները խաչակնքե՝ կըսե Քրիստոսու խաչը վրադ ըլի։ Սատաներբը հալվան կուտեն պրծնին, գելլեն դավուլ-զուռնով պար խաղան կը։ Խորոզխոսուն ամննները ժողվին կ՝օր էրթան, էրկուսը

գուգան օր ռանջպըրին տարած ամննները տանին։ Գուգան տեսնին կ'օր ամննեռու չորս բոլորը փուշը պատեր է, չեն մոտենա, թողնեն քաշվին կը։ Հիմի ատ ամննները դնեն կը տղոցկնի բարձի տակ, օր չարը չդիպչի։

Գ

Մե օրմ՝ մե մարդմ՝ ինչղ գըլլի, գիշերը լոլը մնա կը, կերթա մե մաղարիմ՝ բերան պառկի, չպուխը լըլե քաշե կը։ Չպուխը լըլե՝ դարդկե կը, մեմ ա մե ձեննմ՝ գուգա, անկաճ կէնե, տեսնի կ'օր սատանի քանիմ՝ տղա գուլան ու կըսեն կը թը՝ անոթի ենք։ Ատոնց մարն ա քովերը նստեր՝ գուգն օր քնցընե։

— Քիչմ ա կեցիք,— կըսե մարը,— քեհու կնիկը տղոցկան է, ցավն օր բռնե, կերթամ չիգյարը բերեմ, քյապապ կէնեմ, կուտեք։

Տղաքը քիչմ՝ վախտ ձենները կարեն կը, ետև կենա զռռոցը դնեն կը։

— Միք լա, միք լա,— կըսե կը մարը,— էլեք դուք կրակ էրեք, քեհու կնկան ցավը բռներ է, էրթամ չիգյարը բերեմ, քյապապ էնենք։

— Չիգյարն օր բերես, խեղճը չի՞ մեռնի,— կըսեն տղաքը։

— Ի՜հ,— կըսե կը մարը, ետև քյապըպի մոխիրը տանիմ քթին դեմ կուտամ, սաղնա կը։

Մարը գելլե կերթա, տղաքն ա բերեն կրակ կէնեն։ Քիչմ՝ կանցնի, մարը գուգա կը, մե չիգյարմ՝ ա ձեռը, բերե քյապապ կէնե, տղոցը կուտեցնե, կեցնե կը։ Ինքն ա քովերը էրկննա կը։ Տղաքն օր տեսնին կը մարը կնքվարտե կը, կըսեն. «Ան կնիկը հիմի մեռավ, մոխիրը չպիտի՝ տանիս օր լավնա»։

— Գլոխքար մեռավ,— կըսե մարը,—մեմ՝ ա վեվ պիտի տեղեն վեր էլլե։

Աս մարթն օր աս բիստուն բաները իմանա կը, սիրտը կտրտի կը, ալ սատանի-մատանի չաշե, բիրտան ներս մտնի կ'ու, մե բուռմ՝ մոխիր բռե փախի կը։ Գուգա քեհենց տուն, կաշե օր խեղճ տղոցկնին պատնքեր, գլխուն վերևը նստեր շիվան կէնեն կը։ «Կեցի՛ք»,— կըսե ու բռով մոխիրը քթին դեմ կուտա։ Մեռելն օ սահաթ էլլե նստի կը։

Ալ ի՞նչ ուրախութենե։

Դ

Մե օրմ՝ Իշի լուսենց Մոսիկը մնա կը, քուչիմ բերան նստի հանգչի կը։ Մեմ ա կաշե օր էրկու սատանա կայներ իրար հետ խոսին կը։ Ասոր շունչը կտռի կը, անկճները կախե, անկաճ կէնե, օր մեկը մեկալին կըսե թը՝ Վարթե Գյուլանկենց հարսը տղոցկան է, գընը չիգյարը բե, ուտենք։

— Թըո՜ւ, դու չըսացտան էրկու անգամ գնացի, հըմը ինչ էնեմ, օր առջի անգամը խորոզը խոսաց, մեկալին ա անտեր կատուն տղոցկնին վրա պառկեր էր։

«Ատպես է օրա՝ գընը մաղ էղի, ընկի խավիծին մեչ՝ կուլ գընը, կտռե փե։։

— Աաղ լավ ըսիր,— կըսե մեկալն ու դալով կանցնի։

Աս Մոսիկը սրտոտ մարդ գըլլի.— Վա՜յ,— կըսե,— դուք խեղճ հարսին սպանելու միտք ունիք, կեցեք տեսեք ձեզի ինչ օրի կըցկեմ,— կըսե ինքն իրեն ու գելլե դուզ կերթա Վարդն Գյուլանկենց տունը։ Կաշե օր հարսը տղոցկան պառկեր է, կեսուրն ա խավիծ է էրե, օր տղոցկնին ուտացնե։ Մոտենա կը կեսուրին, կըսե. «Քաջան, քիչմ՝ դու էնթին կեցի, խավիծը ես էփեմ»։

Կեսուրը թը՝ ինչի՞, իմ էփածիս չե՞ս հավնի։

— Հավնիմ, չհավնիմ, աս խավիծը ես պիտի էփեմ,— կըսե կու քալե թավան կառնե կեսուրի ձեռքեն, լավմ՝ կէփե, գտալով կ՝առնե, լավմ՝ կաշե՝ կուտա տղոցկընին։ Քանիմ՝ գդալ կուտա, մե՝մ ա ղոճա մազմ՝ կը գտնի, կառնե ու քյոզ կրակին մեչը կը ցկե։ Ցկելը կիմանա, մեմ՝ ա անպես ճվճվոցն գըչնի, օր աս խեղճ մարդը էրկու անկճով խլնա կը։

Ե

Մե կուզ չաղչպանմ՝, օրվանմ՝ մեկը մեննակ մնա կը չաղացկը։ Քնելու օր գըլլի, կաշե օր սաանները դավուլ-զուռնեն առաջ խառներ գուգան կը։ Գուգան ու ատոր չաղչին օրթան պար բռնեն Ըուչին կը։ Քիչմ կանցնի, ատոնցեն մեկը գուգա աս չախչըպանին ձեռքեն քաշե պարը տանի կը։ Ադ խեղճը չարասըդ մտնի կը պարն ու տորտոզա կը։ Սաաններքը կաշեն օր ասիկ կուզ ունի, խնդան կը վրան ու ձենները ցկեն կանչեն կը.

Կուզը կըզին,
Կուզմ՝ ա կըզին,
Կուզե-կուզ։

Ասիկա միամտութենով անոնց հետ կանչե կը.

Կուզը կըզին,
Կուզմ՝ ա կըզին,
Կուզե-կուզ։

Խորոզխոսուն պարեն օր գելլեն, կըսեն. «Աս լավ մարդ է, իրեն արատը վրան չառավ, էկեք ասոր կուզը վերցնենք»։ Կըսեն ու կուզը վերցնեն, գելլեն կերթան կը։

Առավոտուն ասիկ մութեմութ գէլլե վազզե կը դրկից ջախջպանին քովը, նախլ կէնե, թը իրիկունը սատանեքը էկան կուզը վերուցին։

«Ատ լավ բախտի ես տիրացե,— կըսե մեկալ ջախջըպանը, օր ինքն ա քիչըմ կուզյան է էղե,— հըմը ափսոս օր կուզտ քոքեն չեն հանե, սատվածտ սիրես, թող իրիկունս ա ես պառկիմ ջաղացքտ, բյալքիմ՝ իմ կուզս ա վերցնեն։

— Լավ, կըսե, պառկի։

Իրիկվընե աս ջախջըպանը գուգա ասոր ջաղացքը բյաքլայե կը։ Բյաքլայե, բյաքլայե, հոգին գելլե։ Դեջտան գեջ սատանեքը գուգան. ջաղջին օրթան պարը ղուռմիշ կէնեն։ Քիչմ՝ եաև ասոր ա կառնեն պարը թռչին ու կանչեն կը.

Կուզը կըզին,
Կուզմ՝ ա կըզին,
Կուզե-կուզ։

Աս ջախջըպանս ա միտքը թրեր է օր կուզը քոքեն հետ վերցնել տա, ճվա կը.

Կուզը կըզին,
Կուզմ՝ ա կըզին,
Կուզմ՝ ա ավելի
Կուզե-կուզ։

Սատանաների փոթկունը պրծնի կը, «կուզմ՝ ա ավելի գուզե» կսեն ու բերեն առաջի վերցուցած կուզը ասոր մեջքին դնեն կը։ Ասիկ գըլլի էրկուղաթ։ Ծափ զարնեն, խնդան կը վրեն ու թողնեն կերթան։

Առավոտուն ասիկ քիթը կախ գելլե կերթա առաջի ջախջպանին գանգատ կէնե գլխուն էկածը։

— Ի՞նչ էնեմ, կըսե առջի ջախջպանը, ինծի ասպես ըրին քեզի ա ատպես։

9

Կուռնաշետ Մուսիկենք տեսնին կ'օր դիշերները իրենց ձիուն յալը դայիմ հուսեն կը. գիմանան օր սատանեքը գուգան հեծնին, գոմին մեչը քշեն կը։ Բերեն սև ձուլ քաշեն կը ձիուն վրան։ Սատանան գուգա հեծնի՝ կպնի կը ձիուն։ Սապախտան գուգան օր ձին արուն քրտինք է մտեր.

սատանամ՝ ա վրան նստեր է։ Մախաթմ՝ բերեն շուլուլեն կը միսը, տաք ջուրը լըլեն կը ձիուն վրան, սատանան վրայեն պրծըցընեն կը։ Օխթը տարի իշու պես դատեցնեն կը։ Օխթը տարին օր ըըմըմի կը, սատանան մե պղտի աղչկանմ՝ աղաչե կը. ըը՝ մեմ՝ իսի մախաթը գյորսես Հանե, ան ալ չգիտութենեն Հանե կը։ Օսահաթ սատանան գուգա կայնի կը օդին գլոխն ու կանիծե, ըը ձեր տունը դեքը պակաս չըլլի, ու զայպ կանցնի։ Տեյմ օր հիմի անոնց տնեն դեքը անպակաս է, ինչքան իստըկեն, չի իստըկի։

Ն

Պապիս Հարը ինչըղ գլլի, մե օրմ՝ սատանամ՝ բռնե կը, ասեղը դյոշը շուլուլե բերե կը տուն։ Բերե կը տուն, օխթը տարի բանեցընե կը, հըմը ինչ օր կըսեն, անիկ բյարսը կէնե, կըսեն՝ գընը թեզմ՝ ջուր բե, կերթա յազմ ուշանա, դարտակ գուգա կը, կըսեն՝ մի էրթա Հաց բերե, կերթա թեզմ՝ բերե կը։ Օխթը տարին օր ըըմըմի կը, աս սատանան պզտի աղչկանմ՝ կըսե կը ըը՝ ինչ գըլլի, իսի ասեղը Հանես։ Աս ա չգիտութենե Հանե կը։ Օսահաթ կըսե կը ըը՝ ձեր ամիններուն մե կուշտը խոռ (պակաս) ըլլի, ես ա ձեր բորամին (սերունդ) թաթուլա ըլլիմ, կըսե ու կ'ու պաթմիշ գըլլի. տեյմ օր հիմի ա մեր ամիններուն մե պռունկը կոտռի կը։

— Հազր մեր տունը հեչ կճուճ սաղ չի մնա։ Իմ պապս ա մե սատանամ՝ է բռնե, կենա օխտը տարի դատեցըրեր է, եփ օր ազատվեր է՝ անիծեր է ըը՝ ձեր տունը սաղ կճուճ չմնա։ Ու տեյմ օր հիմի մե պուտուկմ սալ չի մնացե։

Ը

Մե օրմ՝ չախչըպանը ջաղացը մեննակ կը մնա, մեմ ա տեսնի կ'օր մե սատանամ՝ էկավ, դյում դյուղ առաջը կայնավ։ Չախչըպանը վախեցավ ետ փախավ, սատանան ա ետ փախավ ու տնազն էկավ։ Ետև հարցուց ըը՝ անունդ ի՞նչ է։

— Ես ընծի,— ըսաց չախչըպանը,— քու անունդ ի՞նչ է։

— Ես ընծի,— ըսաց սատանան։

Չախչըպանը տեսավ օր սատանան իրեն տնազը կէնե, վերուց ձեռն ու վրան գլոխը ձեռոտեց։ Սատանան ա վերուց ձեռն ու խելառլամա շրջնց իրեն գլխուն։ Փարա չէր տվեր, օր սիրտը ցավեր։ Ետև չախչըպանը վերուց կրակն ու մոտեցուց օտվներուն։ Սատանան ա օսահաթ խլեց կրակն ու օտվներուն չմոտեցուց, կրակն առավ ու բոցը տվեց ջանը։

Սատանան հիմի վեր-վեր կը թռչի ու ի՞նչ կը ճվա, ձենը աշխարք բռներ է։ Աւտոր ձեննեն սատանեքը թափան ու հարցնեն կը թը՝ վեվ էրավ։— Ես ընծի, ես ընծի,— կըսե սատանան ու պատեպատ կը զարնվի։

— Դու քեզի օրա, տե՛ գընը քաշե,— կըսեն սատանեքը ու թողեն քաշվելն կը։

Թ

Ջաղացն օր հնարեն կը, չախչախ չեն գինա կախե, բռով-բռով ցորեն պիտի լըլեն հըլուվիկե, օր աղա։ Մե օրմ՝ ինչղ գըլլի, ջախջըպանը կըսե կը թը՝ տղեք, էսօր ջաղացը անպես լավ ալուր աղաց օր։ Ատ վախթն ա սատանան դուռը գըլլի, ոտքը տնկե կըսե. «Մըկըր չախչախ կախեցի՛ք»։ Օսահաթ սատանի ոտքը լման չախչախմ՝ շինեն կախեն կը, ջաղացքը ֆոըլ, ֆոըլ դառնա կը։

Ժ

Ինչղ գլլի փուխարայիմ մեկը սատանայիմ՝ յաչքը մտնի կը։ Ասիկ վերցնե աս՝ ախքըտին օսկիմ կուտա կը, ու կըսե կը թը՝ աս տար մանտըռե, քեզի համար խարջե, հըմը մե փարամ՝ քեսիտ տակը թող, ան ալի կը լցվի։ Ախքատը կառնե կը օսկին, տանի սառաֆին բողմիշ կէնե, մե փարեմ ցկե կը քեսին տակը, մնացածը խարճե կը։ Քիչմ կանցնի, կաշե օր քիսան օսկով լիքն է։ Ալ աւտոր քեֆին քեֆ չի հասնի, ղոնախանեք կը շինե, կուտե, խմե, քեֆին կաշե։ Սատանան գուգա աւտոր կըսե կը թը՝ աս քու փարաներետ ղրկցներուտ ա տու, թող անոնք ա քեզի պես հարստանան, ուտեն-խմեն, քեֆ էնեն, սալթ քուր ու ախպար ջոկեն։ Աւտոր ա ջանին մինիաթ, իրենեն ինչ կերթա, կանչե կը ղրկցներուն, լավամարթի գլլի, ամենքին մե մե օսկի կուտա ու սորվեցնե կը, թը՝ մե մե փարա քիսանեբուտ մեջ թողեք, օր կենա լցվի։ Անոնք ա կուրախանան, ասոր հետ ախպար գլլին, կուտեն-խմեն, քեֆերուն կաշեն, ալ պասն ինչ է, ժամն ինչ է։

Ըշտը իսի ֆարմասոններն ա օր կան, ինչ է, ասոնց ջնսեն էն, վար անցնին բիլաքիմ, աշխարհք մունաըռեցին։

ԺԱ*

Ֆուխարայութենը քիչմ՝ սխմեր էր, տունը քանիմ՝ ջվալ կորկոտ ունեի, բարձա ձիուն, տարա Ախալցխա, օր ծախեմ։ Տարա Ախալցխա, ձին քաշեցի խանը, կորկոտը տարա մեյտանը, կամաց-կամաց ծախե-

* Պատմողը սաքխացի Նազկար Մկո ձերունին էր։

ցի, կոտմ՝ էրկուս մնաց։ Աս էրկու կոտի համար տեյ իրիկուն բյաքլայեցի, մյուշտարի չէկավ, օր ծախեի, սապախտան մութումութ էլլեի գալի։ Աշեցի օր մյուշտարի չի գա, նստա կորկոտին վրան ու ձեռքս դրի չյանկիս, քիչմ՝ կնքվարտեցի։ Դադրած հարբած մարդ, թեզմ՝ քունս տանի՝ քնիմ։ Մեմ՝ ա մե սև մարդմ՝ ձեն տվեց ինձի, ըսաց. «Ի՞նչ ես իստեղ քնե»։ Ջարթնա աշեցի օր էփեի դիշեր է անցե, աստղերն էլեր են, մարդ-մուրդ քաշվեր է իրեն տունը։

— Իտիկ ի՞նչ է,— հարցուց առաջս կայնած մարդը։

— Հեչ,— ըսի,— կորկոտ էի բերե ծախելու, քիչմ՝ մնացեր է, չծախվավ, օր էլլեի էրթայի։

— Է՛, ի՞նչ գուզես, չեղավ, չեղավ, ատ ա ես առնեմ խըլըսիս,—ըսեց։

— Ինչ կուտաս տու, ըսի,— աստծուն հայտնի է, օր կոտը մանեթիմ՝ էմ ծախե։

— Լավ,— ըսաց մարդը,— չալկե էրթանը, տունը մոտիկ է, դարտըկե, փարեքն առ դընը։

Էլա կորկոտը շալկեցի, ընկա ատոր էտըթին գնացի։ գնացինք էլանք ռապատը, գալըստընններուն մեջ մե մաղարամ՝ մտանը, աշեմ՝ իրեք հատ արծըրե մուշալլաներ վառին կ'ու արևի պես լուս կուտան։ Մաղարին մեջ մարդ չկար։ «Իստեղ քիչմ՝ նստե,— ըսաց մարդը,— այմի ազան գուգա փարեքա կուտա»։ Կորկոտը դրի վար, քարիմ՝ վրա նստա։ Քիչմ անցավ՝ մեմ ա դավուլ-զուռնի ձեն էկավ. «էս լավ է,— ըսի,— ըլլի օր հարսնիք ըլլի, զաթի անոթի եմ, լավմ՝ կշտանամ կը»։ Մեմ՝ ա հարս, աղջիկ, տղա խաղլեն խաղլեն եկան, «բարով, կորկոտ ախպեր» ըսին ու մե մե բուռ առան բերննները ցկին։ Նոր օր, ըսի, խերը գտա, մե մե բուռ առնելեն բիտտուն պտի նազդեն։ Ղորթ ա օր, ասոնք կորկոտս իստակ իստկեցին, էլան ձեռք ձեռքի բռնեցին ու թռան։ Ետև նստան օր հաց ուտեն, ինձի հետ էկող մարդը մե մենծ լանգյառիմ՝ փլավ լցեց բերեց ինձի, օր ուտեմ։ Անոթի փորս վեց-վեց կէնե, վրա ընկա, օր ուտեմ։ Ջանչս կղարնեմ տանիմ կը բերանս, կաշեմ՝ բան չկա, փորս բան չի էրթա, ըլլի օր, ըսի, բունս զլոխս է, չեմ կրնը ուտե, աչքերս սրբեցի, գյառգյալամիշ էղա, աշեցի օր փլաֆը ալի անպես գլխած առաջս է։ Ավուճմ՝ զարկի տարա բերանս, ծամեմ կը, կենա բերանս բան չկա։ Աշեմ՝ անոնք հավար-հավար կուտեն։ Ալ ամոթուս ձեն չհանեցի։ Մի քիչմ՝ անցավ, ան մարթը լյանգառովմ՝ թիրիթ բերեց։ Ըսի՝ աս լավ է, մսերը կտոր կտոր կառնեմ, կոծեմ կը, բյալըթ բերանս բանմ՝ մտնի։ Առա մսի կտորը, տարա բերանս, ծամեմ կը, ակռեքս իրար կը դիպչի, ցորեն հատիմ՝ չափ բան ա փորս չի էրթա։ Ջարասըզ բերանս սրբեցի, անոթի ծառավ ետ

քաշվա. անոնք կերան խմեցին, էլան քիչմ ա թռան ու քաշվան գնացին։ Մարդը կենա էկավ, ըսաց. «Գիշերս ֆոս հանգստի, սապախտան ել, փարաներտ առ գընը»։ «Լավ,— ըսի»։ Բերեց մե բմբլե միտարմ՝ ցկեց, օր մեջքես հետ, յորղանն ա իստակ, փափո՛ւկ։ «Ո՛ւֆ,— ըսի,— ասպես գողնքի մեջ հնչ չեմ պառկե» Թեզմ՝ շորերս հանեցի, չիփ չպլխցա, ընկա գողինքը։ Գողինք ընկնելիս իմացա, կողքս էկավ քարին, տեյմ՝ օր հիմի ա ցավի կը։ Էլա աչքերս սրբեցի, հալվըներս հագա, քարին վրան կուշ էկա ու տեյմ օր լուս նյա քուն, նյա արթուն մնացի։

Սապախտան աշեմ ան մարդը կեն էկավ։ «Քալե, ախպար,—ըսաց,— քալե փարաներտ առ գընը»։ Էլա հաղրվորա, օր էրթամ, ըսեց. «Ասպես գընը, զասապխանի առաչը մի սև շունմ՝ կա, քեզի օր տեսնի քուչուկլյամ֊իշ գլի, գընյի առաչտ կէրթա, անոր էրթիեն գնա, ան քեզի աղային քովը տանի կը, աղան քու փարեքտ կուտա»։

Գլուխտ ուտե փարաներտ,— ըսի մտքիս մեչը,— ձեղնեն վեվ է խեր տեսե, օր ես տեսնիմ, լավ է օր հոգին առնեմ ասոնց ճանկեն փախչիմ աղատիմ։ «Լավ, ըսի ատոր, կերթամ»։ Էլա դուր, ճամփաս զասապխանի կողմն էր, ըսի՝ ատամ հիմի, անցնինք զասապխանի առջեն աշենք ի՞նչ գլի։ Էկա զասապխանի քովը, աշեմ՝ մե սև զաղարմ՝ վազղեց ոտվիցս փաթթվավ։ Թռավ վրես, քուչուկլյամիշ էղավ, եև ա առաչս ընկավ ու գնաց։ Միտքս փոխվավ, ըսի՝ տեսնինք վերջը ի՞նչ պիտի ըլլի, ընկա ատոր ետևն ու գնացի։ Գնացի, գնացի, մեմ ա տեսնիմ մաղարեյեմ՝ մե մաղոտ մարդմ՝, կրունկները առաչը, դուս էլավ, ըսաց. «Ինչքան պտի հասնի քեզի»։ Ըսի. «Երկու մանեթ»։ Հանեց էրկու մանեթս տվեց։ Փարաներն առա, դարձա հարցուցի Բը՝ աս շունը ի՞նչ շուն է։

— Աս շունը, ըսաց, հարամ ու շատ բերող է, կայնի կը զասապխանի առաչը, Բյակար զասապը խափեց, ավել փարա առավ, ատ փարան վերջընեն փերե կը ինծի, Բյակար միս առնողը խափեց, ավել միս առավ, ան հավել առածը կառնե գուգա կը։

ԺԲ

Դամուրչուն մեկը սահաթ գլոխ «Նալլաթ քեզի սատանա, նալլաթ քեզի սատանա» կըսե կը։ Սատանի հերսը գելլե, մարդու զպալով գուգա ասոր գյուքանը, կըսե.

— Ամի ջան, ինծի աշկերտ չե՞ս վերցնե։

— Ինչի՞ չէ, զուրբան, արի,— կըսե ուստան։

Ասիկ ատոր քովը աշկերտ կմտնի, նստի կը մե քյոշամ, կառնե չաքյուճը ձեռքը, Բըխկ-Բըխկ բան շինե կը։ Օրմ՝ էրկուս կանցնի, ասիկ իրեն

ընկերին խրատ կուտա կ'օր գա, էրկուսով մե դյաքմ՝ խաղան աս ուստին գլխուն։ Աս սատանան փիր էխտիարի ղպալով գուգա մտնի կը ասոր խանութը, կըսե.

— Աստե՞ղ ջահիլցնեն կը մարդու։

— Ի՞նչ,— կըսե ուստան,— մարդն ա ջահիլցնեն. նոսըրցուցե՞ր ես, ինչ է։

— Ինչի՞, ինչի՞,— կըսե աշկերտը,— ես ֆոս չե՞մ, ես ջահիլցնեմ կը։

Ուստի խելքը հեչ ատեղ չի էնե, հըմը շատ օր կը զոռեն, կըսե. «ինչ կէնես, էրէ»։ Ասիկ զավիքն ախել կուտա, կրակը թևղցնե կը, բերե էխտիարին ձեռքը-ոտքը կապե դնե կը օճախը. քիոցմ՝ գործլի ա լըլե կը գլխուն, կըսե ուստին. «Անցի փքսին էտևը փչե»։ Ուստան փուքսը փչե կը ու էրկնցած կաշե թը խելոտուկը ի՞նչ կէնե։ Կաշե օր էխտիարը վառավ մոխիր կոռավ, մեմ՝ ա քյոդին միչեն մե ջահիլ տղամ՝ թռավ կայնավ օճախին գլոխը։ Ուստան զարզնդի կը։ Սաղ աշխարհ ձենձրնավի կը թը ֆիլան դամյուրչուն խանութը փիր էխտիարներուն ջահիլցրնեն կը։ Աս օր ձենձենավի կը, մե թուջարմ (մեծ վաճառական) բառնա կը ձիանը օսկիարծաթ, գուգա աւոր խանթին առաչը դիչնի, կըսե. «Ուստա իմացեր եմ օր դուն էխտիարներուն գյանջըցընես կը, տիա աշխրքի օսկին էմ փերե քեզի, օր ինծի ա գյանջցնես»։

— Լավ,— կըսե ուստան,— մարդիկա թող էրթան, էգուց գան քեզի առնեն էրթան։

Աս թուջարը օսկու բեռները վար թափել կուտա, մարդոցը ճամփե կ'ու նես գուգա։ Նես գուգա, աշկերտը կըսե ուստին, թը՝ սաղ աշխարհքը խոսի կը թը՝ մարիֆյաթը աշկերտինն է, ասոր ա դուն գյանջըցու, թող տեսնին, օր քու ձեռքետ ա բանմ՝ գուգա։

— Լավ, հըմը,— կըսե ուստան,— ձեռքես զորթ չի դա։

— Ի՞նչ է օր, ոտքը-ձեռքը կապե դիր օճախը, քիոցմ՝ գործելի ա լից գլխուն, ես ա փուքսը կը փչեմ, բիչմ՝ պիտի ճվա, բոռա, գյանջընա էրթա։

Ասոր խելքը պառկի կը, բերե թուջարին ոտքն ու ձեռքը ամուր կապե ցկե կը օճախը, քիոցմ գործելի ա լըլե կը գլխուն, ինքն ա կայնի կը գլխուն վերի թին։ Աշկերտը կանցնի փքսին ետըթին ու ի՞նչ կը փչե. բոցը էրկինք գելնե։ Ախճ էխտիարը ճվա, բոռա, շատ չապալամիշ գըլլի, խյուլասա վառի մոխիր կը կառի։

Ուստան կաշե օր էխտիարը մոխիր կոռավ, շվարի մնա կը։

— Ծո՜, աս ի՞նչ էղավ,— կըսե ու ծնկներուն կը զարնե։

Աշկերտը խընդրելեն գուգա առաջ, կըսե. «Էղա՜վ, էղավ, դուն ինչ էնես, շատ էխտիար էր, կրակին չդիմացավ»։

Ուստան օր շատ տրորվի կը, աշկերտն անոր ումուտ կտա թը՝ դարդ մի էնե, ես քեզի պրծըցնեմ կը, մեմ՝ ա բիրտան զայպ կանցնի։ Ուստան մոլըրի մնա կը։ Մութեմութանց մարդիկը գուգան կըսեն. «Ո՞ր է մեր աղան, գյանջըցուցի՞ր»։

Ուստան կարկըմելեն կըսե կը, թը՝ ձեր աղան փիր էխտիար էր, կրակին չդիմացավ, վառավ։

— Վա՜յ,— կըսեն,— մեր աղային գյանջըցնելու տեղ սըպանեցի՞ր։

Ատոր բռնեն տանին կը թաքավորին, գանգատ։ Թագավորը սլեստի կ՝էնե գիմնա, հրամայե կ՝օր ատոր տանին կախեն։

Տանին կ՝օր կախեն, չվանը ցկեն կը բուկը, էն է օր պիտի խեղդեն, սատանա աշկերտը քառսուն ջուխտ չարուխ ումուդին ցկած բիրտան տնկվի կը առաջը։ Ուստան օր ատոր տեսնի կը.— Պրծցնեի՞ր պիտի, աստծո՜ւ խաթեր, օգնե,— կըսե։

— Խտեղ աշե, խտեղ,— կըսե սատանան,— քառսուն ջուխտ չարուխ եմ մաշե, օր քեզի խտեղ եմ հանե, ալ ի՞նչ պրծըցընել։

* * *

Ամեն մի երեխա ունի մի պահապան հրեշտակ, որ բևերը պարզած կանգնում է մանկան սնարին և ձեռի կարմիր խնձորով զբաղեցնում նրան։ Սա պահպանում է նրան չարից, կտրում է նրա եղունգները, երբ երկարում են։ Իսկ երբ երեխան փոքր-ինչ մեծանում է, այնպես որ կարողանում է մորը լավ ճանաչել, պահապան հրեշտակը խաղում է նրա հետ, մնաս բարով ասում և սավառնում երկինք։

Յուրաքանչյուր մարդու երկու ուսերի վրա էս կանգնած են մի-մի հրեշտակ։ Նրանցից մինը, որ կանգնած է աջ ուսին, բարի է և գրում է ձեռի մատյանում այդ մարդու գործած բարի գործերը, իսկ ձախ ուսին կանգնածը չար է և գրում է նրա չար գործերը։ Վերջին դատաստանին այս երկու մատյանները միմյանց հետ համեմատելու են, և որը որ գերակշռեց, այն կողմին պատկանելու է մարդը։

Ժողովուրդը հավատում է և տան պահապան հրեշտակի, որ բնակվում է յուրաքանչյուրի ամբարի վրա։

Կան և տաճ հացի բարի հրեշտակներ, որոնք հաց թխած միջոցին սավառնում են թոնրի շուրջը, և եթե մեկը նեղացնի հացթուխին, սրանք խփում են նրան։

Կա և թթխմորի ոգի, որ թթխմորը վերցրած և խաչակնքած միջոցին յոթ անգամ երուսաղեմ է գնում, լույս գերեզմանը համբուրում և վերադառնում դուռը և ընդունում նրան։ Սրա մասին մի կին պատմում էր.

«Թաժա հարս եմ, կերսանցս տունը խմոր կը շաղվեմ. շաղվեցի, շաղվեցի, ձունն իմ գլխուս, ի՞նչ գիտեմ թը ԹԹխմորը գլխանց պիտի վերցվի։ Մեմ՝ ա աշեմ՝ կեսուրս էկավ քովս, ըսաց. Ըխչի, ԹԹխմորը խաչակնքեցի՞ր»։ Գլխով երի ԹԸ՝ հըլը չեմ վերուցե։— Վո՜ւյ, ֆողը գըլխուս, էրավ կեսուրս ու կարմիր կարմրավ. «Ըխչի, ըսաց, քու մերա, ձունս գլխուն, քեզի հէչ բան չէ սորվեցուցե։ Չիտե՞ս օր ԹԹխմորը գըլխանց պիտի վերնա, խաչակնքվի, վար դրվի, օր էրթա քյարվընին հասնի, մեկալ ԹԹխմորներուն հետ օխտը ժամ Երուսաղեմ էրթա, լուս գերեզմանը համբուրե։ Ախր ասքան օր ուշացուցիր, չէ՞ օր հիմի կերթա, ետ գալողներուն մեղնեն գանգատ կէնե ԹԸ՝ անքան թաթակիշ եմ կերե, օր թևերս կոռռեր է։ Իրիկվան ա օր պահապան հրեշտակը գա դուռը ծեծե, ԹԸ՝ ԹԹխմոր, դուռը բաց, չպիտի բանա, ըսե պիտի ԹԸ՝ անքան թաթակիշ եմ կերե, օր թևերս կոռռեր է, չեմ կրնը անդես էլլե»։

Բացի հրեշտակներից ժողովուրդը հավատում է և այլ ոգիների, որոնցից գլխավորն է ջրային ոգին, ջրի աղջիկ կամ փերի ոգին[39]։ Թե որպիսի կերպարանքով է ներկայացնում նրան ժողովուրդը, հետևում է հետևյալ պատմությունից։

«Դարունքին մալ կարծեի, մեմ ա աշեմ՝ մե պոյով պուսով, ըորնտիկ աղջիկմ՝ էկեր մալի քովը կայներ է։ «Ըխչի, ի՞չ գուզես» ըսի, ձեռ չհանեց։ Կաշեմ, լուսն էրեսեն կաթե կը։ «Մաաո՜, ճվացի ընկերիս,—արե իսի աղջկան բոննենք»։ Աղջիկն օր աս իմացավ, թողց ու փախավ։ Ես ընկա ետևը, ան կերթա, ես ետևեն. աստից անտեղ հեռու չի ըլլի ինծեն, գիտես, տիրացու ջան, իսպես կէնեմ թե բոնեմ (վրա է ընկնում), չեմ կրնա, կենա առաջ կանցնի։ Յազմ տեղ ատոր ետևեն վազեցի. մեր Ալեքն ա մալը գուգար, տեսավ օր մե աղջկանմ՝ ետևեն վազեմ կը, ճվաց. «Ատիկ փերի ղրկի գըլլի, Հիսուս Քրիստոս ըսե»։ Աս ըսելուն պես աղջիկը զայկն անցավ։ Հըմը ատ թերմշի աղջիկը անպես սիրուն էր օր՝ բոնեի, ալ հացն ընչուս էր պետք, ջուրն ընչուս։ Պոյով, պուսով, շեկ-շեկ մազերը տեյ օտվիցը, ուսերու վրայով բաց ցկած։ Գիտե՞ս, տիրացու, հալալ չուներ, գլխուն մազերը ծածկեր էին սաղ գյուղատան։ Պիճիլի թուքլիկ օտվիքը օր գետին չէ՞ր դնե, գիտես թը կանանչ կը բուսներ տեղը։ Թշերը կարմիր՝ մեկ-մեկ խնձոր, ունքերը կամար, աչքերը խոշոր, բերանը պըզտիկ, պոկնները վարդի թեր, գիտես թը ատոված բան չէր ունեցե, դալամ առեր ատոր նշխեր էր»։

[39] Այս հոդվածը տպվել է „La revue des traditions populaires"-ի 1895 № 1, երես 1—9։

Երևակայելով փերու ղղուն որպես գեղեցկության կատարելատիպ, ժողովուրդը նրան մարդկանցից սերած և աստվածությունից անիծված է համարում։

Ահա այն պատմությունները, որոնցով ժողովուրդը բացատրում է նրանց ծագումը։

Ա

Քրիստոս օր տասնորդ ժողվեր կը, շատերը լավ տղոցն ու աղջիկներին պահեին կը, օր ատոնցեն տասանորդ չտան։ Օր ժողվեց պրծավ, տեսավ օր բիտտուն դարձըվորածներ են, հասկըցավ թը բանը յուր տեղն է, լավերը պահեր են, դարձավ ըսաց թը՝ ալ չկա՞։ Հսին թը՝ չէ, չիքը «Թը կա, չիք դառնա» ըսաց Քրիստոսը։ Օսահաթ ատ պահվըտածները չիք դառան, աներևութացան։ Տեյմ՝ օր հիմի ա ատոնք կան, կուտեն խմեն, աճին բազմանան կը. եփ օր ա սրտերն ուզե, մարդոց էրևին կը։

Բ

Աստու հրամանով օր նոյը տապանը մտավ, աստված հրամայեց, օր տապանի մեջը սուրբ մնան։ Եղավ օր նոյի քամ տղան սուրբ չմնաց, ատորեն եղան մե տղամ՝ ու աղջիկմ։ Եփ օր ջուրը քաշվավ, աստված տապանի դուռը բացեց, բիտտուն մեկ-մեկ դուս էլան, հըմը ատ էրկու տղին ամոթնեերուն նեսը թողին։ Աստված դուռը կայնած էր, հարցուց թը՝ ալ մարդ չմնա՞ց։— Չիք, ըսին։— Թե կան, չիք դառնան,— ըսաց աստված։

Ան սհաթին ատ ախպարն ու քուրը աներևութացան։ Ատ փերի ղղիներն, օր կան հիմի ատոնց տղաքն են։ Ատոնք իսկ մարդու պես են, հըմը ուզենան՝ կէրևնան, ուզենան՝ չեն էրևնա։

Փերի ղղիները բնակվում են գետերի մեջ, որտեղից շատ անգամ դուրս են գալիս նստում գետի ափին, ժայռերի կամ մոտակա մի աղբյուրի քարի վրա և ոսկե սանրով սանրում իրենց շեկիկ, մինչև ոտները հասնող մազերը։ Սրանք շատ անգամ երևում են երիտասարդների և նրանց հետ սիրվում։ Մի քանիսն էլ կանացի հանգերձով գնում են գյուղ և առանց հայտնելու, թե փերի ղղի են, ապրում են մի երիտասարդի հետ, որից և ունենում են որդիներ։

Այս կետերի մասին պատմում են հետևյալ դեպքերը.

Ա

Օվա Թավթա գեղեն մե տղամ՝ մե օրմ՝ Դիմգիմու ձորով էրթցած

վախտը էրկու լսի կտոր աղջիկ գուգան, ձեռեն բռնեն կ'ու քաշեն տանին կը ջրին տակը մե լավ օգամ՝։ Տանին կը ադ զարդըբուն օգան, նստեցնեն կը, հալվա, գաթա, Բյուրլի Բյուրլի եմակներ հրամցընեն կը, հետը յարանութեն կէնեն։ Տղան հասկնա կ' օր ատոնք փերի ղղի են, դողը բռնե կը։ Նստի գուլա, աղաչե կ' օր իրեն թողնեն էրթա տուն։ Ատոնք չեն թողնե, մե սաղ շաբաթմ' գուրգուրանքով, զոռով ատոր պահեն կը ատեղ։ Վերջը տեսնին կ' օր տղան զաֆթ չիլլի, գուզե օր էրթա, կըսեն. «էրթաս օրա, փարի ետ գուգա՞ս»։ Անիկ խոսք կուտա, օր բանիմ' օրեն գառնա գա։ Ատ փերի ղղիները բերեն յազմ' արծթե կոճկներ, ջավահիր, օսկի կուտան կը ատոր, ջրեն դուս կը հանեն ու ճամբու կդնեն։ Տղան ափալ-թափալ տուն գըչնի, պատմե կը թը փերի ղղիները Գիմգիմու ձորը իրեն բռնեցին տարան իրենց օգան, շաբաթմ' պահեցին, վերջն օր ինքը շատ լացեց, աղաչեց, թողին օր էրթա, քանիմ օրեն ալի գա։ Քովի արծթե կոճկները, ջավահիրն ու օսկիներն ա ցըցընե կը ու կըսե կը թը անոնք տվին։ Սաղ գեղը ձեռնձեռնվի կը առ բանը. ամենքն ա գուգան փերի ղղիներուն տվածները տեսնին կը։ Տղին ա լավմ' մուղաթ կենան կ'օր փերի ղղիները կենա չտանին։ Ամիսմ' էրկուս կանցնի չի անցնի, աս տղան խելըռի կը։ Սաղ էրկու տարի խելառ պարտի, ջրերու ղրաղը նստի կանչե կը։ Մե օրմ' ա բիրտան գըչնի ջուրը խեղդի կը։

ԲՐ

Մե բռունտ տղամ' պատկվի կը. սաղ տարիմ' կնկանը հետ սիրով ապրին կը։ Հնձի վախթը կերթան իրար հետ հնձեն կը արտը։ Շոգն օր կը զոռե, գիշերն գյուղը իրար հետ լողնան կը։ Քիչմ' լողնան կը չեն լողնա, բիրտան կնիկը ջրի միջեն զայլ կ'անցնի։ Կնիկ ատիին, կնիկ անտիին՝ կնիկ չըկա։ Մարդը գուգա Քյոսա տերտերին քովը։ Վեցհազարյանը ուշել կուտա։ Քյոսա տերտերը կըսե կը թը՝ տարիմ' քովս բազիհավա ծառայե՝ կնիկա գտնիմ։ Ատիկ կնկանը սիրուն սաղ տարիմ' առանց մե քոռ կապկիմ' ծառայե կը։ Տարին օր թըմըմի կը, տերտերը ատոր գիրմ՝ կուտա ու կըսե կը թը՝ առ աս գիրը մութումութ գընը Ջոպնի կարմնջին վրա կայնի. գիրը էրկու մատիտ արան բռնե. փերի ղղիքը գուգան կ'անցնին, ան վերջինը քուկտ է, գիրկը տղամ' կա, խլե տղան ջուրը ցկի ու իրեն առ գընը։ Ատպես ա կէնե։ Մութումութ կերթա Ջոպնի կարմնջին վրա գիրը էրկու մատի արան բռնե կայնի կը։ Փերի ղղիքը գուգան կանցնին։ Ան վերջը մեկմ' գուգա, գիրկն ա տղամ'։ Ատ մարթը ճանչե կը ատոր, վաղղե տղան խլե ջուրը ցկե կ'ու իրեն կառնե կերթա։

«Գյուրմուրդա գեղը Վարթան անունով մե աղքատ մարդմ՝ գլխի։ Աստոնք մե պզտի արտմ՝ կունենան, անմեն օր կերթա արտը պառկի կ՝ օր մուգաթ ըլլի։ Մե օրմ՝ ա պառկեր է, կաշե օր էրկու փերի ղղի էկան քովը պըպըզան։ Մենծը վերուց ըսաց թե՝ այսի աղջիկս քեղի կուտամ, ինչ ա օր պակասութեն ունիս բերեմ կը, իրար հետ ապրեք, հըմը մարդու չըսես, թյակար ըսես՝ ոչ հոգին աստծուն տաս, ոչ մարմինտ հողին, տեյմ՝ օր ես ձեռքս կրծքիտ դնեմ։ Ասիկ ռազի գըլլի, փերու ղղուն սիրե կը։ Ինչ ա օր սիրտը գուզե, ատոր մարը բերե կը։ Յազմ՝ վախտ ատոնք սիրով ապրին կը, իրեք տղա ա կունենան։ Մե օրմ՝ ա Վարթանին կնիկը էրթիկը աղուն կը փռե, տեքերկնկանն ա կանչե կ՝ օր թնդրին ջուրը հանե։ Ատ վախթը Վարթանն ու փերի ղղին նեսը սիրվին էղե։ Տեքերկնիկը նես չի էրթա թը՝ մարդ ու կնիկ են նեսը, կնիկն ա էրթեցեն ձեները գիմանա՝ գիտնա կը թը մարդը տեքերկնկանը սիրե կը։ Գուգա մարդուն կառնե ձեռք անպես թուք ու մրե կ՝ օր՝ շունն ուտե՝ կը կատղի։ Մարդու հոգուն կը հասնի, կըսե կը թը՝ «չէ, չէ, գլխետ բաներ գուս մի տա, տեքերկնիկա չէր բովինս, փերի ղղի էր»։ Թը՝ ի՞նչդ։ «Ասպես, ասպես բան. արտը պառկած էի, մարը բերից տվեց ընծի, խոսք ա տվեց օր սրտես անցածը բերե»։ Կնիկը հանդրտի կը, հըմը աշե օր խեղճ մարդը մրեն էլավ մրջուրն ընկավ։ Փերի ղղին ալ հեչ քովը չեկավ, ինքն սկսեց բարակ մանել, գողինը ընկավ, հիմի նյա կը մեռնի, նյա կը լավնա։ Մարդը հասկըցավ, օր փերու անեծքը բռներ է, աղաչանք պաղատանք կէնե, օր փերուն սիրտը կակղնա, գա քովը։ Խյուլասա փերու ղղին ընկերտանքը զոռեն կը թը՛ մեղք է, ղընը քովը։ Ասիկ կառնե իրեն իրեք տղաքը, գուգա ատոր քովը նստի, ձեռքը դնե կը սրտին։ Մարդը օ սահաթ հանգե կը»։

Ժողովուրդը երևակայում է և տղամարդ փերիներ, որոնք սովորաբար ամուսնանում են փերի ղղիների հետ։ Սակայն որոնցից մի քանիսը բացառություն կազմելով, մարդկանց հանգերձներով գալիս են գյուղ, ամուսնանում մի գեղեցիկ աղջկա հետ և միասին ապրում։ Կանայք հավատարիմ են լինում նրանց, քանի որ չգիտեն, թե նրանք փերի են, բայց երբ իմանում են, ամեն կերպ աշխատում են սպանել նրանց, այրելով թոնրի մեջ։

Այս մասին ևս կա հետևյալ պատմությունը։

«Վախտովմ՝ մե լուսի կտոր աղջիկմ՝ ջուրը էրթցած վախտը ամեն անգամ տեսնի կը մե ըռնտիկ տղամ՝ աղբրի քարին նստած։ Մեմ՝ էրկուս, ատոնք իրար վրա սեր կապեն կը։ Իրեք տարի սեր քաշելեն ետև պսակվին

կը։ Գիշերը եփ օր տղան ձեռքը աղջկա վրա կը դնե, աղջկա ջանը դող գելլե. գիտես ըը փշերը ծակծկեն կը։ Մե օրմ՝ ա տղան լողանալու գլլի, աղջիկը դռան ծակեն կաշե։ Կաշե, մեմ՝ ա տեսնի կ՝օր տղան բիրտան օձ դառավ, օլրվավ, բաթաթ կտռավ։ Լողացավ, լողացավ, կենա նորեն մարդ դառավ։ Աղջիկը վախենա, վաղվն դրկցի կնկանը պատմե կը։ Ան ա կըսե կը ըը՝ կա չկա՝ ասիկ փերի է, կրնաս նե՝ ցկե ընդիր վառե, ըըչը՝ քեզի ազատում չկա։ Աղջիկը գուգա տուն, մնկալ օրը հաց էփած տեղը յարանութենով մարդուն կանչե կը քովը։ Մեմ՝ ա մե հացմ՝ կուտ ցկե կ՝ու մարդուն կըսե ըը՝ կախվի հանե։ Ան միամիտ կախվի կը ընդիր ըը չը՝ ասիկ օտվներեն բանե շրջե կը ընդիր ու խոնչան կորդն կը բերնին, ինքն ա ըողնե փախչի կը։ Քիչմ՝ էտև գուգան կաշեն օր փերին վառեր մոխիր է կռռե»։

Փերի ղղիների մասին պատմվում է նաև հեքիաթների մեջ, ուր ասվում է, թե նրանք երևում են որպես մի անպիտան գորա, հատ գավազան (կոպալ), ափսե և այլն։ Մի առ ժամանակ սրանք այս կերպարանքով մնում են և փորձում, թե նախազգալով հարգում են իրենց և այդ դրության մեջ։ Եվ երբ փոքր ինչ հարգանք են վայելում, ծածկաբար մարդու կերպարանք են ընդունում, տունը ավելում, մաքրում, կերակուրն եփում և ապա նորից կերպարանափոխվում ու պահ մտնում։ Այսպես նրանք շարունակում են, մինչև որ մարդիկ զարմացած զարան են մտնում և նրանց բռնում։

* * *

Ջավախքի[40] հայ հարսներն ու կանայք երեքշաբթի լույս չորեքշաբթի, հինգշաբթի լույս ուրբաթ և շաբաթ լույս կիրակի երեկոյան ժամասացությունից հետո այլևս չեն աշխատում և առաջաստ չեն մտնում ի պատիվ Չորեքմուտք, Ուրբաթմուտք և Կիրակմուտք ոգիների, որոնց նրանք ծննդաբերության պաշտպան են համարում։ Սրանցից երկուսը՝ Չորեքմուտքն ու Ուրբաթմուտքը կույս քույրեր են, իսկ Կիրակմուտք կամ Հիշտեկը սրանց երիտասարդ եղբայրը։

Ծննդաբերության ժամանակ սրանք գնում են ծննդկանի մոտ, Կիրակմուտքը նստում է դռան հետևը և կատարում քույրերի պատվերները՝ դուռը փակ պահել, ջուր, հավկիթ բերել և այլն, իսկ երկու քույրերը կատարում են մանկաբարձուհու պաշտոն՝ լողացնում, բալուլում

---

[40] Տպվել է „La revue des traditions populaires"-ի 1895 թ. № 1.

են երեխային, ձվածեղ են եփում ծննդականի համար և այլն։ Երբեմն էլ զանազան շնորհքներ են պարգևում նորածնին։ Իսկ եթե նորահարսերը չեն պատվում նրանց՝ այդ երեկոները սուրբ պահելով, նրանք ոչ միայն ծննդաբերության միջոցին չեն օգնում, այլև վրեժխնդիր են լինում, երբեմն սպանելով, երբեմն էլ արատավորելով նորածնին։

Սրանց մասին պատմում են հետևյալները։

Ա.

Հարսին մեկը վիրա (միշտ) Զորեքմուտք, Ուրբաթմուտք, Կիրակմուտք պահն կեղնե։ Ասոր կեսուրը հեչ ռազի չի ըլլի ու վիրա վրան տուրուա կը. հըմը ինչ կէնես օր՝ հարսը հավտին զայիմ գըլլի, կեսուրին անկաճ չի էնե։ Պառկելու օրերն օր գուգա, կեսուրը միտքը դնե կ'օր ատ հարսեն վրեժն առնե։ Հարսին ցավն օր բոնե կը, դուռը կախե վրան, կըսե. «Տիա, ես կերթամ, թող քու Զորեքմուտքա, Ուրբաթմուտքա աղատե քեզի»։ Պառավը դուռը կախե, գելլի հերթիկեն կաշե։ Կաշի տեսնի կ'օր հարսը ձեռքերը վեր վերուց. «Ա՜խ, Զորեքմուտք, Ուրբաթմուտք, Կիրակմուտք, դուք իմտըտիս հասնիք, ըրչը ատ պառվեն խեր չկա» ըսաց։ Մեմ՝ ա էրկու հարս, մե տղամարդմ՝ ներս կը մտնին։ Տղամարդը կայնի կը դռան առաջ խղմաթ կէնե, էրկու հարսը ասոր տղան կառնեն, լողացնեն, բալուլեն, պառկեցընեն կը։ Պառկեցընեն կ'օրա, կուզեն օր էրթան, հարսը էրկնուց գետին շնորհակալ գլլի ատոնցեն ու կաղաչե կը թը ամեն չաֆան քաշեցիք, անունն ա դրեք։

Զորեքմուտքը կըսե.

— Ասոր անունը թող ըլլի Աստատուր։

— Աստվածատուր,— կըսե Ուրբաթմուտքը։

— Ինչ օր ուզե՝ աստված կատարե,— վրա կբերե Կիրակմուտքը։

Ատոնք գելլեն կերթան։ Կեսուրն օր ատոնք տեսնի կը, ինքը իրան կուտե։ Ուրիշները տարով մեծնան կը, ասիկ օրով մեծնա կը, խոյուլյասա աս պառավը ալ չի համբերե, մե գիշերմ՝ գելլե, ատ տղին գողնա կ'ու տանի մեշան ցկե կը վար, օր գիլանը դան ուտեն։ Զորեքմուտքը, Ուրբաթմուտքը ու Կիրակմուտքը ատ տեսնին կը, կերթան չոպնին այուրուն քշեն կը դիպա ատ տղան։ Տղան օր տեսնի կը օչխըրները՝ կերթա մեկին բռնե ծծե կը։ Չոպանը գուգա տեսնի կը ատ տղին, հարցնե կը թը՝ վե՞լ ես, վեվ չես, հարա մարա վե՞լ են։ Անիկ բանմ՝ չի կընը ըսե, խեղճը մատմ՝ անատուն, ի՞նչ գիտե՝ հարը վեվ է։ Խոյուլյասա ատ չոպանը կառնե ատ տղան քովը, իրեն տղա կնե։

— Անունտ ի՞նչ է, —հարցնե կը մե օրմ՝։

Աստուր,
Աստվածատուր,
Ինչ օր ուզե,
Աստված կատարե, —կըսե տղան։

— Լավ, կըսե չոպանը, ատպես է օրա՝ սյուրում օչխար ուզե։ Տղան գուզե, մեմ՝ ա կաշնե՝ զորի օր սյուրում օչխար դիպա իրանց գուգա։ Չոպանը ուրախութենեն քիչ մնա կը, թը խելքը թռցնե։ Օչխարը նես չերածատան մեմ՝ ա կըսե տղին.

Աստուր,
Աստվածատուր,
Ինչ օր ուզե՝
Աստված կատարե,
Պուտուկմ՝ ա օսկի ուզե։

Տղան գուզե։ Մեմ՝ ա դռան առաջը պուտուկով օսկին դրվի կը։ Ա՛ս չոպանը արթղ դյովլաթ կըկապե։ Մե օրմ՝ աս տղան ինքն իրեն մտորվի կը, թը աս ինչ օր գուզեմ՝ աստված կատարե կը, արի խնդրեմ աստծմեն օր մորս ու հորս գոնիմ։ Խոսքը հըլը բերնեն չելած՝ աչքը բանա կ'օր հորն ու մոր օրթան նստեր է։ Հարն ու մարը փոթթվին կը ատոր, ուրախութենեն չեն գիտա, թը ինչ էնեն։

Աստուր,
Աստվածատուր,
Ինչ օր ուզե՝
Աստված կատարե,—

կըսե մարը, խնդրե աստծմեն, օր աս պատեն ջավահիր չռռա, աս պատեն օսկի վազղե, քեզի գողցող-կորցնողն ա՝ վիվ է օրա, տրաբի, կատոր-կատոր ըլլի։ Տղան խնդրե կը։ Խնդրե կը չի խնդրե, մեմ՝ ա կաշնե, օր մե պատեն ջավահիր չռռաց, մեկալեն օսկի վազղեց, կեսուրն ա մեկալ օտան բիրտան տրաքավ ու կատոր-կատոր էղավ ընկավ վար։

Բ

Մե ծանդռոտք հարամ՝ գլլի, մե օրմ՝ տունը մեննակ օր մնա կը, բիրտան ցավը բռնե կը։ Կնիկը գուլա, աստծուն աղաչե կը թը՝ հըճըպ ինչըղ պիտի ըլլի հալս, մարդմ՝ բիլա չկա քովս։ Մեմ՝ ա կաշնե, օր քովը էրկու

կնիկմարդ էն կայնե, մե տղամարդմ՝ ա դռանը ետևը նստեր է։ Աս էրկու կնիկմարդը հարցնեն կը ասոր թը՝ ինչի՞ դուլաս, ի՞նչ է էղե։ Հարսն ա կսե կը թը՝ ըշտը տեսնիք կը, ցավս բռներ է, քովս ա մարդ չկա։—Դարդ մի էնե, ձագո ջան, աստծու օղորմութենը մեծ է, կըսեն, բարով ազատվիս կը։ Ետև տղան աշխարհ գուգա, ասոնք տղան կառնեն, լողացնեն, կապեն, բալուլեն, դնեն կը տղոցկնի կուշտը, վրան խաչակնքեն, մե խաչ նշխարքմ՝ ա դնեն կը բարձին քովը։ Ետև կերթան եղով հավկիթ կեփեն կ՝ օր ուտեցնեն տղոցկնին, աաիկ կըսե կը թը՝ քուրս, ձեր օտացը մեռնիմ, աստված ձեզի ղրկեց, դուք վե՞վ եք։

— Ես,— կըսե աատնցմեն մեկը,— Ջորեքմուտքն եմ, ասիկ Ուրբթմուտքն է, ինի դռան ետև նստողն ա Կիրակմուտքն է, դուն օր մեր իրիկվները գործ չէիր էնե ու սուրբ մնայիր կը (առագաստ չէիր մտնում) մենք ա քու իմտըտիտ հասանք։

Գ

Հարսին մեկն ա Ջորեքմուտք, Ուրբթմուտք ու Հիշատեք հեչ չի պահե էղե։ Գլլի օր աաիկ տղոցկան պառկի կը և չէ՞ օր չարը տղոցկնին հակառակ է, գուգա կը դուռը թը չը՝ վախթե դուրս խորոզը կանչե կը։ Աատնք ա ինծի պես խելացի՝ բռնեն խորոզը մորթեն կը։ Չարը ներս կը մտնի, մազ գլլի, գըլնի հարսին շարբթին մեջը։ Հարսը իմե կը ատ շարբաթը թը չը՝ խելքը կանցնի՝ սահաթմ՝ ետև հանգե կը։ Մյակար իսա թերմաշ չարը օր մազի ղպալ կուլ կերթա, փորին մեջ կենա սատանա կը դառնա, հարսին ջիգյարը կուտե։

Դ

Մե հարսմ՝ ա ալի ատոր պես Ջորեքմուտք, Ուրբթմուտք ու Կիրակմուտք չի պահե էղե։ Տղոցկան օր պառկի կը, տղան բալուլեն օրոցկը դնեն կը, քիչմ՝ ետև կերթան կաշեն օր՝ տղան մորթած է, արունը օլուղի պես վազղե կը։ Տղոցկանը ծնկին կը ղարնե, մազերը կը փետե, թը՝ վա՜յ ձունը գլխուս, աս ի՞նչ էղավ, աս վե՞վ անուշ պալաս արունլվիկ էրավ։

Աս վախթը էրկու կնիկմարդ ու մե տղամարդմ՝ էրևան կը աչիցը, կըսեն կը թը՝ մենք Ջորեքմուտք, Ուրբթմուտք ու Կիրակմուտքն ենք, դուն օր մեր պատիվը չէիր պահե, մենք ալ քու տղատ ատ օրը ցկինք։

* * *

Ժողովուրդը հավատում է և միականի հրեղեն ոգիների, որոնց Ալ է կոչում։

Կանայք պատմում են.

«Աստված օր Ադամին ստեղծեց, անոր ընկեր ա Ալին ստեղծեց։ Ասիկ հրեղեն էր, միաչքանի։ Ադամ մարմնեղեն, Ալը հրեղեն, հնչ իրար չէին սազե, ատոր համար ա Ադամը հնչ չէր սիրե Ալին։ Աստված տեսավ, օր Ալ չկրցավ ընկերութեն էնե Ադամին հետ, եվային ստեղծեց։ Ատ վախտվանից Ալը դյուշման ընկավ Եվային ու անոր չնսին»։

Ալքերը կանանց վնասում են գլխավորապես ծաղկաբերության ժամանակ, երբ մտնում են նրանց փորը և նրանց ու նրանց որդիների փայծաղներն ուտում, որով և սպանում են նրանց։ Կանայք հալածում են սրանց Հիսուս-Քրիստոս անունը տալով։

Այս մասին պատմում են.

«Քրիստոս էրթյած վախտը մե ճվճվոցմ՝ կիմանա, մոտենա կանչե օր՝ Ալ է, բռնե կըսե կը թը՝ դուք ինչի՞ մանիք կը ծննդկաննների փորը, անոնց ու ծղոց չիգյարը կուտե՞ք։ Ալը ոտքը գըչնի, կաղաչե կը թը՝ խնայե, մեմ՝ ա չեմ էնե։ Քրիստոսը չի օղորմանա։ Ասոր մարը դուգա աղաչե կը թը՝ իմ մենծ տղիս բաց թող, ուր օր քու անունա տան, մենք ոտքը չը դնենք։ Շատ օր կաղաչե, Քրիստոս ա թողնե կը։

Գլխավորապես հեքիաթների մեջ ժողովուրդը պատմում է դևերի[41] մասին, որոնք վիթխարի արարածներ են, մինչև յոթ գլխանի։ Սրանք վերին աստիճանի ուժեղ են, այնպես որ ահագին ժայռեր վերցնում և շատ հեռու են ձգում։ Սրանց միմյանց հետ կռվիլը ժողովուրդը նկարագրում է իբր ահագին սարեր միմյանցից հեռանում և վրա վազելով իրար են բախվում։

Կին դևին պատկերացնում է նա որպես մի ահագին բլուր, աջ ծիծը ձախ ուսին ձգած, ձախը աջին, մի փթից ավելի արճիճ բերանը ձգած այնպես չբլթացնելով ծամում է, որ ձայնը «օխտը սարի հետ լսվում է»։ Ձեռին էլ բռնած մանում է մի թեշիկ, որի գունդը ջրաղացի մի ահագին քար է, իսկ պոչը մի մեծ գերան։

---

41 Տպվել է „La revue des traditions populaires"-ի 1895, № 3, երես 1—6։

Ջնայելով իրենց սարսափելի ուժին և հասակին, նրանք շատ միամիտ, պարծենկոտ և հիմար են։ Միայն բնությամբ հակված են չարության և աշխատում են մարդկանց վնաս հասցնել։

Նրանք բնակվում են գետնափոր մեծ և ընդարձակ այրերում, սաղարթախիտ անտառների քարանձավներում, անմահության ջրի ավազանի մոտ, ոսկե խնձորների այգիների մեջ և այլն։

Նրանց բնակարանները լի են ոսկով, արծաթով, անբավ հարստությամբ, թանկագին քարերով։ Նրանց գոմերում կապված են հրեղեն ձիեր, որոնք մի ակնթարթում կանցնեն ամբողջ աշխարհը։

Դևերը թեև թշնամի են մարդկային սեռին, ուտում են նրանց միսը, սակայն սիրում են գեղեցիկ աղջիկներին և շատ անգամ փախցնում են նրանց և տանում իրենց այրերը, միասին ապրում։ Կնության առած աղջկա սիրտը գրավելու համար նրանք ամեն ջանք թափում են. գետնում բերում են նրանց ոչ միայն ամեն բարիք, զարդեր, հարստություն, այլև ոսկե կատու և մուկ, որոնք միմյանց հետ խաղում են, ոսկե առյուծ և վագր, որ միմյանց հետ կռվում են՝ նրանց զբաղեցնելու համար։

Մարդիկ շատ անգամ ընդհարվում են նրանց հետ։ Քաջ երիտասարդներն աներկյուղ մտնում են նրանց բնակարանները և գրավելով նրանց կանանց սիրտը, ճարպկությամբ և իմաստությամբ խփում, մի հարվածով սպանում են դևին, որ կիսամեռ ձայն է տալիս. «Եթե քաջ ես՝ մի անգամ էլ խփիր»։ Իսկ իմաստուն երիտասարդը պատասխանում է. «Մորիցս մի անգամ եմ եղել, մեկն էլ հերիք է»։ Բայց եթե սխալվի և հարվածը կրկնի՝ դևը կկենդանանա և նորից կկռվի հետը։

Մի քանի դևեր էլ, մարդկանցից վախենալով՝ իրենց հոգին ճնճղուկի նմանությամբ դնում են մի արկղի մեջ և տանում սև ու ճերմակ ծովերի մեջ պահում, իրենք անհոգի մարդ գալիս, որ չսպանվին։

Թողնելով հեքիաթների մեջ պատմելու դևերի մասին, այստեղ առաջ եմ բերում մի կնոջ կռիվը դևի հետ՝ յուր ամուսնու մահվան վրեժխնդրության համար։

«Օխթը գլխանի դևին մեկը ինչղ գլի մե տղիմ՝ հետըթին գըլնի, սպանե կը։ Ասոր նշանածը շատ գուլա, էրերա կը, կաշե կ'օր ատով բան չի ըլլի, ղըլըղը փոխե՝ տղամարդու ղըլըղ կը մտնի, հեծնի կը քյահլան ձիմ՝ ու մզրախը կառնե ձեռքը, կերթա օր դևին գտնի վրեժը առնե։ Յազմ կերթա, ճամփան էրկու հարամի ռաստ գուգան։ Ատոնք գուգեն, օր ասոր վրա տան, հըմը ասիկ օր մզրախը չի խաղցնե, ու ատոնցնե մեկին ճակատին դնե, տեղն ու տեղը կը մնա։ Մեկալը ձեռք ու ոտք գըլնի, տե հոգին վեր ծակը դնե, օր փրկե։ Ասիկ կառնե ատոր

հետը, կերթա։ Կերթան օխթը գլխանի դևի ղոնախանիմ՝ հասնին կը։ Ատ կնիկը կըսե հարամուն ըը՝ ձիանը աստեղ բռնե կեցի, ես կերթամ անոր հետ կռվիմ, թյակյար անոր ալթ էրի, ինթիխամս (վրեժ) առա, մե օֆմ՝ կէնեմ, կեցի, ըըչը՝ թող ու փախի, գլոխտ պրծու։ Կաշեն օր ատ դևին ղոնախանան հնչ մե կողմեմ՝ դուռ չունի, մեննակ վերը մե փանճիրամ՝ կա։ Թաժա հարսը կըսե հարամուն ըը՝ ատ իսի մխերը զարկ պատին, օր բռնեմ վեր էլլեմ։ Ան ա ղոճա քարմ՝ կառնե զարնե՝ մե մըխմ՝ բիլա չի կրնա զարնե։ Հարսը կառնե մխերը, ձեռքովը զարնե ու վեր գելլե։ Վեր գելլե՝ փանճիրեցեն մտնի կը նեա. կաշե՝ դևը նստեր է, քաշե կը թուրն ու ատոր օրթայի գլխուն օր չի զարնե, արունը չայի պես չռռա կը, գլոխը գլորի, փանճիրեցեն վար գըլնի կը։ Հարսը կայնի անպես մե օֆմ՝ քաշե կ'օր, սաղ աշխարհքը ձեն կուտա։ Դիշնի վար, կըսե հարամուն ըը՝ ատ գլոխն էրթանք։ Հարամին կաշխատի, կաշխատի՝ տեղեն բիլա չի կրնա վերցընե։ Հարսը դևին անկճները կը կտռե, ցկե կը հապիկան, կերթան։ Կերթան ատոր մարթուն գերեզմնին բովը, գերեզմանը բանան կը։ Հարսը կըսե հարամուն ըը՝ ավուր դատաստրնին պարտըկան մնաս՝ թյակյար ինձի աստեղ չթաղես։ Տիա ձիս, դևին խազնան, իմ դյովլաթս քեզի փեշքաշ, կըսե ու թուրը տնկե կը գերեզմնին մեջը՝ գըլնի վրան, փաթթվի կը մարդուն ու մեռնի կը։ Հարամին հողը վրաները կուտա»։

ԱՇԽԱՐՀԱԾՆՈՒԹՅՈՒՆ, ՀԱՎԱՏԱԼԻՔ՝ ՏԱՐՐԵՐԻ, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ԵՎ ԲՆՈՒԹՅԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Աշխարհի, նախամարդոց, ազգերի, լեզուների ծագման մասին Ախալքալաքի հայ ժողովուրդը գիտե միայն Ս. գրքի պատմածը։ Միայն սրա վերա ավելացնում է, թե երբ աստված բաժանեց երկինքն ու երկիրը՝ ջրի մի մասը երկնքում մնաց, մնացածը կազմեցին հետևյալ չորս գետերը՝ Մուրատ չայ (Եփրատ), Քուռ (Կուր), Արազ (Արաքս). և Սև ջուր։

Երկինքը յոթ «զաթ»՝ շերտ է. առաջին շերտն ամպ է, մյուսները ջուր։ Երկնքի ծայրը և վերջը օվկիանի վրա է դրված։

Երկնային մարմիններից արևն ու լուսինը քույր և եղբայր են։ Մի անգամ քույրը՝ արևը ասել է եղբորը. «Ես գիշերը կվախենամ ման գալուց, իսկ ցերեկը կամաչեմ, երբ ինձ նայեն»։ Այն ժամանակ եղբայրը տվել է քրոջը մի թուփ ասեղ և ասել. «Դու ցերեկը ման եկ, և եթե քեզ նայեն՝ ասեղները ցցիր նայողի աչքերը, իսկ ես գիշերը ման կգամ»։

Մի ուրիշ ավանդություն ասում է, թե արևն աղջիկ, լուսինը մանչ է, երբ իրար պատահում են, լուսնի խելքը անցնում, խավարում է։ Լուսնի ճիտն էլ մի արյունոտ տիկ կա, սա էլ երբեմն տիկը ձգում է արևի վզին, որից նա է խավարում։

Արևն ամեն օր ծագում և երեկոյան մայր է մտնում, գնում մոր՝ օվկիանի մեջ հանգստանում է, առավոտ նորից ծագելու և պտտվելու աշխարհի շուրջը։

Արևը մայր մտնելուց հետո գետինը խաչված են համարում, դրա համար էլ չեն փորում։

Երկնքի անհամար աստղերից յուրաքանչյուրը պատկանում է մի մարդու և երբ սրա վախճանը հասնում է՝ աստղը վայր է ընկնում։ Սրանց մեջ կան և պոչով (գիսավոր) աստղեր, որոնց երևալը պատերազմ լինելու կամ թագավոր մեռնելու նշան է համարվում։

Բոլոր աստղերն երկու տեսակ են լինում, բարի և չար։ Բարի աստղի տակ ծնածը՝ երջանիկ, չարինը դժբախտ է լինում։

Աստղերը կարող են զորություն, իմաստություն տալ մարդկանց։ Գյումյուրդեցի մի հովիվ մրսում է, տանում են տուն. ճանապարհին մի քարի փոսի մեջ հավաքված ջրից խմում է։ Գիշերը երազում հայտնում են թե դու սրբացար, որովհետև խմեցիր այն ջուրը, որի մեջ զարկել էր աստղը։ Միևնույն ժամանակ արգելում են նրան ամուսնանալ։ Սա ժամկոչ է դառնում և ամեն ինչ գուշակում է։ Մինչև իսկ պահում է գերեզմանների մոտ և իմանում, թե ննջեցյալները քրիստոնյա՞ են եղած թե կռապաշտ։

Աստղերի մեջ երևում է Սանամոր իշը. ժամանակով սանամերը կնքավորի մարագից հարդ է գողացել, բայց գոգնոցը ծակ լինելով, թափվել է և «իշը» (հետքը) մնացել է երկնքում։

Մի այլ ավանդություն ասում է, թե սանամերը լոկ անցել է կնքավորի երդիկից և որովհետև սա մեծ մեղք է համարվում, այդ պատճառով նրա հետքը դրոշմվել է երկնքում։

Մի ուրիշ ավանդություն էլ Հարդագողի ճանապարհին երկնքի պատառք կամ կար է անվանում։ Իբր Ջրհեղեղի ժամանակ պատռվել և այդտեղից ջուրը թափվել է երկիր։

Ծիածանի մասին էլ պատմում են, թե դա աստծու գոտին է։ Գաբրիել և Միքայել հրեշտակապետները տանում աստծու մեջքը կապում, ցույց են տալիս մեզ, թե տեսեք, «Աստու ողորմությունը ձեզնեն չէ պաքսե», հետո դարձյալ քանդում պահում են։ Այս պատճառով և ծիա-

ծանը տեսնելիս խաչակնքում են, շնորհակալ լինելով աստվածանից նրա ողորմության համար։

Բայց այդ գեղեցիկ լուսալիր երկնքից երբեմն ցայտում է «աստու կրակը» (կայծակ) չար մարդկանց խփելու։

Այդ գեղեցիկ երկնքի վրայով քառաձի կառքը նստած չեմում է Եղիա մարգարեն, որի կառքի անիվներից առաջանում է (աւ՛պի) գոռոց և մորակի զարկից՝ կայծակ։ Այդ ընդարձակ երկնքի վրա հրեշտակները «չիլիթ» են խաղում և ձեռքների չիլիթներով խփում սատանաներին։ Սրանք էլ ազատվելու նպատակով մարդկանց մոտ են վազում, նրանց թևի տակ մտնում։ Եվ եթե մարդը խաչ չհանե երեսին, որ սատանաները հեռանան իրենից, հրեշտակները կխփեն թե սատանային և թե մարդուն։

Այս պատճառով էլ կայծակի ժամանակ շարունակ խաչակնքելով ծառի, դեղի, սայլի, քարի տակ են մտնում, իբր պաշտպանվելու։

Կայծակից, ժողովրդական խոսքով՝ կեծակից, աստու կրակից, առաջացած հրդեհը մեղաց պատուհաս և ուժից բարձր համարելով, չեն աշխատում հանդցնել։

Կայծակը մի կիզացյալ երկաթ է, հրեշտակների ձեռքի չիլիթը, որ երկնքից ընկնում, մտնում է գետնի մեջ։ Եթե այս երկաթը դանեն՝ և դրանից թուր շինեն, այս ժամանակ այդ կայծակի թուրը ոչ միայն մի փարատելով հազար մարդ կսպանե, ամեն ինչ, քար, երկաթ, մետաղ կկտրե, այլև խփած միջոցին ինքն իրեն կերկարի և կհասնի նպատակին։ Եթե նրան հոգևարք հիվանդի մոտ դնեն, նրա ղորությունով կառողջանա նա։ Կայծակի կարապետող փայլակն էլ օվկիանի միջի լեկեոն ձկան կրծքի փայլն է։

Հողագունդը, ժողովրդի կարծիքով, մի կլոր բան է, մի կարմիր եղի եղջյուրին անշարժ կանգնած։ Եզի մոտ կա և մի հանճ, երբ սա աստուծո հրամանով մեր մեղաց համար կանգնում է եղան պնչին, եզը շարժում է գլուխը, որից և երկրաշարժ է լինում։ Երբեմն էլ երկիրը ծակվում է և քամին մտնում մեջը, որից և ժաժ է գալիս։

Գյուղացու կյանքը սերտ կապված է հողի հետ, որովհետև նրանից է ստանում յուր սնունդն ու ապրուստը։ Ուստի և սաստիկ սիրում են հողը։ «Արդրում, հողիտ ու ջրիտ մեռնիմ, ասում են նրանք, պիտի ըլլի՞ մե օրմ՝ գամ հողըտ լիզեմ»։ «Քոռ աշեմ այդի գետնին», երդվում են նրանք։

Շատ հիվանդներ պանդխտության մեջ իրենց գյուղի ջրից բերել են տալիս և խմում։

ժողովրդի կարծիքով Եղիայի չորս կողմը չորս օգնական են նստած, որոնք սրա հրամանով ամպերը ուղեցնում են «թուլուխներին» նման, վայր իջեցնում, որ ծովից ջուր խմե, հետո բարձրացնում, որ անձրևե։ Հովիվ Մարտիրոսն ուզում էր հավատացնել, թե ինքը տեսել է, որ ամպն իջել Փարվանա լճի վրա ջուր խմել, բարձրացել Ս. Հովհաննես վանքի վրա անձրևել է։

Քամին ժողովրդի կարծիքով առաջացել է Նոյ նահապետի աղջիկների սրնգից։ Ոմանք էլ ասում են, թե չորս հրեշտակ, կանգնած աշխարհիս չորս կողմը, փչում են, որից և առաջանում է քամի։

Քամին գյուղացիների համար անհրաժեշտ մի բան է։ Ավանդությունն ասում է, թե մինը թագավորից գնել է քամին, թեղի ժամանակ բոլոր գյուղացիները հավաքվել են թագավորի մոտ և մեծ դին տալով, աղաչելով ետ են գնել, որովհետև առանց քամու նրանք չեն կարող թեղ անել՝ ցորենը հարդից մաքրել։

Եթե երկու քամի միմյանց հակառակ փչելով ոլորապտույտ վեր են բարձրացնում թեթև իրեր, կոչում են սատանի խամի։

Փոքրիկ բաժաներ, որ երբեմն գոյանում են Ախալքալաքի լճերի վրա, կոչվում են ուշապ։ Ժողովրդի կարծիքով ուշապը մի սարսափելի վիշապ է, որ շղթաներով կապված է երկնքից, գլուխը վեր, պոչը վար։ Սա գոյանում է եղնիկից։ Երբ եղնիկը ծնում է, մայրը թողնում է՝ մի ժամվա ճանապարհ փախչում է։ Ուշապները իջնում, սրան երկինք են քաշում, ուր մեծանալով նա էլ է դառնում ուշապ, իսկ ևրն չիջան, երեք ժամից հետո սա վեր է ելնում, կանգնում, այս ժամանակ մայրը տեսնում, գալիս պահում է։

«Անցյալ տարի Խանչալուի լճի վրա իջավ. նախ ամպերի միջից ցույց տվեց զարհուրելի գլուխը, ապա պոչը վայր պարզեց և ցեխը ջրին խառնեց»։

Եթե սրա շղթաները արձակվին, սա կկործանե աշխարհը, իսկ եթե գլուխը վայր կախվի՝ կկործանվի աշխարհը։

Արձագանքի մասին ժողովուրդը հետևյալ կարծիքն ունի. կան սարեր, որոնց մեջը ջրով լիքն է, ահա դրանք են ձայն հանում։

ԿԵՐՊԱՐԱՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ, ԿԱԽԱՐԴՆԵՐ ԵՎ ԿԱԽԱՐԴՈՒԹՅՈՒՆ

Ժողովուրդը հավատում է, թե եթե մինը կարողնա «ասսու-գոտու» (ծիածանի) տակից անցնել՝ մանչ է՝ աղջիկ, աղջիկ է՝ մանչ կդառնա։ Իսկ եթե իր արմունկը համբուրե՝ ծիտ կդառնա, կթռչի։

Բայց կան կախարդներ, որոնք ձեռքի գավազանով խփում են

մարդկանց և նրանց պանապան կենդանիների, օրինակ՝ էշ, գայլ, թռչուն և այլ կերպարանափոխում։ Նույն գավազանի հարվածով էլ կերպարանափոխվածներին մարդ են դարձնում։

Կախարդությունը առավելապես վերագրում են կանանց և սրանց մեջ մասնավորապես՝ պառավներին։

«Պոչավոր պառվրնները» թեև ի ծնե պոչ են ունենում, սակայն մանկանալիս միայն զարգանում է սրանց պոչը, որով և ստանում են կախարդական շնորհք։ Սրանք հեծնում են խնոցին, օձը մտրակ անում և երկնքի «օխտը ղաթից» թռչում, գնում՝ ուր որ կուզեն։ Սրանք գործում են առավելապես սիրային հարաբերությունների մեջ, գրավել մինի սերը դեպի մյուսը, փախցնել անմատչելի սիրուհուն և այլն։

Ժողովուրդը համակրությամբ չի վերաբերվում դեպի պոչավոր պառավները, և երբ մի կին մյուսին ուզում է նախատել, «պոչավոր» է անվանում նրան։ Որպեսզի կինն այլևս կախարդություն՝ պոչվորություն չանի, բռնում նրա պոչը կտրում են։ Սրանց մի շնորհքն էլ այն է, որ կարող են աներևութապես շրջել։

Սրանց մասին բացի հեքիաթների մեջ պատմածը, պատմում են և հետևյալ ավանդությունները։

«Գանձասցի Սպերցոնց Աննան ասում էր. Սպեր էինք օրա՝ ձմրան մե գիշերմ՝ վախտե դուս դուս էլա, տեսնիմ, մեր էրթիկը մե կարասմ՝ է դրած։ Աս ի՞նչ պիտի ըլլը, ըսի ու դողդողալեն մոտեցա՝ օր աշեմ մեջը ինչ կա։ Մեջն աշեցի թը չը՝ ոտաց ձեռմ՝ էկավ, ան սհաթին վախես մտա կարասն ու կզկթա. մեմ՝ ա աշեմ, մե պառավմ՝ էկավ ու հեծավ կարասը։ Կարասը հեծավ թը չը՝ թռավ։ Կերթա, ես ա մեջն եմ, քիչ կը մնա թը լեզիս պատռի։ Գնացինք, գնացինք, մեմ՝ ա մե չայիր-չիման տեղմ՝ կայնավ կարասը։ Պառավը կարսեն իջավ, աշեմ՝ մե օձմ՝ զամշի է էրե։ Ասիկ իջավ գնաց։ Ան օր գնաց, ես ա կարսեն էլա, աս-թին-անթին աշեցի, տեսնիմ՝ պաղ, պաղչա, հեռուն ղոճա քաղաքմ՝։ Էլա գնացի պախչան, քիչմ՝ կանանչ քաղեցի, պախպընչուն ա հարցուցի թը աս քաղքին անունն ի՞նչ է. ըսաց՝ Մըսըր։ Կանանչն առա կենա, գնացի մտա կարասը։ Քիչմ՝ անցավ, պառավն էկավ, սխլամիշ էրի, տեսա օր՝ իսի մեր Շողեր անան է։ Էկավ հեծավ կարասը, օձը կենա զամշիլյամիշ էրավ, կարասը թռավ, դյաղխըվանմ՝ մեջ մեղի բերեց իջուց մեր էրթիկը։ Շողեր անան թեզմ՝ իջավ ու վազեց տուն։ Ես ա կաննըչներս դաստյալյամիշ էրի, գնացի տուն։ Էրկանս կանչեցի քյոշեմ՝, պատմեցի թը՝ ասպես, ասպես բան էղավ, Շողեր ապլան պոչվոր է։ Ատ օրն ա Շողերին մարդը մերն էր. մարթս մեկ-մեկ ըսաց անոր թը՝ Շողեր ապլան

կարասը հեծեր, օձը զամշի էրեր տեյմ՝ օր Մըսըրը գնացեր էկեր է։ Անիկ հել չհավտաց։ Ատ վախթը ես կաննչները ցուցուցի ու ըսի թը՝ ահան, տեսեք, ձմեռ հատաղա իսի կաննչները ինծի վե՞վ կուտա, ես կարասը մտա անոր հետ գնացի փերի։ Աս օր տեսավ՝ մարդուս հետ գնացին բռնեցին Շողեր ապլային, օլի տվին (չվանով ոլորել), տաք-տաք ջուրը գլխեն վար լցին։ Լըլելն իմացան, օսահաթ պոչը դուս էլավ, թեզմ՝ դանկով կտրեցին։ Ան էղավ, աս էղավ, ալ հել չը հեծավ կարասն ու աշխարհք չափեց»[42]։

Մի ուրիշ հարս էլ պատմում էր. «Մայիսի վեցն օր գըլլիր, կեսուրս վիրա տղոցը, բազի ա ինծի ղրկեր կը մերին օր էրթանք խորոզ չը խոսած մասրենի գոնինք բերինք։ Հոգիքս դուրս գուքար կը սաղ օրը ժուռ գալեն, կրնայի՞նք չբերե։ Օխտն օր գըլլիր՝ սապահատան մութը-մութ կեսուրս գելլեր ակիշը կապեր կը էտևը, գելլեր էրթիկը, հերթոց բոլորը ակիշով իրեք ճիզ կը քաշեր, օխտը հատ ա քար նշան կէներ թը՝ իսիկ ինծի, իսիկ ինի հարսիս, ու ատ ճղերու բոլորը շարեր կը։ Մասրենիներն ա կառներ հերթոց, դռան ծակերու առաջը զարկեր կը, օր պոչվոր պառավները չգան նես մտնին, եղի ու պանրի ախրին քար ցկեն։ Մե տարիմ՝ ա ինծի էին ղրկե մասրի, գնացի՝ չգտա։ Ատ տարին պոչվոր պառավը աներևութապես նախրին կարմիր կովիմ՝ վրա նստած, էկեր հերթեցնեն մտեր, եղեն-պանրեն գողցեր էր։ Կովերն ա կթեր, լցեր կարասը, տարեր էր։ Հարսի, հըլը մասրենին անոր համար է, օր պոչվոր պառավն օր գա՝ միսը խրի, հրպը ատ ճիզն ու քարե՞րն ինչի համար են։ Ճիզը, տիրացու ջան, թըլըսումն է, ան ճղի միջեն չի կրնր անցնի, ան քարերն ա՝ բախտ փորձուկ է, մեկալ օրը կերթայինք վերցնեինք կը, վերիս քարի տկեն օր մրջմուկ էլլեր, անիկ ան տարին բախտավոր գլլիր»։

Թեև այժմ ամբողջ գավառիս մեջ «պոչվոր» մականունով պառավ չկա, սակայն բազմաթիվ են դրանց մասին պատմվող ավանդություններն ու առասպելները, մանավանդ հեքիաթների մեջ։

Ժողովրդյան կարծիքով պոչվոր պառավները գործում են չարերի թելադրությամբ, դրա համար էլ համակրություն չեն վայելում։ Այնինչ կան ուրիշ կախարդներ, ինչպիսիք են օրինակ, եղնգի աշող, նետ դնող, գարի ցկող, փիլթա թափող, թիզ չափող և այլն, որոնք այդ շնորհքը սրբերից են առել և գործում են սրբերի ներշնչմամբ, այս պատճառով էլ բավական հարգանք են վայելում։ Այսպիսիներ գրեթե տարածված են ամեն գյուղ և միշտ գործ ունին։

Սրանցից նշանավորներն հետևյալներն են։

---

[42] Տպվել է „La revue des traditions populaires"-ի 1895 թ. № 1։

Ախալքալաքի ամբողջ գավառի հայ գյուղացիները Ս. Հարությյան երեկոյին ծնած երեխային եղնգի աշելով կորուստը գտնելու շնորհք են վերագրում։

Երբ ծնվում է երեխան, ծնողներն իսկույն մի գառ են մատղում և նրա աջ թիակը շորերի մեջ փաթաթած պահում են։ Երբ երեխան 10—11 տարեկան է լինում, մայրը և բարեկամները պատմում են նրան ինչ շնորհքի տեր լինելը, և հավատացնում, թե այսինչ երազի հիման վրա այդ շնորհքը տվել է Մայր Աստվածածինը կամ Ս. Կարապետը և կամ մի ուրիշ սուրբ։ Ապա տալիս են նրան մատղած գառի թիակը, ցույց տալիս երեխայի աջ բութի եղունգը և ասում. «Նայիր մեջը բան կերևա, այսինչ բանը կորեր է, տեղը ըսա» և այլն։ Երեխան նայում և մի բան է ասում, բոլորը որպես պատգամ ընդունում են նրա խոսքը։ Այսպիսով նա դառնում է եղնգի աշող։ Կորուստ ունեցողները գալիս են մոտը և ասում. «Կորուստ՝ ունիմ, դուն»։ Սա նայում է եղնգին։ Ժողովրդի կարծիքով դանազան իրեր գալիս անցնում են եղնգի միջով, վերջապես կորուստն է երևում և կանգնում եղնգի մեջտեղը։ Ապա գալիս է գողը, գողացածը ձեռին, նաև այն տեղը, ուր որ դրված է եղել կամ այժմ պահված է կորուստը։ Եղնգի աշողը նայելով եղնգին՝ կենտրոնացնում է յուր միտքը և կորուստի տիրոջը կորուստին վերաբերյալ մթին հարցեր տալուց հետո, մի եղրակացության գալիս և կամ նախազգում և մի բան է ասում։ Եթե մի բան չի կարողանում ասել, պատճառ է բռնում, թե երեկո է, կամ օրն ամպ է, չի երևում. այսինչ օրը սրի, և մինչև այդ օրը, հարցուփորձ անում, մի բան ասում է։ Աշելուց հետո կամ առաջ ստանում է մի քանի կոպեկ կամ մի քանի ձու։

Առհասարակ բոլոր եղնգի աշողները վախենում են գողերից, որոնց ով լինելը իբր իրենք հայտնում են ժողովրդին։ Հաճախ, մանավանդ անշափահաս ժամանակ, գիշերները երազում տեսնում են նրանց՝ սրերով իրենց վրա հարձակվելիս։ Երկյուղը պատում է դրանց, ուստի և անկողնուց վեր թռչելով վազում, «մորերու ծոցն» են մտնում։

Բայց քանի գնում երկյուղը նվազում և միայն խիղճն է սկսում տանջել, որ շատ անգամ սրան կամ նրան իսկույն տեղը գող են բռնել։ Եվ շատերը չափահաս ժամանակ դադարում են եղնգի աշելուց, ուստի հինա են գնում եղնգին, պատճառելով թե հինան այլևս ցույց չի տալիս։

Գարի ցկելում հռչակ է ստացած սուլդացի Հեղնար պառավը։ Սրա-նով նա գոնում է կորուստը։

Ցկելիս վերցնում է 7 կույտ գարի և մի ցորեն։ Գարիներից մինի ծայրը կտրում է և նշանակում թե սա շեմքն է, մի ուրիշի ծայրը ցեխո-ւում, դա էլ կորուստը. մյուս հատիկները մարդիկ են նշանակում, իսկ ցորենը՝ բախտ, դյովլաք։ Ապա դաստակը պատում է շորով, մի «Հայր մեր» շշնջում, հատիկները բուռն ածում, մյուս դաստակով ծածկում և երեք անգամ շարժելուց հետո, վրայի դաստակը վերցնում է և հատիկ-ների դիրքից գուշակություններ անում։

Եթե կորուստը բախտի, ցորենի մոտ լինի, կգտնվի, եթե շեմքի մոտ լինի, տան մեջ է, դարձյալ կգտնվի։ Իսկ եթե մի կամ մի քանի գարու մոտ լինի՝ մի կամ մի քանի մարդկանց մոտ է, և այլն։

Այս շնորհքը ևս մի որևէ սուրբ պիտի տա։ Սուլդացի Հեղնարին տվել է Ս. Աստվածածինն ու Ս. Կարապետը «էրածով», այդ պատճա-ռով էլ ամեն անգամ ցկելիս՝ հիշում է դրանց անունը։

ՆԵՏ ԴՆԵԼ

Ախալքալաքի գավառում բավական նետ դնողներ կան, որոնք բո-լորն էլ, իրենց ասությամբ, մի որևէ սրբից են ստացել այդ շնորհքը։ Սրանց գործիքներն են՝ մի մեծ մեխ, որ քահանային օրհնել են տվել և մի ալրմաղ։ Ալրմաղի շրջանակի (դասնաղ) պոկին մեխի հաստու-թյան ծակ է արած։

Երբ նետ դնել տվողներ են լինում, սա վերցնում է մեխը, «Հայր մեր» ասելով անցկացնում մաղի շրջանակի ծակի մեջ, ապա երկու ցուցա-մատով բռնում մեխից և ալրմաղը վեր բարձրացնում («գետնից կըտ-րում») և «Ս. Սարգիս կամ Ս. Գէորգ (շնորհք տվող սրբի անունը), դու սուտ չհանես» ասում։ Հետո արդեն նետ դնել տվողին ցուցամատը դնել է տալիս մաղի շրջանակի վրա և բարձր ձայնով կամ մտքում ասում. «Ս. Հակոբ, անընանտ մեռնիմ, քեզնե՞ն է Ս. Կարապե՛տ, օխտն ան-վանտ ղուրբան, քեզնե՞ն է», այսպես զանազան սրբերի անուններ է տա-լիս, մինչև որ մաղը պտտվում է։ Մաղը պտտվելիս, որ սրբի անունը որ տվել էր՝ այն սրբից է հիվանդությունը, ուստի և նետ դնողն ապաշ-խարանք է դնում. «գնը դուրը, մատաղ էրե», կամ «Օխտը գեղ մուրա մում վառե՝ պրծնիս կը»։

Ընդունելով նետ դնողի խոսքը որպես պատգամ, առանց այլևայլու-թյան կատարում են։

Ժողովրդյան կարծիքով շատ հիվանդություններ առաջանում են զանազան սրբերից, նայելով, թե որի՞ պասը չեն պահել կամ որի՞ն բարկացրել են, իրենց խոսքերով՝ բոլոր հիվանդությունները «մեղայ պատուհաս» են, որ չեն վերջանա մինչև չապաշխարեն, այսինքն այդ պատուհասը տվող սրբի «սիրտը չառնեն», մատաղով, բոկոտն ուխտագնացությամբ, մոմ վառելով և այլն։

Բայց նախ և առաջ պիտի գտնել թե հիվանդությունը ո՞ր սրբից է, որովհետև եթե նա «չողորմանա, մյուս սրբերը իրենց ընկերի խաթեր՝ տերը չեն ըլլի»։

Իմանալու համար թե հիվանդությունը որ սրբից է՝ «Փիլիպա են թափել տալիս»։

Այս բանում հռչակ է ստացել դիլիսկացի Բադալի կինը, որ այժմ բնակվում է Գանձա. սա բնիկ և ոչ գաղթականներից է և սովորել է փիլիպա թափել յուր մորից։

Սա իմ ներկայությամբ բամբակից երեք հատ փիլիպա շինեց՝ մի մատի հաստությամբ և մի թիզ երկարության ոլորած պատրույգ և փաթաթեց ջահրի իլիկին (բարակ երկաթե ճաղ), ապա խաչակնքելով փիլիպան՝ երկուս ծալեց, իլիկը կոխեց ծալի մեջ և երկու ծայրը միասին իլիկի վրա փաթաթեց։ Հետո նշանակեց թե Աստվածածնից, սա Ս. Կարապետից, սա էլ Ս. Գեորգիցն է և դրեց կիսով չափ ջուր լցրած քարղանի վրա, այնպես որ ջուրը չհասավ փիլիպաներին։ Մի ուրիշ քարղան էլ գլխիվայր ծածկեց փիլիպաների վրա։ Քառորդ ժամից վերցրեց քարղանը և փիլիպաները բացեց։ Ս. Աստվածածնի փիլիպան երկու ծայրից բռնած արձակելիս իլիկը միջից դուրս եկավ, մյուսներինը մնաց մեջը։ Կինը բացատրեց, թե հիվանդությունը Ս. Աստվածածնից է և առողջանալու համար պետք է գնաս Գյումրի՝ Յոթըվերքին ուխտ։

Եթե առաջին անգամ երեք փիլիպաներից ոչ մինը չարձակվի, կրկնում է գործողությունը, ուրիշ սրբերի անուններ նշանակելով։

Ես շատ խնդրեցի, որ ծածուկ բացատրի ինձ դրա գաղտնիքը, սակայն նա ինձ անհավատ կոչեց և պնդեց, թե սրբերի զորությամբ է իլիկը փիլիպի միջից դուրս գալիս։

Ես առա փիլիպան և երկար փորձեցի, մինչև որ գտա գաղտնիքը՝ երկու ծալելիս՝ փիլիպայի մի ծայրը կարճ է անում, այնպես որ իլիկի վրա փաթաթելիս՝ իլիկը կարճ ծայրից դուրս է գալիս։

Բույսեր

Ժողովուրդը հավատում է, թե, եթե շաղգամը այնպես կպճեն, որ կպճեղը մի ամբողջ կաոր լինի և դնեն բարձի տակ, մյուս օրը ոսկի կդառնա։

Հացի համար ջուր տաքացնելիս խաչակնքում են, որ սատանան վրան չլվացվի։

Հացը գետին գցելը մեղք է, որովհետև Քոնիր ընկել, մաքրվել, մկրտվել է։

Մաղած ալյուրի վրա խաչ են քաշում, որ չարը չմոտենա։

Սոխի կպեճները կրակի մեջ չեն ձգում, որ սխըլմոտները չանիծեն։

Կենդանիներ

Եթե կատուն հիվանդի վրա պառկի, կասեն հոգեառ հրեշտակը եկել է, հիվանդը պիտի մեռնի։ Բայց որովհետև կատուն արգելում է հոգեառ հրեշտակին հիվանդի հոգին առնելու՝ մահը հեշտացնելու համար կատուն հեռացնում են հիվանդի մոտից։

Սև աղվեսին հրացանով խփելիս ականջները բուրդ են կոխում, որպեսզի աղվեսի ձայնը չլսեն, ապա թե ոչ՝ կմեռնին։

Սև կատու չեն պահում, սատանի եղբայր համարելով նրան։

Կովի գլխին ջուր են ածում, որ կանաչի կապած կաթը բացվի։

Կնքահայր չեղողը հավ չի մորթում, որ թուրքի մորթ չլինի։

Կիրակի օրը հավը թուխս չեն դնում, որ ձագերը կաղ չլինին։

Մորթած հավի քունքիթները (փորում եղած փոքրիկ հավկիթները) անպտղները չեն ուտում, որ հարսանիքի դիշերը չդեղնին։

Եթե շունը ոռնա, տնեցիներից մինը կմեռնի, ուստի ոռնալիս ծեծում են, որ այլևս չոռնա։

Եթե մալը (եղջյուրավոր կենդանիներ) փռշտա՝ թիփի կլինի։

Եթե եղնները վերև նայեն և հոտմտան՝ անձրև կգա։

Արևով անձրև գալիս, ասում են, եղնիկները կծնին։

Կենդանիները ծնելիս սանդերքը բերանքսիվայր են դնում, որ կենդանու դոլը վայր թափի։

Կովի կաթը շնվազելու համար սկզբներում կթած կաթը դուրս չեն տալիս։

Թռչուններ

Եթե աքաղաղը կամ հավը անժամանակ կանչէ՝ կասեն հոգեառ հրեշտակն են տեսել, տնեցիներից մինը պիտի մեռնի, ուստի և մորթում են դրանց։

Մարտի 9-ին արագիլը (լակլակը) վերադառնում է յուր համար պատրաստված բույնը։ Եթե նրա կացում մի կտոր լինի, դա նշանակում է, որ պատերազմ, կոտորած է լինելու, իսկ եթե հացաբույս՝ հացահատիկների և պտուղների առատութիւն։

Հավը թուխս դնելիս թուխս դնողը յափուղի ծայրը յուր գլխին է ձգում, որ ձագը «փումփուլլի» լինի, իսկ եթե հանդերձի փեշը վեր ցկե, «կուտուղ» կլինի։

Եթե հավն անժամանակ կանչէ՝ հանում նրան, տան երդիկից վայր են ցկում, եթե դեպի բոնիրը գնա՝ վատ նշան է, մորթում են, իսկ եթե դեպի դուռը գնա՝ լավ է, կուտ են տալիս։

Դեղ

Մոլոքորից[1] առողջանալու համար, մերկանում, փաթաթվում են մեզարի (այծի մաղերից հյուսվածք) մեջ և երեք անգամ գնում գլորվում 4—7 անգամ ամուսնացող մարդու կամ կնոջ տան կողմում։

Եթե երեխայի բերանը փրփրում է, կնքահայրը յուր թաշկինակը կամ կոշիկի ծայրը քսում է երեխայի բերանին, որ փրփուրը անցնի, առողջանա։

Երաշտ ժամանակ իրիցկնկա բաթաթը (հացառ) գողանում, ջրհորն են ձգում, որ անձրև գա, և կամ իրիցկնկանը ձգում են ջուրը և ջուր ածում վրան։

Նույն նպատակով կանայք տղամարդկանց գլխարկ ծածկում, արորի են լծվում և գետը՝ ընթացքին հակառակ վարում։ Սրանց քշում է իրիցկինը։

Երաշտ ժամանակ երեխաները մի ձողի վրա անց են կացնում մի ցախավել, վրան ցկում են յափուղ և այդ չամչախաթունը երկու հոգի դռնեդուռ ման ածելով՝ երգում են.

---

1 *Մարմնի վրա բշտիկներ են գոյանում և սաստիկ քոր գալիս, և մի տեղ քորելիս, բշտում է մյուս տեղը։*

Պուրպատիկն էկեր է,
Շալե շապիկը հագեր է,
Կեմե գոտիկ կապեր է,
Կարմիր կովեն եղ կուզե,
Սև հավեն հավկիթ կուզե։

Տնեցիք ամաններով ջուր պատրաստելով հարցնում են.

«էրթըկեն կուզե՞ր, թե դռնեն»։ Եթե՝ «դռնեն» ասացին՝ երդիկից են ջուր ածում պուրպատիկի և տղոց վրա, իսկ եթե՝ «էրթկեն»՝ դռնից։ Միևնույն ժամանակ մի հավկիթ են տալիս։

Անասունները եթե սանճու լինին, Ծառզարդարի ճյուղով զարնում են, անցնում է։

Կատաղած մարդու գլխին, եթե 40 օրում չկարողացան բժշկել, մայրը մոխիր է մաղում, որ մեռնի։

Օձի շապիկը «փափախի» (գտակի) մեջ կարում են, որ գլխացավ չպատահի։

Արևը մայր մտնելուց հետո մակարթ դուրս չեն տալիս, որ մածունը մակրթվի։

Յանքի ժամանակ կրակ դուրս չեն տալիս, որ ցանքը լավ լինի։

Գորտնուկից աոողջանալու համար գորտնուկի համարով գարի կամ ազոթում ցանում են, կամ մեռելի պատանքի մեջ լցնում։ Գարու չորանալու հետ չորանում է և գորտնուկը։

«Մայիսոցին» (մայիսին) սանդերը դուրս չեն տալիս, որ գառները չքամոտին, նույնպես և խնոցին, որ կարագը քիչ չլինի։

Մայիսի յոթին, գիշերը, խորոզխոսուն (հավախոսուն) լողանում են, որ ջուրը տանի ցավ ու չորը։

Կարկուտ գալիս՝ աղ են վերև գցում, որ կարկուտը անձրևի փոխվի։

Տան բարաքար

Տան բարաքարը պահելու համար՝

Թթխմորը դուրս չեն տալիս։

Մի բան ծախելիս կամ փոխ տալիս, նրա մի մասը կորում պահում են։

Աղքատին ամբողջ հաց չեն տալիս։

Երեկոյին տունը չեն ավլում։ Եվ եթե ստիպված լինին ավելելու՝ ավելի ծայրը ճրագի վրա մի քիչ վառում են։

Գիշերը հացի սփռոցը դուրսը թափ չեն տալիս։

Աղբը գիշերը դուրս չեն ածում։

Նույն նպատակով անձրևի ջրով լվանում են ոտները թոնրի մեջ կախած։

Կրակի վրա ջուր չեն ածում, որ օջախը չմարի՝ ասունը չավիրվի։

Մայիսին 10 աթար են շինում և պատերին կպցնում, որ աթրի բարաքաթը ավելանա։

Տան բարաքաթը չպակասելու համար ինչ որ վերցնում են, ասում են. «աստծու խաչը վրադ»։

Պատի երեսին ջուր չեն սրսկում, որ չաղջատանան։

Տան մեծը մեռնելիս ոտը լվանում, ջուրն ածում են սնվածքը, որ տան բարաքաթը մնա։

Հացը չթանկանալու համար կացինը ուսը դուրս չեն դնում։

Հյուր

Հյուր կգա՝

Երբ քիթ ու բերանը քոր գա։

Երբ հաց եփելիս դունդը, կամ հաց ուտելիս պատառը ձեռից վայր ընկնի։

Երբ կատուն լվացվի։

Երբ երեխան ոտների միջով նայի։

Երբ աչքը պաղի։

Երբ ուսը խաղա։

Երբ գոգնոցի կապը քանդվի։

Երբ վառած մոմի ծայրին բարակ շյուղեր մնան։

Երբ դրգալը ձեռքից վայր ընկնի՝ տղամարդ հյուր կգա։

Երբ բապուճը ոտքից ելնի՝ կնիկմարդ հյուր կգա։

Երբ «բերբերունքը բեռ վերցնենն» (բերբիւսնունքը ճպռոտին) հյուր կգա, յուր հետ բեռներ բերելով։

Երբ դունչը կեռա՝ միրքավոր հյուր կգա։

Երբ երդիկից շունը ներս նայի՝ թուրք հյուր կգա, և այն էլ այն կողմից՝ դեպի որ կողմը որ դառնա շունը։

Հյուրին շուտ հեռացնելու համար նրա ոտնամանների վրա աղ են ցանում, կամ ծածուկ ալյուր են ցանում գլխին։

Հյուրը սեղանի վրա անձևոցիկը չի ծալում, որ ուշ-ուշ չգա։

Ճանապարհորդ

Եթե մինի ոտքը քոր գա, ճանապարհ կերթա։

Ճանապարհորդը շուտով վերադառնալու համար՝
Ճամփու պաշարից հաց են դողանում։
Ետևից ջուր են սրսկում։
Բաղանիս են գնում։
Տուն չեն ավլում՝ մինչև նրա մի գետ անցնելը։
Դուշակելու համար թե ճանապարհորդը ուշ թե շուտ կգա՝ երեխային քորել են տալիս յուր գլուխը, եթե հետու քորեց, ուշ կգա, իսկ եթե մոտիկ՝ շուտ կգա։
Որպեսզի ճանապարհորդը չվերադառնա՝ հետևից պուտուկ են ջարդում։
Ճանապարհորդի բարձը կամ շորերը վերցնում են իրենց տեղից, որ դժգոհ չհեռանա։

Մազ

Մազը երկարելու համար մայիսի 7-ին եթե անձրև գա՝ հերարձակ կանգնում են անձրևի տակ։
Նույն նպատակով բաղանիսում գողանում են երկար մազեր ունեցողի ջրից և իրենց գլխին ածում։
Եվ կամ՝ երկար մազեր ունեցողի մազերն անզգալի կերպով աջ ձեռով բռնում են և երեք անգամ տակից անցնում են։
Եթե երեխաներն աղջիկների մազերին ձեռք տան՝ մազերը կթափին։
Մազերը երկարելու համար ուտում են ճիլ պանիր կամ մսի ճիլ։
Աղջիկներն ու կանայք այր մարդկանց գլխարկ չեն ծածկում, որպեսզի մազերը չթափին։
Կտրած մազերը վայր չեն թափում, որ գլխները չցավի։

Ատամ

Դորա տեսնելիս պռունկները սեղմում են, որպեսզի գորտերը ատամները չհամրեն, ապա թե ոչ՝ շուտով կթափին։

Եղունգ

Կտրած եղունգը թոնրի շուրթը թաղում են և ասում.

«Եղունկ, դու ֆոս կեցի,
Ադամ, դու վկա կեցի.

որպեսզի վերջին դատաստանի օրը գան իրենց գտնին։

Եթե ականջը կանչէ, այդ նշանակում է, որ իրենն բամբասում են։

Եթե թոնրի մեջ հացը ծակի, «չար բերան կբացվի»՝ նոր բամբասող կերևա։

Հաջողություն և անհաջողություն

Եթե աջ աչքը խաղա՝ գործը կհաջողի, իսկ եթե ձախը խաղա՝ չի հաջողի։

Եթե «ջուխտ (զույգ) սապռ գա», խեր (հաջող) է, եթե «թաք» (կենտ)՝ ձախ, անհաջող։

Եթե աջ բուռը քոր գա, փող կմսխես, իսկ եթե ձախ բուռը քոր գա՝ կստանաս։

Եթե մեջքը կեռա՝ գործը կհաջողի։

Փոնչտալիս խաչակնքում են երեսը՝ որ գործը հաջող դնա։

ԲԱԽՏԻ ԵՎ ՃԱԿԱՏԱԳՐԻ ՄԱՍԻՆ. ԵՐԱՋ, ՏԵՍԻԼՔ ԵՎ ԹՈՎԶՈՒԹՅՈՒՆ

Ախալքալաքի գյուղացի հայ ժողովուրդը սաստիկ հավատում է բախտին և ճակատագրին։ «Թյակյար ղսմյաթ է (բախտ) գլխի ու գլխի. ճակատի գիրն էտ է, ինչ գուլես՝ էրես», ասում է նա խորին համոզմամբ, և այս երկու գաղափարն անշարժության մեջ է պահում նրան։ Ամեն մարդ ունի յուր ղսմաթը, բախտը, որովհետև նախքան ստեղծվիլը, նրա ղսմաթն է ստեղծվում։

Պատմում են, թե Մովսես մարգարեն խնդրել է աստծուց մի բան էլ ինքն ստեղծել, և ստեղծել է օթիզը անասունների դեքից։ Իսկույն սրանք թափվել են Մովսեսի վրա, որը վախենալով բացականչել է, թե՝ սա ինչ բան է, ես ստեղծեցի, ինձ վրա թափան։

«Թող առաջ ղսմաթն ստեղծեիր և ապա իրենց, խրատում է աստված, որ իրենց ղսմաթով ապրեին»։

Միևնույն ժամանակ լիովին հավատում են, թե, եթե ղսմաթ է՝ ուր է ուր չէ՝ հաղար էլ հետևն ընկնի, ոչինչ չի կարող շահել։

Ժողովրդի կարծիքով ղսմաթը կամ դովլաթը մի երիտասարդ է, ղըռ ձիավոր։

Մի անգամ սա գնում ծեծում է Գում գյուղի Մկրտիչ Սարգսյանի դուռը։ Սա հարցնում է թե՝ ո՞վ է։

— Քու ղսմյաթդ եմ,— պատասխանում է ղսմյաթը։

— Հրամմե նես,— հրավիրում է Մկրտիչը։

— Օր գամ, ինծի ինչդ պիտի պահես,— հարցնում է ղսմյաթը։

— Կուտեմ, խմեմ, քեֆիս կաշեմ,— պատասխանում է Մկրտիչը։

— Չէ, ասում է, ես քու քովդ չեմ կրնը կենամ։

Քշում, գնում է սրա մյուս եղբայր Կարապետի մոտ, ծեծում է դուռը, և երբ միևնույն հարցը սրան ևս առաջարկում է, սա պատասխանում է.— Դնեմ կը սնտուկս, ղալիմ կողպեմ կը, նյա կուտեմ, նյա կը խմեմ, սալթ երեսիս սեյր կենեմ։

— Հա,— ասում է ղսմաթը,— ես քու քովդ կը բնակվիմ։

Այնուհետև նա սկսում է հարստություն դիզել։

Շատերը պատմում էին.

«Մարթուն մեկը չոպանութեն կէնե էղե, սաղ տարին արուն-քրտինք կը մանի, իրեք սոմառ հաց անճախ կաշխատի, իրեն ընտանին կը պահե։ Կնիկը վիրա կըսե կը անոր, թը՝ իրեք սոմառ հացով ի՞նչ ապրուստ ըլլի, դնը ժամ, ասսու փեշը բռնե, բյալքի մե դուռմ՝ բանա։ Ասիկ մոթմոթա կը կնկա վրա թը՝ տեյմ՝ օր հիմի էլի ցամաք հաց կար ուտելու, հիմի գործս թողնեմ ժամերն ընկնիմ՝ տեսնիմ ի՞նչ պիտի ուտես։ Չարասըդ դեղե կերթա ժամ։ Ժամեն օր գելնեն, մե մարթմ՝ ասոր կըսե կը թը՝ արի դնը ոչխարներուս աշե, համրե տես քամո՞մ է՝ քեզի մե սոմառմ՝ ցորեն կուտամ։ Ասիկ վաղզե կը տուն կնկանը հարցնե կը թը՝ էրթա՞մ։ Կնիկը կըսե՝ ինչի՞ չես էրթա, աստից հավել պիտի տան, աշխարքին բանն է։ Աս չոպանը գուգա օր էրթա, մարդը կըսե. «Չէ, ախպար, ուրը կոտ կուտամ, ավել չաժե»։ Ասիկ կենա գուգա տուն, կնկանը հարցնե կը թը՝ էրթա՞։ Կնիկը կըսե. «Սոմառմ՝ օր չի տա՝ թող ուրը կոտ ըլլի, աստ ա քիչ բան չէ»։ Ասիկ ետ կը դառնա օր էրթա, մարդը կըսե կը. «Ջուխտըմ չարուխեն ավելի չեմ տա, գուզես գընը՝ գուզես մի էրթա»։ Ասիկ կենա գուգա կնկանը կը հարցնե։ Կնիկը կըսե կը թը. «Գլոխքար, թող ջուխտըմ չարուխ ըլլի, ոտվիքա էլ է կը ծածկե»։ Ասիկ գելլե կերթա։ Կերթա կաշե կը օր սյուրուն մե չայրի-չիման տեղմ՝ կարծե՝ ջահիլ աղամ՝ ալ մուղաթ կենա կը։

— Ախար, դուն վո՞վ ես, օր աս մարդուն ոչխրտանքը մուղաթ կենաս կը,— կըսե,— անիկ ինծի դրկեց, օր գամ ես մուղաթ կենամ։

— Ես անոր դյովլաթն եմ,— կըսե տղան։

— Դու օր անոր դյովլաթն ես, իմ դովլյաթս ո՞ւր է,— հարցնե կը աստ չոպանը։

— Տիա անտեղ ծառին տակը քներ է,— կըսե կը դովլյաթը։

Ասիկ գելլե կերթա, տեսնի կը օր ղորթ ծառիմ՝ տակ ջահիլ աղամ՝ քնած է։ Կըսե՝ կա-չկա ասիկ իմ դովլյաթս է։ Ջոքի կը առաջը գուլա,

աղաչե կը ըը՝ նիխերս կտրեր է, ո՞ւր ես անտեր անտիրական թողե, ընկեր քեզ։ Դովլյաթը կը զարհնի, կըսե. «Ի՞նչ գուզես»։ Ըը՝ ավուր հացի կարոտ ենք մնացե, մե ճարըմ էրե։ Դովլյաթը մե ձեռը մե փարամ՝ կը բռնե, մեկալին տասսը փարա, կըսե. «Ասոնցեն մեկն առ գնը»։ Զոպանը մտածե կը ըը՝ տասն օր առնե, մեկալ անդամ էրես չպտի ունենա բան ուզելու, մե փարան կառնե։— Ագահութեն օր չէրիր, մե փարան առար, հետդ գուգամ,— կըսե դովլյաթը։ Զոպանը գելլե գուգա, գուգա տեսնի կը օր էրկու տղա ճամփին օրթան ծեծկըվին կը։ Կերթա քովերը գիմանա, օր մե քարմ՝ էն գտե, անոր համար գարկվին կը՝ ըե վերն առնե։ Հանե ան մե փարան, կուտա առոնց կառնե քարը, ցկե կը ջնպը։ Գուգա գտնի ոչխարի տիրոջը կըսե կը ըը՝ գնացի տեսնեմ մե ջահել աղամ՝ մուզաթ կենա կը, հարցուցի իմացա, օր քու գովլյաթդ էտ է էղած էղե, ալ ինչի՞ ինծի ղրկեցիր, անիկ մուզաթ կենա կը։ Ասիկ չափե մեկեն երեք սոմառ ցորեն կուտա կը ատոր։ Աս մարդը ուրախ-ուրախ կերթա տուն, ցորենը լըլե կը ամբարը, քարն ա հանե ըեե կը ըյարաբը։ Գիշեր օր գելլի, կաշեն օր քարը լուս կուտա կը։

Մե գիշերմ՝ ա բազրկյանի մեկը բեռները ըափե, գուզե օր կրակ էնե։ Կաշե՝ հեռուն մե լուսմ՝ կէրևա, գուբա օր մե անթեզմ՝ ուզե։ Գուգա դյուզ աս չոպնին տունը, նես կը մտնի, կաշե օր մե քարմ՝ ըյարաբը լսի մեջ կը վառի, օսահաթ հասկընա կը, օր անգին քար է։ Մեկեն ի մեկ կըսե կը ըը՝ տասսը հազար օսկի կուտամ աս քարին, կուտա՞ր։

Անոնք ա լեզվին կը կապեն։ Ասիկ օսկիքը կը համրի, կառնե քարը կերթա։ Հըմը չոպնին կնկանը աչքը կը խմե, ըեղմ՝ քաղաքը ծախե կը աս անգին քարը, օսկիքը կը բառնա, դառնա գուգա կը կենա աս չոպնին տունն, օր մե հնարքովմ՝ կնկանը փախցնե, փարոցն ա, ըը կրնը, տեր ըլլի։ Գուբա գիշնի, նըստին գոնուշմիշ գլլին, աս բազրկյանը գուգե օր չոպնին վյարամ բերել տա, վերցնե կըսե կը ըը՝ անխելը, տասսը հազար օսկու առած քարտ տասնհինգ հազարի ծախեցի։

— Անխելը դու ես,— կըսե կը չոպանը, —ես մի փարիմ՝ էի առե, տասսը հազարի ծախեցի։

Ըյազրկյանը աս օր գիմանա՝ օսահաթ վարամ կը բերե, մեռնի կը։ Ասոր աշխարքին մալը, դյովլյաթը մնա կը չոպնին։ Արթղ ասոնք անտից էտե իրենց դովլյաթեն ձեռը չեն վերցնե վիրա, ժամ կերթան ու անոր համար աղոթք կինեն»։

Ղսմյաթը տուն հրավիրելու համար դեկտեմբերի 31-ին աղջիկները հեծնում են ակիշը և այսուայնկողմ վազում ասելով. «Բախտ, սարն ես, ձորն ես՝ էկե»։

Նոր տարու օրն էլ տան պառավը դնում է սալի մեջ «տարին» (մի

մեծ խմորեղեն), վրան մեղր լցնում և գավազանը քոթքոթացնելով դուրս գնում, դառնում դեպի արևելք և ասում. «Դովլլյաթ, սարն ես, ձորն ես՝ արի տուն»։

Երեկոյին զանգերը խփելիս ծալքի դռները բաց են անում, որպեսզի դովլլյաթի դռներն էլ բաց լինի։

Վառած հաց են ուտում, որ դովլլյաթավոր լինին։

Ինչպես ասացի, ժողովուրդը սաստիկ հավատում է ճակատագրին, իբր աստվածությունը մարդը դեռ չծնած, դրել է նրա ճակատին նրա ամբողջ կյանքը, որից խոտորելու ոչ մի հնար չկա։ Ճակատի վրա երևացող կաբերը նա համարում է ճակոի դիր և լռելյայն հպատակվում յուր վիճակին. «Ճակատիս աս էր գրած, ի՞նչ էնեմ»։

Պատմում են, թե մի վարժապետ մայիսի 7-ին յուր աշակերտներին զբոսնելու է տարել։ Հանկարծ գլորած քարը դիպել է մի երեխայի և սպանել։ Երբ սրա ծնողները պահանջել են վարժապետից իրենց որդուն, սա աղաչել է աստծուն, որի հրամանով, սպանված երեխան կենդանացել է և ասել ծնողներին, թե ի՞նչ եք ուզում ուսուցչից, որ կողմը փախա, քարը նախիցս եկավ, իմ ճակատագիրն էլ այդ էր։

Ժողովուրդը սաստիկ հավատում է և երազներին։ Նրա կարծիքով աստվածությունը, սրբերը իրենց կամքը հայտնում են մարդկանց երազների մեջ, երբեմն իրենք իսկական և երբեմն սպիտակամորուս ծերունիների միջոցով։

Երազների միջոցով մինչև անգամ սիրահարվում են։ Ոչ միայն հավատում, և սպասում են, որ Ս. Սարգսին ալի կլիկ ուտելուց հետո, «զամբաթ էղած» աղջիկը կամ տղան գա ջուր տա, այլև ուրիշ ժամանակ աղջիկ և տղա երազներում տեսնում են միմյանց և «փութա» են տալիս. փոխարինում են մատանիները, երդվում միմյանց գտնել և ամուսնանալ։

Այնուհետև երիտասարդը երգելով, օրինակ ասում է.

Կանչենք, Օխտն ախպար, ինծի իմտատ գա,
Աստվածածնա շնորհքով յարս ինծի տա։

Շրջում է գյուղից գյուղ, գավառից գավառ, ամեն տեղ ազատ մտնում, աղջիկներին տեսնում, որ փութա տվող աղջկան գտնի, իսկ աղջիկը հայտնելով իրեն ծնողներին իրեն փութա տալը՝ հրաժարվում է ամուսնանալ, մինչև «զամաթ» եղած նշանածը չգա իրեն չգտնի։ Ժողովուրդը շատ համակրանքով է վերաբերվում դեպի փութա տվածները, և միջոց է տալիս նրանց միմյանց գտնելու։ Այսպես աղջկան չեն

ստիպում ամուսնանալ և թույլ են տալիս գնալ տեսնելու օտարական ճամփորդին և կամ ում նա կցանկանա, իսկ սիրուհուն փնտրող երիտասարդին ամեն տեղ ընդունում և հյուրասիրում են։

Երազների միջոցով ստանում են և իմաստություն, շնորհք, և օտար լեզվով խոսելու ընդունակություն։

Պատմում են, թե Հակովբ պատրիարքը շատ բթամիտ և անուս մարդ է եղել, մի օր մնացել է մայր եկեղեցու մեջ և աղոթելուց հետո քնել։ Մայր Աստվածածինը երազում տվել է նրան բաժակը ըմպելու, որով և նա իմաստություն է ստացել։

Բոլոր նետ գնողները, գարի ցկողները, փիլթա թափողները և այլն, հավատացնում են, թե երազում երևացել է իրենց այսինչ սուրբը կամ Մայր Աստվածածինը և իրավունք է տվել իրենց այսինչ ծավչությամբ պարապելու։

Գանձայի Աբոյենց Մինասը երեխայության ժամանակ, երբ վրաց մի գյուղում ծառայում էր, վրացերեն չէր հասկանում, ուստի և սխալմունքներ էր գործում և թակվում։ Մի օր ևս այդպիսի պատճառով թողել էր ծառայությունը, փախել, մտել եկեղեցին, որ այնտեղ ծածուկ դիշերի և առավոտ փախչի դա տուն։ Դիշերը երազում տեսնում է Ս. Կարապետին, որ ասում է իրեն. «Մի վախենա, օղո՛ւլ, մի վախենա, առ իսի կորեկը կվ, լեզուն սորվիս կը»։ Սա առնում երեք բուռ կորեկ է ուտում, առավոտ զարթնում է տեսնում, որ կարող է վրացերեն վարժ խոսել և հասկանալ։ Գնում է գյուղ և շարունակում յուր ծառայությունը։

Թեև գյուղերում երազահանությամբ պարապողներ այժմ չկան, բայց զանազան պառավներ հռչակ են ստացած երազներ բացատրելում և շատերը, մանավանդ հարսները, դիմում են նրանց իրենց տեսած երազները բացատրելու։

Պետք է ասել և այն, որ այս գավառի թե տղամարդիկ և թե կանայք, մանավանդ պառավները, հաճախ երազ են տեսնում և առավոտ զարթնելիս առաջին բանը երազը պատմել ու բացատրելն է լինում։ Ոմանք էլ հայտարտանում են թե իրենց երազը «չատալ» է, նույն օրը կկատարվի։

Երազահաններ ժողովրդի ձեռքերին չկան, որովհետև շատերը կարդալ չգիտեն, միայն տիրացուներից և քահանաներից ոմանք գործ են ածում «Հավախօս» կոչված երազացույցը։ Իսկ ինքը ժողովուրդը բացատրում է երազը յուր փորձերի վրա հիմնված։ Այսպես, օրինակ, եթե երազում հաց տեսնեն՝ դա «դովլյաթ», հարստություն է նշանակում, ջուր՝ բարություն, ատամ քաշել՝ ազգականի մահը, մահը՝ երկար կյանք, փողը՝ ցավ և այլն։

Ժողովրդի, մանավանդ կանանց նախապատվությունն էլ բավական զարգացած է, և մեծ հավատ են ընծայում դրան. «Հոգիս վկայե կը», «Հոգին Սուրբ տուն տվեց» ասում են նրանք։

Ժողովուրդը հավատում է և տեսիլքի. իբր մարմինն անշարժ մնում է, իսկ հոգին գնում, թափառում դրախտ, դժոխք և այլ տեղեր, ապա նորից վերադառնում յուր տեղը։

Այս մասին մի բղավեցի պատմում էր.

«Օղրմած հոգի դամյուրջի Դիվինն ինչ է, այսի մեր Պողոսին հարը, աստր հետ վախտովմ ավի (որս) կերթայինք կը. օրմ՝ ա, ինչդ էղավ Ասպուլու դյուշին ըզնտիկ էղնիկմ՝ զարկինք։ Գնացինք թը բռնենք, աշեցինք օր զայգն անցավ, իսթին-ինթին ընկանք, հոգիքս էլավ ժուռ գալեն, բանմ ա չգտանք։ Էլանք քոռ փոշման էկանք աուն։ Քանիմ՝ օր անցավ, մեմ՝ ա մե օրմ՝ յաքսընա աա Դիվինը հիվնացավ, քսանը չորս սհաթ մեռածի պես ընկավ, սալթ սիրտը տըքտըքար կը։ Վախեցանք թը մեռնի կը։ Մեկալ օրը բիրտան-բիրտա էլավ նստավ, արթղ խնդլներուս եղանք։ Հարցուցինք՝ ախպար, աա ի՞նչ էղավ քեզի, քիչ մնաց թե տամլա էնեինք, հակիտի իսկ տղաքը քյուլի ջուր կուռեցան։

Անա թը՝ ախպար, հիչ մեմ չեք հարցնե, թե ի՞նչ էղավ։ «Ի՞նչ»։

— Ը՞, մեղա քեզի աստված, (խաչակնքում է)։

— է, ախպար, ի՞նչ է, մեմ՝ պատմե տեսնինք։

— Ի՞նչ պատմեմ, պատմըվի՞ կը օր պատմեմ։

— Ախր ի՞նչ է էղե, հոգիներս մի հանե, է՞։

— Էրեկ չէ առչի օրն օր մառալը կպուցինք ի՞նչ է, ըշտը ինծի տարան անտեղ, չորս բոլորս աշեմ տեսնիմ, օր մե ղոճա բաղմ՝, չայիրչիման։ Դիպա արևելը աշեմ օր մե-մե մարթմ՝ օսկի աթոռքին վրա նըստեր է, ճերմակ միրուք։ Ինծի տեսավ թը չը՝ դարձավ ըսաց թը՝ իմ մարալս զարնող ավճին դո՞ւն ես։ Ես ա զվախեցա, շիմշիտակ ըսի թը՝ ես եմ։ Անիկ աչքերը խոլրտեց, ըսաց թը՝ այտի կճուճները տեսնիս կը՞, ձեռքտ մեմ՝ մեչը կոխե, աշե ի՞նչ կա։ Աշեցի յազմ՝ կճուճմ՝ իսպես սրով շարած էր. ձեռքս մեչերը կոխեցի, աշեմ մի քանիսը լիքն են թեփով, մե քանիսը կիսատ. մեկին ա տակը բուում է մնացե. գիտե՞ս,— ըսաց,— աատնք օր կան՝ մարթուս յոմրն (կյանք) են, ում թեփն օր պարպի, ան մեռնի կը, այտի մի բուում մնացածը քուկըտ է, տարիմ էտև պարպի կը, ինչի քիչմ ա հոգիտ միտքտ չես բերե, ու կերթաս ուրիշին թյուվանք կը նետես։ Աս օր ըսաց, սարսմբեցա, բիրտան ետ զարթնա։ Հիչ մեկս ա չհավատցինք, հըմը ինչ էնես օր, տարին պատտեց էկավ, ան օրը մարդն ա ավանդեց։ Ատով հավատցինք, օր մարալին

ընկած տեղը սուրբ է։ Հիմի մենծ տերտերին հարսն ա օր քանի քյատյակ ընկնի, անտեղ լուս տեսնի կը։ Մենք ա անմեն տարի գարունը ուխտ կերթանք կը ֆոն, մեռնիմ սուրբ զորութանը, շատ զորավոր է»։

Կան և այնպիսի մարդիկ և առավելապես կանայք, որոնք հաճախակի են տեսիլք տեսնում, այսպիսիներին կոչում են քյադյակ ընկնողներ։ Սրանք իրենց համարում են մի սրբի «զուլ» և միայն նրա (իրենց աղայի)կամքն են իմանում և հայտնում ժողովրդին։ Այսպես Բզավետ գյուղի քահանայի հարսը իրենց տան սրբի «Օխտն ախպօր» զուլն է։ Շաբաթը մի կամ մի քանի անգամ, առավելապես շաբաթ երեկոներին, սրբի առջև աղոթելիս, սկսում է դողդողալ, հանկարծակի ընկնում է սրբի առաջ, ոտներն ու ձեռքերը խփում գետնին, բերանից փրփուր արձակում, գոչում և անզգայացած մնում։ Գյուղացիները, որ երկյուղած ու զգացված կանգնում են մոտը, հանում 10 կոպեկից մինչև մի ռուբլի ձգում են նրա ափսեի մեջ և ձեռը դնելով այդ կնոջ վրա հարցնում, թե՝ աղադ այսինչ հիվանդի, գործի և այլն մասին ինչ կհրամայե։ Սա էլ մի որևէ բան, հաճախ բոլորովին անկապ ու անիմաստ, ասում է։ Մի քանի գյուղերում էլ քաղաքի սրիկաները սաստիկ ծեծել են սրանց քյադյակ ընկած միջոցին, որոնք ծեծին չդիմանալով վեր կացել փախել են։

Ժողովուրդը հավատում է և «խորթլախներին», իբր անհավատների ննջեցյալները գիշերները գերեզմանից մարմնով դուրս են գալիս և ընդունելով առավելապես շան և այլ կենդանիների կերպարանք շրջում են։

Սրանք հաճախ հետևում են գերեզմանների մոտով անցնողներին և թեպետ վնաս չեն հասցնում նրանց, սակայն երբ հետները գնում են տուն, առավոտյան դիակ են դառնում և ձգվում տան մեջ։ Այսպիսի դեպքերում բահով կտրում են «խորթլախի» գլուխը և բանալով տան մեջ մի նոր անցք, այդտեղից են հանում դիակը ու տանում թաղում, որ այլևս «խորթլամիշ» չլինի։

Երբեմն էլ ասված պատժում է կանանց՝ նրանց մարդագայլ դարձնելով։ Երբ դրանք գիշերը իրենց երեխաներին քնեցնելուց հետո դուրս են գալիս, երկնքից գայլի մորթի է ընկնում նրանց վրա և նրանք գայլ են դառնում, գնում նախ իրենց, և ապա հարևանների երեխաներին ուտում։ Նրանց առաջ, ասում են, ամեն փակված դուռ բացվում է և նրանք ամենայն ճարպկությամբ անցնելով ամեն մի դժվարանցանելի տեղից, քանդում են երեխաների բալուղոցները և տանում երեխաներին ուտելու, և կամ բաց են անում նոր գերեզմանները և մեռելներն ուտում։ Ոչ մի զենքով չի կարելի նրանց սպանել կամ վիրավորել։

Այսպես՝ միայն գիշերները մարդագայլ, իսկ ցերեկներ՝ նախկին

կինը դառնալով, սրանք յոթ տարի տանջվում են և երբ յոթերորդ տարին լրանում է, գայլի մորթին թոչում է նրանց վրայից և նրանք այլևս մարդագայլ չեն դառնում։ Ասում են, թե եթե կարողանան դրանց մորթին գտնել և վառել, նրանք այլևս մարդագայլ չեն դառնա, սակայն նրանք այդ չեն ցանկանում և լուսադեմին տանում մորթիները մի ապահով տեղ պահում են։

ՊԱՍԵՐԸ, ՈՒԽՏ, ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ

Ժողովուրդը համարյա հավատի էական մասը պաս պահելն է համարում. նրա համոզմամբ պաս չպահողը հայ քրիստոնյա չէ, ֆառմասոն է (բողոքական)։ Ամենամեծ մեղքը նրանց կարծիքով, պաս ուտելն է. ավանդությունը ասում է, թե մի հարս քահանային յուր արած գողությունները, շնությունը, այլ շատ մեղքեր հեշտությամբ խոստովանելոց հետո՝ դժվարացել է մի մեղքը խոստովանելու։ Վերջը քահանայի հորդորով ստիպմամբ միայն խոստովանել է, թե մի չորեքշաբթի օր սխալմամբ յուղի բերանին դրած հացից մի կտոր կերել է։ Սակայն հետզհետե այս հավատը թուլանում է, որովհետև քաղաքացիները գյուղերում բացարձակ լուծում են պասը և ծիծաղում գյուղացիների վրա, որ պաս են պահում։ Միևնույն ժամանակ շատերն էլ վիճում են գյուղացիների հետ և աշխատում ապացուցանել, թե պաս ուտելը մեղք չէ։

Ոչ միայն պասերը առանց այլևայլության պահում են, այլև շատ պաս օրեր ծոմ էլ են պահում։ Օրինակ, Սուրբ Սարգսին, մինչև ճաշու ժամասացությունը և այլն։ Դեռ շատերն էլ կամավոր պաս են պահում և այս առավելապես հիվանդի առողջության կամ մի նպատակի հասնելու հույսով։ Կամավոր պասերը «ոտք» են կոչում, օրինակ, Սուրբ Աստվածածնա «ոտքն եմ» բռնե, նշանակում է Սուրբ Աստվածածնա պասից դատ մի շաբաթ առաջ էլ կամավոր պաս եմ բռնել։ Առավելապես պահում են հետևյալ կամավոր պասերը. ա. 9 դաս հրեշտակաց, բ. Խորիրդողի, Ս. Գևորգի ոտքը, գ. Ս. Հակոբա ոտքը (Սրբակոբ), դ. Հրեշտակապետաց ոտք, Համբարձումի ուրբաթ օրից մինչև վարդավառի կիրակին, բացի շաբաթ և կիրակի օրերը։ Կամավոր պասերը պահելուց հետո նույն սըրբին ուխտ են գնում։

Ուխտն անելն ու ուխտագնացությունը աստիճ զարգացած է Ախալքալաքի գավառում։

Հիվանդի ամենազորավոր դեղը, սիրահարի ամենազորավոր միջնորդը, թշվառների մխիթարիչն ու հույսը ուխտն ու ուխտագնացությունն է։ Մի հիվանդ կամ առավելապես նրա մայրն ուխտում է բոբիկ գնալ

սրբի դուռը, մի գառ կամ մի ոչխար մատաղ անել, մոմ վառել, մյուսն ուխտում է բոկոտն կամ չոքած յոթ գյուղ կամ մի գյուղի յոթ դուռ մուրալ խունկ, մոմ և այլ իրեր և տանել այսինչ սրբի դուռը, մի ուրիշն էլ ուխտում է ճակատի ոսկիներից կտրել մի կամ մի քանիսը և սրբի գանձանակը ձգել և այլն։

Ախալքալաքի գավառում ուխտատեղիները չափից դուրս շատ են, գրեթե ամեն մի գեղեցիկ լեռան գագաթ, ամեն մի ջրառատ, սիզավետ դաշտ, ուխտատեղի է, որոնց դերին գալիս է գարունը, ամառը կամ աշունը՝ ղրոսնելու ամենալավ միջոցներին։ Հիշենք ամենագլխավոր ուխտատեղիները։

Հայոց ուխտատեղիները

Ուխտատեղիների անունները	Ուր գտնվին ու ինչ լինելը	Ուխտագնացության օրը և արդյունքում պատկանելը
1. Ս. Գրիգոր Ավետաան	Կուռնաշեն գյուղի եկեղեցում, մի ձեռագիր հին ավետարան։	Աստվածածնին. արդյունքը պատկանում է Ախալքալաքի հայոց դպրոցին։
2. Ս. Հովհաննես	Գանձայի մոտ մի լեռան գագաթին։	Համբարձման։
3. Ս. Գեորգ	Սուլդայում, Սրբի սարի վրա, հասարակ մի խաչարձան է։	Աշխարհամատրան ելրակին։
4. Ս. Գեորգ կամ Օղլանվերան	Կարծախում, Գյոգդաղի լանջին, ժայռերի միջև. ուխտ են գնում ամուլ կանայք։	Աստվածածնա և Վարդավառի երկուշաբթի օրերը։
5. Ձդնավորի վանքը	Ախալքալաքի ձորում, գետի ափին, փոքրիկ մատուռ է։	Մայիսի 7-ին։
6. Տավշան քափի սուրբը	Ախալքալաք, Տավշան-քափա բլրի գագաթին։	Ս. Գեորգի տոնին։
7. Լուսավորիչ	Վաչիանի մոտ՝ Լուսավորիչ կոչված լեռան լանջին։	Կիրակի օրեր։
8. Խոսպիու սուրբը	Խոսպիայի լեռան վրա։	Խուլգումա գնալիս։
9. Ս. Թեոդորոս	Թաքչայի ձորակում, ավերակ մատուռ։	Գարնան կիրակի օրեր։

10. Ս. Խաչատուր	Ապուլու լանջին։	Կիրակի օրեր։
11. Ս. Հակովբ	Դադնշում, խաչարձան։	Կիրակի օրեր։
12. Ս. Գևորգ	Գոմ գյուղում, խաչի սարի վրա խաչարձան։	Կիրակի օրեր։
13. Ս. Մինաս	Աղագովայում, բլրակի վրա մի խաչարձան։	Ջատկին։
14. Ս. Սարգիս	Արագովայում, բերդի պարըսպի մեջ։	Կիրակի օրեր։
15. Աղքատ սուրբ	Փոքր Արագյալում	Կիրակի օրեր։
16. Օխտն ախպար	Իլավեան, քահանայի տանը յոթ ավետարան. քահանայի հարսը քյաղյակ է ընկնում։	Կիրակի օրեր, շահվում է քահանան։
17. Փոքրիկ Ավետան	Դիլիֆ, քահանայի տանը, մի տպած փոքրագիր ավետարան։	Կիրակի օրեր, շահվում է քահանան։
18. Ս. Ավետան	Ճանճաղա, մի գյուղացու տանը։	Կիրակի օրեր, շահվում է տանտերը։
19. Ավետարաններ	Օլավերտ, քահանայի տանը. Մեծ Արագյալ, մի գյուղացու տանը։	
20. Խաչարձաններ	Բզավետում, մինը գյուղի արևելյան կողմը, տների մեջ, մյուսը Աբուլի ճանապարհին։	Կիրակի օրեր և Արուէ գնալիս։
21. Ս. Հովհաննես. Ծմինդա Իոաննե	Բարալեթից արևելահյուսիս, երկու վերստ հեռավորությամբ, Ղարաուլ թափի հանդեպ. 6 վերշոկ հաստության, 4 արշին երկարության քառանկյունի քար՝ քարե երկու պատվանդանի վրա դրված, ծայրին քարե խաչ։ Պարսպապատ է։	Համբարձման. թեև վրացց ձեռին է և օգտվում է Բարալեթու վրաց եկեղեցին, սակայն հայերի խումն բազմություն թե Բարալեթից և թե շրջակա գյուղերից ուխտ են գալիս։
22. Սիրկ ավերակի մատուռ	Սիրկ ավերակ գյուղում գետի ափին փոքրիկ մատուռ է, դռան մոտ դրված է մի խաչքար, որի վրա քանդակված է 2 մարդ՝ ձեռներին մի խաչ բռնած։	Կիրակի օրեր։
23. Ս. Սահականնոս	Բարալեթ գյուղում։	Կիրակի օրեր։

Այս բոլոր ուխտատեղիներից ամենից հռչակավորն է Կուռնաշենիս Ս. Գրիգոր Ավետարանը, Վարդիս Ս. Աստվածածինը, Գանձայի Ս. Հովհաննեսը։ Սրանց տոներին գրեթե բոլոր գյուղերից, հեռուները նախընթաց, մոտիկները նույն օրը սայլերով, ձիով, ֆուրգոնով և հետիոտն թափվում են ուխտատեղի։ Առաջին բանը, մի տան մեջ տեղավորվելուց կամ մի վրան խփելուց և կամ մի սայլ վրան դարձնելուց հետո, լինում է դնալ սուրբը համբուրելու և եթե իրենց հետ բերել են թիթեղյա սիրտ, ձեռք, օրորոց և այլն, կախել խաչից կամ Ավետարանից։ Հետո արդեն ղբոսնում, խումբ-խումբ երգում, պարում են։ Այս ու այն կալի միջից, առվակի ափից հնչում է դավուլ-զուռնի ձայնը, աղջիկների երգը, տղամարդկանց հռհռոցն ու բարձր-բարձր խոսակցությունը, երեխաների խաղի աղմուկը։

Ուշ, դիշեր անցած, քնում և առավոտ շատ վաղ վեր են կենում բոլոր ուխտավորները, մեծերը դառները մատաղում, իսկ մյուսները եկեղեցի են գնում։ Այստեղ եկեղեցու շուրջը, մանավանդ առաջն ու ճանապարհի երկու կողմը քաղաքի մրգավաճառները դարսել են ամենայն տեսակ մրգեր՝ կաղին, քիշմիշ, լյապլյապու, արուկ, իվազ, խուրմա, արևածաղիկ, դդմի կուտ և ժամանակի թաց մրգեր՝ տանձ, խնձոր, դեղձ և այլն։ Մյուս կողմից դարսված են դլխու յազմաններ, թաշկինակներ, հասարակ սաներ կամ մատանիներ, փոփոլներ, բոշեր և այլն։

Այն կողմը հեռվում մի շինության մեջ մի դինեվաճառ էլ դինի, օղի է բերել ու դարսել։

Սրանցից յուրաքանչյուրը ժամերգությունից դեռ առաջ ձայնը ձգել և փառաբանում է։

— Ա՜յ լավ քիշմիշը, շատը դնաց, քիչը մնաց, հա՜։

— Իվազի լավը, իվազի՜...

— Խաեղ, խաեղ էկեք, Լուսավորչի դառներ (աղջիկներ)։

— Պա՜րպավ, պա՜րպավ, խնձորի լավը պարպավ։

Սրանց միջից աչքերը մրգերին հառած անցնում են ուխտավորները, այս ու այն բանը առնելով։ Եկեղեցու կամ սրբի դռան առջև մատաղ կտրողները մատաղներն են կարում, այդ գյուղի երիտասարդներն էլ դոխեր են ծախում, որ առնեն մատաղ անեն։ Շատ արժան, զույգը 5—10 կոպեկ։ Մի քանիսն առնում են աղավնիները և եկեղեցու դրան առաջ մորթում, ուրիշներ էլ, բայց շատ քչեր, բաց թողնում, որ թռչեն։

Ժողովուրդը լցվում եկեղեցին կամ եթե եկեղեցի չկա, հավաքվում սրբի շուրջը, ուր քահանան պատարագում է կամ ժամ ասում։ Եկեղեցում քիչ աղոթելուց և մոմեր վառելուց հետո դուրս են գալիս և քեֆին, ուրա-

խությանը նայում։ Եկեղեցում մնում են ծերերն ու պառավները, մեկ էլ նրանք, որոնք մի առանձին սպասելիք ունին սրբից և ուզում են իրենց աղոթքով և լացով նրա սիրտը գութ ձգել։ Այս ու այն կողմ վառվում են կրակներ և մատաղի կաթսաները վրան դրվում. ժամկոչն էլ այս մատաղից այն մատաղն է վազում և գառի ոտն ու գլուխը, մորթին առնում, որ հօգուտ սրբի վաճառեն։ Պատահում է, ինչպես օրինակ Կուռնաշէնում, որ մատաղներից սրբի հասանելիքը նախապես վաճառում են գտակ կարողներին։ Սրանք գալիս իրենք հավաքում են և այն ոչ թե խնդրելով, այլ պահանջելով, որովհետև նախապես գնել են։ Շատ անգամ մատաղ անողը տեսնելով գնողի կոպտությունը, չի ուզում տալ մորթին, որից և կռիվ, անբարեկամություն է առաջանում։

Երբ ժամերգությունը վերջանում է և ժողովուրդը համբուրում է սուրբը և խաչհամբույր ձգում, որի գլխին քահանան կամ ում որ պիտի հասնի, օրինակ, պարոցի հոգաբարձությունը, կանգնած հսկում է, ցըրվում է մատաղ ուտելու։

Քահանան շտապում է մի մատաղից մյուսը հասնել և օրհնել ու լավ պատառներից ճաշակել։

Հաց ուտելուց հետո արդեն ուխտավորները մի քանի խմբի են բաժանվում. բկլատները, աղջիկ թե մանչ, կին թե աղամարդ, գնում շրջապատում են մրգերի սեղանները, մի բիչ բան առնում, և հետեն ուտում, հետեն ծակ-ծակ նայում բախտավոր գնորդների գնած մրգերին։ Մի ուրիշ խումբ էլ շրջապատում է փիանկոն. սա մի կլորակ սեղան է, շուրջը միմյանցից մի վերշոկ հեռավորությամբ, երկու վերշոկալափ ձողեր ցցած և սրանց միջև զանազան էժանագին իրեր դրած, օրինակ՝ մի քանի կոնֆետ, մի փոքրիկ հայելի, ծխախոտ, դանակ, գյուղացու մատանիներ, քթախոտ, թաշկինակ և այլն։ Սեղանի տակ պտտվում է մի ձող սլաքով, որի ծայրը քսվում է սեղանի ձողերին։ Հանողը վճարում է երկու կոպեկ, մի շարժումով պտտեցնում է ձողը, որտեղ որ կանգնի սլաքը՝ այնտեղ դրվածը ստանում է, բայց հաճախ պատահում է, որ սլաքը դատարկ տեղի վրա է կանգնում։ Հարկավոր է կանգնել և դիտել, թե ինչ է արտահայտում նրանց երեսը, երբ տարվում կամ տանում են։

Մի քիչ հեռու փչում է տիկը և մի մանավոր խումբ քեֆ է անում ու պարում։

Մի ընդարձակ տեղ էլ հնչում է դավուլ-զուռնան և տղամարդիկ ու կանայք, երիտասարդներ և աղջիկներ միմյանց ձեռք բռնած աշխուժով պարում են։ Պարի շուրջը և մեջը հավաքվել է երեխաների, ծերերի, պա-

ռավների խումբը և կանգնած նայում և այս այնքան մոտից, որ շատ անգամ դիպչում են պարողներին։

Երիտասարդների և աղջիկների խմբեր բաժանվելով ընդհանուր պարից, կամ առավելապես ընդհանուր պարի ընդհատման ժամանակ պար են բռնում և երգելով պարում. նախ մինը միայնակ երգում է երգի մի տողը, հետո մյուսները խմբովին կրկնում են այդ «կ'առնեն»։ Երբ ձանձրանում են պարից, որ այնուամենայնիվ շատ երկար է տևում, ընդհատում են և սկսում գոտեմարտ։ Գյուղական տանուտերը, դատավորները, գլավան, որոնք եկած են իբր կարգ պահելու, բայց են անում մի ընդարձակ ասպարեզ և երկու հայտնի ճարպիկ երիտասարդներ բերում գոտեմարտելու։ Սրանք մինչի մեջքը մերկանում են և ոտաբոբիկ մի երկու շրջան անում միմյանց հանդեպ և ապա կպչում։ Ժողովուրդը բանի գնում, մոտենում է սրանց և գրեթե տեղ չի տալիս աղատ շարժվելու, դյուղական պաշտոնական անձինք էլ մարակներով խփում են հանդիսականներին, գոտեմարտողներին ասպարեզ տալու, որոնք ահագին աղմուկով և միմյանց հրհրելով հետ են փախչում ու նորից գալիս գոտեմարտողների բերանը մտնում և այս գլխավորապես այն նպատակով, որ նրան տեսնեն, թե իրենց գոտեմարտիկը ծուլանում է և պիտի ընկնի, վրա թափին բաժանեն և հաղթությունը անորոշ ծողնելով՝ թե իրենց և թե իրենց գոտեմարտիկի անունը լկտորեն։ Պատահում է, որ երբ հաղթվողի կուսակիցները վրա են թափվում նրանց ետ մղելու, որ իրենց գոտեմարտիկը հաղթանակով դուրս գա ասպարեզից այստեղ ընդհարվում են երկու կուսակցությունները և ծագում է կռիվ, պաշտոնական անձինք շահվելով դեպքից՝ մարակի տակ են առնում ատած անձերին և տուր թե կտաս, ընկնում են ժողովրդի հետևից և ոտներին խփելով հեռացնում, ցրում, սակայն սրանով մի սարսափելի իրարանցում են դյում, ժողովուրդը միմյանց հրհրելով, ճվալով, բոբոռալով այս ու այն կողմն է վազում։

Վերջապես գոտեմարտը մի քանի անգամ կրկնելուց հետո վերջանում է։ Քիչ հանգստից հետո սկսվում է ձիարշավը՝ ջիլիթ։ Երիտասարդներ, տղամարդիկ ձի նստած շրջան են անում ընդարձակ ասպարեզի վրա, որի շուրջը խռնվել կանգնել է ժողովուրդը։ Քշում, չափ են ընկնում միմյանց հետևից և ձևրքի ջիլիթը դյում խփում մինին և հետ դառնում փախչում ասպարեզի ծայրը։ Վերջինս ջիլիթը ձգած միջոցին յուր ջիլիթը դեմ է բռնում և եթե կարող է խփում, ետ մղում, հետո ինքն էլ նրա հետևից ընկնում և խփում նրան յուր ջիլիթով մինչև առաջնի ասպարեզի ծայր հասնելը։ Այս տեղիս ջիլիթավորները պաշտպանում են իրենց սիրելիներին և ընկնում չսիրածների հետևից։ Ժողովուրդը կանդ-

ՀԱՎԵԼՎԱԾ

ՆՇԱՆԱՎՈՐ ՏՈՆԵՐ

Նոր տարի կամ կաղինդ

Նոր տարին մոտենալիս կանայք իրենց շահով տված փողից վերցնում են և իրենց երեխաների համար նոր հանդերձներ են պատրաստում, որովհետև գերդաստանը շատ հազիվ է պատահում, որ կանանց կամ երեխաների համար հանդերձներ աներ։

Նոր տարու նախընթաց օրը առավոտ վաղ տուն ու դուռ մաքրում, իստակում են։ Փոքր հարսը սովորականից ավելի խմոր է հունցում, և թոնիրը վառում։ Անմիջապես գալիս է ապլան և մախմախապուր դնում վրան, նույն և ձիթով տոլմա, սիրքալի ու լոբի մյուս օրվա համար։ Երբ կերակուրը եփվում է, ապլան սկսում է մեծ հարսի հետ հաց թխել և երբ ավարտում է սկսում է նոր տարվա համար պատրաստությունն տեսնել։ Նախ բավականաչափ անիսոնով բաղաճ է թխում և հետո վերցնելով մի մեծ գունտ խմոր, աղոթում է. «Երկնավոր թագավոր, դու բարով խերով տարի էնես, դու հալևորիս ու տղոցս, հարսներուս ու թոռներուս հետ շատ տարիներու նյասպ էնես, մեկուճար աղջկանս ա մէ բարի դուռմ՝ բանաս»։ Հետո մի հատ մի կոպեկանոց խրում է խմորի մեջ, մի լալ գնտում, և ապա բանում, երեսը ձեռքով նշխեր անում, ու քիշմիշով ու ընկուզով զարդարում։ Հետո «Հիսուս Քրիստոս» ասելով դնում է այդ «տարին» հացաոի վրա և խփում թոնրի շուրջը։

Մինչդեռ ապլան «տարին» է պատրաստում, ամեն մի հարսը մի-մի վասիլ (տիկնիկ) և մի-մի ֆիսա (քսակ) է շինում խմորից և ընկուզով ու քիշմիշով զարդարում։ Հետո նշաններ են անում, թե այսինչ վասիլը այսինչ հարսի, և այսինչ քսակը այսինչ ամուսնունն է։ Ապա մինը եզների համար չորս պտուկ, երրորդը՝ հավերի համար կրիչ (ջրի աման), չորրորդը՝ ցորենի համար հոր՝ մեջը ցորեն, դարու համար դարձյալ հոր, մեջը գարի, հինգերորդն էլ մի խնոցի յուղի համար։ Հետո ապլան այս բոլորը խփում է թոնրի շուրջը և փայտերով ծածկում թոնիրը, որովհետև արդեն հովացած է լինում։

ՀԱՎԵԼՎԱԾ

ՆՇԱՆԱՎՈՐ ՏՈՆԵՐ

Նոր տարի կամ կալինդ

Նոր տարին մոտենալիս կանայք իրենց շահով տված փողից վերցնում են և իրենց երեխաների համար նոր հանդերձներ են պատրաստում, որովհետև գերդաստանը շատ հազիվ է պատահում, որ կանանց կամ երեխաների համար հանդերձներ անե։

Նոր տարու նախընթաց օրը առավոտ վաղ տուն ու դուռ մաքրում, իատակում են։ Փոքր հարսը սովորականից ավելի խմոր է հունցում, և թոնիրը վառում։ Անմիջապես գալիս է ապլան և մախախապուր դնում վրան, նույն և ձիթով տոլմա, սիրքալի ու լոբի մյուս օրվա համար։ Երբ կերակուրը եփվում է, ապլան սկսում է մեծ հարսի հետ հաց թխել և երբ ավարտում է սկսում է նոր տարվա համար պատրաստությունն տեսնել։ Նախ բավականաչափ անիսոնով բաղաճ է թխում և հետո վերցնելով մի մեծ գունտ խմոր, աղոթում է. «Երկնավոր թագավոր, դու բարով խերով տարի էնես, դու հալևորիս ու աղոցս, հարսներուս ու թոռներուս հետ շատ տարիներու նյասպ էնես, մեկուճար աղջկանս ա մէ բարի դուռմ՝ բանաս»։ Հետո մի հատ մի կոպեկանոց խրում է խմորի մեջ, մի լավ գնտում, և ապա բանում, երեսը ձեռքով նշխեր անում, ու քիշմիշով ու ընկուզով զարդարում։ Հետո «Հիսուս Քրիստոս» ասելով դնում է այդ «տարին» հացատի վրա և խփում թոնրի շուրջը։

Մինչդեռ ապլան «տարին» է պատրաստում, ամեն մի հարսը մի-մի վասիլ (տիկնիկ) և մի-մի ֆիսա (քսակ) է շինում խմորից և ընկուզով ու քիշմիշով զարդարում։ Հետո նշաններ են անում, թե այսինչ վասիլը այսինչ հարսի, և այսինչ քսակը այսինչ ամուսնունն է։ Ապա մինը եզների համար չորս պտուկ, երրորդը՝ հավերի համար կրիչ (ջրի աման), չորրորդը՝ ցորենի համար հոր՝ մեջը ցորեն, դարու համար դարձյալ հոր, մեջը դարի, հինգերորդն էլ մի խնոցի յուղի համար։ Հետո ապլան այս բոլորը խփում է թոնրի շուրջը և փայտերով ծածկում թոնիրը, որովհետև արդեն հովացած է լինում։

Մի քիչ հետո գրեթե ամբողջ գերդաստանը հավաքվում է այդ թոնրի շուրջը և անհամբերությամբ սպասում, թե ի՞նչ պատգամ պիտի լսե այդ Պյության հորից։ Վերջապես ապլան բաց է անում թոնրի բերանը և բոլորի հայացքները ուղղվում են թոնրի մեջ և ուրախության աղաղակները հնչում են ամեն կողմից։ Ապլան նախ հանում է «տարին» և ապա՝ քսակներն ու վասիլները. բայց այստեղ էլ պահվում է ավագության կարգը, նախ հանվում է գերդաստանի հոր, ապա մեծ որդու և այլ քիսանները, հետո մեծ հարսինը և այլն։ Եթե քսակները ուռած լինին, այդ նշան է, որ նրա տերը այդ տարի պիտի հարստանա, իսկ եթե, ընդհակառակը, կուչ եկած լինին, աղքատանալու է։ Եվ եթե վասիլներն ուռչին, նրանց տեր հարսերը որդի են ունենալու։ Մինչև անգամ զննում են ուռուցքը և եթե ուռուցքը դեպի վեր է ուղղված, ասում են արու երեխա է լինելու, իսկ եթե դեպի վայր՝ աղջիկ։ Ցորենի, գարու հորերի, լծի, խնոցու և կրիչի ուռչիլն էլ առատության, իսկ կուչ գալը սակավության նշան է։ Իսկ եթե սրանցից մինը «կուտ է գնում», այսինքն թոնիրն է ընկնում, ասում են, թե նրա տերը մեռնելու կամ կորչելու է։

Նույն օրը երեխա ունեցող կանայք ծաղկամոր կիրակին են պահում, որպեսզի երեխաները ծաղիկ չհանեն։

Երբ մթնում է, ապլանները մոխիր են ածում դրսի դռան շեմքի վրա, որպեսզի չար մաքով ներս մտնողները էշ կտրեն։ Մի մեխ էլ խփում են տան խաչերկաթին, որպեսզի չարը (քաջք) չկարողանա ներս մտնել, ալյուրով էլ մի-մի խաչ են նկարում դրսի դռան վրա։ Տան ծերունիներն էլ իրենց պարապման մի հատկանիշ գործիք են նկարում դրսի պատի վրա։

Գիշերը մեծերը շուտով քնում են, իսկ երիտասարդները սպասում են, որ կեսգիշերին գնան գետից ջուր բերեն, որովհետև հավատում են, թե այդ գիշեր գետը մի ժամ ոսկի է վաղում։ Պատմում են, թե մի խուլ հարս մի անգամ կաղանդի մի գիշեր գնացել է գետից ջուր է բերել յուր կերսարի ձեռին ածելու, վերջինս նեղացել է վրան, թե ինչու սառույցի կտորներ է բերել, բայց հետո լուսին բռնել տեսել է, որ ոսկիներ են։ Մի ուրիշն էլ դարձյալ ոսկի ածել վերցրել է, որ բերի տուն, սատանաները ահագին աղմուկ են բարձրացրել, թե՝ տարա՛վ, բռնեցեք։ Վախենալով հետ է նայել, իսկույն ամանը ընկել է ձեռքից, իսկ ինքն էլ տուն ընկնելով ուշաթափվել է։

Անհամբերությամբ սպասելով կեսգիշերին, երիտասարդները նայում են կատվի աչքին. երբ բբերը բոլորովին կորացած և մեծացած են

լինում, ասում են, թե արդեն կեսգիշեր է և պատրաստվում են գետը գնալու։ Մինը հեծնում է ակիշը, մյուսը շիշը, երրորդը՝ խաչերկաթը։ Սրանցից ավագը վերցնում է մի գյուգում՝ լի ցորենով, գարիով. մյուսներն էլ մի քիչ խոտ են վերցնում։ Ահագին աղմուկով գնում են գետի ափը, խոտը տակերը ցկում, վրան նստում և սպասում, թե երբ պետք է «գետը ոսկի վազե»։ Երկար սպասելուց հետո ավագը ասում է.

«Քեզի կուտամ ցորեն, գարի,
Դուն ա ինձի տու բարի,
Շնորհավոր նոր տարի»։

Եվ գյուգումի ցորենն ու գարին ածում են գետը, լցնում գյուգումը ջրով ու «տղաք քաշեք, ոսկի լցվավ» ասում ու վազում տուն։ Բոլորը վազում են տուն, աշխատելով հետ չնայել. նրանց թվում է, թե սատանաները նրանց հետևից ընկած են, թե նրանք «բռնեցե՛ք» են բղավում և այլն։ Տան մեջ սրանց դիմավորում են տան մեծերը և շտապով ջուրը դատարկում մի ամանի մեջ, որ տեսնեն, թե ոսկի չէ՞ կտրել։

* * *

Երբ արշալույսը սկսում է բացվել, ապլանները վեր են կենում, արթնացնում հարսնքերին, «տարի»-ները դնում սալանների մեջ, վրան մեղր ածում և ձեռքերին բռնած՝ հաստ գավազանը քոթքոթացնելով դուրս են ելնում, դառնում դեպի արևելք, երեք անգամ ասում. «Դյավլաթ, սարն էս, ձորն էս, արի տուն», և նորից քոթքոթացնելով մտնում ներս։ Պահում են «տարի»-ները, իսկ վրայի մեղրը տանում բոլորին բաժանում, որպեսզի այդ տարին միմյանց հետ անուշությունով անցկացնեն։

Մեծ որդին յուր բաժին մեղրը ուտելով՝ տանում է երեք «բաղաճ» (յուղով պատրաստված հաց) գետում թրջում և բերում, մաս-մաս անում, տալիս կենդանիներին, ավելացնելով դրանց վրա և լուծն ու պտուկները։ Այսպիսով նա շնորհավորում է կենդանիների նոր տարին և հարդի փոխարեն խոտ տալիս։

Ապա հայրն ու մայրը նստում են օջախի գլուխը և որդիներն ու հարսները ավագության կարգով գալիս համբուրում են սրանց ձեռքերը և նոր տարին շնորհավորում։ Հետո ապլան նորահարսին մի ուռուպիա (ոսկի) է ընծայում, իսկ մյուսներին միրգ և քիսաներն ու վասիլները բաժանում։ Բոլորը ուրախությունով ընդունում են ապլայի տվածները և միմյանց նույն մրգերով կաղնդում։ Տերդները ևս իրենց նորահարսե-

ին միրգ կամ ուրիշ բաներ են ընծայում, իսկ ամուսինները ամոթ համարելով ոչինչ չեն նվիրում իրենց կանանց, ոչ էլ շնորհավորում։

Հայրը պատրաստվելով դուրս գնալ տանից, բերում ձին կանգնեցնում է գոմի մեջտեղը, իսկույն մյուս տնեցիներն էլ խմբվում են շուրջը և ուշադրությամբ նայում, թե ձին ինքնուրույնաբար որ ոտը կբարձրացնի։ Եթե աջը բարձրացնի, այդ նշան է, որ այդ տարին հաջողությամբ, իսկ եթե ձախը՝ ձախությամբ պիտի անցնի։ Աջը բարձրացնելիս հայրը յուր չափահաս որդկերանց հետ մի-մի բաժակ օղի են խմում, վրայից էլ մի-մի հատ ղմի ուտում և դուրս ելնում։ Մեծ մարդիկ նախ գնում են իրենց սգավոր ազգականների և կամ դրկիցների տուն, մխիթարում նրանց, ապա մոտիկ ազգականներին հանդիպում և հետո մի-մի շիշ օղի առած գնում են քահանային «տեսնելու»։

«Օրհնյա տեր», ասում են նրանք, ներս մտնելով քահանայի տունը։

— Աստված օրհնե,— պատասխանում է քահանան։ Եկողը անմիջապես մոտենում է և համբուրելով քահանայի աջը, ասում. «Շնորհավոր նոր տարի, ամեն տարի ուրախությենով աս օրս հասնինք»։

— Քուկդ ա շնորհավոր,— պատասխանում է քահանան, բարով-խեյով շատ տարիներ աս օրս հասնինք. հրամմե վեր նստի։

Բոլոր եկողները դարձյալ ավագության կարգով նստում են և մի քիչ հետո քահանան նրանց մի-մի բաժակ օղի է հրամցնում։ Քահանայի օղի խմելուց հետո եկողները հանում են իրենց բերած շշով օղին, մի-մի բաժակ իրենք խմում, մի-մի բաժակ էլ բոլորին հրամցնում և մնացածը (եթե միայն մնա) տալիս են քահանայի տնեցիներին, որ դատարկեն և հետո շշերն առնեն և գնում են տները, որ լցնեն ու գնան նույն կարգով տանուտերին «տեսնեն»։

Պատահում է, որ շատերը հարբում են և անախորժ դեպքեր են տեղի ունենում։

Մյուս օրը «բաղդ-փորձուկ» է, այսինքն բախտը փորձելու օր է։ Երիտասարդներն ու աղջիկները նախընթաց օրը պատրաստած «դառդռի կլիկները»՝ կլոր, փոքրիկ հացեր գնում են կաուրները և կամ դեզերի վրա և դիտում, թե ագռավները վերցնում ո՞ր կողմն են տանում. որովհետև հավատում են, որ այն կողմից պիտի գա սպասելի փեսան կամ հարսնացուն։

Հետո գնում են իրենց բարեկամների տները և նայելով, թե ինչով կհյուրասիրեն իրենց, գուշակում իրենց բախտը։ Ուրիշները թաք են կենում դրկիցների տներում և լսածից գուշակություններ անում։ Մի քանիսն էլ բանալին դնելով դրպանները՝ լուռ կանգնում են փողոցներում

և անցուդարձ անողների խոսակցություններից դուշակություններ անում։

Երկու օր հետո, հունվարի 4-ին, երեկոյան ապլանները կտրում են տարին, բաժանելով տան բոլոր անդամներին և նույնիսկ կենդանիների մեջ։ Ում բաժնի միջից որ դուրս գա դրամը, այդ տարին նա է բախտավոր լինելու և կամ նրանից է բախտավորություն գալու։

Քրիստոսի Ծննդյան և Մկրտության տոներին դուտ եկեղեցական ծիսակատարություններից զատ մի առանձին, ուշադրության արժանի բան չի կատարվում։

Սուրբ Սարգիս

Առաջավորաց պասին ժողովուրդը Ս. Սարգսի պաս է կոչում և շաբաթ օրը հանդեսով տոնում նրա տոնը։ Այս հինգ օրվա ընթացքում լինում են մարդիկ, որ օրական միմիայն մի քիշմիշ են ուտում և կամ անսվաղ ծոմ են պահում. ուրիշներն էլ օրական միայն մի անեկ հացով են բավականանում, իսկ ընդհանրապես ժողովուրդը միայն պաս է պահում, ուտելով ավելուկ, ղմի, բանջար, բողկ և մախոխ ապուր, միայն թե մինչև ճաշ պետք է ծոմ պահեն։

Ժողովուրդը բավական ջերմեռանդությամբ եկեղեցի է գնում, մանավանդ ուրբաթ երեկոյին և շաբաթ առավոտյան։ Ճանապարհին ժամվորներից շատերը պրծեցնում են իրենց մազերից և բամուն տալիս, որպեսզի Ս. Սարգիսը իրենց չոռն ու ցավն էլ այդ մազերի հետ տանի։

Այդ հինգ օրվա ընթացքում կանայք, մանավանդ աղջիկները, գլուխ չեն լվանում, որպեսզի Ս. Սարգսի ձիու ոտները թրջուկ չփաթաթվի։ Բոնբի վրա էլ խաչերկաթը չեն դնում, որպեսզի դառները չդժվեն։

Ուրբաթ երեկոյան տանտիկինները տների ղլխավոր դռների հետևը մի-մի սկուտեղ են դնում և վրան շարմադով փոխինդ շարմադում, չորս կողմն էլ չորս մոմ վառում, հուսալով, որ Ս. Սարգիսը յուր ձիով կգա այցելելու և իրենց տունը և նրա ձիու ոտների հետքերը կմնան փոխինդի վրա։

Երբ լուսանում է, պառավներն իսկույն վեր են կենում և նայում, թե դռան հետև դրված փոխինդի վրա պայտի հետքեր չկա՞ն։ Անսահման է լինում նրանց ուրախությունը, երբ այդպիսի մի հետք նկատում են։ Գանձա, մի անգամ չարաճճի տղաները մի պայտ էին խցկել Սեյրաննոց փոխինդի վրա և քիչ էլ ձիու թրիք դրել։ Սեյրաննոք մեծ հպարտությամբ այդ փոխինդից խաշիլ են պատրաստել ձիու թրիքն էլ մանրել հետը խառնել և դյուղի իշխաններին, ամենաթանկագին հյուրերին հրավիրել ուտեցրել էին։

Այդ օրը միմիայն խաշիլ են պատրաստում և այն էլ առավելապես դռան հետևի դրած փոխինդից։

Նույն երեկոյին աղջիկներն ու երիտասարդները աղի կլիկճեր (սառնիկ աղի հացեր) են ուտում և մի քանի աղոթքներ շշնջալով պառկում։ Գիշերը Ս. Սարգիսը «ղրո» ձին հեծած, «ալ դափուտը» վրան, «մդրախը» (նիզակ) ձեռին չափ է ընկնում Ախալքալաքի դաշտավայրով, մի վայրկյանում անցնելով մի ծայրից մյուսը։ Նրա ձիու պնչերից ամպեր են ցայտում և փաթիլ-փաթիլ ձյուն անում, ոտների տրոփյունից աշխարհը թնդում, նիզակի խաղացնելուց սաստիկ բուք բարձրանում։ Նա այցելում է մի քանի արժանավորների տները և տնօրհնում, թե որ երիտասարդը որ աղջկան փոխադարձաբար ջուր տա։

Երիտասարդների ու աղջիկների այդ օրվա ամբողջ խոսակցությունը լինում է գիշերը տեսած երազները։ Ամեն մինը պատմում է, թե ո՞վ և կամ ինչպիսի ոք եկավ և իրեն ջուր տվեց, ջրի ամանը ինչի՞ց էր և թե որքան ջուր կար մեջը։ Գրեթե բոլորն էլ հավատում են, որ այդ ջուր տվողն է իրենց վիճակված և որ անշուշտ, ինչպես և լինի, սրա հետ են ամուսնանալու։ Եթե ջրի ամանը ոսկուց է լինում, ասում են թե ամուսինը սաստիկ հարուստ է լինելու, եթե արծաթից, միջակ հարուստ, իսկ եթե պղնձից և կամ կավից՝ աղքատ։ Ջրի քանակությունն էլ որոշում է, թե որքան ժամանակ են միմյանց հետ ապրելու. եթե լիքն է՝ շատ երկար, եթե կիսատ՝ կյանքի կեսը, իսկ եթե քիչ՝ միայն մի քանի տարի։

Այդ օրը առավոտյան սովորաբար պատարագ է մատուցվում և գրեթե բոլորը գնում են եկեղեցի։ Երիտասարդներից և աղջիկներից շատերը հաղորդվում են, ջերմեռանդությամբ աղոթում Ս. Սարգսի պատկերի առաջ։

Պատարագ սովորաբար մատուցում է մի որևէ գերդաստան հին և նոր ննջեցյալների հոգու փրկության համար և այդ գերդաստանը հրավիրում է գրեթե բոլոր շափահաս և ծեր մարդկանց հոգու հաց ուտելու, ուր և Ս. Սարգսի մասին ավանդություններ են պատմում։ Այսպես՝ մինը կամենալով ցույց տալ, թե ինչպես Ս. Սարգիսը օգնության է հասնում յուր ծոմը պահողին, պատմում էր.

«Մի մարդ Ս. Սարգսի ծոմը անսվաղ բռնում է։ Պատահում է, որ նրա եղբայրը սաստիկ հիվանդանում է և ինքը ստիպված է լինում կեսգիշերին գնալ մոտակա գյուղից քահանա կանչել, որ նրան հաղորդություն տա։ Ճանապարհին սրան շրջապատում են գայլերը, իսկ ինքը ոչ մի զենք չի ունենում պաշտպանվելու։ Բայց սա հավատով դիմում է Ս. Սարգսին և նրան օգնության կանչում։ Մեկ էլ տեսնում է, որ մի

«ղըռա» ձիավոր եկավ և յուր նիզակով բոլոր գայլերին հալածեց։ Սրանք փախան և հեռուն պպզեցան։ Քահանային առած վերադառնալիս այս մարդը նկատում է, նույն գայլերը միևնույն տեղում պպզած, միայն այս անգամ ոչ մի շարժում չեն անում։ Վախենալով կամաց-կամաց մոտենում են նրանց և տեսնում, որ բոլորն էլ քար են դարձած։ Մինչև այժմս էլ ասում են, թե կան այդ քարերը»։

Մի ուրիշն էլ հավատացնում է, թե Նաքալաքև գյուղից մի քուրդ բքից բռնվելով Ս. Սարգսին օգնության է կանչում և խոստանում է մի ղոյդ մոմ վառել։ Ազատվելով նա ուրանում է յուր խոստումը, սակայն հաջորդ տարին, Ս. Սարգսի շաբթին նույնպիսի բքից խեղդվում է։

Բայց Ս. Սարգիսը ամեն տարի մի հույն է խեղդում, կամենալով ընկճել այդ ազգի կամակորությունը։ Պատմում են, թե մի անգամ մի թագավոր ստիպել է մի հույնի Ս. Սարգսի պատը պահելու և երբ սա չէ հանձն առել, հրամայել է բանտ ձգել և միմիայն ցամաք հաց տալ։

Շաբաթ օրը հանել են նրան բանտից և ասել. «Տեսա՞ր, չէիր պահում, ինչպես պահել տվի»։

— Բայց տրեխներիս նայիր, պատասխանում է հույնը, որ պատը լուծելու նպատակով տրեխներն էր կրծել։

Մինչ այս, մինչ այն, օրը փոքր-ինչ բացվում է և արևը դուրս գալիս։ Այս ժամանակ երիտասարդներն ու աղջիկները կաուրներին կանգնած իրենց բուլուճները (փոքրիկ հաց), որ գիշերը իրենց բարձերի տակ էին դրել, դնում են դեղերի վրա և դիտում, թե թռչունները կվերցնեն և որ կողմը կտանեն, ում կտրան վրա կիջնեն, որովհետև հավատում են, թե այն կողմից, այն կտրան տակից գալու է սպասելի հարսնացուն կամ փեսացուն։ Բայց վայ նրան, որի բուլուճը գերեզմանի քարի վրա դրվեցավ. նա հուսահատվում է, հավատացած լինելով՝ որ «գերեզմանի հետ պիտի պսակվի»։

Բարեկենդան

«Բարեկենդան, փարեկենդան.
Բարեկենդան օրեր է,
Նելկս գլխես կորեր է»։

Քաղաքում սովորություն է բարեկենդան անվանել միմիայն մեծ պասից առաջ եղած մի ուտիս շաբաթը, բայց գյուղերում այդպես չէ։ Նրանց բարեկենդանը ուղիղ երկու շաբաթ է տևում, որ սկսվում է Առաջավորաց պասից անմիջապես հետո։

Առաջին շաբթվա երկուշաբթի օրվանից ֆեյվանիֆը (տանտիկինխոհարար) սկսում են իրենց պատրաստությունը տեսնել. բաց են անում իրենց պահած յուղի կճուճների բերանները և բավականաչափ գաթա թխում, հալվա եփում։

Նույն օրերը, տան մեծի կարգադրությունով, եթե հարուստ են՝ մի կով, եթե միջակ՝ մի քանի ոչխար, իսկ եթե աղքատ՝ գոնե մի գառ և մի քանի հավ են մորթում, միսը քաշ տալիս սառը մառաններում և մասմաս գործածում, ուտում-խմում։

Բնականաբար ուտել-խմելուն միշտ միանում են խաղեր, երգ և հրավեր։

Եվ ահա սկսում են գյուղի մի քանի տներում հավաքվել մի քանի ընտանիքներ։ Մեջ են բերում խոնչան, տղամարդիկ բաժանվում են երկու կարգի և նստում են խոնչայի երկու կողմը։ Սինու կամ մատուցարանի վրա գալիս են 9 կամ 7 զանգակի ձևով փոքրիկ պոզեր, որոնք կոչվում են զառֆ, սկսվում է «մատնի» խաղը։ Խաղացողներից մի կողմը տալիս է յուր անդամներից մեկին մատանին պահելու (որի անունից խաղը կոչվում է «մատնի խաղալ») զառֆերից մեկի մեջ։ Մատանին պահելուց հետո շարված զառֆերը մատուցարանի վրա բերում, դնում են խոնչայի վրա. հակառակ կողմը աշխատում է իշկելով (բնազդումով) երկու զառֆ գլուխ ասել և նրանց միջից գտնել մատանին։ Եթե գտնում է՝ խաղը 1 հաշվվում է նրա, իսկ եթե ոչ 1 հաշվվում պահող կողմի հաշվին։ Այդպես շարունակվում է մինչև 10 կարգ լրանալը. 10-ին տարվող կողմի անդամներից մեկի ճակատին կամ ձեռքին զառֆի մրոտ քյուփով դաղմա (նշան) են խփում. իսկ 20 լրանալիս՝ 2 դաղմա են խփում և տանող կողմը հրամայում է տարած գառը կամ հավերը 1—2 շիշ օղու հետ բերել ընթրիքի պատրաստության համար։ Հրամանն իսկույն կատարվում է։ Բայց մինչև ընթրիքի պատրաստվիլը տանող կողմը սկսում է զանազան խաղերով տանջել տարվող կողմի անդամներին։ Կան զանազան խաղեր, օրինակ, սաթռանջ, դավա-օյին, քարվան և այլն։ Եթե օրինակ, քարվան է, տարվող բոլոր անդամների վզերն իրար հետ կապում են մի պարանով և տանողները վրանները նստում՝ գոմի, բակի, տան մեջ մի քանի անդամ ման ածում։ Նստողները խփում են ուղտ շինած տանողներին. վերջիններս չեն լսում, վայր են ձգում, բարձրանում է աղմուկ, աղաղակ, ծիծաղ։ Վերջապես տանտիկինը ավետում է կերակրի պատրաստ լինելը՝ խաղը վերջանում է։ Բացվում է սեղան, տանտերը բերում է մառանից յուր ունեցածը, ինչ որ աստված տվել է։ Խոնչաների շուրջը բոլորվում են ամենքը, թե մեծ, թե փոքր.

սուտ ասացվածքներով, ծանր զավեշտներով ուտում, խմում, զվարճանում մինչև կեսգիշեր և ապա ցրվում իրենց տները։

Մատնի խաղը շարունակվում է մինչև բարեկենդանի վերջանալը. նա քանի մոտենում է մեծ պասին՝ այնքան կենդանանում, ոգևորող է դառնում։ Առաջ, որ մեծի մի ակնարկը բավական էր անչափահասին տեղնուտեղը սառչելու, քարի պես մնալու՝ այժմ նախատինքն ու սպառնալիքն էլ չի ազդում։ Պատիկը կես հանաքով համարձակ առում է ծերին ինչ որ ունի իր սրտում և շատ անգամ ծաղրում երգելով.

«Արի, պառավ, քեզի դովլամ. ջաղցեն ելած դև կլմանիս.
Աչքդ փոս է, քիթդ դուս է. բնպլնին փոխված հավ կլմանիս.

Հաճախ պառկեցնում և ոտքերին մի քանի անգամ ճիպոտով խփում են. ով ինչ կարող է ասել. «վարդապետաթող է, բարեկենդան օրեր է, խելքս գլխես կորեր է»։ Մեծը ծիծաղելով, կամա թե ակամա ընկերանում է ընդհանուր ուրախության և տանում այդ բոլորը։

Բայց այդ մի տեսակ զվարճությունը չէ հայի տանը. կան և շատ ուրիշ զվարճություններ։

Շատ անգամ առաջուց հայտարարվում է, որ աշուղն այսինչ գիշեր մեկի տանը հեքիաթ է ասելու։ Էլ մարդ չի մնում գյուղում՝ բոլորը հավաքվում են այնտեղ։ Օդան ու գոմը լցվում են. շարժվելու, ասեղ գցելու տեղ չկա։ Սիրելի հեքիաթներն են «Շահ-Իսմայիլը», «Ազարան Բյուլբյուլը», «Քյարմն ու Ասլին», «Քորօղլին» և այլն։ Հեքիաթն սկսվում է նրագ դնելու հետ։ Աշուղը սազը գցած թևը, պաշմակները (մաշիկ) հագած, նոր շորերով մանչ է գալիս օդայի մեջտեղը՝ տափում, բարձր ձայնով բուրբերեն ասում է հեքիաթը, շրխկացնում է մաշիկով գետնին, ոգևորվում, ոգևորում հանդիսականներին և բարձր ու պիլ ձայնով կանչում սիրահար զույգերի երգը։ Նա մերթընդմերթ մոտենալով մեկ կամ մյուս ծխողին, ագահութամբ թանձր ծուխը կուլ է տալիս մի քանի անգամ, նրա քուլաները բթածակերից ամպի նման դուրս թողնելով՝ շարունակում հեքիաթը։ Կամ հաճախ կամենալով հանգստանալ՝ առնում է ձեռը արաղի բաժակը, իրանով հրճվող, ոգևորվող հանդիսականներին մի քանի խոսք ասում և արաղը խմում, բուկը թրջում ու նորից շարունակում։ Ոգևորությունը աստիճանում է, հանդիսականները մոռով թռիչք են անում դեպի այդ կախարդական-դյուցազնական աշխարհը, և այդ ոգևորության տակ մոռանում ամեն տեսակ աշխարհային բան։ «Հե՜յ ազալար» կանչելով, և կրակով լցված աչքերով ոգևորությամբ նայում է աշուղը ամենքի երեսին և ամուր խփում սազի թելերին։ Հառաչներն ու «ջանները» ան-

ընդհատ լսվում են հանդիսականների բերանից. և ահա աշուղին օգնության հասնելով լավ ձայն ունեցող երիտասարդներից մի քանիսը՝ խաղի մեջ հարցնող կամ պատասխանող տները նրանք են երգում։

Դոմի թանձր, գոլորշիախիտ և ծխով լցված օդի մեջ բոլորը աֆիոմ ընդունածի նման թմրած՝ անձնատուր են լինում երկար ժամանակ լռող և այժմ գրգռված զգացմունքներին. նրանց հետ խոսում, հառաչում, սխրում, ուրախանում և սրտերն ու աչքերը քամելով՝ կեսգիշերն անց ցրվում իրենց տները։

Բայց նրանց զվարճությունները միայն գիշերները չեն տեղի ունենում. ցերեկներն էլ ունին իրենց հրապուրիչ խաղերը, որոնցից մեկն է և չիլիթը (մականը)։ Կուրիճ երիտասարդները ձի հեծած ցույց են տալիս հանդիսատեսների ահագին խմբին իրենց շնորհքներն ու ճարպկությունը։

Երբեմն էլ նույն կուրիճները դավուլ-զուռնան առաջ խառնած և կամ առանց դավուլ-զուռնայի հավաքվում են մի որևէ հարմար տեղ, մեծ մասամբ «պատմայի» (քաքորի շերտ) վրա և գոտեմարտում։

Փոքրիկ խմբեր էլ առանձնացած թուղթ, նարդի, դամա և այլ խաղեր են խաղում։

Երեկոները, ուրախության թունդ ժամանակին հանկարծ դրսից լսվում են կենդանական զանազան անճոռնի ձայներ։ Դոմի դուռը բացվում է և հանկարծ ներս է ընկնում այլանդակ մեկը, երեսը ալյուրի կամ մրի մեջ կորած, այծի մորթուց մեծ մորուք շինած, խայտառակ ձևով մորթիներից շորեր հագած, ձեռին երկար ձող կամ ակիշ բռնած, զանազան թռիչքներ անելով հարձակում է գործում ուրախության անողների վրա. բոլորը թև ծիծաղում են, թև վախենում այդ այլանդակ մեկյմունից։ Երեխաները սաստիկ երկյուղից սրտաճաք լինելով՝ լալիս են, ամուր կպչում մայրերի կրծքին և գլուխները թաքցնում նրանց թևերի տակ։ Կանայք վախեցած, կես-ծիծաղ պահում են երեխաներին և հայհոյանքով ետ մղում հարձակում գործող մեկյմունին։ Բոլորը տեղերից վեր են թռչում, իրար են խառնվում... Եվ վերջապես մեկյմունը տանտիրոջից յուր նվերը առնելով յուր բազմաթիվ ընկերներով գնում է ուրիշ տեղ։ Սակայն նրա գնալուց հետո էլ չի իմացվում, թե ով էր այդ չարաճճին։ Մեկյմունները ներկայացնում են կամ պառավ սատանա, կամ անճոռնի հրեշ, կամ ոգեղ ուղտ, կամ սարսափեցնող շվոտ կամ դև և կամ մի ուրիշ բան։

Այդ մեկյմունները այսպես ավելի անբովանդակ են, բայց կա մի առանձին տեսակը, որ կոչվում է ղադի և ունի յուր լուրջ բովանդակու-

թյունը։ Մեկը հագնում է հասա մուշտակ, երեսին կապում ահագին մորուք, գլխին դնում թենջերե, շալե երկար գոտին իբրև ժապավեն գցում ուսը և տերողորմյայի հատերը քաշելով մեծափառ նստում է բարձր սարի վրա, պահանջում ընտանիքի անդամներին՝ առաջը չոքել, ձեռքերը կրծքերին դնել և սուլպում է յուր ամբողջ կյանքում անմեղ ու հանգիստ հային, որ ասե չեղած տեղից յուր մեղքերը։ Այդ դատին, որ ներկայացնում է կամ թաթար բռնակալը, կամ արաբական խալիֆան, կամ կրոնամոլ տաճիկը, կամ կատաղի ենիչարին և կամ մի ուրիշ բռնակալ արյունարբու ավերող իշխան՝ յուր քննությունը վերջացնելուց հետո կամ հրամայում է, որ յուր հրամանատարները այդ անօրեն հային տանեն կախեն, ողջ ունեցվածքը թալանեն, կամ բաշխելով նրանց անպետք կյանքը՝ մեծ փրկանքներ առնում, հեռանում է։

Վա՜յ այն մարդուն, որ հանճն կառնի դատի դառնալ. էլ ինչ հայհոյանք, էլ ինչ հարվածներ ասես, որ չորս բոլորից չեն տեղում։

Իսկ նորահաս սիրահարված ջահիլ աղջիկներն ու տղերքը, կամ մանկամարդ հարսներն ու երիտասարդները երկար ժամանակ սպասելով բարեկենդանի ազատ, արձակ, վարդապետաթող օրերին՝ հավաքված մի տան մեջ սկսում են պարը։ Պարն առաջ սկսվում է խաղի եղանակով, որ երիտասարդներից մեկը կամ երկուսը ասում են, իսկ մյուս մեկը կամ երկուսը առնում։ Խաղացողների թիվը շատանում է, գալիս է տիկ կամ տկզար յուր զուգացող ձայնով։ Իսկույն իմացվում է պարի մասին. էլ ջահել մարդ չի մնում գյուղում, թափվում են այդտեղ, բերել են տալիս դավուլ-զուռնա, ամբողջ աուլը լցվում է, կանգնելու ու նայելու տեղ չկա. ուրախության աղաղակների մեջ զուռնայի ձայնը հազիվ է լսվում։ Աբեղաթող օրերին ապատ իրավունք է սիրահարված ջահել զույգերին իրար ձեռ բռնել պար խաղալ։ Ճրագները դնում են, ամեն մի տան մեծ փնտրում է յուր ջահելներին, բայց ո՞վ է նրանց խոսքը բանի տեղ դնողը, հիմա էլ խո հասարակ օր չէ, բարեկենդան է. առանց ուշադրության դարձնելու խաղում են։ Առաջ, որ մի հասակն առած մարդ ճիպոտը կառներ՝ ինչպես որ այծը ոչխարից, այնպես էլ տղամարդկանց կանանցից կջոկեր՝ այժմս անկարող է. լսելուց զատ երբըշ կենին վրեն կը խնդան, պարիցը դուրս կանեն։

Պարի մեջ կարգը պահպանելու համար որոշվում է մեկը, որ երկար ճիպոտը ձեռին ման գալով քոթ տալիս է կանգնողի կամ ման եկողի գլխին։ Անկարգը ցաված գլուխը քորելով տիկում է տեղը։

Համարյա կեսգիշերն արդեն մոտենում է. պարը վայտոստ անելու

համար հագիվ փախցնում են զուռնաչուն, և սրտերը բաբախող սիրահարված ջահելները ցրվում են իրենց տները։

Եթե բարեկենդանի առաջին շաբաթին օրական մի քանի անգամ է սեղան դրվում, երկրորդ շաբաթին, մանավանդ վերջին օրերը, սուփրեն բոլորովին տեղից վեր չի քաղվում։ Բաց են անում սերի կարագի և այլ պատվական ուտելեղենների պուտուկների բերանը։ Քեյվանին «հոգեպահուստ» ինչ որ ունի՝ բերում է մեյդան. «էլ էստեղից հետև պահեմ, ի՞նչ պիտի էնեմ, մկներուն փա՞յ պիտի դարձնեմ»։

Այդ օրերը շատերը սկսում են բարեկամներին ցերեկով այցելել և վայելել նրանց ճոխ սեղանը։ Անկարելի է, որ փողոցով անց կենաս և մի քանի հարբած, ձյունի մեջ գլդոլ տվող մարդ չտեսնես. ամեն ոք չխմած էլ մի տեսակ թմրած դրության մեջ է զգում իրեն և շատ արդարացի է այն խոսքը, թե «բարեկենդան օրեր է, խելքս գլխես կորեր է»։

Հարս գնացած աղջիկներն այդ օրերը «տուն են բերած» լինում ճերեանցը, և սկեսրանց տան մեջ կրած նեղությունից, կորցրած աղատությունից մի քանի օր հագիվ շունչ են քաշում իրենց սիրելիների և ծնողների մոտ, մխիթարվում և ուրախանում։ Ըստ մեծի մասին փեսաներն իրենց նշանածների (ամուսինների) հետ բարեկենդանի ցերեկները իրենց աներանց տանն են անցկացնում։

Առաջները հոկտեմբեր ամսից առավոտ-երեկո մութ, խոնավ և տաղտըկացուցիչ գոմի կամ գոմի-օդի մեջ սովորող վարժատան տղերքը հագիվ սկսում էին երկու շաբաթ ազատ շունչ քաշել։ Մինչդեռ վարժատուն գնալու ժամանակ գրպաններում վեգի կտոր անգամ պահելու իրավունք չունեին՝ այս օրերում պղի (սառույցի) վրա վեգն ու կակալը շարած, անաբեստանքը (սախկա) ձեռներն առած՝ ազատ կերպով չրխկացնում էին. խաղում էին խաղում և մի հարմար ժամանակ ընտրելով՝ իրենց խալֆաների առաջնորդությամբ մի-մի նվեր, մի ճիպոտ և մի շիշ արաղ ձեռքներն առած գնում էին վարժապետին տեսության։ Նվերները տալուց հետո նրանցից ամենահամարձակը առնում էր ձեռքը ճիպոտը և ասում. «էֆ, դու մեզի շատ ես ծեծե, հիմի սրեն քուկդ է, պառկի»։ Վարժապետը կես ծիծաղով, կես նեղացած չէ լսում. այստեղ մյուսները վրա էին թափվում, զոռով պառկեցնում և ոտքերին ճիպոտի մի քանի հարված հասցնելով, ասում «էլ չես ծեծե մեզի, ասա՛»։ «Չէ՛, չէ՛» խոստանում է վարժապետը։ «Դէ, մեր փեշկյաշը»։ Ուսուցիչը նվեր տալով մի քանի կոպեկ, ազատվում է։

Իսկ մյուս փոքրահասակ, բերեկան, պղպի սաղմոս կարդացող աշակերտները, որ ոչ թե վարժապետի, այլև մինչև անգամ խալֆաների հետ

չէին համարձակվիլ այդպես վարվելու, մի զույգ գուլպա, մի զույգ պաճիճ (թողլուկ), մի թաշկինակ, դաթա, սեր առած գալիս էին իրենց վարժապետին տեսության։

Վարժապետը նրանց բոլորին, թե մեծին և թե փոքրին հրամայում էր հերթով կանգնել և երգել էր տալիս՝ հանդիսականներին զվարճացնելու համար, ապա արձակում խաղալու։

Վերջին օրերը, որ իրենց ասելով միմիայն փորի օրեր են կամ բարեկենդան՝ փորի կենդան է, ոչ թե ժամ ու պատարագ չեն հիշում, այլև պաս պահելն անգամ մտքներով չի անցնում։ Պառավներն ու ծերերը, որ մեծ երկյուղածությամբ օրենը երկու անգամ եկեղեցի են գնում, աղոթք անում՝ այսօր պասն ուտիսից չեն էլ ջոկում։ Ժամում ո՞վ կա. մի տերտեր ու մի ժամկոչ, շատ-շատ մի հատ էլ տիրացու։ Տերտերն ինքն ասում է, ինքն էլ լսում, և դուրս գալով եկեղեցուց՝ պատահողի վրա նեղանում, հանդիմանում, բայց միևնույն ժամանակ ինքն էլ քթի տակին ծիծաղում.

— Է՛, բան չունիս, տերտեր, բարեկենդանք է, ժամս որն է. էսօր էգվան մեծ պաս է, ժամի օրերը կուգան, ասեղ ցքելու տեղ չի մնա. էրթա՛նք, էրթանք նես, մե հրաշիխ՝ անուշ էրա, ես գիտեմ ցրտեն ու մինակութենեն մռասած կլինիս,— ձեռառնելով՝ քահանային տուն է հրավիրում պատահող դյուղացին։

Նշանած աղջիկների «ջուխտ աչքը լուս». սկեսրանց տանից էլ ինչ փեշկյաշներ ասես, որ չտեղան նրանց գլխներին. էլ փող, էլ ոսկի, էլ չիկիլա, էլ թոռ, էլ վալա, էլ ինչ թանկագին կտորներ։ Նշանված տղան էլ աներանց կողմից է ստանում։ Ջոքանչը բաց է անում յուր սնդուկը, իսկ աները քիսեն։ Նոր խնամիները (նոր փափա) շարունակ իրար տանն են լինում, ուտում, խմում, հարսնացուն առաջ բերում, գլխների վերև կանգնեցնում, ուրախանում։ Շատերն էլ խնամախոսությունն ու նշանադրությունը բարեկենդանին են անում։ Հաճախ լինում են և հարսանիքներ։

Վերջապես հասնում է բուն բարեկենդանը։ Կիրակի գիշերը մոտիկ բարեկամները իրար մոտ հավաքված, ինչ որ ունին, ինչ որ մնացել է բերում են մեյդան. սուֆրեն ահագին դեղ է ներկայացնում, աման դնելու տեղ չկա, այնքան որ ուտելիքներն իրար վրա են շարած։ Իրար հետ սեղան են նստած ծերունի սկեսրարը ու մանկամարդ հարսը, տղամարդ, կնիկմարդ, բոլոր միասին վայելում են դաթա, հալվա, լոխում, հավկիթ, հաստութա, սեր, կարագ, մատակի մածուն, նոր ծնած կովի դալ, հավ, սագ, գառ, ոչխարի կամ կովի դավուրմա, քյուֆթա, տոլմա, փլավ, յայնի... էլ որ մեկը հիշես, որ մեկն ասես։ Սեղան նստողների կողքերն

ուղում են. վերջապես կեսգիշերն անց հավաքում են ամեն բան, իրար «ճարահատյալ» սրտով «շնորհավոր պաս» ասելով ցրվում տները։

Հ. ՄԱԼԽԱՍՅԱՆ

Տեառնընդառաջ

Տեառնընդառաջին ասում են «տերնդազ»։ Այս երեկոյին, ժամասացությունից առաջ գրեթե բոլոր տներում խեծախ են պատրաստում։ Որ֊ֆում են կորեկ, սիսեռ ու ոսպ և հետը քիշմիշ խառնում։ Խեծախ պատ֊րաստում են գլխավորապես այն նպատակով, որ առամնացավ չտա֊նան։ Նշանած աղջկա ծնողները ածում են խեծախը սկուտեղի վրա, մեջ֊տեղը մեղր լցնում և շուրջը շաքարեղեն շարում, ապա վրան փեսայի համար մի ելակ, կամ մի զդակ, կամ մի գոտի և կամ մի թաշկինակ դնում և տան փոքրիկի ձեռքով ուղարկում փեսացուին։ Խնամոնք պատ֊վում են փոքրիկին միրգ և թեյ տալով, իսկ ուղարկված խեծախը փեսա֊ցուն բաժանում է տնեցիներին և յուր ընկերներին։

Հենց որ երեկոյան ժամերգության զանգակները հնչում են, գրեթե բոլորը, տղամարդիկ և կանայք, աղջիկներն ու հարսները գնում են եկե֊ղեցի։ Սրանցից մի քանիսը բութ մատարմատի մոտ, երկու ջղերի միջև գոյացած փոսում ջուր են ածում և աշխատում առանց թափելու տնից մինչև եկեղեցի տանել։ Եվ եթե հաջողացնում են, կարծում են, թե իրենց ամբողջ կյանքում բախտավոր են լինելու։ Եկեղեցում նորապսակ երի֊տասարդները խաչհամբույր են տալիս և վառում ջահը։ Գրեթե ամեն ընտանիք մոմ է դնում և երբ ժամասացությունը վերջանում է, միմյանց հրհրելով, խոսելով և կռվելով աշխատում են վառել մոմը ջահից և առանց հանգցնելու տանել տուն։ Այստեղ, բակերում և հերթիկներում արդեն դիզված են լինում խոտի կույտեր, որ վառվում են եկեղեցուց բերված մոմերով։ Սակայն ամբողջ մոմը չեն վառում, նրանից մի քանի կաթիլ կաթեցնում են գլխարկի մեջ, որպեսզի կայծակը իրենց չխփի, պահում են և կարկուտ եկած միջոցին վառում, որ կարկուտը կարի, ինչպես և երաշտ ժամանակ, որ անձրև գա։

Այդ ժամանակ ամեն կողմից տերնդազի ծուխը քուլա֊քուլա վեր է բարձրանում։ Մերերն ու պառավները ուշի֊ուշով նայում են, թե ծուխը որ կողմն է գնում, որովհետև այն կողմից է գալու սպասելի փեսացուն կամ հարսնացուն։ Իսկ ավելի խորագետները պնդում են՝ եթե ծուխը հարավ կամ արևելք երթա՝ հասկը լավ է լինելու, իսկ եթե հյուսիս կամ արևմուտք՝ վատ։ Երեխաներից սկսած մինչև ծերերը թռչկոտում են

տերնդազի վրայով, իսկ աղջիկներն ու կանայք պատում շուրջը՝ բոլորեքյան «Ոչ քորոտիմ, ոչ բորետիմ» ասելով։ Իսկ մի քանի սրիկա երիտասարդներ էլ բղավում են.

«Տերնդազ, քուրդ ինծի տաս,
Ես պագնեմ, դուն դուրանաս»։

Մանր տղաներն ու աղջիկներն էլ հատուկ այս նպատակի համար գործված գուլպաներ կամ արախչիններ են ձգում կրակը, որպեսզի շնորհք ստանան։ Բայց սրանք բոլորը դադարում են՝ երբ նորապսակ ամուսինները գալիս են տերնդազի շուրջը պատելու։ Հարս ու փեսա միմյանց բռնած, ձեռներին զույգ մոմեր, հարսի կողքին սանամայրը, փեսինը՝ կնքահայրը կանգնած, ձեռներին մի-մի մոմ, երեք անգամ պատում են։

Տերնդազի շուրջը պատեցնում են նորածին երեխային, որ քառասունքը լցվի։ Իսկ ամուլ կանայք իրենց ուչխուրի ծայրն են վառում, որ երեխա ունենան։

Երբ տերնդազը հանգչում է, կանայք մոխրից տանում կճուճների վրա են ածում, որ բարաքայիքը ավելանա, տան հերթիկից ներս են շաղ տալիս՝ ասելով.

Կատուն նեսը՝
Մուկը դուսը.

որպեսզի մկները ջարդվեն։ Բանիմաց տանտիկիններն էլ նույն մոխրից ածում են հավանոցի հերթիկից ներս, որ հավերը շատ հավկիթ ածեն։

Դիշերը ճնճղուկները գալիս տերնդազի մոխրի մեջ թավալվում են։

Մեծ պաս

Բարեկենդանի կերուխումից գրեթե հոդնած, երեկոյան մի անգամ ևս կուշտ ուտում և հավկիթով փակում են բերանները, ապա լվանում ձեռքերը, ողողում բերանը և պառկում երազներ տեսնելու։ Որկրամոլները դիշերը մի քանի անգամ վեր են կենում, ընթրիքի մնացորդներից ուտում և նորից պառկում քնում։

Առավոտը շատ վաղ վեր է կենում տատը, ճիպոտ վերցնում, ոլորում, մի ուրիշ կարճ ճիպոտ մեջը կապում, ծայրին մի սոխի գլուխ ամրացնում, վրան ախիլպապ (իծու մազից պես և միրուք ունեցող տի-

կին) կապում, յոթ գույնզգույն թևպուր կոխում սոխի մեջ և կախում տան հերթիկ խաչերկաթից։ Երբ երեխաները զարթնում են, տատը ցույց է տալիս նրանց այդ և դողդողալով ասում. «Տեսեք, տղաք, ախալոյը էկեր է, չլի՞ր որ պասերտ ուտեք, թը չը քար կը ցկե գլխներուդ»։ Սակայն նույն այս տատը նստելով տան շեմքին, մեջքը դրսի դռանն արած, ուտում է բարեկենդանից մնացածները։ Այդ օրը «վլացարուք սրբեցարուք»-ի օր է ասվում. պետք է բոլոր ամանները լվալ, մաքրել, տուն-տեղ դուրս ձգել, թափ տալ, քունջ ու պուճախ ավլել, խստակել։ Եվ ահա կտեսնեք մի հարս ամաններն է լվանում, յուղի, պանրի պուտուկները բերանքսիվայր կործում։ Պետք է ասել, որ մեծ պասին ուտիսվա ոչ մի բան մնացած չի լինում. դեղի համար ամբողջ գյուղում մի ֆունտ յուղ անգամ չի գտնվի, որովհետև ուտելունը ուտում են, մնացածը ծախում։ Մյուս հարսը տներն է հոգում, փոքր թոնիրը վառում, տատը պոչով ապուր եփում և տղամարդկանց կերակրելուց հետո հարեվաններին հրավիրում և պոչով ապուր ուտեցնում։

Այդ օրը «բաղդ փորձուկ»-ի օր էլ է, ուստի գնում են միմյանց տուն երկու նպատակով, նախ՝ շնորհավորելու մեծ պասը և երկրորդ՝ փորձելու իրենց բախտը, նայելով թե ինչպես կհյուրասիրեն իրենց և կամ ի՞նչ կխոսեն։ Սովորաբար հետևյալ խոսքերով են շնորհավորում. «Շնորհավոր պաս ըլլի, բարով-խերով, դռով-դռկցով, բարեկամներով հասնեք սուրբ Հարությանն»։ Բայց երբ փոքր-ինչ գլխները տաքանում է, այնուհետև շնորհավորությունը հետևյալ բանաձևն է ստանում.

«Շնորհավոր պաս»։
— Եփօր մերը գաս։
«Թասմ րախի տաս»։
— Ըը խելոք մնաս։

Ապա հավաքվում են մինի տանը և «տիկի» ներդաշնակությամբ պարում ու մախոխը գովում։

Քաղաքում նշանած աղջկա կերսանքը կաղին և շագանակ առած գնում են աղջկա տունը «կաղին խաղալու»։ Երկար «ջուխտ թե վարդ» (կենտ) և այլ խաղեր խաղալուց հետո, ընթրում են և վերադառնում։

Այնուհետև գրեթե ամեն օր միատեսակ բոլոր գյուղացիները, մեծից մինչև փոքրը, տղամարդ և կին, մինչև ժամը տասնմեկը, այսինքն մինչև ճաշվա ժամերգության ավարտը ծոմ են պահում։ Ջանգակները խփելուն պես բոլորը եկեղեցի են թափում, անհամբերությամբ սպասելով ավարտին և սաստիկ արագությամբ տուն վերադառնալով՝ վա-

յելում են պոչով ապուր, կամ մախոխ, ավելուկ, բողկ և այլն։ Ավելի ջերմեռանդները միաժում են բռնում, այսինքն օրը միայն մի անգամ են հաց ուտում և ջուր խմում։

Երեկոյին դարձյալ եկեղեցի են գնում, վերադառնում, իրենց համեստ ընթրիքն անում և հավաքվում միմյանց մոտ, հայտնի հասարակաց օդանները խոսելու, հեքիաթ ասելու, ժամը դեռ ութը չեղած ցրվում են տները քնում։ Առավոտ վաղ ժամը հինգին վեր են կենում, կենդանիներին դարմնում (հարդ տալիս) և նորից հավաքվում օդանները, ուր խոսակցելով մնում են մինչև ճաշու ժամերգությունը։

Կիրակի օրը տան բոլոր երեխաները մի-մի ճիպոտ առած, ուրախ-ուրախ բարձրանում են կտուրը և հերթիկից այնքան խփում ախալոչին, որ նրա թեպուրներից մինը վայր է ընկնում։ Երբ թեպուրները վայր են թափվում, գալիս է ցանկալի զատիկը։ Այսպիսով ախալոչը ծառայում է և որպես մեծ պասի օրացույց։

Առաջ սովորություն է եղել, որ մեծ պասից սկսած մինչև սերմը գետին ընկնելը ամեն կիրակի խեծախ անեն, իսկ այժմ այդ սովորությունը վերացել է։ Միայն դեռ մինչև հիմա էլ ցանքից մինչև հունձի ժամանակը ամեն կիրակի հատիկ են անում, որ ցորենը չչորանա։

Գրեթե առանց բացառության մեծ պասին, կիրակի օրերը պատարագը առավոտյան ժամերգության կից է լինում և անշուշտ մինը «առնում է», այսինքն մինը խնդրում է, որ յուր հին ու նոր ննջեցյալների հոգու համար մատուցվի։ «Առնողը» ուղարկում է քահանային գինի՝ բաժակի, և ալյուր՝ նշխարքի համար։ Հետո էլ, որպես ժամոց՝ տալիս են նրան քսան-երեսուն կոպեկ։ Նույն օրն էլ գյուղացիներին հոգու հաց է տալիս։

Միջունք

Միջունքի ուրբաթ երեկոն կոչվում է «Քառասուն մանկունք»։ Այդ երեկո չափահաս աղջիկները հալվա, գաթա, խեծախ են անում և սկուտեղի վրա դրած տաս-քսան կոպեկ էլ փող տանում նշանած ընկերուհու տուն։ Այստեղ բոլորը միասին՝

Քառսուն մանուկը լճին,
Թագն ու պսակը ճտին,
Ինչ օր տվիր բաղնեցպանին,
Անոր կեսն ա ինծի տու։

կամ

Քառսուն մանուկ, քառսուն կուս,
Քառսուն մանկանց մեղա ես,
Ինչ օր տվիր բաղնեցպանին
Անոր կեսն ա ինծի տուս

և կամ՝

Լիճը լճին՝
Քառսուն մանուկը ճտին

ասելով՝ ծունր են դնում և յուրաքանչյուր անգամին քառասուն հատ ունեցող համրիչից մինը ձգում։ Երբ 40 անգամ ծունր են դնում, այսինքն երբ համրիչը մի անգամ ամբողջովին քաշած են լինում, նախապես պատրաստած քառասուն քարից մինը մի կողմն են դնում։ Եվ այսպես, երբ կես են լինում, այսինքն 20×40=800 ծունր դրած են լինում, սաստիկ խոնջած, նստում իրենց բերած հացը ուտում են և ապա կրկին շարունակում։

Երբ 20×40 ծունրն էլ դնում են, այսինքն 40×40=1600 ծունր դրած են լինում, սաստիկ հոգնած, մատների կոճերը ուռած, նորից նստում տանտիրոջ հացը ուտում և ընկնում քնում են։

Առավոտ այս աղջիկները միմյանց գլուխ են լվանում ի հիշատակ 40 մանկանց խեղդվելուն, հաց ուտում և յուրաքանչյուրն ստանալով տանտիրոջից մի զույգ դուլպա նվեր, գնում են եկեղեցի, որտեղից և ցրվում են։ Այդ ամբողջ օրը կիրակի են բռնում։

Ծաղկազարդ

Ախալքալաքցիները ծաղկազարդին «Ծառզարդար» են կոչում։ Այդ օրը եկեղեցում օրհնում են ուռենու ճյուղեր, որ գլխավորապես բերում են նոր պսակվողները և բաժանում դրեթե բոլոր ժամալորներին։

Երեխաները խումբ-խումբ օրհնված ուռի ճյուղերը ձեռներին շրջում են տները և ասում.

Ծառզարդար, ծառին զարդար,
Խունդ առեք, խունդ ծխեցեք,
Սև հավեն հավկիթ գուղեմ,
Կարմիր կովեն եղ գուղեմ,
Վեվ օր տա՝ շեն մնա,
Վեվ օր չտա՝ չորչորնա։

Մի քանիսն էլ օրհնված ուռի ճյուղով խփում են սրան-նրան և ասում.

Քամու տեղ,
Սրտի դեղ.

որպեսզի հիվանդությունները փարատվեն։

Քաղաքում երեխաները գնում են հյուսներից «կարկաչաներ»։ Սա փայտյա փոքրիկ ատամնավոր գլան է, երկար կոթով։ Գլանի երկու ծայրին անց են կացված մի-մի գլանի բարձրության, երկու-երեք վերշոկ երկարության տախտակներ, միացած երկու ուրիշ տախտակով, գոտիներով։ Մի ուրիշ բարակ տախտակ էլ, մի ծայրով հենվում է գլանի ատամների վրա, իսկ մյուս ծայրով անցնելով երկրորդ գոտով՝ միանում առաջին գոտուն։ Երեխաները պատեցնելով «կարկաչաները», աղմուկ են բարձրացնում և միևնույն ժամանակ երդում.

Կարկաչա, կարին կաչա
Սև օձին սև սոմաթա (ճիպոտ)
Խունդ առեք, մոմ առեք,
Տասերկու պատարագ էրեք։
Իմ կարմիր հավկիթս դուրս բերեք,
Ճերմակ հավկիթս նես տարեք։

կամ՝

Ճը՛ռ, ճը՛ռ, ճճեռնակ,
Ասու հալալ պիպեռնակ,
Ընկերս ընկավ ծովը,
Ծովեն էլավ ծիրանը.
Խունդ առեք, մոմ առեք,
Տասվերկու պատարագ էրեք,
Իմ կարմիր հավկիթս դուրս բերեք։

Տնեցիները սովորաբար հավկիթ կամ հատիկ են տալիս։ Հատիկը, որ այդ օրը ամեն տուն պատրաստում է, խաշած մաքուր ցորեն է, հետը քիշմիշ, շաքարի մանրուք և ընկուզ խառնած։

Օրհնված ուռը խնոցու, կաթի մեջ են ձգում, որ առատ լինի։

Այդ օրը նշանած աղջկա փոքրիկ տեգրները մի կամ երկու ապասի (20 կոպ.) առած գնում են հարսի տունը։ Հարսը լվանում է այս տեգրիկի կամ ոտները և նոր դուլպա հագցնում և կամ գլուխը և նոր

արախչին ծածկում։ Տեգրները դնում են իրենց բերած դրամը տաշտ ափին, որ հարսը վերցնի։

Երեկոյան, դռնաբացուկից հետո քահանան քարոզ է խոսում բարեգործության մասին, որ հետո տիրացուները գրակալը դնում և գրում են ժողովրդի խոստացած նվերները ակնդետուն, որից գոյանում է 10—12 կոտ գարի և ցորեն, մի քանի ֆունտ ձեթ, խունկ և մոմ։

Զարշարաթաց շաբաթ

Զարշարաթաց շաբաթում ժողովրդի ջերմեռանդությունը ավելի ևս զարգանում է և եկեղեցին դրեթե միշտ լի է լինում։

Իմաստուն և հիմար կուսանաց առնչին ավագ տիրացուն տասը տոմսակ է պատրաստում, որոնցից հնգի վրա իմաստուն, իսկ մնացածի վրա հիմար խոսքերն է գրում։ Տասը կուսանաց առակը կարդալիս, տասը երեխա, առավելապես երգիչներից, շապիկ հագած կանգնում են դասը, գրակալի շուրջը, մի-մի վառած մոմ ձեռներին։ Դեռ ավետարանը չավարտած՝ ավագ տիրացուն մի ափսեի մեջ լցրած այդ տոմսերը՝ առաջարկում է այդ տասը երեխաներին առնելու։ Իմաստության տոմսը վերցնողը սաստիկ ուրախանում է և յուր ձեռի մոմը մինչև ժամերգության ավարտը վառ պահում։ Ուրախանում են նրա ծնողները ու ազգականները, որովհետև հավատում են, որ գուշակությունը ճիշտ է։ Բայց վայ նրան, ում հիմար է դուրս եկել. իսկույն նրա ձեռի մոմը մարում են և հենց եկեղեցում ամեն կողմից նախատում նրան։

Ցորեքշաբթի կեսգիշերին «ցավիս վերջ» են ասում և մինչև մյուս օրվա ճաշի ժամերգության ավարտը լուռ մնում, որպեսզի այլևս ցավ չունենան։ Ավագ հինգշաբթի օրը գլուխ չեն լվանում, որ չդժվեն, սապոն չեն գործածում, որ կակիծ չտեսնեն, յոթ հավկիթ են խաշում և պահում զատկի կիրակի օրը ուտում, որ ատամները չցավեն։

Երեկոյին, Ոտնլվայի ժամասացության ժամանակ դրեթե ամեն մի տնվոր մի կամ երկու «խիար» (վարունգ), կտոր կարագ, մի քանի հավկիթ տանում է եկեղեցի և տալիս քահանային։

Քահանան այդ կարագի մի մասը օրհնում և բաժանում է ժամավորներին, իսկ մյուս, մեծ մասը և հավկիթները, որ մի քանի հարյուր է լինում, տանում տուն։

Ոտնլվայի ժամանակ քահանան չորում է սեղանի վանդակի առջև, ունենալով յուր երկու կողքին մի-մի տիրացու, որոնցից մինը ավետարան, իսկ մյուսը խաչ է բռնած լինում։ Քահանայի առջև դրվում է կոնքը, իսկ տիրացուների՝ մի-մի ափսե՝ խաչհամբույր ձգելու համար։

Նախ գյուղի առաջավոր և հարուստ մարդը, որ ամենից էլ առաջ է կանգնած լինում, մերկացնում է աջ ոտը և մեկնում քահանային։ Վերջինս լվանում է ոտը և մի քիչ օրհնված յուղ դնում վրան։ Հետո սա համբուրում է խաչն ու ավետարանը և ամենաշատը հինգ կոպեկ խաչհամբույր ձգում։ Այսպես՝ քահանան լվանում է բոլոր ծերունիների ոտները, և երիտասարդների, կանանց ու երեխաների ձեռները և յուղ քսում, ստանալով մեծամասնությունից 1—2 կոպեկ խաչհամբույր, որով և գոյանում է մոտ մի ռուբլի հիսուն կոպեկ։

Օրհնված յուղը քսում են աչքերին և ճակատին, իբրեև կամ անասունների ցաված տեղին, որ լավանա, մի կաթոր էլ յուղի կարասի մեջ են ձգում, որ «բյարյաքյաթով» լինի։

Գիշերային ժամերգության ժամանակ, մանավանդ մոմերը հանգցրած միջոցին ահագին անկարգություններ են տեղի ունենում։ Քաղաքում շատ անգամ երիտասարդները բռնում համբուրում են աղջիկներին, հանդերձները միմյանց հետ կարում, կռվում, ծիծաղում և այլն։

Մի ևնույն գիշերը դարբինները մի ոտի վրա կանգնած, բոլորովին լուռ՝ յոթ ամրոցի դռներից հավաքած երկաթից շինում են ապարանջաններ, փոքրիկ մատանիներ, որ անժամի են կոչվում։ Մյուս օրը այդ բոլորը եկեղեցու դռանը անխոս կանգնած վաճառում են։ Անժրմին քաշ են անում երեխաների օրորոցից, իսկ ապարանջանները դնում աղջիկների և կանանց թևերը, որպեսզի չարից սպասվին։

Ավագ ուրբաթին կոչում են սուգ ուրբաթ։ Այդ օրը մինչև ճաշ ոտն են պահում, իսկ ճաշից հետո կանայք կար անում, տղամարդիկ արոր քշում, դարբինները մեխ ծեծում, Հուդայի աչքը փորելու նպատակով։

Սակայն այդ օրը ոստայնանկները չեն գործում, որովհետև եղեգն են տվել Քրիստոսի ձեռքը, դարբինները չեն աշխատում, որովհետև մուրճով են բևեռել Տիրոջը։ Հյուսները չեն տաշում, որովհետև Քրիստոսի խաչափայտը տաշել են։ Եկեղեցում երեսներին չեն խաչհանում, որովհետև ինքը Քրիստոսը խաչված է։ Ծունր չեն դնում, որովհետև Քրիստոսը խաչին, իսկ Հուդան գետնին է, համբուրողը Հուդային է համբուրում։

Ձատիկ

Շաբաթ օրը ժողովրդի մեծ մասը ծոմ է պահում և անհամբերությամբ սպասում ժամերգության։ Շատերն էլ գնում են քահանայի մոտ և սաիպում նրան շուտով սկսել ժամերգությունը, այնպես որ շատ գյուղերում ժամը 4-ին արդեն պասերը լուծած, պրծած են լինում։

Այդ երեկոյի պատարագն էլ մինը «առած» է լինում, և քահանան, երեցփոխը, տանուտերը և ուրիշներ գնում են դրա տունը՝ ընթրելու։ Պասերը բանում են հավկիթով և ելնում, նայում արևին, որ «արևով ուտեն»։

Ս. Հարության դիշերը ծնվողին եղունկ-աշելու շնորհքով օժտված են համարում։ Նրա հայրը իսկույն մի գառ է մատղում և նրա թիակները պահում, մինչև որ նորածինը մեծանալով՝ կարողանում է աչ թիակի վրա նայել և տեսնել կորած կամ գողացած տեղերը։

Կիրակի վաղ առավոտյան, երբ ժողովրդյան կարծիքով նահատակների վրա լույս է իջնում, գնում գերեզմանների վրա մոմեր են վառում։

Պատարագի ժամանակ նշանված աղջիկների ձեռքը տալիս են «չթալ» մոմ։ Սա մի ձվի վրա խփած մոմ է, որի վրա ուրիշ չորս մոմեր էլ են ամրացրած։

Կիրակի օրվա պատարագը ևս մինի հին և նոր ննջեցյալների հոգու փրկության համար է մատուցված լինում, և գրեթե գյուղի մեծ մասը նրա տանն են կատարում զատիկը։

Հացից հետո քահանան շտապում է օրհնելու տները։ Այստեղ «տուն» բաժնում, խոնչի վրա դրված է լինում թթխմոր, աղ, խունկ, հացահատիկներ, ջուր և այլն, իսկ խոնչի տակ՝ քակոր, հավկիթ և այլն, որպեսզի սրանք ևս օրհնվին և շատանան։

Այնուհետև գնում են միմյանց տուն զատիկը շնորհավորելու. «Քրիստոս յարեաւ ի մեռելոց», «օրհնեալ է յարութիւնն Քրիստոսի» ասում, ձեռք տալիս և համբուրվում։ Կանայք էլ նույն կերպ շնորհավորում են, իրենցից տարիքավորների ձեռքը համբուրում, սրանք էլ նրա ճակատն են համբուրում. իսկ հասակակիցների հետ համբուրվում են։

Զատիկը շնորհավորելուց հետո խումբ-խումբ հավաքվում են կտուրները և հավկիթ կռվեցնում, մանավանդ երիտասարդներն ու երեխաները։

Նշանած աղջիկներին փայ են բերած լինում և սրանց տանը կերուխումը, խոսքն ու ծաղրը անպակաս է լինում։ Շուտով գալիս է և զուռնան, ու ամբողջ գյուղը կլոր պար է բռնում սրանց կալերում։

Մյուս օրը մեռելոց է. բոլորը, բացի աղջիկներից ու հարսներից, գնում են գերեզմանատուն, որ սովորաբար գյուղի մի կողմն է լինում, մեկուսի ընկած, և օրհնել տալիս գերեզմանները։ Շատերը իբր ննջեցյալների բաժին տանում են իրենց հետ փլավ, տապակած կարտոֆիլ,

հավկիթ, մեղր և քահանայի ու աղքատների հետ ուտում դերեզմանի մոտ։

Զատկից մինչև համբարձում, երեկոյան ժամերգությունից հետո այլևս չեն գործում, որ «հավկուր» չլինեն, այսինքն չզրկվին արևը մայր մտնելուց հետո տեսնելու կարողությունից։

Մայիսի 7-ը

Այս օրը ամբողջ գավառի համար ուրախության և «սեյրանի» օր է։ Դեռ սրա նախորդ օրը տանտիկինները շինում են յոթական քակոր և դնում կտուրը, որպեսզի այդ օրը, մայիսի 7-ին, նայեն, թե դրանց տակից որդեր պիտի դուրս գան, թե ոչ, որովհետև հավատում են, որ եթե դուրս գան, տարին «դովլըթվոր» կլինի։

Ուրիշներն էլ մի գդալ են ձգում երդիկից ներս, եթե բերնի վրա է ընկնում, ասում են, թե թանկություն է լինելու, իսկ եթե մեջքին՝ էժանություն։

Եթե այդ օրը անձրև է գալիս, աղջիկներն ու հարսները հերարձակ կանգնում են անձրևի տակ, որպեսզի մազերը երկարին։ Մի քանիսն էլ այդ անձրևի ջուրը կաթի մեջ են ածում, հուսալով, որ կմակարդվի։ Այդ օրվա անձրևը շատ առողջարար է, և ծովերի վրա թափվելով՝ մարգարիտ է դառնում, որովհետև Եղիա մարգարեի արցունքներն է։ Այդ օրը թե տղամարդիկ և թե կանայք աշխատում են լողանալ, որովհետև բոլոր ջրերը այդ օրը սաստիկ առողջարար են համարվում և կարող են ամեն տեսակ հիվանդություններից բժշկել։ Այդ օրը լողանում են նաև փերիները, լողանում է և նրանց պահապան ծերունին։ Սակայն սա ջուրը մտնելուց առաջ, վերցնում է յուր գլխարկը (սրբյուլլահ), որի շնորհիվ նա անտեսանելի է դառնում և գնում ջուր խմելու եկած կովերից մինի գլխին, երկու պոզերի միջև, որովհետև եթե գետնին դնի՝ «Բըլըսումը» կկորցնե։ Եվ որովհետև փերիները և սրանց հետ նրանց պահապանը երկար լողանում են, ուստի կովերը վերադառնում են, տանելով իրենց հետ գտակը։ Եվ եթե մեկը, նախիրը վերադառնալիս մի ոտի վրա յոթ անգամ պտույտ տա, կարող է տեսնել ամենից առաջ եկող կովի պոզերի միջև դրված այդ սյուրբուլլահը։ Կարիճ տղան կարող է խլել այդ գլխարկը ու փախչել, միայն կովը կբնկնի նրա ետևից և եթե հասնի, կխփե նրան յուր պոզերով։ Անմիջապես սրբյուլլահը ձեռքից կերթա և կովի խփած տեղն էլ միշտ ծակ կմնա, ինչքան էլ որ նոր շոր հագնի։ Բայց եթե կովը չհասնի տղային, սրբյուլլահը կմնա իրեն և այնուհետև միշտ կարող է ծածկել այն և աներևույթանալ։

Բավական մեծ դեր խաղում են այդ օրը և պոչվոր պառավները։

Այդ օրը Ախալքալաքի և շրջակա գյուղերի բնակիչները ուխտ են գալիս Ախալքալաքի արևելյան ձորում, գետի ափին գտնվող «ճգնավորի վանքը»։

Համբարձում

Ամբողջ գավառը համբարձման «կաթնապրի օր» է կոչում և ամեն տուն այդ օրը կաթնապուր եփում։

Դրա նախորդ, չորեքշաբթի օրը շատ վաղ, դեռ արշալույսը չծագած՝ աղջիկները գնում են սարերը և վիճակի երգեր երգելով ծաղիկներ հավաքում։ Հետո մի կճուճի մեջ յոթ աղբյուրից ջուր և յոթական քար ու մի քիչ էլ ծաղկի բներ են լցնում։ Ապա ծաղիկները գովելով մի մեծ փունջ են կապում, գնում կճուճի բերնին, փոքրիկ փնջերով էլ շուրջը զարդարում։ Երեկոյան, երբ աստղերը ելնում են, այդ կճուճը գնում են «աստղերի տակ», բացօթյա մի տեղ։

Նույն օրը կանայք պասմայի (քակորի շերտ) մեջ կողպած կողպեք են ձգում կամ չափում և նշնում են մի որևէ խոտի բարձրությունը։ Մյուս օրը, հինգշաբթի, հանում են կողպեքը և նայում. եթե ինքն իրեն բացված է լինում, այդ նշան է, որ այդ տարին հաջողությամբ պիտի անցկացնեն, իսկ եթե փակ է մնացել՝ անհաջողությունը և հիվանդությունը պատելու են իրենց։ Մյուսներն էլ չափած խոտն են զննում, որ եթե երկարացած լինի՝ բախտավորության, իսկ եթե նույնը մնացած՝ անբախտության նշան է։ Այդ օրը նորահարսերն ու նորատի կանայք ծաղկամոր կիրակի են պահում, որպեսզի ծաղկամարը, որ մի քանիսի ասելով Վառվառե կույսն է, պահպանե երեխաներին ծաղիկ և կարմրուկ հիվանդություններից։

Վիճակվոր (վիճակ հանող) աղջիկները խմբովին վիճակը (նախընթաց երեկոյին պատրաստած կճուճը) ինչպես և սալի մեջ դրված ծաղկի փնջեր ձեռքներին պատում են տները և ջուր, ավազ ու ծաղկի փնջեր բաժանում։ Տնեցիներն այդ ջուրն ու ավազը լցնում են խնոցին, որ կարագ շատ լինի և հետո մի որևէ նշան, օրինակ, բանալի, կոճակ, մատանի և այլն, ձգում վիճակի մեջ, որ իրենց համար էլ վիճակ հանեն։ Սրանից հետո աղջիկներին էլ տալիս են պանիր, հավկիթ, կաթ։ Վիճակվորները երբ այսպիսով բավական բան են հավաքում, գնում են իրենցից մինի տունը, այդ պաշարեղենով կերակուր եփում, ուտում, խաղում, երգում և պարում։

Վիճակը մնում է այս տանը մինչև մյուս՝ «դեմի» հինգշաբթին,

երբ հավաքվում են մի ծաղկալից դաշտ և կամ մի կալ. աղջիկներից մինը դառնում է հարս, այսինքն բոլորովին լուռ նստում է, առնում վիճակը գիրկը և երեսը ծածկում մի քողով։ Մյուս աղջիկները նստում են նրա շուրջը և խմբով վիճակի երգեր երգում։ Յուրաքանչյուր երգից հետո հարսը վիճակի միջից մի նշան է հանում, որը և տալիս են տիրոջը, միանգամայն երգված կտորից գուշակություններ անելով։ Երբեմն էլ երիտասարդների խմբեր գալիս են երգով մրցելու աղջիկների խմբի հետ և փոփոխակի երգելով ավելի շուտ տալիս հանդեսին, որ սովորաբար պարով է ավարտվում։

Ժողովուրդը հավատում է, թե լույս հինդշաբթի, կեսգիշերին, բոլոր ծաղիկներն ու խոտերը սկսում են միմյանց հետ խոսել և ասել, թե իրենք ինչ ցավի դեղ են կամ իրենց արմատի մոտ ինչ կա։ Եվ ով Շահմար օձին խփում, երկու հավասար մաս անում ու պոչի կողմինը ուտում է՝ նա շնորհ է ստանում այդ ծաղիկների լեզուն հասկանալու։ Այսպես՝ Լոխմանին, որ կերել էր Շահմար օձի մի մասը, շատ լավ հասկանում էր ծաղիկների լեզուն։ Սա մի անգամ յուր աշակերտների հետ այդ երեկո ծաղիկներ է ժողովելիս եղել։ Աշակերտներից մինը, որ ցույց էր տալիս, թե ոչինչ չի հասկանում, մինչդեռ ամեն ինչ հասկանում էր, վերցնում է մի ծաղիկ։ Իսկույն Լոխմանին, որ չէր կամենում աշակերտներին բան սովորեցնել՝ միակ դիտումը մնալու տենչով, հասկանում է, որ նա արդեն բավական բան է սովորել, խփում, սպանում է նրան։

Վարդավառ

Վարդավառին, ժողովրդի բարբառով՝ վարդևորին, միմյանց վրա ջուր են սրսկում, «վարդևոր անում»։ Ուրիշներն աղավնիներ են թռցնում և կամ զոհում։ Քաղաքում վարդի մեծ փնջեր կապած տանում են եկեղեցի և դնում սեղանի առաջ։

Պատահում է, որ հասարակությունը մի կամ երկու եզ է մատղում, սակայն այս դավառում այս առիթով մի առանձին ծես չի կատարվում։

Ս. Գևորգ

Այս տոնը ժողովրդի բարբառով կոչվում է ծռատոն։ Այդ օրը ոչ ոք բան չի անում, վախենալով, որ կծռվի։ Պատմում են, թե շատերը բան են արել և անմիջապես ձեռքերը, ոտները և այլն ծռվել են։ Եթե

ստիպված են մի բան անելու, պատժից ազատվելու նպատակով գործից անմիջապես հետո մի քիչ գարի են ցանում։ Հավատացնում են, թե այդ ցանված գարին ծուռ է դուրս գալիս, կրելով յուր վրա Ս. Գեորգի պատիժը։

ՀԱՅ ԳՐՉԱԳԻՐՆԵՐ

Ախալքալաքի գավառի հայոց գրեթե բոլոր եկեղեցիներում կան մի քանի ձեռագիր ավետարան, այսմավուրք, մաշտոց և այլ կրոնական բովանդակությամբ գրքեր, որոնք բավական լավ են պահվում։ Այս ավետարաններից մի քանիսը հայտնի են իրենց հրաշագործություններով և բազմաթիվ ուխտավորներ ունին։ Այսպես, օրինակ, Կուռնաշեն գյուղ «Սուրբ Գրիգոր Ավետարանը» տարին երկու «դերի» ունի, իսկ Դիլիսկայի, Սուլդայի, Ճանճղայի ավետարանները յուրաքանչյուր կիրակի բազմաթիվ ուխտավորներ ունին։ Բոլոր ձեռագրերը, ինչպես և շատ եկեղեցական սպասներ և իրեր, օրինակ Կուլիկամի և Պալխոյի գեղանկար վարագույրները, սրբոց պատկերներ, սկիհներ բերված են Էրզրումից և բավական զգուշությամբ պահվում են։ Ցավալին այն է, որ ավետարաններից մի քանիսն ընկել են մասնավոր անձերի ձեռքը, որոնք իրենց տունը ուխտատեղի են դարձրել և օգտվում են առատ խաչհամբույրներով։ Նույնիսկ իրենք քահանաները, փոխանակ ուրիշներին այդ արգելելու, իրենք են անում։ Բպավևա գյուղի քահանան յուր տան մի անկյունում դարսել է մի երկու ձեռագիր, մի քանիսն էլ տպած ավետարաններ և «Օխթն ախպեր» անվամբ հռչակել, այնպես որ թե յուր, և թե շրջակա գյուղերից բազմաթիվ ուխտավորներ գալիս են ուխտ անելու և բավական խաչհամբույր ձգում, որը քահանան յուր պետքերի համար է գործածում, մինչդեռ գյուղի եկեղեցին մի հին, վրաց եկեղեցու ավերակ է և կարճ ժամանակից կքանդվի։ Փող էլ չկա, որ նորից շինեն։ Այսպես և Օլավերտի, Սաթխայի և այլ տեղերի քահանաները։ Մի քանիսն էլ, ինչպես Դիլիֆի Տեր Բարդուղիմեոսը՝ ձեռագիր ավետարան չգտնելով, Վենետիկում տպած մի հին, կեսը թափած ավետարան է բազմացնում և շահվում։ Այսօր ամբողջ Դիլիֆը տերտերանց «Փոքրիկ Ավետարան»-ով է երդվում։

Բացի կրոնական բովանդակության գրքերից, որոնք սակայն հետզհետե անհետանում են, որովհետև սովորություն է դարձած ննջեցյալ քահանայի կրծքին դնել և հետը թաղել, կան և բժշկարաններ, Սողոմոնի, Ռամ ձգելու գիրք և այլն։

Գրչագիրների կազմը

Առավելապես եկեղեցիներում գտնված ձեռագիր ավետարանները գեղեցիկ և ամուր կազմ ունին, որոնց երեսները զարդարված են արծաթե քանակներով։ Այսպես, Վաչիանու եկեղեցում կա բամբակյա թղթի վրա բոլորագիր և ութածալ մի Ավետարան, որ գրված է ՋԽԸ (1499) թվին «ի գուռս սրբոյն Գէորգայ»։ Սրա կազմը, որ նորոգված է հայոց ՌՀԱ (1612) թվին Ս. Կարապետու գռանը, ընկուզենու բարակ տախտակներից է, ամբողջովին կաշիով պատած։ Առաջին երեսում արծաթի վրա քանդակված է Քրիստոսի խաչելությունը, գլխի աջ կողմում արև, ձախում՝ լուսին, կողքերին Մայր Աստվածածին և Մարիամ Մագթաղինացին։

Մյուս երեսում քանդակված է Սուրբ Աստվածածինը՝ Քրիստոսը գիրկը, երկու հրեշտակներ՝ թագ բռնած գլխին, կողքերում մի-մի կերոն։ Գրքի բերանին մի վերշոկ լայնությամբ արծաթյա փականք է, վրան չորս ավետարանիչների անդրիներ քանդակված։ Մեջքը պատած է ութ կարգ միմյանց հետ միացած արծաթե հատերի շարքերը։

Սուդայի եկեղեցումն էլ կա մի ավետարան, բամբակե թղթի վրա, 16 ծալ բոլորագիր, Պետրոս դպրի գրած։ Թվականը անհայտ է։ Նշանավոր է կազմը. բարակ կաշեպատ տախտակներ, երեսը արծաթե քանդակներ։ Առաջին երեսում քանդակված է դուրս ցցված 2 խորանաձև կամար՝ մոտերը մի-մի հրեշտակ, կամարի ներքև սկիհ, վրան Քրիստոսը՝ խաչված, աջ կողմը լուսին, ձախը արև։ Լուսնից ներքև Աստվածածինը, իսկ արևից ներքև Հովհաննես առաքյալը՝ ձեռքերը կրծքին։ Այս քանդակի տակ փորագրված է «յշտակ է արծաթապատ սբ. աւետարանս հնգեցլ մհի մրարսին և կողակցոյն»։

Մյուս երեսը նույնպիսի երկու կամարների տակ մի-մի կերոն, մեջտեղը՝ սուրբ Աստվածածինը՝ Քրիստոսը գիրկը, աջ ձեռին պսակ, գլխին թագ, որի կողմը մի-մի հրեշտակ են կանգնած։ Սրանից բարձր՝ ամպեր, միջից Հայր Աստված, ձեռքերը դեպի Ս. Աստվածածին պարզած։

Քանդակի տակ փորագրված է. «Եղիսաբէթին որդւոցն մհի Անտոնին և Յարութիւնին ՌՄԾՐ. Մարտի ԺԲ-ին»։

Հիշենք մի քանի նշանավոր դրշագիրներ ժամանակագրական կարգով։

ԺԴ դար

Դիլիսկա գյուղի եկեղեցում կա քառածալ, բամբակի թղթի վրա

երկշար, բոլորագիր տառերով գրված մի Ավետարան, որ զարդարված է Քրիստոսի մարդեղության 14 և չորս ավետարանիչների յոթ պատկերներով։ Սա կոչվում է Ամենափրկիչ, և ամեն կիրակի բազմաթիվ ուխտավորներ ունի։ Ավետարանի վերջը գրված է. «Ինքն գիտէ ասէրն կայուն. որ ի յայբէն մինչև ի նուն՝ ոչ է կորած գրիչս 'ի բուն։ Փառք քեզ անսահմանն անուն և անղուղական անձնաւորութիւն հայր և որդի և սուրբ հոգի։ Որ եառուր կարողութիւն մնղսակարդ գծողի Գրիգորի բանի խնդրողի հասանել յաւարտ այսմ աստուածախօս տառի։ Որ շարադրեցաւ ի խնդրոյ աստուածասէր և երկիւղած քահանայի յովհաննիսի՝ բարեպաշտի։ Զի որք աստուածային սիրոյն փափագեալ հետևին միշտ յարաղուարճարեր կրաւնաւք խորհին յաւրէնս տեառն ի տուէ և ի գիշերի։ Ըստ նմին աւրինակի և սրբասէր քահանային յովհաննէս միշտ և հանապազ բորբոքէր սուրբ և տիեզերաբարող աշխարհակեցոյց քառավտակ սուրբ աւետարանիս և բան բնաւոր բարուց բարւոյն ախորժական մտաւք մեծաւ ուննչմամբ ստացաւ զսա՝ անջնջելի արձան։ Ի մխիթարութիւն անձին և ի յոյս փրկութեան։ Ոչ ունելով մանկունս բան մարմնոյ՝ ստացաւ բարի յերուսաղէմ։ Որով մարթասցէ ժառանգել զերանութիւնն անվախճան։ Եւ ես յոքնամեղս և փծունս ի գրչաց Գրիգոր պիտականուն վարդապետ՝ տեսեալ զփափագ և զսէր սորա առ նա՝ յանձն առի և յանկ հանեալ կատարեցի բան խմում կարի զխնդիր սորա. շնորհաւք և ողորմութեամբն Աստուծոյ։ Ի թուականիս հայոց՝ ի ՊԽԲ՝ ամի, յամսեանն արեգի։ Արդ՝ եղև սկիզբն սորա՝ ի վանս սուհարայ՝ որ այժմ կոչի խառաբաստայ՝ ընդ հովանեաւ հոյակապ և հըռչակաւոր բարձրաբերձ և պայծառաշէն սուրբ եկեղեցւոյ՝ որ յանուն սբ. տիրամաւրն լուսոյ կառուցեալ կայ և աւարտեցաւ ի վանս ցիպնայ ընդ հովանեաւ Սուրբ Ստեփանոսի և Վասիլ թագաւորի Սուրբ Նշանի՝ որոց խնամաւքն աւարտեցի։ Արդ աղաչեմ զամենեսեան, որք պատահէք սմա՝ տեսութեամբ կամ աւդտութեամբ յիշման արժանի արարէք զվերոյ ասացեալ պատուական քահանայն ցՅոհաննէս։ Որ ստացաւ զսուրբ աւետարանս՝ ի հալալ արդեանց և յարդար վաստակոց իւրոց յիշատակ բարի իւրն և ծնողաց իւրոց։ Ստեփանոս քահանայի և ամուսնոյն յովանիսի ուսլուի։ Որոց ողորմեսցի ՔՍ Ած՝ այժմ և յաւուրն աներեկի։ Նաև թարմատար գրչիս Գրիգորիս և իմոցն ամենայնի։ Ամէն։ Նաև զբարեմիտ հեզահոգի և զսրբասէր աբեղայն զըռըստակէս կոկաւղ քարտիս՝ յիշեցէք՝ և ած ողորմի ասացէք նմա։

Եւ արդ՝ զնեղութիւն ժամանակիս՝ ո՞վ կարէ ասել՝ կամ ընդ գրով արկանել։ Զմահ և գերութիւն, զսով և զասասանութիւն։ Զոր կրեմք ազգս

քրիստոնէից ի յայլասեռ անաւրինաց և անհաւատից։ Զի շարժեցաւ տուն խորաղմին առ հասարակ ցեղ Թաթարին, գալ աւերել և ապականել զաշխարհս ամենայն։ Եւ մենք ի յահէ նոցին սասանիմք, և աւր ըստ աւրէ մահու ակն ունիմք։ Եվ հավատալով հայցեմք յայ. փրկել զմեզ յայնմ ահագին սպառնալեացն։ Այլ և զդառնագին վիշտս, զոր կրեմք ի մերոց իշխանաց. ի Թուրքէ և ի քրդէ. յընտանեաց և յատարաց ի ներքուստ և արտաքուստ անասելի և անպատմելի։

Այլ զի և կաթողիկոսքն մեր՝ զերկոսին սպանին՝ ի միում ամի։ Հեբու զտէր Թէոդորոսն՝ ի Սիս սպանին և մինչդեռ տարին չէր վճարել՝ զտէր զԱքարիայն ի յոստան բարկած արարին. Թող զայլ նեղութիւնս զոր ընդ մեզ անցուցանեն։

Ողբ ի գծողէս բան

Եկայք ողբասցուք եղբարք զչարութիւն ազգին նեստորաց,
Բամք հայաստանեայց. զառնացեալք ի չանաւրինաց,
Գանձն վնասակա՞ր բուսեալ՝ յանդաստանս մեր հայաստանեայց.
Սիզաչոր[43] առնեն բամեզ զրկելով ի մեր հայրենեաց։
Արամ և Եփրեմ լըծեալ հալածեն զզ տունս յուզայեանց
Յայսմ աւրինակի սոքա, Թորգոմեանք և ազգն մարաց.
Սաստիւ տագնապեն զմեզ՝ նեղութեամբ ի չամէն կողմանց։
Գլուխ ոչ գոլով հայոց, վշտացեալ չամենայն այլազգեաց։
Ի թիւ ութ հարիւր հային՝ քառասուն և երկու ամին։
Գառիճն աստուծոյ վկայ զհայրապետան մեր արարին.
Որդիք հաղարու զարմին չարաչար զմեզ խոցոտեցին.
Բամեալ ժողովոյս հայոց զզ գլուխն ի մեղնէ բարձին։
Ի հնգետասան աւրին մեհենի չորեքշաբաթին,
Էկին պատեցին զմեր տէրն և յատեան մահու մատնեցին,
Վասն Քաի սպանին, զի գլխաւորքն քրիստոնէին
Առին բազանիսն ածին, առաջի պիղծ ամիրային,
Սաստիկ չարախաւսէին, թէ հարեալ է սա զմեր զաղին.
Նա պիղծ ամիրայն ասէր ուրացիր զՔս կենդանին։
Զխաչեալ թագուորն անմահ ըզկապաւղն երկնից կամարին.
Արդ սբ հայրապետքն մեր՝ զաւանէր զորդին միածին։
Քրիստոս է Ած հաւրիս արարիչն յաւիտենին,

---

43 Բարձրում կարմիր թանաքով՝ խիլ ։

Ահա հաւատամ ըզ նա փառակից հոգւոյ եւ ընդմարտին.
Բամիցն հրաման տուին ամենայն, և մոլնայ զադին
Իսկոյն խոցեցին ըզ տէրն և ընծան պէս դուչեցուցին
Առին բաղանեացն ելին և քարիւ ըզզլուխն հարին.
Կապած էր չըւանն ի վիզն, զոր առեալ ի քարշ տանէին
Այնչափ զնա հարին սրով և քարիւ մինչ կատարեցին,
Թաւալ ի փողոցն արկին. զմարմին մեր պատրիարգին
Ուղեղըն ցրուեալ գըլխին՝ ըզզադաթն վերացուցին,
Դամպար վառել կամէին ի յայրել ըզնըշխարս մեր տիրին.
Իսկ ամիրապետն ասաց զնա տանել ի յիւր հայրենին
Կական յայնժամ ըզամին հառաչմամբ յերկիր հնչեցին
Որ ի քարկոծման ժամին փախուցեալ զաւղեալ թաքչէին
Սաստիկ էր լալուն նոցին. կոծ և աշխարհն ի վերայ տիրին
Իբր ըզտէրունեան աւրին զատերացն նեմին։
Նման նախավկային վրկայեալ մեր տէրն յոստանին
Աւաղ ըզմեզ ասեմ եղբարք, որ հասաք յաւուրս ահադին։
Խոց վիրաց առաք ուժգին յայլասեռ ազգէ հրամանին։
Թող մեզ խաւարի այսաւր. լոյս լուսնին և ակն արևին
Աստանաւր և մեք եղբարք կոծևսցուք զաղէտս ահադին,
Մեծահանդէս աթոռին սիս անուն վիճակ մեր վեհին
Այլ և ղհայրապետ նորին զտեղապահ սուրբ լուսաւորչին
Բամիցք բոլորից հնային զտէր Թորոսն անդէն սպաննեցին
Այն էր հերունի ամին և զմեր տէրն ի տարելցին
Յայսմ ի ահագին վըշտին՝ մեք վիրաւք հարաք դառնագին.
Տէր Ջաքարիա, բարի, նահատակ եղեր Քսի։
Տէր Ջաքարիա արի խաչակից եղեր Յիսուսի։
Տէր Ջաքարիա ընտրեալ քաջ հովիւ նման Քսի.
Վասն մեր բարեխօսեա առ Քրիստոս տէրն ամենայնի.
Շնորհել մեզ հովիւ բարի զհարաղատն քո սիրելի։
Զտէր Դաւիթ հոգւովն արի, լի շնորհաւք յաջորդ աթոռի։
Պահել անսասան յերկրի յամեր ամս ժամանակի։
Այլ և երգաւելիս տաղ Գրիգորի անձին եղկելի։
Մասն ընդ քեզ պարգևեսցի, յաննախանձ մեր տեառնէն ձերի։
Ամէն և այս եղիցի անյաջաւղ ըբանս ընդունողի։
Սուրբն Յովհաննէս արծըւան լման թռեալ մտաւք անհասականն։
Առ ի պատմել բանին մարդկան զանճառն էիցըս հանրականն։

վաչիան գյուղի եկեղեցում կա ութածալ, մագաղաթեայ Ավետարան, երկէջ և բոլորագիր. գրել է Հովհաննես քահանան «ի յաւուրս աւրինակէ, կենաւք տառապանաւք և բազում պանդխտութեամբ: Ի մեծ թուիս ի յեղանական շրջագայութեան. արեգական սաղ իջիւք երկնաչուս ճանապարհաւ յերկնից յերկիր հայելով ըստ արարչութեանցն. չափեալ յելանելոյն ադամայ ի դրախտէն զու: և զեռա ամ ըստ եօթանասնից որում մեք վարիմք, և է ի մարդեղութենէ բանին այ անժամանակ էին և փրկչի յի քի ամս ռյլթ»: Իսկ ըստ թուոյ խոսրովային յաբէթեանս տոմարի չձ: Եւ էր մեծ շրջանին մխե: Ի յառաջնորդութեան տր զաքարիայի: Եւ ի յաշխարհակալութեան մեծ ինքնակալին Մահմուտ խանին որ տիրէ բազում ազգաց ունելով ի ծովէն Պոնտոսի մինչև ի ծովն Կազբից և մինչև ի գետն Ջահուն կոչեցեալ: Ի կաթողիկոսութեան հայկազանց սեռից Տռ յակոբայ. և ի թագաւորութեան լեւոնի: Նստեալ ի գահն Կիլիկեցւոց զոր տէր ած պահեսցէ անսասանելի զաթոռ հայրապետական և զթագաւորական ի յիշել զանուանս նոցա սասանել սաfրիճ և ոչ ևս երևին ընդամիք ճշմարտութեան: Այլ և զրեցաւ սուրբ աւետարանս ի գաւառս բզնունեաց. ի գեղս առ ափն ծովու, որ կոչի աղէթ ընդ հովանեաւ սրբոյ Կարապետին, ի վայելումն եղբաւր որդոյն իմոյ Պետրոս քահանայի»:

Ապա խնդրում է հիշել իրեն ու իրաններին, որից հետո սրա եղբայր Սարգիսը գրում է.

«Ի յայսմ ամի թուաբերութեանս հայոց չղը ի դառնացեալ և ի վշտացեալ ժամանակիս՝ յորում զաւրացեալ է ազգն Իսմայէլի և բազում նախատանաւք և արհամարհանաւք տանջեն և նեղեն զազգս քրիստոնէից. մինչև զոմանց ինչս յափշտակեն և զոմանս տուգանեն և զոմանց տունս բուխտանաւք և հերձաւք և զուր բանիւք աւերել ջանան. զոր և սմա իսկ գանիել տանուտիրջս բազում անգամ արարին. որ ի սուտ և՝ ի զուր մատնեցին և հազար գահևկան առին. և սա սրտի մտաւք և յաւժար կամաւք վասն քի սիրոյն ևս զայն ոտ, և ոչ տրտմեցաւ. զի զփոխարէնն առցէ հարիւրապատիկ և հազարապատիկ այս և ի ս. գատաստանին ամէն: Բայց զրեալ իսկ է ի սուրբ աւետարանիս թէ ընդ ոտ. գատարկ բանից զորս խաւսեցին մարդիկ տացեն համար յաւուրն գատաստանի զոր արժանի է կրել հերձասացն և բուխտանասացն և զուր մատնաւղն, զպատիժ պատուհասի յարգար գատաւորէն քս և ընդ յուդայի և ընդ խաչահանուացն մատնեսցին ի հուրն անշէջ և որդն անքուն և ի տարտարոսն ներքին և թողութիւն մի լիցի նոցա: Ամէն:

Եւ արդ սա՝ դանիէլ տանուտէրս ստացաւ զսուրբ աւետարանս յիշատակ հոգոյ իւրոյ և ծնողաց իւրոց խաղուքնի և շնոհվորի և կենակցին իւրոյ Թաճին և զաւակացն խաղուքնի և Խեթնի և առիւծուն տարաժամ հանգուցելոցն ի քս և այլ զաւակացն մեծի և փոքու և ոո. յարեան մերձաւորաց և եւս զսա անչինչ յիշատակ ի գեղեցիկ և յաստուածաբնակ տաճարս ցղնոյ մեծի այն սուրբ Աստուածածնին, որ հանապազ մանկունք սորա հրճուին սովաւ յընթեռնուլն զսուրբ աւետարանս»։

ԺԵ դար

Արագովա գյուղում արժ. կարապետ քահանա Ռայիսյանի մոտ կա ութածալ, բամբակյա թղթի վրա մի շար բոլորագրով գրված «Մատեան աստուածային, որ կոչի Հարցմունք»։ Գրել է Հովհաննես «տկար և փծուն գրիչ պիտակ անուն աշակերտը» մի ոմն Երեմիայի համար «՝ի թուականութեան հայկազեան տոմարի պ. երրդի. կ. երրդի Դ. երրդի (1415) յերկիրն Արծրունեաց ի վանքս որ կոչի սքանչելագործ, ընդ հովանեաւ սբ խաչիս սքանչելագործի, Օծեալ ձեռամբ առաքելոյն Թադէոսի»։

Աբուլ գյուղի եկեղեցում կա քառածալ, բամբակյա թղթի վրա երկար բոլորագրերով գրած մի ավետարան «Սուրբ Մինաս» անվամբ։

Սկզբում կան յուզանկար 11 պատկերներ, որոնցից մեկը ավետարանն արտագրող Թումայի, մեկը ստացող Կիրակոս կրոնավորինն է, իսկ մյուսները սրբերի են։

Գրված է «Թումայ մեղուցեալ գրչի մեղսամած մատամբ ՝ի յածաբնակ և յանառիկ կղզիս Աղթամար, ընդ հովանեաւ սբ խաչիս և աստուածամուխ սուրբ գեղարդեան ՝ի հայրապետութեան առ Դաւթի հայոց ՝ի ՊԿԷ (1418)»։

Գրչագրի վերջը ավելացրած է.

«Կամաւ ամենակալին այ հաւր և որդւոյ սրբոյ։ Ի դարս վերջին և ՝ի ժամանակս չար և անբարի և թուականութեան հայկազեան տումարի պձա յանիշխանութեան արարադեան գաւառիս։ Ցիր և ցան եղեալ՝ տարաշխարհիկ ՝ի մէջ անադորուն և անգութ ազգին վրաց։ Արդ ի յայս և ի սոյն ժամանակի, յեպիսկոպոսութեան արհիական աթոռոյս Բղնւոյ տէր Յովհաննէսի։ Ես Ծատուր ծառայ ծառայիցն Աստուծոյ, նախարար՝ վերակացու և առաջնորդ քաղաքիս Բղնւոյ և ամուսին իմ Սարիբէկ հասեալ ՝ի ժամ ծերութեան, ակն ունելով ելից ՝ի կենցաղոյս ջերմեռանդ սիրով ստացաք զսուրբ աւետարանս՝ մեզ և նախնեաց մերոց

յիշատակ յաւիտենական կատակ անվախճան կենացն, պաշար և առաջնորդ՝ երկնաչուա Հանապարհին։ Ի հալալ արդեանց մերոց՝ զաւակ ՚ի սիրովն, և գանձ անկողոպտելի ի վերինն երուսաղէմ։ Եւ ընծայեցաք զսա մեծ սիրով արհեստական աթոռոյս Բջնւոյ և երկնահանդէս մաւրս լուսոյ սբ Աստուածածնիս։ Յիշատակ հոգւոց մերոց»։

ԺԱ դար

Սաթխա գյուղի եկեղեցում կա «Ամենափրկիչ» անվանված քառածալ, բամբակյա թղթի վրա երկաթագրով՝ երկշար շարված մի ավետարան, զարդարված ավետարանիչների չորս պատկերներով։ Դրել է Հովհաննես գրչիկը պկթ թուի (1420) «ի հայրապետության հայոց տեառն Յակովբա և յեպիսկոպոսութեան տեառն Խաչատրի արհեպիսկոպոսի վերադիտող հացունեաց գավառի»։

Վերջում ասված է.

«Զվերջի ստացող սուրբ աւետարանիս Յովհաննէս և իւր կողակցին Նինիֆարին և որդւոց նորա... որ ստացաւ սուրբ աւետարանս իւր հալալ ընչիւք գառն և դժուար ժամանակին սով էր և սաստիկ էր, որ մարդն ըզմարդն կերաւ Աստուած զիւր գործեցեալ մեղսն ոչ յիշէ յամենայն դատաստանին. և զարձեալ յիշեցեք ի մաքրափայլ աղօթս ձեր զպարոնն որ գնեաց զայս սուրբ աւետարանս յերկիր որ կոչի Արզրում, ի գուղն, որ կոչի երկննիստ ի թվ. հայոց ՊԿ»...

Ճանճղա կամ Բեժանո գյուղում կ—ի տան մի սենյակում գրված է մի ձեռագիր Ավետարան և մի Մաշտոց, բամբակյա թաշկինակներով փաթաթված։ Սրանց առջև գրված է մի երկու մոմակալ և մի ափսե՝ խաչհամբույր ձգելու համար։ Դրեթե ամբողջ գյուղը կիրակի և տոն օրերը գալիս է այդտեղ ուխտ, մոմ է վառում և խաչհամբույր ձգում, որը, իհարկե, տանտիրոջ գրպանն է մտնում։ Ավետարանը ութածալ, բամբակյա թղթի վրա բոլորագրով գրել է Հովսէս «Յետինն ի գրչաց և անարժանն արուեստաւորաց սուտ անուն քահանայ յերկիրս քաշբերունեաց ի գիւղաքաղաքս Ականց կոչեցեալ ընդ հովանեաւ գեղեցկաշէն տաճարիս Թադէոսի առաքելի Սուրբ Յակովբի հայրապետի և սուրբ Սարգսի զօրավարի և ծիրանաւոր սուրբ Աստուածածնին, ի յաւուրս տէրութեան երկրիս և մերս գաւառի քաջ և արի Բաբունապետի և ուղափառ քաջ և արի Բաբունապետի Յովհաննէս եպիսկոպոսի ի հայրապետութեան Հայոց Տէր Ղուտակէսի ի թուին Հայոց ՋԺԸ ամին և ի խաղութեան Ջհանշային, որ այս երկու ամէ զբարելոնի յոտի արար

ի վերայ խանին և նմա ոչինչ կարացան առնել»։ Ապա հիշատակելով ավետարանի գնողին շարունակում է.

«Արդ՝ շնորհիւ տեառն սկսայ և նորին կատարեսցի զպատգամս Տեառն Աստուծոյ իմոյ թագաւորին չի քի որ է աւրհնեալ յաւիտեան։ Իսկ ի բառնալ թագաւորին Հայոց մեծաց և տիրել աշխարհին վրաց թագաւորին անգաւր գտեալ յարարչէն ել ազգն նեռոդաց որոյ անուն կոչի դադար, մարդադէմ գազան, շաղակեր, որ ուտէին զմիս մարդոյ իբրև զանասնոյ, խուժադուժ ազգ, եկն աշխարհն Հայոց և առ բազում բերդս և բազում քաղքանիս և յանխնայ կոտորեց զայրս և զկանայս և զանմեղ մանկունս, և տարածեցաւ աստուածատաստ բարկութիւնն ընդ ամենայն աշխարհս. այս ամենայն եկն ի վերայ մեր վասն մեղաց մերոց։ Իսկ Աստուած զթացաւ յիւր ծառայքս թէպէտ և մեղաւորք էաք բայց իւր ստեղծած էաք և դադարեցուց զբարկութիւնն. միթէ դառնացաք ի մեղաց և ոչ դարձաք այլ առաւել յորդորեցան ի գործ պոռնկութեան ի շնութիւն, ի ագահութիւն, ի սպանութիւն, ի անուսութիւն, յընչասիրութիւն, ի արծաթսիրութիւն. իսկ առաջինք զարարածս ձեռաց իւրոց պաշտէին իսկ սոքա զնիւթն, որ է արծաթ ամենայն չարեաց մայրն, առնէին վաշխս և տոկոսս, զորբս զրկէին, զաղքատս լացնէին. եղև քահանայն իբրև զմի ի ժողովրդենէն և առաջնորդն խոցոտող և ոչ բժշկող և հարկս տային անաւրէն ազգին և ծառայ զրվէին և յաստուածոյ ոչ վախէին և ի մեղաց ոչ դադարէին այլ հարկին պատճառանաւք գիտէին թէ ապրել կամէին և ես առաւել մեղանչեցայ այնքան զամենեսեան և եղև մերովս զճանն (?) չար քան զառաջինն. իսկ աստուծոյ ոչ հանդուրժել այսմ ամենայնի այլ յարոյց զանաւրէն գազանն ընդ ամենայն տիեզերս յանխնայ կոտորեցին զքահանայս և զկրաւնաւորս և զանմեղ մանկունս և լայր մայր առ որդիս իւր, որդիս առ հայրս իւր և ոչ ոք է որ թաղէր զնոսա. անդ էր ողբոց և լալոց արժանի մարգարէին երեմիային լերանց թէ ընկերաւք ի վերայ մեր և բլրոց թէ ծածկեցէք զմեզ. իսկ ի թուականիս եղև սով սաստիկ ի մելիտինէ հայոց մեծաց քաղաքի, որ մայրն զտղայն կուտէր, ու զխոտն ու զամենայն ժժմանք, իբրև զհաց կուտէին։ Ճշմարտապէս պատմեցին թէ երեք ընկեր ի ճանապարհի միով երթային երկու ի մի խորհուրդ եղեն և զընկերն իւրեանց կերին և եա մեզ ածասատ բարկութիւն որ եղև, իսկ ես տրուպս և անարժանս Սարգիս ամենայն մեղաւք լի զէրծեալ ի դառն տանջանաց եկի յերկիրս կիլիկեցւոց ի յաստուածասէր և բարեպաշտ թագաւորին հեթմոյ և... զրեցի ...զսուրբ աւետարանս».... Ապա խնդրում է հիշել իրեն և յուր ծնողներին»։

ԺԹ դար

Փոկա գյուղում արժանապատիվ Տէր Սահակ Տէր Մելքոնյանի մոտ կա մի քառածալ, մագաղաթյա, բոլորագիր Մայր Մաշտոց՝ Իգնատիոս քահանայի ձեռամբ գրված «ի մեծ Թուականիս Հայոց ի Ռ և ի Թ. ի գիշոց որ կոչի Ղարասու, ընդ հովանեաւ սուրբ առաքարիս որ անուն սրբոյն Գէորգայ զօրավարին կառուցեալ կայ ի պարոնութիւն երկրիս հեղնայ սուլթան Ահմատ բէկի և ի թագաւորութեան աշխարհակալ արքային սուլթան Սուլէյման խոնդ քարին, որ ի յայսմ ամի եղև հակառակութիւն ի մէջ որդւոց նորա, պի Հայրն ձերացեալ էր և անկեալ ի տանն և որդիքն հակառակէին: Զի փոքր որդին սուլթան Բայազիտն գնաց ի վրյ մեծ եղբօրն սուլթան Սէլիմին: Եւ նա ժողովեաց զհեծեալ հօրն իւրոյ անթիւ զօրս և ել ընդ առաջ նորա և նա փախեաւ ի նմանէ դէպի յարևելս և գնացեալ հասս ի մեծ քաղաքն Շահաստան, որ է Թաւրէզ: Եւ թագաւորն Թաւրիզու Դահմազ շահն սիրով մեծարեաց զնայ և սուլթան Սէլիմն դարձաւ ի տեղի իւր. և այլ ոչ գիտեմք թէ զինչ լինելոց է: Յորոց փորձանաց փրկեսցէ գմեզ Քրիստոս Աստուած մեր. ամէն»:

ԺԸ դար

Դադեշ գյուղի քահանա արժ. Տէր-Կարապետ Տէր-Գաբրիելյանի մոտ կա մի ութածալ, բամբակյա թղթի վրա բոլորագրով գրված Մաշտոց, հասարակ կազմով:

Հիշատակարանում ասված է.

«Կատարեցաւ սուրբ մատեանս, որ կոչի Մաշտոց ձեռամբ յոհնամեղ և կրկնամեղ Աբանաս սեբևեք քաւչի: Որ անուամբ միայն քահանայ և ոչ գործով: Ի քաղաքիս Ղարս կուշեցելոյ: Ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին ի Թուականիս Հայոց ՌՃԻԲ. ի հոկտեմբերի ի. Բ.: Յիշատակ ի վայելումն մանկանց եկեղեցւոյ... բանզի ես Աբանաս երէց որոշեալ չի բազում ազգականաց և միայնացեալ թշուառութեամբ ի մենաստանի յանկիւնս տան մերոյ. և պակասութիւն ամենայն կողմանց եկեալ հասեալ ի վերայ իմ բազում կերպիւ. երբեմն ստացուածոց, և երբեմն արդեանց պակասութենէ:

Եւ ի մէջ այսպես և չարագէմ այլազգ տառկաց ստասանելով դրեցի զսա և թողի յիշատակ վայելողացդ. որք ընթերնուք սիրով զիրքս սիրով սրտի և ևթէ հաճոյասցի կամաց ձերոց տեառն շնորհ: Եւ թէ ոչ՝ ներեցէք մեզ. զի մեզէն ոչ է առաջ եկեալ այլ ի սրբոց հայրապետաց առաջնոց: Աւարտեցաւ գիրքս, որ... (պատռված է) ի ժամանակս իշխա-

նուիրեան.... Սուլթան Մուհանմատին.... հանապազ ընդէմ ֆռանգ.... ի հայրապետութեան հայոց տուն Յակովբ սրբազան կաթողիկոսի: Սուրբ իջման տեղւոյն: Որ և նա ի ժամանակի իւրում բազում վիշտս կրեաց. երկու այլազգ թագաւորաց միջի: Վասն դի բազումք օգտողք արարին նենգութիւն վասն սուրբ աթոռոյն լուսաւորչին մերոյ: Եև նա որպէս գրաչ հովիւ ման չանձն էառ. և կարի նեղութիւնս կրեաց մինչև ի բռնաւորէ ևս փախ առեալ գնաց ի դրունս պարսից արքայի. դեռ մինչև ցարդ աշխատի և վերջ գինչ լինելոց է Աստուած գիտէ: Դարձեալ յիշեցեք զիս և այլն»:

Ճանճղա գիւղում մի այրի կնոջ ուխտաւորի դարձրած սենեակում գրված է ձեռագիր, բամբակյա ութածալ և բոլորագիր Մաշտոց, որի հիշատակարանում ասված է.

«Արդ՝ գրեցաւ սա ի դառն և ի դժուար ժամանակիս, որ իբրև գնաւ մրրկեալ և ալեկոծեալ կայաք ի ձեռս անօրինացն և գաղանաբարոյ բռնաւորաց: Զի ազգի ազգի և պէսպէս պատրանօք և անխտիր թալանէին և կողոպտէին զազգս քրիստոնէից անողորմաբար: Եւ կայեաք ի մէջ այլազգեացն անտերոյ: Ոչ ունելով զառաջակայ և ոչ գլուխ ժողովրդեան այլ մնացեալ աբի բերան և շալք ի մէջ օձից թունաւորաց, զի որում ոչ կարեաք յաջ գնալ և ոչ ահեակ վասն անառակ գործոց մերոց որ կու կողոպտիմք ի ձեռս այլազգեացն: Եւ զի առաջին ժամանակն հաստատեալ կայր ի միջի մերում հարկս որ այժմ ասեն խարաճ և սայն ևս հաստատեալ էր հայրենեաց մերում ի վերայ նաֆարի և մեք կուտայեաք անխտիր, և այս Ք. ամ է որ ուրիշ ուրիշ սահմանք արծարծելով վերուցին զնաֆարին խարաճն և արարին խարաճն բիւդի երեք բաժին, առաջին ալա որ էր դ. ոսկի շարիֆի և երկրորդն յատաք որ էր բ. ոսկի և երրորդն յայտնալ, որ էր ա. ոսկի, դ. ոսկին կանէր բ. ղուշ, և էր խբ. դրամ արծաթ և բ. ոսկին դ. ղուշ, որ կանէր խդ. դրամ արծաթ և ա. ոսկին կանէր բ. ղուշ , յոպ, որ էր ժբ. դրամ արծաթ, և էր ալայն ծանուր խօճա մարդոյն, և աւսաբն միջնաւահման մարդոյն և յայտնան էր յետնացեալ մարդուն, որ է վերջին աղքատն: Եւ նոքա չարեան ի վերայ քրիստոնէից և եկեալ թալանեցին անողորմաբար մեծատունք, և միջնաւահմանքն և աղքատքն հաւասար իւրեանց գիտութեան և վերջն Այ է գիտելի գինչ լինելոցն: Այս ամենայն եկն ի վերայ վասն անառակ գործոց մերոց, և մեծ անառակ գործքն մեր այս ի որ ազգապղծութիւն բազում կու լինի ի միջի մերում: Ոչ ունկն դնելով առաջնորդաց և ոչ երկնչելով ահէն Այ, այլ մերում կամապաշտութեանս: Եւ վասն անդր բարձեալ կա նախանձմունքն Այ ի մեզ: Զի ոչ ունիմք մաս մի բարի

և ոչ կասեմք ողորմութիւն բարերարէն Քսէ։ Եւ եղև կատարումն սուրբ տաճիս ի թվաբերութեանս Հայոց ՌՃՆԳ, ունիս ամսոյ իզ, օրն գշբթի ի գաւառս Խախթեաց որ այժմ կոչի Բարերդ ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնի որ է մեղի եկեղեցի ձեռամբ մեղսասէր և անարհեստ Փանաքի սուտ անուն Գրիգորի և գործովն չէ արժանի, խոցեալ նետիւք սատանայի»։

Ապա խնդրում է յիշել իրեն ու իրայիններին։

ԺԸ դար

Ղուլալիս գյուղի եկեղեցում կա բամբակյա թղթի վրա գրված մի քառածալ Մաշտոց, որ գրել է Մելքոն երեցը «ի գաւառն Խորձին որ Կեղի յորջորջի, ի դուռն սուրբ Յակոբի և սուրբ Աստուածածնի Թուին ՌՃԿԷ մայիսի ԺԳ»։ Սաղմոսները նոտր, իսկ շարականները բոլորագիր են։ Սրա մեջ կա «Ողբ Մելքոն երիցու Կեղեցւոյ ասացեալ ի Թոռին վրա Սամելայ» գանձը, որ կրում է ԺԸ դարի առաջին քառորդի աշխարհաբարի կնիքը։

«Ողբս Մելքոն երիցու Կեղեցւոյ ասացեալ իւր Թոռին վրայ Սամելայ։

Մահն ու գրողը էկաւ աշխարհիս տիրեց,
Առաւ դիւիթ զալամ դէաւտարին գրեց.
Կարմիր գրէն հանեց սև գիրն գրեց
Աւա՜ղ, ափսո՜ս կանանչ արևդ Սամէլ։

Երեսդ զրմզկուն քան պիերթ վարդի,
Լեզուդ անուշ խօսէր բուլբուլի ձագի,
Իմ քաղցր անուշ ձագուկ, իմ որդուս որդի,
Աւա՜ղ և այլն։

Լանջ քո յոյժ գեղեցիկ շողշողիւ փայլէր,
Աչերդ ծով ծովէ ուներդ պահէ.
Որ հայր որ մայր ձագն իւր ծոցուն վառէ
Աւա՜ղ, ափսո՜ս կանանչ արևդ Սամէլ։

Քօրփայ էիր Սամէլ դու զարնան գառնիկ
Դեռաբոյս սիմպուլ էիր նոնանայ ծաղիկ,
Կարկտահար եղար թալփեցար գետնի
Աւա՜ղ, ափսո՜ս կանանչ արևդ Սամէլ։

Ոսկի ծաղկի նման շողիւ փայլէիր,
Թէ հին թէ շուր հագնէիր պոյիդ վայելէիր
Սիրամարդի նման շուրջ ինձ քայլէիր,
Աւա՛ղ, ափսո՛ս և այլն։

Իւսեալ վարսեր ունէիր դու ծիրան քանքուլ
Լեղուդ արագ խօսէր քան զգարնան պիւլպուլ
Առին ձագս ի ծոցէս մէկ ժամ մէկ պահու,
Աւա՛ղ, ափսո՛ս և այլն։

Նանիր ծաղկի նման բուսար ծաղկեցար,
Խորշակահար եղեր տերևաթափ եղար,
Շարաֆ[44] քամին հնչեաց շուտով թառամեցար,
Աւա՛ղ, ափսո՛ս և այլն։

Եկեր են կու բաժնեն ձագուկն ի մօրէն,
Կապեկն կու հանեն Սամէլին թևէն,
Մատանին ի մատէն ղօղերն ականջէն,
Աւա՛ղ, ափսո՛ս և այլն։

Սամէլ թալան եկաւ զքեզ թալնեցին
Կապեկդ ի վրայէդ շապկեքդ հանեցին
Քո թանգ արևն որդի աժան գնեցին
Աւա՛ղ, ափսո՛ս և այլն։

Շուտով քեզ թալնեցին հանեցին կապան,
Ջորնայ քոյ փայ էգին Թող դառնայ խոպան,
Որ հայր որ մայր դրէր զերկուսն մէկ տապան,
Աւա՛ղ, ափսո՛ս և այլն։

Ուստի ժամանեց քեզ այս կրակ բոցն.
Սրտիկդ խառնած սրով փլեր քո խոցն,
Սև հողով կու ծածկեն քո ճերմակ ծոցն,
Աւա՛ղ, ափսո՛ս և այլն։

Հայրդ մնաց քեզնէ օխով կարօտով,
Դու պալասան ծաղիկ՝ անուշիկ հոտով,
Գիշերն յերազն էկէ պագնէ կարօտով,
Աւա՛ղ, ափսո՛ս և այլն։

---

44 Արտերին վնասող։

Լալ ես, Սամէլ որդի, մէկ հետս խօսա,
Քոյրդ նոր հարս հանած գրնզ նոր փեսայ,
Աչերս թող խաւարի, խակամեռ տեսայ,
Աւա՜ղ, ափսո՜ս և այլն։

Ջարդեցիր ոսկերքս մարմինս քլքլայ,
Քու կսկծուն, որդի, հալայ ու մաշայ,
Աղիքս գալարի սրտիկս խշխշայ,
Աւա՜ղ, ափսո՜ս և այլն։

Մայրիկդ աղխորով կսկծայ կուլայ,
Աչերն արտասուաթաց արիւն թափէ նա.
Լեարդս աղեխորով ջիգեարս մոմռայ,
Աւա՜ղ, ափսո՜ս և այլն։

Սրտիկդ դիպեր է հրեղէն նետեր,
Արտասուս չի ցամքեր դարձեր է գետեր.
Սամէլս եմ կորուսեր սև հողն է գտեր,
Աւա՜ղ, ափսո՜ս և այլն։

Ծիրանի ծամերդ լանջդ ի վայր իջեր,
Կամար ունէր որդի քու ծովան աչեր,
Խոստացայ սրբունանց խունկ ու մոմ խաչեր
Աւա՜ղ, ափսո՜ս և այլն։

Քո կսկծուն Սամէլ շուարայ լացի,
Յոյժ դեղեցիկ պատկերդ սակաւ զովեցի,
Ես մեղաւոր Մելքոնս փանաք կեղեցի,
Թուական հայկական հազար հարիւրի
Մին յոբելեան վերայ ԺԱ. տարի,
Յունիս ԻԳ ի յօր կիրակի, աւաղ։

Քո կսկծուն որդի խելաթափ եղայ,
Քո հասրաթէդ որդի անձն իմ սարսափի դողայ,
Լսողդ աղաչանաց աղերսանաց ասէք հայր մեղայ
Աւա՜ղ, ափսո՜ս կանանչ արևդ Սամէլ»։

Ախալքալաքի արժանապատիվ խորեն քահանա Բաղդասարյան ունի մի ձեռագիր, բամբակե թղթե մատյան, որ գրել է Հայոց ՌՃԿԸ (1719)

Թվին Թեոդոս գրիչը էրզրումում Խաչատուր վարդապետի համար։ Սա պարունակում է յուր մեջ.

I

Հաւգեպայծառ սուրբ հօրն Վարդանայ լուսաւոր արաբեալ համառօտ մեկնութիւն երգոյ երգոցն՝ պարզ և դիւրահաս։

II

Տէր Առաքելի Սիւնեաց եպիսկոպոսի հոգենորոգ վարդապետի քարոզ ծննդեան ի բանն որ ասէ սիրելին ի սենեակ մեր երգեսցուք զսէր։

III

Մատթէոս Ուռհայեցու պատմութիւնը։

IV

Ջենոբ Գլակայ պատմութիւնը, որ գրել է հայոց ՌԾԿԸ. թուին, Խաչատուր վարդապետի համար Արզրումում Թէոդոս գրիչը։

V

Յաղագս պիղծ ժողովոյն Քաղքեդոնի և անիծեալ չառափառին Լէօնի։

Նույն քահանայի մոտ կա և մի «ռամ ձգելու» գիրք։

ՋԱՎԱԽՔԻ ԲԱՆԱՎՈՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ

Վիճակի երգեր

Ալ ձիուն նալն ի՞նչ էնե,
Ըռունդը խալն ի՞նչ էնե,
Սիրունը սրտովս ըլլիր,
Աշխարքի մալն ինչ էնե։

Ա՛խ էնեմ արուն գուգա,
Սև սրտիս գարուն գուգա,
Ի՞նչ էնեմ անպես յարը
Պըտրտվի տարուն գուգա։

Ախով սիրտս վառեցավ,
Ալ արունս սառեցավ,
Անխիղճ մի ըլլի, իմ յար,
Սաղ աչքերս պաղեցավ։

Ախպեր հանաքիդ մեռնիմ,
Օսկե դանակիդ մեռնիմ
Ճամփա էրթող շեկ աղբար,
Դյուքան բազարիդ մեռնիմ։

Ախչի մազերդ երկանի
Քամին թել-թել կը տանի.
Միք մեխթրե սիրելիք,
Սերը՝ յաման կը տանի։

Ախչի մազերդ հյուսեիր,
Թուշդ էրեսիս քսեիր,
Էլլեիր վարդի ծառին,
Բյուլբյուլի պես խոսեիր։

Աղչի դու մորեդ ուշ էլար,
Մեծրցար կարմիր թուշ էղար,
Տունմ՝ չունիմ՝ օր տուն էրթանք
Քեղի առնեմ ո՞ւր էրթանք։

Արծթի բանձր տեղ է,
Ջուրը հիվընդի դեղ է.
Ուզած ուզածի չեն տար,
Աս ի՞նչ անօրեն դեղ է։

Ա՛յ ձի հեծնիմ կը քիզի,
Յորզա քշեմ կը քեզի,
Գրնը յարես խապար բեր,
Ջարպաղ չուլ կէնեմ քեզի։

Արևը կամար կամար,
Կապել ես օսկի քամար,
Հիթսուն օր պաս եմ պահե
Յարիս ճամփի համար։

Արևն առավ գերանին,
Մեռնիմ Ավետարանին,
Մե չուխտ էղվըներ թռավ՝
Կանաչ խոտը բերանին։

Ախպեր բաղըդ անուշ է,
Բաղիդ միջին եմիշ է,
Ախպեր խաթրըդ չմնա՝
Յարս քիղնեն անուշ է,

Ալ արախչին դրեր ես,
Ինչի՞ ճիտդ ծռեր ես,
Բարև կուտամ չես առնի՝
Մյակամ ինձեն ջորեր ես։

Արևը սարին վրա,
Մամուռը քարին վրա,
Օխթը գյուկում քյահրեպար,
Իմ սիրած յարին վրա։

Աղչիկն էկեր պար կուզե,
Մարգրիտներ շար կուզե,
Հըլը պագմ չսվածՙ
Ինծեն անգին քար կուզե։

Ասօր նորը նորեր է,
Իմ յարի եզ կորեր է,
Վուվ օր գտնի թող ես տա,
Ճակտիս օսկին մյուժդան է։

Աղչի բոյըդ դյուրմալի,
Աչվընեըրըտ սյուրմալի,
Միք մեխթրե մարիկներ,
Սավդան (սեր) կրակ գլմանի։

Աղչի կըսեմ քեզ յաս ա,
Շապիկդ չիթ ու խաս ա,
Քընը քու մորդ ըսա,
Ինծ բռնե իրեն փեսա։

Բարակ ճամփա մաեր ես
Կորուցածդ գտեր ես,
Ինծի մաքեդ ցկեր ես,
Նոր առածդ չվայլես։

Աղչի ի՞նչ էր պիլակդ
Օխով կոշկով պիլյակդ,
Մի բանա ճերմակ դյակսդ
Ինծի կէփև կրակդ։

Բանցր պաաին կայներ ես,
Բանցր լեյլաղ բոներ ես,
Բարև կուտամ՝ չես առնև,
Մյակար ինծնեն ջորեր ես։

Գնացի ջուրը ջրի,
Օաքս ընկավ օձի լեղի,
Ի՞նչ բսեմ հորս ու մորս,
Ինձ ավին զարիպ տղի։

Գնղեն էլես գեղ մանիս,
Իմ քըցած տեղը մանիս՝
Ինծեն զայրի յար բոնես՝
Բեմուրատ հողը մանիս։

Գուլբանը վարի փոսին,
Շողն է զարկե ակոսին,
Կարմիր խնձոր դող կէնեմ՝
Ղրկեմ իմ նանի փեսին։

Գուլբանը վարած տեսա,
Հերկերը վարած տեսա
Ապուռբա գետինը մանի,
Սիրածդ տարած տեսա։

Դյոշակ ցկի փոթի էկավ,
Բարցիդ մեջեն ֆոտ էկավ,
Մեռնիմ դյաստա բյանքուլիդ
Քու խապարդ ե՞փ էկավ։

Դու նստեր ես դյուշակին,
Ուշկդ ու միտքդ փեշակին՝
Համեր ես նռան գինին՝
Հոտ քաշես մանուշակին։

Դու նստեր ես գերանին,
Ակրեշում է բերանին,
Օսկե գայթան տու գործեմ
Կարեմ ճեպիդ բերանին։

Դեմեն ձիավոր գնաց,
Նալը պըլպըլաց գնաց,
Ամենքին բարև տվեց՝
Ինձի վառեց ու գնաց։

Դյուշակ ցկի փոթ կուգար,
Բարձիդ տկեն ֆոթ կուգար,
Մեռնիմ դաստա քյանքյուլիդ՝
Միչեն խնկա ֆոթ կուգար։

Դամբուրիս կոթը քերեմ,
Կայնի քեզ գինի բերեմ,
Ձեռքս ճտովդ տանեմ,
Գնացած խելքդ բերեմ։

Դուն կայներ ես կարմնճին,
Փաթըթվեր ես յափունջին,
Քեզ կըսեն գեղի փեսա
Ծոցդ կա գեղին քիսա։

Ես կարծաղու փոսեն եմ,
Գոգոտաշ սարի փսեն եմ,
Մուժոտա տարեք քո մորը՝
Ես քու նանու փեսեն եմ։

Ես աս գեղին ցորնեն եմ,
Խաս բաղու խնձորեն եմ,
Խնձոր էղե հասեր եմ,
Բյուլբյուլի պես խոսեր եմ։

Ես էս գեղի ձորեն եմ,
Խաս պաղչի խնձորեն եմ,
Կարմիր խնձոր ճեպլըտ եմ,
Ուր օր կերթաս հետդ եմ։

Երկընուց մատնիմ իջավ,
Մատիս վրա խաչվեցավ,
Ես իմ յարը քիամ դիտեի,
Ճեվահիր քար բացվեցավ։

Էս գիշեր լուսը տեսա,
Իմ յարըս դուսը տեսա,
Էլեր էր մերին կերթար՝
Կացինն ումուղը տեսա։

Էս բակը բակ զըլմանիր,
Գլխունը թագ զլմանիր,
Իմ յարը դռնեն անցավ՝
Իրմովը բյակ զըլմանիր։

Էլեր ես փաստ կը տաշես,
Ալամ աշխարքին կաշես,
Ինձի սեր էրիր չատար,
Ալ ալխալուդդ չմաշես։

Թավեն բերեք ձուկ խաշենք,
Էլլենք կատուրը աշենք,
Տեսնենք յարս եվ կուգա՝
Ջոբենք ճղմեքը քաշենք։

Ժամա դռնեն դուս կուգաս,
Ճրագի պես լուս կուտաս,
Ես իմ մեյլը ավեր եմ,
Դու քու մեյլը ե՞վ կուտաս։

Իմ յարը դուռ բներ էր,
Փափաղը ծուռ դրեր էր,
Հազիվն յարը տուն ատացավ,
Իմ յարը ձորեն անցավ։

Ինի մանչուն ֆասը ալ է,
Դառնա դառնա ինծի կաշե,
Ինծեն քեզի ֆայդա չկա,
Գնա՛, գնա՝ ճամփատ աշե։

Իմ յարս դուռն է դրած՝
Ալ դռաին նուռն է դրած.
Իմ յարիս պոյին մեռնիմ՝
Ալ ֆասը ծուռըն է դրած։

Իմ յարըս էլավ գնաց,
Սարին դեմ առավ մնաց,
Սրտով թողութեն չառա,
Սրտիս դյարդ էղավ մնաց։

Լուսնիակը էրգան գիշեր,
Գեր օնքվի կարմիր թշեր,
Աղչի, ախպորդ արևը սիրես՝
Դասատուր տուր գամ աս գիշեր։

Լուսնիակ կամար կամար,
Ես մեռնիմ քեզի համար,
Սիրականս ինծի չեն տար,
Ասատծո խաթերն համար։

Լուսնիակը բոլըրեր է,
Ամպի մեջ կլորեր է,
Աղչի քու ծոցիդ մեջը՝
Ծըծերդ կլորեր է։

Լուսնիակ կամաց գնա,
Կանգ տու ու ցածանց գնա,
Հեռավորը յարմ, ունիմ,
Բարև տու անցի գնա։

Լուսնիակն էլե լուսե լուս՝
Ախպեր քուրոջ կանչեց դուս,
Ախպեր պետք է քուր շահե՝
Քուրոջ դարդեր նա պահե։

Հաշակը պուկս եմ ցկե,
Իմ յարը միաքս եմ ցկե,
Իրեք օր է չեմ տեսե՝
Կրակը սիրտս եմ լըցե։

Լուսնիակ երկար գիշեր,
Կեռ ունքվի կարմիր թըշեր,
Խապար էրեք իմ յարին,
Չկենա գա աս գիշեր։

Ծառին տակը հել ունիմ,
Հում ապրեշում թել ունիմ,
Ծո՛ մանչ, տաւվարը վար բե՝
Ես քու վրատ սեր ունիմ։

Ծառավ եմ՝ հել ջուր չկա,
Գետերուն կարմունջ չկա,
Վախենամ զարիպ մեռնիմ՝
Քուկս հար ու մար չկա։

Կայներ ես բաղի միջին,
Օտվիքըտ շաղի միջին,
Կանչե յար, ձննիպ մեռնիմ,
Ես եմ քու խաղիդ միջին։

Կայներ ես կանչել ա չես,
Պոյեդ ամնչել ա չես,
Յարդ օր կուգա կանցնի՝
Չննեն ա ճանչել ա չես։

Կայներ եմ գալ չեմ կրնա,
Լցվեր եմ լալ չեմ կրնա,
Ինչըդ օր գնացել ես՝
Անունըդ տալ չեմ կրնա։

Կայներ ես կաթ գլմանիս՝
Բացվեր ես վարդ գլմանիս՝
Ա՛ռ հայլին էրեսըտ աշե՝
Ալամին խախք գըլմանիս։

Կուտիկմ ունիմ ալա է,
Ալա չէ՝ ալվալա է,
Յար բռնելը զոլա է,
Բայց թողնելը բալա է։

Կայնա քեղի խրատի,
Աղչի գնա կրակի՝
Կայնի բոյիդ սեյր էնեմ
Ուրբաթ շաբաթ կիրակի։

Կաքավը կայներ է քարին,
Կտուցը լիքը արին,
Մե յայլուխ վարդ եմ քաղե՝
Տարեք իմ անուշ յարին։

Կայներ եմ՝ չեմ կրնա գա,
Լցվեր եմ՝ չեմ կրնա լա.
Ատ ճամփովը մի էրթա,
Անունտ էլ չի կրնը տա։

Կարմիր վարդը զամով է,
Սիրած յարը համով է,
Ատ տեղ զոռի բան չկա՝
Սերն ու սյավատան կամով է։

Հանդիտ հարոսին մեռնիմ՝
Գինուդ կարասին մեռնիմ՝
Ճամփա էրթող շեկ տղա,
Սրտիդ հավասին մեռնիմ։

Հաց եմ թխե գարի է,
Իմ յարը սաֆալի է,
Մեռնիմ Սաֆար գնալուդ,
Խոսքերտ շաքարի է։

Ջեռքդ առիր ես էսան,
Թափ տու թուխունիդ քիսան,
Կանչե, կանչելուդ զուրպան,
Իմ նանի ազիզ փեսան։

Ղուշը թռավ մեր արտեն,
Կտրավ իմ սաղիս ֆարտեն,
Աշըղ չեմ, աշըղ դառա՝
Բեմուրատ յարիս դարդեն։

Ճրագ դնեմ լուսացու,
Կանանչ ատլաս քիսացու,
Ես քու նանին փեսացու՝
Դուն իմ նանին հարսնացու։

Ճախս հըլունը հաղեղ է,
Ջանըս ջանիդ լայեղ է,
Էլար դուռը աշեցիր,
Ջիվանի ումրըդ մաշեցիր։

Մյանի ըսեմ մև բերան,
Մև տունեմ ջուխտակ գերան,
Ռունդը[46] ռունդին կոտան,
Ջիրգինն աշխրքի բերան։

Մաղերդ սև, թուշդ կարմիր,
Շաքար լեզուդ բերանըս դիր,
Ջենովդ ինծի եսիր էրիր,
Փարե[47] գլուխս ծխծխկիդ դիր։

Մառմառ քարը տաշած է,
Յարըս գալմով քաշած է,
Աչքին ունքին հավան եմ,
Քիչըմ ուրանգը թռած է։

Մուղնվա ջուրը սառն է՝
Մուղնի էրիտղն իմ յարն է՝
Թող էրիա մուրաղն առնե՝
Ետ դառնա սիրածն առնե։

---

46 Սիրունը։
47 Գոնե։

Նախըրը կայներ է դյուզը,
Կանչեկը զարադյուզը,
Ղրկե մահրամադ լլամ՝
Առնեմ քյանքյուլիդ Իողը։

Պյուլպյուլը տալին վրա,
Հնծորը ծառին վրա.
Սիրած սիրածին տային՝
Ջոր գետնին քարին վրա։

Պիլակդ ունիս ջուխտ ղոլպաղի,
Մառչան խառնած, սոլի սաղի,
Մեռնիմ ա սերըս չի պաղի՝
Յախուի պես կպար ինծի։

Ջախճիս դուռը տաշած է,
Մահրամաս գյուլ քաշած է,
Իրեք օր է չեմ տեսե,
Սիրտս փորես քաշած է։

Ջաղաչս կաղա ձավար,
Դուշմընիս աչքը խավար,
Յարեն օր կառնենք խապար,
Թող տանին օխթը տավար։

Ջուրը առնեմ էլնեմ սարը,
Չտեսնիմ ֆիտան յարը,
Ինծ տվեք էն ֆիտանին,
Չըքաշեմ ահ ու զարը։

Սոմ սրմալի ալ փուշի,
Աղջի սիրտս կը մաշի.
Քու տված անուշ պագիկը
Չեմ տա հազար ղուռուշի։

Սարին տակը մնացի,
Բկիս կապը վլացի,
Խապար էրեք իմ յարիս՝
Ես հոս ղարիպ մնացի։

Սարերը հեշտացեր են՝
Ձրերը շատըցեր են,
Խապար էրեք իմ յարիս՝
Մուշտարիքս շատըցեր են։

Սարերը նունուշ դըլլի,
Վարդին մեջը փուշ դրլլի.
Գլուխս յարիս ծընկկին՝
Քունըս շատ անուշ դըլլի։

Սերն ի՞նչ է, սավտան ի՞նչ է,
Էս խաղի գայդան ի՞նչ է.
Բանցր ծառ անուշ պտուղ,
Ջեմ հասնի ֆայտան ի՞նչ է։

Սիա փուշին փռած էր,
Ղութնի բարձը դրած էր,
Քյաթյամ էրեք[48] ադաներ,
Յարըս ինծեն ջորած էր։

Պատին էտևը ամպեր էր,
Թուփով օսկին բնդեր էր,
Մեռնիմ ադաս ղըլըղիդ՝
Ղըլըղըդ կեղտոտեր էր։

Վարդ եմ քաղե ջամով է՝
Սիրած յարը համով է.
Ախպեր խաթըդ չմնա,
Յարըս քեզնեն համով է։

Քաղեցի արամ՝ գարի,
Կանչեցի «արի, արի»,
Ձեն տվի ձենս չառավ՝
Ինծ լացուց տարի տարի։

Քոչ գուբա, քոչ կանցնի,
Քոչ քոչի մեջ կանցնի,

48 Պատմեցեք։

Սիրտս կրակն ընկեր կէրի՝
Ոչ կէրի ոչ կանցնի։

Քարիս տակը քարոտ է,
Բանցր ձիանց արոտ է՝
Ուղիղ օխթը տարի է՝
Քուրն ախպորեն կարոտ է։

Օշխարըն էրեր եմ դոշը՝
Պիճիկի լեզուն խոշ է,
Ես մեռնիմ պըղտի յարին՝
Ամանաթ յարը բոշ է։

II

Արեգակ ցածանց գնա,
Ցած տուր ու ցածանց գնա.
Հեռու տեղ յարմ ունիմ։
Բարև տուր անցի գնա։

Էրևան բաղ եմ արել,
Ջիկյարս դաղ եմ արել,
Տոստ ու դուշմանի միջին՝
Լացս ծիծաղ եմ արել։

Սարիցը քոչըմ անցավ,
Քոչը մեջ տվավ անցավ.
Սիրտս մե կրակ լցվավ՝
Ոչ էրեցավ, ոչ անցավ։

Մեր չարդաղը բանցռ է,
Սիրած յարը քաղցր է,
Քելեք հորը հարցնենք,
Թե չը տվնց՝ փախցնենք։

Սարերուն սինձը ի՞նչ է,
Կաթն ու բրինձը ինչ է,
Ես եմ սիրել, ես կառնեմ,
Ձեր կռիվ տալն ի՞նչ է։

Լուսնիակը նորեր է,
Յարիս եղը կորեր է,
Վով օր գտեր է՝ թող տա,
Հիսուն մանեթ միժտա կա։

Խախալը ման եմ ածել,
Բոյիդ նման եմ ածել,
Դու գիտես յա՞ր եմ ասել,
Խաբել ու ման եմ ածել։

Նաննես ինձի բերել է,
Բալուլ էրել, տիրել է,
Քյաշքա բալուլ մհոնեի,
Յար, քո մաքեդ չելնեի։

Էրևանու բերին նուռ,
Բերին թափին ժամին դուռ,
Ժամի դռնեն դուս կուգա,
Շանդանի պես լուս կուտա։

Լամբի շիշան կը ճնկա,
Կլորա, ծոցդ ընկա.
Սիպեղը զոխ է գառել,
Իմ յարը զոխ է գառել։

Յարս խոռված գնաց,
Սարերեն առաց գնաց,
Նյա զուշ էղավ, նյա կաթավ,
Ափես թռավ ու գնաց։

Նաննես ինձի տփել է,
Դուռը վրես խփել է.
Ես նաննես ջորեր եմ,
Դիար, դիար կորեր եմ։

Ջաղացիս դուռը տարթ է,
Կտուրը լիքը մարթ է,
Աստված սիրող բան չասե,
Ուզածս տղամարդ է։

Խոշա վանքի թվանքը,
Կըլմանի կարմիր վանքը.
Կարմիր վանքի ղըշլերը,
Սիրուն յարիս թըշլերը։

Խնամի խոշ ես էկել,
Դարդակ ու բոշ ես էկել
Երկու բուլուճ ես բերել,
Էն էլ ճանբան ես կերել։

Աղջի, աղջի, ինչ ըլլիս,
Կատուներին պոչ ըլլիս,
Աղամանի թաս ըլլիս,
Քաշբա հորս հարս ըլլիս։

Ջուրն էլավ երես, երես,
Բազրկան աստված սիրես՝
Եփ օր դառնաս Շերակալ
Սոնայիս հետդ բերես։

Փոցխս ծիրանի կոթ է,
Սիրաս յարալու խոց է,
Սրտինս սիրտդ ընկնի՝
Իմանաս սավառն ինչ է.

Մանի ըսեմ ու շարեմ,
Տոպրակը լցնեմ ու կարեմ,
Առնեմ ընկնիմ գեղոց գեղ,
Քեզնեն լավը կը ճարեմ։

Երկնից կամար օնքերդ,
Ինձնեն մի կտրե սերդ,
Համ տուտին եմ համ լալին,
Ես կարոտ եմ քո պալին։

Ստանպըոլ բոլոր մերի,
Բոլորը կըլլի դերի,
Ես իմ յարը կը ճանչեմ
Օսկի մազերը կ'երերի։

Ղարանֆիլը գեղին է,
Իմ ուղածը գեղեն է,
Կուզեք հարցրեք իմացեք,
Մեր գրկացնց տղեն է։

Լուսինն էլավ կամարից,
Բռնեք յարիս քամակից,
Լեզվովս արյուն առնեմ,
Էն բուխախի դամաբից։

Կապույտ բիրաճած աներ,
Մեջը կա օսկի սներ.
Սարեն թափան աղջկներ,
Կլմանին կատղած շներ։

Տան ետև տուն եմ շինե,
Հավերուն բուն եմ շինե,
Միք վախենա իմ դյոստեր,
Դուշմանը շուն եմ շինե։

Այ նանի քու մերութեն,
Ինձ տվիր ղարիբութեն,
Ղարիբութենը փուշ է,
Գեղի մեջը անուշ է։

Նշի ծառին նուշ կըլլի,
Վարդի ծառին փուշ կըլլի,
Երանի էն աղջկան,
Սիրած յարին դյուշ կըլլի։

Քնեցա էրած տեսա,
Սև հերկը վարած տեսա,
Տղա, թասիպտ մեռնի,
Քու յարը տարած տեսա։

Էս գիշեր լուսմ տեսա,
Իմ յարը դուսը տեսա,
Ըսի թև հետը խոսիմ,
Աղբևրը քովը տեսա։

Հերանցս դուռը դուզ է,
Հերըս պաշլըղ շատ կուզե,
Հարուր մանեթին աշե,
Պալտոնը թևդ քաշե։

Սարիցը մատնիմ իշավ,
Մատիս վրա խաչվեցավ,
Ես իմ յարը քյամ դիտեի,
Ջաֆայիր քար բացվեցավ։

Դարդլի եմ լալ չեմ կրնա,
Դիմաց դեմ գալ չեմ կրնա,
Դու էկար ինձեն անցար,
Ես էլի գալ չեմ կրնա։

Այ տղա էդ ես մետ ես,
Խանչալը մեջդ նետես,
Դու դիտես տղամարդ ես,
Մմակի փշուկ փետ ես։

Միթկալ շապիկ կարեր եմ,
Դոշին կոճակ շարեր եմ,
Հինը մարես հաններ եմ,
Քեզի թաժա ճարեր եմ։

Ձին դուռը կապած տեսա,
Կրակը վառած տեսա,
Յարս դռնիցը անցավ,
Ջաքմանը պատռած տեսա։

Կաղղման ձորին մեջը,
Պաղ աղբուր հորին մեջը,
Աղջի քու շամամ ծծեր
Անուշ խնձորի մեջը։

Թալան ծակ է, ևղ չը կա,
Փեսան էկավ՝ տեղ չը կա,
Փեսին շատ երես միք տա,
Փեսին էյթիպար չը կա։

Սարը ձերմակ վարդ կըլլի,
Տալտա տեղը մարդ կըլլի,
Ես իմ ուզածը չառնեմ՝
Սրտիս մեջը դարդ կըլլի։

Քուրդը քոչեց՝ տուն չունի,
Սիրտս բլավ՝ սուն չունի,
Սիրտ ըսածդ շիշա է,
Որ կոտռավ՝ էլ խեր չունի։

Էրևընու ալերը,
Կռունկն իջավ կալերը,
Կանչե կռունկ, դարուն է,
Սիրտս գունդ-գունդ արուն է։

Ծառին տակը էլ ունիմ,
Ալ աբրիշում թել ունիմ,
Չոպան, տավարըդ քաշե,
Ես քու վրադ սեր ունիմ։

Յար կայնել ես կարմնջին,
Մենկիլ օղերն հանկըճիա,
Քեզ կըսեն գեղի փեսա,
Ծոցինդ է դեղին քիսա։

Պատին մեջը պատ չիլլի,
Գեղին մեջը սար չիլլի,
Աղչի, խելքդ քեզ ժողվե,
Քու ըսածդ լավ չիլլի։

Սարին տակը մեծ գեղ է,
Ջրեր խառնած մեկ տեղ է,
Իմ յարս ինձ չի ճանչնա
Խելքը միտքը ո՞ւրտեղ է։

Լավ աղչիկ ես քուր չունիս,
Հաբիտ կուտուշկա չունիս,
Գնա կորի սևերես,
Հերեսիդ ապուռ չունիս։

Ծառ եմ տնկե շաֆթալու
Յարս կուգա ման գալու,
Շեկիկ մազավոր աղջիկ,
Դու ինձ էրիր սավղալու։

Սարերը ուշ է, մուշ է,
Իմ յարը բանզլի ղոշ է,
Ջոկեցի լավը առա,
Մեղրից, շաքարից անուշ է։

Գնացի սարը սնձի,
Ոտս առավ մեկ սնձի,
Տեփան, միրուքդ խանծի,
Ջը տվիր Սոֆոն ինձի։

Էրևան դյուքյան-դյուքյան
Ճերմակ շիշա ստաքան,
Ես իմ յարը սիրեցի,
Դյուշմաններս տրաքան։

Յարս յաղլըղս վլաց,
Ախ էրի խելքս գնաց,
Խելքս միտքս քեզի հետ,
Փողս ջեբիցս գնաց։

Ճամփա էրթաս էշըտ ըլլիմ,
Արծըրթե իյարտ ըլլիմ,
Ուրտեղ որ յար դու իջնես,
Ղոնաղճիտ ալ ես ըլլիմ։

Ծառին տակը տալտա է,
Քանի կայնիմ՝ ֆայտա է,
Միք մնխտըրե դըրկցներ,
Էս ինչ չաթին սավտա է։

Այ տղա վերա պաշի,
Ջաքմանիդ կուռը մաշի,
Քամ կշտովդ անց կենամ,
Թուխ գառը փեշքաշ քաշի։

Ազչի տունը լվացիր,
Յարդ մեռավ չը լացիր,
Թաժա յարդ տուն էկավ,
Ճերմակ դյոքսդ դու բացիր։

Ջայիրնին կըլլի զամուշ,
Մեչն էր լիքը եմիշ,
Միք մեխթրե մարիկներ,
Սրտով սիրածն էր անուշ։

Այ տղա փեստ կը տաշես,
Մայլա-մայլա դու կաշես,
Ինձնեն զայրի յար բռնես,
Հաքիդ չուխան չմաշես։

Ծեզ կենես ծեղիդ մեռնիմ,
Նոր զալած պեխիդ մեռնիմ,
Իրեք օր է չեմ տեսե,
Ման զալած տեղիդ մեռնիմ։

Մեր բակը բակ կըլմանի,
Գլխունը թագ կըլմանի,
էն տղան էկավ անցավ,
Իրմոքը բեկ կըլմանի։

Սարեն կելլեր էրկու մուխ,
Մեկը հնկավ, մեկը ծուխ,
էրկու գիզալ եմ սիրե,
Մեկը շեկլիկ, մեկը՝ թուխ։

Ջաղացս ալուր կանե,
Դիշմանես մըլուլ կանե,
Թող իմ սիրածս ինձի տան,
Թող հետը բալուլ բերե։

Կայներ ես կաթ կըլմանիս,
Բացվեր ես վարդ կըլմանիս,
Հայլին առ երեսդ աշե,
Աշխըրքին զարդ կըլմանիս։

Կայնել ես պատին տակը,
Ցոլա կը մատնուդ ակը.
Իմ կարած արախչինս,
Դրել ես ֆասիդ տակը։

Արտեն էկար դեղ մտար,
Իմ ցկած տեղս մտար,
Ինձնեն զայրի չար բռնես՝
Բեմուրադ հողը մտնես։

Իմ չարը միտս եմ ցըկե,
Լաչակս ճիտս եմ ցըկե,
Իրեք օր է չեմ տեսե,
Կրակը սիրտս եմ ցըկե։

Սարեն ես գամ, ձորեն դու,
Հարսն ես սիրեմ, կեսուրը՝ դու,
Տունն ես քնիմ, կատուրը՝ դու,
Սերն ես ուտեմ, մածունը՝ դու։

Մեր տանը ես վար կանեմ,
Չար ագռավին քար կանեմ,
Թե իմ սիրածն ինձի տան,
Դժոխքենես թարդ կանեմ։

Ծաղկեվանքի ղըշերը,
Մեր քարափի շըշերը,
Երբ կենա գա դիշերը,
Պագնեմ խանդուկ թշերը։

Կողբա սարը ղոշա է,
Միջի մարդը բոշա է,
Մաշիկ տվեք դուս հելնեմ,
Ինձ էլ չասեն բոշա է։

Պուճուր աղչի, մի թռնի,
Բարով քու մարդը մեռնի,
Ջեմ ղըմըշի բան ըսեմ,
Քամին ձեռներդ քաշի։

Սարեն կաղնի կը կտրեն,
Մեր արընեն կը ծըծեն,
Հեռու չերթաս, հոգի ջան,
Ինծի քեղնեն կը ջոկեն։

Այ տղա կլորեր ես,
Սրտիս տիրապետեր ես,
Բլբուլի պես խոսելտ
Ջիդյարս վառեց, էրեց։

Աղջի անունտ Շուշան,
Ճերմակ բուխաղ թուխ նշան,
Ես քու յարտ տեսեր եմ,
Ջեռքը ծոցին փոշիման։

Աղջի անունտ Թագուն,
Նստեր ես հորտ սաքուն.
Ինչ չինարի բոյ ունիս,
Երանի յարիտ հոգուն։

Կանաչ-կանաչ կանչեցեք,
Կանաչ մեյդան բացեցեք,
Թաղա շորեր հագուցեք,
Ինձ իմ յարին հասուցեք։

Ջուխտ գութան սար կըբանի,
Շեկ աղջիկ հաց կը տանի.
Մեկ կը քելե, մեկ կայնի,
Տեսնողի խելք կը տանի։

Ալուր մաղեմ թեփ գուգա,
Իմ յարըս հըճըփ եփ գուգա,
Ամեն ծառին մեկ փշատ,
Յարիս օմրը ըլլի շատ։

Արեգակ արա տակին,
Լուս կուտա քարա տակին,
Յար քեղի ո՞ւրտեղ տեսնիմ
Շիրանի ծառի տակին։

Գեղին բոլոր չիման ա,
Ջորս բոլորը տուման ա,
Աղչի արի փախցնեմ,
Հերդ ու մերդ չիմանա։

Ջատըրի տակը հով է,
Աղչիկ գու ինձի դովե,
Ճգնավորին հավուզը՝
Հաքել ես դանավուզը։

Ջուխտ սարին հովին մեռնիմ,
Շեկ գյադի պոյին մեռնիմ,
Վեց օր, օխտն օր չեմ տեսե,
Տեսնողի աչին մեռնիմ։

Ոչխարն հիջել է դյուզը,
Ջոկել եմ զարագյոզը,
Մանչ, տու մայրամատ վըլամ,
Առնեմ քյաբիլիդ Թոզը։

Էս սարին սար չեմ ըսե,
Շեկ գյադին յար չեմ ըսե,
Ալուր մաղեմ Թևի կուգա,
Հըճըփ յարս ե՞փ կուգա։

Հոտի ճակատ ավլել եմ,
Ես էն գյադին հավնել եմ,
Գյադի նոր ծլած բեխեր՝
Կլմանին օսկի Թելեր։

Միթկալ շապիկ կարել եմ,
Դոշին կոճակ շարել եմ,
Հինը մաքես հանել եմ,
Քեզի Թաժա ճարել եմ։

Սարերը ձուն է առե,
Արունը սիրտս է առե.
Հետու ճամփա յար ունիմ,
Աչքերս չորս է դառե։

Ջուրն առա ելա սարը,
Ջրտեսա ֆիտան յարը,
Ֆիտան յարըս ինձ տվեք,
Միք քաշե ահ ու զարը։

ԾԱԾԿԱԼԵԶՈՒՆԵՐ

Ջավախքի, Ախալցխայի և Ախալքալաքի Ին բաղաքացի և Ին գյուղացի երեխաները, ինչպես և երբեմն չափահասները միմյանց հետ խոսում են ծածկալեզուներով։ Ոմ չէ ըմբռնել այդ ծածկալեզուների գաղտնիքը և չէ վարժվել, չի կարող ոչ հասկանալ և ոչ խոսել։

Այս ծածկալեզուները նայելով իրենց բաղադրիչ մասնիկին կոչվում են. ըծելվար (ըծերեն), ըվելվար, ըլբելվար, ըխկելվար։

Սրանց բոլորի գաղտնիքը նրանում է, որ բառի ամեն մի ձայնավորի առաջ ավելացնում են ծածկալեզուն կազմող մասնիկը, եթե ըծելվար է՝ ըծ, ըվելվար՝ ըվ, ըլբելվար՝ ըլբ, ըխկելվար՝ ըխկ։

Օրինակ՝ Արի էրթանք կալը խաղանք.

ը ծ ե լ վ ա ր. ըծարըծի ըծէրթըծանք կըծալըծը խըծաղըծանք։

Ը վ ե լ վ ա ր. Ըվարըվի ըվէրթըվանք կըվալըվը խըվաղըվանք։

Ը լ բ ե լ վ ա ր. Ըլբարըլբի ըլբէրթըլբանք կըլբալըլբը խըլբաղըլբանք։

Ը խ կ ե լ վ ա ր. Ըխկարըխկի ըխկէրթըխկանք կըխկալըխկը խըխկաղըխկանք.

Կան նաև այնպիսինները, որ բառերը երկու մասի են բաժանում և երկրորդ մասը առաջ դնում.

Օրինակ՝ նույն նախադասությունը կլինի.

Րի-ա, թանք-էր լը-կա զանք-խա։

Ոմանք էլ բառերի տառերն են արտասանում իրենց ամբողջ հնչյունով.

Օրինակ՝ նույն նախադասությունը կլինի՝

Այբ, բե, ինի. է, րե, թո, այբ, նու, քեն. կեն, այբ, լյուն, եթ, խե. այբ, զատ, այբ, նու, քեն։

ՋԱՎԱԽՔԻ ԲՈՒՐՄՈՒՆՔ

ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ

Ծննդկաճի

Ա.

Էրնեկ, էրնեկ վարդակուսին,
Լուսըթաթախ թուրն էրեսին,
Վանքը մտավ Նորսնսին,
Սուրջառն առավ Քրիստոսին,
Ծնավ բերեց աստվածորդին,
Անբան մսուրը դրվեցավ,
Խանձ բալուլով բալուլվեցավ,
Գետ Հորդանան մկրտեցավ,
Մարգարևներ դրքեր բերեք,
Ճգնավորներ քավոր եղեք,
Անուն Հիսուս կատարեցեք։

Բ

Թագա հացի ֆուտ էկավ,
Ելեք աշեցեք վով էկավ,
Իրեք իրեք պոզ ձիավոր,
Իրեքն ա կանանչ կապավոր։
Մեկը Հիսուս, մեկը Քրիստոս,
Մեկը տղա մանուկ՝ սուրբ Կիրակոս,
Էկավ սարով, իջավ ձորով,
Հրեշտակին դեմը բարով։
— Տեր, ո՞ւր կերթաս քու հրամով.
«Կերթամ տունը հիվընդին,
Էրթիկը ծննդկանին։
Ժնճիլ ցկեմ վրա պատին,
Բալնիք ցկեմ վրա բարձին,

Օր չմարի սիրաը փորի,
Օր չ'կլորի լեզուն բերնին։

Գ

Ալալոյ, Թալալոյ[1],
Մանազկերտու սուրբ Տեփաննոս,
Ծնկին հետ խըլմ էղավ,
Արմնկին հետ փետ էղավ,
Լեզուն բերանը թաղիք էղավ,
Աչքն էրեսին կուր (կույր) էղավ.
Էլանք դարով, շրջանք ձորով։
Մեր տերն էկավ հազար բարով,
Ըսինք. «Տե՛ր, ո՞ւր կերթաս».
— Կերթամ դուռը հիվընդին,
էլլեմ էրթիկ տղոցկնին,
Ժնճիլ քաշեմ բոլոր պատին,
Չվախենա սիրան ի փորին։

Դ

— Պողոս, Պետրոս ո՞ր կերթաս.
«Դուռը կերթամ հիվընդի,
էրթիկ կերթամ ծննդկանի,
Նեա սիրաը փորին վախենա,
Նեա օսկոռը ոտդը թնցա։

Ե

Եղիցի էլիա,
էրկըթև բալիա,
Գառնահատիկ,
Սուրբ Մարգրիտ։
էլա սարով,
Իջա դարով,
Հինգ հարուր հրեշտակով,
Մեր տերը ո՞ւր բարով։
«Կերթամ տունը հիվընդին

1 Պատահելիք։

Էրթիկը ծննդականին,
Բալնիք ցըկի վրա բարձին,
Ջվախենա սիրտը փորին,
Ամեն, ալելույա, ալելույա»։

Աչից հատի

Ա.

Մեր դռան առաջը ծով կա,
Ծովի վրա հալ կա,
Հալին վրա հասկի կա,
Հասկին վրա հատ կա,
Հատը կլորի, ընկնի ծովը
Ուրը կանոն սաղմոս,
Դու բարեխոս ըլլիս։

Բ

Նստեր է սուրբ Երանելին,
Կուլար իրեն բերանովը,
Ըսաց Տեր մեր Հիսուս Քրիստոսը
Է՞ր կուլաս, է՞ր կը ողբաս.
Ըսաց. «Աչից հատ է ընկեր.
Արուն է կաթեր»։
Ըսաց. «Առ բստակը,
Քեց ջուրը,
Քաշե հատը
Հրամանով աստուծո,
(Այս անուն) մարդու։
Շինողքը շինեցիր,
Գնալը գնացիր,
Անգանակ մորթեցիր,
Անկրակ խորվեցիր,
Անաստակ ձգրտեցիր։
Ինքը սիպտակ,
Ջաղը սիպտակ,
Ջգեստը սպիտակ.
Անցավ գետը

Կորավ հատը,
Հրամանով աստուծո
(Այս անուն) մարդուս։

Մսահանգուստի

Ա.

Հիսուս Քրիստոս բերթ շինեցին,
Պողոս, Պետրոս քար կրեցին,
Կուս Մայրամ պատ շարեցին,
Կուչ կեցա հանգստավեցա,
Վեր կեցա արձրկվեցա,
Օսկոռն օսկորին,
Թուք մունատառ մսին։

Բ

Վար կեցա՝ միսս հանգուստվավ,
Վեր կեցա՝ ղուր կտռվավ,
Սար ու ձորով կտռվավ,
Ծովին մեջ ծառմ՝ կար,
Ծառին վրա հավքմ՝ կար,
Անձեռք բռնեցի,
Անդանակ մորթեցի,
Անբերան կերա,
Քրիստոս տեսավ բազմեցավ,
Վրան թքեց՝ առողջացավ։

Գ.

Էրկնուց մատաղմ՝ եղավ,
Միսը՝ մսին, պուղը՝ պոզին։
Կուչ կեցա՝ հանգուստվեցավ.
Վեր ելա, արձրկվեցավ։

Դ.

Քրիստոս Տերս պատ կշարե
Պողոս, Պետրոս քար կը կրե,
Մարթա-Մառա ջուր կը կրե,
Կուչ կենամ՝ ծռի կը,
Վեր կենամ՝ շիտկի կը։

Թիթի

Գնացի ծառավ ախպուրը.
Ծառավ ախպրի վրեն ծառմ՝ կար,
Ծառի վրեն բունմ՝ կար,
Բուն վարը առա՝ մեջը ծիտմ՝ կար,
Ծիտը վար առա
Անդանակ մորթեցի,
Անկրակ էփեցի,
Աստուծու հրամանքով,
Մայր աստվածածնա քաղցր կաթով
Թիթի հանգուցյն արձրկեցի։

Մոչըմուկի

Մոչըմուկը բուսեր է,
Ջորս բոլորը հուսեր է,
Աստվածածին տեսեր է,
Դեղ էրեր լավցուցեր է,
Սուրբ սննդովը սրբեր է։

Հիվանդի վրա
(Կաթոլիկաց)

Հոգի Մարիամու լուսավորյա վիս,
Մարմին Մարիամու մաքրյա վիս,
Քաղցր կաթն Մարիամու դարձո վիս,
Արտասուք Մարիամու մաքրյա վիս,
Փոխումն Մարիամու հաստատյա վիս։
Մարիամ մայր շնորհոք, բարեխոսյա,
Վասն մեր քավության, թողության մեղաց մերոց։

ԱՌՕՐՅԱ ԿՅԱՆՔ

Քնից զարթնելիս
Ա.

Լուսը լուսացավ,
Խաչը պարզեցավ,

Աստված քաղցրեցավ,
Դրախտին դովիքը բացվան,
Դժոխքինը ավըրվեցան,
Կապած հոգիս արձըկվեցավ,
Հիսուս մեզի ողորմեցավ։

Բ

Աստվածածին դուն կուս ես,
Հոգով մարմնովդ լուս ես,
Լուսեղեն կապեր ես կամար,
Հոգիս պահեմ քեզի համար,
Դուն ու՛ր ինձի իշխանութենն,
Էրթամ գործեմ շատ բարութենն,
Հոգիս տանիս արքայութենն։

Գ

Լուսացավ, լուսն է բարին,
Ես հավատամ Տեր կենդանին,
Ուսին, ուսին Սուրբ կուսին,
Իրեք բևեռ Քրիստոսին։
Մարիամ նստեր սուրբ սեղանին՝
Գիրգն է առեւ աստվածօրդին,
Խաչմ՝ սրտին, խաչմ՝ լերդին.
Խաչ գավազան միջի նստին,
Աղոթք կէնեն լուս տաճարին։

Անկողին մտնելիս

Ա

Կրակը մարեցավ,
Ջարդ՝ խափանավ.
Քրիստոս քողն էրեսին,
Հրեշտակները չորսդին
էրկնուց իջավ,
Խաչապաշտից տները մտավ։
— Տեր իմ, ո՞ւր կերթաս.
«Հուր ունիմ հրեղեն,

Բուրվառ ունիմ բոցեղեն,
Ամեն թևն է լուսեղեն.
Գնացի խանձարուրքիս,
Էրթամ հառնիմ պատարագիս։

Բ

Ով տիրամայր, պահե զիս,
Խաչ գավազանը գրկիս,
Զգա պատեն չարը հիս,
Շրթան հազորդը պըռկիս.
Ահա մտա մարս-գերեզմանս,
Դու բննցնես, դու զարթեցնես,
Աղբատ հոգիս խավար գիշեր լուս հանես։

Գ

Հիսուս ուսիս,
Աստծու տունը սրտիս,
Ավետարանը բարձիս.
Մայր աստվածածին դիմաց՝
Ահա մտա գերեզմանս,
Հոգիս ու մարմինս քեզի ամանաթ,
Մարմինս դողնքին ամանաթ,
Հոգիս Գաբրիել հրեշտակին,
Տերն մեր Հիսուս Քրիստոս։

Գ

Էս գիշեր դուս էլա,
Մե անարատ լուսմ՝ տեսա,
Եփոր տեսա զարհուրեցա,
Մահվան բալուչ բալուլվեցա,
Երկինքը պարզ է, ծիրանի,
Մայրամ նստեր սուրբ սեղանի,
Աղոթք կէնեն սուրբ տաճարի,
Հրեշտեն օրթին է գրկե,
վեր օր հիշե կամքով հիշե,
Դատաստանին մեղքը չըհիշե։

Հայոց հաճ տարեկան պատավից

Ե

Էրանիկ էր էն տարին,
Էրուսաղեմ դուքեցին,
Օսկի կամար կայնեցուցին,
Հիսուս ի քուն պետ տաճարին,
Գիշեր ուղեր Հիսուս որդին,
Շորորեր խաչը շենքին,
Տեղ բուսներ ծառ խնկենին։

Զ

Տեր, մեղքս շատ է քընց սարը, քընց ձորը,
Քընց քարը, քընց գլխուս մազերը,
Երկնուց սուն է, սատանուց բուն է,
Տեր, դու ազատ էնես աղքատ հոգիս,
Զեռքդ վրայես չքաշես։

Է

Ճրաք, ճրաք, ճշմարիտ,
Ճշմի[2] խաչալար Մարտիրոս,
Աղա վկա Քրիստոս,
Էրնեկ էրնեկ ան տարին,
Երուսաղեմ շինեցին
Պաղով ծառը տնկեցին.
Մարիկիս ըսեք դուս գա,
Բռով աչվին լուս գա,
Մե դուռմ՝ կար Հիսուս,
Հիսուսի մեջ Քրիստոս,
Շուրջառը վրեն ծածկոց,
Բուրվառը վրեն կախոց,
Գավազանը վրեն փակոց,
Դուռս գալողը քար կարի,
Էրթիկս գալողը փատ կտրի,
Պողոս Պետրոս,
Անթառական Սուրբ Կիրակոս.
Հուրն ընկնիմ՝ չվառիմ,

2 Ճշմարիտ։

Ջուրն ընկնիմ՝ չտանի,
Մինչ ի գալուստն Քրիստոսի։

Ը

Ահա մտա կանկոզին գերեզման,
Մեղա-մեղա, հազար-հազար,
Կաթնիկ աղպուր, քարե տաճար,
Ես եմ ասսուս լիլի պաճառ,
Աստվածծ էնե խաչ ու տաճար։
Տարին կորթ-կորթը խաչեցին,
Ես ան խաչին մասնն դուզեմ,
Ջօր ու գիշեր դատումս կտեր է,
Տարածս երկու կանգուն շալ պիտենով,
Ամանաթը տալ պիտենով։

Թ

Կրակը մարեցավ,
Ջարը խափանավ,
Պողոս Պետրոս արդարացավ,
Էրկընու իրեք հրեշտակ իջավ,
Մեկը հոգուս,
Մեկն արևուս,
Մեկն ա գալըստական,
Ջարերը խափանական։

Ժ

Գլոխս դրի բարձին,
Հոգիս տվի պահապան հրեշտակին.
Կեա գիշերին
Մեջ գիշերին,
Հավախոսուն
Դիմալուսուն,
Էրկնավոր թաքավորին
Թասլյում էրի իմ հոգին.
Ես մտա մահին գերեզմանը,
Թե քնիմ, թե մեռնիմ, թե նախախնամ
Հոգիս դիրկդ ավանդեմ, Աստվածածին։

Տղաճ լողացնելիս

Էրկան վզիկ,
Թափ առ ցավիկ,
Շալկե մսիկ

Հաց եփելիս

Գառնենի գառը,
Խնկանի ծառը,
Անթառական պսակը.
Գետին ճաշակի,
Օրհնած հողի,
Խաչած գերեզմանի
Նասիպ էնես ինձի։

Խնոցի ճարելիս

Եղ ծաղիկ,
Դեղին ծաղիկ,
Հափնե առե,
Հափնե բուսե,
Հերն նստեր,
Օրթին փնջե։

Գելկապ

Ա.

Ուր ութեն,
Էրկու բթեն.
Աստվածամոր քաղցր կաթեն,
Սուրբ Սարգսի ձիուն ձարեն,
Կապե գելը, կապե գաղանը,
Կապե գիճն ու գիճավորը,
Կապե օձն ու թրավորը,
Կապե մեջ գիշերվա ծովը,
Օր սինոռը մտավ՝ բերանը գոցվի,
Սինոռեն էլավ՝ բացվի։

Բ

Գալը սարը կապեցի,
Սատանան անժամ քարին կապեցի.
Քրիստոսին մխով մոմրոճը մխեցի։

Գ

Ութը մատով, երկու բթով,
Սուրբ Սարգսին ձիուն ձարով,
Տեր Մովսիսին գավազանով,
Սուրբ Գևորգա սուր գեղարդով,
Լուսավորչա լուս հավատով
Աստվածածնա քաղցր կաթով
Կալեցեք, կապեցեք,
Աչքը գետին խավրեցուցեք,
Լեղուն բերնին պապանձեցրեք.
Սուր ճանկերը բթացուցեք,
Ցերեկով աչք մթացուցեք։
Անվամբ Հիսուսի, Քրիստոսի թափեսցի,
Պատուհաս մեր ի վերա չար գազանին. ամեն։

Դ

Ադամ, Ադամ, հայր Ադամ,
Դուզար գելի պես,
Կայներ գառի պես,
Սուրբ Սարգսա ձիուն ձարովը՝
Մայր աստվածածնա քաղցր կաթովը,
Ութը մատով ու երկու բթովը
Կալիս ու կապ մնաս։

Դուռը փակելիս

Ա.

Մեր տուն հրամատուն է,
Քրիստոս իշխանատուն է.
Պատե պատ՝ երկին սուն է.
Փիլոնն՝ էրբըկոջ ծածկոց է,
Խաչ գավազան՝ դռան դոց է։

— Աքա Մարիամ հոտ ինչ կէնես,
«էրեցներուն շուրջառ կարեմ,
Հագնին, կայնին պատարագեն.
Պատարագն ա Քրիստոսու։
Իրեք պուռ[3] դանակն ունիմ,
Մեկը՝ սուտ սատանին,
Մեկը՝ գել գազանին.
Մեկն ա՝ չար խափանին։

Բ

Տունմ ունիմ էրկաթե,
Պատերը սուրբ պողպատե,
Քրիստոս մեջն օթևան է,
Դուռ դռան գոց է,
Խալխան էրթկին ամրոց է,
Դռան գալող ետ դառնա,
Երթիկ գալող՝ քար դառնա։

Գ

Ճրաք, ճրաք, ճշմարիտ Մարտիրոս,
Դուռը բաց, Քրիստոս։
Քրիստոս հեծավ իրեն ձին,
Գնաց անդին քաղաքին,
Կտրվեց անթառամ ծաղիկը,
Քնի՝ քունն անուշ,
Զարթնի՝ էրածն բարի։
Մեր տունն լիքը էրկաթ է,
Պատերը լիքը փողպատ է,
Սուրբ կուսը դուռն է.
Սուրբ Գրիգոր էրթիքն է.
Փիլոնը էրթոց ծածկոց է,
Խաչ գավազան դռան փակ է։
Դուռը քալողը քար կտրի,
Էրթիկ քալողը էրկաթ կտրի։

3 Բերան։

Ջար աչմի

Ա.[4]

Աստվածամայր, կուտաս կամար,
Մեկիկ օրթուտ խաթեր համար
Իմ գիտեցածս տար կորու,
Քու գիտեցածդ ինծի տու։
Աստվածամայր, լուսին կամար,
Հրեղեն ծով՝ ինծի հըմար,
Տար դրախտին դուռը ցըցու
Իմ հոգին հոն հանգստացու,
Լուս մտացետ ինծի լուսու,
Ջար մեղացես ինծի դարցու։
Դրախտին դավիթը բացին,
Արդրները ճաւըրտացին,
Մեղավորները չոքան լացին,
Պաշար չունեմ հետս տանելու,
Մազե կամուրջ անցընելու,
Քրիստոսիտ ջուհապ տալու,
Ալ ճար չկա ետ դառնալու։
Տիրամայր, աստվածամայր,
Լուսես կապե կամար-կամար,
Ես կը մտնեմ քեզի հըմար,
Դուն տու ինծի իշխանութենն,
Հոգիս տանիս արքայութենն։
Ճրագն ընկավ լիացավ,
Դևն ու դավան հալածեցավ,
Քրիստոս մեզի համար շուք շինեց,
Անմահեմար Մոսեսին,
Երթային գան Քրիստոսին։
Գիրը գրի վրա,
Ավետարանը սրտիս վրա.

---

4 Աստմ են և չար վախ բոնելիս։

Ճրաք, ճրաք ճշմարիտ,
Ճշմարտապես, եղիա մարգարապես.
Բաց պղնձե դուռը բանամ,
Մտնեմ անմահական դրախտ,
Ժողվեմ անթառամական ծաղիկ,
Փնջեմ դնեմ գլխուս տակ,
Քուն ըլլիմ քունս անուշ,
Զարթիմ էրածս բարի.
Ինչ խնդրեմ, աստված կատարե։
Հասուս մասուս քաղքեն կուգամ,
Շատ պիտվական քաղաք կէրթամ
Հուր ունեմ հրեղեն,
Բուրվառ ունեմ լուսեղեն,
Հիսուս բերդ, Քրիստոս պարիսպ,
Մենք մեջը պարսպինք,
Հարը փակե՝ օրթին բանա
Բալնիքը վրան Քրիստոսու։
Սուրբ կաթը կուսին,
Անդին արունն Հիսուսին,
Մեր մեղքը ջնջեցին.
Տունմ ունիմ էրկրթեն,
Բոլորը պողպատե,
Սուրբ Գեորգ քուն է,
Սուրբ Հակոբ զարթուն է։
Ահա եկավ երեք ձիավոր,
Կանաչ կապավոր,
Մեկը Հիսուս,
Մեկը Քրիստոս,
Մեկը Հայր Աբրահամ
Ջար աչ, չար կրակ,
Ջար փալը փշակեցին,
Դրին դրախտին դուռը,
Կարիչ եղը պատռի,
Ջար աչքը կոտռի։
Մտա Քրիստոսու պախչան
Կարեցի երեք մարմարե սուն,
Երկուսը երթիցս պահապան,

Մեկը դռանս։
Չար աչ, չար խափանի,
Չար սիրտ, չար խափանի։

Հավը թառը
Սիրատ տեղը

Բ

Սև եղը սև սարը,
Սև սամոտա վրա ուսին,
Օխթը հանգույց վրա մեջքը։
Չար աչքը չար փուշ,
Չար նիաթ, չար խրատ։
Ծառա եմ ասսու նախախնամությանը,
Առ ծառայիս աչք տվողին
Աչքը խավրի, արևը մարի,
Չար աչքը չար փուշը,
Չար նիաթ, չար խրատ.
Սև սարը շրջեցին,
Սև կիոցը կիեցին,
Վեվ տեսավ զարմացավ,
Վեվ կերավ տրաքավ,
Սև օձին գանգին վրա
Չար աչքը չար փուշ,
Չար նիաթ չար խրատ։
Տաճարն Սողոմոնի
Գավազանն Դավիթ մարգարեի,
Խոսքն Ահարոնի,
Բալնիքն Ղևանու։
Չար աչքը չար փուշ,
Չար նիաթ չար խրատ,
Չարը դռնեն ցկեմ,
էրթեցեն էլև,
էրթեցեն ցկեմ,
Դռնեն էլև.
Չար աչքը չար փուշ,
Չար նիաթ չար խրատ։
Չար պահ ո՞ւր կերթաս.
«Անխաչ խմորին,

Բաց օրորանին,
Բաց կամարին,
Լավ էդին հսին[5],
Լավ գոմշին հսին.
Լավ ձիուն ձարին[6]
Լավ ոչխարին ջոկին,
Լավ ջախջին քարին,
Լավ արտին գարուն,
Եվ ամեն բարուն»։
Ջար աչքը չար փուշ,
Ջար նիաթ չար խրատ.

Գ.

Կուս Մայրամ կերթա դրախտը
Հետ գուլա հետ կաղաղե,
Մեր տեր Հիսուսն դեմ ելավ ըսաց.
«Մայր Մարիամ, է՞ր գուլաս, է՞ր կաղաղես»,
— Իմ տեր, է՞ր չլամ, է՞ր չաղաղեմ.
Ոչ գիտեմ չար նիաթ է,
Իրեք հարուր վաթսունվեց պիղծ ցավ է։
«Մայր Մայրամ, մուտ Սողոմոնի տաճարը.
Բռնե առաքելոց դանակը,
Կտռե չար աչքը, չար նիաթը, չար խոխուրդը,
Իրեք հարուր վաթցունըվեց պիղծ ցավը,
Լից պղնձե կուժը,
Թապլե անհատակ ծովը։
«Ի՞նչ ուտե».—քար ուտե,
Քացախ ուտե,
Բռնչի տերև ուտե։
Ջար աչքը կերթար, Քրիստոս դեմ դիպավ,
Ըսաց. «Պիղծ անօրեն հո՞ր կերթաս։
Ըսաց. կեռ կոտոշ կարմիր կովին,
Մեծակոտոշ սև գոմշին
Կացինն ու յուր կոթին,

5 Ուսին։
6 Պոչ։

Սողոմոնն ու յուր թաղկին,
Մանուկն օրոցքին.
Էրիկմարդու աչքն,
Գլխուն արևուն
Կնիկմարդու աչքն
Ծծին ու ծամին։

Պ

«Տիրամար աստվածամար,
Նստեր ես ծովին քանյար,
Ի՞նչ կուլաս, ի՞նչ կողբաս»։
— Ինչդ չլամ, ինչդ չողբամ.
Տրաքեցավ չար Նազարենն[7],
Քառասուն ձիս, քառասուն ջորիս։
Առ ֆրանկի դանակը,
Մտի Քրիստոսու պախչան,
Կտուռ իրեք մասարեն,
Մեկը տու սև սատանին,
Մեկը տու գել գազանին,
Մեկը տու ամենայն չարը խափանին,
Չար մասուրեն, չար նիաթին,
Չար նիաթը չար կրակին։

Ե

Աստվածամար նստեր ցողա.
«Ով մարդ ի՞նչ կաղաս»։
— Ի՞նչ աղամ, քառասուն բևռ, քառասուն ջորի.
Բռնեի իյա[8], բևռն ի կապան։
Սև ձին սև սարն էլավ,
Ագռավը ծառին թռավ.
Իրեք դուռ կտռեցին,
Մայա[9] էրին սուրբ առաքյալսն։
Շեկը շեկին, սևը՝ սևին,
Չար աչք չար փուշ,
Չար կրակը չար կրակին։

---

7 Նշանակությունը հայտնի չէ։
8 և 9 Նշանակությունը հայտնի չէ։

Ջ

Մարիամ մայր աստվածածին,
Նստեր է հետ Գայիանեին,
Կուլա ու արուն կը հեղա.
Ո՞ր կուլաս, ո՞ր արուն կը հեղաս.
Որ չըլամ, որ արուն չհեղամ,
Ով որ Քրիստոսի ծառային աչք կուտա,
(Այս անուն) ոչ վարին, ոչ վաստըկին,
Ոչ իրարու բանին հասնին,
Ակնահարին, գլխացավին, բյամբ նյափասին,
Չար աչք, չար փուշ, չար կրակը չար կրակին։

Է

Խաչափայտան Քրիստոսին,
Հայրն ընկավ, որդուն կապեց,
Աչք բթոկ, աչք չբթոկ,
Աստվածային հրամանով,
Կանանչ ու կարմիր նարոտով,
Չար աչքը, չար լեզուն,
Չար սիրտը չար փուշերի։

Ը

Ալերս, պալերս,
Քաշեցի սև պաններս,
Աստվածամար,
Քառասուն կամար,
Չար աչքը, չար փուշը
Քրիստոսու բթովը
Արճիճի պես հալի
Սև օձի բերան։

Թ

Վեվ օր աչք է տվե,
Աչքի աչքով հարվի,
Մոմի պես ծալվի,
Առի պես հալվի։
Վեվ օր աչք է տվե,

Գորտի պես ճղվի,
Օձի պես բղավե,
Օչխարի պես ձեն հաներ։
Աստին ջուր, անդին ջուր,
Մեջը փուշ գուշկուր դուրս գա։

ԺԹ

Սև օձը բռնեցի,
Սև պուտկի մեջ ձգեցի,
Վեվ օր տեսավ արմացավ,
Վեվ օր կերավ զարմացավ,
Ջար աչքը չար փուշը,
Ջար նաֆասը բարի աղոթք։

ԺԱ.

Կապեցի ինն ու արմունկը,
Կապեցի շեկ մարդուն ու սև մարդը,
Կապեցի իրեք ճեղ կանեփը։
Մեկը կապեցի,
Մեկը կախեցի,
Մեկը ցկի անհատակ ծովի տակը,
Սև օձեն պանիր քաշեցի,
Տեսնողը զարմացավ,
Ուտողը պատռեցավ,
Ջար աչքը չար փուշը։

Վ ա խ ի

Ա.

Մարյամ մայր, քուն ես, թե զարթուն,
Ոչ քուն եմ, ոչ զարթուն,
Պառկեցա, էրազ տեսա,
Ետ զարթա սարսըփեցա.
Փշե պսակ էր շինած,
Գլխիվեր ոտքս եմ ընկե,
Անունդ ի՞նչ է.—Սուրբ Սարգիս։
Որդուս անունն ի՞նչ է.

— Սուրբ Կարապետ։
Առնեմ ընկնիմ դռնե դուռ,
Գաս էնես օգնութեն,
Քու ձիուդ կարողութեն,
Քու ձիուդ կամկի վրա,
Անարատ ծովի վրա,
Շատ մարդ ընկի դերութեն
Էրթաս էնես ընկերութեն,
Թուրտ քաշես էնես փրկութեն։

Բ

Քրիստոս ու՞ր է[10],
Տակը մսուր է,
Գլխատակը տաշեղ է,
Այրն բարի է,
Վախեցածը սուր է,
Կնիկը չար է,
Քարղանը խոռ է,
Միջինը մարխոշ է,
Դտալը պոչչիկ է,
Երկնավոր թագավորս փրկութենը կուտա.
Այս տղայիս սիրտը տեղը, լերդը փորը։

Ջար դրկցից ազատվելու

Մարիկ մայր Աստվածածին,
Ինչի՞ գուլաս, ինչի՞ կերևրաս,
Քառասուն ձի, քառասուն ջորի,

---

10 Քրիստոս ծերունի աղքատի կերպարանքով աղորմություն է խնդրում, մի մարդ երեկոյան տանում է նրան յուր տունը պիշերելու, սակայն կինը չի հոժարում։ Ամուսինը անճարացած առաջարկում է ծերունուն պառկել մսուրում և բարձի տեղ տաշեղ դնել գլխի տակ։ Ընթրիքին մարդը կամենում է ծերունուն իրենց սեղանակից առնել, սակայն կինը ոչ միայն թույլ չի տալիս, այլև իրենց համար պատրաստած կերակրներից էլ նրան բաժին չի հանում. մի կոտրած քարղանի մեջ (կավե աման) լցնում է ըթու թան, պոչչիկ (պոչի կեսը կոտրված) դդալը ձգում է մեջը և տալիս նրան ուտելու։ Բայց հենց որ պառկում են, երեխան սաստիկ վախից մինչև լույս գոչում և լալիս է։ Նրբ ոչ մի հնարքով չեն կարողանում երեխայի լացը կտրել, հայրը հարցնում է ծերունի աղքատին, թե մի աղոթքով չի՞ կարող լավացնել երեխային։ Նա էլ այս աղոթքն է ասում և լավացնում։

Չար աչքը չար կրակին,
Առ Ֆրանկի դանակը,
Մաի Քրիստոսի պախչան,
Կտռև իրևք մարսևնի.
Չար աչքը չար տաբի,
Չարդրկիցն ա վերչանա։

Անօրեն մարդկանցից ազատվելու

Ուսին ուսին Սուրբ կուսին,
Փողե կոճակ Հարութենին,
Հոռոմսիմեն հարսնեցուցին,
Մայրամ քուն ես թե զարթուն,
Ոչ ի քուն, ոչ ի արթուն.
Իմ Տեր եկավ ամպու խաչաց,
Եկավ նստավ հաթոռ գալոց,
Չեն էտու աշակերտաց,
Գնա, գնա, պիղծ թշնամի,
Բան ես գործն անօրինաց։

ՍԻՐՈ ԵՐԳԵՐ

* * *

Հալինք ու ջուր դառանինք.
Խառնվինք էլման[11] գետերուն,
Քաշվինք աղբրի ակտիք,
Յարս ի գետ ջուր տաներ,
Գլգլինք մեջ կժներուն,
Վերցուցեր փիճին[12] դներ
Կաթկթենք մեջ ծծերուն։

* * *

Լուսնիակը ոսոխ ոլոր
Համ խորոտիկ, համ բոլոր։
Լուսնիակը սարի տաշտեն,
Ես էրեցա քու դարդեն.
Ես կերթամ զարիբութեն
Մնաս դու քո վաատութեն։
Ջուր կիքեր բանձր սարեն,
Կը կաթեր մարմառ քարեն,
Յար դառցեր է իլխարեն,
Ջսաղնա սրտիս յարեն։

* * *

Էլեր ես, կայներ ես դուռը,
Մազերըդ ցկեր ես հուսը,
Էրեսեդ կաթե կը լուսը.
Կայնե, ֆիտան, պոյիդ դուրպան։

---

11 Հորդ։
12 Ուս։

Էլեր ես, կերթաս կը մարագ,
Թևերդ էրկան, մեջքդ բարակ,
Կերածդ է միշտ մեղրով կարագ.
Կայնե, ֆիտան, պոյիդ ղուրպան։

Էլեր ես, կերթաս կը կալը,
Բարով մաշես գլխուդ շալը,
Էրեսեդ կը կաթե խալը.
Կայնե, ֆիտան պոյիդ ղուրպան։

Էլեր ես, կերթաս կը դերի,
Կրակն ընկեր՝ սիրտս կէրի,
Քեզի տանողի տունն ավերի.
Կայնե, ֆիտան պոյիդ ղուրպան։

Էլեր ես, կերթաս կը սեյրան,
Մնացեր եմ պոյիդ հեյրան,
Դու գլմանիս չոլի ջեյրան.
Կայնե, ֆիտան պոյիդ ղուրբան։

Էլեր ես, կերթաս կը հանդը,
Էկար ընկար մեր էլ ճանկը,
Կայներ կէնես մանչու ֆանդը.
Կայնե, ֆիտան պոյիդ ղուրպան։

Դուն կայներ ես յանա-յանա՛,
Քամին զարնե փեշդ բանա,
Թոդ էրեսիդ դանա դանա.
Կայնե, ֆիտան պոյիդ ղուրպան։

Դու հագեր ես ալվան խասը,
Բարով մաշես գլխիդ ֆասը,
Քու ոտներիդ դեղին մասը.
Կայնե, ֆիտան պոյիդ ղուրպան։

Շատ ըռունա՛ ես, շատ ճերմակ ես,
Բուկտ լալ է, կարմիր բակ ես,
Աչքով ունքով մարդ կխաբես,
Կայնե, ֆիտան պոյիդ ղուրպան։

Բարակ մեջքիդ բիրմա շալը,
Կաժես կը դու դյումի մալը,
Ջես հարցնեն յարիդ հալը.
Կայնե, ֆիտան պոյիդ դուրպան։

Հարաֆ քամին կը շընդշնգա,
Սաղ ու քամանին կը ճնգա,
Ես քու սիրուդ հիվանդ ընկա.
Կայնե, ֆիտան պոյիդ դուրպան։

Ուրագը փետին կը տաշե,
Սկրտ իմ սիրտը կը մաշե,
Բարակ սրտով ինծի ալ է.
Կայնե, ֆիտան պոյիդ դուրպան։

Էրևընու գուգա նուշը,
Քու ձեռքը կա ոսկե գուշը,
Սրի պադնեմ կարմիր թուշը.
Կայնե, ֆիտան պոյիդ դուրպան։

Էրևընու կուգար աղը,
Քեզի տարան Գյումլի թաղը,
Քաղեցիր շամամն ու բաղը
Կայնե, ֆիտան պոյիդ դուրպան։

Էրևընու դուգար գերան,
Բոլոր էրես, պզտի բերան,
Քու տանողիդ տունը վերան.
Կայնե, ֆիտան պոյիդ դուրպան։

Էրևընու գուգա նուռը,
Ինծի տարան քեհռուն դուռը,
Հարուր մանեթ տվի չուռը.
Կայնե, ֆիտան պոյիդ դուրպան։

Վեվ գնաց յարիս օթախը,
Վեվ պրծուց կանաչ պութաղը,
Վով կանչեց իմ յարիս խաղը.
Կայնե, ֆիտան պոյիդ դուրպան։

***

Պոստընները գլի բազուկ,
Թևերդ չինի պիլյազուկ,
Պոյտ էրկար, մեջքդ նազուկ։
Կայնե, սեյր անեմ, սեյր անեմ,
Մառալ պոյիտ ես հեյրան եմ։
Պոստընները գլի համեմ,
Լեզուդ դի բերանս՝ ծամեմ,
Սերս սրտիդ մեջը քամեմ։
Կայնի սեյր անեմ, սեյր աննեմ,
Մառալ պոյիտ ես հեյրան եմ։
Էրևընու գուբա նուռը,
Դու կայներ ես դեմի դուռը,
Հարուր մանեթ կուտամ չուռը։
Կայնե սեյր անեմ, սեյր անեմ,
Մառալ պոյիտ ես հեյրան եմ։

* * *

Լուսնիակը կամար, կամար
Քեզի կուղեմ ինծի համար,
Բարակ մեջքիդ օսկի քամար,
Քելե՛, քելե՛, պոյիտ մատաղ։

Ջոմբլվա բանձր ղալեն,
Կապուտ խրխան, կարմիր վալեն,
Դուն էլ ինծի թողեր լալեն,
Քելե՛, քելե՛, պոյիտ մատաղ։

Աշնանը բուսնի կը ուռը,
Քեզի տեսա ժամին դուռը,
Գլոխտ կախ, ճիտտ ծուռը,
Քելե՛, քելե՛, պոյիտ մատաղ։

Քոչեր եկավ անցավ ճալա,
Ճերմակ ճակատ, կարմիր վալա,
Քու սեր քաշեմ, հալա, մաշա,
Քելե՛, քելե՛, պոյիտ մատաղ։

Ուրտից գուգաս ուշիկ-ուշիկ,
Օտվիտ խրի մանդռ փուշիկ,
Դու ըռնտիկ, պագտ անուշիկ,
Քելի՛, քելե՛, պոյիտ մատաղ։

* * *

Առավոտուն թնարմուխ,
Ճերմակ լաշիկ, գլխուն թուխ,
Ելա գացի չայ լվացք,
Տաշտ պրծավ՝ ջուրը դնաց,
Շան գյատի շորեր մնաց։
Ա՛խ լոր իմ, լոր իմ, լոր իմ,
Սապոնն էր օսկեջրած,
Շեգ մանչն էր ճակտիս գրած։
Կանանչ ջուրը սառեր էր,
Ջեռբս ղաման տարեր էր,
Պարին միջի շեկ տղան
Խելքս գլխես տարեր էր։
Ա՛խ լոր իմ, լոր իմ, լոր իմ,
Ալվալան քիթս ցկի,
Շեկ մանչը միտքս ցկի։
— Ծո՛, մանչ տու չուխատ վլամ.
Վլամ, վլամ չիսարկի,
Վարդի ջրով իսակի,
Վլամ ու քարին ցկեմ,
Թափ տամ ու ծառին քցեմ,
Ծալեմ ու ծոցս դնեմ։

* * *

Կանչե՛, կռունկ, կանչե՝ ձենդ բարակ է,
Յարս կորուցեր՝ հալս յաման է։
Կռունկ, եղած տեղդ չայիր չիման է,
Աշխարհք արեգակ, ինծի տուման է։

* * *

Ինծի տարեք յարիս դռնեն անցուցեք,
Յարաներս բացեք՝ քաֆիր յարիս ցցուցեք,

Մատվընեաս կըտրեցնք մոմ էրնք վառեցնք,
Ավազը խունկ էրնք՝ վրաս ծխեցնք,
Ինձի տարնք յարիս դուռը բացնեցնք։

* * *

Ես վարեն դուզայի, դուն դուռը բացիր,
Ձևռքս ծոցս տարար՝ ախ էրիր լացիր,
Թե օր չէիր առներ՝ ինչի՞ սիրեցիր,
Գնը՛ զապլի խային յար չեղար մեզի։

Ես սարեն դուզայի, շալակս բուրդ էր,
Աս տունը մի մանիր, շատ զուլում մուխ էր,
Պոյն էր զառդու զումաշ, աչքերը թուխ էր,
Գնը՛ զապլի խային, յար չեղար մեզի։

Երկինքը ամպեր էր, ինչ անուշ թոն էր,
Եկա դռնեն անցա, ջանանս հոն էր,
Էրեցա, խորվեցա աս ինչդ բան էր,
Գնը՛ զապլի խային, յար չեղար մեզի։

* * *

Դռնեն անցա թնդիրն էր ծուխ,
Աչքեր բալակ ունքերը թուխ,
Մեռնիմ քեզի Սուրբ Պուլանուխ,
Քիփ լուրիկ, լուրիկ, լուրիկ,
Գարնան քարեր վարդ էրիր, լուրիկ։

Իրկըվորե ճրագն էր վառ,
Դու գլմաներ զոզանի գառ,
Օրբևերցի արի գիս առ։
Քիփ լուրիկ. և այլն։

Արիք ախսեք աղջկա կեսուր,
Խալաթ կարեք հարուր իթսուն,
Կրակ թափի քըվորոջ քուրսուն։ Քիփ լուրիկ. և այլն։
Էլա էրթիք թափ քելեցի,
Ոաս զարկի՝ էրթիք բացի,
Յարս տուն չէր՝ նստա լացի։ Քիփ լուրիկ և այլն։

Ալաշկերտու Թուփրաղ գալեն
Սավգուլ գարկեց սրտիս յարեն,
Բյուլբյուլ խոսավ սրտիս միջեն։ Քիփ լուրիկ. և այլն։
Անձրևն էկե ջուր է շլխե,
Իմ յար գյուր ամալն է փոխե,
Էրթմցեր է, շեմ չի կոխե։ Քիփ լուրիկ և այլն։

* * *

Առավոտ գարի պոկինք,
Հայլի Թե գլոխ կոկինք,
Սիրուններու լավը ջոկինք.
Ա՜խ լուրիկ, լուրիկ, լուրիկ.
Կանանչ ու կարմիր լուրիկ։
Առավոտուն Թնդրին մութ,
Աչվին բալակ, ունքվին Թութ,
Չեմ Լաա Մուշ, Պուլանուխ.
Ա՜խ լուրիկ, լուրիկ, լուրիկ,
Կանանչ ու կարմիր լուրիկ։
Առավոտուն Թունդիր վառ,
Լաշակ Թալե խառ ու մառ,
Գլմանիս զոզանի գառ.
Ա՜խ լուրիկ, լուրիկ, լուրիկ,
Կանանչ ու կարմիր լուրիկ։
Առավոտ Թնդիր փոշին,
Իմ գյոշ Թալեմ քու գյոշին,
Ինչօր հալվեն մըջրին.
Ա՜խ լուրիկ, լուրիկ, լուրիկ,
Կանանչ ու կարմիր լուրիկ։
Առավոտուն Թնդրին բոց,
Արի էղնիմք գիրկ ու ծոց,
Օր գա խմբի գարտ ու խոց.
Ա՜խ լուրիկ, լուրիկ, լուրիկ,
Կանանչ ու կարմիր լուրիկ։

* * *

Գեղին վերև հերկեր մերկեր,
Շապիքա սուրմայով ներկեր,
Սիրեր եմ, չեմ կրնա թյարկեր,
Արի խոսինք ջորած նազլու,
Քընց բյուլբյուլն էլ ձենով նազլու։
Էկար անցար ու յատ էրիր,
Ձևոքա էրեսիտ պատ էրիր,
Դուն սիրեցիր, դուն յատ էրիր,
Արի խոսինք ջորած նազլու,
Քընց բյուլբյուլն էլ ձենով նազլու։

Քյոսա երիցն եմ քահանա,
Աչվնուտ չկա մահանա,
Դու ինծի ըրիր պիվանա,
Արի խոսինք ջորած նազլու,
Քընց բյուլբյուլն էլ ձենով նազլու։

ՊԱՐԵՐԳԵՐ

* * *

Ես Արշակն եմ Գոլավերացի
Գնացի Գոլ, օխտն օր մացի,
Ջարա չեղավ նստա լացի,
Շորորա, Սալլատ, շորորա,
Ղայեղն Արշակիդ կորորա։
Վերև կաշեմ՝ բանձր սար է,
Ներքև կաշեմ՝ մանուրս քար է,
Արշակը մոր մեկու հատ է։ Շորորա և այլն.
Կես գիշերին աստղեր փիլահ,
Գոլի քանար բաթլաղ տիլ ա,
Արշակ նստեր ղայըղ, գուլա։ Շորորա և այլն.
Գոլի բոլոր չոքմ չամուռ,
Արշակի մոր սիրտն էր մրմուռ։ Շորորա և այլն.
Գոլի քանար մանրու թուփ է,
Արշակի տեղ քիչմ գուփ է։ Շորորա և այլն.
Գոլի բոլոր ատում, ատում,

Ուրտից գոնեմ հալալ զատում։ Շորորա և այլն։
Գոլի ղրաղ չայիր չիմեն,
Արշակի մոր սրտի տուման,
Մալականին չկար իման։ Շորորա և այլն։
Գոլի բոլոր մանդռ ուռ էր,
Արշակի մեր ջիգրեն ծուռ էր,
Հորման գնաց առաջ դուռ էր։ Շորորա և այլն։
Գոլի բոլոր կանաչ արտ էր,
Արշակը մոր սրտին դարտ էր։ Շորորա և այլն։
Գոլի բոլոր մանդռ ծաղիկ,
Արշակի փոր լցվավ աղիկ։ Շորորա և այլն։
Երկինք ամպեց, քամին առավ,
Գոլի երես ջուրը սառավ,
Ինչ էրեցին, լոտը (լոտակն) չդառավ։ Շորորա և այլն։
Էս Արշակի բկի վալեն,
Կանանչ բաղի կարմիր վալեն,
Սալլատ, դու լավ պահե բալեն։ Շորորա և այլն։
Վեր աշեցի՝ բանձր սար էր,
Երկնուց ընկավ մանդռ քարեր։ Շորորա և այլն։
Թագավորներ նստած թախտին,
Միք հավատա կնկա բախտին,
Հոգի տվեց լուսո վախտին։ Շորորա և այլն։
Արշակ գնաց ծովի բերան,
Ձկներ բափան, աչքեր կերան։ Շորորա և այլն։
Իֆրան, Մաճլիս, Իլան տաղի,
Թերմշի գոլ եփ կը պաղի,
Ձկներն էլան սրտիս յաղի (եղին)։ Շորորա և այլն։
Լողվոր բերեք Արշակ հանե,
Խապար տվեք մորքուր տանե,
Շորեր տվեք հորքուր տանե։ Շորորա և այլն։
Ղնդզած կայնավ գոլի քարին,
Խապար տարեք Արշակ յարին։ Շորորա և այլն։
Ես Արշակն եմ կարմիր ապով,
Չեմ խեզովի գակմա կապով՝
Ես ինձ խեզդի ձկիմ՝ ապով։

Շորորա, Սալլատ, շորորա,
Դայեղն Արշակիդ կորորա[13]։

* * *

Երկու դիլպար Սիմոի գեղեն
Նստած են աչքեր կդեղեն,
Ամմար (սև) մազերով, նազերով
Դիլպար նազերով, նազերով։
Երկու դիլպար խարազրլու,
Նստած են, կը շարեն հլու,
Ամմար նազերով, նազերով,
Դիլպար նազերով, նազերով։
Երկու դիլպար խարազրլու,
Մեկն ազապ էր, մեկն նշանլու,
Ամմար նազերով, նազերով,
Դիլպար նազերով, նազերով։
Երկու դիլպար հաց կըտանին,
Աչքով կենեն՝ մարդ կսպանին,
Ամմար նազերով, նազերով,
Դիլպար նազերով, նազերով։

* * *

Ես կը խաղամ բերդենի,
Զալոխ չկա բերդենի,
Տարա տիկո բերդենի։
Խնամի Գրիգոր բերդենի,
Ակոն չի չալե բերդենի,
Տարա տիկո բերդենի։
Նուբարը կը խաղա բերդենի,
Զալոխ չկա բերդենի,
Տարա տիկո բերդենի։
Զանկալ Ակոն գնաց կալը,
Հոռոմի էրխի խալը,
Սև Ակոն ինչ կէնե մալը,

---

13 Նորապսակ Արշակը ձուկ որսալիս խեղդվում է լճում, և նրա հարևանները տեղեկացնում են այդ մասին նրա կնոջը՝ Սալլատին, որ բոլորովին անտեղյակ՝ պարելիս է եղել։

Տարա տիկո բերդենի։
Ղազարենց դռան ղաղերը,
Աննայի սրմա մաղերը,
Տարա տիկո բերդենի։
Համ գուլա, համ ժուռ գուգա,
Ղուլոի սրտին դուր գուգա,
Տարա տիկո բերդենի։
Ավետիսի դռան հորը,
Համբարն պատռից Եփրեմի փորը,
Տարա տիկո բերդենի։
Քռիկը չի չալե բերդենի,
Բերդենի պես պար չկա,
Աղջկա պես յար չկա,
Տարա տիկո բերդենի։
Բերդենի անուշ պար է,
Խաղացողը մեկու ճար է։
Բերդենի ա՜յ բերդենի,
Ձընք կրնը խաղա բերդենի,
Կապուտհընգնոց բերդենի,
Կարմիր տասնոց բերդենի,
Քսանըհնգնոց բերդենի,
Դրախտի դուխիկ բերդենի։
Բերդենի ա՜յ բերդենի,
Աբի խաղանք պրծնի։

* * *

Մեր մշկին ջուխտամ գուլպա,
էրթա կենա, էրթա կենա,
Ձարուխը գլխուտ խռով կենա,
Ես չեմ կենա, ես չեմ կենա։
Մեր մշկին ջուխտամ գուլպա
էրթա կենա, էրթա կենա,
Գուլպան գլխուտ թերմաշ մնա,
Ես չեմ մնա, ես չեմ մնա։
Մեր մշկին ջուխտամ թողուխ,
էրթա կենա, էրթա կենա,
Թողուխը գլխուտ խռով կենա,
Ես չեմ կենա, ես չեմ կենա։

Մեր մշկին մե թումպանմ,
էրթա մնա, էրթա մնա,
Թումպանը գլխուտ թեռմաշ մնա,
ես չեմ մնա, ես չեմ մնա։
Մեր մշկին մե արխալուղմ,
էրթա կենա, էրթա կենա,
Արխալուղը գլխուտ խոռվ կենա,
ես չեմ կենա, ես չեմ կենա։
Մեր մշկին մահուց չուխեմ,
էրթա մնա, էրթա մնա,
Չուխան գլխուտ թեռմաշ մնա,
ես չեմ մնա, ես չեմ մնա։
Մեր մշկին մե քամարմ,
էրթա կենա, էրթա կենա,
Քամարը գլխուտ խոռվ կենա,
ես չեմ կենա, ես չեմ կենա։
Մեր մշկին մե փափախմ,
էրթա մնա, էրթա մնա,
Փափախը գլխուտ խոռվ մնա,
ես չեմ մնա, ես չեմ մնա։
Մեր մշկին մենծ ազչիկը,
էրթա կենա, էրթա կենա,
Մենծը գլխուտ խոռվ կենա,
ես չեմ կենա, ես չեմ կենա։
Մեր մշկին պզտի ազչիկը,
էրթա մնա, էրթա մնա,
Հոգուտ մեռնիմ, մեմ ալ ըսա,
էլ չեմ էրթա, էլ չեմ էրթա։

* * *

Թաք տանեին, տանեին,
Ցախավելը թաքվոր էնեին.
Թաք տանեին, տանեին,
Գոմեշը կերսար էնեին.
Թաք տանեին, տանեին,
Մատակը կեսուր էնեին.
Թաք տանեին, տանեին,
Օսկու տեղ՝ փուլ դնեին.

Թաք տանեին, տանեին,
Իշու պոչը փյուսկյուլ էնեին.
Թաք տանեին, տանեին,
Ինդրին չուլը քողք էնեին.
Թաք տանեին, տանեին,
Նալերը պողմախ էնեին.
Թաք տանեին, տանեին,
Ղապըչն շապիք հագցնեին.
Թաք տանեին, տանեին,
Իշու կաշին գուլպա էնեին.
Թաք տանեին, տանեին,
Ջեջիմը խրխա էնեին.
Թաք տանեին, տանեին,
Ճլոպը գոգնոց էնեին.
Թաք տանեին, տանեին,
Փատե պալմազ հագցնեին.
Թաք տանեին, տանեին,
Ինտրին խուփը բարձ էնեին,
Թաք տանեին, տանեին,
Իշուն չուլը դոշակ էնեին.
Թաք տանեին, տանեին,
Խըսիրը յորղան էնեին.
Թաք տանեին, տանեին,
Գոմշին կոտոշը վուռնա էնեին.
Թաք տանեին, տանեին,
Ալըրմաղը դրմպլիկ էնեին.
Թաք տանեին, տանեին,
Էշը դավուլճի էնեին.
Թաք տանեին, տանեին,
Նախըրը հասնաս էնեին,
Թաք տանեին, տանեին,
Էծը տերտեր էնեին.
Թաք տանեին, տանեին,
Կատուն սարկավագ էնեին.
Թաք տանեին, տանեին,
Խորոզը ժամկոչ էնեին.
Թաք տանեին, տանեին,
Քուղան կոլոտ էնեին.

Թաք տանեին, տանեին,
Խաչերկաթը խաչ էնեին.
Թաք տանեին, տանեին,
Խոտեն խալի փռեին.
Թաք տանեին, տանեին,
Խըսրի տեղը դնեին.
Թաք տանեին, տանեին,
Մեյմունի պես խաղցնեին.
Թաք տանեին, տանեին,
Վեց օխտն օր ծում պահեին.
Թաք տանեին, տանեին,
Օրը տասը ժում ծեծեին։

ՀԱՐՍԱՆՅԱՑ ԵՐԳԵՐ

* * *

Թագվոր բարով, հազար բարով,
Դուն վարդ ես կանանչ տերևով.
Աստված էն քու արևն օրհնե
Էջմիածնա ղորութիննով.
Գացեք բերեք թագվորա պապ,
Որ գա նստի դարպաս էնե,
Ինդիկ զարնե սուրբ սեղանին
Բարև հրամմե մեր թագավորին.
Գացեք բերեք թագավորա մամ,
Որ գա նստի դարպաս էնե,
Ծծդիկ զարնե սուրբ սեղանին,
Բարև հրամմե մեր թագավորին։

* * *

Մեր թագավորն է ալ, խաչբառ խաչումաչ,
Բինիշն էր կարմիր, արևն էր կանանչ,
Ձիուկն էր հրեղեն, թամբիկն օձեղեն,
Մեր թագավորն էր վրեն.
Էն ղոհալ աստղնի երկինք՝ տեսեք թ'էն ո՞րն է,
Էն ղոհալ աստղնի երկինք՝ էն թագուհինն է,
Էն քուլա բամբակն ի ծառ՝ տեսեք թ'էն ո՞րն է,
Էն քուլա բամբակն ի ծառեն՝ թագվորամերն է։
Էն միջի հաստագերանն՝ տեսեք թ'էն ո՞րն է,

էն միջի հաստատերանն՝ էն թագվորահերն է։
Առուծներ մրմնջալեն՝ տեսեք Թ'էն ո՞րն է,
Առուծներ մրմնջալեն՝ էն վարդապետներն է։
Շատ ուտող, քիչ վճարող՝ տեսեք Թ'էն ո՞րն է,
Շատ ուտող, քիչ վճարող՝ էն տերտերն է։
Կաքվըներ կրկրալեն՝ տեսեք Թ'էն ո՞րն է,
Կաքվըներ կրկրալեն՝ էն սարկավագներն է։
Ճնճղներ ճլվըլալեն՝ տեսեք Թ'էն ո՞րն է,
Ճնճղներ ճլվըլալեն՝ էն տիրացուքս տանն է,
Հինգ գաթա վեց խաչ գաթա՝ տեսեք Թ'էն ո՞րն է
Հինգ գաթա, վեց խաչ գաթա՝ էն ծառ գովղներն է։
էն ավել դռան էտև՝ տեսեք Թ'էն ո՞րն է,
էն ավել դռան էտև՝ էնի ժամակոչն է,
Մուկն էկավ պոչն ալըրտա՝ տեսեք Թ'էն ո՞րն է,
Մուկն էկավ պոչն ալըրտա՝ էնի ջաղջըպանն է։
Շունն էկավ պարկն ի բերան՝ տեսեք Թ'էն ո՞րն է,
Շունն էկավ պարկն ի բերան՝ էնի գզիրն է։
էն դիզան բեթ, բեթ դիզան՝ տեսեք Թ'էն ո՞րն է,
էն դիզան բեթ, բեթ դիզան՝ էնի ըռեսներն է։

* * *

Հարսը տանելիս
էլեր է իրիկվա քամին
Բաղրգան լցվեր է գամին,
Ես դուրպան քու զարիպ ջանին։
Սրձկեցին դրամի հանգուց.
Աղջիկ քակեցին ուր մամուց։
էլեր է Դիլիֆու հուսին,
Կը տանի մեր բզրի լուսին,
Իրիկվա զանգեր զարգեցին,
Օտքն զանգուն դրեցին,
Մերիկ հառեն լացուցին։
«Չեմ էրթա, մերիկ, չեմ էրթա,
էկած են զոռով կտանին,
Դուն հալալ, մերիկ, դուն հալալ,
Քու աված կաթիկն ինձ հալալ։

Դուն հալալ, հերիկ, դուն հալալ,
Քու դատած հացն ինձ հալալ։
Մի՛ ընդա շամքուկ, մի՛ ընդա,
Ընդալու ես եմ, կը ընդամ,
Մի՛ սոդա հողեր, մի՛ սոդա,
Սոդալու ես եմ, կը սոդամ։
Մի՛ ժաժա ծառնուկ, մի՛ ժաժա,
Ժաժալու ես եմ, կը ժաժամ։
Մի՛ թափի, տերև մի՛ թափի,
Թափելու ես եմ, կթափեմ։
Մի՛ ցոլա, աստղուկ, մի՛ ցոլա,
Ցոլալու ես եմ, կը ցոլամ։
Մի՛ ելնի, լուսին, մի՛ ելնի,
Ելնելու ես եմ, կելնեմ։
Մի՛ լա, մերիկ, մի՛ լա,
Լալու ես եմ, կուլամ։
Ղարիպ եղու էրկիր
Կորելու ես եմ, կը կորիմ։

* * *

Աղջի, հարսնավոր էկավ դեղի վերևեն,
Քեզի ալ քողը բերեց Ղզթի թևերեն,
Մի լա՛, մարիկ, մի լա՛, էկեր կը տանին,
Օխթն ախպոր մե քուրը ջոկեր, կը տանին։
Մարիկներ խափեցին մե թոփըմ շամով,
Քուրիկներ խափեցին մե ձեռքմ հինով,
Ախբորը խափեցին մե մահուտ չուխով,
Մի լա՛, մարիկ, մի լա, էկեր կը տանին,
Օխթն ախպոր մե քուրը ջոկեր, կըտանին։
Հոր խափեցին, մոր լացուցին,
Ախպոր շյուշեն կոտրտեցին,
Քրոջ վալեն պատռտեցին,
Մի՛ լա, մարիկ, մի՛ լա էկեր կը տանին,
Օխթն ախպոր մի քուրը ջոկեր, կը տանին։
Էրթամ, էրթամ, հեռու տեղեր հեռանամ,
Էփոր մարիկ միտքս ընկնի մեջքս բռնեմ կռանամ.
Մի՛ լա, մարիկ, մի՛ լա, էկեր կըտանին,

Օխթն ախպոր մև քուրը ջոկեր, կըտանին։
Մի՛ լա, մարիկ, մի՛ լա, լալողը ես եմ,
Ղարիպ էրկիրները կորողը ես եմ։
Մի՛ լա, լալո՛ր աղջիկ, հարս էղար մեզի,
Յաղութ զմրուխտ, անգին քար եղար մեզի։
Դուվիքը բացին շշերով,
Հարսը կը տաննեն դիշերով.
«Չեմ էրթա, մարիկ, չեմ էրթա,
Էկեր են ղոռով կը տանին»։
—Գնա՛, օղուլ, գնա՛ ձագս,
Ջաահկին քեզի տուն կը բերենք.
Վեց օսկի ա դեմ կը բերենք։

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԵՐԳԵՐ

* * *

Ավետիքս Թևավորա,
Սիրականիս հետորա.
Յափունճին պատեն կախ է,
Հոլոն Ավոյիս հախ է։
Ավոն Հոլոյի ուխտ են էրե,
Ջիլիֆները ջուխտ են էրե,
Հոլոն կայներ աթար կէներ,
Ավետիքս սիրտը կէրեր։
Հոլոն նստեր ախ կը քաշեր,
Ավետիքն էրթիցեն կաշեր,
Հոլոն նստեր թել կը մաներ,
Ավետիքիս սիրտը կը հալեր։
Ավոյին զարկած աչերը
Հոլոյին էրկան մաղերը,
Ավոյին տարած պոճերը,
Հոլոյին զարկած խարճերը։
Հոլոյին տարած սնձերը,
Ավոյին տված տանձերը,
Ավոյին տարած նալերը,
Հոլոյին տված թուլերը։
Մեր դոմին սև սև դոխերը,

Յարս ինձի, վա՜խ, փոխեր է,
Հոլոն ինծեն զատ են էրե,
Յարա ինձեն յար են էրե։
Սիրտս պատռեր կես են էրե,
Խնդրեմ աստված ըլլիս տիրական
Յարս է իմ անուշ սիրական։
Ես Ավետիքն եմ գոմանցի,
Հոլոն տալիս հարս ճամփեցի,
Նորեն մե յարմ ճարեցի,
Հորս տարածեն հուս կտրեցի։

***

Ջկար Տիրունիս հասը,
Հաճապ վեվ տվեց խրատը.
Օսկի մտանին ճերմակ մատը,
էլեր ես սեյր անես, սեյր անես։
էլեր ես կերթաս կը մալին,
Աստվածը տար քեղի բարին,
Մեռնիմ ես քու անուշ ջանին,
էլեր ես սեյր անես, սեյր անես։
Յայլա էլնինք էնենք սեյրան,
Մեջքտ բարակ, ինքտ ջեյրան,
Քեզ տեսնողնին ըլլին հեյրան,
էլեր ես սեյր անես, սեյր անես։
Կովեր ունինք սև ու կարմիր,
Քեզ կթելո՞ւ մեկ մատն ընտրիր,
Սեր ու կարագ շատ պատրաստիր,
էլեր ես սեյր անես, սեյր անես։
Աշունք գուգա, քաղինք գարին,
Կանչե Տիրուն, կայնեմ կամին,
Ջհասա ես Տիրունին համին,
էլեր ես սեյր անեմ, սեր անիմ։
Ես Պողոսն եմ վայ գանձացի,
Տիրունս տարան, ես շատ լացի,
Սերս գնաց, ես խեղճ մընացի
էլեր ես, սեյր անես, սեյր անես։

***

Ինծի առավ տուման փուսը,
Կռվի մինախուփին (չար) խուսը,
Ինծի թողեց անճար դուսը,
Քոռանա Կորխեցուն լուսը։
Ես գուզևի սիրով հուսով,
Դատաստանին պայծառ լուսով,
Ինծի թողեց թևրի հուսով,
Դատաստանին հուս չունենաս։
Մայրամ արի տունդ կեցիր,
Մեր օրենքը խանգարեցիր,
Ուրանալը հաստատեցիր,
Դատաստանին հուս չունենաս։
Արուբին եմ անճար մնացի,
Բավական կրակ ճարեցի,
Արի տուն գնա, կորխեցի,
Դատաստանին տեղ չունենաս,
Աչք ունենաս, լուս չունենաս,
Խթման օրը եղ չունենաս,
Արտ ունենաս՝ բուս չունենաս։
Ակ ունենաս, խուս չունենաս[14]։

Ջալտիկ—Վատիկ

Էլի, կնիկ, էլի, ճամփներ աշե,
Ջախալ վառեկտ սուրուի բաշ է,
Գնա հավկիթները ջընտե փե խաշե.
Մեռավ խաղնատարս, ավերավ տունս։
Էլի, կնիկ, էլի, մալերը ծախե,
Հատից էտև մեզի օլու մը հախ է,
Թևերը ծռտոտ է, կատարը կախ է,
Մեռավ խաղնատարս ավերավ տունս։

14 Արուբը (Հարությունը) հրավիրում է յուր Մարիամ կնոջը թողնել կորխեցի սիրականին և վերադառնալ, յուր հետ միասին ապրել, և երբ նա չի համաձայնում՝ անիծում է։

Էլի, կնիկ, էլի, գնա մարագը,
Մեզի համար բե մեղրով կարագը,
Գոմեշը ծախենք տանք պատարագը,
Մեռավ խաղնատարս, ավերավ տունս։
Էլի, կնիկ, էլի, ծամերտ սանրե.
Հավ դրինք կշեռք, գոմշից էլ ծանդր է,
Գնա կացին բե, ոտք, գլուխ մանդռե,
Մեռավ խաղնատարս, ավերավ տունս։
Էլի, կնիկ, էլի, խմորը շաղե,
Գնա, մարդ թոփ էրե, թող գաթա կողե,
Գնա, տերտերը բե հավը թաղե,
Մեռավ խաղնատարս, ավերավ տունս։
Էլի, կնիկ, էլի, ոտներս թաց է,
Թեղ էրե աշե, դռվիքը բաց է,
Եզ, մատակ մորթենք, տանք հոգու հացը.
Մեռավ խաղնատարս, ավերավ տունս։
Էլի, կնիկ, էլի տուն արի դեսը,
Հեչ չկար քու նշխուն վառեկի պեսը,
Էս քանի բան կապեց ուստա Օհաննեսը,
Մեռավ խաղնատարս, ավերավ տունս։

Ճուլուկ

Իրիցկնկա գլխուն ալը,
Կուռկուռը ճուկան բռնեց կալը,
Կերավ խեղճ տերտերի մալը,
Կերան ճուլուկս, ճուլուկս։
Աբուլու գլխու փուսը,
Ճուկան կերավ փուչ կուսկուսը,
Քոռանա Աղանիկին լուսը,
Կերան ճուլուկը, ճուլուկը։
Գլավան պարպեց դոխտուրի դեղը,
Կուսկուսը կերավ կճուճի եղը,
Ջանաղն առավ ընկավ դեղը,
Կերան ճուլուկը, ճուլուկը։
Գլավան տունը ցամաք չորնար,
Փուչ կուսկուսը դուռը օտնար,

Աղանիկն էլ ասում՝ մոռնար,
Կերան ճուլուկը, ճուլուկը։
Կուսկուսը յորտա կը բելեր,
Հաքի հալավը կը վեյլեր,
Ճուկայի միսը կը հալեր,
Կերան ճուլուկս, ճուլուկս։
Համբան էլավ դուռը աշեց,
Փուչ Կուկասը ճուկան խաշեց,
Գլավան նեսը սիրտը մաշեց,
Կերան ճուլուկը, ճուլուկը։
Աղանիկը թեղը կ՚ըներ,
Փուչ կուսկուսը աննոք կառներ,
Գլավան տունը կը մոռներ,
Կերան ճուլուկը, ճուլուկը։
Աղանիկը գնաց մերին,
Կուսկուսը նստավ դութնի սերին,
Ճուլուկը խաշած առաջ բերին,
Կերան ճուլուկը, ճուլուկը։
Մեծ տերտերը ամեն կասեր,
Գլավայի սիրտը փաս էր,
Ճուլուկս կերած օրը պաս էր,
Կերան ճուլուկս, ճուլուկս։
Դավիթը խոսիր խոսքի սաղը,
Կուսկուսին բոներ սև ցավը,
Մարդը գլավա էր չէր քաշե ահը,
Կերան ճուլուկը, ճուլուկը։

***

Կուտիկս տարեր է քուրդը,
Նա՛ մորթին բերեց, նա՛ բուրդը,
Էկավ խափեց կերավ շուրդը,
Ա՜խ, կուտիկս, վա՜խ կուտիկս։
Գիտեմ, կուտիկս ղուրշիլ էր,
Քիթը էրկան՝ էրկու թիզ էր,
Հաչելու վախտը բյուլբյուլ էր,
Ախ կուտիկս, վախ կուտիկս,
Քուրդը կերավ չազ կուտիկս։

Կուտիկս գիլու ռանգի էր,
Պահեցի, գարին շատ թանգ էր,
Անոթնար դուռը կճանկեր,
Ա՜խ, կուտիկս, վա՜խ կուտիկս,
Քուրդ տարավ չաղ կուտիկս։

Կուտիկս ճիլայենց ազգեն էր,
Ոտացեն չուստ էր՝ վազ կէներ,
Հայ ուտելու խիստ նազ կէներ,
Ա՜խ կուտիկս, վա՜խ կուտիկս,
Քուրդը տարավ չաղ կուտիկս։

Խապարն էկավ վերի յայլեն,
Քանդ ու քարափ ներքի մահլեն,
Եաևեն ղրկեցինք քահլեն,
Ա՜խ, կուտիկս, վա՜խ կուտիկս,
Քուրդը տարավ չաղ կուտիկս։

Հետը տարեր էր ոչխարը,
Քրտի գլխին ընկնի քարը,
Չտեսանք կուտիկիս պարը.
Ա՜խ կուտիկս և այլն։

Օհաննես, դու չալե սազը,
Պատճառն եղավ քու Այվազը,
Չքաշեց կուտիկիս նազը.
Ա՜խ կուտիկս, վախ կուտիկս,
Քուրդը տարավ չաղ կուտիկս։

***

Իմ աննման հշս պոզ էր,
Տարան նազերով նազերով,
Ինծի ամենեն լավ գովեր,
Տարան նազերով, նազերով։

Մնացին ախին կապեցին,
Պաքմազը թանք-թանք ծախեցին,
Փալանն առան, հշս փախուցին,
Տարան նազերով, նազերով։

Պաքմազիս գինը կտրեցին,
Մև օնպաշիմ ալ ընտրեցին,
Հշս շատ ուշ փնտրեցին,

Տարան նազերով, նազերով։
Տեղն ու տեղը ընկա թալան,
Գել ախոռն էր ալան-թալան,
էշս կորավ, տվեք փալանն,
Տարան նազերով, նազերով։
Իշիս ականջներն է ընկան,
Ձին չգիտե անոր յորդան,
Մնացի պեխերը զայքան,
Տարան նազերով, նազերով։
Մինսան էշս լծեր էր կամ,
Հայվան անասունս էր խամ,
Ինծի պիտի ծեծեն պապս ու մամ,
Տարան նազերով, նազերով։
էշս փախավ, էրթամ ժուռ գամ,
Թե չգիտեմ՝ մե կուշամ լամ,
Ես հորս ինչ պատասխան տամ,
Տարան նազերով, նազերով։
Իմ էշս քահվընի ցեղ էր,
Մե էշմ էր ու ղոճա գեղ էր,
Բատունին գարեհրուն դեղ էր,
Տարան նազերով, նազերով։
Իմ իշուս տղաքն էին ջորի,
Վեվ գուզե օր էշս կորի,
Գեղացիք կուտային գարի,
Տարան նազերով, նազերով։
Իշուս ումուղը կամար էր,
Ինքն էլ պող ու զամար էր,
Բոլոր գեղացոց համար էր,
Տարան նազերով, նազերով։
Իշուս անկհնները կախ էր,
Գանողն ինչզ պիտի ծախեր,
Ձլերն ալ վրայեն կախ էր,
Տարան նազերով, նազերով։
Իմ էշս կորավ ու կորավ,
Ախպարս փալանը բերավ,
Աստված տվեց հարս մեռավ,
Տարան նազերով, նազերով։

Դրկիցներս սիրտս բացին,
Էկեր էին հորս հացին,
Համ հորս, համ իշուս լացին,
Տարան նազերով, նազերով։
Ախ, եվ որ փախավ՝ զոզոցդ,
Սիրտս փորիս մեջ կոկոցդ,
Քթիս փնչերը մոմոցդ,
Տարան նազերով, նազերով։

***

Թարաքամեն դուռը բացեց,
Բուռմ կրակ սիրտս լցեց,
Դշխունն ինծի համար լացեց,
Տարան Դշխունս, Դշխունս.
Թարաքամեն մտավ գեղը,
Կերավ մեր տալոյին եղը,
Սորվեցավ Դշխունին տեղը,
Տարան Դշխունս, Դշխունս։
Ալեքսան դարասուն յորթան,
Ջորս գլուխ ավետարան կարդան,
Դշխունն առեր էին կէրթան,
Տարան Դշխունս, Նաշխունս։

ՍԱՀԵՐԳԵՐ

Երալու որբին երգը

Լացե՛ք ինձ հետ սարեր, ձորեր,
Էլ միք ծաղկիր, կանանչ դաշտեր,
Մնացի ես որբ ու անտեր,
Բանձր սարեն վար են ցկեր,
Բոլոր կողքերս ին կոտրտեր։
Լացեք ինձ հետ սարեր, ձորեր,
Որ լսեցիք դուք իմ ցավեր,
Ա՜խ, թշնամիքս ինձ են մատներ,
Կողքս ու գլուխս քարով ջարդեր,
Հազար տեսակ չարչարանքներ
Ինձ են ավեր այդ քար սրտեր.

Լացեք ինձ հետ սարեր, ձորեր։
Խեղճ Տիգրանն է ըսպանվեր,
Ջունի մայրիկ՝ ցավերն հայտներ,
Որը մնալը շատ դժվար էր,
Օտարութեան մեջը ընկած,
Անուշ հայրիկես զրկված,
Լացեք ինձ հետ սարեր, ձորեր։
Դուք ինձ եղաք ազգականներ,
Վերջին օրը դերուն օրն էր,
Վանքը լիքը ըխտավոր էր,
Ամեն ծաղիկ մորը մոտ էր,
Ես եմ աստեղ զարիպ անտեր։
Լացե՛ք, մայրիկ, անուշ քույրեր,
Եկա աշխարհ, բան չդիտցա,
Անուշ հորմես կարոտս չառա,
Սիրականես լուս չտեսա,
Գիրմ էնեմ իմ Փեթռոնին,
Մուղաթ կենա իմ ձագուկին,
Հիմի լացեք սարեր, ձորեր,
Ես մայրիկես չեմ կշտացեր,
Գիշերից լուս աղերսեր եմ,
Սարեր-ձորեր լացուցեր եմ,
Արունես մեջ շաղվըվեր եմ,
Խղճացեք ինձ սարեր, ձորեր։
Իմ ցավերս դուք չեք տարեր,
Երանի էր ան քարերուն,
Որ չէր տեսեր խեղճ յարալուն,
Լեզուս կպեր՝ քար էր դարձեր,
Աչվիս լուսը խավարեր էր,
Մեկը չունիմ, օր աղատեր։
Արշալույսը որ բացվեցավ,
Մահվան հրեշտակս ինձ մոտեցավ
Ասաց. «Ես եմ որբի տերը,
Դեհ, շուտ արա, մի չարչարվիր»։
Մե խոսքովմ՝ ես հայտնեցի,
Փուչ աշխարհես ձեռք քաշեցի։
Մնաք բարով սարեր, ձորեր,

Սարեր, ձորեր, ջրեր, քարեր,
Դիշերս ինձ հետ չիք դադարեր,
Մորս տեղը դուք եք էղեր,
Բոլոր ցավերս եք իմացեր,
Որբի տերը մեկ աստված էր։

***

Էս գիշեր էրածս Քերոփը տեսա,
Էկավ կայնավ քովս, հետն էլ խոսա,
Իրան սաղ կարծելով ցավես խլըսա,
Ցավես խլսելու մե ճար չունիմ ես։
Ափսո՛, ըսավ ինծի, փաթթվավ, լացեց,
Իրեն չարշարանքի առարկեն բացեց,
Ըսավ մորս մի՛սե, լացեց, աղաչեց,
Ինձ համար թող չըլա, էլ խեր չունիմ ես։
Ըսի՝ մերս քեզի հըմար քուն չունի,
Գիշեր ցերեկ ըուլա՝ դադարում չունի,
Պըտըտվի նե չիգա, մըկըմ տուն չունի,
Ըսավ՝ ատ տան մեջ ես ախպեր չունիմ։
Յարաններս ինձ քաշեցին դյաքի,
Մըկըր կռապաշտները հեչ չունին հոգի,
Լացի, աղաչեցի, աստծուն ցկի,
Ըսավ՝ Շմավոն, ես աստված չունիմ։
Խոսայելը շատ միտք չունիր զարկելու,
Սեդրակը հեչ հոգի չունիր փրկելու,
Սարգիսը շատ մյուշտարի էր շելկելու,
Շալակը հեծնելու մյաճալ չունիմ ես։
Հավատ չի գտնվի խիղճ շեղած տեղը,
Տարան սըպանեցին սուճ շեղած տեղը,
կանանչ չը բուսնի չարչրած տեղը,
Ճվա աշխարքին մեջ ես արդունք չունիմ։
Սարգիս[15] ապավան է, Տերը Տյառնի,

15 Հորինել է Ղուրի-դաուելցի անգրագետ Սարգիս Գյուլպանկյանը յուր եղբոր՝ Քերոբի վրա։ Սա 1887 թ. մի դաշույն է դողացել Շմավոն անունով մի երիտասարդից. գողությունը բացվում է, և Շմավոնը դաշույնը ետ է տանում, սակայն ոխ պահելով՝ հունիս ամսին հարսանյաց տանից Քերոբին խաբելով տանում է դաշտ և յուր ընկերների օգնությամբ սպանում է։ Չարագործները բանտարկված են։

Աստղերը թոթոփի, լուսինը դառի,
Աստված կրակ թափե՝ տները վառի.
Կաղաչեմ ախրոջը՝ հեչ քուն չունիմ ես։

***

Ի՞նչով զարկեց անօրենը,
Ջոքար ճվճվացիր, Ջըմո,
Ջէր կայնի գլխուտ արունը,
Պաղ ջրով լվացիր, Ջըմո։
Տարածվավ քաղցր համերդ
Մարդ չլսեց քու ցավերդ,
Գնահեցիր շեկիկ ծամերդ,
Յարաններդ բացիր, Ջըմո։
Քաղցր փեսեդ դիվըհան էղավ,
Կապուտ յարաններտ պաղավ,
Քու հալետ հասկցող չէղավ,
Ինչ դարդով գնացիր, Ջըմո։
Ֆերշիլ բերին սիրտտ բացին,
Յաղութ, Սյանամ նստան լացին,
Կտրտած թողին գնացին,
Մեյտանը մնացիր, Ջմո։
Իմ յարը ինծի յար չէրիր,
Կրակն ընկար՝ վյարամ բերիր,
Ֆիրաղուն[16] դյարբեդար էրիր,
Դուն էլ ոչ խնդացիր, Ջըմո։

ՊԱՆԴԽՏՈՒԹՅԱՆ ԵՐԳԵՐ

Ղարիպ

Ղարիպը պառկեր է՝ անճար կը տքա,
Ջունի հարիկ, մարիկ, օր իրեն հոգա,
Քարերը յորղանն էր, հողերը դյոշակ.
Ջունի գլխուն տակը բարձ՝ ինչդ էներ։
Մարմ ա չունիր՝ տեղը ցկեր, վերցներ,
Քուրմ ա չունիր՝ բարձին ղպլան դարձներ,

16 *Մարգար Պապյան, դաշնակի անզրազետ հյուսն։*

Յարմ ա չունիր՝ հալը, խաթրը հարցըներ,
Մեմ մեռնի՛լ, մեմ բաժնիլ, մեմ զարիպ էրկիր։

***

Վարդ կը բացվի վարդևորի կիրակին,
Ես չեմ դիմանա իմ յարիս կրակին,
Հալըը վարդ կը ժողվե, ես հորուս-մորուս,
Հալըը յար կը գտնի, ես յարես կարուս։

Կռնկին

Կանչե՛, կռունկ, կանչե, քանի գարուն է,
Ղարիպներու սիրտը գունս-գունտ արուն է,
Քու իջած տեղտ չայիր չիման է,
Աշխարհին արեգակ, ինծի տուման է։
Կանչե՛, կռունկ, կանչե բանձր սարերեն,
Գնացեր եմ զարիպ էրկիր, վախեմ մեռնելեն,
Մի՛ լա, մարիկ, մի՛ լա, ես զարիպ տեղ եմ,
Վաթանիս հողն, ջրին ես կարոտցեր եմ։

Ղարիպն ու կճիկը

Ղարիպ

Էլեր եմ, կերթամ կը, վե՞վ գիտե հալս,
Մեմ՝ աստված գիտե դառնալս ու գալս.
Մարիկ ձեռքս պագնեմ, յար, մնաս բարով,
Արդահիլ կամոքս պաքմ տուր սիրով։

Կճիկը

Գուլամ ու կերերամ, իմ անուշ յարս,
Առավոտուն գելնեմ՝ գըլխիս իմ միտս,
Օլմազ ճամբեքդ աշեմ՝ ծոի կը ճիտս,
Դու գայիր անցնեիր՝ դաֆ ըլլիր դարդս։

Արի, իմ էորդակս, արի զաղս։
Ես մեռնիմ օրա քաշե նազս,
Ինչափ չմեռնեի, օր քեզի տեսնեի,
Վարդ, ըռեհանի պես քովդ բուսնեի։

***

Մանի ըսեմ ու շարեմ,
Տոպրակ լլեմ ու կարեմ,
Քաղքից քաղաք ժուռ ածեմ
Սրտիս ուզածը ճարեմ։
Հաց եմ թխեն, գարի էր,
Իմ յարը սաֆարի էր,
Մեռնիմ սաֆար գնալուս,
Խոսքերըտ շաքարի էր։
Ֆինո ֆասը լվացի,
Սարին տակը մնացի,
Խապար էրեք իմ յարին,
Ես չոլեչոլ մնացի։

***

Սառամպոլու խորունկ-խորունկ ձորերը,
Տասը տարվան վաստակս ընկեր կորեր է,
Վայ ան մարիկին, օր ինծի բերեր է,
Գիշերը ծիծ տվեր, ցօրը օրրեր է։
Հարիկ չունիմ՝ խաթեր ու հալս հարցնե,
Մարիկ չունիմ՝ յարաներս լավցնե,
Քուրիկ չունիմ՝ տեղս ցկե վերցնե,
Սխպար չունիմ՝ չոխա կտոռե հագցնե։

***

Պյուլպյուլ, ինչ ես պառկե չոխուս օվայում,
Խեղճ ընկերտ քեզ փնտռե կ'ու վայում.
Ես եմ զարիպ երկրում, սիրտս է տանջվում,
Հոգ՛ա, զարիպ պյուլպյուլ, սիրտս վառած է։
Պյուլպյուլ, ի՞նչ ես պառկե,պահար յազ էկավ,
Մեր գեղին մեջ շատ էորդակ ու ղազ էկավ,
Տանը մեջը յարս լսեց, ինծեն վա՞ղ էկավ,
Մի ընե, զարիպ պյուլպյուլ, սիրտս վառած է։
Պյուլպյուլ, ո՞ւր ես պառկե, գարունը հասավ,
Կարմիր վարդը պաղչաներուն մեջ բուսավ,
Տանը մեջ սիրելիս իմ միտքս ընկավ,
Մի՛ ընե, զարիպ պյուլպյուլ, սիրտս վառած է,

Մի՛ էրթա, զարիպ, մի՛ էրթա, ճամփան չամուռ է,
Յար, քու սերտ ապառաժեն ամուր է,
Օխթը ատրի ըսածտ աստղիկ մեծ դուռ է,
Մի՛ էրթա, իմ զարիպ, սիրաս վառած է։

ԵՐԿՐԱԳՈՐԾԻ ԵՐԳԵՐ

***

Լուսը լուսացավ,
Բարին շատացավ,
Հոռովել հո՛։
Էլա՛վ, հորիկը էլա՛վ,
Արտը կերավ,
Հորիկի հոտաղ,
Հոռովել հո՛։
Եմիշտ մանդռ է,
Շալակտ ծանդռ է,
Շեկան գոմեշ.
Հոռովել հո՛։
Յերիկ մուռել է,
Հոտաղը բանճար
Կերեր, հոտեր է։
Հոռովել հո՛։
Մաճկալը մաճին է,
Գաղն անկըճին է,
Քրնալը լալիս է,
Տերը խնդալիս է,
Հոռովել հո՛։
Իրիկվա հովին է,
Գութանը թևին է,
Կանչե, հորիկի հոտաղ,
Հո՛...
Գործը բարի է,
Անմեն տարի է,
Հոռովել հո՛...

***

Եզը եզ էր, կարմիր եզ էր,
Լուծը ճաին, լոքը գետին,

Օրհնած գութանն է էրքին,
Զորանաս հուռաղ, հո՛։
Գոմեշն էլավ խամին,
Կոռռեց երկթե սամին,
Անիծեմ քու խնամին,
Հոռռվել հո՛։
Գութանն ընկավ փոսը,
Շաղը ընկավ ակոսը,
Կարմիր կապավոր հարսը,
Հոռռվել հո՛։
Քնել է, քրանել է,
Ղարագյոզ թևլի հարսը,
Կանչե, հուռաղ, հո՛,
Դիմացը զոճա գեղ է,
Էն ինչ գնալիկ տեղ է,
Մուրշուպով բերածը եղ է,
Հուդնուն հոգա դեղ է,
Կանչե հուռաղ, հո՛։
Հարս է՛,
Շապիկը Բարս է,
Էկավ խասյար կը բևրե,
Թևլի ղարագյոզ հարսներեն,
Սիրուն աղջըկներեն։
Հարսը մաճկալին,
Աղջիկն հուռաղին հարկավոր է,
Քեֆ էրո՛, հուռաղ հո՛։
Կերանք լիացանք,
Աստված գոհացանք,
Օրհնյալ է աստված,
Հիշենք սրբանանք,
Հոռռվել հո՛։
Ա՛յ, Նազարե, Նազարե,
Զքշողը զազար է,
Քշող հոգին խավիծ, Բան,
Զքշողին անժուռ Բան,
Հոռռվել հո՛...

***

Արևը գնա՛ց,
Միջունքը մնաց,
Զորանաս, հոտա՛ղ, զորանաս.
Շողը շալուլ է,
Շեկ գոմեշը,
Ակոսը մալուլ է,
Զորանաս, հոտա՛ղ, զորանաս։
Շեկ գոմեշը նազ կէնե,
Գութանը փարվազ կէնե,
Քեֆ սիրող սև հարսները
Քանի քրֆես՝ հազ կէնե,
Զորանաս, հոտա՛ղ, զորանաս։
Թնդիր մուխ է,
Աչվին թուխ է,
Հոտազ հո՛...

***

Վարինք վարելով,
Սև ակոսներ շարելով,
Հոռովել հո՛...
Հովեց՝ հովն էր անուշ,
Կարմիր թուշ՝ պագն էր անուշ,
Հոռովել հո՛...
Եղներ, եղներ, կարմիր եղներ,
Մուսլիկ գոմեշ ուր գին գուղեր,
Գութնի բուղեն կոխվ գուղեր,
Հոռովել հո՛...
Հաց կերանք կըշտացանք,
Մալը նստավ դինճացավ,
Մուսլիկն առավ զորացավ,
Հոռովել հո՛...
Վարենք, վարենք վար էնենք,
Դյուշմնի սրտին դարտ էնենք,
Հոռովել հո՛...

Գովասանք

Աղջիկները ծալած պոխչա,
Հարսները պաղ ու պախճա,
Պառվները հոտած խոճա։

***

Արի՛, պառավ, քեզի դուվեմ,
Ջախջեն էլած դև գլմանիս,
Բաղնեց հրեշտակ գլմանիս,
Սատանի սրպանք գլմանիս։
Արի՛, պառավ, քեզի դուվեմ,
Դժոխքի քյութուկ գլմանիս,
Վրատ-գլոխտ քրքրեր է,
Թեպուր փոխած հավ գլմանիս։
Գլոխըտ կապեր ես փուլի,
Դու եղեր ես համամ ղուլի,
Ինքտ տուռնա, քիթտ ղուռնա,
Աչվներտ բաղնոց ղուռնա։
Էրեսիտ միսն է գնացե,
Մե օսկռնիտ է մնացե,
Բերնիդ առկա չէ մնացե,
Դուն լողղած կավ գլմանիս։
Նստեր ես՝ ջահրա կմաննես,
Հաստ ու բարակ թել կը հանիս,
Խոլբիս՝ հարս կը սպաննես,
Գրող ու մահ՝ ցավ պառավ ես։
Նստիս կը պատերուն հովը,
Միջեցետ հասնես կը գովը,
Ախ մեմ՝ ընկնիս խորունկ ծովը,
Մենք օր տեսնինք, ա՛յ դու պառավ։
Հին անկճով թել կը լսես,
Մատվնիտ իրար կը քսես,
Սուտ ու դորդ մանչերուտ կըսես,
Շեժել կուտաս, ա՛յ դու պառավ։
Ամեն օր հարսնուն հետ կռվիս,
Խայինն գոմշի պես կը կռվիս,

Վառված կրակի մեջ էրվիս,
Դուն չորացած, ա՛յ դու պառավ։
Փետատ բերնեք, մանչեր, փորենք,
Պառվներուն գլոխը հորենք։

***

Անուշավան,
Յաղլի յայլան,
Մանչերն էկան,
Կնիկտ տարան։

Ա՛յ, պալա Գարան,
Ջուռնով քեզ էկան,
Դավուլով տարան
Քեզ, Գարան ջան։

Աղջի, անունդ էր Գարան,
Քեզ տեսնող մանչերն մարան,
Ափսոս, նկան քեզի տարան,
Սապաղն էղավ մերոնց Սոնան։

Ա՛յ, պալա Նվա,
Աչքերտ սև ա,
Դեղշտ կերևա,
Գյուլ Նվա ջան։

Աղջի, անունդ էր Յաղութ,
Շաբար կուտեիր տղութ։

Ա՛յ, պալա Թագուն,
Նստեր ես սաքուն,
Ախտ է մանչերուն,
Գյուլ Թագուն ջան։

Ա՛յ, պալա Թանքա,
Նստեր ես սանքա,
Ջեռքտ շուշան կա,
Գյուլ Թանքա ջան։

Կիրակոս աղա,
Ձին տակտ խաղա,
Կնիկտ սիրուն,
Դուն մասխարա։

Պալա Հայկանուշ,
Դուն բատամ ու նուշ,
Անուշ ու քնքուշ,
Գյուլ Հայկանուշ։

Ա՜յ պալա Հեղնար,
Շատ կերար՝ դեղնար,
Ինծանից լեղվար,
Գյուլ Հեղնար ջան։

Հեղնարը դնաց ջուրը,
Տասվերկու խուրման բուռը,
Թապլից Հովակին դուռը,
Ընկավ Յուղաբին բուռը։

Ա՜յ պալա Մարքիտ,
Խրխատ է հաքիտ,
Կարոտ եմ պաքիտ,
Գյուլ Մարքիտ ջան։

Հնտի մնտի լավ Թելինկո,
Ճտռտաֆըտել լավ Թելինկո,
Արաճի Մուրատ, մուրսի վրատ,
Կարգվեցար՝ ո՞ւր է հինատ,
Գերեզմնի քարը վրատ։

Աղջի, անունտ էր Նուրին,
Յուղաբը գլմանի Հոյին,
Ձեզի կը հանե հոյհոյին,
Դու մեռնիս Շողոյի պոյին։

Ա՜յ պալա Շողեր,
Անկճվիտ օղեր,

Ինձի ևս թաղեր,
Գյուլ Շողեր ջան։

Ա՛յ պալա Շողեր,
Կառնեմ քեզ օղեր,
Կանչեմ կը տաղեր,
Գյուլ Շողեր ջան։

Աղջի, անունդ է Շողան,
Քեզ տեսնող մանչերն դողան,
Ղմաքը ձեռնետ կըսողան,
Աչքերդ սև, ունկվիտ թուխան։

Աղջի, անունտ էր Շուշան,
Օսկե մատնիս տամ նշան,
Արի, էրթանք Սուրբ Նշան։
Ինձի չհնես փերուշան։

Աղջի, անունդ էր Շուշան,
Շապիք'մ ունիս խշխշան,
Հինգ հալապի վնց նշան,
Արի էրթանք Սուրբ Նշան։

Ա՛յ պալա Սառա,
Քեզ գերի դառա,
Ինչաղ օր չառա,
Գյուլ Սառա ջան։

Աղջի, անունտ էր Սյանամ,
Պագամ տու պաստ բանամ։

Ա՛յ պալա Տիրուն,
Հուսնյակ գիշերուն,
Մե պաչ տու թաքուն,
Գյուլ Տիրուն ջան։

***

Պալա Փառանձեմ,
Քեզ Օսկի կանչեմ,

Սիրտս կը մաշեմ,
Գյուլ Փառանձեմ։
Արի մեզի, մեռնիմ քեզի,
Պադտ աժե թասըմ դինի։

***

Ղուբնի զուպուր (հագուստ) մանդռ քար,
Եկե սիրե՝ զողցի տար։

***

Կարմիր մղարով աղչիկ,
Գինդ է հաղարով աղչիկ,
Կարմիր մտար ղրմզի, զարկզի նշանածիս,
Պատճիս. չըմ առնի քեզի։

***

Ստամբոլ՝ ստակը բոլ,
Արզրում՝ վաստակը բոլ,
Գյումրըվա անցածն է բոլ,
Ախալցու դեղնածն է բոլ,
Ախալքալաք՝ չարխուֆալակ,
Միջի մարդը հյուրի մալակ
Ոչ ժամ գիտեն, ոչ պատարագ,
Կուտեն խմեն կերթան տավար,
Հագնին կապեն՝ կըլան թավար։

***

Ֆռանկները թուրքի մատեն,
Միշտ անդանակ մսեր կուտեն,
Ծտերը ծուռ՝ քոռ բուի ճուտ են,
Ալի իրենց միշտ կգովեն։
Ֆռանկները անհամ բան են,
Տեսնողներն ա միշտ կը ցանեն,
Ոչ մածուն են, ոչ ալ թան են։
Ես չիտեմ թը ինչդ բան են,
Պատվելին միշտ քթին տալեն,
Քարոզ կուտա մոմռալեն,
Իշի լման ղըռղըռալեն,

Ալի կըսեն. «Մենք շատ լավ ենք»։
Հոտած ֆռանկներուն պուսը,
Քոռանա աչքերուն լուսը,
Պապի վրա դրած հուսը,
Ալի կըսեն. «Մենք շատ լավ ենք»։
Ֆռանկին տնկած զել ծառը,
Վրան փլավ բանձր յառը,
Պատվելուն մրթմրթած ճառը,
Ալի կըսեն. «Մենք շատ լավ ենք»։
Ֆռանկներուն նեղ տները,
Պոչը կտրած՝ ատ շները,
Ալի կըսեն. «Մենք շատ լավ ենք»։
Ֆռանկները նրանց կը գովեն,
Մուտատա ջրով կազմած ծով են,
Ոչ բուլա են, ոչ ա կով են,
Ալի կըսեն. «Մենք շատ լավ ենք»։
Հատա պռունկ են ֆռանկները,
Խառնված են բռանկները,
Անիծեր է ատոնց տերը,
Ալի կըսեն. «Մենք շատ լավ ենք»։
Ֆռանկները ուղուղ էլ են,
Կրոնամոլ ֆեհե զել են,
Ոչ զաթր են, ոչ ա էշ են,
Ալի կըսեն. «Մենք շատ լավ ենք»։
Թղթե պատկեր ժամեն կախ է,
Բրինձ փլաֆն ուտելը հախ է.
Տերտերը կըսե դուրը ախ է,
Ալի կըսեն. «Մենք շատ լավ ենք»։

***

Ֆռանկները ելան յաղին,
Տապկեցին բորոտ թաղին.
Ֆռանկների տուտի տոլման,
Քոռ Մարկոսին դուռը չորնան,
Ֆռանկներին վերի օտան,
Մկները մեջը կորոտան,
Ես ա՛ դիտեմ քարով կուտան,
Մեկզմեկու նեմնեմ կուտան։

ԿՐՈՆԱԿԱՆ

Եղիա մարգարեի արցունքը

Ժամանակոց՝ կռապաշտները բռնեն Եղիա մարգարեին լավմ՝ ծեծեն կը ու կըսեն կը, թե. «Ըսա մեզի՝ իմ աստվածս չկա»։

Եղիան ծեծը կուտե, կուլա կը ու հեչ օրալի չի ըլլի ատպես բան ըսելու։ Մեմ՝ա տեսնես՝ Քրիստոս կուգա կըսե կը Եղիային.

«Քու արցունքդ ջավահիր ըլլի,
Երկրաց երկիր ծավալի»։

Իշտե ատ ջավահիրն օր հիմի կա, Եղիայի արցունքներն են։

Եղիան դաֆաֆչի

Եղիա մարգարեն վախթով դաֆաֆչի էր, առաջը մոխիր էր ցանե, գալող մյուշտարին ոտքը կոխեր կը մոխրին մեջը, կերթար, օր Եղիան եաև անոր աշե իրեն համար օտըման կարե։ Եղիան անքան բարեպաշտ էր, օր օղլուշաղին օտացը բիլա չէր աշե։ Մե օրմ՝ չարը կնկա դաբալով բոբլիկ օտվիքը հլուն շարած գուգա Եղիային օտըման կարել տալու։ Անքան կը լակվռթի, ասթին անթին գըչնի, օր Եղիան գլուխը վերցընե կաշե ատոր ճերմակ թաթուլիկ ոտներուն։ Չարը կերթա օրա՝ Եղիան նոր զղջա կը, զարկե կը հերոնը աչքը, երկու լուսն կը հանե, բռնե կը Եղիան աշկերտին ձեռքեն գելլե քաղքեն դուս։ Մեմ՝ ա բիրդան բիրա երկինքը կըբացվի ու հրեղեն կառըմ գելնի։ Եղիան նստի, համբառնա կը երկինք։

Քրիստոսը պոյաճու աշկերտ

Քրիստոսը պոյաճում քուվ աշկերտ կը մտնի, ուստան դասում թել կուտա կոր ռանգ ռանգ ներկե։ Ասիկ վերցնե կը ու բիտտուն մե կարասմ լըլե կը։ Ուստան որ տեսնի կը՝ կառնե փատմ զըչնի եաևը։ Քրիստոս փախչի կը, ասիկ փատը հետևեն ցկե կը, օսահաթ փատը ընկած տեղը ծառ կը կտուի։ Ուստան գուգա հառնե կը թելը, կաշե օր ամենքը մե ռանգմ ներկըվեր է, զարմանա մնա կը։

Ջավահիր կոռած օրանը

Վախտովը, մեկ բռանջպարմ իշտեք իրիկունմ ցորեն բարձած սեյը քշե կը էկե գեղ։ Գեղին օր մոտենա կը՝ զանկերուն ձենը առնելուն պես կայնեցնե կը սեյը, գոմշեստանն ա չի քակե, վազդե կը ժամ։ Սապախտան մութ ու մութ կելլե կուգա կոր սեյը քշե տուն, տեսնի կօր բիտտուն ցորենը արծաթ է կառե, հատիկները ջավահիր են դառե։ Գոմշեստանն ա քակվեր քովը կայներ արծեն կը։

Սողոմոն իմաստունն ու fոռ բուֆը

Սողոմոն իմաստունին կնիկը սուտ հիվանդ գլեի, հեքիմին սիրե կը։ Իրեն մարթուն յախան ա կալի կը, թը հավքերու օսկոռներեն ինծի մե ղոնախանամ պիտի շինես, թեպուներեն ա՝ յորղան-դոշակմ՝ սարքես։

Սողոմոն իմաստունը կանչե կը հավքերուն, մորթե կը ու օսկոռտանքն ու թեպուները թուի կենե, օր կնկանը ուղածը հազըրե։ Աշխարք ինչքան հավք կա՝ գուգա կը, սալթ քոռ բուֆը չի գա։ Սողոմոնը անղա զմրութին (արծիվ) ղրկե կօր գոնի բերե։ Անղա զմրութը ազմ ման գուգա, անճադ-անճադ գոնի կը բնիմ մեջ, ինչքան կանչե, ճվա կը՝ չի դուս գա, ահ կուտա՝ չի ըլլի, խոստում կենե՝ չի ըլլի։ Խյուլասա բնին առաջը կայնի սիրուն քարոզմ խոսի կը, ասիկ գելլե դուս, ախր անտեր քարոզը քար կը ծակե։ Բուֆն օր դուս գելլե, ասիկ քարոզը ծալե՝ գըրկե կ'ուտանի կը Սողոմոն իմաստունին։

Սողոմոն իմաստունը հերսոտի կը, թը՝ կանչեի կը, ինչի՞ չէիր գա։ Բուբբուն կըսե կը. «Ջոթք ցկեի կը՝ թը աշխարքիս մեջ տղամարդն է շատ, թե կնիկմարդը, անտի ուշացա»։

— Է՜,— կըսե Սողոմոն իմաստունը,— իմացա՞ր վերն է շատ։ Թը՝ կնիկ մարդը շատ է։

— Ինչդ,— կըսե Սողոմոն իմաստունը,— տղամարդը շատ պիտի ըլլի։

— Ղորթ է,— կըսե բուբբուն,— հըմը ես կնկանը խոսքին անկած էնողին ա կնիկմարդ ցկի. կնիկմարդ չէ՞ անիկ, օր կնկանը ձեռքը խաղալիք է դառե, կնիկը մինարին տակը յուխա լցեր սուտ հիվանդ է ձևացե ու հեքիմին սիրե կը, մարդուն ա չարչըրելու հըմար հավքերուն օսկրոտանքեն ղոնախանա գուգե։ Ինչքան հավք պիտի գտնես ջարդես օր, անոնց օսկոտանքեն ղոնախանա կայնեցընես։

— Խելացի ըսաց,— կըսե Սողոմոն իմաստունը ինքն իրեն,— ես

ա կնիկմարդ եմ, օր կնկանս խոսքովը աշխրքի հավքերուն արունքը մտա։

Արթղ բիտաուն հավքերուն բաց թողնե կը, օրը իրեք զուշա բուբ-բուին կապե կը։ Տեյմ՝ օր հիմի ա՝ օրը իրեք զուշ իրենք-իրենք զուգան բուբբուին առաջը կայնին կը։ Բուբբուն էրկուսը կուտե, մեկը աստծու սիրուն ազատե կը։

Վայյան հավք

Ջրհեղեղեն էտև աստված հրամայեց, օր հավքերը փոսեր փորեն, ջրերը անտեղանք լցվին։ Բիտաուն հավքերը թափան փոսեր փորեցին, սալթ վայյան հավքը չեկավ շաշխատավ, ըսաց. «Ինչո՞ւս է պետք ջուրն, օր Վարդևորի շոքին փոս փորեմ։ Աստված հրամայեց, օր իրեք ամիս ատ հավքը ջուր չխմե։

Տեյմ՝ օր հիմի ա՝ Վարդևորի ամսեն տե զոչի ամիսը ատ վայյան հավքը հեչ ջուր չի խմե, չայի վրա օր գիշնի, չայը արուն-թարախ կտոր կը, սալթ քարերի մեջ մնացած անձրևի ջրեն խմե կու գելլե երկնքի ե-րեսը, վա՜-վա՜յ էնելով պաշտի կը։

Լեկեոն ձուկ

Օվկիանու մեջ ձուկմ կա՝ անունը Լեկեոն է։ Ատ ձուկը անքան էր-կան է, օր ինքն իրեն պոչը չի ճանչե, գիտե թը ուրիշինն է, միշտ կենե թը բռնե։ Ատոր գյոքսն ա պատ վարազ է, եւթօր կենե թը պոչը բռնե՝ գյոքսը դառնա կը դեպի էրկինք, փայլխատե կը։ Եւթօր ատիկ պոչը բռնե, աշխարհս վար պիտի անցնի։ Աս ձուկը զաֆատ զոճա սարին բոլրտիքը պտըտի կը։ Վեց ամիսը ժումմ՝ մե պտուտմ կենե։

Եւթոր պտըտի պրծնի կը, անոթնա կը, բանա կը բերանն ու ազմ ջուր կուլ կուտա, ետև դունչը դնե կը սարին, ջուրը թապվե կը սարի գլոխը։ Թապվե կը սարի գլոխը թը չը՝ սարի գլխեն սելաֆմ պրծնի, ծառ, քար, գալ, արջ, ասլան, ինչ օր ռաստ գուգա՝ քշե բերե ատ ձկան բերանը լըլե կը։ Ջուկը ուտելուն կուտե, մնացածը առկները խփե ու ֆնչալեն դուս ֆչե կը։ Սամի քամին ի՞նչ է, օր Մեռած ծովի ղրաղեն փչե կը, ըշտը ատ ձկան շունչն է։

Թյություն

Տերն մեր Քրիստոս սաղ աշխարհքն օր ման էկավ, բիտաուն խո-սքերը գլոխ իշեցրին անոր, սալթ թյությունը գլոխ չիցուց։ Քրիստոս ա անոր անիծեց ու ըսաց, թը՝ վեվ օր իմ հոտիցս է՝ քեզի քաշե։

Նոյ Նահապետի աղջիկները

Նոյ Նահապետն օր տապանը պիտի շիներ, կանչեց ուստի մեկիմ ու ըսաց թը՝ արի տապանս շինե, աղջիկս քեզի տամ։ Ասիկ էկավ՝ օր-գիշեր սկսավ դատել։

Նոյ Նահապետը տեսավ, օր բանը շատ յավաշ կէրթա, կանչեց ուրիշ երկու դյուրկրի ա ու ըսաց թը՝ էկեք իմ տապանս շինեցեք, աղջիկներս կուտամ ձեզի։ Նոյ Նահապետը ալայը մե աղջիկմ ուներ, հիմի իրեք մարդու խոստացավ, չյունքի դան կեներ թը՝ ջրհեղեղին իրեքն ա խեղտին կը։ Էղավ օր աս ուստերը տապանին գլոխը իրենց հըմար ա տեղ շինեցին ու աղատան։ Ալատան օրա՝ էկան Նոյ Նահապետին քովը՝ աղջկները ուզեցին։ Նոյը մոլըրավ մնաց, ունիր չունիր մե աղջիկմ ունիր՝ իրեք հոգու խոստըցեր էր, հիմի չիտեր վերին տար։

Մոլըրած օր պոըտիր կը՝ բիրտան տեսավ օր իրեն սիրան ու շունը աղջիկ դառան, ի՛սկ աղջկանը պես։ Վերուց ամեն մեկը մեկին տվեց։ Վախթմ անցավ՝ մե օրմ էլավ դնաց իրեն աղջիկներուն տես։ Գնաց մեկին քովը, հարցուց մարթուն թը՝ ի՞նչդ է աղջիկս։ Մարթը ըսաց. «Լա՛վ է, հըմը մե բանն է գեշ, ինչ օր խոսիմ կը՝ իշու պես կողը դեմ կուտա (չի լսե)»։ Նոյը հասկըցավ, օր ատիկ էշն է։ Գնաց մեկալին, անոր մարթին ա դանգատավ թը՝ շատ է, հըմը ինչ օր կըսեմ՝ շան պես չամչյուրմիշ կենե (կը հակառակի)»։ Նոյը հասկըցավ, օր ատիկա շունն է։ Գնաց մեկալին քովը՝ մարթը ոտքեն գլոխ շնորհակալ էղավ։ Մեդ իրեքին ջինս ա բաղմացան, հըմը սիրինն ու շանը դհա շատացան։ Հիմի չիտեմ՝ կարգվիմ, թե ապատ մնամ, կարգվիմ՝ վայ թե իշու յա շան ջնսեն ռատա գա։

Փեթակ

Հոբենալին (Հոբ երանելին) շատ հարուստ մարդ էր, օխթը տղա, աշխարքի դյուվլաթն ունիր։ Աստված ուզեց, օր ատոր հավատը փորձե, ատոր հմար դյուվլաթը, տղաքը ձեռքեն խլեց, իրան ա հիվնդցուց։ Ատիկ անպես հիվնդցավ օր՝ օրթունքը էլավ, ջանը կերավ։ Ատ վախթը ատիկ մեկ-մեկ կառներ օրթունքն ու դներ կը յարոցը վրան՝ կերե՛ք, կըսեր, կե՛ք։ Աստված աս փուճ մարմինս ձեզի հմար է ստեղծե։ Ատ օրթունք-

ներն ա ասում հրամանով փեթակ դառնային թռնելին կը, օր Հոբենալին հիշատակ ըլլեն[17]։

Մկներ և կատու

Մե օր՝ Մահմատը մեր Տեր Քրիստոսին կըսե կը, թը՝ գիտե՞ս, ես անքան զորավոր եմ, օր գավազանս օր գետնին զարնեմ, կաթ կը վազղե։ Քրիստոսն ա կըսե կը, թը՝ ես ա օր գավազանս քարին զարնեմ, ջուր կը բխե։

— Դուն ի՞նչ ես, օր ջուր բխեցնես,— կըսե Մահմատը։

— Գուշես, բաս բռնենք,— կըսե մեր Տերը։

Ասոնք բաս կը բռնեն։ Մահմատը թեզմ կերթա քանիմ տիկ կաթ լըլե կ'ու տանի նշանով տեղմ թաղե կը։ Ինչը գլի, խոզերը գուգան գետինը փորեն, տկները ծակեն կ'ու կաթը խմեն կը։ Քրիստոսն ու Մահմատը գուգան, օր իրենց զորքը փորձեն։ Մահմատը վերցնե կը գավազանն ու մեկ, էրկուս՝ զարնե կը թաղած տկերուն, հըմը կաթ չէ, ջուր ա չի վազղե, չյունքի խոզերը պատռեր խմեր էին։ Աատիզ մե քարմ գլի, Քրիստոսը, մեռնեմ սուրբ զորքին, գավազանը վերցնե զարնե կ'օրա ջուրը աղբրի պես բղխա կը։ Մահմատը ամոթուն կարմրի սեհնա կը, աա սհաթին պնչերեն երկու մուկ գըչնին։ Քրիստոսը աա օր տեսնի կը աղլուխը ցկե կու կըսե. «Օրհնա՛ծ, գնա բռնե գանիծած»։ Աս սհաթին աղլուխը կատու գըլլի, վազե Մահմատի բթեն ընկած մկները բռնե կը։ Մահմատը փոս փոշման դառնա կը ետ ու խոզերուն անիծե կը, իրեն հավատացողներուն ա պատվիրե կօր խոզի միս չուտեն։

Լու

Աատծու հրամանով օր Նոյը տապանը մտնի կը՝ մե քանիմ՝ օրեն գլի մե տեղմ ծակի ջուրը նես լցվի կը, Նոյը ինչով կալնե չի ըլլի, կենա ջուրը քանդե նես լըցվի կը։ Օձը դառնա ատոր կըսե կը թը՝ ադատ չէ, դու չես կրնը աա ծակը կալնե, ի՞նչ կուտաս օր ես կալնեմ։ Նոյը թը՝ ի՞նչ կուզես։

— Ակյար կալնեցի,— կըսե կը օձը,— Թող օր ջանես քիչմ արուն խմեմ։

---

17 Կարծամի երեսփոխ Սարգիս Հավհաննիսյանը մեզը համարելով Հովը Երանելու հիշատակը ծախել, 12 տարուց ի վեր յոր փեթակների մոմը նվիրում է եկեղեցուն։ Այսպես անում են և ուրիշներ։

Նոյի հոգուն կհասնի, տեսնի կ'օր չի ըլլի, օձը գուլուլի բաթաթ կ'ուռի կ'ու կալնե կը ծակը։ Քանիմ՝ օրեն եաև ջուրն օր քիչմ կիջնի, օձը գելլե ծակեն, կէրթա կը Նոյի քովը, կըսե՝ տեսա՞ր, ծակը կալնեցի, ալ Բող օր չանեա ատուն խմեմ։ «Լավ, կըսե Նոյ նահապետը, քիչմ կեցի»։ Աս կըսե կ'ու կերթա մե ղոճա կրակմ վառե կը բռնե աս օձին ցկե կը բոցերուն մեջը։ Օձը վառի՝ մոխիր կուռի կը։ Մոխիր օր կուռի կը, Նոյ նահապետը մոխիրը լըլե կը բուռը փչե կ'ու կըսե կը ըը՝ տիա՛ ատունս խմել կուգեիր՝ լու դառի, խմե։ Օսահաթ, աս մոխրեն պզտի, պզտի կարմիր ճիճուներ գըլլին, լցվին կը Նոյի վրան։

Լոխմանի

Ա.

Վախթովմ թագավորին մեկը գուզե կ'օր ջրերու միջի կենդանիներեն ա խարճ առնե։ Բերի ձեթ լըլե կը ծովերուն էրեսն ու կրակ կուտա կը։ Ջրին միջի ձկները, գազանները կրակին չեն դիմանա, գելլեն ջրին էրեսը, թագավորին կըսեն կը ըը մեզը չե՞նը, օր բոբոլական կրակը ցկեր, մեզի վառնս կը։ Անա կըսե կը ըը՝ բերեք խարճ ալեք, ձեզի վնասմ՝ ա չտամ։ Ատոնք բերին աս թագավորին մե պզտլի բանմ՝ կուտան ու կըսեն կը ըը՝ խմորի հետ շաղվե, լավմ՝ էփե ու կե, քեզի հերիք է։ Թագավորը կառնե աս պզտըլի բանը, կուտա կը ֆռնջուն, օր լոածին պես խմորին մեջ շաղվե, լավմ էփե բերե իրեն, համա կըսե կը ըը՝ բակար վառեր ես՝ գլոխտ գարնել կուտամ։

Ֆռնջին կառնե, դողդողալեն շաղվե, բուլուճըմ կը լինե, ցկե կը ֆուռը է՛, չիտես, օր չարը դողդոջած բանին գլխուն կայնած է, աս բուլուճը վառի մոխիր կուռի կը։ Ֆռնջին բանա ֆուռը կաշե կ'օր բուլուճը մոխիր է կտոե. դողը գըլնի սիրտը, հըմը աս սըհաթին մե ախքատմ ձեռըը էրկնցնե կտորմ՝ հաց գուզե կը. ֆռնջին հանե կը աս բուլուճն ու պարտկելու համար կուտա կը ախքատին, ու մե ուրիշմ շինե կը թագավորի համար։ Ախքատը օխթը օր հաց կերած չըլլի, հարամու պես ցկե կը բերանը աս բուլուճը ու կուլ կուտա, մեամ քիչմ կերթա, կաշե օր ծառները, խոտերը, ծաղիկները բիտտուն խոսին կը. անմեքը կըսեն կը ըը՝ ես աս ցավը դեղն եմ, ես ան չարայի մյահլամն եմ։ «Ծո, աս լավ էղավ,— կըսե կը ազբատը,— հեքիմութենեն ա լավ բան, ինչի՞ հեքիմութեն չեմ էնե՞ օր»։ Արըզը պաշտայի կը հեքիմութենը, ինչ հիվնդի օր կերթա՝ ատոթ չէ օր չաղչնե։ Ատոր անունը սաղ աշխարքը բռնե կը ու բիտտուն հիվընդները լոխմանի կըսեն, վառին կը։

Վախթոմ՝ երեք ընկեր զբոսնին ճամփա, օր էրթան զարիպ էրկիր՝ փարա վաստակեն։ Կէրթան, կէրթան, մեմա ճամփա մե ֆորմ՝ ռասա դուգա, կաշեն օր մեջը լիբը անուշ մեղր է։ «Աս լավ բախտերս բերից. աստից ա խերով բան,— կըսեն,— արեք էրթանք ձի, թուլուխ բերենք մեղրը կրենք բազար, ծախենք»։ Կէրթան էրկու ձի, բանիմ՝ հատ ա թուլուխ կառնեն դուգան կը։ Առոնցեն պղտիկը մտնի կը ֆորը, թուլուխները լեի կը, մեկալ էրկուսն ա ձիանքը բառնած, տանին քաղաք ծախեն կը։ Առոնք օրը էրկու ժամ դառնան կը, աշխարքին մեղրը տանին ծախեն, էրկու ձիաբեռ փարա թուի կէնեն կը։ Մեղրի վերջն օր առնելով գըլլին՝ աս էրկու ընկերներուը մյուշաֆարա կէնեն կը իր՝ աս լոչդրն ի՞նչ է, օր մեղի բարարար փայ տանք, արի առոր ըոզնենք ֆորի մեջն ու աս մե ձիաբեռը ես առնեմ, մեկալը դուն։ Եփ օր մեղրը պարպի կը, ասոնք ֆորի միջի ընկերոջը կըսեն կը իր՝ գլոխ չարեն տես, մենք քեզի նա փայ կուտանք, նա ֆորեն հանենք կը։ Աս տղան գուլա, ազալե կը իր՝ ինձի ֆորեն հանեցեք, ձեր փայը ձեզի ըլլի, պահքը չէ, հըմը ընկերներուը օրալի չեն ըլլի, դոճա քարմ՝ գլորեն գնեն կը ֆորին բերանն ու ձիանքը քշեն կէրթան կը տուն, բազրկանութեն կէնեն։ Ֆորին մեջը մնացողի սեֆիլ բնտանին գիմանա, օր իրեն մարդուն արխատաշներըը էկեր են, գելլե կէրթա կը քովերն ու իրեն մարդեն խապարմ՝ կը հարցնե։ Անոնք ա կըսեն կը իր՝ հարամիք վրա թափան, մարդուտ սըպանեցին։ Աս կնիկը շատ կուլա, էրերա կը, հըմը ի՞նչ պիտի էնե։

Հիմի խապարը ֆորին մեջը մնացողեն տանք։ Աս մարդը ֆորին մեջը օրմ էրկուս մնա կը, մեմ՝ ա մե դուռմ՝ կը նշմարե, բանա նե կը մտնի։ Նե կը մտնի, ածմըծելով մե ուրիշ դուռմ ա գոնի կը աս ու բանա նե մտնի կը, կաշե օր մե լուսմ՝ կերևա, կէրթա ատ դուռն ա օր բանա կը՝ տեսնի կօր ի՞նչ տեսնի, մե չալիր չիման տեղմ օձերը վժըռատան կը։ Մե հալևորմ ա կեսը օձ, կեսը մարդ, ատոնց մեջը նստեր է։ Ասիկ ատոնց տեսնի կօրա՝ զարդնատի կը, հալևորը կըսե կը իր. «Մի վախենա, առաջ արի, ինծեն բեզի վնաս չի հասնի»։ Տղան չի կրնա տեղեն շարժի։ «Առաջ արի՛,— կըսե ատ հալևորը,— օր մ'իսե օձերուն թագավորն Շահմար օձն է էզած էղե։ Առաջ արի, օձերուն գլիները կոխե արի, բան չեն էնե քեզի»։ Տղան սիրտ կէնե՝ քիչմ առաջ կէրթա՝ հալևորը ձեռքեն քաշե՝ քովը նստեցնե կը։ Հիմի ինչդ օր քու հրամանդդ ինծեն խապար չե՞ս առնե մեր բաներեն՝ անպես ա ատ հալևորը ատորեն խապար կառնե կը, իր իրենց աշխարքը ինչ գըլլի, չիլլի։ Օխթը տարի ատ տղան ատ հալևորին քովը մնա կը։ Ատոր սիրտն օր ինչ ուզե՝ օձերուն կըսե՝ կէրթան օսահաթ

քերեն կը։ Օխտը տարին օր բըմբըմի կը՝ աս տղան յալվար գըչնի թագավորին ըր՝ ինձի լուս աշխար հանի։ «Հանեմ հըմը, կըսե թագավորը, ընծեն բեզի վնաս չըհասամ՝ վայ թե քեզնեն ընծի վնաս հասնի»։

— Չէ՛,— կըսե կը տղան,— հեչ ատպես մարքի մի էրթա, ադաթ չէ օր քեզի մե վնասմ՝ հասնի ինծեն։

«Լավ,— կըսե կը թագավորը,— քեզի լուս աշխարք հանեմ կը, հըմը իմ հուսյաթս աս ըլլի՝ նա դայֆախանա մանիս, նա բաղնիք էրթաս»։ Տղան խոսք կուտա կը։ Թագավորը կանչե կը մե ածդարե օձմ՝ ու կըսե կը ըր՝ ասոր լուս աշխարք պիտի հանես, թակար սաղսալամաթ չհանեցիր՝ քեզի լիմա լիմա կտրեմ կը։ Տղան գելլե նստի կը օձի վրան, օձը հավալամիշ ղլլի, մեջքը կուտա ֆորի բերնի քարին, օր ետ շրջե՝ տղան գլորի կը վար, օձը օսհաթ պոչը փաթթե կը տղի մեջքն ու թապլե կը ֆորբեն դուս։ Տղան գելլե դուս՝ էսաին էնթին կաշե, գալած ճամփան գոնի, բոնե կէրթա։ Կէրթա՝ ճամփեն մարդիկ ռաստ գուգան կը, կաշեն ատոր, զարմանան մնան կը. ատիկ առանց հալավ, մազերը բզղկած, ըռանգը սև էր։

Մոտենան հարցնեն կը, ը՝ վով է, վով է, կըսե՝ հեչ, խեղճ մարդմ՝ եմ, հարամիքը թափան սոյմիշ էրին (կողոպտել) ինծի։ Ատոնք մեխքընան, հալավ, հաց կուտան կը։ Ատիկ կէրթա քաղաք, ասոնն անոնն ման գուգա, մեմա իրեն արխատաշներեն մեքանիսը ռաստ գուգան կը։

— Ծ՛ո, դու մեռած պիտի ըլլեիր, աս ինչղ ֆոս,— կըսեն։ Ասիկ քանիմ սուտ մոգոնե՝ ասոնց խափե կը։ Աս ընկերները ուրախութեննեբեն ասոր քաշըշեն տանին գայֆան չաշկամ էրկուս գայփան խմցնեն կը, հետ ա կառնեն օր բաղնիք տանեն, լողացընեն։ Ասիկ շատ յալվար գըչնի (կազաչե), որ իրեն բաղնիք չտանին, չի ըլլի, քաշեն, զոռով նես ցկեն կը։

Աս տղան օր հանվի կը, համամշին ատոր կոնկի վրա մե նշանմ տեսնի կը, գուգա ատոր յախեցին բոնե կը ը՝ դուն օձերուն թագավորին տեղը գիտես, յա ինծի տանիս պտի քովը, յա գլոխտ զարնել կուտամ, չյունքի օր ես թաքավոր եմ ու աս քառսուն տարի է աստեղ համամշութեն կանեմ, քեզի գտնելու համար։ Տղան երթմնա, կրակը գըչնի ը՝ ես ատ՝ օձեն իսպար չեմ, հըմը թագավորի ձեռքեն չի խըլըսի։ Կաշե օր չարա չկա, գլոխը պիտի զարնեն, հոգու կսկծուն առաջ գըչնի, կէրթա հորի գլոխը կը կայնի։ Թագավորը հանե կը գիրքը կարդա կը, կարթա կարթա, մեմ՝ ա օձը ֆշշալեն դուս գելլի, տեսնի կ՝օր տղան բերնկավար ընկած դուլա կը, կըսե. «Դու ինծի գեշութեն էրիր, ըմը ես քեզի սլի լավութեն կէնեմ, մեջտեղի ստաքանը չմնաս»։ Թագավորը օձը բոնե իրեք

կատր կէնէ, լըլէ կը իրեր ստաքանի մէջ, փրփրի կը։ Թաքավոր կըսէ կը թը՝ արի խմէ։ Տղան զարութենովմ ստաքաննէրը փոխէ կը, ըրաղինը մէջտեղը դնէ կը։ Եաև մէջտեղինը վերցնէ խմէ կը։ Թաքավորն ա ըրաղինը խմէ կը, տեղն ու տեղը հոգին կուտա չորնա կը։ Տղան գէլլէ գուգա կը տուն։ Ճամփան կաշէ օր բիտտուն ծառներր, խոտերը խոսին կը ու կըսեն թը իրենք ինչ ցավի դեղ են։ Արթղ աաիկ գլլի Լոխմանի հեքիմ։

Լոխմանու աշկերտներր

Լոխմանին էրկու աշկերտ ուներ, մեկի անունն էր Ֆայլատաի, մեկալինը՝ Ալֆատին։ Աատոնց մե բանմ չէր սորվցնէ, հըմը աատոնք շատ սատանա էին, մե պզտի ծակմ՝ էին էրե, ու անաից կաշնին, թը ինչ դեղ կենե հիվընդներուն։

Մե օրմ ա մե հիվանդմ բերեն կը. Լոխմանին աասր գլխուն խուփը վերցնէ կաշ օր մե գյանա ճիճում կպեր է ուղեղին։ Լոխմանին մոլըրի կը թը ինչղ վերցնէ ճիճուն, թե քաշե հանե, ան ա ուղեղը կը քաշե՝ մարդը մեռնի կը։ Աշկերտներն օր ծակեն կաշեն ալ չեն համբերե, ճվան կը թը՝ ճաղմ տաքցու մէջքին դի, ճանկերը բանա կը, ու իրենք թողնեն փախչին կը։ Մեկը կերթա Ֆրանգստան, մեկալը՝ Ինկլիզ։ Ըշտը աասր համար է օր հիմի աատ էրկու էլլիկը աատես խելացի են։

Լոխմանու մաճը

Լոխմանին արթղ ծերացեր էր, դիտեր օր թնդմ պիտի մեռնի, գնաց սարերն ընկավ, ծաղիկներ, խոտեր քաղեց բերեց դեղ շինեց, ուվեց իրեն աշկերտին ու բատց թը՝ եփ օր ես հոգու հետ գլլիմ, լից բերանս, օր գյանըրնամ։ Էղավ օր Լոխմանին հիվընդցավ, գողինք ընկավ։ Աշկերտը քովը կացներ էր՝ դեղը ձեռքը։ Եփ օր Լոխմանին հոգու հետ էղավ՝ աշկերտը էրավ թը դեղը բերանը լլե՝ սատանան զարկեց ձեռքին՝ թափեց դեղը։ Աշկերտը շատ կսիծաց, հըմը ի՞նչ էնե, ուստան բան չէր խրատ ուվե, օր ինքը նորեն շիներ, ուստին սաղցներ։ Տեյ մ՚օր հիմա ա Լոխմանին նա սաղ է, նա մեռած. պատկած ճվա կը՝ «լից գա, լից գա»։

ՊԱՏՄԱԿԱՆ

Պապ և մեծն Ներսես

Հայոց Պապ թագավորը մե մանչն սիրե կը եղե. Ներսես կաթողիկոսին կըսե կը թը՝ արի, ինծի աս տղին հետ պսակե։ Ներսեսն ա անիծե կը

ու կըսե կը թե՝ քու էլլիկդ օսմանցոց ձեռքը եթմիշ օխթը տարի գերի մնա, քու մարմինտ ա հողը չընդունե, տեյ մ'օր վերջին դատաստանը, ևի իրար հետ էրթանք դատաստան։ Ատոր համար ա Պապի մարմինը հեչ չի հանգստի գերեզմանի մեջ։

Անցած վախթերը մեկմ՝ երուսաղեմ կէրթա համի դլի։ Ետ օր դառնա կը, Քամաղ քաղաքը գիմանա օր Սալանինք ջամու մեջ մե կուպիմ է դրած։ Կըսե՝ հըլը էրթամ տեսնեմ ատ ո՞ւմ ճանդակն է։ Կէրթա ջամին, իրեն թուրք ցուց կուտա, տասը ղուռուշ կուտա օր իրեն ցըցընեն։ Հարուր տարեկան մե էխտյարմ ասոր գողտուց կառնե տանի կը կուպու քովը. կաշե չորցած օսկռտանքը ցցված մարդմ պառկած է կուպու մեջ, հարցնե կը՝ աս վեվ պիտի ըլլի, ատ էխտյարը կըսե թը՝ ղոչին փաթիշահի, յա աքսի քիմսալարդան սըր (ոչխրի թագավորը կամ հին մարդկանցից մինն է)։ Ըշտը ատիկ Պապն է, դատաստնի օրը պիտի վեր ելլե, Ներսեսի հետ էրթա դատաստան[18]։

Պապի անիծվիլը

Հայոց Պապ թագավորը մե տղամ սիրե կէղե, մե օրմ՝ ատոր աղջկա շոր հագցնե տանի կը մե վանքմ հետը պսակվի կը։ Ներսես կաթուղիկոսն օր գիմանա, կըսե կը վանքին թը՝ «Հըլը տերտերը մարթ էր, չիմացավ պսակեց, դու ինչի՞ չիմացար, տակն ու վրա ըլլիս»։

Ան սըհաթին վանքը տակ ու վրա գըլլի ու տեյ մ'օր հիմի ա ատպես մնա կը։ Պապին ա անիծե կը սև թազի դառնա կը, տեյ մ'օր հիմի ա անիկ շոե՝ թուրքերը ապտեն կենեն կը։

Կար–ֆար

Վախթովմ Մուրճախեթու գյուղը լաչերը ընկնին կը հարսիմ էտեվին օր բռնեն։ Աս հարսը կաշե օր չարա չկա ատ շներուն ձեռքեն խլըսելու, խնդուե կը ատածմեն, օր իրեն քար դարձնե ու ազատե ատ

18 «Եւ էր Թագաւորն Պապ ի պղծութեան բաւական, երբեմն այլոց էգ եղեալ տայր պինդն ի խառնակութիւն. եւ երբեմն զայլս էգ արարեալ, զարուսն խառնակեալ պղծէր... Այլ սուրբն Ներսէս եպիսկոպոսապետն Հայոց Հանապազօր ընդդիմացեալ թագաւորին Պապայ, կշտամբէր եւ հանդիմանէր մեծաւ վկայութեամբ հանդիմանութեամբ և վասն չարեաց նորա բազմաց ոչ համարձակէր նմա դնեամս եկեղեցւոյն կոխել եւ ոչ մտանել նմա ի ներքս... Դնէր առաջի նորա վկայութիւնս ի պրոց, առ արկանելով յավիտենական դատաստանացն պատժոյն՝ դալ ի զգաստութիւն եւ ի լաւանալ... (Փավստոս Բյուզանդ, Պատմութիւն Հայոց, Վենետիկ, 1832, դպրութիւն ե, Գլ. ԻԲ և ԻԳ)։

անօրէններու ձեռքին։ Աստված լըսե կը ատոր խնդիրքը ու քար դարձնե կը։ Ասիկ օր կես քար դառնա կը, ազաչե կը աստծուն՝ օր իրեն զորութիւն տա օր վեվոր իրեն կաթ չունենա, գա իրմեն խնդրե՝ ինքը տա։ Աստված կատարե կը ատոր խնդիրքը, տեյմ՝ օր հիմի ա կաթ չունեցողները կերթան կը ատ սուրբին ոտքը ուխտ, ու ես իմ աչքերովս տեսիր եմ օր, մեռնեմ սուրբ զորութեանը, շատ շատերին տվեր է։ Տյա մեր Շողերը ատոր չրաղը չէ՞. ծծերը չոր-չորցեր էր, էկավ թը չը՝ աղբրի պես բղխաց[19]։

Մուղրուքու սուրբը

Վախթովը՝ էրկու սուրբ ախպար գլին կը. ատոնք էրկուսն ա կերթան Մուղրուքու քովը էրկու խայալըխի մեջ ճգնին կը։ Մե գատկվան օրմ՝ ատ էրկու խայալըխները իրարու մոտենան կպչին կը ու ատ էրկու ճգնավորներուն իրենց մեջը կառնեն։ Տի օր հիմի ատ ճգնավորները ատ խայալըխին մեջ կենան կը. ամեն գատկի օր վեվ օր էրթա ատ սուրբերին դուռը՝ կարմիր հավկըթի կպչըներ տեսնի կը, օր սուրբերը կերեր դուս են ցկե։ Մեմ՝ ա իմանա կը ատ սուրբերուն անուշ ձենը՝ օր աստված փառաբանեն կը։ Ատ խայալըխին քովը մե աղբուրմ՝ կա, վեվ օր ջերմուտի, կերթա ատտեղ լողնա՝ սաղնա կը։

Կուռնապերու Ս. Գրիգոր ավետարանը

Վախթով օխթն ախպար գլին։ Ատոնցեն ճիպ պզտիկի անունը Գրիգոր գլի. մե օրմ՝ ատիկ աղբրտոցը արտը հաց տարած վախթը ճամփան քունը տանի, դըչնի կը։ Աղբըրտիքը հեռվեն նշմարին կը, վրան խնդրելու համար գուգան հապիկեցեն կամացմ՝ հանեն ի՛ու տեղը քար, փատ, խոտ լըլեն կը։ Գրիգորը զարթնի, կառնե հապիկեն կերթա աղբրտոցը քովը։ Ախպրտիքը զախլամա դնելով բանան կը հապիկեն, կաշեն օր իրանց գողցած կերակուրները բիտտուն ա մեջն են, զարմանան մնան կը։ Միտը կէնեն օր իրենց ատ ախպարը սուրբ է, օր պզտիկուց ատպես հրաշքներ ցըցնե կը, գըչնին ոտվիքը, երկրպաքեն կը։ Արթիւ Գրիգորը ձեռք վերց-

---

19 Այս ավանդությունը պատմվում է Մոնրճախենի գերեզմանոցում կանգնած մի քարի մասին, որ 5 արշին երկարություն, 1,5 արշին լայնություն և 1 արշին հաստություն ունի։ Սորա արևմուտք դարձած երեսի վրա նկատելի է՝ մի կնոջ պատկեր։ Մինչև այսօր կաթ չունեցող կանայք գալիս են այդտեղ ուխտ, երեխան դնում են Կաթրարի առջև, քարի պատկերի վրա քսում են կարագ յուղ, և իրենք քարի առաջ չորած աղոթում, որ սուրբը երեխայի յացից գալով՝ շատացնե մոր կաթը։ Ուխտը ընդունելի է լինում, երբ «սուրբի քրտինքը»՝ կարագը հալվում է։

նե կը աշխրհքեն, կերթա մեշան ճգնի կը, ու ադ ճգնութեան վախթը գրե կը կուտնալեթու Ս. Գրիգոր ավետարանը։

Վարզիու վանքին եսիրները

Վարզիու շեն վախըթը՝ լեկզին գուգա զարնե եսիր տանի, ասոր անոր ծախե կը։ Մե աղջիկմ՝ ու տղամ՝ ա ծախե կը մե մարդում։ Մե օրմ՝ ձին խածե աս մանչուն ումուղը, ասիկ անիծե կը ատոր թը՝ վարզիու խշմին ռասա դաս բիլաքիմ։ Աղջիկը հարցնե կը թը՝ դուն ի՞նչ գիտես Վարզիան։ Անա թը՝ ես անտից եմ, ֆիլան մարդուն տղան։ Դուն վերդից ես։ Աղջիկն ա կըսե թը՝ ես ա վարդից եմ, ֆիլանին աղջիկը։ Ջըսես, կըսե տղան, դուն իմ նշանածս ես, միտքդ է օր ֆիլան օրը մեզի նշնեցին, օր էրկու օր չանցավ՝ լեկզին եկավ թալնեց, ինծի ա եսիր տարավ։ Ասոնք իրար ճանչեն կը, ըմը վախերուն ձեն չըն կրնը հանե։ Խոսք կչնեն օր իրիկվան տեսնվին։ Իրիկուն գլխի, մարդ-մուրթ կը քաշվի, ասոնք գելլեն դուռը, ծառին տակը կայնեն ազմ ղրցեն կը։ Դիշեր օր կանցնի, գելլեն սելին վրա «ա՜խ, կըսեն, էրուց Վարզիու դերին է, էրնեկ անոր, օր Վարզիա գլխի» ու պառկին քնեն կը։ Առավոտուն աչքերը բանան կ'օր Վարզիու մեջն են, ալի ան ծառին տակը, ան սելին վրա պառկած։ Տեյ մ'օր հիմի ա, տիրացու չան, ան ծառը կա, զամաթ ըլլի՝ էրթաս տեսնես կը։ Սկզն ա ժամին բակը՝ սմուկին քաշած է[20]։

Ս. Արիստակեսի վարած ակոսները

Ս. Արիստակեսն օր Նիկիա կէրթար, ճամփան ումմները խնդան կը վրան թը՝ ատա ի՞նչ է, օր հայերն իրենց վրա պատրիարք են էրե, ատիկ անճաղ լավ արա քշե։ Ասիկ ձեն չի հանե, կերթա մաճը ձեռը կառնե, դառըրնե եղները քշե կը ծովին մեջը էրկու ակոս բանա, դառնա գուգա կըսե կը թը՝ ատա ես գործեցի, էկեք դուք ա ցանեցեք։ Անոնք մեղա գուգան, ոտքը գըչնին։ Տեյմ՝ օր հիմի ա ան ակոսները էման կեցեր են։

Սաամբոլ էրիցոզներ կերթան տեսնին կը։

Սուրբ Արիստակեսը կերթա Նիկիա[21], կաշե օր ժողովը էրիր պրծեր են, կըսե. «Հեչ ի՞նչ էրիք»։

Թը՝ միսը, եղը, պանիրը պաս էրինք։ «Հայ վախ, կըսե Ս. Արիստա-

---

20 Պատմողները դյումյուրդեցի հայ գյուղացիք էին։ Նույնը կրկնեց և Վարզիու վրացի վանահայրը։

21 Ս. Արիստակեսը Նիկիո ժողովի մեջ։

կեսը, ես թեզ հասած ըլլեի, ցորեն հացըն ա պաս կէնեի։ Խեղճ դեղացիք օր գարի հացով տեյ իրիկուն դատին, արուն քրտինք մանին կը, քաղցեք պաս օրը ընչի պտի ցորեն հաց ուտեն»։

Հակոբ պատրիարք

Սուլթան Մահմուտի վախթերը թուրքերը հայերին շատ նեղություն կուտային. խեղճերը օր ու արև չունեին։ Մե օրմ սուլթան Մահմուտը կանչե Հակոբ պատրիարքին կըսե կը թը՝ մեղք է, քու էլլիկտ հերիք է նեղութենն քաշե, արի ձեռք քաշե, թը ձեր սուտ հավատը թողնեք մեր ճշմարիտ հավտին դառնաք կը, ես ֆարման կուտամ քու էլլիկիտ մալին ա չդիպչին։ Հակոբ պատրիարքն ա կըսե կը, թը՝ իմ էլլիկս անպես էլլիկմ է, օր նեղութենեն պրծնելու համար իրեն լուս հավատը չի ուրանա։ Հիմա օր գլուխս պարնես՝ ատպես թղթիմ տակ ձեռք չեմ քաշե։ Խաթրով չեք դառնա՝ զոռով դարձնեմ կը, կըսե սուլթանը։ Թուխտը քուկտ, իշխանութենը քուկտ, կըսե Հակոբ պատրիարքը, ի՞նչ կրնըմ ըսե։

Մեկալ օրը Սուլթանը հրամայե կ'օր Ամբաստանու մե քյահյան ձիմ թամքեն տանին ժամին դուռը ման ածեն ու ելլան, թը սուլթանի հրամանն է, վեր օր Մահմետի դնին դառնա՝ աս ձին, աղմ խալխնա ու փաշայութենն ստանա կը։ Տանին կը ձին ժամին դուռը պըտըտցընեն կը, գալող էրթցող դիմանա, կանցնի կէրթա. ժամվորն օր գելլե, ժամարար գհանան գելլե ժամեն դուս, տեսնի կը ձին՝ խելքը կէրթա. հըմը ֆարաջան մե կողմ ցկե կու վազվե հեծնի կը ձին։ Օսահաթ ասոր ալլահ ալլահով, տասվերկու մոլլայով տանին կը թագավորին, սյուննըթեն կը, փաշայութեն, աղամա խալխնա կուտան կը։

Սուլթանը կանչե կը Հակոբ պատրիարքին ու կըսե կը թը. տես, մե էյրաթի բանովմ քու ժամարար գհանատ դառուցի, արի վախթին ատրագրութենն ատու, վերջանա։

— Թագավոր ապռատտ, կըսե Հակոբ պատրիարքը, ներե, մե խոսք ըսեմ։ Դորթ է, ժամարար գըհանաս դառուցիր, հըմը՝ ատիկ թուրքի տղա գըլլի։

Սուլթանի հերսը գելլե, կըսե գնացեք հարցուցեք ատոր մորը, թը ատ տղան ո՞ւմեն է։

Կերթան գուգան օր ատոր մարը հինգ տարի առաջ վախճաներ է։

— Է՛, վնաս չունի, կըսե Հակոբ պատրիարքը, կաղաչեմ օր գահմատ քաշես դաս հետս, ես անոր հարցնեմ կը։

Սուլթանը հոժարի կը, Հակոբ պատրիարքը գգնատավորի կը, կերթան գերեզմնները, ատոր մոր գերեզմանը գտնին կը։ Հակոբ պատրիար-

քը ձեռքերը վերև բարձրըննեն, աղոթեն կ'ու կըսեն. «Աստծու անունով հրամայեմ կը քեզի, օր դուս էլլես ու ըսես թը աս գհանա տղան հոմե՞ն է»։

Մեմ ա բիրտան հինգ տարվա մեռածը գելլե դուս ու կըսե. «Մե ենիշարեցեմ է էղե աս տղաս, ու կենա կանցնի գետնի տակը»։

Սուլթանը աս օր տեսնի կը, շատ զարմանա կը, հըմը մոլլաները կըսեն կը, թը՝ աս հեչ դյողպայաճուբեն էր, ակար աւքան հրաշագործ է, էրկու շուն ղրկեմ, թող ուրիշ բան գաոցըննե։

Սուլթանը հրամայե կը՝ մե անդկիմ՝ մեջ էրկու լակոտ դնեն, գայիմ կողպեն, բերեն Հակոբ պատրիարքին։ Հակոբ պատրիարքը խաչակնքե կ'ու կըսե՝ տարեք։ Տանին կը. սուլթանը բանա կը, օր էրկու հատ կարմիր խնձոր, հավասի կատնե կուտե։ Մոլլեքը կըսեն. «Տեսա՞ր, Հակոբ պատրիարքը քեզի շան լակոտ ուտեցուց»։ «Լավ,— կըսե Սուլթանը,— դուբա էրեք, թող շան լակոտ էլի կերածօս»։

Թմբկաբերդի առումը

Թմբկաբերդի քրդերը պատմեցին ինձ, թե մի ժամանակ Թմբկաբերդում իշխում էր մի հայ իշխան։ Պարսից թագավորն եկել, երկար պաշարել է այս բերդը, սակայն չէ կարողացել առնել։ Իշխանի կինը սիրահարվել է պարսից շահի վրա և ծածուկ առել է նորա հաճույքունը՝ յուր հետ ամուսնանալու, նրե ինքը սպանե յուր ամուսնուն և բերդը հանձնե շահին։ Եվ իրը նա սպանել է ամուսնուն, հարբեցրել է զորքին և բերդի բանալիները ուղարկել շահին։ Շահն այսպիսով տիրել է բերդին և հարցրել է մատնիչ իշխանուհուն. «Ես իմ գեղեցիկ, թե՞ ամուսինդ»։ Եվ իրը սա պատասխանել է թե. «Ամուսինս գեղեցիկ էր», շահը հրամայել է կապել սորան ձիու ապիից և քաշ տալ մինչև մեռնելը, ասելով, թե. «Երե ամուսինդ շահից գեղեցիկ էր՝ ինչո՞ւ սպանեցիր»։

Օհան Օձնեցի

Ուռմներն օր թագավորութեն ունեին, հայերին շատ նեղութեն կուտային եղե. վարանաթաղ տախտակը ծակեին, անցնեին կը մարդոց գլոխն ու էրկու կողքը մեկ-մեկ մարդ նստած չարսունները պըտըտեին կ'եղե։ Ցորեն հացն ա հաղար ու մեկ նեղութենով գտնին կ'եղե։ Աս վախթները Ստամպոլու մեջը մե օրբևարի կնկանմ՝ էրկու տղան հիվանդ գլլին, գուլան կէրթրան, թը. «Մեզի կտրմ՝ ցորեն հաց տու՝ ուտենք»։ Մարը, ձունը գլխուն, բան չի ունենա տունն օր տանի ծախի ցորեն հացի տա, կէրթա ուռում դրկցներեն կտրմ՝ ցորեն հաց գուղե, թը.

«Աստծու սիրուն, տղաքս հիվանդ են, բարքերը ցորեն հաց գուզեն, հորեքուղ խերին կտորմ՝ ավեք տանիմ, բյալըխմ ուտեն, լավնան»։

Հեչ մեկմ՝ ա չի տա, քաշե քաշկռտե կը կնկանը. կտորմ՝ հացի հըմար գուզեն, օր հետը լակվըռթին։ Ատ խեղճ կնիկը լալեն էրերալեն գալե կէրթա Օհան Օձնեցուն քովը, ոտվիրը պըչնի, ըը. «Տղաքս հիվանդ պառկած՝ կտորմ՝ ցորեն հաց գուզեմ, չեն տա, գուզեն օր մե կտորմ՝ հացի համար լակվըռթին հետս. դու դիտես, օտքըտ եմ ընկե, մեղք են տղաքըս»։ Օհան Օձնեցին հարցնե կը փոքրավորին, ըը՝ դոլապը հեչ հաց ունի՞նք։

— Չէ՛,— կըսե փորրավորը,— ինչ օր կար քիչմ՝ առաջ հանեցի կերանք։

— Մեմ՝ ա աշե,— կըսե Օհան Օձնեցին։ Փոքրավորը բանա դոլապը կաշե, օր երեք հատ ղոճա Բոփխանա դրած է։ Զարմանքով վերցնե կուտա կնկանը։ Կինը շնորհակալ գալի կէրթա։

Օհան Օձնեցին ինքն իրեն կուտա-կառնե, կուտա-կառնե, դրկե ղլաճուն կանչե՝ մե լավ Բուրմ շինել կուտա։ Բուրը շինել կուտա՝ օրհնե կուղրկե կը Օսմանճըղին, ըը. «Իմ օրհնած Բուրս կապե մեջդդ, արի, իմ աղոթքովս աստված քեզի պիտի տա էրկրներըը»։ Օսմանճըղը կառնե Բուրը, կապե կը մեջքն ու նիզամը խառնե, առաջ գուգա Սուամպոլու վրա։ Խապարը գուգա Կոստանդին Թաքավորին, ատ վախըն ա Թաքավորը ծովի ղրաղը քեֆ էնելու գնացած էղե. ձուկ բռներ, լցեր Բալեն տապկեն կեղե։ Թագավորին օր իմաց կուտան, ըը Օսմանճըղը իրեն վրա գուգա, «էհ,— կըսե,— ակար աս ձուկը Բալեցեն գելլե ծովն զըչնի՝ Օսմանճըղն ա գուգա Պոլիսը կառնե»։ Ատ խոսքը կըսե-չըսե՝ մեյմ ա կիսաէփ ձուկը Բալեցեն Թախլա կուտա ու ընկնի կը ծովը։ Հըմը օսահաթ Թաքավորի Թաղաթը կտոր կը, ալ բանմ ա չի կրնա էնե։ Օսմանճըղը գուգա քաղաքը փաթթե կը, ասիկ կանչե կը իրեն մարդոցմեն մեկին, Բուրը կուտա անոր ու կըսե կ'օր իրեն գլուխը զարնե։ Անա զարկե սպանե կը Թաքավորին։ Օսմանճըղը գուգա քաղաքը կառնե նստի կը։ Օհան Օձնեցին դեմ կերթա, օրհնե կը ու մեր ազգը անոր ամանաթ ուլլա կուտա։ Մեմ ա խնդիրը կենե, օր մեր ազգեն սալգաթ չառնե։ Ան ա խոսք կուտա կը։ Հիմի մեր ազգը օսմանցոց քովը ամանաթ ուլլա է։

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

Ախալցխու բերդին շինուբենը

Վախտովը՝ եփ հայերը Ախալցխու բերդը շինեին կեղե՝ պատերը քանի վեր քաշեն կը՝ վար Թափին կը, հեչ չեն բռնե էղե։

Հարցնեն պիմանան օր թամալին մեջ սաղ-սաղ չորս աղջիկ պիտի դնեն օր պատերը կայնին։ Գըլնին հավար-հավար գուգան, օր աղջիկ դառնին ու սաղ-սաղ թամալին վրա կայնեցընեն՝ վրան պատ շարեն, հըմը՝ հիչ մե տեղմ ա չեն դառնի։ Խյուլասա մե կնիկմ իրեն քրոջ եթում աղջիկը բերն ծախե կը ատոնց։ Ատոնք ալ մե կոտմ օսկի կուտան ատ մորքուրին, կառնեն աղջիկը, տանին կայնեցնեն կը բերթի թամալը ու պատը շարեն կը։ Աղջիկը գուլա ու մորքուրին կըսե.

Շարեցի՜ն, մորքուր, շարեցի՜ն,
Տեյ մ'օր ծնկներս հասուցին։

Մորքուրը պատասխանե կը.

Թո՛ղ շարեն, Շողիկս, թո՛ղ շարեն,
Տեյ մ'օր մեչքդ հասցնեն։

Եփ օր տեյ մ'օր մեչքը շարեն կը՝ աղջիկը կենա կըսե.

Շարեցի՜ն, մորքուր, շարեցի՜ն,
Տեյ մ'օր մեչքս հասուցին։

Մորքուրը անթիեն կըսե.

Թո՛ղ շարեն, Շողիկս, թո՛ղ շարեն,
Տեյ մ'օր ծծերտ հասցընեն։

Աղջիկը նորեն պատասխան կուտա.

Շարեցի՜ն, մորքուր, շարեցի՜ն,
Տեյ մ'օր ծծերս հասուցին։

Թո՛ղ շարեն, Շողիկս, թո՛ղ շարեն
Տեյ մ'օր բուկտ հասցընեն։

Մորքուրն օր կըսե, տեյ մ'օր բուկը շարեն կ'ու, աղջիկը մեռնի կը։ Իշտե ատոր հըմար ալ է, օր բերթին պատերը տեյ մ'օր հիմի գուլան կը։

Բինգյոլ

Փաշին մեկը կերթա Բինգյոլու սարերը քեֆ էնելու։ Նյոքյարը դոխմ՝

մորթե, տանի կը աղբուրը լվալու, բիրտան դոխը սաղնա, թոի կը. վրայեն կաթկթած ջուրը մե-մե աղբուր դառնա, հազար ակե բղխա կը։ Ատոր հըմար ա Բինգյոլ կսվի։

Բինգյոլ

Մե քոռ աղջիկմ աղբորը հետ, Մշու ու էրզրումի միջի սարերն ինչ է, օչխար կարծե էղե։

Մե օրմ՝ աս աղջիկը քոռ-քոռընա կերթա մե աղբուրմ՝ դանի կը. լվացվի կը, աչքերը կը բացվի։ Աշխարհք իրան կուտան, աթալ-բաթալ գըյնի տուն։ Հարն ու մարը օր տեսնեն կը՝ մաթ մնան կը. հարցնեն կը թը. «Ըղչի, աս ինչդ էղավ օր աչքերուա լուսը բացվավ»։ Անա թը. «Սարին գլոխը աղբուրմ՝ կա, լվացվա, աչքերս բացվավ»։ Վազղեն կ'օր մեկ չէ՝ հազար աղբուր գլղլան կը. արթղ աս սարին անունը դնեն կը Բինգյոլ։

Վարգիու շինվիլը

Վախտովը՝ Վանսգոմի վանքին մեջը մե ճգնավորմ՝ էղե։ Աս վախթերն ա աճմեն շահին աղջիկը հիվանդ պլի էղե, ինչքան դեղ, մյահլամ կենե՝ չարա չի կրնը դանի։ Ծալճիներուն աշել կուտա, գիմանա կ'օր սալթ Վանսգոմի ճգնավորը կրնը իրեն լալցնե։ Աս աղջիկը աղաչե կը հորը՝ օր յա բերել տա աս ճգնավորին, յա իրեն դրկե քովը, հըմը շահը հեչ չի հոժարի։ Հե՞չ ատաթ է, օր ճգնավորմ՝ շահիմ աղջիկա դեղ էնե։ Աս աղջկա ցավն օր շատ դոռե կը՝ հոգու կսկծուն, գողտուկ կանչե կը մե չարվատարմ՝ ու կըսե կ'օր իրեն տանի Վանսգոմ։ Չարվատարը մոլըրի մնա կը՝ տանի վայ է, չըտանի՝ վայ է։ Տանի՝ շահը գլոխը կտռել կուտա, չտանի՝ աղջիկը։ Խյուլատա էրկու օրմ՝ իրին գուշե՝ օր էրթա պատրաստութեն տեսնի. իզը Թողը կառնի փախչի կը։ Ճամփան զաթրներուն մեջ ջարթըմ գըյնի՝ բիտտուն կը ջարդի։ Ասիկ հասկանա կ'օր աստուծու ցաստմեն էր՝ դառնա կերթա շահին աղջկանը կառնե, գիշերանց փախցնի կը մեր գեղը[22]։ Աղջիկը տերտերանց վերի կալը չատր կը գարնե, մարդ կը ղրկե Վանեցգոմ ճգնավորին՝ օր դա իրեն լալցընե։ Ճգնավորը խա-

22 Պատմողը դյումրեցի մի հայ գյուղացի էր, որ ինձ առաջնորդեց Վանեցգոմ, Թմբուկ և Վարդիա։

Միևնույն ավանդությունը ինձ պատմեցին և նորա համագյուղացիներից։ Վարդիայի, Վանեցգոմի նշանավոր վանքերը որ ամբողջովին փորված են ժայռերի մեջ, նույնպես և Թմբուկի նշանավոր 7 բլուրների վրա շինված բերդը նկարագրված կը լինի գրքիս Բ մասում։

պար կենե կը, թը իմ դեղս մկրտութիւնն է, ակար գուզե լավնալ, թող գա մկրտվի։ Ասիկ կերթա մկրտվի կը, ու ինչչոր օձը շապիքը վար կը ցկե՝ ան ալ հիվանդութիւնը ցկե լավնա կը։ Լավ-լավնա կ'օրա կերթա Թմբուկ բերիը կենա կը։

Մե օրմ՝ աս աղջիկը թևը կոտռած լակլակըմ՝ գոնի կը, բերե թևը կապե լավցնե, թողնե կը։ Մեկ ալ ատրին աս լակլակը իրեք ճաղ բերանը գուգա դնե կը աս աղջկան ծնկին։ Աղջիկը անպես զան կենե կը թը՝ լակլակը գուզե բսե, թը դուն մարթ ես, դուն գուլպաղ գործե, ճգնելը քու բանըա չէ։ Սիրտը շատ ցավի կը, սրտին կառնե. ատա իմ լավութանս դեմն է կրսե։ Մեմ՝ ա լակլակը ճաղերը կառնե ցկե կը տաքցված կաթերուն մեջ, օսահաթ կաթերուն մեկը օսկի, մեկն ա արծաթ, մեկն ա էրկաթ կոռի կը։ Աղջիկը ուրախնա՝ գուգա կաշե կ'օր ճաղերը կենա էրեսը կեցեր են, վերցնե նորեն ուրիշ կաթերու մեջ ցկե կը, անոնք ա օսկի, արծաթ, էրկաթ կառնե կը։ Թեզմ սյուրում օշխար կառնե ու կսկսե հարստութիւն դիզել։ Թմբուկ բերիը թագադան շինե, շենցրնե կը, անոից ա կերթա վարդիու վանըը շինել կուտա։ Իրեն զոնախանան օր շինեն, պրծնին կը՝ հրամայե կ'օր փողրանքներ դնեն իրեն զոնախանեցեն տեյ մ'օր օշխար արծելու տեղը, օր անոից կաթը լըլեն՝ գա ինքը օսկի ու արծաթ շինե, Վարդիու մատուռներն ու օդանները կառել տա։

Ջոպճի կարմուճը

Վախտովը մե չոպանմ՝ Քոփրիքով գեղը Հննար սարի վրան Հննար սրբին դերեզմնին քովերը քհհին ոչխարները կարծեր։ Ասիկ անպես աստվածավախ մարթ էր օր՝ հեչ մե բանմ՝ չէր էնե, տեյմ՝ օր ս. Հակոբա անունը կտար։ Մե օրմ՝ ալի ս. Հակոբա անունը հիշե կ'ու մե բաղչիմ ղըրաղ առվիմ կողք գըյնի խոտերուն վրա քնի կը։ Ս. Հակոբը գուգա ատոր հալվները փոխե ու վերցնե տանի Հաբաշի Շամշի քաղաքի թագավորին բաղչին ղրաղը խոտերուն վրա դնե կը։ Ատ թագավորին մեկուճար աղջիկն ա, օր հեչ դուս չէր էլե, աշխարքի անունն ա չէր ուզե տա, ատ օրը գուգա բաղչան ժուռ գալու։ Գուգա մտնի կը բախչան[23], տեսնի կը հազար ու մեկ թավուր ծաղիկներ հոտով աշխարք լցեր են, մեյլի ծառները կարմիր ու դեղին են, հավքերն ա աս ծառեն ան ծառը թռնելով անպես անուշ կանչեն կոր, մարդ նա՛ ուտե, նա՛ խմե, կայնի ատոնց սեյր էնե, կանչե աստիեն ջրերը գոչգոչալեն կէրթան, բարակ քամին ա օր չի փչե,

23 Այդու նկարագրությունը պատմողինն է, որ կարծախցի մի գյուղացի է։

գիտես թը՝ հոգուտ թեչերուն կը դիպչի։ Աս աղջիկը աստին անթին ժուռ գալեն գուգա չափսին քովը, կաշե օր դուռը մե տղամ է պառկե, մե առնավուտմ, էրեսը լսի մեջ կորեր է։ Ասիկ կաշե, կաշե՝ չի կշտանա, ջրի ճամբեցեն գելլե դուս գուգա քովը, հանե կը աղլուխն ու կուտա իրեն քառասուն քոծերեն չորսին՝ օր բռնեն էրեսին, արևը չը նեղեցընե։ Ինքն ա կայնի կը քովն ու սեյր կենե թե ատիկ ինչղ անուշ քնի կը։ Բիրտան տղան ետ զարթի կը, տեսնի կը աս աղջկան, հրեշտակ ղան կենե, ետ-ետ կը քաշվի, ատիկ բռնե կը ձեռքեն, տանե կը հոր քովը, կըսե.

— Հայրի՛կ, դու գուղեիր, օր ինձի կարգես, ահա ես իմ նշանածս գտեր եմ. գըլլի ասէ, չ՚իլլի աս է։

Թագավորը աս տղին հարց ու փորձ կենե, բանմ՚ չի հասկնա, կըսե. «Աղջի, վեվ գիտե ասիկ ինս է, ջինս է, մեր մարդիքը խոմ վարդին անցնե։

— Չէ՛,— կըսե աղջիկը,— աստր չեք տա՝ ես ընծի սըպանեմ կը։

Աղջիկն օր ասպես քյասա կապե կտռե կը՝ թագավոր ալ ձեն չի հանե, օխթը գիշեր հարսնիք կենե՝ աստնց պռակե կը։

Ջոպանը դառնա կը թագավորի փեսա, ինքն իրան կորցընե կը, ալ նա՛ մար միտքը կը փերե, նա՛ իրենց գեղը, նա՛ իրեն ոչխարները, ս. Հակոբին բիլա մոռնա կը. կուտե, խմե, քեֆ կէնե։

Ս. Հակոբի սրտին դժար գուգա օր իրեն մոռցավ։ Մե գիշերմ՚ աս չոպանը չի հանդստի, դառնա կը աս կողքին, դառնա կը ան կողքին, կընիկը կըսե կը թը՝ ըլլի օր շապիքդ կոշտ է, անտի չես հանդստի, առ իմ շապիքս հագի։ Կառնե հագնի կը, բունը տանի կը։ Մեմ՚ ա առավոտուն աչքեր բանա կ՚օր օրը ցերեկ է էղե, ինքն ա իրենց սարը, քեֆին ոչխարներուն քով, իրեն ավալբվա չոպնի շորերով պառկած է։ Աչքերը սրբե կաշե, սալթ շապիկը իրենը չէ, մոլբրի մնա կը, կըսե թը՝ էրազ էր, աս շապիքն ի՞նչ է, թը զորթ էր, աս շորերն ի՞նչ է, փառք քեզ ս. Հակոբ, փառք քեզ։

Ս. Հակոբը խնդա կը։

Ասիկ գելլե օչխարը քշե կերթա տուն, մերը դեմ կվազնե, փաթթվի կը վիզը. «Տղա՛, կըսե, աս իրեք տարի է՝ ո՞ւր էիր, ի՞նչ էղավ քեզի, օր հավևոր մորդ զարտ ու զամի մեջ էլար գնացիր»։

Թը. «Ես ա չիտեմ, լավ է օր չը հարցնես», կըսե կենա իրա չոպնութենը կէնե։

Հիմի դանք թագավորի աղջկանը։

Աստր մե տղամ՚ գըլլի, օր եղած օրեն գուլա կ՚ու կէրերա, ինչ կենին՝ ձենը չի կտռե, ֆալճու աշել կուտան, կըսեն կը թը՝ տղան պիտի լա

տեյ մ'օր հարը գանիք՝ գիրկը տաք։ Է՜, հե՛ր, ո՞ւր ես, վե՞ր չոլը օր գան քեզի գտնեն։ Թագավորի աղջիկը հագնի կը փաշի հալվներ, կառնե աշխըրքին խաղնան, գըլնի աշխարքե աշխարհ, ինչքան մարդ օր կա, կանչե, փարա կուտա, տղան գիրկը դնե, կ'օր, առպեսով մարթուն գտնի։

Աշխարք ման զալեն եռև գուգա աս Քյոփրիքո ետ ընկած գեղն ա։

Ջոպնի մարն օր գիմնա թը՝ մե մենծ փաշամ է էկե, կառնե տղի խաս շապիքը, օր էրծին մեջը թաքավորի աղջկանը հետ փոխեր էր, փերե աստր փեշկաշ կընե, օր քանիմ՝ զուռուշ ստանա, տանի իրա պակասութենը հոգա։

Աս փաշան օր շապիքը կառնե, օսահաթ ճանչե կ'օր իրեն շապիքն է, հարցնե կը թը՝ աս շապիքը քեզի ո՞ւրտից է։ Անա թը. «Ջիտեմ, տղաս ծր կորեր էր՝ աստիկ հագը էկավ»։ Թեզմ կանչել կուտա տղին։

Ջոպանը չոմպախը ձեռքը, քոլոզը գլուխը գուգա կայնի կը փաշին առաջը։ Փաշան վերցնե տղան աստր գիրկը դնե կը, օսահաթ տղան ձենը կտռե կ'ու խնդա կը։ Փաշան աստր պատմել կուտա իրեն կյանքը, աստիկ ա կըսե թը. «Օչխար կարծեի, քնա, էրծիս մեջը գնացի թագավորիմ աղջիկ առա, չիտեմ վալլա զորթ էր, սուտ էր»։

«Ղորդ էր,— կըսե փաշան— ըշտա ան աղջիկն ա ես էի, օր քեզի ասքան ժուռ էկա գտա»։ Աս կըսե ու վրայի շորերը վար ցկե, իրեն զպալովը էրևնա կը տղին։ Ջոպանը օսահաթ ճանչե կը աստր, ալ չի գիտնա՝ ի՞նչ էնե, աշխարք իրեն կուտան։

«Է՜,— կըսե աղջիկը,— քեզի օր գտա, հիմի ուխտս պիտի կատարեմ. անպես կարմունջմ՝ պիտի շինենք օր, տեյ մ'օր աշխարքին վերջը դիմանա»։

Թեզմ քար, փատ թափել կուտան, հավկիթի դեղնուցքով քիրաջը կեփեն Մուրատ չային (Եփրատ) վրա Ջոպնի կարմունջը շինել կուտան, գելլեն կերթան իրենց էրկիրը։

ԿՅԱՆՔԻ ՊԱՏԿԵՐՆԵՐ

Հարս ու կեսուր

Մե կեսուրմ՝ իրեն հարսին հեչ չի ուզե էղե. հարսին օր տեսնի կը էղե, գիտե թը գրողը տեսնի կը։ Խեղճ հարսը խելոք, չալը էկող, լսի կըստոր աղջիկմ՝ է էղե, հըմը ինչ էնես, օր ծակծկած կեսուրի փորի օձերը չեն թողնի, օր օր ու արև տեսնի։ Օրվանմ՝ մեկը կեսուրը աղջկանը խրատ կուտա օր՝ հավկիթիմ՝ մեջ աղու լըլե, կ'ու կուտա հարսին։ Հարսն ա միամըտատան կպչե կուտե։ Կպչե կուտե, քիչըմ կանցնի, չի անցնի՝ գընկնի վար՝ ծառնա կը, կըսե.

Կեսուր կեսուր
Քարե մսուր,
Մե պուտմ՝ ջուր,
Սիրաս էրեց։

«Գրող խմե», կըսե կեսուրն ու չիտաս։
Տեգերկնկանը կաղաչե.

Տեգեր կնիկ,
Օձի բնիկ,
Պուտ մ՝ ջրիկ,
Սիրաս էրեցիկ։

Տեգերկնիկն ա թողնե բաշվի կը բովենն, պուտմ՝ ջուրն ի՞նչ է՝ չի տաս։ Արթղ տալին կաղաչե.

Տալիկ, տալիկ,
Սև-սև տալիկ,
Պուտմ՝ ջրիկ,
Սիրաս էրեցիկ։

Ան ա թը. «Գրողս ու ցավս խմե»։ Աս վախթը տեքերը նես մտնի կը։ Հարսը տատր կաղաչե.

Տաքրիկ, տաքրիկ,
Պաղ աղբրիկ,
Սիրաս էրեցիկ։

Տաքրը ջուր կուտաս կը, հարսը խմե, քիչմ կտքա՝ հանգե կը։ Օսահաթ կեսուր ու տալ տանին գոմը թաղին, խուխն էրեսին դնեն կը։ Էտինքվան մարդը գուգա տուն, կաշե օր կնիկը չկա, մորը հարցնե կը, թը.

Անա, անա,
Քյաֆիր անա,
Շուշանս ո՞ւր է։

Մարը կըսե.

Օղուլ, օղուլ,
Ջուրն է գնացե։

Քիչմ կանցնի, տեսնի կ'օր չեկավ, կենա հարցնե կը.

Անա, անա,
Քյաֆիր անա,
Ջրվորն էկավ,
Շուշանս չեկավ։

Մարը թը.

Օղուլ, օղուլ,
Բուրդ վլալու է գնացե։

Մարդը բյաբլայե, բյաբլայե, տեսնի կօր Շուշանը չէկավ՝ կըսե մորը.

Անա, անա,
Քյաֆիր անա.
Դրուստն ըսե՝
Շուշանս ո՞ւր է։

Մարը էլ չի պահե, կըսե.

Գոմին վերև խուփն էրեսին,
Շեկիկ մազեր գետնի վերսին։

Տղան կերթա կաշե, օր ի՞նչ՝ կնիկը մեռած, թաղած է...

Աղբատ Սհակ

Էրզրում աղքատ Սհակ անունով մե տղամ սիրահարվի կը Հակոբ աղայի Ալմաստ աղջկանը վրա։ Գիշեր ցերեկ քունը կառե, ատոնց պատի տակը կանչե կ'ու կէբրի։ Հակոբ աղան անընունը քատար չցկելու համար ատ աղքդին աղջիկ չիտա, հըմը ինչ էննես, օր ատորեն վազ չի կրնը գա. զօր գիշեր իրեն դռներն է։ Տեսնի կ'օր չարա չկա, ասիկ աղջկանը կը պըտըցնե օր փախցնե, գաղտուց կառնե աղջիկն ու գուգա Արդահան։ Տղան թեզմ գիմանա աղջկա ուր ըլլիը՝ էտեղեն կերթա կհասնի։ Աստեղ տհա շատ կէբրի ու գուզե։ Աս բանը Ալի բյակին անկաճը գըչնի, կանչե կը տղին, կըսե կը. «Թը ակար աղջկանը ատպես շատ գուզես, արի թուրքըցի, ես աղջիկը զորով առնեմ՝ քեզի տամ»։ Տղան հոժարի կը, աղջկանը համար իրեն լուս հավատն ձեռք քաշե կը։ Ալի բյակը մարդ ղրկե՝ Հակոբ աղի աղջիկը կուզե կը ատ ատղին հըմար։ Հակոբ աղան ա ջուհապ կուտա կը, թը. «Տա-

լու օր ըլլեի, հայ վախթը կուտայի, ես անես տեղես էղա, էկա իրեն ապավինա, օր աղջիկս առոր չտամ, հիմի ինքը դուղե խլե տա։ Փուշն օր փուշ է, իրեն ապավինած ղշին պահե, պահպանե կը, ինքը մե փշիմ՝ զտար ա՞ էհտիպար չունի։ Ալի բյակը կաշե օր ղորթ կըսե, կանչե կը Սհակին, կըսե. «Իմ աղջիկս, ան երևելի մոլլին աղջիկը ուզե՝ տամ, զոռով ան աղջիկը քեզի չեմ կրնը տա»։

— Ես ան աղջկա համար իմ լուս հավատս Թողի, ձեր սուտ հավտին դառա, եի օր հիմի ա անոր ժժնիկ չպտի ըլլիմ, ես կենա հայ եմ ու հայ,— կըսե Սհակն ու պաղուցմ հող ցկե կը բերանը հրմը տեղն ու տեղը տապանչով զարնե ինքն իրան սպանե կը։

Հայերը գուգան տանին առոր Թաղին կը, մեմ ա կաշեն կ՝օր վրան լուսը կամար կապեց։

ԿԱՐՆՈ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Կարնո գավառը, որտեղից դարուս 30 թվին 14000 հայ գերդաստաններ գաղթեցին Ախալցխա, Ախալքալաք, Ծալկա և Աղեքսանդրապոլ, գտնվում է Բարձր Հայքում: Սա մի ընդարձակ դաշտավայր է, ծովի մակերևույթից 5740 ոտնաչափ բարձրությամբ, որ 32 մղոն երկարություն ունի արևելքից արևմուտք և 14—18 մղոն լայնություն հարավից հյուսիս: Գրեթե ամեն կողմից շրջապատված է բարձր լեռներով, որոնց մեջ նշանավոր են արևելյան կողմում գտնվող Փալանթյոքանը, Թուխտաղը և ուրիշներ: Այս լեռներից մանավանդ Ոսկյանց կամ Սուքիասյանց և կամ Տումլու կոչված սարից բխում են բյուրավոր աղբյուրներ, որոնք կազմում են Սև ջրի (Գաբասու) Եփրատի ճյուղի ակունքը: Դաշտավայրի գրեթե կենտրոնում, արևվելքից դեպի արևմուտք տարածվում է Կարնո շամբը, ուր ճախրում են բյուրավոր թռչունների երամներ՝ վայրի բադ, վայրի սագ, արոս, վայրի աղավնի, լոր, սարեկ, կաքավ, արծիվ, ձինկուլ, արագիլ, կռունկ:

Երկիրը ընդհանրապես շատ ջրառատ է, հողը արգավանդ և բերրի: Հարուստ է ադի (Աշղալա), երկաթի հանքերով և հանքային ջրերով (Իլիճա, Սողուկ-ջերմուկ, Դարարդ, Սրծաթի, Քարվոր, Ճինիս և այլն):

Կլիման սաստիկ ցուրտ է, սակայն առողջարար. առաջին անգամ ձյուն գալիս է դաշտավայրերում սեպտեմբերի վերջին կամ հոկտեմբերի սկզբին, իսկ լեռների վրա օգոստոսին. հալվում է ապրիլի վերջին: Ջերմաոը 20—25° ցուրտ է լինում, ամառը 3 40° տաք[1]:

Բուսականությունը ճոխ, սակայն անփայտ և անպտուղ, առատությամբ աճում են հացաբույսեր և կանաչեղեններ: Կենդանիներից նշանավոր են ձին, կովը, ոչխարը և ջորին, վայրի այծ և վայրի ոչխար, ջրշուն և այլն[2]:

ԷՐԶՐՈՒՄ ԵՎ ՆՈՐԱ ԳՅՈՒՂԵՐ

Կարնո գավառի նշանավոր միակ քաղաքն է Էրզրումը, որ հայերեն կոչվում է Կարնո քաղաք կամ Թեոդուպոլիս: Ասորեստանի բևեռաձև գրվածներից իմանում ենք, որ Քրիստոսից դեռ 8—9 դար առաջ Կարնո գավառը «Միլդիս անունով մի ինքնագլուխ պետություն էր կազմում, որ հետո Պարսից Դարեհ արքայի ձեռքով նվաճվեցավ: Հունաց առասպելախառն պատմություններից (Պլինիոս և Ստրաբոն) ասելով՝ ոմն Careniis

1 Գևորգ Թեոփիլոս, Ճանապարհորդություն Լազիստանի և Հայաստանի մեջ: «Փորձ», 1881, № 5—6, էջ 104:

2 Նույն տեղում:

սիրահարվելով այստեղի պատմական օդին և հրաշալի դիրքին, հիմնել է քաղաք և կոչել է յուր անունով, որ հետո հայերը իբր թե աղավաղել են և կոչել Կարին։ Այսպես թե այնպես՝ բայց այն ժամանակից, երբ հռոմայեցվոց կայսրությունը և պարսից տերությունը Հայաստանը սիրապետելու խնդիրը դարևոր պատերազմների առարկա շինեցին, Կարին քաղաքը մի առանձին ռազմագիտական նշանակություն ստացավ[3]։ Այդ նշանակությունը պահպանում էր և այն ժամանակ, երբ Արշակունյաց թագավորության վերջանալուց հետո Հայաստանը սիրապետելու վեճը շարունակվեց բյուզանդացվոց և պարսից մեջ։ Կամենալով ընդմիշտ առաջն առնել պարսից բուռն ձգտումներին, Թեոդոս կայսրը յուր թագավորության սահմանների մոտ մի առաջնակարգ ռազմագիտական կետ ընտրեց և այնտեղ Անաստոլիոս զորավարի ձեռքով շինեց, լավ ևս նորոգեց Կարին քաղաքն ու բերդը։ Քաղաքը գտնվում է Կարնո դաշտի արևելյան մասում և բաղկացած է միջնաբերդից, քաղաքից և արվարձանից։ Միջնաբերդը, որ կոչվում է Իշդալա, գտնվում է մի բլրի վրա, շրջապատված է 12 բարձր աշտարակներով և ունի միայն մի դուռ, այստեղ շինված էր բերդակալի և մի քանի այլ տներ, այստեղ էր և վառոդանոցը, որ բոլոր շինություններից բարձր էր և դրսից երևում էր, այնպես որ շատ մեծ պակասություն էր բերում բերդին, որովհետև թշնամին կարող էր միջնաբերդի բարձրություն ունեցող հանդիպակաց Թոփդաղ լեռան գագաթից ռումբ հասցընել վառոդանոցը և կրակը ձգել։ Այստեղ է գտնվում և Բեփսի բարձր մինարեն, մզկիթանոցի մոտ կղմինդրից պլանած շինված. սորա գագաթին կար մի մեծ ժամացույց, որի զարկը լսելի էր ամբողջ քաղաքին, և որը ռուսները վայր առան։ Սրա մոտ կա մի շինություն, որի մասին ասում են, թե եկեղեցի է եղել։ Քաղաքը պատած է երկու կարգ պարսպով, որոնց միջի տարածությունը 10 արշինաչափ է և բոլորովին դատարկ է թողնված, որպեսզի պատերազմի ժամանակ գավառի գյուղացիք այստեղ պատսպարվեն։

Այս երկու պարիսպները ունեն 72 աշտարակ և չորս դուռ, միմյանց հանդեպ, բայց ոչ ուղղակի, այլ փոքր ինչ շեղված նախապարսպի դրռները կրկնապարսպի դռներից. հյուսիս արևելքից՝ Դեվրիկ գաբուսի, արևմուտքից՝ էրզնկյա գաբուսի, հյուսիսից՝ Կյուրճի գաբուսի և հարավից՝ Ենիի գաբուսի։

Քաղաքի շուրջը կրկնապարսպի առջևով ձգվում է 3 սաժին լայնությամբ խոր խրամ, ցած պարսպով պատած, առանց աշտարակների։

---

3 «Արձագանք», 1890, № 2, Ա. Ե.։

Այստեղ է գտնվում փաշայի պալատը, տաճկաց և հայոց բնակութիւններ, այստեղ է և միջնաբերդը։ Արվարձանը գտնվում է խրամի շուրջը. բնակիչները երդրում քաղաքը այս են համարում, որովհետև բնակիչների մեծամասնութիւնը, վաճառանոցները և շուկաները այդտեղ են։ Արվարձանի շուրջը ևս բոլորում է մի ուրիշ անպարիսպ խրամ, որ 10 կամ 11 դուռ ունի, որոնք առհասարակ ճեպիս գաբու են կոչվում, որովհետև թե դռները և թե խրամը ճեպռով (շտապով) են շինված թահմասիբ գալու երկյուղից։

Դարուս սկզբում[4] քաղաքը արևելյան գույն ուներ, գրեթե բոլոր փողոցները ծուռումուռ, անկանոն և անսալահատակ էին, այս պատճառով էլ ամառը սաստիկ փոշի, իսկ ձմեռը անանցանելի ցեխեր էր լինում։ Տները ցած և անկանոն էին, սովորաբար միհարկանի, փոքրիկ դռներով և պատուհաններով. միայն քրիստոնեից թաղում կային երկհարկանի տներ, որոնց վերի հարկը դուրս ցցված էր. նա պահպանվում էր երբեմն սրված սյուներով, իսկ ծածկոց կազմող տանիքը պաշտպանում էր տունը անձրևից և արևից։

Տներից շատերը, մանավանդ միհարկանիները լուսավորվում էին միայն տանիքի լուսամուտով՝ հերթիկ, որ ծածկված էր լինում լույս անցկացնող և անձրևից պաշտպանող ձիթած թղթի կոնուսով։ Տների առջևի հրապարակները գարնանը իսկական մարզեր էին դառնում, որոնց վրա արածում էին գառներ և այծեր. ամառը դոքա ծառայում էին թեզեքի (ըիրեն, քակոր) չորացնելու տեղ։ Կենդանիների աղբը խորանարդաձև կտրում և չորացնում էին։ Աղբատները հավաքում էին աղբը և նրանցից գնդեր շինելով խփում պատերին, ուր կպած մնում էին մինչև խպտո չորանալը, արձակելով շատ անախորժ հոտ։

Քակորը միակ վառելանյութն է, որ գործ է ածվում ամբողջ Կարնո բարձրավանդակում. մի ձիու հարյուր հիսուն կիլոգրամ ծանրութեան բեռին վճարում էին 4—5 ֆրանկ։

Շրջակա բլուրներից հոսում են բազմաթիվ աղբյուրներ, ինչպես Նահատակի աղբյուր, կաթնաղբյուր, ճենենեք փունարի, որոնք անցնելով քաղաքի միջով, իրենց վրա կառուցված կամուրջներով փողոցներին տափս էին մի բոլորովին ինքնակերպ տեսք։

Շինութիւններից նշանավոր են քաղաքի[5] արվարձանում գտնվող Հայոց երկու եկեղեցիները, որոնք իրար շատ մոտ են, և երկուսն էլ Ս. Աստ-

---

4 Մեր թվականության։

5 Խճճիճյան Ղ., Աշխարհաբրութիւն, Հայաստան, Վենետիկ, 1832։

վածածնի անունով են, սակայն սովորաբար Վերի և Վարի ժամ են կոչվում։ Վերի եկեղեցին ուներ կաթողիկի, վարի եկեղեցու մոտ գտնվում է հայոց գերեզմանատունը, ուր ամփոփված են Սահակի, Հովսեփի և այլ շատ նահատակների մարմինները։

Բազմաթիվ մզկիթներ կան, բայց նրանցից միայն երկուսն են ճըշմարիտ հետաքրքիր։ Ուշուճի-Ջամի մզկիթը և Մուրդո Սևրա աշտարակը։ Քաղաքի շուրջը ընդարձակ դաշտի վրա տարածված են բազմաթիվ գյուղեր, իրենց ծուռումուռ փողոցներով, դետնափոր տներով, ընդարձակ կալերով և փոքրիկ խարխուլ եկեղեցիով կամ մզկիթով։ Գյուղի մեջ եթե կար մի փոքր ի շատե վայելուչ շենք, դա աղայի՝ գյուղի տիրոջ բնակարանն էր։ Գյուղերից նշանավոր են իրենց վանքերով հետևյալները. Մուտուրկա՝ քաղաքից մոտ մի ժամ հեռու, ուր գտնվում է Լուսավորչի բարձրանիստ և բարձրապարիսպ վանքը. եկեղեցին քարաշեն է, փոքր և անշուք, միայն ավանդատունում կա մի դետնափոր գուռ, ուր ավանդության ասելով Ս. Գրիգոր Լուսավորիչը Արտաշատի խոր վիրապը ձգելու տանելիս, հանգիստ է առել։ Այստեղ նստում էր Կարնո առաջնորդը։ Երկրորդ վանքն է Ս. Աստվածածնի Կարմիր վանքը Հինձք գյուղի մոտ, քաղաքից 3 ժամ հեռու, որ հիմնարկել է Ներսես Մեծը և հետո նորոգված է։ Սա Լուսավորչա վանքի երկու մեծությյան է, երեքխորանյան, չորս կողմից ձգված են կամարներ, և սոցա վրա բարձրացրած կարմիր քարից սրածայր գմբեթ։ Այստեղից կես ժամ հեռու, ձորի մեջ գտնվում է «Հռիփսիմյանց քարայր» ուխտատեղին, որի մոտ կան երկու ավերակ մատուռներ և խաչքարեր, որոնց մոտից բխում է մի սառնորակ աղբյուր։

Երրորդ վանքն է Խաչկա վանքը, քաղաքից 4 ժամ հեռու։ Ավանդությունն ասում է, թե Տումլի լեռան գագաթին, որի ստորոտում գտնվում է վանքը, պահված է խաչափայտի մի մասը, որ ընծայել է Հերակլ կայսրը իրեն ղորքը 3 օր կերակրող մի տիկնոջ։ Խաչկա վանքից բխում է Խաչափայտի ականակիտ և սառնորակ ջուրը, որ թափվում է Սև ջրի մեջ։

ԲՆԱԿԻՉՆԵՐԸ

Թե Կարնո քաղաքի և թե նորա գավառի բնակիչներն էին տաճիկները և հայերը։ Սոքա կամ միասին խառն էին ապրում կամ առանձին թաղերում և գյուղերում։ Կրթությունից զուրկ և կրոնամոլ լինելով՝ այս երկու ազգերը սիրով չէին կարող ապրել, և չէին ապրում։ Թուրքերն առաքինություն էին համարում «գյավուրի» արյունը թափել, իսկ հայերը կրոնական առելություն էին զգում դեպի նոցա։ Հաճախ պատժից ազատվելու

համար առաջարկվում էր հայերին ընդունել մահմեդական կրոնը, և երբ սոքա ընդդիմադրում էին, տանջանքներով ստիպում և վերջ ի վերջո նահատակում էին։

Հայ օրիորդներն եթե դուր էին գալիս թուրքերին, մեծ հալածանաց էին ենթարկվում, և եթե չէին համաձայնվում հավատափոխ լինելով ամուսնանալ թուրքերի հետ, չարաչար մահով նահատակվում էին։ Այսպես եղավ և Ս. Վառվառե կույսը։ Իսկ եթե հայ երիտասարդները դուր էին գալիս թուրք կանանց կամ աղջիկներին, սոքա մեղադրում էին սոցա իբր իրենց բռնաբարողների, և կառավարությունը ստիպում էր սոցա հավատափոխ լինելով ամուսնանալ նոցա հետ, և երբ չէին համաձայնում, նահատակում էին։ Այսպիսի պատճառով նահատակվեցավ Էրզրումում Մկրտիչը՝ Մկոն։

Եկեղեցին միշտ հալածանաց տակ էր, հին եկեղեցիները նորոգելու հրաման չկար, իսկ նորը կառուցելու համար թույլտվությունը պիտի խնդրվեր սուլթանից։

Գյուղերում հայ քահանաները թուրք երեխաների ծաղրի առարկան էին։ Եվ դեռ սա բավական չէ, շատ անգամ նոցանից քարկոծվում էին։ Թուրքը ամեն մի ընչին բանի համար հայհոյում և թակում էր հային, իսկ սա ստիպված էր լռելյայն տանել և համբերել։ Իսկ եթե համարձակվեր փոխադարձաբար հայհոյել կամ մի հատ խփել, այն ժամանակ թուրքերը խմբով թափվում էին վրան, սաստիկ թակում էին, և դեռ այս բավական չէ, գատարանում դանգատվում էին, թե դա թուրքերի հավատը հայհոյեց։ Հայ վկաների վկայությունը չէր անցնում, իսկ մի թուրք վկայի վկայությունը բավական էր, որ հայերին սկսեին տանջել և տուգանքի ու մահի ենթարկել։

Այսպես ապրում էին այս երկու ժողովուրդները. մին յուր իշխանության վրա անձնավստահ, մյուսը սարկական դառն զգացումով։ Եվ եթե շատ գյուղերում արտաքուստ հաշտ էին, սակայն ներքուստ կրոնական ատելություն և վրեժխնդրություն էին ղգում։

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆ

Ա. Քաղաքացվոց

Էրզրումի բնակիչներից հայերը գլխավորապես պարապում էին վաճառականությամբ։ Էրզրումը Պարսկաստանի և Տաճկաստանի վաճառականության կենտրոնն էր, ուստի և թե տեղացի և թե օտար վաճառականներ անդադար լցվում էին Էրզրում և ծաղկեցնում վաճառականու-

թյունը։ Ներբերում էին օսմանյան սահմաններից՝ շաքար, սուրճ, նիշաստիր, լեղակ, կարմիր որդան, հինա, երկաթ, պողպատ, պղինձ։ Ներբերում էին նաև գոմշի մորթի (Ախալցխայից և Թիֆլիզից), կտորեղեններ՝ խումաշ, խութնի, չիշեկլի (Հալեպից), ֆես, մանր ապրանքներ՝ հայելի, ածելի, թուղթ, մկրատ, ֆրանսիական մահուդ, ատլաս, դաստիֆա և այլ կտորներ։ Պարսկաստանի սահմաններից բերում էին շալ, մուշտակներ (թույալեթ), բամբակ։

Իսկ արտահանում էին՝ ցորեն, գարի, դանդաղան պղնձեղեն և արծաթեղեն շինվածքներ, ղենքեր և այլն։ Կարինում կար մաքսատուն, որ սուլթան Համիդի ժամանակները հետևյալ մաքսն էր առնում. Օսմանյան տերության սահմաններից ևկած ամեն տեսակ ապրանքից՝ հարյուրին չորս, իսկ Պարսկաստանի սահմաններից՝ հարյուրին տասնմեկ։ Բացի մաքսից վճարում էին տասանորդ՝ մաքսատան ծառայողներին, որ կոչվում էր ֆալլա։ Ապրանքը քաղաք մտցնելու համար՝ որտեղից և ինչ մեծության կամ գնի լիներ, միևնույն էր, պիտի վճարեին 22 փարա իհտիսաբ ահճեսի։ Արտահանած ապրանքի համար վճարում էին քաղաքից հանելու համար՝ բեռին 2 դուրուշ, 8 փարա և 100-ին 11 մաքս[6]։

Բացի վաճառականությունից ժողովուրդը պարապում էր և արհեստներով, որոնցից առավելապես ծաղկած էր պղնձագործությունը, ոսկերչությունը, արծաթագործությունը։ Մեծ էր և որմնադիրների, քարտաշների, հյուսների, դանակ շինողների թիվը։

Քաղաքացիների մի մասն էլ պարապում էր երկրագործությամբ և պարտիզպանությամբ, մշակելով քաղաքի շրջակայքի ընդարձակ դաշտերը։

Բ. Գյուղացվոց

Կարնո գավառի թե հայ և թե տաճիկ գյուղացիք գլխավորապես պարապում էին երկրագործությամբ։ Կարնո ընդարձակ դաշտավայրը լիովին բավական էր բոլոր բնակիչներին, սակայն անկանոն բաժանված լինելով՝ շատերի հողերը անմշակ էր լինում, շատերն էլ հող չունենալով ունեցողներին մարապա էին լինում։ Հողը գլխավորապես անցած էր թուրք աղաների ձեռքը, որոնք գրեթե տիրել էին բոլոր գյուղերը և բացի սեփականության իրավունքից վարում էին և վարչական իրավունքներ։

Գյուղացի հողատերեր, մանավանդ հայ, շատ քիչ կային, և դեպք գնել էին հողը վճարելով սոմաոին մոտ 500 դուռուշ։ Սեփականություն

6 Ինճիճյան Գ., Աշխարհագրություն, Հայաստան, Վենետիկ, 1832, էջ 73—75։

դարձրած հողը արքունի դատարանով հաստատում էին՝ թափի էին անում։ Թափի եղած հողը ոչ ազան և ոչ տերությունը կարող էր խլել, այլ որպես ժառանգություն անցնում էր սերունդից սերունդ, մինչև մինը կվաճառեր։

Սեփական հողի համար տասանորդ էին ուզիս տերությանը։ Տասանորդները հավաքում էր յուզուր աղասին (հկամտի տեր), որ աճուրդով գնել էր այդ իրավունքը սուլթանից։ Հաճախ յուզուր աղասին փոխանակ տասից մեկ, 7-ից, 5-ից մեկ էր վերցնում, նայելով թե ինքը ինչքանով էր գնել այդ իրավունքը սուլթանից և ինչպիսի կողոպուտով կարող էր լրացնել յուր աված կաշառքները և վճարը և դեռ աշխատանք հանել։

Հողատերը մշակում էր յուր հողը որքան կարող էր, մնացածը տալիս էր ուրիշի՝ մարապային, մշակելու այս երեք պայմանով՝ 1. եթե հողը միայն հողատիրոջ՝ ազայինն էր, ազան ստանում էր ամբողջ հնձի միայն $^1/_3$-ը։ 2. եթե հողը և սերմն էր ազայինը, ազան սերմը վերցնում և մնացածը կիսում էր մարապայի հետ։ 3. եթե ամեն ինչ՝ հող, սերմ, կենդանիներ, գործիքներ, մարապայի ուտեստը և այլն ազային էին, և միայն աշխատանքը մարապայինը, այն ժամանակ ազան ստանում էր 2, իսկ մարապան՝ մի մասը։

Մարապան առնում էր ազայից 2—5 հարյուր դուռուշ պարտք՝ անասուններ և գործիքներ գնելու, և այս փողի համար շահ չէր վճարում, քանի այդ ազայի մոտ մարապա էր, բայց չէր կարող այդ ազայի մոտից դուրս գալ առանց նախապես պարտքը լիովին վճարելու։ Մինչ իսկ չէր կարելի, կամ գրեթե չէր կարելի դուրս գալ ազայի մոտից և պարտքի համար շահ վճարել։ Թեև այժմյան նահապետական ձևով էին մշակում արտերը, սակայն երկիրը շատ բերրի լինելով, հասկը շատ առատ էր լինում, առնվազը 1—16, և մարապան, չնայելով յուր ստացած փոքր մասին, այնուամենայնիվ ցորեն հաց էր ուտեցնում յուր գերդաստանին և ոչ գարեխառն հաց, ինչպես այժմ։

Բացի երկրագործությունից ժողովրդի մեծամասնությունը պարապում էր ջուխլակությամբ. գործում էին շալ, կտավ, խսիր, կարպետ. գիտեին հյուսնություն, դարբնություն, տուն շինել, բայց այս բոլորը միայն իրենց պետքերը հոգալու համար։ Այս արհեստները նոցա առանձին դրամ չէին ուզիս, որովհետև նախ՝ գրեթե բոլորը գիտենալով՝ ուրիշին գործ առաջարկող չկար և երկրորդ՝ հազիվ յուրաքանչյուրը յուր պետքերից ավելի կարողանար պատրաստել։ Ամուսնուն օգնում էր կինը, բացի տան կառավարությունից նա թեշիկ, ջահրա էր մանում, գուլպա գոր-

ծում, կար անում, շալ, կտավ գործում և դաշտային պարապմանց մեջ ամուսնուն օգնում։

Այս գավառում սաստիկ տարածված էր մանու փոխ առնելը. կանայք բամբակից թել էին մանում և այս մանածը մեկ ու կես բամբակի հետ փոխում, այսպիսով բամբակ ավելացնում ու շալ գործում, տնեցիներին հանդերձ կարելու։

Գյուղացիք պարապում էին և անասնապահությամբ. պահում էին եզ, գոմեշ, կով, ոչխար և ձի։ Կովի և ոչխարի կաթից պատրաստում էին մածուն, թան, չորթան, կարագ, պանիր և վաղնաթ։ Կենդանիների մսից, բացի կերակուրների մեջ գործածելուց, շինում էին պաստուրմա, շուճուխա և ղավուրմա էին դնում։

Այս պարապմունքներով ժողովուրդը ձեռք էր բերած հետևյալ կարողությունը։

1. Համբան կամ կոտը՝ ամենահարուստ գերդաստանը, որ բաղկացած էր 40—50 անդամներից, մոտավորապես ուներ 1000 գլուխ ոչխար, 5 լուծ գոմեշ, 10 լուծ եզ, 5 կով, 2 մատակ և մոտավորապես 100 օրավար հող։ 2. Կես Համբան կամ կես կոտը, որի գերդաստանը բաղկանում էր 30—40 անդամից, ուներ մոտավորապես 400—500 գլուխ ոչխար, 2 լուծ գոմեշ, 4 լուծ եզ, 3 կով, 1 մատակ, վարում էր մոտավորապես 60 օրավար հող։ 3. Ջարեկը կամ բռուլը՝ ստորին կարողության գերդաստանը մոտավորապես ուներ 1 զույգ եզ, 4 կով, 15—20 ոչխար և 10 սոմատնոց հող։ 4. Մարապան՝ մոտավորապես 4 լուծ եզ, 1—2 կով, 1 մատակ, վարում էր 30—60 օրավար աղայապատկան հող։ Գերդաստանը բաղկանում էր 15—30 անդամից։

Բոլոր դասակարգերի հագուստը միատեսակ էր, պոզ չուխայից, որ իրենք էին մանում, գործում, թուրքերը մույլ չէին տալիս լավ կտորներ հագնելու. ոտներին հագնում էին տրեխներ։ Ժողովրդյան ուտեստը ևս չափավոր էր։ Համբան ճաշին ուտում էր բանով ապուր և էրիշտով փլավ, կամ խաշիլ, բանջար և առհասարակ 2 տեսակ կերակուր, իսկ ընթրիքին՝ ապուր, մածուն, պանիր։ Կես Համբան ճաշին ուտում էր միայն բանով ապուր կամ մի տեսակ ուրիշ կերակուր, իսկ երեկոյին միայն ապուր։ Ջարեկը ճաշին միայն ապուր, իսկ երեկոյին ցամաք հաց և երբեմն պանիր։

Այսպես ուրեմն՝ տեսնում ենք, որ գյուղացվոց թե հագուստը և թե ուտեստը գլխավորապես իրենց պատրաստածներն էին և ոչ թե գնած։ Յուր պետքերը հոգալուց հետո շատ քիչ բան էր մնում նրան վաճառքի հանելու, որ առձեռն դրամ ստանար հարկը տալու և զանազան անհրա-

ժիշտ ծախքերը հոգալու։ Եթե հաջողեր նրան տարեկան 150 ղուռուշ առձեռն փող ունենալ ծախսի համար, գրեթե ոչ մի բանի պետք չէր զգա։ Նա տանում էր քաղաք ծախելու խոտ, հարդ, աթար, ճիլ, եղեգն, կռճան, գարի, ցորեն, ալյուր, խիար, սոխ, մանուծ, գոմշի կաշի, մածուն, յուղ, պանիր, անասուններ։ Եվ դրքա քաղաքում մոտավորապես արժեին.

*Ալյուր, լիտրը**.
Ցորեն
Գարին, սոմառը (25 փութ)՝ 25 ղուռուշ
Խոտը, մի բարդ (30 խուրձ)՝ 25 փարա
Հարդը
Կովը՝ 10—15 ղուռուշ
Եզը՝ 20—25 ղուռուշ
Գոմեշը՝ 60—65 ղուռուշ
Ոչխարը՝ 2—3 ղուռուշ
Հավը
Յուղի հոխան՝ 50 փարա
Պանրի հոխան
Հավկիթ, 40 հատը՝ 1 փարա
Մեղրի հոխան

Այս գներին համեմատ էին և մյուս ապրանքները։ Մինը ծախել է մի գոմեշ 60 ղուռուշի և այդ փողով գնել է.

1 ձևռք կլապիտոնի շոր՝ թագվորի համար, 15 հոխա օղի, 4 լիտր բրինձ, 2 լիտր լավ արյուկ, 2 ղույդ յամանի, 2 ղույդ մյաս-բաբուճ, 3 հոխա կաղին-չամիչ։

Բաղադի խանութում մատների վրա հաշվելով՝ տեսնում է 35 փարա մնում է քիսեն, 20 փարան էլ տալիս է քահանային՝ որդուն պսակելու համար, իսկ 15 փարան ետ ձգում «սև ավուր համար»։ Սակայն մշակը կամ ծառան մի ամբողջ տարում տառնում էր 10—30 ղուռուշ և ոչ ավելի։

Ինչպես երևում է, գյուղացիք ունեին մի համեստ ապրուստ, սակայն գյուղական արդյունաբերական արդյունքները այնքան չնչին գին ունեին, որ գյուղացիք դրցա վաճառմամբ չէին կարողանում քաղաքից հարկավոր պիտույքները գնել և վճարել արքունի հարկերը, որ մոտավորապես հետևյալն էր. խարաճ, գլխարհարկ, որ առնում էին 15 տարեկանից վեր այր մարդկանցից, և այս չափով.

Ալայից (հարբասից) 30ղ., 20ղ., 13ղ.

---

* Ձեռագիր սկզբնաղբյուրում արժեքները չեն նշանակված։

Ասնայից (միջակից) 20ղ., 15ղ., 10ղ.
Առնայից (չունևորից) 10ղ., 10ղ., 8ղ.
Սպինճ՝ 30 փարից-3 ղուռ.
Սալյան, գյուղի ծախսը՝ 5—10 ղ.

Տասանորդ՝ թե հացհատիկներից և թե խոտից։ Հասկանալի է, թե ինչպիսի բռնություններ էին գործում հարկահանները հարկը և յուշուր աղասին՝ բերքի տասանորդը հավաքելիս։

Եվ հենց այս պատճառով գերդաստաններից մի կամ երկու անդամ, առավելապես երիտասարդներ գնում էին Կ. Պոլիս մշակություն անելու, դրամ վաստակելու։ Սոքա պարտք էին առնում մոտավորապես 25—100 ղուռուշ, վճարելով 20 տոկոս շահ։ Սա կոչվում էր փոլոս և մաս-մաս ուղարկվում էր Պոլսից։ Պարտք առնողը հաճախ դրամ էր դնում յուր արտը, որ պարտատերը շատ անգամ գրավում էր, մինչ իսկ պարտքը վճարած դեպքում։ Մշակության դիմածները սովորաբար 7 տարի դեգերում էին Կ. Պոլսում, ապրելով նո ընկած խաներում և վատ շրջաններում։ Այս 7 տարիների ընթացքում նոքա հազիվ կարողանում էին իրենց պարտքը շահովն հանդերձ վճարել և տարեկան 10—20 ղուռուշ տուն ուղարկել, իսկ նոցա ընտանիքները թևև կարողանում էին ամուսնու ուղարկած գումարով վճարել արքունի հարկերը, սակայն զրկված լինելով ուտեստ մատակարարող ձեռքերից, սաստիկ աղքատության էին մատնվում և այս, մասամբ էլ այլ, պատճառներից անբարոյականանում էին։ Նորահարսերի ապօրինի զավակները կամ ձգվում էին եկեղեցու դուռը և կամ խեղդվում անգթորեն։ Յոթը ձիգ տարիներից հետո մշակության դիմած առույգ երիտասարդի կամ մահվան բոլն էր գալիս, կամ ինքը վերադառնում արդեն ուժահատ և բարոյապես թուլացած։

Ժողովուրդը բացի վերոհիշյալ պարտքերը վճարելուց պարտավոր էր պահել և դալին ու ճայրին՝ փաշի ղորքին։

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ամբողջ Թուրքահայաստանը և Անատոլիան կառավարվում էր մի սերասկիրատ, որ նստում էր Էրզրումում։ Նրան ենթարկվում էին ինչպես դինվորական, այնպես և քաղաքային գործերը։ Նա նշանակում և փոխում էր գավառապետներին, որոշում էր հարկերն ու տուրքերը, արձակում մահվան վճիռներ։

Այս պաշտոնը ամենանշանավոր պաշտոններից մինը լինելով, շատերը ցանկանում էին ստանձնել, ուստի և մեծամեծ կաշառքներ տալով միայն կարողանում էին հաջողացնել, և, հասկանալի է, որ այս տվածները պիտի հանեին ժողովրդից։

Ռուս-տաճկական պատերազմի ժամանակ սիրասիր նշանակված էր Հալիբ փաշան, որ Նապոլեոն 1-ինի ժամանակ որպես Բ. դռան պատգամավոր երկար ապրել էր Փարիզում և մի առժամանակ եղել էր վեզիր։

Գյուղական կառավարություն

Յուրաքանչյուր գյուղ յուր առաջավոր ծերի միջոցով de jure և աղայի enfacto հաճութիյամբ ընտրում է մի տանուտեր, քահանա, որ անվարձ և անժամանակ ծառայում էր, մինչև մի վատ գործի համար հեռացվելը։

Հայ և թուրք խառն բնակված գյուղերում կեհյան լինում էր հայերից կամ թուրքերից, նայելով թե ում ավելի ձայն կտային, կամ ումից ավելի կաշառք էր առել աղան, իսկ եթե համաձայնություն չկայանար՝ կընտրեին երկու քահա, յուրաքանչյուրը յուր աղգից, յուր համար, սակայն այս շատ հազիվ էր պատահում։

Քահայի գլխավոր պարտականությունն էր կատարել տալ փաշայի և աղայի հրամանները, օգնել հարկը հավաքելուն, հավաքել դալու և հայթի համար գարի, բաժանել դալին ու հայթին տները և դատ կտրել։

Հասարակ գանգատները նա մենակ վերջացնում էր, փոքր ինչ ծանր գանգատի համար նա հրավիրում էր գյուղի առաջավորներին ժողովի և նոցա միջնորդությամբ վերջացնում։ Եթե հաշտություն չկայանար, քահան գանգատավորին և մեղադրվողին տանում հանձնում էր աղին կամ քաղաք՝ դատարանին, զատուն կամ մուֆթուն։ Իսկապես գյուղի տերը և կառավարիչը նրա թուրք կալվածատերը՝ աղան էր։ Հողի մեծ մասը աղային պատկանելով ժողովրդի մի մասը նրա մարապան, մյուսն էլ նրա պարտապանն էր, հետևապես և նրա հյու ծառաները։ Եվ այս պատճառով էլ աղան բացի կալվածական իրավունքից օգտվում էր և վարչական իրավունքով։ Նա դատ էր կտրում և մեղավորից տուգանք առնում հօգուտ յուր զրպանի, փալախա դնում և բանտարկում մի քանի օր յուր դոմում։

Բացի կալվածական արդյունքներից, որոնց մասին խոսեցինք, նա ժողովրդից ստանում էր և այլ տուրքեր։

Օրինակ նշանագրությունից ստանում էր մի ոչխար և հարսանիքից մի հոխա շայֆա, օտար գյուղից աղջիկ առնելիս տղայից՝ մի ոչխար, նշանավոր տոներին՝ դայֆա և գառներ իբր ընծա և այլն։

Միևնույն ժամանակ կատարել էր տալիս և ձրի ծառայություններ, օրինակ, գյուղը պիտի բերեր աղայի փայտը, ջարդեր, դարսեր, շիներ նրա բնակարանը, ձի կամ սայլ տար, որ նրա խանումները տեղ գնա-

յին։ Գյուղի հարսները պիտի գվնին աղայի բուրգը, բնաղուն աներին նրա ցորենը, քաղհան աներին նրա բանջարանոցը և այլն։

Մինչև անգամ աղան կաշառք էր առնում երիտասարդից և նրան մերժած աղջկան և առավելապես հարսին ստիպում ամուսնանալ այդ երիտասարդի հետ։ Բայց սոցա փոխարեն նա էլ պաշտպանում էր գյուղացիներին, երբ սոքա ուխտատեղիներում կռվում էին ուրիշ գյուղացիների հետ, որ հաճախ պատահում էր, հսկում էր բարոյականության վրա. շրջում էր գյուղում և եթե տեսներ մի հայ հարս դուռը կանգնած, յափուշը քանդած, կկանչէր ամուսնուն և հանդիմանելով կպատվիրեր խիստ պահել կնոջը, կհանդիմաներ նաև եթե տղամարդը կնոջ ձեռքը բռնած պարեր, կամ ձուխ ծամեր։

Դալի և հայթա

Ժողովուրդն ընդհանրապես զոհ էր աղաներից, զոհ էր և սուլթանից, միայն սաստիկ նեղված էր դալիից ու հայթից և փաշի տորին պաշտոնյաներից։

Դալին և հայթան ամբողջ ձմեռը մնում էին առավելապես հայ գյուղերում, իսկ ամառը ամեն ամիս գալիս 5—20 օր մնում, գնում, երբ զոցա գունդը երևար, քեհան ընդառաջ պիտի ելներ գյուղի մարդկանցով, որ պատվով իջեցներ նոցա, ձիաները բռնել տար[7] և ապա բաժաներ տները՝ նոցա ունեցած հոգի քանակության համեմատ։

Դալիի ու հայթի ձայնը լսելուն պես՝ իրարանցում էր տիրում ամբողջ գյուղում, աղջիկները, հարսները և երեխաները իսկույն պահ էին մրտնում։ Բայց որովհետև դալին կամ հայթան բռնությամբ ման էին դալիս տան բոլոր անկյունները, այդ պատճառով սոցա առավելապես պահում էին խորի մեջ փաթաթած և տնկած, ծալքի եռևը, մառանում և այլն։ Սակայն և այնպես շատերի անմեղությունը զոհ էր լինում այդ բարբարոսների բռնության։ Ոչ ոք չէր համարձակվում ընդդիմադրել զոցա, որովհետև բավական էր մի թուլ ընդդիմադրություն, և դալին կամ հայթան կխփեր կսպաներ, առանց ինքը պատժի ենթարկվելու։

Բազմաթիվ տխուր դեպքերից հիշենք մի քանիսը։

Ջինիս գյուղում օրիորդ Սառայի պատառ հոդուփկինը կաշառվելով դալիներից Սառային հանում է խորի միջից և տանում ձիթհանը, այս-

---

7 10 դալի իջել էն Թվանձ գյուղի Արթենի մոտ, երբ սա չէ կարողացել շուտով մարդիկ հավաքել, որ սոցա ձիանները բռնեն ման ածեն, դալիբաշին բարով խփել կիսամեռ վայր է ձգել Արթենին։

տեղ նրան բռնում են դալիները, և երբ Սառան ընդդիմադրում է նոցա, նոքա կտրում են նրա պլուխը, ձգում ձիթհանքի ավազանը, իսկ մարմինը քաշ տալիս, ձգում կալը։ Աղջկա ծնողքը գտնելով մարմինը, տանում են էրզրում և դանդաւում փաշին, սակայն սա բոլորովին ուշադրություն չի դարձնում։

Հայթանների մի խումբ էլ գողանում և պահում է մի սիրուն երեխա, երբ դյուղացիք իմանում և պահանջում են՝ սպանում են երեխային և տալիս նրանց ձեռքը։ Ժողովրդի ջանքը՝ հայթաններին պատժել տալու, ապարդյուն է անցնում։

Հենց որ ցրվեցան դալին ու հայթան տները, իսկույն տնեցիք փռում զարդարում են օդանները, գոմը լավ ավլում, ձիանները կապում, տակը մի թիզ խուշկի ածում, գնում ջուր կրում, որ ձիերը ջրեն, ձմռան սարսափելի ցրտին դյուղացիք իրենք ջուր պիտի կրեին, որ դալու կամ հայթի ձիերը ջրեն։ Թույլ չէին տալիս, որ ձիերը տանեն ջրելու։ Երբ բերում էին ջուր դալիպաշին (գլխավորը) թույլ չէր տալիս ջրելու։ «Դիշ փարասի վերքի իջան, գյավուր»—ասում էր նա, այսինքն՝ առատի փող (խմելու վարձ) տուր, որ խմեն, անհավատ։ Գյուղային անճարացած հանում մի երկու ղուրուշ կամ մի երկու ղույդ դուլպա էր տալիս դալիպաշուն, որ թույլ տար ձիան բարեհաճել ջուր խմելու։ Ձիանները ջրելուց հետո գյուղացին գնում գյուղական դալու և հայթի ձիանների համար հավաքած շանմարանից դարի բերում, լավ մաքրում, տալիս ձիերին։ Տնեցիներից մինը կանգնում էր ձիերի մոտ, որ անդադար տակերը սրբե և խուշկի ցանե։

Ձիերի հոգսից ազատվելուց հետո դալիպաշին մտնում էր ոչխարանոցը և առանց տիրոջը հարցնելու ընտրում ամենալավ խոյը և խփում գետնին մորթելու. և դեռ այս բավական չէ՝ «դանակը քոռ է, գյավուր, փող տուր, որ սրնա» հրամայում էր գյուղացուն։ Վերջինս վիզը ծռած հափ

չի շուրջը, բայց հացին ձեռք չէր տա։ Տանտերը դեմերը կկանգներ նոցա ծառայելու։

«Տե՛, դիշ փարաւի վեր քի յյախ»— կասեր գլխավորը։ Տանտերը կհաներ մի քանի դուռուշ կամ մի դույզ սունապան (պաճիճ) և տալով գլխավորին կաղաչեր բարեհաճել բերանը բանալ այդքան բշով, որովհետև ինքը աղքատ էր և միջոց չուներ ավելի տալու։

Վերջապես կուտեին ճաշը, բայց վայ էր եթե չհավանեին կերակուրը, ուղղակի կվերցնեին ամանն ու կտային տանտիրոջ գլխին։ Այս պատճառով էլ գյուղացին յուր բոլոր ուտելեղենների ամենալավ մասը պահում էր դոցա համար։ Եվ այդպես էլ կանեին ընթրիքը, դուրս կերթային գյուղի մեջ ման գալու, որ հարս ու աղջիկ, սիրուն տղաներ տեսնեն...։

Երեկոյին կպահանջեին բոլորովին նոր անկողին և եթե չբերեին՝ սաստիկ կծեծեին, մինչև որ դրկցներից գտնեին բերեին, կամ կղիջանեին նոցա սաստիկ աղաչանաց և երդման, թե չունեն։ Թեև նոքա չունեննալ, չկա բառը չէին հասկանում և անպայման պահանջում էին ուզածները բերել։ Այսպես, Ղզաձոր գյուղում ձմեռը մի դալիպաշի չորացած թութ է պահանջում, և երբ չեն կարողանում գտնել բերել, հրացանը առնում և ընկնում է կանանց հետևից։ Երեք տեգերկնիկիներ փախչում են տուն և դուռը փակում, դալիպաշին արձակում է հրացանը, գնդակը ծակում է դուռը և սպանում երեք կանանց էլ, որոնք դռան դեմ էին ընկել, բանալն արգելելու համար։ Մարդասպան դալիպաշին անպատիժ թողնում հեռանում է։

Գրեթե նույն տեսակ նեղություններ տալիս էին քաղաքացվոց ենիչերիները։ Այսպիսի նեղություն տալիս էին և փաշի բեռնակիրները (խարմանտարները)։ Մյուս կողմից շրջակա գավառներից գալիս էին քրդերի ավազակախմբեր և քշում տանում գյուղացվոց հոտերը։

ԿԱՐԱՊԵՏ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Մանկությունը[8]

Տասնութերորդ դարի վերջում Բարձր Հայքի Սպեր գավառի Հունոտ գյուղում ապրում էր Կարապետ Եղիկօղլի անունով մի հայ մարդ։ Սա իր ահագին հարստությամբ, իմաստությամբ վարկ և անուն էր հանել, որ էրզրումի փաշան դրան նշանակել էր այդ գավառը կառավարող

8 Բացի բազմաթիվ ծերունիների պատմածներից, օգտվել եմ և Հայր Գեղամյանի ու Պոտտոյի գրություններից։

ութը դատավորներից մինը։ Կարապետ Եղիկօղլին դատավարությամբ այնքան համբավ էր ստացել, որ օսմանցիք «հայ թագավորազն» էին կոչում դրան և այս ափտղոսը այնքան ոգևորել էր նրան, որ թողել էր յուր Եղիկ-Օղլի ազգանունը և կոչվել Բագրատունի։ Սա ուներ Գրիգոր և Հարություն անունով երկու որդի, որոնք հասարակական և տերունական պաշտոններ չէին վարում, այլ պարապում էին վաճառականությամբ։ Գրիգոր Բագրատունյանը արբուն հասակի մեջ սիրահարվել էր Մահտեսի Թորոս Փոտյանցի Արեգնազան անունով 13 տարեկան գեղեցիկ աղջկան, սակայն չէր համարձակվում ուզել, որովհետև օսմանցի իշխանավոր մարդիկ, որոնցից գլխավորն էր Մեհմետ Դերեբեգի (գավառապետ), նույնպես սիրահարված էին Արեգնազանին և որոշած էին բռնությամբ ձեռք բերել նրան, եթե սիրով չհաջողացնեին. մեկ էլ որ նրա պառավ մամ Ջանազան խանումը միշտ զգուշացնում էր նրան չընկնել օսմանցիների հետ, ավելցնելով միանգամայն, թե յուր Թոռանը (Գրիգորին) «լայեղո՞ղ» բան է առնել աղքատի աղջիկ։ Մի երեկո Թորոս Փոտյանցը լսում է, որ Մեհմետ ազա Դերեբեգի մարդիկը շատ անցուդարձ են արել իրենց տան առջևից, երկյուղ է կրում, թե մի գուցե նույն գիշերը հարձակվեն յուր տան վրա և աղջկանը փախցնեն, ուստի և գնում աղերսում է Ջանազան խանումին, որ եթե ոչ ի սեր յուր Թոռան, գոնե ի սեր քրիստոնեության, փրկե յուր աղջկանը՝ Արեգնազանին։ Ջանազան տիկինը, որ մինչև այդ ժամանակ հակառակ էր Գրիգորի և Արեգնազանի ամուսնությանը, այժմ ցանկանալով Թուլ չտալ օսմանցիներին հավատափոխ անել մի հայ աղջկա, մի քանի կարիճ մարդկանց առաջնորդությամբ և Թորոս Փոտյանցի խնամակալությամբ նույն գիշերը յուր Թոռան՝ Գրիգորի հետ փախցնում է Էրզրումի Կան գյուղը և հայրական կարողության մեծ մասը տալիս նոցա։ Կան գյուղում Գրիգորը պսակվում է և փոխադրվում Էրզրում, ուր պարապում է վաճառականությամբ։ Կարճ միջոցից հետո վախճանվում է Ջանազան խանումը, և Գրիգորն իր Հարություն եղբորն ու Ավետիս աներորդուն հրավիրում է Էրզրում, իր մոտ։

Գրիգորն ու Արեգնազանը ունեցան երկու արու որդի, որոնցից անդրանիկը՝ Հովհաննեսը ծնվել է 1779 թվի մայիսի 18-ին։

Բոլորովին հայտնի չէ, թե ինչպես անցկացրեց Հովհաննեսը յուր մանկությունը, միայն հազիվ տասը տարեկան է եղել, երբ ժանտախտից վախճանել են նրա հայրն և փոքր եղբայրը, Արեգնազանը ամուսնացել է մի ուրիշի հետ, սակայն վեց ամսից հետո ինքն էլ է մահացել, և Գրիգոր Բագրատունյանի ամբողջ կարողությունը, չնայելով նրա արած կտակին, անցել է Թորոս Փոտյանցի, սրա որդի Ավետիսի և Արեգնազանի

չի շուրջը, բայց հացին ձեռք չէր տա։ Տանտերը դեմերը կկանգներ նոցա ծառայելու։

«Տե՛, դիշ փարաւի վեր քի յյախ»— կասեր գլխավորը։ Տանտերը կհաներ մի քանի դուռուշ կամ մի դույդ սոնապան (պաճիճ) և տալով գլխավորին կաղաչեր բարեհաճել բերանը բանալ այդքան բյով, որովհետև ինքը աղքատ էր և միշոց չուներ ավելի տալու։

Վերջապես կուտեին ճաշը, բայց վայ էր եթե չհավանեին կերակուրը, ուղղակի կվերցնեին ամանն ու կտային տանտիրոջ գլխին։ Այս պատճառով էլ գյուղացին յուր բոլոր ուտելեղենների ամենալավ մասը պահում էր դոցա համար։ Եվ այդպես էլ կանեին ընթրիքը, դուրս կերթային գյուղի մեջ ման գալու, որ հարս ու աղջիկ, սիրուն տղաներ տեսնեն...։

Երեկոյին կպահանջեին բոլորովին նոր անկողին և եթե չբերեին՝ սաստիկ կծեծեին, մինչև որ դրկցներից գտնեին բերեին, կամ կղիջանեին նոցա սաստիկ աղաչանաց և երդման, թե չունեն։ Թեև նոքա չունենալ, չկա բառը չէին հասկանում և անպայման պահանջում էին ուզածները բերել։ Այսպես, Ղազաձոր գյուղում ձմեռը մի դալիպաշի չորացած թութ է պահանջում, և երբ չեն կարողանում գտնել բերել, հրացանը առնում և ընկնում է կանանց հետևից։ Երեք տեգերկնիկներ փախչում են տուն և դուռը փակում, դալիպաշին արձակում է հրացանը, գնդակը ծակում է դուռը և սպանում երեք կանանց էլ, որոնք դռան դեմ էին ընկել, բանալն արգելելու համար։ Մարդասպան դալիպաշին անպատիժ թողնում հեռանում է։

Գրեթե նույն տեսակ նեղություններ տալիս էին քաղաքացվոց ենիչերիները։ Այսպիսի նեղություն տալիս էին և փաշի բեռնակիրները (խարմանտարները)։ Մյուս կողմից շրջակա գավառներից գալիս էին քրդերի ավազակախմբեր և քշում տանում գյուղացվոց հոտերը։

ԿԱՐԱՊԵՏ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Մանկությունը[8]

Տասնութերորդ դարի վերջում Բարձր Հայքի Սպեր գավառի Հունուտ գյուղում ապրում էր Կարապետ Եղիկօղլի անունով մի հայ մարդ։ Սա իր ահագին հարստությամբ, իմաստությամբ վարկ և անուն էր հանել, որ էրզրումի փաշան դրան նշանակել էր այդ գավառը կառավարող

8 Բացի բազմաթիվ ծերունիների պատմածներից, օգտվել եմ և հայր Դեղամյանի ու Պոտտոյի գրություններից։

Պակայն, վերջինս հասկանալով, որ Հակոբ վարդապետի մտադրությունն է առաջնորդ կարգվելուց անմիջապես հեռացնել իրեն եկեղեցական կալվածների կառավարչությունից, ուղղակի գնում է Պոլիս և 1808 թվի օգոստոսի 21-ին, Հովհաննես պատրիարքից առաջնորդ է նշանակվում և սուլթանի հրովարտակով հաստատվելով, վերադառնում է Էրզրում։

Այստեղ նրա առաջին գործը լինում է բարվոքել վանքերի տնտեսական դրությունը, քարոզիչներ նշանակել գյուղերում, և հետո Հակոբ ամիրա Մամիկոնյանի հետ գալիս է Ս. Էջմիածին, ուր 1811 թվի նոյեմբերի 2-ին Եփրեմ Կաթողիկոսից արքեպիսկոպոս է ձեռնադրվում և վերադառնում Էրզրում։

Սով

1811 թվին Էրզրումում սաստիկ սով է ընկնում, որովհետև սաստիկ երաշտից երեք տարի շարունակ ցանքսերը լավ չէին եղել։ Ժողովուրդը վերագրելով այդ մեղքերին, պռոնիկներին հալածում էր, միմյանց մեղադրելով կռվում էին, շները քաղցածությունից կատաղում էին և այստեղ այնկողմ վազելով մարդկանց խածոտում. մարդիկ արտերում թափառելով հավաքում և ուտում էին ատոլ, բանջար, կոճղեղ, մատուկ, քյուշնա, ձիթհանքերը թափառելով խլխլում և ուտում էին կոպտոնը՝ ձեթը հանած կտավատի մնացորդը։ Իսկ մի մեծ բազմություն լուսաբացից իսկ սպասում էր մսավաճառի խանութի առաջ, որ երբ չկարողանա գնել մի կտոր միս, գոնե փորոտիքն ու աղիքները ձեռք բերե, սովատանջ աղքատները պարզում էին ձեռքերը, որ գոնե մի բուռն արյուն խմեն, բայց որովհետև սոցա թիվն էլ շատ էր, միմյանց մղում, կռվում էին, թուլները ոտի տակ գնալով՝ փողոցում ընկնում մեռնում էին, իսկ որոնց հաջողվում էր մի աման արյուն ստանալ, տանում էին տուն, լցնում եռացրած ջրի մեջ, ուր մակարդվում պնդանում էր, և ուտում էին։

Մի քանի մայրեր սովի ճիրաններից ազատվելու համար իրենց որդոցը գարու և ցորենի հետ փոխում էին։ Կարծախցի Գրիգորյանց Ստեփանը երեք կոտ գարով փոխած է։

Դեռ մինչև այսօր էլ Էրզրումի գաղթականները, որոնք սարսափելով պատմում են սովի տառապանքները, ամենայն օր աղոթում են.

Երկինք գետին ստեղծող,
Քեզնից խնդրեմ կը
Էրկնուց ցող,
Գետնուց պտուղ,

Հացին աժնություն,
Մահին թանգություն,
Մահ տու, սով մի տա։

Ահա այս ստառապանքների ժամանակ ժողովրդյան օգնության է հասնում Կարապետ արքեպիսկոպոսը, որ Հակոբ ամիրայի և ուրիշ մեծատունների օժանդակությամբ բաց է անում մի աղքատանոց, ուր 180 աղքատ սնունդ և հանդերձ էին ստանում, իսկ ուրիշ աղքատների նա ալյուր, ցորեն և գարի էր բաժանում յուր կառավարիչ եղած ժամանակ սահմանած եկեղեցական շեհմարաններից։

Վերջապես նոր նշանակված Բալյուլ փաշան կանչում է շեհմարանատերերին և աշխատում է համոզել նոցա բանալ և փորր ինչ էժան վաճառել իրենց ամբարած ցորենն ու գարին, սակայն նոքա չանկանալով ավելի երկար պահել, ավելի թանկ ծախելու հուսալով, խաբում էին նրան, թե բոլորը սպառվել է։ Փաշան մյուս օրը ծպտված շրջում և տեղեկանում է, թե ուր կա պահված ցորեն ու գարի։ Հետևյալ օրը նա ստիպմամբ հանել է տալիս և հրամայում է սմառը փոխանակ 180 դուռուշի, 80 դուռուշի ծախել։ Երկու թուրք շեհմարանապետեր խելագարվում են, բայց ժողովուրդը ցորեն է ստանում, ցանք անում, որով և սովը վերջանում է։ Երախտագետ ժողովուրդը դեռ մինչև այսօր էլ հիշելով այդ փաշային, ավելացնում է, թե նրա գերեզմանի հողը կաթ կմակրեն։

Ազգային գանձանակ

Ժողովրդի ստառապանքը միայն սովի ժամանակ չէր, աստուծյան տարիներին էլ նա մեծ նեղություն էր կրում տիրապետող տարրից։ Վիճակի շատ եկեղեցիները պարտքի տակ էին ընկած, մի քանիսն էլ գրավված էին թուրքերից։ Հարկահանները նեղում էին ժողովրդյան, բանտարկում և ավելի էին պահանջում։ Կարապետ արքեպիսկոպոսը, որ արիուն հսկում էր յուր հոտի վրա, ազատում է նրան և այս նեղությունից։ Նա վանքապատկան արոտատեղիներում պահել է ոչխիս բազմաթիվ նախիրներ և հոտեր, որոնց տված արդյունքով ազատում է պարտքից Ս. Աստվածածնի վանքը և մի քանի ուրիշ նշանավոր ուխտատեղիներ, վերանորոգում ու պարապապատում Ս. Լուսավորիչ և Ս. Խաչ վանքերը։ Բացի սրանից հիմնում է միջազգային դանձանակ, որի մեջ ամենայն օր յուրաքանչյուր արհեստավոր և վաճառական ձգում է յուր առաջիկ ստացած փողի տասներորդը, որով և վճարվում էր արքունի հարկը և խնամվում մի քանի աղքատ։

Կարապետյան ուսումնարան

Կարապետ արքեպիսկոպոսը, հասկանալով կրթության նշանակությունը, էրզրումում բաց է անում Կարապետյան ուսումնարանը, որի համար հրավիրում է Պոլսից Հովհաննես (Արդար մականվանյալ) վարժապետը, Շեքերճյան Գրիգոր պատվելին, Կարապետ վարժապետ Վանեցին, Գևորգ պատվելի Տեր-Հովհաննիսյան և վերջերում Կարապետ Ջմշկյան։ Նա յուր իմաստալից քարոզներով համոզում էր ծնողներին ուղարկել իրենց որդոցը դպրոց և չքավորներին բացի իրեն խնամոց տակն առնելուց, ծնողներին էլ ամսական մի քանի կոտ ցորեն գարի էր տալիս, որ որդոցը դպրոցից չհանեն, նոցա արհեստի, ծառայության տալու, նոցա չնչին ոռճկից իրենք օգտվելու նպատակով։

Ժ ա ն տ ա խ տ

1825 թվին ժողովուրդը նորից սկսում է տանջվել «բարի բան» կոչված տարափոխիկ հիվանդությամբ. մարդկանց բուկը ուռչում էր, եթե ներսից էր լինում՝ երեք օրում խեղդվում էր, իսկ եթե դրսից՝ առողջանում։ Բժիշկ բոլորովին չկար, միայն քահանան ավետարան էր կարդում հիվանդի գլխին։ Հարյուրավոր մարդիկ մեռնում էին անօգնական, և մեկ կողմից այս դժբախտությունները, մեկ կողմից հայթայի և դալու պատճառած նեղությունները, մյուս կողմից կրոնական հալածանքն ու տիրապետող տարրերի ճնշումը կարում էր ժողովրդի սերը հայրենիքից։

Ռուս-տաճկական պատերազմ

1828 թվին հրապարակվում է Ռուս-տաճկական պատերազմը, և հայերն իրենց փրկությունը սկսում են երազել ռուսներից, որոնց նոքա երևակայում էին որպես «հայ-քրիստոնյաներ», իրենց «շեկ քեռիներ», որոնք պիտի գային և իրենց ազատեին...։

Ռուսաց զորքը հետզհետե հաղթանակներ էր տանում և հառաջում դեպի Արզրում, հայերը չկարողանալով իրենց ներքին ուրախությունը զսպել, կասկածանաց տեղիք էին տալիս, և երբ ռուսները Ախալցխան առան, թուրքերն իրենց բնատուր երկչոտությամբ և անվստահությամբ սկսան կասկածել թե մի գուցե հայերը միանան ռուսների հետ և իրենց ավելի ծանր դրության մեջ ձգեն, վճատած սկսան զանազան պատճառներ պարել էրզրումի և բոլոր վիճակի քրիստոնյաներին կոտորելու։ Բայց

նախ և առաջ հարկավոր էր սպանել հայերի պաշտպան և ներկայացուցիչ Կարապետ արքեպիսկոպոսին։

Եվ ահա մի կիրակի օր երկու ղինվոր (զավազ) գալիս են եկեղեցի և իմացնում են Կարապետ արքեպիսկոպոսին, թե՝ փաշան շտապով կանչում է նորան։ Սա ստիպվում է թողնել Ս. Պատարագը, չորում է սեղանի առաջ, արտասվելով համբուրում է Ս. Խաչը և ղինվորների հետ գնում է դեպի փաշայի պալատը։ Ժողովուրդը տեսնելով այդ անսովոր հրավերը և իրենց «մեծավորի» հուզվելը և արտասվելը, սարսափում և քաշվում ամրանում է իրենց տները։

Կարապետ արքեպիսկոպոսը յուր մտերիմների միջոցով արդեն լսել էր տաճիկ մեծամեծների մտադրությունը և կարծելով թե արդեն իրեն սպանելու են տանում, սաստիկ վախենում է, պատռվում է ներքին շըրթունքը և այդ ճեղքից ու քթից հորդությամբ հոսող արյունը ապականում է միրուքն ու վերարկուն, իսկ ինքը բոլորովին անզգայացած հեծում է և ոչինչ չի զգում, մինչև որ յուր հավատարիմ Գևորգ սպասավորի բերած ջրով սթափվում է և լվացվելով մոտակա աղբյուրում, մտնում է փաշայի սարայը։ Այստեղ սերասկյարի նախագահությամբ ղինվորական խորհըրդի էին հավաքվել ղինվորական և քաղաքական մեծամեծ պաշտոնյաները, որոնց սովորական ողջույնը տալուց հետո Կարապետ արքեպիսկոպոսը կանգնած սպասում է յուր դատապարտության և վճռին։ Ժողովը յուր խորհուրդը վերջացնելուց հետո հայտնում է նրան, թե՝ որովհետև նա յուր ժողովուրդը վատ է կրթել, որ երեկյան օրը խանութները կողպել և քաշվել տները խորհուրդ են արել օսմանցիներից ապստամբելու, ուստի ղինվորական խորհուրդը վճռել է բոլոր ժողովուրդը սրի անցկացնել և նախապես նոցա եպիսկոպոսին սպանել։

Կարապետ արքեպիսկոպոսը հայտնում է, թե հայերը կողպել էին խանութները, հետևելով օսմանցիներին, որոնց հակառակ վարվելը հանդըգնություն կլիներ։

Սակայն փաշան բարկանում է և ասում, թե՝ օսմանցիք կարող են փակել, որովհետև նոքա տանը նստած որոգայթ չեն լարե տերության դեմ։

— Երբ հայերի կողմից տերությանը մի որևէ վնաս հասնի, ես ինքս կլինեմ պատասխանատու,— պատասխանում է Կարապետ արքեպիսկոպոսը,—իսկ եթե նոցա խանութներ փակելը հաճելի չէ Ձերդ վսեմության, հրամայեցեք, ես իսկույն բանալ կտամ։

— Այ բաջադան գեշմիշ (լուսնյակն երդիկից անց է կացել, ուշ է ար-

դեն),—գոռոզաբար պատասխանում է փաշան,— զինվորական խորհրդի որոշումը պիտի կատարվի։

Այս խոսքը Կարապետ արքեպիսկոպոսի վրա սարսափ է ձգում, և նրա պատռված շրթունքից նորից արյուն է հոսում։

Սիլեյտար Ահմատ աղան տեսնելով արքեպիսկոպոսի դրությունը և լսելով ճանապարհին պատահածը, խղճում է և համոզում խորհրդին փոխել վճիռը, Կարապետ արքեպիսկոպոսից առնել փրկանք, իսկ ժողովըրդին աշխատեցնել արքունի ծառայությամբ, որ ժամանակ չունենա այդպիսի «փինթի» բանների վրա մտածելու։

Կարապետ արքեպիսկոպոսը իսկույն յուր փոքրավորի ձեռամբ բերել է ութսիս 40 քիսա ղրամ (մի քիսան 550 ղուռուշ) և մի ձի, հանձնում է փաշային և հրաման ստանալով քաղաքի շուրջ ժողովրդյան խրամ փորել տալ, ուրախացած վերադառնում է տուն, կանչում է յուր ժողովրդյան և համոզում է գնալ քաղաքի շուրջը խրամ փորել։

Երկու ժամից հետո էրզրումի աշխատելու ընդունակ հայ բնակիչները բահ, թի, փետատ առած գնում են քաղաքի շուրջը խրամ փորելու։ Կարապետ արքեպիսկոպոսն էլ ժամկոչի շորեր հագած երեք օր շարունակ փորում է ժողովրդյան հետ, հետո զինվորական խորհրդի որոշմամբ ձի նստած խրամների վերակացու Ղելիբ փաշայի հետ շրջում և խրախուսում է ժողովրդին, որը թողած յուր օրական պարենը հայթայթող արհեստն ու առուտուրը, առավոտվանից մինչև երեկո աշխատում էր արքունի խրամի վրա։

Հայր Գեղամյանը Թուրքերենից թարգմանել է այն երգը, որով հայ ժողովուրդը հայտնել է յուր տխրալի վիճակը. առաջ ենք բերում այն ամբողջությամբ.

Մոսկովը (ռուսը) հասավ էրզրումին,
Վայը եկավ հայոց գլխին,
Սատիկ հրամանը վեզիրի
Քունը կտրեց մեր աչքերի.
Գնանք խրամը, խրամը։
Ջմեռ գուգա բուք ու բորան,
Մեր ընտանյաց հալն է յաման,
Թողինք գործերս ցիրուցան,
Եկանք հասանք 'ի Ս. Նշան.
Փորենք խրամը, խրամը։
Բահ, թի, փետատներ դիզվեցան,

Մեծ ու փոքր հիվանդացան,
Թե չլիներ սուրբ օրհնութիւն (եպիսկոպոսի)
Ամենքին էլ հալն էր գուլում.
Փորենք խրամը, խրամը։
Արի, եղբայր, փորենք խրամ,
Հիմի կուգա Ղելիբ փաշան,
Թող, ի՞նչ ես մտածում այդքան,
Աստված կլինի մեր պահապան.
Գնանք խրամը, խրամը։
Փետատը զարկինք ապառաժին,
Ջուր հանեցինք քարի միջին,
Բայց ձագուկներս մորը կշտին
Կարոտ մնացին ցամաք հացին.
Գնանք խրամը, խրամը։
Հայր սուրբ ահա հեծած յուր ձին
Կուգա, եղբայրք, երթանք աջին,
Նորա օրհնութիւնը մեր գլխին,
Աստված պահե կյանքն յուր անդին.
Գնանք խրամը, խրամը։
Հող ու մոխրում թավալգլոր,
Միտք ու ուշքերս եղավ մոլոր,
Յաման, Հայր սուրբ, զուրբան քեզի,
Մեր ընտանյաց հոգսը քաշի.
Գնանք խրամը, խրամը։
Մոսկովն եկավ շարան շարան,
Յա օխտնանուն (Ս. Կարապետ) քեզի զուրբան,
Խնամք արա հայոց վերան,
Ջմնաց մեր վրա ջան.
Գնանք խրամը, խրամը։

Խրամի փորելը տևում է ամբողջ չորս ամիս, և այս երկար ժամանակամիջոցում հայ ժողովուրդը կրում է շատ զրկանք և նեղություն։

Շատ ընտանիքներ, որոնց ամուսիններն աշխատում էին խրամում, ամբողջ օրերով մնացին քաղցած, և միայն Կարապետ արքեպիսկոպոսն էր, որ հավաքում էր այդպիսիներին ու ցորեն, գարի, ալյուր, յուղ բաժանում։

Հազիվ թե խրամները փորել վերջացրել էին, և ահա Կարապետ

արքեպիսկոպոսը մի նոր անասելի նեղության մեջ է ընկնում։ Ամենայն հայոց Սփրեմ կաթողիկոսը մի կոնդակ է ուղարկում Կարապետ արքեպիսկոպոսին, որով պատվիրում է համոզել ժողովրդյան «որպես քրիստոնյաների՝ օգնելու ռուսներին, երբ նոքա էրզրումին կմոտենան»։ Այս կոնդակը ընկնում է փաշաների ձեռքը, որոնք նորից ատյան են կանչում Կարապետ արքեպիսկոպոսին։ Սակայն սա նախապես իմանալով այդ բանը, կաշառում էր արքունի թարգմանին, որը ատյանի առաջ տարբեր իմաստով է թարգմանում կաթողիկոսի կոնդակը։ Եվ թեպետ այս անգամ էլ արքեպիսկոպոսը ազատվում է մահից, սակայն դարձյալ տուգանքի, և ժողովուրդը նորանոր աշխատանքի է ենթարկվում։

Մի անգամ էլ փաշան պահանջում է Կարապետ արքեպիսկոպոսից երեք օրվա ընթացքում 200 համեստած ձի ճարել, զորքի պաշարը էրզրումից բանակը տեղափոխելու։ Չնայած որ քաղաքացիք արհեստներով ու առևտրով էին զբաղվում, և շատ քչերը ձի ունեին, այնուամենայնիվ Կարապետ արքեպիսկոպոսը յուր ժամկոչների միջոցով կարողանում է ճարել 200 ձի։ Փաշան շատ շնորհակալ է լինում և հրավիրում է նրան սուրճի, սակայն արքեպիսկոպոսը հրաժարվում է, վախենալով, թե մի գուցե թունավորված լինի։

1828 թվի նոյեմբեր ամսից մինչև 1829 թվի ապրիլ ամիսը տաճկաց զորքը ձմեռում է գյուղերում և տնտեսական մեծ վնասներ պատճառում առավելապես հայ ժողովրդին, իսկ երբ ռուսները Ղարսն առնում են, այդտեղից հետ փախչող ձիավոր մի լիցիան մտնում է էրզրումի գյուղերը և թալանում առավելապես հայերին, որոնք երկյուղից լեռներն են փախչում։

Եվ երբ ռուսները դիմում են դեպի էրզրում, Օվայի քրդերը թալանում են հայերի գյուղերը և փախչում երկրի խորքերը։

Վերջապես՝ ռուսները Պասկևիչի առաջնորդությամբ մոտենում են էրզրումին, առանց պատերազմի առնում են Հասան-Ղալան և բանակում 15 վերստ հեռավորությամբ։

Բենկովիչ դեսպանը ուղարկվում է էրզրում բանակցելու սերասկյարի հետ քաղաքը հանձնելու մասին։ Բայց որովհետև Պասկևիչը ի միջի այլոց պահանջում էր, որ սերասկյարը և նրա փաշաները զերի համարվեին, ուստի սերասկյարը հրավեր է կարդում ժողովրդյան՝ պաշտպան հանդիսանալ հավատի և ընտանեկան սրբության։ Եվ խաժամուժը ոգևորված ահագին աղաղակներով թափառում էր փողոցներում, հարձակվում Բենկովիչի տան վրա, կամենալով կտոր-կտոր անել նրան և պատահած քրիստոնյաներին իսկույն ևեթ սպանում էր։ Այս պատճառով էլ բոլոր քրիս-

տոնյաները ապաստանում, թաք են կենում նկուղներում և գետնափոր անցքերում, ինքը՝ կարապետ արքեպիսկոպոսը երեք օր շարունակ պահվում է հայ Մանվելօղլյանցի տան խոնավ նկուղում, որտեղ և գրում է մի նամակ կոմս Պասկևիչին և մաքսատան բեռնակիր Ջերման անունով մի կարճ հայի տրեխներում հասցնում կոմսին։ Այդ թղթի մեջ կարապետ արքեպիսկոպոսը հայտնելով քրիստոնյաների վիճակը, միևնույն ժամանակ ցույց է տալիս թե ինչ ճանապարհով և ո՞ր կողմից պետք է հարձակվել քաղաքի վրա։

Վերջապես 1829 թվի հունիսի 27-ին երեկոյան ժամը 3-ին Այան աղա ամենածերունի պատգամավորը մատուցանում է Պասկևիչին քաղաքի բանալիները և մի հակիրճ ճառով հայտնում, որ Էրզրումի ժողովուրդը լիովին անձնատուր է լինում նրան։

Այս լուրը մի վայրկյանում տարածվում է ամբողջ քաղաքում, և բոլոր թաքնված հայերը դուրս են գալիս իրենց թաքստյան տեղերից։ Կարապետ արքեպիսկոպոսն էլ դուրս է գալիս խոնավ նկուղից, փոխում է հանդերձները և ձի հեծած, ձեռին խաչ, Շներհաչյան Գրիգոր պատվելու ընկերակցությամբ դիմում է Ս. Նշան լյառը Պասկևիչին դիմավորելու։ Որպես քրիստոնյա եպիսկոպոս նա իրավունք չուներ քաղաքի մահմեդական պատգամավորների հետ միասին գնալու, ուստի և միայնակ ընդառաջ է իջնում Պասկևիչին, Թոփ-տաղ լեռան վրայից խաչակնքում է ռուսաց զորքը և մոտենում կոմսին։ Սա խորին հարգանոք ընդունում է նրան և գրկախառնվում։

Երեկոյան ժամը 5-ին ռուսաց զորքը մտնում է քաղաք և տիրում բոլոր ամրություններին։

Հաշտություն և հայերի գաղթելը

Հանկարծ լուր է տարածվում, թե սեպտեմբերի 2-ին Ադրիանապոլսում հաշտություն է կայացել 12 դաշնագրությամբ, որով Ախալցխան, Ասպինջան, Քոբլիանը, Անզորը, Խրթվիզը, Ախալքալաքը, Գյումրին, Անափը, Օֆ և Փոթին մնում են ռուսաց, իսկ Ղարսը, Էրզրումը, Բայբուրթը և Բայազետը վերադարձվում են օսմանցիներին։

Ժողովուրդը, որ բոլորովին չէր սպասում ռուսների վերադարձին և այնքան նեղել էր թուրքերին, տարօրինակ դրության մեջ է ընկնում։ Նա պարզ տեսնում է, որ ռուսները հեռանալուն պես՝ տաճիկները իրենց բոլորին կոտորելու են ի վրեժխնդրություն այն նախատինքի և հալածանքի, որ նոքա հասցրել էին նոցա։ Եվ թեպետ դաշնագրության է և ժ-

հոգվածները կյանքի և հավատի ապահովություն էին տալիս, և Մահտեսի Գևորգ աղա բայբուրդցի հարուստ վաճառականը մի քանի երևելի անձանց հետ այդ միջոցում կ. Պոլիս գնալով Սուլթան Մահմուտից հրովարտակ էր բերել հատկապես հայերի ապահովության համար, սակայն ժողովրդյան առաջավորները գիտեին, որ դոքա մնալու են որպես մնոյալ տատ, և թուրք ամբոխը յուր գիտեցածն անելու էր, ուստի քանկացան գաղթել Ռուսաստան։

Կարապետ արքեպիսկոպոսը սկզբում հակառակ էր գաղթականության և այս մասին գրել տեղեկացրել էր պատրիարքարանին։ Սրբազան Կարապետ պատրիարքը Բարդուղիմեոս եպիսկոպոսին ուղարկում է էրզրումի ժողովրդյան համոզելու՝ չգաղթել։ Կարապետ արքեպիսկոպոսը վշտանալով, որ պատրիարքարանը յուր վրա վստահություն չունեցավ, ուրիշին նշանակեց, վճռում է գաղթել և գաղթեցնել տալ հայ ժողովըրդյան։ Ուստի յուր իրավարանի մեջ դնում է սուր և խաչ, կանչում է գյուղերի քահանաներին և քհանեերին, քարոզում է նոցա գաղթել և ամփոփում է յուր քարոզը հետևյալ խոսքերով. «Ահա սուր և խաչ. ով ուզում է խաչը, թող հետևի ինձ, ով ուզում է սուրը՝ թող մնա»։ Քահանաներն ու քհանները համաձայնում են գաղթել նրա հետ և գնում են իրենց ժողովուրդներին ևս նույնը քարոզելու։ Հետո Թադեոս և Հարություն վարդապետներին ու Ջենիս գյուղի Տեր-Գրիգոր քահանային ուղարկում է գյուղերը նույնը քարոզելու։

Թադեոս վարդապետը, Տեր-Սարգիս քահանան և Խաչատուր Գրիգորյանցը Կարապետ եպիսկոպոսից ուղարկված էին Ախալցխայի և Գյումրու կողմերը երկրի մասին տեղեկություններ բերելու. սոքա էլ երևի կաշառված՝ վերադարձին համբալ են բերում, թե. «այնպիսի բարելից երկիր է, որ դոշկիդ բուրդը թափե, բամբակ կոխե (լից). կորկոտի տեղ բրինձ կե. թամազ արուկի տեղ օրդուբադու արուկ կե»։

Ժողովուրդը հավատալով սոցա խոսքին, շտապում է թողնել յուր հայրենական բնակավայրը, յուր դարևոր աշխատանաց արգասիք՝ հայրենական բնակարաններն ու կալվածները, վայր թափել տան կահկարասիքը և գաղթել։

1830 թվի մայիսի 15-ին գաղթականների մի մեծ բազմություն Կարապետ արքեպիսկոպոսի առաջնորդությամբ ճանապարհ է բնկնում դեպի Ռուսաստան։ Բոլոր գաղթականների թիվը հասնում էր 14 000 ընտանիքի[9], մոտ 95000 հոգու, որոնցից 6500 ընտանիքը էրզրումից և նրա

9 «Собрание актов относящихся к истории Армянского народа», часть II, էջ 184։

փաշայությունից էին, 4200 ընտանիք Բայազետից ու նրա փաշայությունից, 2264 տուն Ղարսից և նրա վիճակից, իսկ մնացածները դանազան կողմերից։

Այս գաղթականները փոքրիկ խմբակներ կազմելով ընտրում էին իրենց միջից մի-մի առաջնորդ, ինչպես Հաճի Կարապետ Ջարմանյանն է։ Ռուս կառավարությունից ևս ստանում էին 5—6 պահապան կոզակներ և կամաց-կամաց, մեծ մասը տիղմի միջով, օրական 4 ժամ միայն ճանապարհ գնում,—շարաթը մի անգամ երկու օր հանգստանում ավերակ գյուղերում։

Այսպես ճանապարհին անպատմելի նեղություններ կրելով գալիս հասնում են Ղարս, ուր մի փոքր հանգիստ առնելուց հետ այստեղի գաղթականների հետ գալիս են Գյումրի և Արփաչայի ափին բնակում։ Այստեղից արդեն էրզրումի գաղթականները Կարապետ արքեպիսկոպոսի առաջնորդությամբ գալիս են Ախալքալաք, Ախալցխա և Ծալկա, Ղարսա գաղթականները մնում են Գյումրի և Փամբակ։

Թե Կարապետ արքեպիսկոպոսը և թե ռուս կառավարությունը բավական օգնում են գաղթական հայ ժողովրդյան, բաժանելով նոցա ինչպես փող, այնպես և ալյուր, ցորեն, սայլեր և բեռնակիր անասուններ։ Այսպես 1831 թվի ապրիլի 24-ին կայսերական հրովարտակով ընծայվում է գաղթականներին 380 000 ռուբլի և իրավունք է տրվում գանձարանից մինչև 1 500 000 ռուբլի դրամ պարտք տալ այդ ժողովրդյան, չորս տարուց հետո վեց տարվա ընթացքում վճարելու պայմանով[10]։ Այսպես և ձրիաբար բաժանվում է արհեստավորներին մետաքս, բամբակ, երկաթ, պղինձ, գործիքներ և այլն։

---

10 «Собр. актов», часть I, էջ 61։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ե. Լալայանի «Երկերի» առաջին հատորը բաղկացած է Ջավախքին վերաբերող 3 ամբողջական հատվածից։

Առաջինը կրում է «Ջավախք» (նյութեր ապագա ուսումնասիրության համար) խորագիրը, հրատարակված «Ազգագրական հանդեսի» Ա (1896 թ., էջ 117—378), Բ (1897 թ., էջ 245—295), Դ (1898 թ., էջ 91—104), Դ (1898 թ., էջ 159) գրքերում, ըստ որում, Ա և Բ գրքերի նյութերը 1897 թ. հրատարակված են առանձին գրքով՝ «Ջավախք» խորագրով, արտատպված «Ազգագրական հանդեսից»։ «Ազգագրական հանդեսի» Դ գրքում զետեղված «Ջավախքի բանավոր գրականությունից» 177 քառյակ-վիճակի երգերի կապակցությամբ տողատակի նշումներից պարզվում է, որ 1—91 քառյակները Ե. Լալայանի գրառումներն են, իսկ 92—177-ը՝ Հ. Աղնաուրյանինը։ «Ազգագրական հանդեսի» Դ գրքում տեղ գտած «Ծածկաբանություններ» համառոտ նյութի առթիվ Ե. Լալայանը ոչինչ չի նշում, բայց քանի որ նյութը վերաբերում է Ջավախքի տարածքին, ուստի դա էլ միացրել ենք այս ընդհանուր հատվածին։

Երկրորդ ինքնուրույն հատվածը այս հատորի կազմում է «Ջավախքի բուրմունք» ժողովածուն, որը լույս է ընծայել Թիֆլիսի Հայոց հրատարակչական ընկերությունը («Ժողովրդական նյութեր» մատենաշարի Բ գիրք), 1892 թ.։ Ջավախք անվան վերաբերյալ Ե. Լալայանը ծանոթագրել է՝ Ախալցխայի և Ախալքալաքի գավառ։ «Ջավախքի բուրմունք» ժողովածուի առթիվ Գ. Վանցյանը «Մուրճ» ամսագրում (1892, № 7—8) հրապարակել է գրախոսություն, որին պատասխանել է Ե. Լալայանը նույն ամսագրի 1892 թ. № 10-ում։ Ե. Լալայանի պատասխանում հանգամանորեն լուսաբանվում է «Ջավախք» աշխատության ստեղծման պատմությունը։

Այս հատորի երրորդ հատվածը «Կարնո գաղթականություն» անտիպ աշխատանքն է, որը պահպանվում է Հայաստանի պատմության պետական թանգարանի ազգագրական արխիվի Ե. Լալայանի ֆոնդում։ Այս աշխատությունն ունի սևագիր (գրված Ե. Լալայանի ձեռքով) թերի և մաք-

բագիր (ուրիշի ձեռքով արտագրված) ամբողջական օրինակ։ Աշխատությունը որոշ հապավումներով հրատարակել է Մ. Ղ. Դարբինյանը «Բանբեր Հայաստանի արխիվների» հանդեսում (1974, № 3)։

Գր. Վանցյանի «Մուրճ» հանդեսում հրատարակած գրախոսության առթիվ Ե. Լալայանի պատասխանից և կողմնակի այլ հիշատակություններից պարզվում է, որ մինչ 1890-ական թվականներն արդեն Ե. Լալայանն ուներ պատրաստի վիճակում Ջավախքին վերաբերող մի ամբողջական աշխատություն (շուրջ 1600 էջ ծավալով), որի մասին դրական կարծիք են հայտնել պրոֆ. Գ. Խալաթյանցը և Սահակ-Մեսրովբյան մրցանակաբաշխության հանձնաժողովը։

Հնարավորություն չունենալով այդ աշխատությունը առանձին գրքով, ամբողջական տեսքով հրատարակելու, Ե. Լալայանը այդ աշխատության նյութերը լույս է ընծայում հատվածաբար՝ սկզբում «Ջավախքի բուրմունք» բանահյուսական ժողովածուն, ապա որոշ ազգագրական նյութեր «Հանդես ամսօրեա»-ում, ֆրանսիական մարդաբանական հանդեսներում և վերջապես հիմնական մասը պարբերաբար հրատարակվում է իր իսկ հիմնադրած «Ազգագրական հանդեսի» Ա, Բ, Գ, Դ գրքերում.

Յավոք, այդ մեծ ու արժեքավոր աշխատության շատ նյութեր (ժողովրդական խաղեր, պարերի նկարագրություններ, երգերի նոտագրություններ, բարբառի ուսումնասիրություն, առակներ, հեքիաթներ, առածներ, լուսանկարներ և այլն) չեն արժանանում տպագրության։ Մեր պրպտումները տարբեր արխիվներում ցանկալի արդյունք չտվեցին։ Հայտնաբերվեց միայն այդ աշխատության ձեռագիր մի հատված՝ «Կարնո գաղթականություն», որը և տպագրվում է ներկա հատորում։

«Ջավախքի բուրմունքի» առթիվ Գր. Վանցյանի գրախոսության մեջ կան իրավացի դիտողություններ՝ նկատված վրիպակների և բարբառից կատարված շեղումների վերաբերյալ։ Ե. Լալայանն իր պատասխանում ընդունում է դրանք և բացատրում նրանով, որ գրքի տպագրության ժամանակ արտասահմանում գտնվելու պատճառով ինքը անձամբ չի կարողացել վերահսկու լինել սրբագրության։

Մենք աշխատել ենք որքան հնարավոր է շտկել այդ վրիպումները։ Այսպես, օրինակ, «Ջավախքի բուրմունք» ժողովածուի «Երկրագործական երգեր» բաժնում տպագրված է՝ «Մուսլիկ դիշեր ու գին գազեր», ճշգրտել ենք՝ «Մուսլիկ գոմեշ ուր գին գուզեր» և այլն։

Ե. Լալայանը իր պատասխանում առարկում է նաև Գր. Վանցյանի ոչ իրավացի դիտողություններին։ Խոսելով Գր. Վանցյանի այն դիտողության մասին, թե ինչու ժողովածուի նյութերը տարբեր բարբառներով

են, Ե. Լալայանը պատասխանում է. «Իմ նպատակս չի եղել միայն Կարնի գաղթականների մասին նյութեր հավաքել, այլ Ջավախքի ամբողջ աղգաբնակչության և բացի դրանից այդ գավառաբարբառի նմուշներն անհրաժեշտ են մի գավառաբարբառի մի ուրիշ գավառաբարբառի ազդեցության տակ կրած փոփոխություններն ուսումնասիրելու համար» («Մուրճ», 1892 թ., № 10, էջ 1493):

«Ջավախք» (նյութեր ապագա ուսումնասիրության համար) աշխատության «Նշանավոր տոներ» բաժնում Ե. Լալայանը դրել է Հ. Մալխասյանի «Բարեկենդան» հոդվածը, նշելով դրա մասին հետևյալը. «Հրովհետև բարեկենդանին ես գյուղերում չեմ եղել, ուստի խնդրել եմ պ. Մալխասյանին, որ տեղացի է, նկարագրելու այդ, որի համար և շնորհակալություն եմ հայտնում»:

ՑԱՆԿԵՐ

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ

Աբդուլ Կասին 41
Աբելյան Պ. 31
Աբիդյան Մ. 9, 13, 25
Աբիխ 46
Աբուզա 37
Ադամ 236, 341
Աղնաուրյան Հ. 441
Աղորկ Բագավոր վրաց 42
Աթաբեկյան Լ. 15
Աթանաս 300
Աթո 218
Սթոյենց Մինաս 256
Ալ 236
Ալեքսան 375
Ալեքսանդր Բ 63
Ալեքսանդր Մակեդոնացի 18, 36, 40
Ալեքսանդր, վրաց Բագաժառանգ 39
Ալիշան 45
Ալմաստ 411
Ալֆատին 398
Ախլցխու փաշա 39
Ակինյան Ն. 32
Ակո 361
Ահարոն 345
Ահմատ բեկ 300
Ազանիկ 371, 372
Աճառյան Արմենուհի 24
Աճառյան Հ. 9, 24
Ամրակում իշխան 61
Ամիրխան 429
Այան ագա 438
Անանիկյան Ստեփանոս 56
Անաստոլիոս 416
Անդոր 438
Աննա 242
Անուշավան 385
Աշուշա բեկիշ 35
Ասատուր 233, 234
Ավետիք 368, 369
Ատրպետ 13
Արամ 294
Արամդել Բագ. վրաց 42
Արեգնադան 429
Արշակ 359, 360, 361
Արշեղ կամ Արշիղ Բագավոր վրաց
Արտաշամա 36
Արտաշես Ա 36
Արքայիկ 24

Բագրատ Արտանուշցի 42
Բագրատ Գ, Բագավոր վրաց 36
Բագրատ Դ 37
Բագրատ Մեծ 41, 42, 43
Բադալ 246
Բալյուլ փաշա 432
Բազդասարյան Տորեն, քահանա 304

---

1 Անձնանունների շարքում ընդգրկված են նաև դերբնական և երևակայական էակների անունները։

Բայազիտ սուլթան 300
Բաշ-աղա, Խրրիզցի գայմագամ 41
Բարդուղիմէոս եպիսկոպոս 439
Բարսեղ քահանա 59
Բարսեղյան Ա. 23
Բեկովիչ 437
Բենսե (Սահակ Մովսիսյան) 24
Բերնաշևսկի Ա. 31
Բորոդին Ի. 12
Բունակ 28

Գաբրիել հրեշտակ 211, 337
Գալստյան Աղաջան 68
Գալստյան Գալուստ 68
Գայանե 348, 349
Գարան 385
Գարարդ 415
Գզլյան Կարապետ 80
Գեղամյան 435
Գեղամյան Հայկ 428
Գևորգի Գ. 43
Գյուլպանկյան Սարդիս 377
Գյուլֆերի 181
Գրիգոր 86, 293, 295, 302, 361, 400, 429
Գրիգոր Լուսավորիչ 212, 418
Գրիգոր Տաթևացի 18
Գրիգորյանց Խաչատուր 439
Գրիգորյանց Ստեփան 431
Գուդովիչ, զորավար 39
Գուշար 35
Գևորգ 434
Գևորգ Գ, Բագավոր 75
Գևորգ Սահակաձե 40

Դաբաղյան Վեսպեր 23
Դադյան 24
Դավիթ 41, 51, 372
Դավիթ Անհաղթ 18
Դավիթ հայրապետ 297
Դավիթ մարդարե 345
Դարբինյան Մ. Գ. 442
Դելրոլ Թեոփիլոս 415
Դարեհ 415
Դերեբիդի Մահմետ 429
Դիմիտրի արքա վրաց 43
Դիվին 51
Դշխուն 375
Դրսզդով գավառապետ 126

Եղիա մարգարե 249, 241, 344, 390
Եղիկօղլի Կարապետ 428—430
Եղիսաբեթ 86
Եվա 236, 385
Երեմիա 297
Երևանու սարդար 39
Եփրեմ 294, 362
Եփրեմ կաթողիկոս 431, 437

Զագուրսկի 87
Զանազան 429
Զանդ ժորժ 31
Զելինսկի Ս. 9
Զենոր Գլակ 305
Զըմո 378
Զվիադ էրիստավ 43
Զվյագինցև Ե. 31

Թագուն 327, 385
Թադեոս առաքյալ 297
Թադեոս վարդապետ 436
Թախր-բեկ 58
Թահմազ շահ 42, 300
Թաճի 297
Թամար Բագուհի 43, 44, 75
Թանքա 385
Թելլոր Է. 31
Թեոդոս գրիչ 305
Թեոդոս կայսր 416
Թեոդորոս 294
Թորամանյան Թ. 9
Թորոս 295
Թորոսյան Հ. 9
Թումա 297

Ժիժոզելի գերդաստան 85

Իգնատիոս քահանա 300
Իսահակյան Ա. 24
Իսկուհի 184
Իսմայել 296
Իսրայել 377
Իփեկյան Գ. 13

Լալայան, Երվանդ Ա. 7—32, 441—443
Լեկեոն հրեշտակ 215, 216
Լեկեոն ձուկ 392
Լետուրնո Շ. 31
Լեո 9
Լիպարիտ Օրբելյան 37
Լիսիցյան Ստ. 9
Լոխման 395—398
Լևոն 305
Լևոն Գ., բագ. սբխաղաց 43
Լևոնյան Գ. 13

Խալաթյանց Գր. 13, 17, 442
Խաղուբ 297
Խամալաձև 41
Խաչատուր վարդապետ 305
Խեթ 297
Խմշի-օղլի 41
Խոստիկյան Մ. 13
Խրիմյան Մկրտիչ/Հայրիկ 8, 9

Ծաղկար Մկո 223

Կալմիկովներ 63—65
Կաճո 58
Կայխոսրո աթաբեկ 42
Կանայան Ս. 13
Կանեստրին Գ. 31
Կատրալևակի 39
Կարա-Մուրզա Հ. 9
Կարապետ աղա 209
Կարապետ արքեպիսկոպոս 125, 428—440
Կարապետ եպիսկոպոս 58, 83
Կարապետ Վանեցի 433
Կարապետ քահ. Ռայիսյան 297
Կարապետ քհն 85
Կիլիսկեղնոս 88
Կիրակմուտք ոգի 232, 233
Կիրակոս 297, 386
Կիրակոսյան Գրիգոր 56
Կյուրիկյան Բագ. 36
Կյուրոս Բագ. 40
Կոլոշի 89, 90
Կոստանդին Ա., Բագ. վրաց 43
Կովալևսկի Մ. 31
Կուժիկյան Շ. 23
Կուրղին 181
Կուրղինյան Տեր-Առաբել 66

Հալիբ-փաշա 425
Հակոբ 411, 430
Հակոբ կաթողիկոս 301
Հակոբ ամիրա 432
Հակոբ պատրիարք 256, 402
Հակոբ վարդապետ 430
Համի-բեկ 58
Համբարձումյան Հ. 13
Համիդ 420
Հայկանուշ 386
Հայր Աբրահամ 344
Հասան Օղլի Հասան խան 66
Հասան Օղլի Փաշա աղա 66
Հարութիւն 351, 370, 429
Հարութիւն վարդապետ 439
Հարությունյան Արտեմ 8
Հարությունյան-Լալայան Հայկանուշ 8, 12
Հնթում Բ. 66—67
Հեղինե 85
Հեղնար 245, 386
Հերակլես Բագավոր Կախեթու 37
Հիշտեկ կամ Կիրակմուտք ոգի 232, 235
Հիսուս Քրիստոս 168, 236, 331, 333, 334, 337, 338, 341, 344, 346, 348
Հորոս 22
Հռոմ (Հռիփսիմե) 86
Հովհաննես (Հաննես) 39, 92, 298, 429
Հովհաննես պրիչ 297
Հովհաննես եպիսկոպոս 298

Հովհաննես կաթողիկոս 36
Հովհաննես պատրիարք 431
Հովհաննես վարժապետ 433
Հովհաննես վրացի եպիսկոպոս 43
Հովհաննես քահ. Իգիթխանյանց 210
Հովհաննիսյան Մ. 13
Հովհաննիսյան Սարգիս 394
Հովր Սրանելի 393, 394
Հովսես գրիչ 298
Հովսեփ 213
Հ. Վ. 15

Ղազար 362
Ղևիր փաշա 435, 436

Ճոնյաց 43

Մալխասյան Հ. 279, 443
Մակիտ 386
Մահմուդ սուլթան 402
Մահմուդ խան 296
Մամիկոնյան Հակոբ 431
Մանվելօղլյանց 438
Մառ Ն. 29
Մատթեոս առաքյալ 214
Մատթեոս Ուռհայեցի 37, 305
Մարգարիտ 86
Մարթա 334
Մարիամ 213, 335, 337, 342, 346, 348
Մարիամ Մագթաղինացի 292
Մարկոս 389
Մարտիրոս 241, 338, 342
Մարտիրոսյան Ն. 23
Մելիքսեթ-Բեկ 9, 13
Մելիք-Ազարյան Ա. 10, 12
Մելիք-Փաշայան Կ. Վ. 32
Մելքոն 302, 304
Մեղավորյան Հ. 9
Մեսրոպ 43
Միլտիոս 415
Միհրդատ 36
Միհրդատ Գ 42
Միհրան բդեշխ 36
Միքայել արքեպիսկոպոս 430
Միրայել հրեշտակապետ 239
Մխիթար 71, 73
Մխիթար Գոշ 29
Մխիթարյաններ 8, 30
Մկրտիչ 419
Մոլիեր 31
Մոլլա Նասր-էդդին 22
Մոսիկ 219—220
Մովսես 343
Մովսես Խորենացի 35
Մովսես Մարգարե 252
Մորգան Լ. 31
Մռավյան Ա. 28
Մուհամմեդ 394
Մուհամմատ սուլթան 301
Մուշեղ սպարապետ 36
Մուսիկ 221
Մուրատ 386, 409
Յաղուբյան Կարապետ 55
Յաղուբ 378, 385
Յուղաբեր 209

Նագեժդին 101
Նագինյան Ա. Մ. 32
Նաղու 359
Նահապետ Ծերունի 82
Նապոլեոն 1-ին 425
Նավասարդյան Տ. 17, 21
Ներսես 86, 331
Ներսես Մեծ 348—349, 418
Նժդեհյան Գր. 24
Նիկողայոս Սքանչելագործ 66—68
Նինևէթար 298
Նոյ 393, 394—395
Նուննե կույս 48
Նուբին 386

Շալճյան Ս. 23
Շահապիզ Ս. 9
Շերենց Գ. 17
Շեքեճյան Գրիգոր 433, 438
Շմավոն 377
Շողան 387
Շողիր 242, 243, 386, 397

Շոպեն 35
Շուշան 86, 327, 387
Չարըգ Արամ 24
Չմշկյան Կարապետ 433
Չոպանյան Ա. 30
Չորեքմուտք ոդի 232, 233, 235

Պալխո 291
Պայպուրտյան, կալվածատեր 52
Պանդելեվոն բժիշկ 66, 68
Պապ թագավոր 298—299
Պապիկ 86
Պապյան Մարգար 378
Պասկևիչ 39, 437, 438
Պաուլուչչի դնդապետ 39
Պեզաղյան Ե. 23
Պեղձևոն 211, 215, 216
Պետրի 31
Պետրոս 332, 334, 338, 339
Պետրոս բահանա 296
Պլինիոս 415
Պոզոդա Ա. 31
Պողոս 257, 352, 334, 338, 339, 369
Պոմպեոս 40

Ջավախոս 35, 42
Ջիվանի 13
Ջհանշահ խան 298

Ռաևսկի, զորապետ 41
Ռիչինկամպֆ 50

Սաղայել 215, 216
Սաթղ աղա 61
Սալլաթ 359, 360, 361
Սահակ 411
Սամել 302, 304
Սամուելյան Հ. 31
Սանամ 378, 287
Սապոգելա ոմն 85
Սառա 334, 387, 426—427
Սարգիս 86, 296, 299, 377
Սարգիս աթաբեկ 37
Սարգիս Ճոնյաց 43
Սարգսյան Ա. 8, 31
Սարգսյան Մկրտիչ 252—253
Սարիբեկ 297
Սեղրակ 377
Սելիմ 300
Սերովբե հրեշտակ 211
Սիլեյտար Ահմատ աղա 435
Սիրբին (Սրբուհի) 86
Սկինդեր 28
Սմբաթով գավառապետ 87
Սոլաբյան Ա. 24
Սողոմոն 68, 345, 347
Սողոմոն թագ. Իմերեթիայի 37
Սողոմոն իմաստուն 391
Սոնա 319, 385
Սոֆո 323
Սպենսեր Հ. 16
Ստեփան-Տնփան 184
Ստեփաննոս 39, 332
Ստեփաննոս Նախավկա 66—68, 215
Ստրաբոն 415
Սրվանձտյանց Գ. 17
Սուլեյման Խոնդկար 300
Սուլթան Մահմուտ 439
Սուրբ Աբրահամեան 401
Սուրբ Գրիգոր 72, 342
Սուրբ Գևորգ 57, 245, 246, 259, 292, 341, 344։
Սուրբ Կարապետ 214, 244, 245, 246, 256, 292, 296, 350
Սուրբ Կիրակոս 338
Սուրբ Հակոբ 245, 259, 302, 407։
Սուրբ Հակոբ Մծբնա հայրապետ 66—68, 298
Սուրբ Հարութիւն 287
Սուրբ Հովհաննես 295
Սուրբ Մարգարիտ 332
Սուրբ Նիկողոս 71
Սուրբ Սարգիս 13, 71, 245, 253, 270—272, 298, 340, 341, 349
Սուրբ Ստեփանոս 293
Սուրբ Վարդան 305
Սուրբ Վասիլեոս 419
Սուրխաս վարդապետ 126

Վազգեն, Բագ. վրաց 35
Վախթանգ Ե 35
Վախթանգ Գուրգասլան 35
Վախուշտի 40, 42
Վաղարշակ Ա 35
Վայյան Հավր 392
Վանո 9, 93
Վանցյան Գր. 15, 89, 441, 442
Վասիլ Բագրավոր 293
Վարդան 86, 231
Վարդան Բարձրբերդցի 43
Վարդան Բզեղցի վրաց 35
Վարքեզյուլանկենց 219—220
Վարքուան 86
Վերա Ջիմշուտ 41
Վերմիշև Պ. 109

Տեր-Ադնբսանդրյանց Գ. 17
Տեր-Առաքել Հայր 68
Տեր-Առաքել Սյունյաց եպիսկոպոս 305
Տեր-Ավետիսյան Տեր-Գրիգոր 60
Տեր-Բարդուղիմեոս 291
Տեր-Գաբրիելյան Տեր-Կարապետ 300
Տեր-Գրիգոր քահանա 439
Տեր Դավիթ 295
Տեր Զաքարիա 295
Տեր Ղուտակես 298
Տեր Հակոբ 296
Տեր-Հարությունյան Տեր-Մակար 78, 80
Տեր-Հովհաննիսյան Գևորգ 433
Տեր-Ղազարյան Ղ. 15
Տեր-Մանվելյան Պետրոս 39
Տեր-Մկրտչյան Տեր-Ստեփան 300
Տեր Մովսես 341
Տիգրան 376
Տիմոթ վարդապետ 43
Տիրուն 369, 387
Տորոպով 50
Ունան 345
Ուվարովա Պ. 25
Ուրբաթմուտք ոգի 232, 233, 235։

Փանար 302
Փառանձեմ 387, 388
Փառնավազ Բագ. 42
Փարաման Բագ. 42
Փավստոս Բուզանդ 36
Փափազյան Վրթ. 24
Փեթոն 376
Փեշտմալճյան Աղաբար 39
Փիլիպպոս առաքյալ 214
Փորբշնյան Խ. 24
Փտոյանց Թորոս 429

Քերոբ 142, 377
Քերովբե հրեշտակ 211
Քյոսա տերտեր 230
Քյոռօղլի 51, 77
Քրիստոս 66, 88, 124, 168, 206, 211, 212, 229, 236, 292, 293, 294, 295, 300, 302, 331, 336, 338, 339, 341, 342, 343, 346, 350, 351, 390, 392, 394։ Տե՛ս նաև Հիսուս Քրիստոս

Օհան Օձնեցի 18, 403—404
Օհաննես 371
Օսկեհատ 86

Ֆալլատի 398
Ֆարմանյան Հաճի Կարապետ 440
Ֆերման 438
Ֆիրաղ 378

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ինստիտուտի կողմից 5
Երվանդ Լալայանի կյանքն ու գիտական գործունեությունը . . . 7

ՋԱՎԱԽՔ (ՆՅՈՒԹԵՐ ԱՊԱԴԱ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ)

Պատմական համառոտ տեսություն *35*
Ջավախքի տեղագրությունը *44*
Նշանավոր գյուղերը *56*
Հնություններ *66*
Բնակիչներ *83*
Վիճակագրական տեղեկություններ *93*
Աղգարնակչության շարժումը *101*
Ջավախքի բնական և արդյունաբերական ուժերը և բնակիչների տնտեսական գործունեությունը *109*
Ժողովրդի լուսավորությունը *125*
Հայ գյուղացիների բնակարանները *130*
Զգեստ և զարդ *133*
Ընտանեկան բարք *138*
Հավատք *212*
Հավելված. Նշանավոր տոներ *266*
Հայ գրչագրիներ *291*
Ջավախքի բանավոր գրականությունից. Վիճակի երգեր . . . *305*
Ծածկաբևնություններ *328*

ՋԱՎԱԽՔԻ ԲՈՒՐՄՈՒՆՔ

Աղոթքներ

Առողջության և հիվանդության *331*
Ծննդկանի *331*
Ալից հատի *333*
Մահճանդուստի *334*
Թիքի *335*
Առջըմուկի *335*
Հիվանդի վերա (կաթոլիկաց) *335*

Աոօրյա կյանք

Քնից զարթնելիս *335*
Անկողին մանելիս *336*
Տղան լողացնելիս *340*

Բարերդ 302
Բայազետ 19, 438, 440
Բայբուրդ 438
Բասեն 23
Բավրա գյուղ 14, 85, 118
Բաբալեք 58—60, 24, 90, 127։
Բարձր Հայք 415, 428
Բեժանո գյուղ 45, 58, 298։
Բերբեր սար 44, 46
Բերդի լիճ 65
Բղավետ գյուղ 261, 291
Բիզնիշնու բարձրավանդակ 57
Բիբլիա 23
Բինգյոլ 205, 406
Բուլանըխ 357, 358
Բուղդաշեն լիճ 4, 50

Գադեշ գյուղ 300
Գանձա գյուղ 51, 127, 184, 242, 246, 260։
Գանձայի դետ 48
Գանձակ 19
Գարեխայի ոսոխականություն 40, 63
Գարիլովկա 62—64
Գելադի վանք 43
Գեղարքունիք 15
Գիլլի դետ 26
Գիմգիմու ձոր 229
Գլակա վանք 214
Գյոդդաղ 57, 65, 260
Գյոդդաղի լեռնաշղթա 44
Գյոդդաղ (Կապուլա լեռ) 47
Գյոլա հասարակություն 85
Գյումուրդա գյուղ 43, 66 231, 50, 53
Գյուլլի Բաղ 354, 355
Գյումբի 246, 388, 438, 439, 440։
Գոգտաղ լեռ 309
Գոգոբեքի լեռ 46
Գոմնելյա գյուղ 77
Գոլավեր 359
Գոմ գյուղ 252, 261
Գոնդուրա գյուղ 127
Գովա գյուղ 60
Գորի 44
Գուգարք 35, 36

Դադեշ 261
Դավաղրան լ-շղթա 47
Դեմեր 26
Դիլիսկա գյուղ 127, 246, 291, 292։
Դիլիֆ գյուղ 45, 53, 83, 261, 291։
Դևրիղ 416

Եհնի 416
Երուշետ 35
Երուսաղեմ 68, 171, 173, 211, 227, 338, 399։
Երևան 12, 317, 318, 322, 323, 354։
Եփրատ 238, 415

Զագյուրտան լեռ 53
Զակ գյուղ 58, 118
Զանդեղուր 19, 23
Զանդուրա 181
Զրեշու դաշտավայր 45

Էլար 27
Էկին 430
Էշտիա գյուղ 84, 118, 127, 181։
Էջմիածին 11, 431
Էրզրում 57, 240, 291, 305, 388, 406, 415—417, 419—420, 424, 433, 435, 437, 438, 439։
Էրզրումի գավառ 39
Էրզրումի վիլայեթ 83

Ըղտաձոր 428

Թադեոս առաքյալի տաճար 298
Թավրիզ 300
Թափարավան դետ 48, 54, 61։
Թափարավան լիճ 45
Թարչա 260

ԵՐՎԱՆԴ ԼԱԼԱՅԱՆ

Երկեր (Հինգ հատորով)

Հատ. I

Հրատ. խմբագիր Փ. Հ. Մադանյան
Գեղ. խմբագիր Հ. Ն. Գոռծակալյան
Տեխ. խմբագիր Լ. Կ. Հարությունյան
Սրբագրիչ Ա. Ա. Ավանեսյան

ИБ № 563

Հանձնված է շարվածքի 9. 09 1982 թ.։ Ստորագրված է տպագրության 27. 05. 1983 թ.։ ՎՖ 06823։ Չափը 60×84 1/16 թուղթ № 1։ Տառատեսակ «Գրքի սովորական», բարձր տպագրություն։ Պայմ. 26,30 մամ., տպագր. 28,63+2 ներդիր։ Հրատ.-հաշվարկ. 22,43 մամուլ։ Տպաքանակ 2000։ Պատվեր № 950։ Հրատ. № 5785։ Գինը 3 ռ. 65 կ.։

ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 375019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող., 24գ։

Издательство АН АрмССР, 375019, Ереван, пр. Маршала Баграмяна, 24-г.

ՀՍՍՀ ԳԱ հրատարակչության տպարան, 375019.
Երևան, Մարշալ Բաղրամյանի պող. 24։

Типография Издательства АН АрмССР, 375019, Ереван,
пр. Маршала Баграмяна, 24.

A II
69244